Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում Աստվածաբանության ֆակուլտետի դեկան գերաշնորհ Շահե արքեպիսկոպոս Ամեմյանին՝ ինչպես սույն գրքի ստեղծման գործում ցուցաբերած նախաձեռնության, այնպես էլ նրա հրատարակմանն ըստ ամենայնի աջակցելու համար:

Այս հատորը իրականացավ արդեամբ Ս. Թադեի-Ս. Սարգսյան-Ռիան ֆակուլտետի դեկան՝
գրագիր, պրոֆեսոր
Շահե արքեպիսկոպոս Ամեմեանի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՃԵՄՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
Ե

Ռ. Ս. Ղազարյան,
Հ. Մ. Ավետիսյան,
Խ. Պալյան

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ՀԱՏԸՆՏԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2003

ՀՏԴ 941 (479.25)+891.981
ԳՄԴ 63.3 (2Հ) 42 + 84Հ1
Դ 310

Դասական գրաբարի հատընտիր (կազմողներ՝ Ռ. Ղազարյան,
Դ 310 Հ. Ավետիսյան, Խ. Պալյան), Երևանի համալս. հրատ., Եր., 2003 թ.,
342 էջ:

Հատընտիրն ընդգրկում է 5-րդ դարի ինքնուրույն և թարգմանական մատենագրությունից քաղված հատվածներ, որոնք օժտված են քերականական-ոճական համապատասխան ծանոթագրություններով:

Գրքին կցված է նաև բառարան, որտեղ բացատրված են բնագրերում հանդիպող դժվարհասկանալի բառերն ու ոճերը:

Նախատեսված է ԵՊՀ-ի Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների և գրաբարով հետաքրքրվողների համար:

Դ $\frac{4702080101}{704(02)03}$ 2003 ԳՄԴ 63.3 (2Հ) 42+84Հ1

ISBN 5-8084-0494-0

© Կազմողի համաձ, 2003 թ.

ԿՈՐԻՒՆ

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

(Հատուածք)

Յայնմ ժամանակի բերեալ երևեցան ի Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն հոռոմի, որում Թէոդորոս անուն: Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետացն եկեղեցեացն սրբոց նշանակեալ՝ ազգ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ եւ Մաշտոցի: Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց սահմանացն մերժեցին՝, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ:

Յետ այնորիկ դէպ լինէր նովին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրքք երկայն ժամանակօք և վայելչացեալ աստուածաբեր պտղոցն բարութեամբք, յառաջնումն ամի Յազկերտի, որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ գաւառի, ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն, հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք՝ ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ, հայեցեալ ի բան մարգարէին, որ ասէր, «Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ». և Ստեփաննոսի երանելւոյ, որ ասէր. «Տէ՛ր Յիսուս, ընկա՛լ զհոգի իմ»: Ըստ՝ նմին օրինակի և նորա ապսպրեալ զանձն և զմնացեալս ամենապահ չնորհացն Աստուծոյ:

Զոր և առեալ վաղվաղակի ամենայն հանդերձելովք՝ ձեռնասուն աստուածասէր պաշտօնէիցն իւրոց, որոց գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ և բարեպաշտօն, հանդերձ աստուածասէր

իշխանակնաւ միով, որ անուանեալ կոչէր Դուստր, որ էր կին Վարդանայ, զոր ի վերնոյն յիշեցաք, և բազում ամբոխից սրբոց ժողովոց, բարձեալ զսուրբն սաղմոսիւք և օրհնութեամբ և հոգևոր բարբառով, յետ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ և ընդ գիշեր ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն իսկ գիւղն յԱշտիշատ: Եւ անդ ի մարտիրոսական խորանին[2] յարկեղ սրբոցն հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եղեալ և կնքեալ քրիստոսական կնքովն[3] և զօրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետև իւրաքանչիւրն դառնային: Որոց և նոյնպէս ամի ամի գումարելովք ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տօնախմբեն:

Իսկ երանելի զուգականին լուեալ, զՄաշտոցէ ասեմ, բազում անձկայրեաց տրտմութեամբ և արտօսրագութ ողբովք և ծանրաթախիծ սգովք պաշարեալ դնէր. զի թէ առաքեալն սուրբ ոչ գտեալ առժամայն զընդելակիցն զՏիմոթէոս՝ անհանգիստ զհոգւոյն ասէ, ո՛րչափ ևս առաւել զմիանգամայն ցհրաժարելոցն՝ սաստիկ կիրս մնացելոցն է համարեալ: Բայց թէպէտ և միայնաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն և զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր և առաւել փութայր գուն եղեալ՝ զամենեսեան յորդորելով առ բարեացն քաջութիւն: Եւ զցայգ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք և բարձրագոյն բարբառովք, զաստուածադիր պատուիրանացն հրամանս յուշ առնելով,[4] զգուշացուցանէր ամենայն մարդոյ, մինչև բազմագոյնս և զդժուարագոյն վարուց կրթութիւնս. մանաւանդ զի և զմտաւ իսկ ածէր ըստ ծերունական հասակին զօր վախճանին, չտայր քուն աչաց և ոչ նիրհ արտևանաց՝ մինչև հասանել ի հանգիստն տեառն:

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրև զհոգևոր եռանդն ածէր և բազում թուղթս խրատագիրս և զգուշացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր, անդէն ի նմին ամի, յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելւոյն Սահակայ, լինէր հանդերձ սրբով

վարդապետաւն բանակն Հայոց յԱյրարատեան ի Նոր քաղաք, և նովին հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի: Եւ յորժամ որոշեալ ի միջոյ ձեռնասուն աշակերտաց և խառնեալ ի գունդն Քրիստոսի հասանէր, թեթևացեալ և սթափեալ ի ցաւոցն՝ կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի և համբարձեալ զձեռսն հանապազատարած յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ, վասն նոցա օգնականութիւն հայցէր:

Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն են այս. առաջնում Յովսէփ, զոր և ի սկզբան գրեցաք, երկրորդին Թադիկ, արք զգաստք, զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն: Ի զինուորական կողմանէն առաջնումն Վահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց, և երկրորդին Հմայեակ՝ ի Մաիկոնեան տոհմէն, արք պատուականք, երկիւղածք, հրամանակատարք վարդապետական հրամանաց: Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձև երևէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, և ոչ առ յընկերէ պատմեալ. Եւ սորա սրբոցն զսէր և զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս և զհեռաւորս օրհնութեամբ պսակէր, և զհաճոյական աղօթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեաւ:

Զոր առեալ Վահանայ և Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ և հոգեւոր ցնծութեամբք, կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք և խնկօք բուրելովք և ամենայն լուսաճաճանչ գնդիւն, և այնու խաչանշան լուսաւոր յառաջախաղաց նշանաւն, յՕշական ելանէին, և անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ, ապա նշանն աներևոյթ լինէր, և նոքա յիւրաքանչիւր դառնային տեղիսն:

Իսկ յետ երից ամաց անցելոց յաջողեցան Վահանայ Ամատունւոյ քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելովք, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն յօրինեալ: Որոյ սպասս վայելուչս, գունագոյնս, պայծառատեսիլս, ոսկւով և արծաթով և ակամբք պատուականօք, ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի պատրաստեալ, և ամենայն սրբովք ի միասին գումարելովք զմարմին խաչակրօն վկային Քրիստոսի, երանելոյն Մաշտոցի, ի հանգիստ խորանին փոխէր:

---

[1] աշխարհից հալածելով՝ իրենց սահմաններից դուրս վանեցին

[2] մարտիրոսական խորան - մատուռ

[3] քրիստոսական կնքովն - խաչով

[4] յուշ առնելով, այստեղ՝ հիշեցնելով

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատուածք)

Իսկ իբրև զայն ամենայն չարիս ետես թագաւորն Պարսից, որ եկին հասին ի վերայ նորա՝ նեղացաւ, տառապեցաւ, տագնապեցաւ, տարակուսեցաւ, վարանէր յանձն իւր. առ ինքն կոչէր զամենայն թագաւորս և զկուսակալս և զնախարարս և զզօրավարս և զպետս և զիշխանս իւրոյ տէրութեանն. ի խորհուրդ մտանէին. աղաչէր զամենեսեան՝ հնարս ինչ մարթել խնդրել գտանել. ազգի ազգի պարգևս խոստանայր. թերևս ոք միայն գտցի, ասէ, որ զվրիժուց հատուցումն խնդրել[1] մարթասցէ. յերկրորդական գահ իւրոյ տէրութեանն մատուցանել խոստանայր, թէ միայն նախանձու մեծի ձեռն արկեալ հատուսցէ ոք. բայց միայն աթոռովս ես ի վեր եղէց քան զնա, եթէ կարի յանարգաց ոք իցէ կամ ի պատուականաց. ազգի ազգի պատիւս և պարգևս և վարձուց հատուցմունս չնորհել խոստանայր:

Արդ՝ ոմն ի միջոյ խորհրդեանն գլխաւոր նահապետ էր Պարթևաց տէրութեանն, որոյ անուն էր Անակ. յոտն կացեալ, ի մէջ անցեալ՝ յիւրմէ ազգէն իբրև ի թշնամւոյ վերայ խոստանայր վրէժ խնդրել:

Խօսել սկսաւ ընդ նմա և ասէ. «Եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ՝ զբնութիւնն[2] պարթևական, զձեր սեփական Պահլաւն[3] ի ձեզ դարձուցից և քեզ թագ եդեալ փառաւորեցից և երևելի և փառաւոր ի թագաւորութեանս իմում արարից, և երկրորդ ինձ կոչեցից»:

Պատասխանի ետ Պարթևն և ասէ. «Զմնացորդս ազգի իմոյ կեցուսցես դու. այլ ես և եղբայր իմ հարազատ այսօր հրաժարիմք ի քէն»:

Յայնմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ Պարթևն եղբարբն իւրով հանդերձ, ընտանեօք, կանամբք և որդւովք և ամենայն աղխիւ իւրեանց. չու արարեալ յուղի անկեալ, դէտ ակն կալեալ ճանապարհացն[4] ելեալ երթայր հատուածի պատճառաւ[5] ի կողմանս Հայոց, իբրև թէ ապստամբեալ իցէ յարքայէն պարսից: Եկեալ յանդիման եղև թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց:

Իբրև ետես թագաւորն Հայոց՝ ցնծացեալ ել ընդ առաջ նորա և մեծաւ խնդութեամբ ընկալաւ զնա. մանաւանդ իբրև կեղծաւորութեամբ և դաւով սկսաւ խօսել ընդ նմա և զիւրոյ գալոյն հաւատարմութիւն ցուցանել: «Վասն այնորիկ եկի ես առ քեզ, ասէ, զի հասարակ զհասարակաց վրէժ խնդրել մարթասցուք»:

Արդ՝ իբրև ետես թագաւորն զայրն, զի դիմեալ եկեալ էր առ նա ամենայն ընտանեօքն հանդերձ, և մտերմութեամբ հաւատաց ի նա. յայնժամ տայր նմա պատիւ ըստ օրինաց թագաւորաց և հանէր նստուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն. և զամենայն ժամանակս ձմերայնոյն ուրախութեամբ զաւուրս ցրտաշունչ հողմաշունչ սառնամանեացն անցուցանէին:

Իսկ իբրև եկին հասին աւուրք ջերոտ հարաւահողմն գարուն դրանցն բանալոյ՝ համբարձաւ թագաւորն ի կողմանցն յայնցանէ եկին իջին յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք. և մինչդեռ ուրախութեամբ հանգուցեալ էին, ի միտ արկեալ թագաւորին՝ գումարտակ առնէր՝ անդրէն արշաւել ի կողմանս Պարսից:

Իբրև զայն լսէր Պարթևն՝ զերդումն ուխտին յիշէր, որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր: Նա և զխոստմունսն յիշէր զպարգևացն և ի բուն աշխարհն փափագէր, որ Պահլաւն կոչէր, և վատ խորհուրդ ի միտ արկանէր. առնոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ՝ իբրև ի պատճառս ինչ զբօսանաց, իբրև խորհուրդ ինչ խորհել ընդ նմա. և զսուսերսն պողովատիկս թերաքամեալս ունէին. յանկարծ յեղակարծումն ժամանակի զէնս վերացուցեալ՝ զթագաւորն

դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէին: Անդուստ ուստեմն իրազգած եղեալ իրացն որ եղեն՝ գոյժ աղաղակի ամբոխին թանձրանայր. մինչ այս մինչ այն՝ նոքա հեծեալ յիւրաքանչիւր երիվարս փախըստական լինէին:

Իսկ իբրև զայն գիտացին նախարարք հայակոյտ զօրացն՝ գունդ գունդ հատանէին, զկնի լինէին. ոմանք ընդ ցամաքն աճապարեալ, հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի: Զի գետն Երասխ յարուցեալ գայր լի դարիւ և դարիւ, սառնահալ, ջրակուտակ, ձիւնասոյզ, ձիւնախաղաղ բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն: Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջն Մեծամօրի կոչեն, աճապարէին հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու: Ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա, ի մէջ արարեալ զնոսա՝ ի Տափերական կամրջացն գետավէժ առնէին զնոսա: Եւ ինքեանք անդրէն դարձեալ՝ վայիւք, ճչովք և ողբովք, և ամենայն երկիրն ժողովեալ զթագաւորն աշխարէին:

Եւ մինչ դեռ ջերմ ոգիքն ի ծոցոյն չև էին թափեալ[6], և չունչ վախճանին չև էր հասեալ, հրաման տայր զազգատոհմն սատակել: Յայնժամ սկսան սատակել և կոտորել. մինչև ոչ թողին յերիտասարդաց մինչև յայն, որ բնաւ զաջ և զձախ ոչ գիտէր. նաև զիգական տոհմն մաշէին ի սուր սուսերի իւրեանց: Բայց միայն երկուս մանկունս փոքրկունս յորդւոցն Պարթևին պրծեալ ոմն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրումն. զմին ի կողմանս պարսից և զմին ի կողմանս Յունաց առեալ փախչէին:

Եւ եղև իբրև լուաւ զայս ամենայն թագաւորն Պարսից, զուարճանայր, զուարթանայր, տօն մեծ ուրախութեան առնէր զօրն զայն և բազում ուխտ ատրուշանացն կատարէր: Զօրաժողով լինէր, խաղայր գնայր, ասպատակ սփռէր զկողմամբք Հայաստան աշխարհին. զխոսուն և զանասուն, զծեր և զտղայ, զերիտասարդ և զմանուկ առ հասարակ խաղացուցանէր ի գերութիւն:

Անդ ոմն պրծեալ ապրեցուցանէր ի հինէ անտի յորդւոցն Խոսրովու թագաւորին Հայոց՝ մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ. առեալ

դայեկացն փախուցեալ ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց: Եւ զերկիրն Հայոց այնուհետև եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր. զզօրսն Յունաց փախստական արարեալ հալածական տանէին մինչև ի սահմանս Յունաց: Վիհս փոսացուցեալ՝ սահմանս հաստատէին և տեղւոյն անուն եդեալ Դրունս Փոսից, առ տեղեաւն որում Սոյզն կոչէին: Եւ զայլ մարդիկ երկրին խաղացոյց և զաշխարհն յինքն գրաւեաց:

Արդ՝ երթեալ, սնեալ և ուսեալ Տրդատէս առ կոմսի ումեմն Լիկիանէս անուն կոչեցելոյ: Իսկ որդի Պարթևին, որ ի կողմանս Յունաց գաղթեաց, սնանէր և ուսանէր ի Կեսարիայ Կապադովկիացւոց քաղաքին. և մերձաւորեալ զնա սնոյց դայակօք երկիւղիւն Քրիստոսի. և ուսեալ ևս զքրիստոսական դպրութեան հանգամանս, ընտանի եղեալ զրոց Աստուծոյ և մերձեալ յերկիւղ Տեառն, որոյ անուն ճանաչէր Գրիգորիոս: Իբրև տեղեկացաւ ի դայեկացն հայրենի գործոցն, որ եղեալ էին, ել և գնաց առ Տրդատիոս ըստ հեշտ պաշտաման: Եւ թաքուցանէր զանձն և զայն ինչ ի վեր ոչ հանէր, թէ ո՛յր, կամ ուստի՛, կամ ո՛րպէս, կամ զիա՛րդ. զանձն ի ծառայութիւն տուեալ ի հնազանդութեան պաշտէր առաջի նորա:

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ իշխանն Յունաց ի հալածել կայր զեկեղեցի Աստուծոյ: Իսկ իբրև զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի, թէ Քրիստոսական պաշտամանն հաղորդ է, սկսեալ այնուհետև պատուհասակոծ առնէր զնա և ազգի ազգի արհաւիրս արկանէր ի վերայ նորա. բազում անգամ ի բանդս և ի կապանս տանջանօք նեղէր զնա՝ թողուլ ի բաց լինել նմա յերկրպագութենէն Քրիստոսի և ի հնազանդութիւն դառնալ նմա դիցն սնոտեաց և պղծութեանն պաշտաման:

Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն զոր արար՝ դարձեալ լինէր ի կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց Մեծաց: Խաղաց գնաց թագաւորն ի կողմանս Հայոց և եկն եգիտ անդ զօրս բազումս Պարսից, զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն. զբազումս կոտորէր և զբազումս փախստականս արարեալ ի կողմանս Պարսից արկանէր. զհայրենեացն տէրութիւն յինքն նուաճեաց և զօրացաւ ի վերայ սահմանաց նորա:

Եւ յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց Մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեաց գաւառ, ի գեւղն Երիզայ, ի մեհեանն Անահտական, զի անդ զոհս մատուսցեն. և իբրև կատարեցին զգործն անարժանութեան, իջին բանակեցան առ ափն գետոյն, զոր Գայլն կոչեն:

Իբրև եկն եմուտ ի խորան անդր և յընթրիս բազմեցաւ և իբրև ընդ գինիս մտին, հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի պսակս և թաւոստս ծառոց նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին, այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար լինել դիցն երկրպագութեան:

Յայնժամ խօսել սկսաւ թագաւորն ընդ Գրիգորի և ասէ. «Այր մի օտարական և անաշխարհիկ՝ եկիր յարեցար ի մեզ, և զիա՞րդ իշխես պաշտել զԱստուածն զայն, զոր ես ոչ պաշտեմ»: Եւ առ այն օր պահել հրամայեաց: Եւ ի վաղիւ անդր հրաման ետ, և ածին զ Գրիգորիոս առաջի թագաւորին:

Խօսել սկսաւ թագաւորն ընդ Գրիգորի և ասէ. «Այսչափ ամք են, զի տեսի ես քեզ, և յամենայն զօրութենէ քումմէ ծառայեցեր դու ինձ միամտութեամբ. և ես գոհ էի զվաստակոց քոց և ունէի ի մտի կեցուցանել զքեզ. ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ»:

Եւ պատասխանի Գրիգորիոս և ասէ. «Հրամայեալ է յԱստուծոյ, զի «Ծառայք հնազանդ լիցին մարմնաւոր տերանց», որպէս օրէն է, որպէս և դուդ իսկ վկայեցեր ինձ, զի ծառայեցի քեզ յամենայն զօրութենէ իմմէ: Այլ զԱստուծոյ զպատիւն և զպաշտօն ոչ ումեք վայել է տալ. զի նա միայն է արարիչ երկնից և հրեշտակաց, որ փառաւորիչք են մեծութեան նորա, և երկրի և մարդկան, որ ի նմանէ են ստեղծեալ. որոց պարտ է պաշտել զնա և առնել զկամս նորա. և այլ ամենայն, որ ի նոսա, որ ի ծովու և ի ցամաքի»:

Արքայ ասէ. «Գիտասջի՛ր, զի ապախտ արարեր զվաստակսն, զոր ինձն վաստակեցեր, որում ես եմ վկայ: Արդ՝ փոխանակ կենացն, զոր պարտ էր առնել քեզ, յաճախեմ քեզ նեղութիւնս և փոխանակ

պատուին՝ անարգանս. և փոխանակ բարձ տալոյ և յառաջ ձգելոյ՝ բանդ և կապանս, և մահ՝ որ հատանէ զյոյս կենաց մարդկան, եթէ ոչ առնուցուս յանձն դիցն պաշտօն մատուցանել, մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, զոր և թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց, որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան. և ծնունդ է մեծին արին Արամազդայ»:

Ասէ Գրիգորիոս. «Ես քեզ միամտութեամբ վաստակեցի. ինձէն երբեք զիմ վաստակս ապախտ ոչ արարից. զի և գրեալ է յԱստուծոյ, եթէ «Ծառայեսցեն մարմնաւոր տերանց». զի այնմ տէր է հատուցանող բարեաց. զի ոչ ինչ ակն ի քէն ունէի եթէ հատուսցես ինձ, այլ յԱրարչէն, որոյ են ստացուածք իւր, երևելի և աներևոյթ արարածք ամենայն:

«Այլ վասն որոյ ասեսն, թէ նեղութիւն յաճախեմ քեզ փոխանակ կենաց՝ հանելով զիս յայսց կենացս, ահա յաճախես ինձ զպատրաստեալ ուրախութիւնն Քրիստոսի, այն, որոյ տէրութիւնն յաւիտենից է, և արքայութիւնն ոչ անցանէ, և բարիքն ոչ պակասեն: Եւ փոխանակ պատուին, որ ասես անարգանս, շնորհես ինձ զպատիւն հրեշտակաց, փառաւորչաց Արարչին իւրեանց ցնծութեամբ:

«Եւ որ ասեսդ, թէ փոխանակ բարձ տալոյ և յառաջ ձգելոյ ի բանտ և ի կապանս արկանեմ, երանի է ինձ, զի առից յանձն զօրինակ կապանաց Տեառն իմոյ և ընդ նմին ուրախ եղէց և ցնծացայց յաւուր գալստեան նորա: Եւ մերժելով ի քոց բազմականացդ՝ ահա արկանես ինձ բազմականս առ հօր հաւատոյ Աբրահամու և ընդ արդարսն ամենայն, որ ուրախ լինելոց են յարքայութեանն Աստուծոյ:

«Եւ որ սպառնասդ ինձ մահու, ահա խառնես զիս ի գունդն Քրիստոսի, ուր են ամենայն կոչեցեալքն, հարքն և արդարք և մարգարէքն և առաքեալքն, մարտիրոսքն և ամենայն ընտրեալքն:

Արքայ ասէ. «Որ ասացերդ, թէ ի քէն ակն ոչ ունէի և ոչ պիտի իսկ, ես գիտեմ զի մահ խնդրես դու և անդէն ի գերեզմանի զհատուցումն քեզ, ուր են իսկ առաջինքն, որ մեռանն. վաղվաղակի յղեմ

զքեզ՝ ուր կամիսն երթալ: Կամ ո՞վ այն Քրիստոսն իցէ. ցո՛յց ինձ, զի գիտացից. ո՞ այն ոք իցէ հատուցանող վաստակոցն քոց, զոր կոչես դու արարիչ. միթէ ոք իցէ շահապետ գերեզմանաց, որում դուն ցանկաս հասանել, կամ բանդակալ կապանաց քոց նա՞.իցէ արձակիչ:

«Եւ ո՞ւր իցեն արդեօք անպակաս ուրախութիւնքն, զոր ասես, և կամ զի՞նչ գալուստն իցէ, ոչ գիտեմ. կամ զի՞նչ հրեշտակք իցեն, զոր ասես, կամ զի՞նչ յոյսն ձեր իցէ և մեր յուսահատութիւնն. ա՛ղէ, դու ասա՛ ինձ զայս ամենայն մեղմով: Այլ ոչ թողից քեզ զանարգանս դիցն, զոր թշնամանեցեր զնոսա. զի ասացեր, բա՛ս, մարդիկ են, և ի մահկանացու բնութիւն իջուցեր զնոսա. և անհնարին թշնամանս, զոր եղեր դիցն և կամ մեզ իսկ թագաւորացս, զի ասացեր, եթէ խելագար են թագաւորք, որ պաշտեն զնոսա»:

Գրիգորիոս ասէ. «Քրիստոս է որդի Աստուծոյ, յորոյ ի ձեռն արար նա զաշխարհս և կազմեաց. դատիչ կենդանեաց և մեռելոց, տէր. և հատուցանող բարերարացն բարիս և չարարարացն չարիս միանգամայն»:

Խօսել սկսաւ թագաւորն և ասէ. «Քանի՞ցս անգամ տուեալ է քեզ խրատ և պատուէր, զի մի՛ երկրորդեսցես առաջի իմ զհաստուածս բանիցդ առասպելեաց, զոր յօդեալ և ուսեալդ ես, զոր ոչդ վայել է քեզ խօսել. վասն որոյ ես խնայեցի ի քեզ՝ իբրև ի վաստակաւոր, զի եկեսցէ ի կարգ ուղղութեան՝ պաշտել զդիսն: Զորոց դու առեալ զնոցա պատիւն՝ ումպէտ կարդաս արարիչ. և որ են իսկ ճշմարտիւ արարիչ՝ թշնամանես և զմեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց. և ընդ նմին և զմեծն և զարին Արամազդ, զարարիչն երկնի և երկրի. ընդ նմին և զայլ աստուածսն կոչեցեր անշշունչս և անմռունչս. և ի մեզ ևս ձգտեցար դնել թշնամանս, համարձակեցար ասել ձիս և ջորիս: Եւ քանզի զամենայն թշնամանս յաճախեցեր, մինչ իշխեցեր ևս մեզ ասել անասունս՝ արդ ես արկի՞ց զքեզ ի տանջանս և եղից դանդանաւանդ ի կզակս քո. զի գիտասցես, եթէ ի սին բանից քոց, զոր յաճախեցեր առաջի իմ ասել՝ վաղվաղակի եղեն քեզ

արդիւնքն: Եւ այս, ասէ, մեծ է ինձ, որ խօսեցայս ընդ քեզ և մեծարանս եդի քեզ, և դու ետուր ինձ պատասխանի իբրև ընկերի»:

Եւ յետ այսորիկ հրամայեաց կախել զնա գլխիվայր զմիոյ ոտանէն. զի մինչ դեռ կայցէ գլխիվայր՝ ծխեսցեն ի ներքոյ նորա աղբ, և արբցէ զան սաստիկ բրօք դալարովք: Եւ տանջեցին զնա տասն այր՝ ըստ հրամանի թագաւորին. և կայր նա կախեալ այնպէս աւուրս եօթն:

Արդ՝ մինչ դեռ կայր նա կախեալ, սկսաւ խօսել ի կախաղանին այսպէս. «Գոհանամ զքէն, Տէ՛ր, որ արժանի արարեր զանարժանութիւնս իմ քոյոյ պարգևիդ»:

«Տո՛ւր ինձ, Տէ՛ր, շնորհս համբերութեան դառն տանջանացս, որով կտտեն զիս, զի և ես արժանի եղէց պահել զաւանդութիւն լուսաւորութեան հաւատոցս, զոր ետուր ինձ՝ ճանաչել զքեզ և առնել զկամս քո: Զի մի՛ ամաչեսցեն յուսացեալքն ի քեզ, որոց միանգամ պարծեցեալ են ի միածին Որդիդ քո՝ ի տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ի քէնդ առաքեցաւ, զոր դու առաքեցեր ի մահ վասն մեղաց մերոց, զի առցէ զմեղս մեր յանձն իւր և վասն յանցանաց մերոց պատժեսցի և առցէ զմեղսն յանձն իւր և ընդ նմին տարցի զպատուհասն յանցանաց մերոց յանձն իւր չարչարանօք խաչին, կատարեսցէ և տացէ շնորհս պարգևաց՝ իւրոց հաւատացելոցն:

«Եւ արդ՝ Տէ՛ր բարերար, որ ասացեր, եթէ «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի վախճան աշխարհի»՝ մի՛ թողուր զմեզ ի ձեռանէ քումմէ, այլ զօրացո՛ զմեզ ի կամս քո, զի համբերել կարասցուք պատերազմիս՝ վասն մեծի անուանդ քոյ. զի յայտնի լիցի պարծանք հաւատոցս մերոց ծառայից քոց ի տէրութիւն աստուածութեան քոյ. զի և այս յայտնի լիցի, եթէ ոչ կարէ ոք թշնամեաց յաղթել յուսացելոց քոց, որք անձանց են թշնամիք:

Եւ մինչդեռ կայր նա կախեալ այնպէս, խօսեցաւ զայս ամենայն. և գրեցին ատենակալ դպիրքն նշանագրացն. Զի առ ոչինչ համարեալ զկախաղանն, և ոչ զբրածեծ գանին գրեաց ինչ զվիշտս[7]. զի

ջարդեալ էր զամենայն մարմինս յոգորածեծն առնելոյ: Եւ այլ ևս բազում քան զայս խօսեցաւ՝ մինչդեռ կայր կախեալ գլխիվայր, և գրեցին և մատուցին զայն առաջի թագաւորին. քանզի էր կախեալ զեօթն օր զմիոյ ոտանէն: Եւ յետ այսորիկ ետ հրաման, և իջուցին զնա անտի:

Սկսաւ խօսել ընդ նմա թագաւորն Հայոց Տրդատ և ասէ. «Զի՞նչ ունիս, և կամ զի՞նչ եդեր ի մտի, լինե՞լ կցորդ կենաց իմոց, որպէս աշխատեցարն ընդ իս ի մանկութենէ վաստակովք, եթէ մեռանել տարապարտուց, ի տարապարտ խորհուրդս ընդունայնութեան մտացդ, ուր կասդ իսկ»: Նա պատասխանի ետ և ասէ. «Փութամ ես ելանել ի մարմնոյս և առնուլ զկեանսն յաւիտենից. այլ տո՛ւր հրաման վասն իմ որպէս և կամիս, զի՛նչ մահ և հրամայես ի վերայ իմ»:

Ետ պատասխանի արքայ և ասէ. «Ոչ տամ զայդ պարգև, եթէ լիցի քեզ վախճան մահու երագ երագ և հանգչել ի տանջանաց, զոր կոչես դու կեանս յաւիտենից. այլ կտտել զքեզ յերկար, զի ոչ լիցի հնար քեզ երագ մեռանել, այլ տանջել զքեզ յերկար և պահանջել ի քէն զանարգանս դիցն և զյամառութիւնդ քո, որ ոչ կամեցար պաշտել զնոսա»:

Եւ ետ հրաման բերել կոճեղս փայտից և առնել ըստ ոլոքի խոտցաց ոտի նորա և դնել և պնդել ուժգին առատկօք, մինչև իջանէր արիւնն ընդ ծայրս ոտից մատանց նորա, և ասէ. «Գիտիցե՞ս կամ զգայցե՞ս ինչ արդեօք զցաւսդ»: Նա պատասխանի ետ և ասէ. «Տուաւ ինձ զօրութիւն, քանզի խնդրեցի ես յԱրարչէն արարածոց, որ է ճարտարապետ և Արարիչ ամենայնի, որ երևի և որ ոչն երևի»: Եւ հրամայեաց, և լուծին զնա յայնմանէ:

Եւ ետ հրաման բերել բևեռս երկաթիս և վարել ընդ ներբանս ոտից նորա. և առեալ զձեռանէ նորա աստի և անտի՝ ընթացուցանէին զնա յայս կոյս և յայն կոյս. և արիւնն հոսէր իջանէր յոտից անտի և ոռոգանէր զերկիրն սաստիկ յոյժ: Եւ դարձեալ ասէ ցնա. «Ա՞յդ են աներևոյթ արարածք Աստուծոյն քո, զոր դուն տեսանես»:

Նա ասէ. «Բարիոք ասացեր, եթէ այս իցեն աներևոյթ արարածք Աստուծոյ իմոյ. վասն զի «Սերմանի տկարութեամբ և յառնէ զօրութեամբ, սերմանի անարգութեամբ և յառնէ փառօք»: Զի «Լալով լան՝ որք տանիցին զսերմանիս իւրեանց», այսինքն են վիշտ և չարչարանք, որ հասանեն մեզ, որ վասն աստուածպաշտութեանն են. այլ յորժամ որայն ի հունձս եկեալ մատուցցէ զատոքութեանն բերրի զպտուղ սերմանողացն, ընդ նմին և զցնծութիւն բերկրութեան ուրախութեանց ամենայնի բերէ»:

Ասէ Թագաւորն. «Բախեցէ՛ք զման լալոյ արտուասացն[8]. թող եկեսցէ դմա ուրախութիւն»: Եւ հանին նմա կռուփս ի գլուխն[9], հարկանելով զնա անհնարին: Սկսաւ հարցանել զնա և ասէ. «Ա՞յդ է ուրախութիւնն»: Եւ նա ասէ. «Այո՛, այս է. զի թէ ոչ քրտնեսցի մշակն ի տապ խորշակի ջերմոյն արեգակնակէզ լինելով, ոչ ըմբռնէ զարդիւնս շայեկանս ուրախութեան պտղոցն ամերայնւոյն հանգըստեան»: Եւ պատասխանի արքայ և ասէ. «Դու աստէն իսկ աշխատեա՛ց ի մշակութիւն տանջանացդ, յորում կասդ»:

Եւ ետ հրաման բերել աղ և բորակ և բարկ քացախ և ընկենուլ զնա յորսայս և դնել զգլուխ նորա ի հիւսանց մամուլս և դնել փող եղեգան ի քիթս նորա և արկանել զայն ընդ քիթս նորա:

Եւ յետ այսորիկ ետ հրաման, և բերին պարկս օդենիս մեծամեծս և լցին զայն մոխրով հնոցի և արարին թուլագոյն, զի մի՛ կարի լի իցէ, վասն տուրևառ շնչոյն, զի հարկանելով ընդ խելսն վտանգեսցէ զնա: Եւ ագուցին զայն ի գլուխ նորա և կապեցին զբերան պարկին ի փողս նորա, և կաց նովաւ աւուրս վեց: Եւ յետ այսորիկ ետ հրաման և ածին առաջի Թագաւորին և ի բաց հանին զպարկն ի գլխոյն:

Սկսաւ խօսել Թագաւորն և ասէ. «Ուստի՞ գաս. Թերևս յարքայութենէ անտի գայցես զոր ասէիր»: Ետ պատասխանի Գրիգորիոս և ասէ. «Այո՛, ի՛սկ յարքայութենէ, զոր ասէի, անտի գամ. վասն զի արժանի արար զիս Աստուած զայս ամենայն կրել յանձին. վասն անուան իւրոյ: Արդարև իսկ կայ մնայ ինձ արքայութիւնն, որ ոչ անցանէ.

փոխանակ մոխրոյն՝ անթառամ ծաղիկքն, և փոխանակ քացախոյն՝ անսպառ ուրախութիւնքն»:

Եւ սաստկացեալ Թագաւորին՝ ետ պնդել զոտս նորա ի հրապոյրս տկաց և կախել զնա գլխիվայր. և ետ դնել ձագար ի նստոյ տեղւոջ նորա և արկանել ջուր տկաւ յորովայն նորա: Եւ ետ հրաման, և իջուցին յայնմանէ. և սկսաւ հարցանել զնա և ասէ. «Առնե՞ս զկամս իմ, թէ ոչ պաշտես զդիսն, որ են ամենայն երկրի կեանք և շինութիւն»:

Ետ պատասխանի Գրիգորիոս և ասէ. «Ես տեառն Աստուծոյ իմոյ երկիր պագանեմ, զի նա է արարիչ և կեանք և շինութիւն. և զՈրդին հաստիչ և համազօր և համագործ, և զՀոգի նորին, որ ելից իմաստութեամբ զամենայն տիեզերս: Այլ զկուռս կռեալս, կոփեալս, քերեալս և արարեալս՝ ոչ կալայ երբեք առ աստուածս, և մի՛ լիցի այլ ունել՝ մինչև իցէ շունչ իմ ի մարմին իմում»: Ետ պատասխանի Թագաւորն և ասէ. «Փոխանակ զի իշխեաց ասել կռեալս և քերեալս դիցն՝ պահանջեսցի դա ընդ այդորիկ»:

Եւ ետ հրաման քերել զկողս նորա երկաթի քերչօք, մինչև ոռոգան վայրքն ամենայն յարենէ նորա: Եւ սկսաւ ասել ցնա. «Արդ արասցե՞ս զկամս իմ, Գրիգորիո՛ս, որ յայդպիսի տանջանս մատնեցար»: Ասէ ցնա. «Ինձ լիցի պահել զուխտ աստուածպաշտութեան, զոր ուսայ ի մանկութենէ իմմէ, որ կարողն է փրկել զիս յամենայն նեղութենէ, և զքեզ արկանել ի տանջանս, որ ոչ ճանաչես զնա, և դարձեալ զայլս ևս զարհուրեցուցանել կամիս և քակել ի պաշտմանէ սիրոյ նորա»: Ետ պատասխանի Թագաւորն և ասէ. «Ո՞ւր է Աստուած քո, որ փրկէն զքեզ ի ձեռաց իմոց և կամ դատի, որպէս ասացեր, դատասանօք իւրովք»:

Եւ ետ հրաման, և բերին տատասկ երկաթի բազում սակառեօք, և արկին ի վերայ գետնի Թանձր. և մերկացուցին զԳրիգորիոս և արկին ի վերայ տատասկին մերկ. և ծակոտեալ լինէին մարմինք նորա առ հասարակ. և քարշեցին և Թաղեցին զնա ի տատասկին. և շրջշրջէին

զնա անդէն, մինչև առ հասարակ ծակոտեցան մանրիկ մարմինք նորա, մինչ զի ոչ մնաց ի նմա տեղի ողջ:

Եւ ի միւսում աւուրն ածին զնա առաջի նորա: Սկսաւ հարցանել զնա և ասէ. «Զարմացեալ զարմացեալ եմ, և կարի քաջ. զիա՞րդ կեաս դու կենդանի. և ոչ ինչ գրեցեր դու զցաւսդ, և խօսիս ևս. զի արժան էր, թէ վաղուց էիր դու վախճանեալ ի տանջանաց այտի»:

Ետ պատասխանի Գրիգորիոս և ասէ. «Ոչ է իմ ժուժկալութիւն տոկալոյդ՝ իմով զօրութեամբ, այլ ուժով չնորհի Տեառն իմոյ և իմոյ յօժարութեան կամացս, որ խնդրեցի ի նմանէ, զի և դու զփորձ առցես զծառայիս Աստուծոյ. զի գիտասցես, թէ ոչ ոք կարէ մեկնել զյուսացեալս ի նա ի սիրոյ նորա: Զի նա տայ ոյժ և զօրութիւն համբերութեան՝ համբերել նեղութեանց և փորձութեանց. զի ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց և յամբարշտութեան և յապստամբութեան իւրեանց, որ իբրև զքեզդ իցեն, և կեցցեն ամօթով յաւուրն այցելութեան և յանդիմանութեան»:

Եւ ետ հրաման արկանել կապիճս երկաթիս ի ծունկս նորա և. վարել ուռունս ստուարս և բառնալ ի կախաղան, մինչև յօշեսցին ծունկք նորա անդէն: Եւ կաց կախեալ այնպէս զերիս աւուրս:

Եւ յաւուրն չորրորդի հրաման ետ թագաւորն, և իջուցին զնա ի կախաղանէն և ածին կացուցին զնա առաջի նորա: Խօսել սկսաւ թագաւորն և ասէ. «Տե՛ս դու, Գրիգորիո՛ս, զի ոչ փրկեաց զքեզ սնոտի յոյսն քո, յոր յուսայիր դու. չեհան զքեզ ի ձեռաց իմոց»:

Ետ պատասխանի Գրիգորիոս և ասէ. «Տե՛ս դու, զի սնոտի են յոյսքն քո, և ոչ կարացին հաւանեցուցանել և ոչ երկեցուցանել զիս. զի զոր դուն պաշտես՝ սնոտի է, և ամենայն գործ մոլորութեան քոյ: Այլ տե՛ս դու, զի ո՛չ ի տանջանաց քոց երկեայ ինչ ես և ոչ զսաստ ահի քոյ համարեցայ ինչ. այլ զօրութեամբ Տեառն իմոյ մարտեալ ընդ թշնամւոյն, որ ի ծածուկն քև պատերազմի ընդ ճշմարտութեան, և մատնեցի զմարմինս իմ ի կիզումն տանջանաց. զի եթէ վաղ եթէ անագան, սակայն քակտի հնացեալ մարմինն. զի եկեսցէ ճարտարապետն, գտեալ զորդիս մարդկան՝ միւսանգամ զնոյն հնացեալ անդրէն նորոգեսցէ: Զի զորոց զոգիսն գտանէ ի պարկեշտութեան, ի զգաստութեան, ի սրբութեան, ի քաղցրութեան, ի հեզութեան, յաստուածպաշտութեան կեցեալ՝ նորոգէ, զարդարէ, կեցուցանէ զնոյն ոգիս նովին մարմնով: Իսկ զորս գտանէ յանօրէնութեան և յամբարշտութեան, յաստուածատեցութեան, ի կռապաշտութեան կեցեալ, թէպէտ և բուսանել բուսանին մարմինք նոցա առ ժամանակ մի, այլ զնոսին նովին ոգւով և նովին մարմնով արկանէ ի գեհեն, յանչէջ հուրն, յաւիտենից տանջանս, մանաւանդ զայնոսիկ, որ իբրև զքեզդ են ի կռապաշտութեան»:

Իսկ իբրև լուաւ զայն թագաւորն, բարկացաւ ընդ բանսն և ասէ. «Ինձ ոչ է փոյթ զայնմանէ, թէ նորոգեսցէ՞ զքեզ Աստուածն քո թէ ոչ. ինձ ոչ է պէտ զայնմանէ: Այլ զի ասացեր, եթէ զքեզ յանչէջ հուրն արկանէ՝ ես զքեզ աստէն իսկ այրեցից չիջանուտ հրով. տեսցուք, քո Աստուածն զի՞ արասցէ»:

Եւ ետ հրաման երկաթի պուտամբք հալել կապար, և մինչդեռ ջերմ էր՝ իբրև զջուր հոսել արկանել զմարմնով նորա: Եւ այրեցին զմարմինս նորա առ հասարակ, և ոչ մեռաւ. այլ կայր մեծաւ ուժով, և զինչ հարցանէին՝ վաղվաղակի տայր պատասխանի:

Եւ զարմացեալ թագաւորն ընդ ժուժկալութիւն համբերութեանն կարի անհնարին և ընդ տոկալ նորա՝ և ասէ, թէ «Զիա՞րդ կայ ի քեզ չունչդ յայդչափ ժամանակաց և ի չարաչար տանջանացդ, որով զքեզ կտտեցի»: Ետ պատասխանի Գրիգորիոս և ասէ. «Ո՞չ վաղ իսկ ասացի քեզ, եթէ զի առցես դու զփորձ համբերութեան ծառայիս Աստուծոյ. զի տայ զօրութիւն յամօթ առնել զայնոսիկ, որ առանց նորա իցեն և մարտնչիցին ընդդէմ նորա իբրև զքեզդ: Զի այսպէս ասէ. «Ոչ թողից զձեզ և ոչ ընդ վայր հարից»: Արդ՝ այս է պահպանութիւն նորա առ արարածս իւր և առ սիրելիս իւր, զի պահեսցէ զնոսա ի հաւատս իւրեանց, որ ի նա, մինչև հատուսցէ նոցա ի գալստեան իւրում»:

Եւ մինչդեռ խորհէր Տրդատիոս խօսել և այլ ողոքով ընդ նմա և յղել պատգամ և խոստանալ կեանս և պատիւս, որում ոչ ինչ էր լսելոց, «եթէ այնմ ևս ոչ լսիցէ, ասէ, և այլ ևս յաւելից և ի տոկ կոտեցից». - յառաջ մատուցեալ ոմն ի նախարարացն, որում անուն էր Տաճատ, փեսայ Արտաւանայ սպարապետի արքայի, սկսաւ խօսել և տալ տեղեկութիւն և ասել այսպէս վասն նորա, թէ «Վասն զի չէ պարտ կենաց, վասն այնորիկ ոչ կամի կեալ և զլոյս տեսանել: Զի այսքան ժամանակք են, որ առ մեզ բնակեալ է, և ոչ գիտէաք զսա. այլ դա է որդի Անակայ մահապարտի, որ սպան զհայր քո Խոսրով և արար խաւար Հայոց աշխարհիս և ի կորուստ մատնեաց զայս աշխարհ և ի գերութիւն. արդ՝ չէ պարտ կեալ դմա, զի որդի վրիժապարտի է դա»:

Եւ յետ այսչափ հարցից և տանջանաց, գանից և բանտից, գելարանաց և կախաղանաց, դառն նեղութեանց և ամենայն կոտանաց, որով կոտեցին զնա, բազում համբերութեամբ յանձն իւր տարեալ վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. արդ՝ իբրև այնմ ևս հասանէր թագաւորն ի վերայ իրացն, եթէ արդարև որդի Անակայ Պարթևի է, որ սպան զԽոսրով հայր նորա, հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ և տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի և իջուցանել ի վիրապ ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի: Եւ եղև նա յայնմ վիրապի ամս երեքտասան: Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ի ձմերոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, ի Հայոց չխարհ յարևելս:

Արդ՝ ի քսան և ի վեց ամսոյն հոռի կատարեցաւ սուրբն Հռիփսիմէ դասուն սրբով, երեսուն և երեք նահատակիցն ընկերօքն՝ հանդերձ, և ի քսան և եօթն ամսոյն հոռի՝ սուրբն Գայիանէ երկու իւրովք ընկերօքն, որք ընդ նմա պատերազմեալք պսակեցան և առին զպսակն յաղթութեան:

Արդ՝ աւուրս վեց ի խոր տխրութեան և յանհնարին տրտմութեան կացեալ թագաւորն առ անձուկ սիրոյ գեղոյն Հռիփսիմեայ. ապա յետ այսորիկ ժամ տուեալ որսոյ՝ ամենայն զօրաց ածել կուտել զպառականն, խուճապական սփռեալ, երագազ տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթալ ի դաշտն Փառական Շեմակաց:

Այն ինչ ի կառս ելեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել, անդէն վաղվաղակի պատուհաս ի Տեառնէ ի վերայ հասանէր. և հարեալ զթագաւորն այսոյն պղծութեան՝ ի կառացն ի վայր կործանէր: Եւ անդէն մոլեգնել սկսաւ և իւրովի ուտել զիւր մարմինն. նա և ըստ նմանութեանն Նաբուգոդոնոսորայ արքային Բաբելացւոց, ելեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքս՝ ի նմանութիւն վայրենի խոզաց, իբրև զնոսա ընդ նոսա ի մէջ նոցա երթեալ բնակէր: Եւ այնուհետև մտեալ յեղէգն, խոտաճարակ լեալ անհնարին անզգայութեամբ, մերկ զանձն ընդ դաշտսն կոծելով: Զի թէպէտ կամեցան արգելուլ անդէն ի քաղաքին՝ ոչ կարացին. մի՝ վասն բնական ուժոյն, և մի՝ վասն զի էր ոյժն դիւաց, որ ի նմայն հարեալ էին:

Նա և ամենայն մարդիկն, որ ի քաղաքին էին, նոյն օրինակ դիւաբախք մոլեգնէին. և անհնարին կործանումն ի վերայ աշխարհին հասանէր: Եւ ամենայն ընտանիք թագաւորին, ծառայք և սպասաւորք առ հասարակ, հարուածովք հարեալք էին. և անհնարին սուգ վասն հարուածոցն լինէր:

Յայնմ ժամանակի տեսիլ երևեալ յԱստուծոյ ի վերայ քեռ թագաւորին, որոյ անուն էր Խոսրովիդուխտ: Արդ՝ եկեալ խօսէր ընդ մարդկանն, պատմէր զտեսիլն և ասէր. «Տեսիլ երեւեցաւ ինձ յայսմ գիշերի. այր մի ի նմանութիւն լուսոյ եկեալ՝ պատմեաց ինձ, եթէ «Ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցդ, որ եկին հասին ի վերայ ձեր եթէ ոչ յղեսջիք դուք ի քաղաքն յԱրտաշատ, ածել անտի զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ ուսուցցէ ձեզ դեղ ցաւոցդ բժշկութեան»:

Արդ՝ իբրև լուան մարդիկն, սկսան ծիծաղել զբանիւքն, զոր ասաց. սկսան խօսել ընդ նմա և ասեն. «Եւ դո՛ւ, ուրեմն մոլեգնեցար.

դև ուրեմն հարաւ ի քեզ: Զիա՞րդ է, զի այս հնգետասան ամ է, զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն, և դու ասես, եթէ կենդանի է. արդ և ոսկերոտին իսկ ո՞ւր իցեն. զի նոյն օրին, իբրև իջուցին զնա անդր, յօձիցն իսկ տեսլենէն նոյնժամայն սատակեալ իցէ»:

Իսկ կրկնեաց դարձեալ ևս կնոջն զնոյն տեսիլ և հնգկնեաց սպառնալեօք, զի եթէ ոչ պատմեսցէ ստէպ ստէպ՝ մեծամեծ տանջանս ընկալցի, և հարուածք մարդկան և թագաւորին ևս քան զևս սաստկասցի մահու և պէսպէս տանջանօք: Եւ մտեալ անդրէն Խոսրովիդուխտն՝ մեծաւ երկիւղիւ և զգուշութեամբ ասաց զբանսն հրեշտակին:

Իսկ նոքա վաղվաղակի յղէին անդր նախարար զոմն աւագ, որոյ անուն Օտայ կոչէր: Եւ գնաց նա ի քաղաքն Արտաշատ՝ հանել զնա ի խոր բանդէ վիրապին: Արդ՝ իբրև եկն եհաս Օտայն ի քաղաքն յԱրտաշատ, ընդ առաջ ելանէին նմա քաղաքացիքն՝ հարցանել զպատճառս գալոյն: Եւ նա ասէ ցնոսա, թէ «Վասն կապելոյն Գրիգորի եկեալ եմ, տանել զնա»: Իսկ նոքա զարմացեալ առ հասարակ ասէին. «Ո՞ գիտէ, թէ կայցէ. զի բազում ամք են, զի ընկեցին զնա անդր»: Իսկ նա պատմեաց զիրս տեսլեանն և զգործն զինչ եղևն իսկ:

Եւ եկին բերին կարս պարանաց երկայնս և ստուարս և կցեցին իջուցին ի ներքս: Աղաղակեաց Օտայ նախարարն ի ձայն մեծ և ասէ. «Գրիգորիո՛ս, եթէ կայցես ուրեք՝ ե՛կ ի դուրս. զի տէր Աստուածն քո, զոր պաշտէիրն դու, նա հրամայեաց հանել զքեզ այսր»: Եւ անդէն յոտն կացեալ վաղվաղակի շարժեաց զպարանն և բուռն հարեալ ունէր:

Իսկ սոցա գիտացեալ՝ ձգեալ հանին զնա ի վեր և տեսին, զի թխացեալ էր մարմին նորա իբրև զածուղ սևացեալ. և անդէն հանդերձս մատուցեալ զգեցուցին նմա և խնդութեամբ առին գնացին յԱրտաշատ քաղաքէ, տանել ի Վաղարշապատ քաղաք: Յայնմ ժամանակի առ վտանգի տարակուսի ցաւոցն՝ ելեալ թագաւորն յերամէ խոզիցն՝ դիւին առեալ ածէր ընդ առաջ նորա մերկ խայտառակ: Եւ նախարարքն արտաքոյ քաղաքին սպասէին նոցա:

Արդ՝ իբրև տեսանէին զնոսա ի բացէ, զի գային Գրիգորիոս Օտայիւն հանդերձ և այլ բազում մարդիկ, որ գային ընդ նոսա յԱրտաշատ քաղաքէ, ընդ առաջ խաղացեալ, մոլեգնելով և ուտելով զմարմինս իւրեանց՝ դիւահարէին և փրփրէին առաջի նորա:

Իսկ նա վաղվաղակի ծունր եդեալ յաղօթս կայր, և նոքա անդրէն ի զգաստութիւն դառնային: Եւ նա անդէն հրամայեաց, զի արկցեն զանձամբք իւրեանց հանդերձս և ծածկեսցեն զամօթ իւրեանց: Եւ մատուցեալ թագաւորն և նախարարքն՝ բուռն հարեալ ունէին զոտից սրբոյն Գրիգորի և ասէին. «Խնդրեմք ի քէն, թո՛ղ մեզ զյանցումն մեր, զոր մեք ընդ քեզ արարաք»:

Իսկ նա մատուցեալ կանգնեաց զնոսա ի գետնոյ անտի և ասէ. «Ես մարդ եմ իբրև զձեզ և մարմին ունիմ իբրև զձերդ. բայց դուք ծաներո՛ւք զձեր արարիչն, որոյ զերկինս և զերկիր արարեալ է, զարեգակն և զլուսին և զաստեղս, զծով և զցամաք. և նա կարող է զձեզ բժշկել»:

Իսկ անդէն սկսաւ հարցանել Գրիգորիոս, թէ ո՛ւր եդեալ են մարմինք վկայիցն Աստուծոյ: Իսկ նոքա ասեն, թէ «Զորո՞ց վկայից ասես»: Եւ նա ասէ. «Որ վասն Աստուծոյն մեռան ի ձէնջ»: Իսկ նոցա ցուցեալ նմա զտեղիսն: Իսկ նա ընթացեալ ժողովել և ամփոփել զմարմնս նոցա ի սպանման տեղեացն, զի կային անդէն: Եւ տեսին, զի զօրութեանն Աստուծոյ պահեալ էր զմարմինս նոցա. զի այն ինն տիւ էր և ինն գիշեր, զի արտաքոյ ընկեցեալ կային մարմինք նոցա, զի ոչ գազանի էր մատուցեալ և ոչ շան, քանզի անդէն չուրջ զքաղաքաւն էին, մօտ ի քաղաքն. և ոչ հաւու վնասեալ ևս էր նոցա. և ոչ հոտեալ էին մարմինք նոցա:

Իսկ նոքա բերին հանդերձս սուրբս պատանաց. բայց երանելին Գրիգորիոս ոչ արժանի համարէր զպատանսն բերեալս թագաւորին, կամ զայլոց մարդկանն. այլ իւրաքանչիւր պատառոտուն հանդերձիւն պատէր զսուրբսն. «Առ անգամ մի[10], ասէ, մինչև լիջիք դուք արժանի պատել զմարմինս նոցա»: Եւ ամփոփեաց, առ գնաց ի

հնձանն, ուր վանքն իսկ լեալ էին նոցա. և իւր իսկ վանս անդէն կալեալ՝ օթևանս առնէր: Եւ երանելին Գրիգորիոս զցայգն ամենայն առ Աստուած աղօթս մատուցանէր վասն նոցա փրկութեան և խնդրուածս առնէր, զի դարձցին և ապաշխարութեան հնարս գտանել մարթասցեն:

Եւ ի վաղիւ անդր թագաւորն և նախարարքն և մեծամեծ աւագանին խառնաղանճ ամբոխիւն բազմութեամբ եկեալ ի ծունր իջեալ առաջի սրբոյն Գրիգորի և առաջի սուրբ ոսկերաց վկայիցն Աստուծոյ՝ խնդրէին և ասէին. «Թո՛ղ մեզ զամենայն յանցումն չարեացն, զոր մեք ընդ քեզ արարաք. և խնդրեա՛ դու վասն մեր յԱստուծոյ քումմէ, զի մի՛ կորիցուք»:

Եւ իբրև խօսեցաւ երանելին Գրիգորիոս զայս ամենայն, առհասարակ զձեռս զօձիւք արկեալ՝ զպատմուճանսն պատառէին. թագաւորն և նախարարքն և այլ բազմութիւն մարդկանն իջեալ ի գետին ընդ մոխիր թաւալեալ՝ ասէին առ հասարակ իբրև ընդ մի բերանն. «Արդ կայցէ՞ ինչ մեզ յոյս թողութեան յԱստուծոյ. զի մեք կորուսեալ էաք ի տգիտութեան մերում և ի խաւարային ճանապարհս. արդ՝ իցէ՞ թէ թողցին մեզքս այս մեր բազումք»:

Եւ պատասխանի Գրիգորիոս և ասէ. «Մարդասէր է Տէր, երկայնամիտ և բազումողորմ է. գթած առ ամենեսեան, որ կարդան առ նա, և որ խնդրեն ի նմանէ՝ թողու նոցա»:

Իսկ նոքա ասէին, թէ «Ծանո՛ մեզ, և հաստատեա՛ զմիտս մեր, զի մարթասցուք աղաչել զերեսս Արարչին մերոյ զոր ոչն գիտէաք. եթէ դարձեալ արդարև դարձցի՞ և ընկալցի՞ զմեզ յապաշխարութիւն. և կայցէ՞ ևս տեղի դարձի, և չիցէ՞ արդեօք հատեալ յոյս կենաց մերոց ի նմանէն: Կամ դու արդօք ո՞չ յիշեսցես զչարիսն, զոր մեք ընդ քեզ արարաք. և տայցե՞ս մեզ զուղիղ վարդապետութիւն, և ո՞չ կալեալ ընդ մեզ ոխս, և ո՞չ չարակնիցես զմեզ, և ո՞չ արկանիցես զմեզ յարդարև յուղիղ ճանապարհէն»:

Եւ առ հասարակ գոչիւն բարձեալ մարդկանն ի գոչիւն լալոյ թագաւորաւն հանդերձ՝ ամենայն մարդիկն անկեալ թաւալէին առաջի նորա. զի սակաւիկ մի ոչ կարէին մեկնել ի նմանէ, վասն անհնարին

հարուածոցն բարկութեան դիւացամոլ տանջանացն: Զի թէ լինէին երբեք ուրեք մեկնեալ ի նմանէ՝ անդէն դիւացն ի վերայ հասեալ զայրագնեցուցանէին, անդէն իւրեանց ատամամբքն ուտել մարդկան զմարմինս իւրեանց:

Արդ՝ իբրև լուաւ սուրբն Գրիգորիոս զայս ամենայն բանս զոր խօսեցան նոքա առաջի նորա, իսկ նա յարտասուս հարեալ ասէ ցնոսա. «Դուք ինքնին գիտէք զայն ամենայն չարիս, զոր դուքն ընդ իս արարէք. զիա՞րդ կարիցէ մարդ տոկալ յայնչափ չարչարանաց վերայ, կամ գո՞յր հնար տոկալ ժամ մի՝ լոկ ի տեսլենէ օձի միոջ բացուստ ի բաց[11], թո՛ղ թէ ի մէջ բազմութեան օձիցն լինել ամս հնգետասան, և ողջ ապրել, և տոկալ և բնակել ևս հանապազ ի մէջ նոցա:

«Նախ յայդմ իսկ տեսէք զզօրութիւն Արարչին. զի որ զամենայն արար՝ զիարդ և կամի, յորժամ և կամի կարող է զիւրաքանչիւր բարս փոփոխել. զի և զայն զմեղանչական զթունաւոր գազանս, որ յանհնարին գբի անդ, ընդ իս անարժանի՝ ընդ իւրում ծառայիս քաղցրացուցանէր: Զի թէպէտ և մեք անարժանք էաք, սակայն վասն ձերոյ օգտի զմեզ պահեալ՝ երևեցոյց զիւրոց սքանչելեացն զօրութիւն. զի զմեզ պահեալ ածեալ, և ի ձեր մշակութեան գործն եկեալ, և զօգուտն զձեր բերեալ, Աստուծոյ մարդասիրութիւնն մեօք առ ձեզ կատարեսցի»:

---

[1] զվրիժուց հատուցումն խնդրել - վրեժը լուծել
[2] այստեղ՝ իշխանութիւն
[3] Պահլաւն - բուն Պահլավական աշխարհը
[4] դէտ ակն կալեալ ճանապարհացն - զննելով ճանապարհները
[5] հատուածի պատճառաւ - գաղթի պատրվակով
[6] մինչ դեռ ջերմ ոգիքն ի ծոցոյն չև էին թափեալ - քանի դեռ ջերմ շունչը նրա կրծքից չէր հեռացել
[7] ոչ զբրածեծ գանին գրեաց ինչ զվիշտս - արհամարհեց բրածեծ լինելու տանջանքը
[8] զամաև լալոյ արտասուացն - աչքերը
[9] հանին նմա կռուփս ի գլուխն - բռնցքահարեցին նրան
[10] առ անգամ մի - առայժմ (այսպես)
[11] լոկ ի տեսլենէ օձի միոջ բացուստ ի բաց - (մարդ) մեկ օձի տեսքից հեռու (է փախչում)

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ

(Հատուածք)

Գիրք երկրորդ

Եղծ քեշին պարսից

Գ. Զի ոչ երբէք ի միոջէ աղբերէ երկու բղխմունք ելանեն, մինն քաղցր և միւսն դառն. և ոչ ի միոջէ ծառոյ երկու պտուղք՝ մին անոյշ և մին դաժան: Արդ եթէ քաղցր գիտեն զԶրուանն, ոչ պարտին զդառն պտուղն զԱրհմն ի նմանէ համարել. և եթէ դառն հաշուին, չէ պատճառ զքաղցր պտուղն զՈրմիզդ ի նմանէ դնել: Եւ ի դէպ ելանէ նոցա աստուածական բարբառն, որ ասէ. կամ արարէ՛ք զծառն քաղցր և զպտուղ նորա քաղցր և կամ արարէք զծառն դառն և պտուղ նորա դառն. զի ի ծառոյ անտի պտուղն իւր ճանաչի:

Եւ եթէ արարածք յիւրաքանչիւր յօրինուածս կան և երբէք զսահմանօքն եղելօք նոցա ոչ անցանեն, ո՞րչափ ևս առաւել Զրուանն, եթէ մշտնջենաւոր ոք էր, և արարածս առնելոյ հնարս խնդրէր՝ եթէ անձամբ և թէ այլով և թէ որդովն, որպէս ասենն, պարտ էր կարգ ինչ ցուցանել և ոչ անկարգութիւն: Զի ոչ երբէք տեսաք, թէ կովք էշս ծնան, և էշք եզինս, և ոչ գայլք մաքիս, և ոչ մաքիք աղուէսս. և ոչ առիւծք ձիս, և ոչ ձիք օձս. բայց միայն մի ինչ ծնունդ է, զոր մարդիկ հնարեցան արտաքոյ կարգաց բնութեան, ծնուցանել ի ձիոց և յիշոց ջորիս. և նոյնք անսերմն և անծնունդ են. զի ոչ յԱստուծոյ կարգեցան, այլ ի մարդկանէ հնարողութենէ: Արդ Զրուանն եթէ արջառ էր, զկարիճն զԱրհմն զիա՞րդ ծնանէր. և եթէ գայլ էր, զդառն զՈրմիզդ հի՞մ ծնանէր. ո՞չ ապաքէն մարդկան մտաց բաջաղանք են:

Ո՛վ մորոսութիւն. չև ուրեք որդի ի միջի[1], և նա չյղացելոյն և չծնելոյն անուն դնէր: Ամենայն ծննդոց յետ ծննդեանն դնին անուանք, և նա զիա՞րդ յառաջ քան զծնանելն դնէր նմա անուն Որմիզդ, բայց թէ հաւատայր, թէ և արդարև լինէր նմա որդի. և եթէ հաւատայր, ընդէ՞ր երկմտեաց, և եղև երկմտութեամբն պատճառ ծննդեան Արհմենի, ուստի չարիքն յաշխարհ մտին: Եւ այն են զարմանք, զի մինն ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր, և միւսն յառժամայն[2] յերկմտութենէ անտի:

Դարձեալ որ զայն գիտաց, եթէ երկու որդիք են յորովայնի անդ, զայն ընդէ՞ր ոչ ծանեաւ, թէ մինն բարի և միւսն չար: Եւ թէ գիտաց և ոչ եղծ զչարն, ինքն է պատճառ չարին. ապա եթէ զայն չգիտաց, զիա՞րդ իցէ հաւատալի, եթէ զմիւսն ծանեաւ. և եթէ յայնժամ ոչ իմացաւ, յորժամ խաւարին և ժանդահոտ ետես զնա՝ և յա՞յնժամ արդեւք ոչ գիտաց: Այլ և գիտաց և ետես և արար զխաւարինն թագաւոր. ինքն է պատճառ չարեացն, այնու, զի ոչ եղծ զչարն, այլ և թագաւորութիւնն ևս ետ նմա ինն հազար ամի: Եւ ո՞ւմ[3] թագաւորեցոյց զնա, եթէ ոչ բարիոք արարածոցն եղելոցն յՈրմզդայ առ ի չարչարելոյ զնոսա՝ խառնելով ի նոսա զիւր չար արարածս:

Այլ և զՈրմիզդ, ասեն, թագաւորեցոյց ի վերայ նորա:

Եթէ թագաւոր նորա իցէ Որմիզդն, զիա՞րդ զբարիոք արարածսն իւր տայցէ չարչարել: Եթէ հայրն յորդւոյն արարածս ոչ խնայեաց, այնու, զի ի ձեռս չարին մատնեաց, որդին զիւրսն զիա՞րդ ոչ զընդայցէ: Առ տկարութեա՞ն ինչ, թէ՞ առ չարակամութեան: Եթէ առ տկարութեան չգեմեղիցէ, ապա ոչ այժմ թագաւորել է նմա, և ոչ ի վախճանի[4], որպէս ասենն, յաղթել կարէ: Իսկ եթէ առ չարակամութեան իցէ, գտանի զի ոչ միայն հայրն, որ թագաւորեցոյց զչարն, է պարտ չարեաց, այլ և որդին, որ կամակից եղև հօրն և համարձակիչ չարին:

Դարձեալ զի զթագաւորութիւնն որդոցն ետ, միում զինն հազարամեան և միւսումն զանսպառականն, ինքն յորո՞ւմ կարգի կայցէ: Զի մինչ չէրն ինչ, չէր իմիք[5] թագաւոր, քանզի և ոչ արարիչք իրիք էր, և յորժամ որդիքն եղեն, նոքա եղեն արարիչք՝ ոմն բարեաց և ոմն չարեաց, և նոքին թագաւորք՝ ոմն ժամանակեան և ոմն յաւիտենա-

կան. և մնաց Զրուանն դատարկ յարարչութենէ և ի թագաւորութենէ. զի արարիչ չէ, քանզի չէ իւր արարեալ. և թագաւոր չեղև, քանզի ո՞յր արարածոց լինէր թագաւոր: Եւ յայտ է, թէ ոչ էր երբէք Զրուանն և ոչ է: Զի որ է ոք, կամ արարիչ է կամ արարած: Արդ սա քանզի ոչ արարիչ է և ոչ արարած, ոչ երբէք նա Աստուած, և ոչ է և ոչ լինի:

---

[1] չև ուրեք որդի ի միջի - դեռ մեջտեղը որդի չկար
[2] առժամայն - հենց նույն ժամին՝ նույն պահին, հենց նոր
[3] ո՞ւմ, այսինքն՝ ո՞ւմ վրա
[4] ապա ոչ այժմ թագաւորել է նմա, և ոչ ի վախճանի - ապա նա ո՛չ այժմ է թագավորում, ո՛չ էլ հետո
[5] իմիք, իրիք, որևէ բանի

Դ. Այլ իբրև Զրուանն, ասեն, զայն ի մտի խորհեցաւ, թէ ոք յորդոցն իմոց վաղ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից, գիտաց Որմիզդ և զխորհուրդն յայտնեաց Արհմենին:

Թէ զհօրն խորհուրդ ծանեաւ Որմիզդ, զեղբօրն չարաճճոյ զխորհուրդ ընդէ՞ր ոչ գիտաց՝ թէ ծակէ զորովայնն և ելանէ և յառաջ երթայ առնուլ զթագաւորութիւնն, որ լինելոց էր առ եղեռանէ նմա և արարածոցն իւրոց, զի նախ յառաջնումն իսկ յետս հարեալ վատթարիցէ զնա, և ապա զինն հազար ամն զեղջ և ապաշաւ լինիցի առ ի գար հայելոյ իւր յուղիղ յարարածսն, զոր աղաւաղեալ կամակորիցէ: Եւ կամ Զրուանն, որ զերկուց որդւոց զյղութիւնն գիտաց յորովայնի, յորժամ եկեալ առաջի կայր Արհմնն, ընդէ՞ր ոչ ծանեաւ զնա:

Դարձալ որ զիւր որդին Որմիզդ անուշահոտ և լուսաւոր անդէն յորովայնին գիտէր, զմիւս որդին, թէ ժանդահոտ և խաւարին իցէ, ի՞բր ոչ գիտաց: Ո՞չ ապաքէն յայտ է, եթէ ոչ իրք հաւաստիք պատմին ի նոցանէ, այլ առասպելք կարկատունք[1]:

Եւ միւսն ևս, որ քան զամենայն անհաւատագոյնն է, զի մին ի հազարամեայ յաչտն առնելոյ հազիւ լինէր, և միւսն յառժամայն յերկուանալոյ անտի: Եւ եթէ ի յերկուանալոյ անտի եղև Արհմնն որդի, ոչ պարտ էր զնա իւր որդի կոչել. զի եթէ իւր որդի էր, նմին նման

գոյր և նոյնպիսի. կամ թէ բարի էր՝ բարի, կամ թէ չար էր՝ չար: Միթէ և նոյնպէս հայրն Զրուան և բարի՞ էր արդեւք և չար. և ի բարիոք երակէն նորա բարւոք որդին եղև, և ի չար մայռէն նորա չարն: Եւ թէ այնպէս ինչ ոչ էր, ապա և ոչ նա զչարն կոչէր իւր որդի և ոչ թագաւորութիւն տայր նմա: Այլ թէ ինքն բարի էր, զչարն եղծանէր և բարւոյն տայր զթագաւորութիւնն. որով ինքն քաջանուն լինէր և զբարի որդին իւր զՈրմիզդ չառնէր միշտ սրտառուչ: Այլ յայսմ ամենայնէ յայտ է, եթէ ոչ երբէք լեալ է Զրուանայ հայր աստուծոց և ոչ տուիչ թագաւորութեանց:

---

[1] այստեղ՝ կցկցված, կցմցված, մտացածին, շինծու, կեղծ

ԺԱ. Նա և անբանաւորացն անասնոցն վասն այլ և այլ բարուցն ոչ երկուս արարիչս պարտ է իմանալ, որպէս նոքայն առ տխմարութեան կարծեցին, թէ Որմիզդն զանասունս, զչորքոտանիս և զթռչունս և զձկունս և զամենայն ինչ, որ բարի և գեղեցիկ է, արար. և Արհմնն զգազանս չարս և զթռչունս պիղծս և զսողունս և զզօձս և զկարիճս և զամենայն վնասակար ճճիս: Եթէ երկինք և երկիր և օդք և ջուրք Որմըզդի արարածք իցեն, զի՞րդ վնասակարքն արարեալք յԱրհմենայ ի նորա երկրի բնակիցեն և զնոյն օդս ծծիցեն և նովին կերակրովք, որ յերկրէ են, բուծանիցին, և ի նոյն ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ[1] ձկունսն սնանիցին, և ի նոյն օդս գիշակեր թռչունքն ընդ ազնուագոյն թռչունսն չողայցեն[2]. զորս պարտ էր Որմզդի բարիոք արարածոցն սատակել և ոչ սնուցանել. քանզի նորա է երկիր և ջուրք և օդք:

Եւ եթէ գազանք վասն վնասակարութեանն ի չարէ ումեքէ արարչէ կարծիցին, զմարդիկ առաւել արժան է ի չարէ արարչէ իմանալ և ոչ զնոսա: Զի սոքա աւելի վնասակար են գազանացն, քան թէ գազանքն սոցա. զի սոքա ելեալ ի քաղաքաց և ի գիւղից՝ հետամուտք լինէին կոտորելոյ զգազանսն, և նոքա սրացեալք[3] ի լերինս և

յափափայս ճեպեն անկանել փախստականք. յորոց կիսոցն և մորիքն արտաքոյ ընտելութեան մարդկան են[4]:

Նոյնպէս և սողնոցն զիսոշիւն միայն զմարդոյն առեալ, է որ ի ծակս, է որ ի սորս, է որ ընդ փապարս երկրի մտեալ զօղեն. և եթէ ի կարի նեղելոյ զնոսա մարդկան՝ մեղանչիցեն, այն մարդկան վնաս է և ոչ նոցա: Եւ այնու ոչ ի չարէ ումեքէ պարտ է զգազանսն և զճճիս իմանալ, այլ ի միոջէ բարւոյ արարչէ. զկէսսն ի պէտս, և զկէսսն ի զարդ, և զկէսսն զարհուրեցուցիչ՝ վասն զտարապարտ հպարտութիւն մարդոյն ցածուցանելոյ: Դարձեալ ի նոցա վնասակարութիւնն հայեցեալ՝ միմեանց չմեղանչել. զի թէ զնոցայն վնասակարութիւնն, որ ոչ խորհրդով լինի, ատեալ պարտ իցէ, ո՞րչափ ևս առաւել զմարդկան մեղանչականութիւն՝ որ խորհրդով և նենգութեամբ լինիցի:

Նա և չքոտեօքն զկծեցուցանէ զմեզ. որպէս լուովն և ճանճիւ և մժխով և գոռեխով, մնով և մկամբ և այլովք նոյնպիսեօք, որք չնչիկքն են, և զմեզ աշխատ կարեն առնել: Զի է ի նոցանէ, որ զմեզ աշխատ առնէ, և է ինչ, որ մերումն վնասակար լինի. որպէս և մուկն և ցեց և որդն և որ ինչ նոցա նմանող իցէ: Եւ նոքօք ցածուցեալ զնստուցանէ զմիտս մեր[5]. զի յորժամ գիտիցեմք, թէ և փոքունքն կարող են մեզ վնասակար լինել, իջցուք ի տարապարտ հպարտութենէ՝ չունել զանձինս առ մեծարգիս[6]:

Դարձալ՝ զխնամն ևս Աստուծոյ զմտաւ ածել, թէ ուր փոքունքն կարեն մեղանչել մեզ, զիա՞րդ կարեաք ապրել, թէ ընդ սողունս և ընդ գազանս բնակակիցս արարեալ էր զմեզ: Այլ և յայն ևս հայեալ պարտիմք, թէ ո՛րչափ անասունս վասն մերոց պիտոյից ընդ մեօք հնազանդեաց, զձիս և զուխտս և զփիղս և զարջառ և զոչխար. և ի լերանց և ի դաշտաց՝ զայծեմունս և զեղջերուս և զառինս և զվարազս, որոց կէսքն կրելիք են և կէսքն ուտելիք:

Եւ զայն ևս գիտել ետ մեզ, թէ որոց նա կամի՝ յաղթականք կարեմք լինել. և որոց ոչ կամի՝ չկարեմք յաղթել՝ ոչ միայն արգաւորացն, այլ և չնչենոցն: Զի՞նչ վատթարագոյն քան զլուն և զմուկն կայցէ. և զայն ոչ սպառել կարեմք և ոչ յաշխարհէ մերժել: Եւ այլն

ևս ինչ մի ի ջուրս է և զմեր պէտս ոչ հարկանիցէ, բայց միայն զի զկծեցուցանիցէ. յորժամ տեսանիցեմք, թէ չեմք բաւական զնոսա սպառել, ծանիցուք զանձանց տկարութիւն և զիջցուք ի զուր հպարտութենէ և նմա միայն տացուք զյաղթութիւնն, որ չնչենովքն զմեզ աշխատ առնէ և զմեծամեծսն հնազանդէ մեզ. զոր օրինակ զփիղս և զուղտս և զառիւծս և զինձս և զյովազս. զորոց զկէսսն ի կրելիս և զկէսսն ի զբօսանս ընտելացուցեալ համբուրեցուցանէ:

---

[1] այստեղ՝ մաքուր
[2] շողալ, սլանալ. ճախրել
[3] սրանալ, արագորեն հեռանալ, փախուստի դիմել, փախչել
[4] արտաքոյ ընտելութեան մարդկան են - մարդկանց համար անմատչելի են
[5] ցածուցեալ զնստուցանէ զմիտս մեր - խոնարհեցնում և մեղմացնում է մեր միտքը
[6] չունել զանձինս առ մեծարգիս- մենք մեզ մեծապատիվ չհամարենք

ԺԸ. Ուստի յայտ է՝ թէ Աստուած զգործուածն ամենեցուն գեղեցիկ գործէ. և ի բարութիւն և ի չարութիւն դառնալոյ զանձնիշխանութիւնն արար կամակար, զի յոր կողմն և կամիցի՝ կարող իցէ դառնալ և ըստ գործոցն և զհատուցումնն նոյնպիսի առնուցու. և մի՛ իբրև զանասուն վարիցի, որոց ոչ գործք ինչ բարիք կան, և ոչ հատուցման ակնկալութիւն, այնու զի անասունն է և չգիտէ ընտրել զչար ի բարւոյ խորհրդիւ, բայց ի բնական բարուցն. որովք յիշատակօք միայն վարի յօգտակարն և խորշի ի վնասակարէն:

Յորս են և ազդմունք ինչ բնականք, որովք հանդերձելոց իրիք իրաց ազդ լինիցի նոցա. որպէս ձիոյն՝ ի սմբակէն վարելոյ. և եզինն՝ ձմերանի ընդ ալուց կողմն նստելոյ[1], և մօտ ի գարունն ընդ դրաց կողմնն դառնալոյ. և ծիծառն՝ յառաջ քան զաշունն ի ջերին տեղիս ի ձմերոց երթալոյ. և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն ձմերունս կարևորս, և վաղ ի մարմանդ տեղիս փութալոյ. և ճայից՝ վաղագույն տարմատարմ շրջելոյ. և աղաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղալոյ. և ագռաւուց՝ ի ծմակաց վաղագոյն ի ջերին տեղիս գնալոյ. և անգեղջ՝ ի հեռաստանէ զգիշոյ ականելոյ դիտաւորութեան[2]:

Եւ այլոցն ևս ամենայն անասնոց և թռչնոց. որպէս և մրջեան՝ յամարանոյն պատրաստելոյ զկերակուր և ընդ երկու զհատն կտրելոյ, զի մի բուսանիցի. և ի ջեր ժամանակս հանելոյ զկտիկն յորջէ անտի և ցամաքեցուցանելոյ. և մեղուաց՝ զդուրս մեղուանոցացն յառաջ քան զցուրտ ականամոմով խնելոյ. և արջոյ՝ յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ. և էրէոյ՝ կանուխ ի լերանց ի դաշտ դիմելոյ. և եղջերուաց՝ գտակաւ զժամանակ խառնիցն իմանալոյ. և իշավայրաց քինացելոց՝ զարու յաւանակս ի մատաղութեան կտրելոյ: Եւ այս ամենայն ազդեցութիւնք բնականք են յանասունսն, և ոչ խորհրդականք, որ յարարչէն նոցա տնկեալ են ի նոսա՝ առ ի յօժարելոյ յօգտակարն և խորշելոյ ի վնասակարացն:

---

[1] ծմերանի ընդ ալուց կողմն նստելոյ - ծմռանը (գոմի) խորքի կողմը նստելու

[2] ի հեռաստանէ զգիշոյ ականելոյ դիտաւորութեան - հեռվից ուշադիր նայվածքով (նկատելու և) լեշի գնալու

ԺԹ. Եւ ոչ միայն յանասունսն են բնական ազդեցութիւնք, այլ և ի մարդկան, որ խօսունք և իմաստունք[1] են: Որպէս յորժամ ակն խաղայցէ, բնական ազդեցութեամբ վասն զնորոգ ոք տեսանելոյ լինի՝ ասեն՝ նշանակ, որք այնմ ստէպ միտ դնեն: Յորժամ յերանս կամ յայլ անդամս միս խաղայցէ, նշանակ հեծանելոյ ուրուք է, ասեն, կամ հանդերձս ազնիւս ագանելոյ, կամ սիրելւոյն պատահելոյ, կամ գան ըմպելոյ[2]: Նոյնպէս և յորժամ ոտն կծիցէ կամ ձեռն, մին՝ ասեն ճանապարհի գնալոյ նշանակ է կամ անձրևի, և միւսն՝ առնլոյ ինչ յումեքէ կամ տալոյ: Նոյնպէս և փնչելն, և լեզուին կծել, և ունկանն հականել, և ըմբանին կծել[3], ոչ եթէ յայսոյ իմեքէ լինի[4], այլ ի բնական ազդեցութենէ անտի, զոր տնկեալ է արարչին յանդամսն: Զի յորժամ ի խորհրդական զգուշութենէն զեղծիցի, բնական ազդեցութեամբն պատսպարեսցի:

Եւ յօրանջելն և ձգտել, որպէս կարծցին ոմանք, ոչ ի դիւէ լինի, այլ ի մեղկութենէ և թուլութենէ մարմնոյն: Ուստի զստեպ յօրանջելն և ձգտելն՝ հմուտ բժիշկք ի մթերելոյ մաղասոց ասեն, զոր և փորձն

իսկ յայտ առնէ. զի յորժամ ստէպ ոք յօրանջիցէ, սարսափիւն գայ զոսկերօքն և քստմունք գնան ընդ անդամսն:

Եւ ոչ փնչելն ի հրեշտակէ, այլ կամ ի ցրտոյ կամ վասն այլ իրիք բնական ազդեցութեան: Նա և յոգոցն հանել՝ երբեմն յիշատակաւ լինի և երբեմն առանց յիշելոյ զոք: Եւ զի բնական ազդեցութիւնք են և ոչ ի դիւաց, յայտ անտի է, զի և յանասնոց բնութիւնս գտանին նոյնք: Եւ յոգոցն հանել՝ յորժամ ոչ զոք կամ զինչ ինչ բարի կամ զկարիս յիշելոյ լինիցի՝ բնական ազդեցութիւն է, առ ամփոփելոյ զոմն ընդ երկիւղիւ արարչին և ճանաչելոյ զիւրոյ բնութեանն տկարութիւն: Եւ յորժամ յիշատակաւ լինիցի, կամ առ սիրոյ սիրելւոյ լինի, կամ առ անարժանս ինչ և զվնասս աշխարելոյ: Որպէս յորժամ ի լրջեաց ծուլայցէ, գիշերական երազովքն ամփոփի ընդ երկիւղիւ:

---

[1] խօսունք և իմաստունք - խոսող և գիտակցող

[2] գան ըմպելոյ - ծեծ ուտելու

[3] ունկանն հականել, և ըմբանին կծել - ականջի կանչելը, կոկորդի քորվելը

[4] ոչ եթէ յայսոյ իմեքէ լինի - ոչ թե ինչ որ ոգուց է լինում

ԻԲ. Այլ են ոմանք, որ վիճին, եթէ բնաւ իսկ սատանայ ոչ փորձէ զմարդ:

Այլ յանդիմանին յԱռաքելոյ, որ ասէ, թէ բազում անգամ կամեցայ գալ առ ձեզ, և խաբանեաց զիս սատանայ: Եւ դարձեալ ասէ, թէ ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս աշխարհի խաւարիս այսորիկ: Եւ յաւետարանին ասէ, թէ սատանայի իսկ արկեալ էր ի սրտի Յուդայի սկարովտացւոյ, մատնել զնա: Եւ դարձեալ՝ թէ ընդ պատառոյն եմուտ սատանայ: Դարձեալ. խնդրեաց սատանայ խարբալել զձեզ իբրև զցորեան:

Եւ փորձելոյ այնչափ տայ նմա իշխանութիւն, որչափ մարդն հանդուրժել կարէ. որպէս երանելի Առաքեալ ասէ, թէ հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն՝ առաւել քան զկար ձեր, այլ արասցէ ընդ փորձութեանն և զելս[1], զի համբերել կարասջիք: Եւ

Տէր մեր ուսուցանէ յաղօթսն ասել մեզ, թէ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Զի ցուցցէ, թէ և աղօթիւք կարեմք ապրել ի փորձանաց չարին:

---

[1] այլ արասցէ ընդ փորձութեանն և զելս - այլ փորձության հետ ելք էլ ցույց կտա

ՆՈՅՆ ԵԶՆԸԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

ԽՐԱՏՔ

Աստուածասէրն յիւր կամացն որպէս ի թշնամւոյ զգուշանայ:

Լաւ է յստակ խորհրդով[1] ննջել, քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել և վարձս ոչ առնուլ և ի զուր աշխատել:

Մխեա[2] զմարմինդ նեղութեամբ և զսիրտդ երկեղիւն Աստուծոյ, զի աներկիւղ լիցիս ի մահաբեր նետից սատանայի:

Որ զերկեւղածն[3] սիրէ, սիրոյ արձան կանգնէ առ Աստուած և անհաչտ թշնամութիւն առ սատանայ:

Զսէր և զերկեղ բնութիւն արա քեզ, որ խաբէութեամբ չաշխատիս:

Որչափ զրկիս և աշխատիս և նեղիս և համբերես, անապական գանձ պատրաստես քեզ յերկինս. ապա թէ տրտնջես և նեղասրտիս, ի զուր աշխատիս և անվարձ ելանես:

Զօրացի՛ր չարչարանօքն Քրիստոսի և համբերեա՛ վասն նորա, զի վայելեսցես յանանց բարութիւնսն:

Որ գարուն ի հանգստեան կայ, ձմեռն ի սովոյ և ի սառնամանեաց սատակի:

Որ աստ[4] զմարմին պարարէ, ի յաւիտենական հանգիստ ոչ մտանէ:

Հնազանդեա՛ սիրով, աղօթեա՛ յուսով, աշխատեա՛ հաւատով և պայծառասցիս յերկնային հարսանիսն:

Զոր ինչ Աստուած քեզ շնորհ տայ, ի պէտս կարօտելոցն սպասաւորեա՛. զի շնորհքն աղբիւրասցին, և դու փառաւորեսցիս:

Կրօնաւոր մարմնասէր խոզի նման է, ի ծովացեալ մեղացն հեղձնու:

Արտասուս լուացումն է մեղաց, և յոգւոց հանելն ապաշխարութիւն. ապա որ զամենայն ժամանակս կրօնաւորական կարգօք անցուցանէ ի սուգ և ի տրտմութիւն, նա զորպիսի՞ զերանական զփառս ժառանգէ:

Կեղծաւոր կրօնաւոր՝ պատրուակ[5] է սատանայի. ընդ իւրեաւ ունելով զսատանայ՝ զզազրութիւն անդամոցն ծածկէ և նկարակերպ պատրուակօք պատրէ զտեսողսն: Սոքա են գայլք գառնազգեստք, որոց սպառնացաւ Քրիստոս ընդ անհաւատսն դասել:

Որ զեղբայր իւր տեսանէ և տրտում կայ, յաղթեալ է ի կեղծաւորութենէ. որ առանձինն նստի և զուարթ կայ, գերեալ է ի սատանայէ:

Բերանք մեր հոտեալ են ի պահոց, և լեզուք մեր ընդարմացեալ ի սաղմոսերգութենէ. և զոր Աստուած խնդրէ, զայն ոչ ունիմք, զսէր և զխոնարհութիւն. շրթամբք սիրեմք զԱստուած և ի զուր աշխատիմք:

Զմիս անասնոյ ոչ ուտեն և զեղբայրն անյագաբար ուտեն. գինի ոչ ըմպեն և զհոգին արեամբ շաղախեն. զամուսնացեալսն ատեն և պիղծ խորհրդով հանապազ պոռնկին. զգեստ զյոռին զգենուն և ագահութեամբն այրին. յայնպիսեացն արժան է փախչել և ոչ հաղորդութիւն[6] ունել:

Զպայծառութիւն աչաց շլացուցանէ ծուխ, և զպարծանս կրօնաւորի ընտելութիւն մանկանց. եթէ զերկինս բանայ, մի՛ մտանէր. եթէ հրեշտակական վարս ունի, մի՛ հաւատար:

Մանուկ կրօնաւոր, որ ոչ է առ ոտս ծերոց[7], անջան[8] որս է սատանայի:

Մանկագոյն կրօնաւորի մի՛ ասեր զծածուկսն քո, զի մահ է նորա:

Եթէ հիւանդ ես կամ աշխատեալ[9], մի՛ իշխանութեամբ վարիր:

Եթէ առնեն քեզ սէր[10], գոհացի՛ր զԱստուծոյ. և եթէ ոչ առնեն, մի՛ տրտնջեր. և մի՛ տրտմեցուցաներ զանձն ո՛ւրուք, այլ նեղեա զքեզ սակաւ մի լռութեամբ, զի որ պատերազմի, ժուժկալութեան պեաք են[11]:

Զմտաւ ած[12] զօր դատաստանին, զոր պատրաստեալ է Աստուած:

Այս կեանքս պատերազմ է:

Որ լաւն է և զուարթ երևի:

Զայն խնդրեսցուք, զոր Քրիստոս խոստացաւ տալ՝ թէ ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի:

Ծերութիւն և հիւանդութիւն պատերազմ է ժամանակեայ. զի մարմնոյ զօրութիւն պակասեալ է, վտանգն բազմացեալ, և հանգիստն սակաւ և կամ բնաւ իսկ ոչ. և սատանայ բորբոքէ զբոց ցասմանն և ատել տայ զկարգն, հայհոյել զառաջնորդն, տրտնջել զեղբարցն[13]. աստ պէտք են սիրոյ և գթութեան, երկայնամիտ լինել և զմարտիրոսական առնուլ պսակ:

Որ բարկանայ եղբօրն, և չէ վասն Աստուծոյ, հրեշտակ անողորմ հանդիպի նմա:

Որ ի սաղմոսելն ծիծաղի, կամ մարմնական խօսք բերէ ի մէջ, արտաքոյ լիցի սրբութեանցն՝ մինչեւ առողջասցի:

Լաւագոյն է զձեռսն համբառնալ առ Աստուած, յորժամ աղօթեսցէ. բայց առաւել կարեւոր է, որ ի պէտս եղբարցն սպասաւորեսցէ:

Զձեռս յորժամ յաղօթս համբառնաս, հանդէպ երեսացդ կալ. զգուշացի՛ր յօտար խորհրդոց:

Եթէ հաւատացեալ ես յեղբայրն, հնազանդեա՛ նմա. ապա թէ ոչ, ի սովորականէն մի՛ ելաներ:

Պարտ է կրօնաւորին արեամբ չափ հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց և այնպէս պատարագ լինել[14] Աստուծոյ:

Քրիստոս ասաց. ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք. և որ կամի գալ առ իս, ուրասցի զանձն իւր և առցէ զխաչ և եկեսցէ զկնի իմ: Եւ որ ոչ ուրանայ զանձն իւր, ոչ կարէ բառնալ զխաչն Քրիստոսի և չէ ի ճշմարտութենէն, չկարէ ժառանգել զկեանսն յաւիտենից, այլ ի ստուերի կայ և ի խաւարի շրջի:

Եւ որ զիւր կամսն պաշտէ[15], զաշխարհական գործ ոչ կարէ վճարել, թող թէ զհոգևորն. թէպէտ և մեծական վաստակօք անցուցա-

նէ զիւր զկեանսն, չկարէ հասանել կրօնաւորական կարգի: Իսկ հնազանդն՝ թէպէտ և պղերգ և ծոյլ կրօնաւոր է, ծառայութեամբ ի տան աստուծոյ է:

Անգործ մեղու լաւ է քան զժիր պիծակ:

Որ զինքն ուրացեալ է և ի լուծ պատուիրանին մտեալ՝ բառնալով զխաչն Քրիստոսի, չէ պարտ ընտրողութիւն առնել հրամանաց առաջնորդին, այլ անսալ երկիւղիւ. զի և Պետրոս չօգտեցաւ ինչ ընտրութեամբն: Եւ եթէ թերի ես յառաջնորդն, մի՛ կար ընդ նմա. զի կորուսանես զոգիդ քո: Երբեմն տրտնջես, երբեմն նզովես, երբեմն դիմաբանես, առ այլս չարախօսես, զսէր և հնազանդութիւն բառնաս յեղբարցն, զամենեսեան յամպարշտութիւն ուսուցանես. այնպիսւոյն միաբանութիւնն դատապարտութիւն է:

Տգէտ և անընտրող առաջնորդ ի բժշկելն խոցէ և յուղղելն խորտակէ. ի սիրոյ տեղ ատելութիւն ցուցանէ և յատելութեան՝ զսէր. և խառնափնդորելով զեղբարսն անվաստակ հանէ:

Որ սիւն եղեալ է և զբոլոր շինուածն յինքն հաստատեալ, եթէ խորտակի՝ զամենեսեան ի վայր կործանէ: Այսպէս և առաջնորդն, թէ ոչ ըստ կամացն Աստուծոյ վարի, զամենայն եղբայրութիւնն սատանայի մատնէ. և փոխանակ առաջնորդութեանն՝ կորստեան պատճառ լինի: Մեծ հերձուած և անբժշկելի չարիք է այնպիսի առաջնորդութիւնն, զի մարդիկ յօրինակն առաւել հային, քան ի ճշմարտութիւնն:

Հոգեւոր առաջնորդ աստուածային հուր է, զապականարար ախտն այրէ և զգիճութիւն[16] զամաքեցուցանէ և կրօնաւորական հանդիսիւ փորձէ որպէս զոսկի ի բովս, և անաղտ սրբութեամբ զեղբարսն Աստուծոյ ընծայէ. և ինքն ըստ հաւատարիմ ծառային թագաւորէ ի վերայ տասն քաղաքաց:

Առաջնորդ ագահ, որ է կռապաշտ, աւազակապետ է: Աւազակք բազումք կան յաշխարհի և չեն ամենեքեան սպանողք. իսկ նա յամենայն աւուր սպանութիւն գործէ: Ոչ զմարմինն միայն սպանանէ որպէս զաւազակն, այլ սատանայի գործակից լինի և զհոգին կորուսանէ,

որ նմա հաւատացաւ: Նա զամենայն չարիս դիւրաւ գործէ և զբարին ոչ երբէք:

Եթէ ամենայն եղբարցն հիւանդութիւնն քեզ ոչ ցաւէ, մի՛ լինիր առաջնորդ:

Եթէ զանարժանն ըստ պիտոյից ոչ յանդիմանես, մի՛ լինիր վարդապետ:

Զվարդապետն[17] քաջասիրտ սուրբ վարքն առնեն:

Քաղցր է մեղր, բայց ախտալից մարմնոյ վնաս առնէ. օգտակար է խրատ և յանդիմանութիւն, բայց որ զդէմս յարեւմուտս է հաստատեալ՝ նմա անօգուտ է:

---

[1] խորհուրդ, այստեղ՝ միտք
[2] կոփի՛ր
[3] երկեւղած - աստվածապաշտ, բարեպաշտ
[4] աստ, այս կյանքում
[5] այստեղ՝ երեսի ծածկույթ, քող իմաստով
[6] առնչություն, կապ
[7] որ ոչ է առ ոտս ծերոց - եթէ ծերերի հսկողության տակ չէ
[8] դյուրին, հեշտ իմաստով
[9] հոգնած
[10] սէր առնել, սիրել
[11] ժուժկալութեան պետք են, այսինքն՝ համբերության կարիք է զգում
[12] զմտաւ ած -միտքդ բեր
[13] այստեղ՝ կրոնակիցներից
[14] պատարագ լինել - նվիրվել
[15] զիւր կամսն պաշտէ - իր կամքին է ծառայում
[16] այստեղ՝ ցանկասիրություն
[17] ուսուցիչ

ՓԱԻՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատուածք)

Գ դպրութիւն

Գլուխ ԻԱ

Ցաղագս թէ ո՛րպէս ժողովեցան միաբանութեամբ նախարարքն Հայոց և չոգան ածին զթագաւորն Յունաց՝ իւրեանց 'ի թիկունս օգնականութեան 'ի յերկիրն Հայոց. եւ թէ որպէս եկն թագաւորն Պարսից բազում զօրօք եւ միաձի ճողոպրեալ փախչէր յերկիրն Պարսից

Ապա առաւել ժողովեցան 'ի մի ժողով միաբանութեան մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք. բայց 'ի զօրավարացն, այլ և 'ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն: Ապա խօսել սկսան այր ընդ ընկերի և ասեն. «Զի՛նչ է այս, որ 'ի սուգ մտեալ եմք. թշնամիք այսու գամագիւտ լինին. այլ քան սակաւ ժամանակք են, այսրէն արշաւեսցեն թշնամիքն: Այլ եկա՛յք, զանձինս անձամբք մխիթարեսցուք. անձանց և աշխարհի պահ կալցուք, և զտեառն բնակի վրէժ խնդրեսցուք»: Ապա առ հասարակ ամենայն մարդիկ աշխարհին 'ի մի միաբանութիւն և 'ի մի խորհուրդս ժողովեսցեն վասն օգնականութեան և 'ի թիկունս իւրեանց գտանելոյ:

Յայնմ ժամանակի առաքեցին 'ի մեծ նախարարաց անտի աւագանին Հայոց հանդերձ պատարագօք առ թագաւորն Յունաց, զի 'ի նա ձեռս տուեալ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ, և լինիցի նա նոցա թիկունք օգնականութեան՝ խնդրել վրէժ 'ի թշնամեաց նոցա:

Ապա առաքեցին զԱնդովկ նահապետն Սիւնեաց և զԱրշաւիրն կամսարական, նահապետն Արշարունեաց: Որք երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց 'ի կայսերական պաղատն թագաւորացն. և տային զհրովարտակն և ունէին զպատարագսն բերեալ առաջի և մատուցանէին զաշխարհապաղատ պատգամսն առաջի թագաւորին: Զոր իբրև լուաւ կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ ի խնդիր ելանէր իրին հասելոյ[1], և օգնական և թիկունք լինէր աշխարհին Հայոց: Մանաւանդ զի զուխտն յիշեալ զդաշանցն կռելոց զերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ 'ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և 'ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր:

Արդ մինչ դեռ դեսպանքն երթեալք յերկրէն Հայոց 'ի կայսերական պաղատն չև էին անդրէն յիւրեանց աշխարհն դարձեալ, 'ի կողմանց արևելից խաղաց գնաց ինքն Ներսեհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել և աւերել, կորուսանել և միահաղոյն իսկ յիւր վտարել զսահմանս Հայաստան երկրին: Եւ առեալ զամենայն զօրս իւր բնիւ աղխիւ և ամենայն մեծաւ կարաւանաւ, փղակոյտն բազմութեամբ հանդերձ, անթիւ վաճառօք և բնիւն մաշկապաճենօքն և ամենայն կանանօքն և հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եհաս 'ի սահմանս Հայոց. խճողեաց ելից զերկիրն առ հասարակ: Յայնմ ժամանակի ազատազօրքն նախարարացն Հայոց առեալք զիւրաքանչիւր ընդանիս, լինէին փախստականք, 'ի կողմանս Յունաց անգանէին, գոյժ տային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն: Ապա իբրև զայս ամենայն լսէր թագաւորն Յունաց, նոյնօրինակ և նա զիւր զօրսն գումարէր և չու արարեալ գայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ թագաւորին Պարսից: Եւ եթող զիւր զբանակն զՍատաղ քաղաքաւն. և ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս իմաստունս Հայաստան բանակէն, այս ինքն զԱրշաւիրն և զԱնդովկն. զի այս արք էին, որ չոգան առ նա դեսպանութեամբ յառաջնում նուագին: Եւ այսպէս հանդերձ նոքօք ինքն իսկ կայսրն 'ի շինականութեան կերպարանս, 'ի կաղամբավաճառի օրինի, մտանէր 'ի բանակն Պարսից:

Իբրև էր նա բանակեալ 'ի գաւառին Բասենոյ, 'ի գեւղն, որ անուանեալ կոչի Ոսխայ, եկին մտին 'ի բանակն արքային Պարսից, դիտեցին քննեցին զչափ առին զնոցա զօրութիւն զօրացն: Եւ անտի դարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան. գային հասանէին գտանէին զբանակն արքային Պարսից 'ի նմին տեղւոջ բանակեալ 'ի պղերգութեան, յանհոգութեան, յանկասկած խաղաղութեան: Ապա հասեալ 'ի տուընջէն ժամուն, անկանէին 'ի վերայ թագաւորին Պարսից, ընդ սուր զամենայն բանակն հանէին և ոչ զմի ոչ ապրեցուցանէին: Եւ առին զկապուտ զաւար բանակին և զկանայս թագաւորին և զբամբիշն և զբանակսն ընդ նոսին, և զինչս և զստացուածս նոցին ընդ նմին 'ի գերութիւն վարէին, զկանայս նոցա և զգանձս և զկեանս և զկազմած նոցա: Բայց միայն թագաւորն պրծեալ մազապուր, պէշասպիկ մի սուրհանդակ առաջի, պրծեալ ելանէր փախստական. հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ իւր: Իսկ կայսրն մեծաւ շքեղութեամբ անուանի պերճացեալ 'ի մէջ բանակին երևեալ. զայր 'ի չափ հասեալ առ հասարակ կոտորէին և զայլ ամենայն 'ի գերութիւն վարէին յերկիրն Յունաց: Եւ 'ի վերայ երկրին թողոյր զիշխանսն վերակացուս զԱնդովկ և զԱրշաւիր, մեծապարգև մեծապատիւ մեծարէր. և յանձն արարեալ զնոսա ամենայն իշխանացն և զաշխարհն նոցա, և ինքն կայսրն չու արարեալ գնաց յերկիր իւր յերկիրն Յունաց:

Եւ արքայն պարսից գնացեալ փախստական յերկիր իւր. և իբրև եհաս անդր, ժողովէր առ ինքն զամենայն մնացեալս իշխանութեան իւրոյ ի խոյզ և 'ի խնդիր անկանէր: Խորհուրդ 'ի մէջ առնոյր, հարցևքնին առնել հրամայէր վերստին, զի տեսցեն և յայտ արասցեն, թէ ուստի եղև սկիզբն պատերազմացն և մարտին: Ապա 'ի վեր եկին և յայտնեցան իրքն առաջի նորա. զի յոչինչ իրաց և վատթար բանից համարեցան զիրսն եղեալս, վասն ձիոյ միոյ կարծիս առնել զայն ամբոխ խռովութեան 'ի մոլեկան առնէն Շապուհ Վարազայն: Ապա հրաման ետ հանել զպատիւն 'ի բաց և մերկանալ 'ի նմանէ զպատուական պատմուճանն և մեծաց հարուածոց արժանի առնէր զՎարազն: Ըստ պարսկի օրինակին հրամայէր զմորթն 'ի բաց հանել և խոտով լնուլ և 'ի հրապարակի իւրում 'ի տեսիլ ծանականաց կանկնել հրամայէր: Եւ ինքն 'ի ղղջումն եկեալ վասն իրացն եղելոց, ապա արձակէր զիշխանսն պատուականս 'ի հնազանդութիւն խաղաղութեան վասն գերեդարձ առնել 'ի կայսերէն միւսանգամ և այնուհետև աղօթակերս արձակել 'ի հաշտութիւն խաղաղութեան, խօսել ընդ կայսերն, զի գոնեա զկանայս իւր արձակեսցէ 'ի գերութենէն և բարձցէ 'ի նմանէ զծանակութեանցն զդսրովութեանցն[2] նախատինս:

Ապա գտանէր հրովարտակ թագաւորն Յունաց Վաղէս առ արքայն Պարսից. Նախ դու, ասէ, դարձուսցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, և զթագաւորն Տիրան ինքնին գլխովին և զամենայն ինչ, զոր առեալ իցէ անտի. ապա յորժամ զայդ արասցես, և ես զիմս դարձուցից, զոր առեալ եմ. զի եթէ ոչ՝ նախ դու զնոցա զաւարն դարձուսցես, և ես ապա զքոյդ դարձուցից: Եւ իբրև լուաւ զայն հրաման արքայն Պարսից, վաղվաղակի զիրսն կատարէր. հանէր զկապեալն Տիրան 'ի տանէն բանդի կապանաց, խօսէր ընդ նմա ողոքով, զի թագաւորեցուսցէ զնա անդրէն յիւր աշխարհն արձակելով, զի երթիցէ նա պատուով: Ապա տուեալ պատասխանի Տիրանայ, եթէ անօգուտ է ինձ և անպատշաճ է, կուրութեամբ, անմարթ իսկ է կարի, ունել զթագաւորութիւն. բայց փոխանակ իմ թագաւորեցո զԱրշակ զորդի իմ:

Յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր զԱրշակ որդի նորա 'ի վերայ աշխարհին Հայոց. զկանայս թագաւորին և զայլ գերին ամենայն, գանձիւք ընձայիւք և ստացուածովք հանդերձ, և միանգամայն դարձ առնէր ամենայն գերութեան: Եւ զինքնին Տիրան թագաւորն Պարսից հանդերձեաց կազմեաց մեծաւ կազմութեամբ և արձակեաց յիւր աշխարհէն յերկիրն Հայոց և կատարեալ հաւատարմացոյց զասացեալսն հրամանաց թագաւորին Յունաց: Եւ իբրև զնոսա 'ի Հայս յուղարկէր, ապա և ի թագաւորէն Յունաց, զառ ինքն եկեալսն դեսպանսն արձակէր յիւրմէ, զի երթիցեն պատմեսցեն թագաւորին

Յունաց՝ թէ որպէս և կամ զիարդ նա զհրամանն կատարեաց զթագաւորին Յունաց, զի և թագաւորն Յունաց դարձուսցէ զգերութիւնն, զոր առեալ զթագաւորին Պարսից: Եւ եղև իբրև լուաւ զայս ամենայն թագաւորն Յունաց, եթէ կատարեաց 'ի գլուխ եհան զայս ամենայն 'ի նմանէ զտուեալ հրամանն թագաւորն Պարսից, և դարձ արար գերութեանն Հայոց և Տիրանայ արքային, հաճեցաւ: Յայնմ ժամանակի և թագաւորն Յունաց առնէր գերէդարձ գերութեան արքային Պարսից: Եւ հանդերձեաց կազմեաց թագաւորն Յունաց զկանայս թագաւորին Պարսից մեծաւ պատուով և զամենայն գերութիւնս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր և բարեաւ առ թագաւորն յուղարկէր:

Դ դպրութիւն

Գլուխ Դ

Յաղագս թէ որպէս առին գնացին եւ տարան զՆերսէս 'ի Կեսարիա. եւ եթէ զինչ շատ սքանչելիք եղեն յաստուծոյ, եւ կամ թէ ո՛րպէս հովուեաց իւրոց հօտիցն առաքելօրէն

Ապա գումարեցին զիշխանսն մեծամեծս, զի առցեն զցանկալին Ներսէս և գնասցեն ուր սովոր էին զհայրապետսն օծանել: Նա և բազմութիւն եպիսկոպոսացն Հայոց ժողովեցան առ թագաւորն վասն նորին խնդրոյն. խոնարհել [3] ամենեցուն միով միաբանութեամբ զնա ընտրել հաճոյ թուեցաւ ամենեցուն, զի նստցի նա յաթոռ գլխաւորութեանն: Ամենեցուն միաբանութեամբ եպիսկոպոսացն և թագաւորինն աշխարհախորհ ձուլիւք հաւանութեամբ 'ի միասին արձակեցան և գնացին: Զհայր մեծ իշխանն մարդպետութեան, և զԲագրատ մեծ իշխանն ասպարապետութեանն, և զԴանիէլ մեծ իշխանն Ծոփաց, և զՄեհանդակ Ռըշտունի, և զԱնդովկ իշխանն Սիւնեաց, և զԱրշաւիր իշխանն Շիրակայ և Արշարունեաց, և զՆոյն իշխանն միւսոյ Ծոփաց, և զՊարգև իշխանն տանն Ամատունեաց. զնոսա զամենեսին կազմեցին և արձակեցին բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք առ կաթողիկոսաց կաթողիկոսն Եւսեբիոս յերկիրն Գամրաց, և 'ի մայր քաղաքացն նոցա 'ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբ Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց:

Եւ եկին ածին նոքա ցնծութեամբ ուրախութեամբ և տեսին անդ զկաթողիկոսն կաթողիկոսացն զսուրբն զմեծանունն զերանելին զհոյակապն զսքանչելին Եւսեբիոս: Եւ տային զհրովարտակն արքային Արշակայ նմա. և ունէին առաջի նորա զպատարագս բերեալս: Եւ նորա սիրով ընկալեալ զնոսա և բազում մեծարանօք, և ըստ կանոնաց օրինակի ժողովէր առ ինքն մեծ եպիսկոպոսապետն Եւսեբիոս զբազմութիւն եպիսկոպոսացն սրբոցն ըստ առաքելական օրինացն, զի ձեռնադրեսցեն զսուրբն Ներսէս լինել եպիսկոպոսապետ Հայոց Մեծաց: Եւ եղեն մեծ սքանչելիք. զի մինչ դեռ այն ինչ մտեալ էին յեկեղեցին, էջ աղաւնի սպիտակ 'ի վերայ սեղանոյն յանդիման քահանայութեան և յանդիման ամենայն ժողովրդեանն: Եւ իբրեւ եմուտ Եւսեբիոս արքեպիսկոպոսապետն և երիցունքն ընդ նմա և էրիցապետ մի սուրբ, որում անուն Բարսիղիոս կոչէր, թռեաւ աղաւնին 'ի սեղանոյն և հանգեաւ 'ի վերայ նորա և յամեաց բազում ժամս: Իսկ իբրև եհաս ժամ, յորժամ կամեցան զՆերսէս ձեռնադրել, վերացաւ աղաւնին 'ի սրբոյն Բարսեղէ և նստաւ 'ի վերայ գլխոյն Ներսէսի:

Իբրև այս սքանչելիք և նշանք յաստուծոյ լինէին 'ի վերայ առնս այսորիկ, կային առ հասարակ ամենայն ժողովուրդ բազմացեալք, և մեծ արքեպիսկոպոսն Եւսեբի: Առ հասարակ աղաղակէին 'ի վերայ նորա, թէ Հաճոյ եղէր դու աստուծոյ, և հոգի աստուծոյ հանգեաւ 'ի վերայ քո. զի նմանութիւն եղև ամենասուրբ Հոգոյն, որ 'ի վերայ տեառնն երևեցաւ: Ապա ձեռնադրեցին զնա և հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն և պատուէին զնա. և բազումք ասէին նմա էնկոմիա, որ ասի՝ թէ Հոգի սուրբ հանգեաւ 'ի սա: Բայց նա ևս քան զևս զանձն իւր անարժան համարէր իրացն եղելոց: Եւ մեծա-

սքանչելաշուք յուղարկեցին զնա. նոյնպէս և զմեծամեծ նախարարսն սատրապն Հայոց:

Եւ եկին հասին նոքա մեծապարծ երևելի հոգևորազգեաց փառօք 'ի Հայաստան երկիրն. և արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչև 'ի լեառն, որ անուանեալ կոչի Առեւծ: Եւ անդ պատահեալ միմեանց մեծաւ լրջմտութեամբ, լցեալք օրհնութեամբ ողջունիւն, անդուստ յաշխարհն դարձան: Եւ նստաւ սուրբն Ներսէս յաթոռ Հայրապետութեան. 'ի հովութեանն նորա բազում խաղաղութիւն լինէր աշխարհին: Զի 'ի վարս կարգաց գնացիցն իւրոց[4]՝ նմանեաց իւրոյ հօրն մեծին Գրիգորի, արդարև Հայրաբարոյ գտանէր ամենաբարի. զնոյն հարցն նորոգեաց զառաքելաշնորհս, նոյն գործ երևեալ անվնաս պահելոյ յաներևոյթ թշնամեացն և յայտնեացն:

Սա և առաւել ևս առաջին ծառոցն նմանեալ. որ զնոյնազգեաց զնոյնահաս պտուղս վարդապետութեան բերեալ սկսեալ վերակացութեանն հովուութեանն՝ անկարօտ մատակարարէր զօգտակարսն, զհոգևոր արօտսն ջամբելով: Զի շնորհքն այնպէս հանգեան 'ի նմա, զի մեծամեծ նշանս և բժշկութիւնս առնէր հիւանդաց, ուր դէպ լինէր. զմոլորութիւնս դարձուցանէր: Առնէր և զայսպիսի սքանչելիսս. զոր կարի յամառեալ տեսանէր, ահ արկանելով հաւանեցուցանէր. իսկ հլուացն, որոց ականջք սրտիցն բացեալ էին, զնոսա բանիւք քարոզութեան ածէր 'ի հաւանութիւն:

Շինէր և զաւերեալ եկեղեցիսս և կանգնէր զսեղանս կործանեալս. և հաստատէր ի կատարումն ապաշխարութեան զթերահաւատս, զի հաւատացեալք յաստուած՝ ապրել կարասցեն: Մխիթարէր զհաւատացեալս յաւիտենական յուսով բարութեամբն մշտնջենաւոր պարգևացն, զթաղէական աթոռն մեւսանգամ ելից և իւրոց հարցն նմանեալ որդի եղև: Եւ չարախօսացն ընդդիմացեալ,ըմբերանէր, խափանէր և զանօրէնութիւնս և զխօսս և զգործս զայսպիսեացն միանգամայն: Եւ վասն ճշմարտութեան մինչև 'ի մահ մարտնչէր և զաջողակ արդարութեանն քաջալերեալ խնդացուցանէր. և իւրով վարդապետութեանն

անձրևաւն պարարէր սնուցանել զշայեկան արդարութիւնսն օրհնութիւն-սընդալու: Եւ ընդ ամենայն տեղիս սահմանացն Հայոց Մեծաց, ընդ որ էր յառաջագոյն նորուն հարցն սերմանեալ զքարոզութիւն բանին կենաց, զնոյն և սա ոռոգեաց անձրևովն: Զբոյսն աճեցոյց մշակն հնձող, եղեալ գործակից սերմանողաց. և բազմացոյց զյորդաբուխ արդիւնսն 'ի չտեմարանս արքայութեանն, կարգացն առաջին հարցն մշակացն փոխանորդ եղեալ՝ գործակից լինելով:

Նա և բազում զօրութիւնս անպատումս յանձին իւրում բարձեալ բերէր. նա և կարի իսկ զողորմածութեան կարգացն փոյթ արարեալ ցուցանելոյ, նախ ինքն առնելով առ իւր անձն բարի և ապա այլոց օրինակ բարեաց դնելով, առ հասարակ վարդապետական բանիւն զամենեցուն զփակեալ դրունս մտաց 'ի բարին յորդորելով բանայր: Զամենաբարի ուսուցանէր զսէր, զյոյս, զհաւատս, զսրբութիւն, զքաղցրութիւն, զհեզութիւն, զանոխակալութիւն, զխնամ ունելով դարմանոյ աղքատացն տանելոյ, և յոյս հատուցման 'ի խոստացեալ աւետիսն Քրիստոսի. և 'ի դատաստանացն ամենին[5] անչէջ հրոյն՝ յիշատակօք յաւիտենականն չարչարանօք սպառնալով, անաչառական գալստեամբն Որդւոյն աստուծոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ այնու երկեցուցեալ, մինչև ամենեցուն, որք 'ի սահմանս Հայոց էին բնակեալ, ամենեքեան հաւատացեալք ընդ աղքատս իւրեանց զիւրեանց ինչս մատակարարեալ հաւանութեամբ հաւասարութեամբ և ինքեանք լրջմտութեամբ զուարթութեամբ գործէին:

Եւ ինքն երթեալ հասանէր 'ի կողմանս Տարօն գաւառին. և ժողովէր առ ինքն զամենայն եպիսկոպոսունս Հայոց աշխարհին: Ժողովեցան 'ի գեւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ. զի նա էր մայր եկեղեցեացն և 'ի տեղի լեալ նախնեացն ժողովոց սիւնհոդոսին: 'Ի ժողով հաւանութիւնս եկեալ ամենեցուն և խորհուրդ բարեաց 'ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեց

ղովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն: Բայց միայն զառաքելակարգ կանոնսն 'ի վերայ ամենեցուն կացուցանէր սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս. ամենեցուն խրատատու և առաջնորդ յորդորիչ և նախանձաւոր լինէր գործոց բարեաց: Նախ ինքն առնէր և ամենեցուն զնոյն ուսուցանէր. առ հասարակ զնոյն օրինակ առնել հրամայէր յամենայն աշխարհս և 'ի գաւառս և 'ի կողմանս կողմանս, 'ի կոյս կոյս, 'ի խորշս խորշս սահմանացն Հայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, չինել աղքատանոցս և 'ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնավարս և զամենայն ցաւոտս. և նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ոռճիկս և պատանս[7] աղքատաց: Զի այսպէս ետ հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս, և սոյն կամ եղև ամենայն սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լիցին յիւրաքանչիւր կայեանս, և մի՛ ելանել 'ի մուրոյն տառապանս, և մի՛ բնաւ ելանել ըստ իւրաքանչիւր դուրս, այլ զի ամենայն ոք պարտապան է նոցա: Հարկ իսկ է զի մի՛ կարգ աշխարհի, ասէ, եղծցի. այլ արժան է զի ամենեքեան առ հասարակ ողորմածութեամբ և երկիւղիւ տարեալ նոցա զդարմանսն և զպիտոյս նոցա վճարեսցեն:

Շինեաց սոյնպէս, կարգեաց կազմեաց և հաստատեաց, բազում և այլ ողորմութիւնս ուսուցանէր աշխարհի. բազում կարգս կանոնաց հայրենիս կարգէր: Եւ առ յոյսն յարութեան ցուցանէր ունել ակնկալութիւն. և զի մի՛ զմահ մարդկանն առանց դարձի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութեամբ 'ի վերայ գնացելոցն ոճիրս գործիցեն լալեացն կոծոյն, զանառակութիւնս աշխարհին դնելոյ. այլ յուսով տեառն գալստեանն ակն ունել և յարութեանն նորոգութեան, և իւրաքանչիւր գործոցն զյաւիտենական զհատուցումն առնուլ իւրաքանչիւր յոյս ունելով աւուր գալստեանն տեառն սպասել: Եւ զի լինիցին յամուսնութեան օրինաւորք. մի՛ ստել և մի՛ դաւ բերել իւրեանց ամուսնութիւնընգալ կողմանց, և փախչել աւելի 'ի

մերձաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն. և մանաւանդ 'ի մերձաւորական 'ի նուոց, և որ գամ մի այսմ նման լեալ էր ինչ: Եւ կանոն, հրաժարել ամենևին 'ի մեռելոտուոյ և յարենէ ուտելոյ, 'ի դաշտանիկն մերձենալոյ. զայդ ամենայն պիղծ համարէր առաջի տեառն:

Եւ զնենգութիւնսն և զքսութիւնսն և զագահութիւնս և զչարակնութիւնս, զցանկութիւնս, զարուագիտութիւնս և զիգութիւնս և զբամբասութիւնս և զանառակ արբեցութիւնս և զորկորստութիւնս և զյափշտակութիւնս և զպոռնկութիւնս և զվրէժս 'ի թշնամեաց և զսրտութիւնս և զթշնամութիւնս և զանողորմածութիւնս, զսուտերդմնութիւնս և զարիւնհեղութեան սպանութիւնս և զանասնագիտութեան պղծութիւնս, որ ոչ ակն ունէին յարութեան, և որ անյուսութեամբն լան զմեռեալս, ընդ մի օրինակ զամենեսեան 'ի միում խորխորատ կորստեանն համարէր: Եւ ամենայն աշխարհին պատուիրէր և գլխովին թագաւորին, առ հասարակ ամենայն մեծամեծացն և ամենեցուն, որք 'ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրսերս և ընդ աշակերտս և սիրել իբրև զընտանիս և մի՛ անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զչափն. յուշ առնելով, զի և նոցա տէր գոյ յերկինս: Սոյնպէս և ծառայից պատուիրէր՝ կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տերանց; զի 'ի տեառնէ լինիցին նոցա վարձք:

Եւ եղև խաղաղութիւն և նորոգութիւն յաւուրս նորա ամենայն եկեղեցեաց. և յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն տեղիս Հայոց Մեծաց: Եւ լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծաղկեաց ամենամեծ լիութեամբ. կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ, և բազմազան կարգք սրբութեան պաշտամանցն և պաշտօնէիցն յաճախութիւն: Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց 'ի շէնս և յանշէնս. սոյն օրինակ բազմութիւնք կրօնաւորաց:

Կարգէր և 'ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն յամենայն գաւառս Հայոց. և բազում նեղելոց և տառապելոց գերեաց

փրկութիւն և գերէդարձ առնէր, զորս ահիւ քարոզութեան փառացն Քրիստոսի զկէս և զայլս գնովք փրկանօք ազատէր և յիւրաքանչիւր տեղիս դարձուցանէր: Այրեաց և որբոց և չքաւորաց հանգիստ և դարման առնէր, և աղքատք զօրհանապազ ընդ նմա ուրախ լինէին. և տաճար իւր և սեղան զօրհանապազ աղքատաց և օտարաց էր և հիւրոց: Եւ այսպէս առ յոյժ աղքատսիրութեանն, զի թէպէտ և չինեաց զամենայն աղքատանոցս ընդ ամենայն գաւառս և կարգեաց նոցա անդէն դարմանս, այսպէս զի ըստ իւրեանց անկողինս մահճացն մի՛ ուրեք աչխատ լիցին ելանել, սակայն և զիւր տաճարն առանց նոցա ոչ առնէր. այլ կաղք և կոյրք և մարմնահարք, խուլք և հաշմեալք և ցանկանեալք և կարօտեալք ընդ նմա և 'ի նոցա ակըմբի դարմանէին բազմեալք: Եւ ինքն իւրովք ձեռօքն լուանայր զամենեսեան. օծանէր պատէր և ինքնին իսկ ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակուրս և զամենայն ինչ 'ի պէտս նոցա ծախէր. և ամենայն օտարք ընդ նմա, հովանեաւ նորա հանգուցեալք, դադարէին:

Գլուխ ԻԴ

Յաղագս Մերուժանայ, թէ զիա՛րդ ապստամբէր և գրգռէր զթագաւորն Պարսից Շապուհ և առնէր պատերազմ. և զիա՛րդ լինէր առաջնորդ թագաւորին Պարսից Շապհոյ, և ածէր հէն յաշխարհն Հայաստանի. և կամ զիա՛րդ գերէր զոսկերս Արշակունեաց. կամ զիա՛րդ զօրավարն Վասակ թափեաց զգերեալսն և յաղթեաց թշնամւոյն:

Ապա յետ այսորիկ Մերուժան վատանչան գրգռէր զթագաւորն Պարսից զՇապուհն 'ի վերայ թագաւորին Արշակայ մեծաւ բարկութեամբ: Ապա զօրաժողով լինէր թագաւորն Պարսից Շապուհ. և լրտեսս արձակէր, դիտել զարքայն Հայոց զԱրշակ: Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն զԱտրպատական սահմանօքն, զի անդ ապաստէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ այլ կաթել[8] ասպատակ յաշխարհն Հայոց առնէին: Զի ընդ Աղձնիս և ընդ Ծոփս մեծ, ընդ Անգեղ տունն և ընդ

գաւառն Անձտայ ընդ Ծոփս Շահունոց, ընդ Մզուր գաւառն և ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն ասպատակել հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրև զջուրս բազումս:

Այրեացաւեր առնէին և զանթիւ մարդիկ արկանէին 'ի սուր սուսերի իւրեանց. զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից սայլից, ցկէսս զոր 'ի ներքոյ կամացն արկեալ կասուին: Եւ զարանց բազմութիւնս տային 'ի կոխումն փղաց. և զառանց թուոյ զմատաղ մանկտոյն, զայն 'ի գերութիւն վարէին. և զբազում ամուրս քանդէին, և զբերդս աւերէին զամուրս: Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր 'ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն 'ի գերութիւն խաղացուցին. և ինքեանք 'ի Ծոփս մեծ արշաւեցին: Եւ անդ էին բերդք, զոր առին. և էր, զոր ոչ կարացին առնուլ: Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է յԱնգեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք չիրմացն արանցն Արշակունեաց. բազում գանձք մթերեալ մնացեալ կային 'ի նախնեացն 'ի հնոց ժամանակաց հետէ: Զուան պահ արկին զբերդաւն. ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, թողուին և գնային: Եւ զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ 'ի ձեռս նոցա ամուր բերդն Անի 'ի Դարանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Մերուժան հնարաւորութեամբ մեքէնայէր ամուր բերդին այնմիկ: Ելանէին 'ի վեր և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անթիւ գանձս 'ի բերդէն: Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորաց Հայոց զարանց քաջաց զԱրշակունւոյ և խաղացուցանէին 'ի գերութիւն զոսկերս թագաւորացն. բայց միայն զգերեզման չիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեղեղ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն: Ապա գնացեալք անտի 'ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին, ընդ կողմանսն Բասէնոյ յառաջ խաղային և ին-

քեանք, կամէին 'ի թիկանցն կուսէ անկանել հասանել 'ի վերայ զօրացն թագաւորին Հայոց:

Ապա մինչ դեռ այս ամենայն լինէր, գուժկան հասանէր առ թագաւորն Արշակ, և ասեն նմա. Դու աւաղիկ առաջոյ սպասես թշնամեացն, նստիս յԱտրպատականի. իսկ թշնամիքն զթիկամբք անկեալ կոտորեցին զաշխարհս. և արդ դիմեալ գան 'ի վերայ քո: Ապա իբրև զայս լսէին թագաւորն Հայոց Արշակ և զօրավարն նորին Վասակ, հանդէս առնէին զօրացն իւրեանց: Եւ գտան 'ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց 'իբրև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք, որ միամիտք և միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել 'ի վերայ որդւոց և կանանց իւրեանց, և 'ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչև 'ի մահ և 'ի վերայ աշխարհին գաւառացն բնակութեան, հասանել մարտնչել 'ի վերայ եկեղեցեացն իւրեանց 'ի վերայ ուխտին անուան աստուծոյ իւրեանց, փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունւոց: Զի անգամ ոսկերք թագաւորացն մեռելոց և բազում ժողովուրդք խլեալք յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յօտարութիւն:

Ապա Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն հազարօք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրուկ թողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկրին Մարաց, հանդերձ սպասաւորօքն: Եւ ինքն գայր հասանէր 'ի միջնաշխարհն Հայոց 'ի գաւառն Այրարատու, և հասանէր գտանէր զզօրսն Պարսից, զի հասեալ մածեալ էին բազմութեամբ իբրև զաւազ առ ափն ծովու, բանակեալ զգաւառաւն Այրարատեան: Ապա հասեալ Վասակ հանդերձ գնդաւն, որ ընդ իւրն էին, անկանէր 'ի վերայ բանակին թագաւորին Պարսից 'ի գիշերի յեղակարծումն ժամանակի: Եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին զզօրսն ամենայն Պարսից. բայց միայն թագաւորն միաձի ճողոպրեալ մազապուրծ փախչէր: Զհետ հալածէին զմնացեալսն փախուցեալսն արտաքոյ իւրեանց սահմանացն և թափէին 'ի նոցանէ աւար բազում և ան-

թիւ, զի ոչ գոյր նոցա չափ համարոյ: Եւ առ հասարակ արկանէին զնոսա 'ի սուր սուսերի իւրեանց, և թափէին 'ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց, զոր պարսիկք խաղացուցեալ տանէին 'ի գերութիւն յաշխարհն Պարսից: Զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեանն ըստ օրինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն և բախտքն և քաջութիւն աշխարհիս աստի գնացեալ ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն: Ապա թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զՀայաստան աշխարհին. և զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր 'ի գեւղն, որ Աղձքն անուանին, յԱյրարատ գաւառին, որ կայն 'ի խինձս 'ի գոգս 'ի ծոցս յանձուկս 'ի դժուարս[9] լերինն մեծի, զոր Արագածն կոչեն: Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել զամենայն զգերութիւնս յաւերածոյն և այրեցածոյն: Բայց յայնմ նուագի ևս ապրէր Մերուժանն չարագործն, փախուցեալ ընդ արքային Պարսից: Եւ յայնմ հետէ պահ ունէին իւրեանց աշխարհին. արքայն Արշակ հանդերձ զօրավարաւն Վասակաւ յերկոսին դուրս սահմանացն զգուշանային մինչև զամենայն աւուրս կենդանութեան իւրեանց:

---

[1] ի խնդիր ելանէր իրին հասելոյ - ձեռնարկվեց գործին վերահասու լինել
[2] ուղղելի՝ գրէր
[3] ուղղելի՝ խորհել
[4] ի վարս կարգաց գնացիցն իւրոց - իր վարքի ու ընթացքի մեջ
[5] փխ. ատենին
[6] ժողովն հաւատոցն հաւասարութեան - հավատի ընդհանուր կանոններ սահմանելու
[7] ուղղելի՝ պատսպարան
[8] ընդ այլ կաթել (ուղղելի՝ կարթեալ) - ուրիշ կողմ շուռ տալով՝ շուռ գալով
[9] այստեղ՝ դժվարամուտ

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատուածք)

Գիրք առաջին

ԹԷ ՈՐՊԷՍ ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆՆ ԱՐԱՅԻ ՇԱՄԻՐԱՄ ՇԻՆԷ ԶՔԱՂԱՔՆ ԵՒ ԶԱՄԲԱՐՏԱԿ ԳԵՏՈՅՆ ԵՒ ԶԻՒՐ ՏՈՒՆՆ

Իսկ զկնի այսպիսեաց իրաց յաջողութեանց[1] դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշտին, որ անուանեալ կոչի յանուն Արայի Այրարատ, ելանէ ի լեռնակողմանս երկրի հարաւակողմանն, քանզի ժամանակ ամառնային էր, զբօսնուլ կամելով ի հովիտս և ի դաշտս ծաղկաւէտս: Եւ տեսեալ զգեղեցկութիւն երկրին և զօդոցն մաքրութիւն և զաղբերացն յստակագոյն բղխմունս և զկարկաջահոսութիւն գետոց բարեգնացից՝ «Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օդոց և մաքրութեան ջուրց և երկրի քաղաք և արքունիս չինել բնակութեան, որպէս զի զչորրորդ մասն ի բոլորմանէ տարւոյն, որ է ամառնային եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցուցանիցեմք ի Հայս և զայլս ևս երիս որոշմունս[2] օդոցն զովութեան տածիցեմք ի Նինուէ»:

Եւ անցեալ ընդ բազումս ի տեղեաց՝ գայ հասանէ յարևելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ. և տեսեալ առ եզերբ ծովուն երկայնաձև բլուր մի, որոյ նիստ երկայնութեանն ի մուտս կոյս արեգականդ, սակաւ ինչ առիկողեալ ի հիւսիսոյ, իսկ միջօրեայ[3] կողմանէ դէպ ուղիղ առ երկին հայելով՝ քարանձաւ կանգուն անչեղ. և ի սմանէ զհարաւով բացագոյն հովիտ իմն դաշտաձև և երկայնաձիգ յարևելից կողմանէ լերինն իջանելով յեզր ծովուն, ընդարձակ և գեղեցիկ ձորաձև. որոյ ընդ մէջն հոսանք ջուրց բարեհամաց ի լեռնէն իջանելով, ի ծործորոց և հովտաց քամեալք, և ի հիմանց փեղկից լերանց միաւորեալք ի ծաւալումն գետոց պերճանային. և չէնք ոչ սակաւք ի հովտաձև ձորակին, յաջմէ և յահեկէ ջուրցն յօրինեալք. և յարևելից կողմանէ հաճեցեալ բլրոյն՝ լեառն մի փոքրագոյն:

Աստ իմն ակնակառոյց լեալ այրասիրան այն և կաթոտն Շամիրամ, հրաման տայ չորից բիւրոց և երկուց հազարաց արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեայց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենևին կատարեալք իցեն յարուեստգիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին. և գործն հաւասար հրամանին առնոյր զկատարումն: Եւ վաղվաղակի ածեալ լինէին բազմութիւն խառնաղանճից գործաւորացն և բազմարուեստից հանճարեղաց իմաստնոցն: Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք չինել, կրով և աւազով մածուցեալ, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ, որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի: Եւ ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հէն և ի գաղթականս փախստեամբ ամրանան, իբր ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք: Եւ եթէ զփորձ առնուլ դէպ ումեք լինիցի՝ և ոչ իբր պարսատկաց քար մի արժանաւոր ի չինուածոյ ամբարտակին խլել ոք զօրեսցէ, թէև մեծաւ աշխատութեամբ ջանայցէ: Եւ ի հեղուսուածս արուեստին որ զքարամբքն՝ հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երևեցուցանէ կարծիս: Եւ այսպէս ընդ բազում ասպարէզս անցուցեալ զամբարտակն՝ հասուցանէ ի նկատեալ տեղի քաղաքին:

Եւ անդ հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել և ի վերայ իւրաքանչիւրոց դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս[4] կարգել. և այսպէս ի սաստիկ ճգնութեան պահեալ՝ յետ սակաւ ամաց կատարէ զհրաշալին ամրագունիւք պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիւք: Շինէ և ընտիրս և բազումս ի մէջ քաղաքին ապա-

բանս ի պէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս, և ըստ պատեհի իւրաքանչիւր՝ արեգակնակս. և գեղեցկագունիւք և ընդարձակ փողոցիւք զկողմանս քաղաքին որոշելով: Շինէ և զչքնաղս ոմանս և զզարմանալոյ արժանաւորս ըստ պիտոյից միջոցաց քաղաքին լուալիս: Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ անցուցանէ ի սպաս ամենայն պիտոյից և յարբուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց. և զայլն զեզերբ ծովակին յաջմէ և յահեկէ՝ քաղաքին և բովանդակ շրջակային յարբուցումն: Եւ զամենայն արևելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք և սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս և ի տերևս. և բազումս բազմաբերս և գինեբերս ի նմա տնկեաց ովիտս[5]: Եւ ամենայնիւ հոյակապ և հռչակաւոր զպարսպեալն յօրինէ և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ:

Իսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմա հրաշակերտութիւնք՝ բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ, և ոչ պատմել է կարողութիւն: Զորոյ պարսպեալ զգագաթնն՝ դժուարամուտս ոմանս և դժոխելանելիս ի նմա յօրինէ շինուածս արքայանիստս և ծածուկս իմն ահագինս: Որոյ որպիսութիւն դրութեանն յօրինաւածոյ ոչ լսելիս մեր հասեալ ճշմարտութեամբ յումեքէ, և ոչ մեք ի պատմութիւնս հիւսել հաւանիմք. այլ ասեմք միայն, թէ ամենայն թագաւորականաց գործոց, որպէս լուաք, առաջին և վեհագոյն համարեալ:

Իսկ զընդդէմ արեգական կողմն անճաւին, ուր և ոչ գիծ մի երկաթով այժմ վերագրել[6] ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ պէս պէս տաճարս[7] և սենեակս օթից[8] և տունս գանձուց[9] և ի վիհս երկարս ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց. Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմոմ հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ: Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ. նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր:

Արդ՝ որ ինչ յաղագս Շամիրամայ գործոց որ ի Հայս՝ ասացեալ է:

ԺՁ

1 զկնի այսպիսեաց իրաց յաջողութեան - այսպիսի հաջող գործերից հետո
2 և զայլս ևս երիս որոշմանս - իսկ մյուս երեք մասը
3 այստեղ՝ հարաւային
4 վարդապետ, այստեղ՝ արհեստավորների պետ, վարպետ
5 ովիտ - այգի
6 վերագրել - վրան գծել կամ գրել
7 սենյակներ
8 սենեակս օթից - ննջարաններ
9 տունս գանձուց - գանձարաններ

Գիրք Երկրորդ ԶԵ

ՅԱՂԱԳՍ ՆՈՒՆԷԻ ԵՐԱՆԵԼԻՈՅ, ԵԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵԻ ՊԱՏՃԱՌՔ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Կին ոմն, անուն Նունէ, յընկերաց Հռիփսիմեանց ի ցրուելոցն, փախստեամբ հասեալ յաշխարհն Վրաց ի Մծխիթայ, ի նոցա քաղաքն նախագահ, յոյժ ճգնութեամբ ստացեալ շնորհս բժշկութեան, որով և բազում ախտաժետս բժշկեալ և գլխովին զկին Միհրանայ առաջնորդին Վրաց: Վասն որոյ հարցեալ զնա Միհրանայ, եթէ ո՞րով զօրութեամբ առնես զայս սքանչելիս՝ ուսաւ զքարոզութիւն Աւետարանին Քրիստոսի. և ախորժելով լուեալ՝ պատմեաց իւրոց նախարարացն հանդերձ գովեստիւ: Եւ իսկոյն եհաս առ նա լուր սքանչելեացն, որ եղեն ի Հայս ի թագաւորն և ի նախարարսն, և զընկերացն երանելւոյն Նունեայ. ընդ որ հիացեալ՝ զրուցեաց երանելւոյն Նունեայ, յորմէ և ստուգագոյնս ևս տեղեկացաւ զամենայն ոճով:

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելեալ Միհրանայ յորս. մոլորեցաւ ի դժուարս լերանց, խաւարեալ օդով, այլ ոչ տեսանելեօք, ըստ այնմ՝ եթէ կոչէ զմէգ բարբառով, և դարձեալ՝ թէ զտիւ ի գիշեր մթացուցանէ: Այսպիսեաւ Միհրան ըմբռնեալ խաւարաւ, որ եղև նմա առիթ մշտնջենաւոր լուսոյն. քանզի զարհուրեալ, յիշեաց զոր լուաւն վասն Տրդատայ, եթէ ի ճանապարհ ելեալ, կամելով յորս գնալ՝ հասին

նմա հարուածք ի Տեառնէ. զոր համարեցաւ, թէ և նմա այնպիսի ինչ դիպելոց է: Եւ երկիւղիւ մեծաւ պաշարեալ, խնդրեաց աղօթիւք՝ լուսաւորիլ օդոյն և դառնալ խաղաղութեամբ, և պաշտել զԱստուածն Նունէի խոստանայր. որում հանդիպեալ՝ կատարեաց զասացեալսն:

Իսկ երանելւոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս՝ յղեաց առ սուրբն Գրիգոր, եթէ զի՛նչ հրամայեսցէ նմա գործել այնուհետև. քանզի յօժարութեամբ ընկալան Վիրք զքարոզութիւն Աւետարանին: Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուռսն, որպէս ինքն արար, և կանգնել զպատուական նշան խաչին մինչև ցօր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա: Եւ իսկոյն կործանեաց զամպրոպային պատկերն[1] Արամազդայ, որ կայր մեկուսի ի քա՛ղաքէն, գետոյն հզօրի ընդ մէջ անցանելով. զոր սովոր էին երկրպագել այգուն ի տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոցա երևէր. իսկ եթէ ոք զոհել կամէր՝ անցեալ ընդ գետն առաջի մեհենիցն զոհէր:

Բայց ի վերայ նորա յարեան նախարարքն քաղաքին, եթէ ո՞ւմ արդեօք փոխանակ կռոցն երկրպագեմք. ուսան՝ եթէ նշանի խաչին Քրիստոսի. զոր արարեալ կանգնեցին ի վերայ վայելուչ բլրոյն յարեւելից կուսէ քաղաքին, մեկուսի բաժանեալ և նա փոքրագոյն գետով: Եւ երկրպագեցին ամենայն բազմութիւնն ընդ առաւօտն նոյնպէս ի տանեաց իւրաքանչիւր: Բայց յորժամ ելեալ ի բլուրն տեսին փայտ կոփեալ, ոչ ճարտարաց ինչ գործ՝ յոլովք քան զսակաւս արհամարհեցին, իբր թէ այնպիսեաւ լի իցէ ամենայն անտառն նոցա, և թողեալ ի բաց գնացին: Իսկ բարերարին Աստուծոյ նայեցեալ ի գայթակղութիւն նոցա՝ առաքեաց յերկնից սիւն ամպոյ, և լցաւ լեառնն բուրմամբ անուշութեան. և ձայն բազմութեան սաղմոսերգուաց լսելի եղև քաղցր յոյժ, և ծագեաց լոյս տպաւորութեամբ խաչի, ըստ ձևոյ և չափոյ փայտեղինին, և կալով ի վերայ նզրա հանդերձ երկոտասան աստեղօք, յոր ամենեցուն հաւատացեալ՝ երկրպագեցին նմա: Եւ յայնմ հետէ զօրութիւնք բժշկութեան կատարէին ի նմանէ:

Իսկ երանելին Նունէ ել գնաց անտի աշակերտել և զայլ ևս գաւառսն Վրաց յանապակ լեզուէն, շրջելով անպաճուճաբար և առանց աւելորդաց, օտարացեալ յաշխարհէ և որ ի սմա. կամ թէ ճշմարտագոյն ասել՝ ի խաչ ելեալ, ի կրթութիւն մահու զկեանսն առնելով, բանիւ վկայ Բանին Աստուծոյ, և յօժարութեամբ իւրով որպէս արեամբ պսակեալ: Զոր համարձակիմ ասել, առաքելուհի եղեալ քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս: Բայց մեք դարձցուք անդրէն ի պատմութիւն Տրդատայ յարձակմանն ի Պարսս:

---

[1] պատկեր, այստեղ՝ արձան

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ

Աստուածածին՝ խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց. որ եղեր արեւելք արեգականն արդարութեան եւ նստելոցս ի խաւարի լոյս ծագեցեր. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք: Անապական տաճար եւ մորենի անկիզելի. որ զանչէջ հուր աստուածութեանն ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեանս կիզեալ չիջաւ կրից բոց. վասն որոյ: Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս. որով ելք յերկիր աւետեաց հորդեալ հոգւով ի քեզ տպաւորեալ բանին. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք:

Աստուածածին սուրբ կոյս, անապական տաճար, անպարագիծ էին բոլորից բնութեանց լայնածաւալ տեղի. այսօր ընդ բերկրական զուարթնոյն կրեցեր աւետեաց զտէրն տերանց ի քեզ. առ որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ: Յիմանալի վտակաց տանն աստուծոյ հոսմանց. վիճակեալ տեսանողացն ձայնի արբմամբ զմայլեցար. այսօր զանթառամն ծաղկեցար զծաղիկ, ի ժամու տալով զպտուղն. առ որ: Այսօր ի քեզ լցեալ ամովսածնին բարբառ, որ ի փրկութիւն հասարակաց տուեալ նշան բնութեան ազգի մարդկան. ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի զընդ մեզ յայտնեալն Աստուած. առ որ մաղթեմք բարեխօսել:

***

Ծագումն հրաշալի, որ անյայտ էր ի մէնջ. եւ բանն հայրական անըմբռնելի, հուր փայլակնացեալ և ի մարմնի բնակեցաւ անվնաս պահելով զարարածս ամենայն: Ծագումն հրաշագործ, որ ի կուսէն

ծագեցաւ, ճառագայթելով զարարածս ամենայն. երկինքն ցնծային եւ երկիրս ուրախանայր. և Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ: Առ քեզ ապաւինիմք, ամենասրբուհի՝ գերագոյն և հրաշալի եւ բաշխող բարութեանց. աղբիւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց եւ եղեր վերընկալ աստուածային բանին:

Զանճառելի լուսոյ մայր, եւ զբնակարան անսկզբնակից որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք: Զանհաս անօրէնութեան մայր եւ զանձնաւոր տաճար աստուծոյ բանին. օրհ: Զբոլորից փրկութեան մայր, որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ, զնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք:

ԿԱՆՈՆ

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՒՈՒՐՆ

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի: Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդի՛ք մարդկան, օրհնեցէ՛ք, զի վասն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեօք. եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան: Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս որդին Աստուծոյ. եւ հրեղինաց բազմութիւնք յերկնից յերկիր վայր իջեալ: Այսօր հովուացքն տեսեալ զարդարութեան արեգակն եւ ընդ հրեշտակս երգէին փառք ի բարձունս Աստուծոյ:

***

Որ անտես անքնին քառակերպիցն վեհագոյն, ի փրկել զմեզ եկեալ անմահից թագաւորն, օրհնութիւն առաքողին: Առաքի հրեշտակապետն առ սերովբէն հողեղէն. ասէ տէրն եւ արարողն առա-

քեալն ի հօրէ մարմնանայ ի քէն փրկողն: Մկրտի ի Յորդանան վկայելով հօր և հոգւոյն. ովսաննա ի բարձունս երգէին մանկունքն օրհնութիւն որդւոյ Դաւթի:

Անթառամ ծաղիկ անդատապարտ շառաւիղ վերաբուսեալ յարմատոյն յեսսեայ. զքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեաց եօթնարփեան շնորհաց հոգւոյն ընդունարան գոլ. աստուածածի՛ն եւ կո՛յս, զքեզ մեծացուցանեմք: Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ յուրախութիւն տրտմեցելոցն ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան: Սրբուհի՛ անարատ, ամենեքեան զքեզ: Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք. այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն վերափոխեցար յարքայութիւն որդւոյ քո եւ աստուծոյ մերոյ. բարեխօ՛ս խօստովանողացս, զքեզ մեծ:

ԿԱՆՈՆ
ՎԵՑԵՐՈՐԴ ԱԻՈՒՐՆ

Անսկզբնական տեսիլ փառաց քոց տուող, որ ի մեզ հրաշագործեցաւ երևելով անճառաբար ծնունդ, այսօր ցնծութիւն յայտնեցաւ տիեզերաց: Անմարմնական հոգեղինացն երգակցելով բոցեղէն փայլմամբ, թափանցիկ հրածին ամպոյն սիւն գործեալ յայրին. այսօր դասակից եղեն հովիւքն հանդիսի վերնոցն: Ընդհանուր ծաւալեցաւ ծագումն լուսոյ, մոգուցն հետևելով աստեղբն գուշակեալ զծնունդ· յայրին, անդ մատուցանէին զընծայս աստուածային ծննդեանն:

Որ յէութեանդ ես ընդ հօր եւ սուրբ հոգւոյն անսկի՛զբն որդի, խոնարհեցար ի հայրական ծոցոյ, մարդ եղեալ մարմնացար ի կուսէն, բառնալով զյաղթումն մահու յանցանաց նախահօրն. քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակացն ի մէջ հովուացն. օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան բանդ: Այսօր ծնար, որ ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս, որդի, ճառագայթ փառաց և ծագումն յանմեկնելի լուսոյն. աստղագուշակ տեսլեամբն յայրին իջեւանի եւ ի մսուր անբանից բազմեալ. քեզ երգեմք: Թագաւոր փառաց Քրիստո՛ս եւ արարի՛չ բոլորից, Աստուա՛ծ հզո՛ր իշխան, հա՛յր հանդերձեալ լուսոյն, մանուկ երեւեալ այսօր անփոփոխելիդ ի յէութեան. քեզ երգեմք:

Որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ բնակիլ յարգանդի կուսին, Աստուա՛ծ հարցն մեծոց: Որ գթացար յերկիր եւ ծնար անախտ:

***

Զկուսութիւնդ քո, Աստուածածի՛ն անարատ. զոր ոչ բոցակիզեաց հուր աստուածութեանն, մեծացուցանեմք: Որ յարգանդի քում անապականաբար բնակեցաւ Քրիստոս Աստուած եւ փրկիչ անձանց մերոց, մեծացուցանեմք: Անհասանելի տէրունական յայտնութիւնն աշխարհի ծագեցաւ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Խոնարհեցար ի բարձանց եւ մարմնացար ի կուսէն. որ նստէիրդ ի քրովբէս, արարի՛չդ արարածոց: Երկինք չէին բաւական փառաց անմահ անեղիդ, արգանդ կուսին ժուժկալեալ ընդունել զգանձդ երկնային: Յորմէ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին մերձենալ. ի խանձարուրս պատեցար եւ եդար ի մսուր յանբանից:

Հրաշալի բարբառք երկնաւոր զօրացն հնչմամբ օրհնէին զանմահ թագաւորութիւնն: Անճառ ծնունդն փառօք երեւեալ, եւ աստղն լուսապայծառ հովանի էր յայրին: Բանն բազմեալ յանբանից մսուր. եւ մոգքն հետեւէին ծագմամբ լուսափայլ աստեղն:

Սիւն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս, որ ցօղեցեր ի մեզ զցօղն երկնային. զքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն կոյս: Անկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն սուրբ կոյս. քանզի պտուղն կենաց ի քէն տուաւ մեզ: Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց սուրբ կոյս. որ զանտանելին յէից ի գիրկս քո բարձեր. զքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն կոյս:

ԿԱՆՈՆ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ

Մարմնացեալդ ի կուսէն նախայաւիտեան բանդ, այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս վասն փրկութեան հեթանոսաց: Որ յանարուեստ աթոռ նստիս, բարեբանեա՛լդ ի հրեշտակաց. այսօր ի Սիմէոնի բառնալով ի գիրկս. որ ընծայեսցես զմեզ ի կեանսդ յաւիտենից: Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա՛ և զիս զբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից:

Այսօր անսկզբնական ծնունդ հայրական ծոցոյ բանն եկաւորեալ ի տաճարն, ընծայէ զարարածս հօր ի յերկինս: Այսօր բարձեալ եղեւ ի գիրկս ծերունւոյն, որ բանիւ զարարածս բարձեալ ունի, օրհնաբանեսցուք: Այսօր և մեք հաւատացեալքս ընդ ծերունւոյն Սիմէոնի, զբան համագոյ հօր եւ սուրբ հոգւոյն օրհնաբանեսցուք:

ԿԱՆՈՆ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՒՈՒՐՆ

Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն, մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն: Աննիւթական աղաւնի, անքննելի, որ քննէ զխորս աստուծոյ. զոր առեալ ի հօրէ պատմէ զահաւոր եւ զմիւսանգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյական: Օրհնութիւն ի բարձունս, ելողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Կենարա՛ր Աստուած, մարդասէ՛ր Հոգի, զժողովեալսն միաբանական սիրով լուսաւորեցեր հրեղինօք լեզուօք. վասն որոյ եւ մեք այսօր տօնեմք զգալուստ քո սուրբ: Զուարճացան քո գալստեամբն սուրբ առաքեալքն. կոչելով ի միասին զցրուեալսն ի միմեանց բազմաձայն լեզուօք. վասն որոյ: Հոգեւորական սուրբ մկրտութեամբ զարդարեցեր նոքօք զտիեզերս ի զգեստս լուսափայլս եւ նորափետուրս. վասն:

ԿԱՆՈՆ ՎԱՐԴԱՎԱՌԻ ԱՌԱՋԻՆ ԱՒՈՒՐՆ

Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք, իմանալի՛ լոյս: Որ զճառագայթ փառաց քոց ցուցեր, արեգակնակերպ փայլմամբ զարարածս լուսաւորեցեր. զքեզ փառաւորեմք, իմա: Որ ահագին տեսլեամբ զարհուրեցուցեր զքո զաշակերտսն, ի թմրութիւն հրաշիցն ի սէր աստուածային փառաց քոց. զքեզ:

Երեւի երբեմն աշակերտացն հրաշալի տեսլեամբ, պայծառացեալ ի Թաբոր լերինն: Եւ զերրեակ միութեան զանտանելի զլոյսն տեսանելով կենդանւոյն մահացան: Հանդիպեալ նախահարցն տեսութեամբ հայցէին ի տեառնէ. ասեն բարւոք է մեզ աստ լինել: Արասցուք երիս տաղաւարս տեառն և Մովսեսի և Եղիայի. եւ փառաւորեսցուք հանապազ զերրեակ միութիւնն:

ԿԱՆՈՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՒՈՒՐՆ

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին երանելի առաքեալքն եւ սուրբ կուսանքն ջահազգեստուք պայծառացեալք լուցանէին զլապտերս իւրեանց. եւ միաձայնեալ ասէին, օրհնեալ ես դու, ամէնօրհնեա՛լդ ի կանայս: Այսօր դնելով զսուրբ կոյսն առ դրանն գերեզմանին, սպասէին և ակն ունէին տեառն իսկ ինքնին գոլով, գեր ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք. եւ նոցա միա[1]: Այսօր տեսեալ զսուրբ կոյսն թռուցեալ յօդս եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս. մտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն: եւ նոցա միա: Այսօր ընդ բազմաչեայ քրովբէսն եւ ընդ վեցթեւեան սրովբէսն մտանելով յեօթնաստեղեան խորանսն. տեսանելով զանազան աթոռսն զոր պատրաստեալ է քեզ տէրունւոյդ. երգեմք և մեք ասելով. օրհնեալ ես դու, ամէնօրհնեա՛լդ ի կանայս:

[1] Այսինքն՝ եւ միաձայնեալ ասէին, օրհնեալ ես դու, ամէնօրհնեա՛լդ ի կանայս:

ԵՂԻՇԷ

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

(Հատուածք)

Երկրորդ յեղանակ

Յայնժամ յայտնապէս հրաման ետուն մոգաց և մոգպետաց նամակ մի գրել ըստ ձախողակի դենին իւրեանց: Եւ է պատճէն նամակին այս.

«ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ՎԶՐՈՒԿ հրամանատար Երան եւ Աներան[1].

Հայոց մեծաց ողջոյն չատ

«Դուք գիտասջիք, ամենայն մարդ, որ բնակեալ է ի ներքոյ երկնի և ոչ ունի զօրէնս դենի մազդեզն, նա խուլ է և կոյր՝ և ի դիւաց Հարամանոյ խաբեալ:

«Քանզի մինչ չև էին երկինք և երկիր, Զրուան մեծն աստուած յաչտ առնէր զհազար ամ և ասէր. «Թերևս լիցի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ զերկին և զերկիր»: Եւ յղացաւ երկուս յորովայնի. մի վասն յաչտ առնելոյ՝ և զմեւսն ևս ի թերևսն ասելոյ: Իբրև գիտաց, եթէ երկու են յորովայնի, «Որ վաղ եկեսցէ, ասէ, նմա տաց զթագաւորութիւնս»:

«Իսկ որ էր ի թերահաւատութենէն յղացեալ՝ պատառեաց զորովայնն և ել ի դուրս: Ասէ ցնա Զրուան. «Ո՞վ ես դու»: Ասէ. «Որդին քո եմ Որմիզդ»: Ասէ ցնա Զրուան. «Իմ որդին լուսաւոր է և անուշահոտ, դու խաւարային ես և չարասէր»: Եւ իբրև կարի դառնապէս՝ ելաց,՝ ետ ցնա զթագաւորութիւնն հազար ամ:

«Իբրև ծնաւ զմեւս ևս որդի, անուանեաց զնա Որմիզդ. եհան զթագաւորութիւն յԱրհմնէ և ետ ցՈրմիզդն և ասէ ցնա. «Յայժմ ես քեզ յաչտ արարի, արդ դու ինձ արա»: Եւ Որմիզդ արար զերկինս և զերկիր, իսկ Արհմն ընդդէմ չար գործեաց:

«Եւ այսպէս բաժանին արարածքս. հրեշտակք Որմզդի են, իսկ դևքն Արհմնոյն, և ամենայն բարիք, որ յերկնից և այսր լինին՝ Որմզդի են, և ամենայն վնասք, որ անտի և այսր գործին՝ զայն Արհմն արար: Սոյնպէս յերկրիս որ ինչ բարի է՝ զայն Որմիզդն արար, և որ ոչն է բարի՝ զայն Արհմն արար. որպէս զմարդ Որմիզդ արար, և զախտս և զհիւանդութիւնս և զմահ Արհմն արար: Եւ ամենայն թշուառութիւնք և պատահարք, որ լինին, և պատերազմունք դառնութեան չարին մասին արարածք են. իսկ յաջողութիւն և տէրութիւնք և փառք և պատիւ և առողջութիւնք մարմնոց,՝ գեղեցկութիւնք դիմաց և ճարտարութիւնք բանից և երկայնակեցութիւնք ամաց, այդ ի բարւոյն առնուն զգոյացութիւն. և ամենայն, որ ոչ այդպէս է, ի նա չարին արարած խառնեալ է:

«Եւ ամենայն մարդիկ մոլորեալ են, որ ասեն՝ եթէ «Զմահ Աստուած արար, և չար և բարի ի նմանէ լինին»: Մանաւանդ որպէս քրիստոնեայք ասեն՝ թէ «Աստուած նախանձոտ է. վասն թզոյ միոյ ուտելոյ ի ծառոյն՝ Աստուած զմահ արար և զմարդն էարկ ընդ այնու պատուհասիւ»: Զայդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի. թո՛ղ թէ Աստուած առ մարդիկ. զի որ զայս ասէ՝ նա խուլ է և կոյր, և ի դիւաց Հարամանոյ խաբեալ:

«Դարձեալ մեւս ևս այլ մոլորութիւն. «Աստուած, որ զերկինս և զերկիր արար, եկն, ասեն, և ի կնոջէ ումեմնէ ծնաւ, որում անուն էր Մարիամ, և առն նորա Յովսէփ»: Այլ ճշմարտութեամբ՝ Բանթուրակայ ուրումն եղեալ նա որդի յանկարգ խառնակութենէ: Եւ զհետ այսպիսի մարդոյ մոլորեալ են բազումք:

«Եթէ աշխարհն Հոռոմոց առ յոյժ յիմարութեան տգիտաբար մոլորեալ են և զրկեալ ի կատարեալ դենէս մերմէ, յանձանց պարմայեն զվնասն իւրեանց. դուք ևս ընդէ՞ր զհետ նոցա մոլորութեանն ցնորիք: Այլ զոր օրէնս տէրս ձեր ունի, զնոյն և դու՛ք կալարուք. մա՛նաւանդ զի և առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ:

«Մի՛ հաւատայք առաջնորդացն ձերոց, զոր նածրացիսդ անուանէք. քանզի յոյժ են խաբեբայք. զոր բանիւք ուսուցանեն, գործովք

ոչ առնուն յանձն: «Միս ուտել, ասեն, ոչ են մեղք», և ինքեանք ուտել ոչ կամին. «Կին առնել արժան է», բայց ինքեանք և հայել ի նա ոչ կամին. «Կարասի որ ժողովէ, ասեն, մեղք են յոյժ», բայց զաղքատութիւն առաւել քան զյոյժ գովեն: Յարգեն զթշուառութիւն և պարսաւեն զյաջողուածս. ծաղր առնեն զանուն բախտի և զփառաւորութիւն յոյժ այպանեն. սիրեն զանշքութիւն հանդերձից և յարգեն զանարգս քան զպատուականս. գովեն զմահ և պարսաւեն զկեանս. անարգեն զծնունդս մարդոյ և գովեն զանորդութիւն: Եւ եթէ լսէ ոք դոցա և ի կանայս ոչ մերձենան, աշխարհի վախճան վաղվաղակի հասանէ:

«Այլ ես ոչ կամեցայ զամենայն ըստ մասանց ընդ գրով արկանել առ ձեզ. զի բազում այլ ինչ է, զոր խօսին դոքա: Որ չարագոյն ևս է քան զոր գրեցաքդ, զԱստուած ի խաչ ելեալ ի մարդկանէ քարոզեն և զնոյն մեռեալ և թաղեալ՝. և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս: Ո՞չ ահա ձեզէն իսկ արժան էր անդէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց: Դեւք, որ չարք են, ոչ ըմբռնին և տանջին ի մարդկանէ, թո՛ղ թէ Աստուած արարիչ ամենայն արարածոց. զոր ձեզ ամօթ է ասել, և մեզ կարի անհաւատալի բանք:

«Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարե՛ք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք ի Դուռն եկա՛յք և յանդիմա՛ն լերուք մեծի հրապարակին»:

ԱՆՈՒԱՆՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ,

որք ժողովեցան յԱյրարատեան գաւառն և արարին նամակին պատասխանի

ՅՈՎՍԷՓ եպիսկոպոս Այրարատոյ.
ՍԱՀԱԿ եպիսկոպոս Տարօնոյ.
ՄԵՂԷՏ եպիսկոպոս Մանազկերտոյ.
ԵԶՆԻԿ եպիսկոպոս Բագրևանդայ.

ՍՈՒՐՄԱԿ եպիսկոպոս Բզնունեաց.
ՏԱՃԱՏ եպիսկոպոս Տայոց.
ԹԱԹԻԿ եպիսկոպոս Բասենոյ.
ՔԱՍՈՒ եպիսկոպոս Տուրուբերանոյ.
ԵՐԵՄԻԱ եպիսկոպոս Մարդ՝աստանի.
ԵՒՂԱՂ եպիսկոպոս Մարդոյաղւոյ.
ԱՆԱՆԻԱ եպիսկոպոս Սիւնեաց.
ՄՈՒՇԷ եպիսկոպոս Արծրունեաց.
ՍԱՀԱԿ եպիսկոպոս Ռըշտունեաց.
ԲԱՍԻԼ եպիսկոպոս Մոկաց.
ԳԱԴ եպիսկոպոս Վանանդայ.
ԵՂԻՇԱ եպիսկոպոս Ամատունեաց.
ԵՂԲԱՅՐ եպիսկոպոս Անձաւացեաց.
ԵՐԵՄԻԱ եպիսկոպոս Ապահունեաց.

Այս ամենայն եպիսկոպոսք և բազում քորեպիսկոպոսք և պատուական երիցունք ի տեղեաց տեղեաց հանդերձ սուրբ ուխտիւ եկեղեցւոյ՝ միաբանք և միահաւանք, միահամուռ ժողովեալք ի թագաւորանիստ տեղին յԱրտաշատ, հաւանութեամբ մեծամեծ նախարարացն և ամենայն բազմութեամբ աշխարհին արարին նամակին պատասխանի:

«ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ,

Հանդերձ ամենայն միաբանելովքս ի մեծամեծաց մինչև ցփոքունս. Միհրներսեհի մեծի հազարապետի Արեաց և Անարեաց՝ բազում խաղաղասէր մտօք բազմասցի ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահիդ Արեաց.

«Ի նախնեաց ունիմք սովորութիւն աստուածատուր պատուիրանաւ՝ աղօթս առնել ի վերայ կենաց թագաւորի և անձանձրոյթ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց դորա, զի խաղաղութեամբ վա-

ըեսցէ զտիեզերական իշխանութիւնդ, զոր աւանդեալ է դմա յԱստուծոյ. զի ի դորա յերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածպաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր:

Վասն նամակին, որ քո ի մեր աշխարհս տուեալ էր, առաջ ժամանակաւ մի ոմն ի մոգպետաց, որ կատարելագոյն էր ի դենիդ ձերում, և դուք առաւել քան զբնութիւն մարդկան ի վեր համարէիք զնա, հաւատաց նա յԱստուած կենդանի յարարիչն երկնի և երկրի, և բան առ բան ելոյծ և իմացոյց ձեզ զօրէնս ձեր: Եւ իբրև ոչ կարացին բանիւ զդէմ ունել նորա, քարկոծեալ մեռաւ յՈրմզդէ արքայէ: Եւ եթէ հաւատարիմ համարիցիս զմեր բանս լսել, ի բազում տեղիս այդր աշխարհիդ ձերոյ գտանին գիրք նորա. ընթերցիր, այտի տեղեկանաս:

«Այլ վասն օրինացս մերոց, ոչ ինչ աներևոյթ են, և ոչ յանկեան ուրեք աշխարհի քարոզի, այլ՝ համատարած ընդ ամենայն երկիր, ընդ ծով և ընդ ցամաք և ընդ կղզիս. ոչ միայն ընդ արևմուտս, այլ և ընդ արևելս. այլ և ընդ հիւսիս և ընդ հարաւ և ի միջոցս լի է հոծութեամբ: Ոչ ի մարդ ապաստան՝ եթէ վերակացուաւ տարածեսցի ընդ աշխարհս. այլ ինքն յինքենէ ունի զհաստատութիւն: Ոչ առ այլովք վատթարօքն վեհ երևի. այլ ի վերուստ յերկնուստ ունի զանսուտ օրէնսդրութիւնն. ոչ միջնորդաւ, զի մի է Աստուած, և չիք այլ ոք բաց ի նմանէ, ոչ երիցագոյն և ոչ կրսերագոյն:

«Ոչ սկիզբն առեալ յումեքէ լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ մշտնջենաւոր. ոչ ի տեղւոջ ուրեք, այլ ինքն ինքեան տեղի. ոչ ի ժամանակի իմիք, այլ ժամանակք ի նմանէ գոյացան. և ոչ միայն քան զերկինս երիցագոյն, այլ և քան զկարծիս մտաց մարդկան և հրեշտակաց: Ոչ ձևանայ ի տեսիլ տարրեղէն, և ոչ անկանի ընդ տեսլեամբ ական. և ոչ միայն ձեռին չզննի, այլ և ոչ ընդ միտս ուրուք հարկանի, ոչ միայն ընդ մարմնականացս, այլ և ընդ անմարմին հրեշտակացն. բայց եթէ ինքն կամի, իւրոց արժանաւորացն մտաց իմանի, այլ ոչ աչաց տեսանի. և մտաց՝ ոչ երկրաւորացս, այլ որ յԱստուած են հաւատացեալ ճշմարտիւ:

«Եւ անուն նորա Արարիչ երկնի և երկրի. իսկ յառաջ քան զերկին և զերկիր, որպէս ինքնագոյ՝ ինքնանուն է: Ինքն անժամանակ է, իսկ արարածոցս յորժամ կամեցաւ՝ սկիզբն արար լինելոյ, ոչ յընչէ՝ այլ յոչընչէ. զի ինչ՝ նա միայն է, և այլս ամենայն ի նմանէ ընչացաւ: Ոչ եթէ իբրեւ յետոյ իմացաւ և արար, այլ մինչ չև արարեալ էր նորա՝ ի կանուխ գիտութեանն իւրում տեսանէր զարարածս. որպէս և այժմ մինչ չև է գործեալ մարդոյ բարի ինչ կամ չար, Աստուծոյ յայտնի են գործք մարդկան: Սոյնպէս և յայնժամ մինչ չև էր արարեալ, ոչ ի խառն ի խուռն ինչ ճանաչէր զանեղսն, այլ կարգեալ և յարմարեալ կային առաջի նորա իւրաքանչիւր մասանց տեսակքն. իսկ մարդկան և հրեշտակաց՝ և տեսակքն և որ ի տեսակին լինելոց էին:

Եւ քանզի արարող զօրութիւն է, ոչ կարէր խափանել զնորա բարերարութիւնն մեր չարութիւնս. որպէս և եղև իսկ, և ունիմք դատաւոր զաջն արարիչ: Զեռք որ զերկինս և զերկիր հաստատեցին, նոյն և տախտակս քարեղէնս փորագրեցին և ետուն մեզ դպրութիւն, որ ունի զօրէնս խաղաղականս և փրկականս. զի գիտասցուք զմի Աստուած արարիչ երեւելեաց եւ աներեւութից. ոչ այլ և այլ, իբր թէ ոմն բարի եւ ոմն չար. այլ մի եւ նոյն համակ բարի:

«Բայց եթէ թուիցի քեզ չար ինչ գոլ յարարածս Աստուծոյ, ասա՛ համարձակ, զի թերևս ուսցիս զճշմարիտն բարի: Զդևս չար ասացեր. գոն և դևք բարի, զոր և դուք և մեք հրեշտակս անուանեմք. եթէ կամին՝ և դևք բարի լինին, և եթէ կամին՝ և հրեշտակք չար լինին: Այդ և ի մարդիկ երևի, և առաւել ի միոյ հօր որդիս. է որ հնազանդ և հպատակ է հօրն, և է որ չարագոյն քան զսատանայ: Նա և ինքն իսկ մարդն առանձին յերկուս բաժանեալ տեսանի, երբեմն չար և երբեմն բարի. և որ բարին էր՝ նոյն և չարացաւ, դէպ եղև, զի դարձեալ անդրէն ի բարին չրջեցաւ, և բնութիւն մի է:

«Բայց այն որ ասեսն, եթէ վասն թզոյ միոյ մահ արար Աստուած, վատթարագոյն է պատճառ մի մագաղաթ քան զթուզ. ապա եթէ բան թագաւորին նկարի ի նմա, ո պատառէ զնա, մահու ընդունի

զպատուհաս: Իսկ արդ չար արժա՞ն է ասել թագաւորին. քաւ, ես ոչ ասեմ, այլ խրատ ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ: Յա՛յնժամ էր Աստուած նախանձոտ, թէ չէր պատուիրեալ չուտել ի ծառոյ անտի. ապա եթէ յառաջագոյն զգուշացաւ, զգուէթ բնական սիրոյն իւրոյ յայտնեաց ի նմա: Իսկ արհամարհելով մարդ՝ ընկալաւ զպատիժ մահուան:

«Բայց այն զոր ասացեր, եթէ Աստուած ի կնոջէ ծնաւ, յայդմ չէր արժան քեզ խորշել և փախչել. զի ահաւասիկ Արհմն և Որմիզդ ի հօրէ ծնան և ոչ ի մօրէ. որում եթէ քաջ միտ դնես, և ոչ դու յանձն առնուս: Եւ մեւս ևս այլ ծաղրագոյն քան զայդ, Միհր աստուած ի կնոջէ ծնանի, եթէ ոք ընդ իւրում ծնողին անկցի:[2]

« Այլ սակաւիկ մի եթէ ի բաց թողացուցանէիր զփքումն տէրութեանդ և ընկերաբար գայիր ի պայքար, գիտեմ զի իբրև այլովդ ամենայնիւ յոյժ իմաստուն ես, և վասն ծննդեան Տեառն մերոյ ի սուրբ Կուսէն՝ ոչ աւելաբանութիւն համարէիր, այլ առաւել քան զարարչութիւնն յոչընչէ զաշխարհս մեծագոյն զվերջին փրկութիւնն իմանայիր, ազատութեան մարդոյն զյանցաւորութիւնն դնէիր[3], և բարերարութեանն Աստուծոյ՝ զազատութիւնն ի ծառայութենէ:

«Քանզի յորժամ լսես, եթէ յոչընչէ արար Աստուած զամենայն աշխարհս բանիւ ծնունդ իմասջիր զարարածս: Իսկ քանզի Աստուած, որ զայս մեծ մարմին առանց չարչարանաց ծնաւ, ապաքէն իբրև զհայր գութ ունի ընդ սմա: Զի որ ինքն անապական է, և զարարածս առանց ապականութեան ծնաւ. իսկ սա կամօք գլորեալ ապականեցաւ, և անձամբ ևս ոչ կարէր կանգնել կալ ի վերայ ոտից: Վասն զի ի հողոյ, անձամբ անձին արարեալ՝ անդրէն ի նոյն բնութիւն դարձաւ. և իբրև ոչ եթէ օտար զօրութենէ չարի ինչ ընկալաւ ուրուք զպատիժս պատուհասին, այլ ի յիւրմէ հեղգութենէն չլսել բարերար պատուիրանին, խրատեցաւ ծառայական մասնն մահուամբն, զոր կրեաց յանձն իւր:

«Արդ եթէ զմահ չար աստուածն արար, զի՞նչ գոյացութիւն երևի մահու ի միջի. և ո՛չ ինչ: Բայց զբարի Աստուծոյ զարարածսն խանգարեաց: Եթէ այդ այդպէս է, նմա և բարի իսկ ասեալ ոչ մարթի, այլ կիսագործ ապականացու: Եւ որոյ աստուծոյ արարածքն ապականելիք են և եղծանելիք՝ նմա անեղծ Աստուած չմարթի ասել: Տի՛ օն անդր թողէք զյիմարութեան զբարբանջմունսդ:

«Միոյ աշխարհի երկու դեհապետք ոչ լինին, և ոչ միոյ արարածոյ երկու աստուածք: Եթէ ժպրհեսցին և լինիցին երկու թագաւորք միոյ աշխարհի, աշխարհն եղծանի և թագաւորութիւնքն խանգարին:

«Աշխարհս նիւթեղէն է, և նիւթքս որիշ որիշ են և ընդ միմեանս հակառակ. մի է արարիչ հակառակորդացս, որ ածէ զսոսա ի սիրելութիւն հաւանութեամբ. որպէս մալեալ կակղէ զջերմութիւն հրոյն՝ օդոյս հովութեամբ, և զապառումն բրտութիւն օդոյն՝ հրոյն եռանդմամբ. սոյնպէս և զմանրամաղ փոշիացեալ հողս՝ ջրոյն խոնաւութեամբ զանգանէ, իսկ զ՛ի վայր ծորելի բնութիւն ջրոյն՝ սալայատակ տրտմացեալ հողոյն կափմամբ[4]:

«Զի եթէ միաբանէին տարերքս, գուցէ ոք ի կարճամտաց և Աստուած անապական զսոսա կարծէր, և թողեալ զարարիչն՝ արարածոցս զերկրպագութիւն մատուցանէր. վասն այնորիկ որ արար զսա՝ զգուշացաւ յառաջագոյն, զի հայեցեալ մարդիկ ի յանդիմանութիւն ապականացու տարերցս՝ անապական միայն զկառավար սորա իմասցին, զմի և ոչ զերկուս. զնոյն արարիչ չորեքկին նիւթոցս, յորմէ ամենայնքս ծննդագործին հրամանաւ արարողին իւրեանց:

«Իսկ եթէ առ անբան աշխարհս այսպէս հոգ տանի Աստուած, ո՛րչափ ևս առաւել առ բանաւոր աշխարհս՝ մարդս:

«Զոր և ձեր ոմն քաջ յիմաստնոցն ասաց, եթէ Միհրն աստուած մայրածին էր ի մարդկանէ, և թագաւոր աստուածազաւակ է, և համհարզ քաջ եւթներորդաց աստուածոց: Եւ եթէ հաւատալ արժան է առասպելաբանութեանդ, զոր դուք և գործովք իսկ կատարեալ ցուցանէք ի՝դենիդ ձերում, մեք ոչ ևս առասպելացն հաւատամք, այլ աշա-

կերտք եմք մեծին Մովսիսի մարգարէին, ընդ որում Աստուած խօսեցաւ ի մորենւոջն ի Սինէ և դէմ յանդիման օրէնս գրեաց և ետ ցնա. և ծանոյց զնիւթեղէն աշխարհս իբրև զարարածս և զիւր աննիւթ էութիւնն՝ արարիչ նիւթոցս յոչընչէ. և զերկիրս երկրաւորօքս և զերկինս երկնաւորօք ծանոյց նմա, զի գործք ձեռաց նորա են: Բնակիչք երկնի՝ հրեշտակք, և բնակիչք երկրի՝ մարդիկ. բանաւոր՝ մարդ և հրեշտակ միայն, և Աստուած ի վեր քան զերկինս և զերկիր:

«Եւ ամենայն արարածք անբանութեամբ կատարեն զհրամանս պատուիրանի նորա, և ոչ երբէք անցանեն ըստ եղեալ սահմանն իւրեանց. բայց մարդ և հրեշտակ ազատ թողեալ ի կամս անձին, քանզի մտաւորք են, եթէ կայցեն ի հրամանի նորա, անմահք են և որդիք Աստուծոյ: Զբոլոր արարածս տուեալ է ի ծառայութիւն, զերկիրս՝ մարդկան, և զերկինս՝ հրեշտակաց. ապա եթէ ստունգանիցեն և անցանիցեն զպատուիրանաւ, զընդդէմսն գործեսցեն Աստուծոյ, յիւրաքանչիւր պատուոցն զանարգանս ընկալցին. զի երևեսցի տէրութիւնն անբամբաս, և յանցաւորք յանցանացն ամօթալից:

«Իսկ եթէ դու ի տգիտութեան վրիպեալ ես, ես որ հաստատունս գիտեմ, ոչ կարեմ գալ զկնի քո մոլորութեանդ: Եթէ աշակերտիմ անուսումնութեանդ, երկոքինս յանգիւտ կորուստն մատնիմք. թերևս ես չարագոյն քան զքեզ, քանզի վկայ ունիմ ինձ զինքնասաց ձայնն Աստուծոյ. «Ծառայ, ասէ, որ ոչ գիտէ զկամս տեառն իւրոյ և արժանի գանի ինչ գործ գործէ, ըմպել ըմպէ գան, այլ սակաւագոյն», իսկ որ տեղեկագոյն է կամաց թագաւորին և յանցանէ ինչ առաջի նորա, առանց բարեխօսի բազմապատիկ տանջի:

«Արդ աղաչեմ զքեզ և զամենեսեան, որ ընդ քոյով իշխանութեամբ են. մի՛ դու ընդ իս բազմապատիկ տանջիր, և ոչ ես ընդ քեզ սակաւագոյն. այլ ես և դու և ամենայն բազմութիւնդ հանդերձ արի թագաւորաւդ այնպէս աշակերտեսցուք աստուածային գրոց, զի ի տանջանացն ապրեսցուք, և զդժոխս արհամարհեսցուք, և յանչէջ հրոյն զերծանիցիմք, և զարքայութիւնն ժառանգիցեմք, և անցաւոր կենօքս զանանց մեծութիւնն անվախճան ունիցիմք:

«Բայց յորմէ դուդ զարհուրեալ ես՝ դիւրահաւան լեր, և վաղվաղակի աշակերտիս ճշմարտութեանն:

«Ոմն ի հրեշտակաց յանմահիցն գնդէն ստամբակեալ և ի բաց գնացեալ յերկնից և ի մեր աշխարհս եկեալ՝ պատիր բանիւք և սուտ խոստմամբ զանլինելի յոյսն առաջի դնէր՝ իբրև տղայ մանկան՝ անփորձ և անկիրթ նորաթեք մարդոյն, ի վեր հայեցուցանելով զմիտս նորա[5], ուտելով ի պտղոյ ծառոյն,- յոր հուպն չհրամայեաց երթալ,- զի լիցի աստուած: Իսկ նորա մոռացեալ զպատուիրանն Աստուծոյ, խաբեցաւ զկնի մոլար խաբէութեանն, կորոյս զոր ունէր զփառս անմահութեանն և չեհաս երազայոյս կարծեացն[6]: Վասն որոյ և մերժեալ ի կենաց տեղւոյն, ընկեցաւ յապականելի աշխարհս, յորում և դուք էք բնակեալ այժմ և ցնորեալ մոլորիք զկնի նորին խրատուի. ոչ ևս ուտելով ի պատուիրեալ ծառոյն, այլ զարարածս աստուած ասելով, և անխօս տարերցս երկիր պագանելով, և անորովայն դիւաց կերակուր մատուցանելով, և յարարչէն բոլորեցունց ի բաց լինելով:

«Ոչ յագի չար խրատուն, այլ կամի, զի քան զինքն չարագոյնս արասցէ: Քանզի դեւքն ոչ եթէ բռնարար զոք վարեն ի կորուստ, այլ զմեզս քաղցրացուցանեն ի կամս մարդոյն և ողոքանօք որսան զանուսմունս ի խաբէութիւն, որպէս բազում մարդիկ զընկերս իւրեանց ի գողութիւն և յաւազակութիւն. իբր ոչ եթէ բռնի ինչ վարելով, այլ պատիր խաբէութեամբ տան գործել բազում չարիս, զոմանս ի կախարդութիւն, և զոմանս ի պոռնկութիւն, և զոմանս յանթիւ ի բազում յայլ իրս աղտեղութեան: Եւ արդար դատաւորօք վրէժ առնուն մահու չափ. իբր ոչ եթէ բարի Աստուծոյ դատաւորք իցեն բարեգործ, և չարին չարագործ. զի բազում անգամ է, զի ի բարի մարդկանէ չարք լինին, և յետոյ ի չարագունից անտի կատարելագոյն բարիք:

«Այն է ճշմարիտ Աստուած՝ բոլորեցունց մեր արարիչ, զոր դու աներասանակ արձակ բերանով անահ աներկիւղ համարձակութեամբ հայհոյես: Թողեալ զՅիսուս Քրիստոս զփրկական անունն՝ Փանդուռ-

բակայ որդի անուանես, և մարդ մոլորեցուցիչ կարծես. և զերկնաւոր փրկութիւնն աղաւաղես և անարգես ի կորուստ անձին և բոլոր աշխարհիս: Զոր տալոց և հատուցանելոց ես զանանցական վրէժ տանջանացն յանշէջ հուրն սպառնացեալ գեհենին, հանդերձ ամենայն գործակցօք քովք, առաջնովք և միջնովք և վերջնովք:

«Այլ մեք այսպէս գիտեմք զԱստուած և ի սոյն հաւատամք յաներկբայս:

«Աստուած, որ արար զաշխարհս, նոյն եկն և ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, յառաջագոյն նկատելով մարգարէիցն, առանց իրիք պատճառանաց մարմնաւոր կարգի: Որպէս յոչընչէ արար զայս մեծ մարմին աշխարհս, սոյնպէս առանց իրիք մարմնական միջնորդի առ զմարմինն յանփորձ կուսէն ճշմարտիւ և ոչ ստուերագիր երևմամբ: Էր Աստուած ճշմարտիւ և եղև մարդ ճշմարտիւ. ոչ ի լինելն մարդ՝ կորոյս զաստուածութիւնն, և ոչ ի կալ մնալն Աստուած՝ աղաւաղեաց զմարդկութիւնն, այլ նոյն և մի:

«Այլ քանզի ոչ կարէաք տեսանել զանտեսանելին և մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդ մերով մարդկութեամբս, զի և մեք մտցուք ընդ նորա աստուածութեամբն: Ոչ անարգանս ինչ համարեցաւ զգենուլ զիւր ստեղծուած մարմինս, այլ մեծարեաց իբրև զաստուածաստեղծ զիւր գործ: Ոչ առ սակաւ սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութեան պատիւն՝ իբրև զմարմին հրեշտակաց, այլ միանգամայն զբոլոր բնութիւնն մարմնով, շնչով և հոգւով զգեցաւ և միաբանեաց ընդ աստուածութեանն. միութիւն, և ոչ երկուութիւն. և այսուհետև մի գիտեմք զաստուածութիւնն, որ յառաջ էր քան զաշխարհս, նոյն և այսօր:

«Այս Յիսուս Քրիստոս, որ յիւր մարմինն փրկեաց զբոլոր աշխարհս, սա եկն կամաւ ի մահ. և որպէս ինքն աստուածութիւնն գիտէ՝ թանձրացաւ յանարատ կուսէն և ծնաւ և պատեցաւ ի խանձարուրս և եդաւ ի մսուր և շարժեաց էած զմոգսն յարևելից յերկրպագութիւն. սնաւ իբրև զտղայ կաթամբ, աճեաց և մեծացաւ ամս երեսուն, մկրտեցաւ ի Յովհաննէ ի յամլորդւոյն ի Յորդանան գետ: Արար նշանս մեծամեծս և արուեստս ի մէջ Հրէիցն. մատնեցաւ ի քահանայից, դատապարտեցաւ ի Պիղատոսէ Պոնտացւոյ: Խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ, յարեաւ յաւուր երրորդի. երևեցաւ երկոտասան աշակերտացն և այլոց բազմաց աւելի քան զհինգ հարիւրոցն: Եւ շրջելով ընդ նոսա զաւուրս քառասուն՝ վերացաւ ի լեռնէն Ձիթենեաց յերկինս յանդիման իւրոց աշակերտացն, ել և նստաւ ի հայրենի աթոռն: Խոստացաւ երկրորդ անգամ գալ ահաւոր զօրութեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել զբոլոր աշխարհս, առնել դատաստան արդար ի մէջ արդարոց և մեղաւորաց, տալ պարգևս արժանաւորաց և հատուցանել պատիժս չարագործաց, որ այսմ ամենայնի բարերարութեանց ոչ հաւատան:

«Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք:

«Ամենայն ինչք և ստացուածք մեր ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան. ըստ կամաց քոց արա՛, զինչ և կամիս: Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ յերկրի այլ տէր փոխանակեմք ընդ քեզ և ոչ յերկինս այլ Աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի, որ չիք այլ Աստուած բաց ի նմանէ:

«Ապա եթէ յետ այսր մեծի վկայութեան այլ ինչ հարցանես, աւասիկ կամք զբոլոր մարմինս տուեալ ի ձեռս քո. վաղվաղակի արա՛, զինչ և կամիս: Ի քէն տանջանք և ի մէնջ յանձնառութիւնք. սուր քո՝ և պարանոցք մեր: Զեմք ինչ լաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եդին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց:

«Զի եթէ անմահք իսկ էաք, և մարթ էր մեզ մեռանել վասն սիրոյն Քրիստոսի, արժան էր, քանզի և նա անմահ էր, և ա՛յնչափ սիրեաց զմեզ, մինչև մահ ի յանձն էառ, զի և մեք նորա մահուամբն ի յաւիտենական մահուանէն ապրեսցուք: Եւ եթէ նա յիւր անմահութիւնն ոչ խնայեաց, մեք զի կամօք եղաք մահկանացուք, կամօք մեռցուք վասն սիրոյ նորա, զի կամօք յանձն առցէ զմեզ յիւր յանմա-

հութիւնն. մեռցուք իբրև զմահկանացուս, զի ընկալցի զմեր մահն իբրև զանմահից:

«Այլ դու յետ այսր ամենայնի այլ զմեզ մի՛ հարցաներ. զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, եթէ պատրիցիմք իբրև զտղայս, այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել և ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեանս»:

Ի սմին մեծի հաւանութեան ամենայն բազմութիւն միաբանեաց ի մեծամեծաց մինչև ցփոքունս. անսուտ երդմամբ եդին վկայութիւն՝ կենօք և մահու ի նմին կալ հաստատուն:

Եւ իբրև եհաս նամակն յարքունիս, և ընթերցան ի մեծի Խոնաստանի[7] յանդիման ամենայն բազմութեան կարաւանին, բազումք այնոքիկ էին, որ իբրև լսէին, գովէին զպատասխանիսն: Թէպէտ և երկնչէին յահէ տէրութեանն, սակայն ի ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիւնս գովութեանց տային. առաւել քան ընդ ճարտարաբանութիւնն՝ ընդ համարձակութիւն աներկիւղութեանն զարմանային: Եւ բազումք ահաբեկեալք սկսան զրահել պնդապէս և զնոյն շշնջիւն լսէին յամենայն շրթանց:

Իսկ չարասէր մոգպետն հանդերձ մեծ հազարապետաւն շնչեաց չարախօսութիւն և բորբոքեաց զթագաւորն իբրև զհուր անշիջանելի: Եւ սկսաւ կրճտել զատամունսն իբրև զօրհասական վիրաւոր. և յայտ յանդիման ձայն արձակեաց առ մեծ հրապարակն և ասէ. «Գիտեմ ես զչարութիւն բազմութեան մարդկանս, որ թերահաւատեն ի մերոց օրինացս և զկնի կախարդութեան մոլորեալ են անդարձութեամբ: Եւ իմ եղեալ է ի մտի, թէ ոչ ումեք թողացուցից ի մեծամեծ հարուածոցն, մինչև ակամայ ի բաց կացցեն յայնպիսի վրիպական օրինաց. եթէ ոք կարի ի մերձաւորաց իցէ, զնոյն անցս և ընդ նա անցուցից»:

Յայնժամ ծերն դառնացեալ բանս ի ներքս ընկէց և ասէ ցթագաւորն. «Առ ի՞նչ է քո այդ մեծ տրտմութիւնդ. զի եթէ կայսր չելանէ ըստ քո հրաման, և Հոնք կան քեզ ի ծառայութեան, ո՞ր մարդ է յերկրի, եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ: Տիրաբար հրաման տուր ի ներքս[8], և ամենայն, որ ինչ և ասես, վաղվաղակի կատարի»:

Եւ անդէն թագաւորն ի ներքս կոչեցեալ զդպրապետն, հրամայէր գրել հրովարտակ. և ոչ ևս ըստ սովորութեանն, այլ բանս գայրագինս իբր առ ատելիս և անպիտանս, չյիշելով ամենևին զմեծամեծ վաստակս տիրասէր մարդկանն. այլ միայն կոչոյ հրաման տուեալ յականէ յանուանէ զարս, զոր ինքն ճանաչէր:

---

[1] Երան եւ Աներան - պարսից արքայի տիտղոսն է. որ նշանակում է Իրան և ոչ Իրան. այսինքն՝ իրանցիներ և ոչ իրանցիներ. համապատասխանում է Արիք և ոչ Արիք արտահայտությանը

[2] եթէ ոք ընդ իւրում ծնողին անկցի - եթե (ներելի է. որ) մեկն իր ծնողի հետ պառկի

[3] դնէիր. այստեղ՝ կվերագրեիր

[4] սալայատակ տրտմացեալ հողոյն կափմամբ - սալահատակի նման ամրացնում է հողի խառնուրդով

[5] ի վեր հայեցուցանելով զմիտս նորա - ըմբոստացնելով նրա միտքը

[6] կարծեացն՝ այստեղ՝ փառքին

[7] Խոնաստանի- հավանաբար պարսից արքայական պալատի անունն էր:

[8] հրաման տուր ի ներքս - այսինքն՝ հրաման տո՛ւր պալատի ներսում գտնվող գրագիրներին և այլ գործադիր պաշտոնյաներին

ԵՐՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ՎԱՍՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարիսն, որ անցք անցին անդէն ի կարաւանին ընդ գունդն Հայոց, սակայն և ոչ լռել կամիմք՝ ծածկելով զվիշտս նեղութեանն. այլ ասասցուք փոքր ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ, որք դառնապէս զմեզ ողբային. զի և դու իբրև լուիցես՝ ոչ սակաւ արտասուս հեղուցուս ի վերայ ազգիս թշուառութեան:

Զի ահա անդէն ի մեծ բանակին Պարսից՝ յազգաց ազգաց, որք էին հաւատեացեալ ի սուրբ աւետարանն Քրիստոսի, իբրև տեսին զչար յանձնառութիւնն Հայոց, յոյժ հարան ի միտս իւրեանց և կործանեցան անկան ի վերայ դիմաց իւրեանց: Բազումք ի նոցանէ թաղծեալ ի սուգ ծանրութեան, հարեալ յոգիս և դառնացեալ յարտասուս եկին և յանդիմանեցին զնախարարեանն և յոյժ դսրովեցին զուխտ քահանայութեանն:

Զզուէին զամենեսեան և ասէին. «Զի՞ առնիցէք զսուրբ կտակարանսդ և կամ յո՞ տանիցիք զսպաս տէրունեան սեղանոյն. մոռանայցէ՞ք արդեւք զհոգևոր օրհնութիւնսդ և կամ լռեալ դադարիցէ՞ք ի մարգարէական ձայնիցդ: Կափուցէք զաչս յընթերցուածոց և խցէք զականջս ի լսելոյ. միթէ զմտացդ անմոռացութիւն ո՞չ յիշիցէք: Զի՞նչ առնիցէք զպատուիրեալսն ի Տեառնէ. «Որ ուրասցի զիս առաջի մարդկան, յուրասցի եղէց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ, որ յերկինս է, և հրեշտակաց սրբոց»:

«Վարդապետք էիք առաքելական քարոզութեանն. արդ աշակե՞րտք լինիցիք մոլար խաբէութեանն: Ուսուցիչք էիք ճշարտութեանն, արդ ուսուցանիցէ՞ք զպատիր խաբէութիւն մոգաց: Քարոզք էիք արարչական զօրութեանն, արդ զտարերս աստուա՞ծս խոստովանիք: Յանդիմանիչք էիք ստութեան, արդ և քան զսուտ ստագո՞յնք լինիցիք: Ի հուր և ի հոգի էիք մկրտեալք, արդ ի մոխիր և յաճի՞ւն թաթաւիցիք. կենդանի մարմնով և անմահ արեամբ էիք սնեալ, արդ ի ճենճե՞ր զոհից և ի չարաւս աղտեղի՞ս մրճոտիցիք: Տաճար էիք Հոգւոյն սրբոյ, արդ զոհարան դիւա՞ց լինիցիք. քրիստոսազգեացք էիք ի մանկութենէ, արդ մերկացեալք ի փառացն՝ դիւաբար արեգակա՞ն կաքաւիցէք:

«Ժառանգք էիք արքայութեանն, արդ անձամբ զանձինս արարէք ժառանգ գեհենին: Նոցա՛ է սպառնացեալ հուրն անշէջ, ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք. նոցա՛ պարարի որդն անմահ, իսկ արդ դուք պարարիցէք զմարմինս ձեր նմա ի կերակուր. խաւարն արտաքին նոցա՛ թանձրացեալ պահի, դուք լուսազգեստք՝ ընդէ՞ր յուղարկեցայք ընդ նոսա ի նոյն խաւար: Նոքա ի վաղնջուց հետէ էին իսկ կուրացեալք, դուք զիա՞րդ զկնի կուրացն կուրացարուք: Նոցա՛ էր փորեալ զխորխորատն, դուք ընդէ՞ր լցէք յառաջագոյն: Ե՞րբ ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա, այն որ չիք ուրեք ի միջի և ոչ մի: Թեթևացեալք ի ծանր բեռանց՝ անձամբ անձին առէք զբեռն ծանրութեան, ազատեալք ի ծառայութենէ՝ չարաչար մտէք յանազատելի ծառայութիւնն:

«Եթէ գիտէիք և երևէր ձեզ յայտնի, սուգ առին երկինք ի վերայ ձեր, և թաղծեցաւ երկիրս ի ներքոյ ոտից ձերոց: Հրեշտակք ի վերուստ են ձեզ բարկացեալք, և ի յերկրէս մարտիրոսքն են ձեզ ցասուցեալք: Ողորմի՛մ, ողորմիմ սիրելեաց ձերոց և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց: Զի թէ մարդոյ փրկեալ էր զձեզ ի ծառայութենէ, և դուք անձամբ զանձինս այլում ի ծառայութիւն արկանէիք, ի մեծ բարկութիւն բրդէիք զառաջին տէրն ձեր, իսկ արդ զի՞նչ առնիցէք զաստուածասաստ հրամանն. «Ես եմ Աստուած, և չիք այլ ոք բաց յինէն, և ոչ զկնի իմ այլ ոք լիցի Աստուած. Աստուած նախանձոտ եմ ես, հատուցանեմ զմեղս հարց յորդիս մինչև յեւթն դար»: Իսկ եթէ որդիքն արդարք՝ վասն հարցն մեղաց ընդունին սատակումն, յորժամ ինքեանք որդիքն իսկ մեղիցեն, ո՞չ ահա միանգամայն զանձանց և զհարց տայցեն ի միասին:

«Դո՛ւք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի. յորժամ աստի վտանգ հասանէր, առ ձեզ յանդորր ելանէաք. արդ մեծ ամուրդ այդ հիմն ի վեր տապալեցաւ: Դո՛ւք էիք մեր պարծանս առ թշնամիս ճշմարտութեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն թշնամիս: Յայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն և ի մեզ փոքր ի շատէ խնայէին. և արդ ի պատճառս ձեր և զմեզ անողորմ դատին: Ոչ միայն զանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին Աստուծոյ, այլ և բազմաց ամենեցուն՝ որ ի ձեր պատճառս և զնոսա ևս չարչարեսցեն»:

Զայս և առաւել քան զսոյն խօսեցան ընդ մեծամեծս աւագանւոյն, և յաւելին ցաւս ի վերայ ցաւոց: Յայտնել և ցուցանել նոցա զխորհուրդն ոչ կարէին, լռել և չառնել պատասխանի անհնար էր. հեղձամղձուկ եղեալ մեծապէս յարտասուս հարկանէին: Ընդ նոսին դառնացեալ լսողք և տեսողք անմխիթար սուգ լինէին ամենեքեան:

Յայնմ ժամանակի քահանայքն, որ անդէն ի զօրուն էին, առ չժուժալ սրտիցն բարկութեան՝ քակեալ որոշեցան ի նախարարացն և յամենայն բազմութենէն. և զմի ոմն դեսպան ձիով փութապէս առաքեցին յաշխարհն Հայոց: Գոյժ ի բերան առեալ և զօձիս պատառեալ, հասեալ ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս արտասուս հարեալ, կայր և պատմէր զամենայն անցս չարչարանացն. այլ ոչ յայտնէր նոցա զծածկութիւն խորհրդոցն:

Յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գեօղս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային գաւառացն: Դրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, չինականաց և ազատաց, զքահանայիցն և զմենակեցաց. խրատ եդին, պնդեցին և արարին զամենեսեան զի նուրոս Քրիստոսի:

Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. «Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի՛ խնայեսցէ հայր յորդի, և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյն: Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ: Օրէնք ասուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան»:

Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ կազմեցաւ, երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականաց:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատուածք)

Դրուագ Ա

Է. Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ թողոյր զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու, զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն, զամենաբոյսն, զամենաբուղխն, զամենալին, զամենագիւտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան. զդաշտս մեծատարածս և որսալիցս. զլերինս շուրջանակի գեղեցկանիստս և պարարտաբոյս, զհոծեալս էրէովքն կճղակաբաժնիւք և որոճայնովքն և այլովք ևս բազմօք ընդ նոսին: Յորոց ի վերուստ ի կատարացն ջրոց հոսմունք, անկարօտ ոռոգման արբուցանելով զդաշտս՝ մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն իւղաբուղխ սերմացն: Իսկ ի լանջակողմանս կամ ի սարահարթ տեղիս սփռեալ, յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալք պարարտաբոյսք և պարարտ արօտք պարարտահամք. որոց թանձրախիտ աճմունք խոտոցն զանթիւ արօտականս ընդանի իշանց և զանհամբոյր բոյլս վայրենի էրէոցն յաղեցուցեալ՝ թանձրաթաղանթս, առոգաւակս, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն: Իսկ սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանց, որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհօտարած բացօթէգացն, ընձեռելով առողջութիւն՝ զօրացուցանեն զզգայութիւն խելացն և նորոգեն: Անդ գտանին և

ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոցն, երագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արբմամբ՝ յերկարելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն:

Իսկ դաշտացն ամենալրութիւն զկամս աշխատասիրացն կորզելով յինքեանց իբրև բանիւ, և առլցեալ որ զինչ և է բարով՝ ևս առաւել փութանակի զդարձն առ ինքեանս հրաւիրեն միանգամայն: Որք ոչ միայն երևելութեամբն ցուցանեն, վերաբերեալ զշահաւորութիւն օգտից մարդկան, այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն զառ ընդ երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանեն, գանձել անձանց շահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն յոսկէհուռս պաճուճեալս ընդելուզանեն: Այլ և մածմամբ ջրոց՝ համածին անուշութիւնս մատուցանեն կերողացն զխորտկացն որոշութիւնս: Նաև զարմատս եղէգնասեր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ, այլ և ի նմանէ ծնեալ որդունս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս: Եւս և գետոցն գնացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքումբք, զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ ուրախացուցեալ լցուցեալ զշնորհս ընչից և յագուրդ որովայնից ժրացելոցն և անվեհեր ջանացողացն:

Սնուցանէ յինքեան երկիրն ջրովք արուեստիւք և զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն և ի սթափումն որսատենչ ազատացն. զկրկջաձայն քաղցրաձայն առապարասեր վիմասոյզ սորամուտ երամս կաքաւացն և սալամբացն, և կամ զեղէգնաբնակ թփամուտ մացառաղօղ պարարտամարմին զանուշահամ ազգ աքարացն վայրենեաց. այլ և զջրասուզակ մամռախնդիր խօզակեր մեծանձունք և յաղթամարմինք հաւքն, փորն և թանձրն և սագն, և կամ այլ բազում և

անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն ջոկք թռչնոցն: Իսկ թակարդացն շրջափակութեամբք, երագազիւքն և գահոդովքն, ելեալ ի յորս գունդք նախարարացն որդւովքն ազատաց. ուր ոմանք զհետ ցռուցն և այծեմանցն արշաւելով՝ զխիզախական զաղեղնաձայնն ևեթ բարբառիցին. և այլք զհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ՝ զգործ կորովաձիգ արանցն ցուցանեն. և կէսք սուսերօք իբրև զմենամարտիկս՝ զսաստկանդամ երամս վարազացն գլորեցուցեալ սպանանեն: Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն դաստիարակօք և ծառայիւք զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ բերիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան. և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք:

Որոց դէտ ակն կալեալ ըստ հանապազօրեայ սովորութեան՝ ջրայոյզ ջրածուփ ձկնորսացն մանկունք, ընթացեալք ի յառաջս նախարարագունդ որերոյն՝ ձկունս ի յորսոյ և բազմազան վայրենի հաւուց ձագս և կամ ձուս ի կղզեաց գետոյն բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն: Յորոց ընկալեալ մասն ինչ նախարարացն ըստ կամի՝ պարգևեն և նոքա ի յիւրեանց բերոցն ըստ առաւելապէս բաւականի ընծայաւորացն. և հասեալք լի ամենայն բարութեամբ յիւրաքանչիւր յապարանս՝ շնորհեն և անպարապիցն մնացելոցն ի տան՝ զամբիծսն[1], առաւելապէս և առ օտարսն: Եւ տեսանել է յամենեցուն ընթրիս, որպէս և շեղջակոյտս ինչ ի վերայ միմեանց, զէրէրոցն[2] բազմութիւն և զնոցուն գլխոց կարգմանց զառաջադրութիւն. յորոց ուրախացեալ բերկրին ձկնակերացն և մսակերացն անձինք. առաւել քան զխորտկաց անուշութեամբ՝ հոգևոր ճաշակօք, սաղմոսիւք և մարգարէական երգօք օրհնելով զպարգևատուն Քրիստոս և զտուիչ և զլցուցիչ ամենայն բարութեանց:

Ը. Եւ արդ՝ զայսպիսի զըղձակերտ գաւառ, զչնաշխարհիկ և զարմանալի ըստ տուչութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զԱյրարատեան գաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան զօրինակ լիութեան, ըստ բանի Գրոյն, զերկին Եգիպտացւոց և զդրախտին Աստուծոյ, և զբնիկ սեպհական կալուածի ազգին Արշակունեաց զքաղաքն Վաղարշապատ, զբնակութիւն ոստանի Արշակունի թագաւորացն, զբարձրաբերձ չինուածս անթիւ ապարանացն, զանյագ զամենալի դաշտացն զբերկրումն, զհրեշտակացո՛յց հիմնարկութիւնն սրբոյ տանն Աստուծոյ, մեծի եկեղեցւոյն կաթողիկէի, և զայնց վկայարանաց ճգնազգեցիկ երանելի կուսանացն. որոց գտեալք անարժան՝ ազգն Արշակունեաց յաղագս անարժան գործոց իւրեանց, ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի՝ գտան եղեալք ընկեցիկք յերեսաց Աստուծոյ. մատնեցան ի բաժանումն թագաւորին Պարսից և Յունաց, որոց վիճակեալ երկոցունց զմեծ զաշխարհս Հայոց՝ բաժանեալ ծառայեցուցին:

Յաղագս որոյ յուղի անկեալ գնայր յԱյրարատեան գաւառէն. որպէս ի գերութիւն Արշակ թագաւորն Հայոց. լաւ համարեցաւ երթալ զհետ սուղ սակաւ բաժնի յերկիրն հաւատացեալ և կալ ի հնազանդութիւն Յունաց թագաւորին, քան թէ կալ ի փափուկ[3] գաւառի այսպիսի վայելչութեանց և տեսանել հանապազօր զայպանումն հաւատոց, զթշնամանս սուրբ եկեղեցւոյ, զնախատինս, զոր կրելոց էին պաշտօնեայք աստուածային ուխտին յանօրինաց մոգուցն, զթերթևութիւն իւրոյ ազգին և զթագաւորութեան՝ յամբարհաւաճ իշխանացն Պարսից տէրութեանն. ընտրելագոյն հաշուեալ անցուցանել զնուազ և զթուով ժամանակ կենցաղոյս այսորիկ քրիստոնէութեամբ ի խաղաղութեան, քան թէ սուտ փառօք որպէս զարհամարհոտ կեցեալ աստ և վրիպեալ յաւիտենից կենացս՝ մատնիլ յայրումն անշէջ հրոյն յաւիտենից: Եւ խորհելով զայս ամենայն՝ յանկարծակի ի միտս իւր լքեալ տարակուսեալ զբարի ժառանգութենէ զնախնեացն իւրոց՝ գնայր ի ծառայութիւն թագաւորին Յունաց:

ԴՐՈՒԱԳ Գ

ՂԱ. Եւ չուեալ այնուհետև զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի ամենայն ուխտապահ նախարարօք հանդերձ և այլ բազում

և կազմ գնդաւ. որոց լուեալ զուխտիւք զխնդիրն ի Նիխորոյ Մամի-
կոնեանն Վահանայ[4] կամաւ և ցնծալից սրտիւ երթային առ նմա: Եւ
եկեալ Մամիկոնեան Վահան ի դաւառն որ կոչի Արտազ, ի գեօղն որ
անուանեն Եղինդ՝ դադարէր անդ ինքն և ամենայն գունդքն որ էին
ընդ նմա. և առաքէր առ Նիխոր և զիւր եկն տայր գիտել նմա: Եւ
ասէր ցՆիխոր Մամիկոնեան Վահան. «Արդ՝ եթէ թուի քեզ գալ իմ և
տեսանել զքեզ՝ տո՛ւր ածել առ իս արս աւագս Արիս և յականաւոր
տոհմաց, որ եկեալ կացցեն աստ իմ որեար, մինչև եկեալ ես տեսից
զքեզ, և խօսեցեալ իմ և քո ընդ միմեանս՝ լուիցուք ի միմեանց՝ զոր
ինչ ի դէպն թուի մեզ առնել»: Եւ Նիխորոյ լուեալ զեկն և զկամս
խնդրոյն Մամիկոնենին Վահանայ՝ վաղվաղակի տայր տանել ցԿամ-
սարականն տէրն Շիրակայ Ներսեհն զԲազէ զԱտրպայական շահապ և
զՎեհ-Վեհնամ զՀայոց հազարապետ, և զՆերսշապուհ զՄիհրանայ
զեղբայր, և հինգ ևս այր այլ աւագ Պարսիկս: Եւ Մամիկոնենին Վա-
հանայ տեսեալ զաւագորեարն զոր առաքեալ էր Նիխորոյ՝ ընդունէր
զնոսա խնդութեամբ. և ի միասին ուրախացեալք այն օր՝ ի վաղիւն
թողոյր զութեսեան զնոսա առ իւր հաւատարիմ արս. որոց հրաման
տայր՝ պատուել զնոսա արժանաւորապէս և զգուշանալ. և ինքն
չուեալ գնդաւ և կազմութեամբ գնայր առ Նիխոր: Մերձեալք ի
գիւղն ուր Նիխոր էր՝ հրամայէր զօրուն որ ընդ նմա էին՝ վառել ըստ
օրինի պատրաստութեան պատերազմի. որք ընդ լսել ի Մամիկոնենէն
Վահանայ զհրամանն՝ պատրաստեալք յամենայնի կազմ ցուցանէին
նմա զանձինս: Տայր հրաման Մամիկոնեանն Վահան հնչեցուցանել
զփողսն պատերազմականս. և ի սաստկութենէ փողոցն ձայնից հնչեալ
երկիրն թնդէր. յորմանէ[5] զարհուրեալք արք զօրուն Նիխորոյ՝ կարծե-
ցին, թէ խաբէութեամբ ի վնասել զնոսա եկն Մամիկոնեանն Վահան
և ոչ սիրով ի նուաճումն խաղաղութեան:

Եւ Նիխոր առաքեալ ընդ առաջ նորա արս աւագս՝ տայր ասել
ցՄամիկոնեանն Վահան, եթէ «Ոչ ըստ կարգի Արեաց առնես դու
զայդ, այլ նորոգ իրօք այլ իմն ձևանաս. յորում յայսմ հետէ քեզ կա-

ւրի զԱրեաց զկարգն պարտ է ունել և հաւանել. քանզի ի չուի՝ փողով
յԱրեաց բանակ սպարապետն միայն Արեաց իշխէ մտանել, և այլ ոք
զայդ համարձակութիւն ի Պարսիկս ոչ ոք իշխէ առնել»: Եւ Մամիկո-
նենին Վահանայ պատասխանի տուեալ Նիխորոյ՝ ասէր. «Նախ արա՛
զիս Արեաց տեառն ծառայ, ապա և առանց ի քէն իսկ ուսանելոյ՝ թուի
թէ և ես իսկ գիտեմ զԱրեաց աշխարհի զկարգ և զարժանն. մի՛ թուեսցի
քեզ հաշուել զիս կարի մոռացկոտ. քանզի և ոչ բազում ինչ ամօք
գնացեալ եմ ի ձէնջ»: Եւ զայս բանս այսպէս ի ձեռն պատգամաւորի
խօսեցեալ Մամիկոնենին Վահանայ ընդ ի Նիխորոյ[6] ապա ինք իսկ
եկեալ տեսանէր զնա յատենի ժամու. վասն զի ընդ ծագել արևուն եկն
Մամիկոնեանն առ Նիխոր: Եւ Նիխորոյ տեսեալ զՄամիկոնեանն Վա-
հան և զայլ նախարարսն զուխտակիցսն ընդ նմա՝ ցնծալից ուրախու-
թեամբ բազում ժամս ընկալեալ ի գիրկս իւր՝ ողջունէր զնա. տայր և
զողջոյն զԱրեացն տեառնն Վաղարշու և զամենայն աւագանւոյն. մի
ըստ միոջէ յանուանէ ողջունէր և զեկեալ նախարարսն Մամիկոնենին
Վահանայ՝ յոյժ սիրով, նոյնպէս զամենայն արս գնդին, զաւագս և
զկրսերս: Եւ լուեալ Մամիկոնենին Վահանայ զողջոյն Արեաց
տեառնն և զողջոյն ամենեցունց դրանն աւագանւոյն՝ շնորհակալու-
թեամբ գոհանայր երկրպագելով և խնդալից ուրախութեամբ ընդու-
նէր: Եւ հրաման տուեալ Նիխորոյ՝ զամենայն արս զօրուն Վահանայ
Մամիկոնենի ի ներքս թողուլ, նոյնպէս և աւագ Պարսիկ որերոյ ի
ներքս կալ յատենին հրամայէր:

Ղ Գ. Եւ Նիխորոյ լուեալ զայսպիսի կարգումն բանիցն ի Մա-
միկոնենէն Վահանայ՝ մեծապէս խնդալից սրտիւ ուրախացեալ ասաց
առաջի ատենին, թէ «Զտրտմութիւն մեծ բեկման Արեաց աշխարհին
որ եհաս, և զթանձրամած խաւարն որ եհաս և մածեալ նստէր ի վերայ
սրտիս իմոյ՝ համարձակապէս և արդար խօսք Վահանայ և նուաճ-
մանս աւետիք փարատեալ զամենայն՝ մխիթարեալ ուրախացուցին
զիս»: Հրամայէր արձակել զատեանն: «Եւ որ ինչ, ասէ, պէտք են ինձ
և Վահանայ այլ ևս բանից՝ խօսիմք օր ըստ օրէ, և աւուրս քանի մի

ուրախանամք առ միմեանս»: Եւ այն օր հրամայէր Նիխոր Վահանայ՝ առ նմա ուրախանալ ամենայն նախարարօքն ուխտակցօքն և բովանդակ գնդաւն որ ընդ նմա էին. բայց զուխտանենգսն ի Հայոց և զուրացողսն հանին արտաքոյ ընթրեացն ամօթալիցս: Եւ ուրախացեալք այն օր ըստ օրինի մեծապէս ընթրեաց և հրաժարեալք ի Նիխորոյ՝ գնացին հանգչել ի վանս իւրաքանչիւր:

Եւ ի վաղիւն ժողովեալ ամենայն բազմութիւն մարդկան ի հրապարակն՝ հրաման տայր Նիխոր, մինչդեռ ինքն առանձինն էր, զՄամիկոնեանն Վահան տանել ի ներքս ի սենեակ: Եւ խօսեցեալ ըստ ժամուն ընդ նմա միայն ընդ միայն զբազում ժամս զպէտս կարևոր իրաց աշխարհի, ըստ իշխանաց հոգողութեան՝ գային երկոքեան ի միասին ի տուն ատենին: Հրաման տայր Նիխոր ամենայն եկելոցն ընդ Մամիկոնենին Վահանայ, նախարարաց և ռամկաց, մտանել յատեանն առ նոսա, և արանց Պարսիկ աւագաց գալ առ նոսա յատեանն: Բայց զարսն, որ զինքեանս հաւատարիմս Պարսկացն կացուցանէին, հրաման առեալ նուիրակացն՝ և ոչ ի դուրսն մօտել տային, ասելով, թէ «Գործոյ ինչ դուք չէք իմաստուն բանից և լսել իսկ չգիտէք. արդ՝ զտեղի ատենին յարժանաւոր առնէ ընդէ՞ր խափանէք. զի թող նստի անդ մարդ այն, որ զիսօսս աւագացն և զբանս իմաստնոցն լսել գիտէ և օգտել»:

Եւ էր այնուհետև տեսանել յայտնի Աստուծոյ արդարաքնին հատուցումն, սիրելի ուխտակատարացն իւրոց տալ զպարծանս և զհամարձակութիւն, և խաբեբայ ուրացողացն դասու զգեցուցանել զամօթ և զանարգանս. և գայր ի յատկութիւն բան Գրոյն ճշմարտապէս, թէ «Աստուծոյ լոյս է»: Վասն որոյ ըստ նմին լուսաւորեալ ծագէին և երեսք աստուածասէր պաշտօնէիցն իւրոց ըստ նմանութեան լուսոյն, զոր ընտրեցին ինքեանք և լուսաւորեցան: Իսկ ի վերայ երեսաց մոխրապաշտացն նոյն կերպարան մոխրոյն իջեալ՝ նստէր ի վերայ ամբարշտացն, որով մերկացեալ դիմօք՝ պատրողական հացկատակացն երևեցան կերպարանք, ցուցակ ստոյգ լի ամօթալից ձաղանօք: Եւ էին

գոյնք ամենեցուն արդարև, ըստ ասացածի եկեղեցական հոետորին, ծիւրեալք, ծնկեալք, երիթացեալք, պատկերի նմանեալք. զորս արդարև յայտ յանդիման առաջի երբեմն գերչացն խայտառակեալ նշաւակեաց խաչելութիւնն Քրիստոսի: Եւ կատարեալ առ նոսա ելանէր ի գլուխ բան սաղմոսերգին. «Ոչ այսպէս են ամբարիշտք և ոչ այնպէս», որպէս էին թշուառացեալք և ողորմելի մարդիկն այն, որոց ատրուշանն շնորհ չունէր և յեկեղեցւոյ սրբոյ անձամբ մերժեալ արտաքս ընկեցան: Ժողովեալ նստէին առ միմեանս ապշեալք, քամակաբեկք, զարթուցեալք որպէս յերազոյ ցնորից գիշերոյ: Եւ ընդ Աստուծոյ զօրութեան գործ զարհուրեալ ապշէին՝ փութանակի և յանկարծ առնել զնոսա այնպէս դժմիտս և ձաղադէմս առաջի սիրելեացն իւրեանց. ցանկային բազում դնոց առնուլ, թէ գոյր հնար, զապստամբութեանն անուն, և ոչ ոք տայր նոցա: Վասն զի որ ոք յայնպիսի անծանութիցն կամէր երբէք մտանել յատեանն՝ ի բազմութեան ասէր ցնուիրակսն, թէ «Յապստամբացն գնդէն եմ», և վաղվաղակի թողուին ի ներքս. այլ ոչ ոք տայր մօտել ի դուրս ատենին, և ոչ լսել զիսօսս իշխանացն որ զինչ խօսէին: Յայնժամ յայտնի տեսանէր յստակ ակն խորհրդոյ ճշմարտասիրացն զպայծառարար յաջողութեան ճախրումն զսրբոյն Գրիգորի, ամենայն ճգնացգեցիկ ընկերովքն իւրովք, ի վերայ յերկրահամբեր ուխտապահացն բանակին, որ զամենայն երեսս Պարսիկ մարդկանն և զայլսն՝ ահիւ և խնդութեամբ հայեցուցանէր ի Մամիկոնեան Վահան. որում տայր Քրիստոս իմաստ շնորհալից պատրաստաբան, աջողակ ի գիւտ խոհականութեան, ձայնարձակութիւն պատուեալ խօսիւք. և կատարեալ ելանէր ի գլուխ բան Փրկչին Քրիստոսի, գրեալն յԱւետարանն. «Ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիք, ասէ, այլ Հոգին Հօր ձերոյ, որ խօսիցի ի ձեզ»:

Եւ երկրորդեալ յատենին զնոյն բանս Մամիկոնենին Վահանայ՝ սկսանէր միւսանգամ խօսել ընդ Նիխորոյ և ասէր. «Յաղագս իւրաքանչիւր ուրուք խնդրոյ և օգտի, որ այժմ աստ են առաջի ձեր նախարարք և ազատք և այլք յոստանիկ մարդկանէ և յայրուձիոյ որե-

րոյ՝ ճանաչող էք և կարող, և գիտէք հատուցանել զարժանն. բայց և որ ընդ իս ուխտապահ նախարարքն են, զոր ինչ խնդրեցաք ի քէն պատգամաւորօք և գրելովքն, զոր և երէկ և այսօր դէմ յանդիման խօսեցայ ընդ քեզ, և դու հրամանաւ Արեաց տեառնն և հրամանաւ ամենայն աւագանւոյ դրանն գրով և կնքով խոստացար տալ մեզ, առանց որոյ անհնար է կեա՛լ մեզ և ծառայութիւն առնել ձեզ.— հաւատոյ քրիստոնէութեան հաստատութիւն, մոգութեան և ատրուշանաց յաշխարհէս Հայոց բարձումն, զեկեղեցւոյ ըստ մեր կամաց զպայծառութիւն և զպաշտօն,— այդ որ կարևոր է մեզ և հարկաւորապէս պիտոյի՝ կնքով թագաւորին հաստատեա՛ մեզ. և այլ զոր ինչ գրեալ է ի նամակին՝ գիտես զամենայն, և ոչ ինչ է պիտոյ բազմաբանել առաջի քո: Բայց յաղագս գահու և պատուոյ և շքեղութեան, հայելով յիւրաքանչիւր ուրուք վաստակս՝ տաջի՛ք անհոգութեամբ և մի՛ զրկիցէք»:

Ղ Դ. Եւ զայս ամենայն խօսեցեալ Մամիկոնենին Վահանայ՝ սիրով լսէր զամենայն Նիխոր և ախորժելով յանձն առնոյր: Խնդրէր Նիխոր ի Վահանայ զբնիկ Հայոց զայրուձին. «Կազմեա՛, ասէ, փութով և արձակեա՛ ի դուռն. քանզի Զարեհ որդի Պերոզի, ընդդիմացեալ Արեաց արարուածի՝ գունդ դեռ կազմէր ի կորուստ անձին իւրոյ և հաւանելոցն ընդ իւր. և դու փութա՛ արձակել զՀայ այրևձի, որ նախ քան զքո երթալն ի դուռն՝ և սպաս մի քո մեծ ծանուցանի արարուածքդ առաջի թագաւորին և ամենայն Արեաց: Վասն զի և ինձ հրաման ետ թագաւորն՝ վաղվաղակի մտանել ի դուռն. վասն զի աստուածք զայս իրս յաջող և բարերարութեամբ վճարեցին, զի ևս առաւել վաղագոյն երթամ անդր, ի դէպ է և պատշաճ»: Եւ ուրախացեալ Նիխորոյ և Մամիկոնեանն Վահանայ առ միմեանս ոչ բազում ինչ աւուրս՝ կազմէր ստիպով գործոյն պիտոյից[7]: Հրաժարեալք ի միմեանց՝ չուէին խաղաղութեամբ, Նիխոր առ թագաւորն ի դուռն, և զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան ի Դուին:

Եւ հասեալք յեզր գետոյն սաստկապէս ըստ ժամանակի իւրոյ պղտորութեանն, և զկամուրջն Արտաշատու գտին աւերեալ՝ և էր ինչ որ ի տեղեացն բնակչացն, և էր ինչ որ ի սաստկութենէն ջուրցն դիմեցմանց. և տարակուսեալ զօրքն՝ խնդրէին տեղիս անցի և ոչ գտանէին. և փորձելով ոմանց զբազում տեղիս՝ ընկղմեալք ի ջուրսն, և հազիւ գտեալ անդրէն ելս ապրէին: Իսկ քաջ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան մերձեալ ի տեղի մի յեզր գետոյն և տեառնագրեալ զինքն նշանաւ խաչին սրբոյ կենսատուի՝ իջանէր ի գետն, և որպէս ընդ յոյժ տեղի ծանծաղ՝ անցանէր խաղաղութեամբ ընդ ջուրսն, որ և տեղին ամենայն գնդին լինէր ճանապարհ անցից անհոգութեամբ: Եւ լինէր այս նշան մեծ յայտնի, որ և առ ոյժ կացաձի արանց լինէր անցանել դիւրաւ ըստ կամի և ամենայն այրևձիոյն. ի ճշմարիտ հիմնացեալ հաւատոյն քաջ զօրավարին Հայոց Վահանայ՝ լինէր նշան որպէս Իսրայէլեան ժողովրդոցն՝ յանցանելն իւրեանց ընդ Յորդանան: Եւ ապա մտեալ յոստանն ի Դուին և զշնորհակալութեան զպատարագն մատուցեալ Աստուծոյ արժանաւորապէս և նախ զաղքատացն ողորմածութեամբ ըստ սովորութեան կատարեալ զտուրս՝ ուրախանային և ինքեանք ըստ Աստուծոյ հաճոյիցն խնդալից սրտիւ:

Եւ կազմեալ Մամիկոնենին Վահանայ զայրևձին Հայոց՝ արձակէր ի դուռն, կարգեալ զգունդն ի ձեռն Վրենայ Վանանդացւոյ. ընդ որս կազմեալ արձակէր և զիւր եղբօրորդի մի, զորդին նահատակին Վասակայ զԳրիգոր: Որոց հասեալ ի դուռն ժամանք՝ երթային պատրաստութեան գործոյ պատերազմին, և հարեալք ի դիմի միմեանց գունդքն երկոքեան, և մատնեալ ի պարտութիւն գունդն Զարեհի՝ փախստական լինէին, և բազում վիրաւորք անկեալ յերկիր կործանէին: Անդ քաջացեալ հայրանման սեպուհն Մամիկոնէից Գրիգոր, ցուցեալ մեծ քաջութիւն՝ յայտնի լինէր զօրավարին և զօրացն ամենեցուն, և հռչակեալ նորա լաւութեան անուն՝ հասանէր մինչ ի թագաւորն Վաղարշ: Լաւացեալ և սեպուհն Վանանդացի Վրէն, գործ երևեցուցեալ քաջանայր: Իսկ Զարեհն փախուցեալ ի լեառնակողմն տեղիս

ամրանայր. զոր ձերբակալ արարին և ածին ի հրապարակն արքունի և անդ նման անասնոյ փողոտէին յանխնայ:

Ղ Ե. Եւ յետ սակաւ աւուրց ստիպով ժողովեալ Մամիկոնենին Վահանայ զայրևձին Հայոց, և ինքն և ամենայն ուխտակից նախարարքն ընդ նմա՝ չուեալ գնայր առ թագաւորն Վաղարշ. և գնացեալք ըստ պատեհի աւուրց օթևանաց ճանապարհին՝ երթեալ հասանէր ի դուռն: Եւ լուեալ թագաւորին և ամենայն Արեաց աւագանւոյն զերթսն Վահանայ ի դուռն, վաղվաղակի և ճեպով ժամ արարեալ՝ յանդիման լինէր թագաւորին և ամենայն Արեաց աւագանւոյն: Եւ ածեալ զմտաւ զճանապարհորդութեանն աշխատութիւն թագաւորին Վաղարշու զՄամիկոնենին Վահանայ՝ միայն ստէպ սիրով հարցեալ զողջոյն ուրախանայր, այլ ոչ ինչ աւելի քան զայն հարցանէր զնա այն օր: Եւ ի վաղիւն ժողովեալ ամենայն աւագանի դրանն արքունի և այլ ամենայն բազմութիւն Արեացն՝ և լինէր խորան մեծ, լցեալ սաստիկ որերով:

Սկսանէր խօսել թագաւորն Վաղարշ ընդ Մամիկոնենին Վահանայ. «Լուաք, ասէ, լիով զամենայն խօսեցեալսն ընդ Նիխորոյ, զոր ինչ պատգամաւորօք էիր ասացեալ, և զոր ինչ նամակաւ, և զոր ինչ դէմ յանդիման քո և նորա խօսեցեալ էր ընդ միմեանս՝ պատմեաց մեզ. և ոչ էր քո ստեալ ի բանիցն զոր խօսեցեալ էր՝ և ոչ բան մի: Վասն զի Պերոզի իմ եղբօրն անձնահաճութիւն կամացն և անհաւանութիւն խորհրդոյն և անլսողութիւն ումեք և ամբարտաւանութիւն եթէ զքեզ միայն էր կորուսեալ յԱրեաց՝ թեթև ինչ էր վնասն. ծառայ մի կորնչէիր, որում թերևս փոխանակ գտանէր. բայց նա իւրով հպարտութեամբ այնչափ անթիւ բազմութիւն լաւ որերոյ կորոյս, որոց այսօր փոխանակ չիք. յետոյ ապա և զինքն կորոյս և զորդիս իւր և զկանայս: Արդ՝ եթէ դո՛ւ եղեալ ես պատճառ քո կորստեանդ և այնչափ բազմութեանն որ կորեան ընդ քո ձեռն՝ դու այսօր հարցման արժանի էիր և պատուհասի և չարաչար մահու. բայց իբրև ա՛յլ է պատճառ ամենայն գործոյդ այդմ և կորստեան, զոր դու գործեցեր՝ զքեզ ընդ

այլոյ բռնութեան և վնասու պատուհասեալ կարի ծանր է, և օրէնք մեր չհրամայեն: Քանզի այդ գործ, զոր դուդ կարացեր գործել՝ առ Պերոզի արհամարհոտ և կամակոր բարուցն՝ բազումք խորհէին յԱրիս գործել, բայց չեղեն ձեռնհաս. զի չկարացին զանձինս ի մահ տալ այդպէս աներկիւղ՝ որպէս դուքդ ետուք, քաղցր համարելով զկենցաղոյս տեսիլ. բայց դուք բնաւ առ ոչինչ համարելով զայս աշխարհ՝ քաջաբար մեռան որք մեռանն, և ևս առաւել քաջաբար կեցայք, որ ապրեցայքդ և ի միջի էք: Այլ երանի՜ թէ և այլ որերոյն, զորս ի զուրն տարաւ կորոյս Պերոզ՝ կարացեալ էր առնել զայդպիսի քաջասրտութիւն, զոր դուքդ արարէք, և թերևս այսօր կենդանի էին իբրև զձեզդ և ի միջի և առ մեզ»:

Եւ պատասխանի տուեալ Մամիկոնենին Վահանայ թագաւորին Վաղարշու առաջի ամենայն բազմութեանն՝ ասէ. «Խօսել առաջի Աստուծոյ և առաջի ձեր թագաւորաց երկայն բանիւք՝ չէ արժան: Քանզի ես զամենայն զխօսս մեր և զխնդիր և զհամարձակութիւն գործոյն, դնել զանձինս ի մահ, ցուցի ձեզ և ամենայն դրանն աւագանւոյն ի ձեռն Նիխորոյ գրով և կնիքով. զնոյն բազում անգամ ասել՝ յերկարումն է խօսից և ձանձրութիւն: Վասն զի զկամս և զանհաւան բնութիւն, զոր ասացէք դուք զեղբօրէն ձերմէ զՊերոզէ՝ չատ էր և առն թագաւորի անպատշաճ: Բայց ի յայլ ոք արդեօք, յոր լինէր ի նմանէ բռնութիւն՝ տամբ էր արդեօք և կամ կենօք և կամ պատուհասիւ ինչ այլով. իսկ զմեզ՝ հոգւովք հարկանէիք. որում կարեաց և վտանգի ո՛չ մեր նախնիքն և ոչ մեք առաջի չկարացաք կալ: Եւ հանապազ բողոքեալք և բողոքեմք, եթէ սուտ թուին մեզ օրէնքդ ձեր, և մարդոց անմտաց բարբանջմունք են. և մի՛ բռնադատէք զմեզ թշնամանել՝ զոր կամաւ և խորհրդով պատուել ոչ կարեմք և ոչ սիրել, զի ծաղր թուին մեզ և չհաւատամք. և իշխանաբար և ըստ բռնութեան չլսեալ բողոքոյն մերոյ՝ և կամէիք կորուսանել զմեզ, և կորուսաք: Քանզի օրէնք մեր զսրբութիւն խնդրեն և զամենայն աղտեղութիւն, որով հոգիք մարդոյ կորնչին, չառնուն յանձն և չկամին. և տերանց

հրամայեն ծառայել և հնազանդ լինել, որպէս Աստուծոյ: Եւ արդ աղէ՛ ցուցէք այր մի որ ի Պերոզէ արքայից արքայէ, որ զձեր օրէնս կատարեալ է և պատուեալ են, թէ վասն պիտոյութեան և կամ ի կռուի վաստակ և գործ ցուցանելոյ գտեալ է: Վասն զի ձեր Արեաց զօրագլուխք բազում եղեալ ի տեղիս տեղիս, ասասցեն զմիոյ ուրուք ի դոցանէ զերևելի գործ ինչ, զոր նոցա արարեալ է և ձեր զօրագլխաց տեսեալ, և վասն այնպիսի վաստակոյ նոցա՝ ձեր հատուցումն արարեալ է: Իսկ զաղտեղի գործս նոցա և զմահապարտութիւն յայտնապէս գիտեն գաւառակիցք նոցա և այլ մարդիկ աշխարհին Հայոց, թէ ո՛րպիսի մարդիկ են, լի ամենայն աղտեղութեամբք, սուտք, անպիտանք, աղտեղագործք, գաղտաշուրջք, գողք, լեառնախոյսք, գերեզմանակրկիտք, խաբեբայք. և ընդ որս կրսեր չինականք մարդիկ աշխարհին Հայոց հաց գարշէին ուտել ընդ նոսա և կամ բնաւ ի մօտ իսկ երթալ առ նոսա, զի՝մի՛ պղծիցին, գուցէ ըստ հրամանի օրինաց մերոց՝ գային ի ձէնջ խաբէութեամբ զձեր օրէնսդ ունէին, և ըստ կամի աղտեղեալ զկրակն՝ զձեզ առ անմիտս ունէին:

«Յաղագս որոյ համարձակապէս ձայնիւ բարբառով առաջի ձեր ասեմ այսօր. ի բա՛ց բարձէք զխաբէութեան զվաճառդ զայդ յաշխարհէն Հայոց, զոր չունիմք առ արդարս, և չպատուէ ոք իբրև Աստուած: Այլ յետինն զառաջինն, վատքն զլաւն, և անպիտանն զպիտանին, և որդի ստամբակ զհայր, և ծառայ չարագործ զտէր իւր, յորժամ ի յետս տանել (կամի) կամ կորուսանել՝ զձեր սուտ օրէնսդ ի ձեռն առեալ՝ զամենայն չարիս զոր և կամի գործել՝ դովաւ վճարէ: Բայց աղէ՛, դուք ի մէնջ որպէս ի ծառայից զձեր տերանց զպատիւն խնդրեցէ՛ք, զգործ և զվաստակ և զհպատակութիւն, զօգուտ զարդարմտութիւն և աստուածաբար անզրկող մտօք զիւրաքանչիւր մարդոյ ըստ իւրաքանչիւր վաստակոյ զարժանն հատուցէ՛ք: Մեր ամենեցուն այդ բանք են և այդ խնդիր. եթէ չնորհեալ հաստատէք զխնդիրդ զայդ մեզ և ի ծառայութենէ ձերմէ զմեզ ի բաց չկամիք հանել՝ որպէս օրէնքն են թագաւորաց՝ գրով և կնքով զայդ մեզ հաստատուն արարէ՛ք և ի մէնջ որպէս ի ծառայ որերոյ գործ խնդրեցէ՛ք և հպատակութիւն. և ձեր մտացի և ամենահայեաց ակամբ հայեցարո՛ւք յայր և ի գործ նորուն և հատուցէ՛ք զարժանն»:

Եւ խօսեցեալ զայս ամենայն բանս Մամիկոնենին Վահանայ առաջի թագաւորին Վաղարշու և առաջի ամենայն աւագանւոյ դրանն՝ և բարձր ձայնիւ գովեցին ամենեքեան և առ լաւս կալան, զարմացեալ ամենեքեան ընդ իմաստութիւնն Մամիկոնենին և ընդ չնորհ աջողութեանն բանիցն, որ ելանէին ի բերանոյ նորա: Քանզի ոչ միայն հաւատացելոցն, այլ և անհաւատիցն երևէր բղխումն պարգևեալ յԱստուծոյ բանիցն առն Մամիկոնենի, որ ախորժակ քաղցրութեամբ լսելի լինէր յականջս ամենեցուն:

Որում պատասխանի տուեալ թագաւորին Վաղարշու՝ ասէր՝ ցՄամիկոնեանն Վահան և ցամենայն հայ նախարարսն ուխտակիցս Մամիկոնենին. «Եւ զամենայն զոր ինչ խորհեալ է ձեր և իմացեալ, և խօսեցաւ առաջի մեր ձեր Վահանն՝ տուեալ եղիցի ձեզ մեր գրով և կնքով զամենայն խնդիրդ ձեր այսօր մինչև զյաւիտեանս: Եւ զգործս ապստամբութեանդ, զոր ի բռնութենէն Պերոզի, և ոչ ի ձեր կամաց գործեցէք՝ թողեալ լիցի ձեզ այսօր, և մի՛ ոք իշխեսցէ ի թագաւորաց որ զայս գահ ունին, և կամ Արի այր՝ յիշել զայդ կա՛մ առանձինն յիւրեանց խօսս և կամ առաջի առն Հայոյ յայսմ հետէ մինչև յաւիտեան: Բայց դուք հպատակութիւն, զոր արժան է ծառայից առ տեարս առնել՝ հատուցէ՛ք առ մեզ լիով և կատարեցէ՛ք»: Եւ զայս ասացեալ արձակեցին զատեանն:

ՂԶ. Իսկ ի վաղիւն խորհեալ աւագանւոյ դրանն թագաւորին Վաղարշու, զոր գիտէին թէ և նա ինքն կարի սիրով ախորժէ և կամի լսել և առնել, տալ Մամիկոնենին Վահանայ զտէրութիւն Մամիկոնենից և զսպարապետութիւնն Հայոց. և թագաւորն կամաւ և սիրով յանձն առեալ՝ ծանուցանէին Մամիկոնենին Վահանայ զկամս թագաւորին Վաղարշու, միաբանութեամբ դրանն աւագանւոյ: Եւ Մամիկոնենին Վահանայ պատասխանի արարեալ ասէր. «Ընդդիմանալ կամացն ձերոց և հրամանին՝ չունիմ իշխանութիւն, և յիս կողմն կամք

ձեր և արարուած կարի մեծ է և առաւել: Բայց կամէի այսպէս, թէ սակաւ մի գործ ցուցանէի և սպաս, որով ձեզ ըստ արժանի հաճոյ եղեալ՝ հայէիք ի վերայ, և ապա որ ինչ թուէր ձեզ և կամէիք առնել՝ առնէիք. բայց առ այս նուազ՝ կամէի թէ ներէիք ինձ»:

Եւ թագաւորին և ամենայն Արեաց աւագանւոյն լռեցուցեալ զբանս Մամիկոնենին Վահանայ՝ բազմեցուցանէին զնա ի գահու տէրութեանն Մամիկոնէից, տուեալ ցնա, ըստ օրինի նախնեաց իւրոց, և զսպարապետութիւն Հայոց աշխարհին: Շնորհէին և այլոց ուխտապահ նախարարացն Հայոց, որք ի միաբանութեանն էին ընդ տեառն Մամիկոնենից և սպարապետին Հայոց Վահանայ, իւրաքանչիւր ումեք ի ժամուն՝ որ ինչ պէտք էին պատշաճ ըստ անձին արժանաւորութեան: Եւ ընկալեալ զամենեսին թագաւորին Վաղարշու և ամենայն աւագանւոյն լի սիրով և կամաւոր պատուով ի հրաժեշտի կացուցանէին երթալ խաղաղութեամբ յաշխարհն Հայոց:

Եւ եկալ տէրն Մամիկոնենից և սպարապետն Հայոց Վահան հրաժարեալ ի թագաւորէն Արեաց Վաղարշու և յամենայն դրանն աւագանւոյն՝ հարցանէր թագաւորն Վաղարշ զնա և ասէր. «Վահա՛ն սպարապետ Հայոց, զո՞հ ես զմէնջ, քա՞ջ կալաք, թէ պիտի և այլ ևս ինչ. ասա՛»: Եւ զօրավարին Հայոց տեառն Մամիկոնենից Վահանայ պատասխանի տուեալ՝ ասէր ցթագաւորն Վաղարշ. «Զոր ինչ ձեր բարերարութիւնդ առ մեզ արար՝ բայց Աստուածն, ոլ ամենեցուն արարիչն է և զամենայն մարդոյ կամի զբարի և զօգուտ, նմա միայն հնար և վայելուչ էր առնել զայդ առ մարդ, զոր և դուք առ մեզ անարժան ծառայիցս արարէք. այլ մարդոյ մահկանացուի անհնար էր: Քանզի զվնասն թողէք, գահ և պատիւ տուեալ մեծարեցէք, մեռելութեան յարուցիչ եղեայք, զգլորեալ և զկորուսեալ աշխարհ մի գտեալ կանգնեցէք: Բայց որովհետև հարցէք և համարձակեցուցէք զարդարն ասել՝ որպէս եղէք աստուածաբար կենդանացուցիչ մեռելութեանս իմոյ, և յարուցեալ ի միջի արարէք՝ կամէի, թէ զբովանդակ անձնս յարուցեալ էր, և ոչ զկէսս. վասն զի զկէսս մեռեալ տեսանեմ դեռ»: Եւ

թագաւորին Վաղարշու հարցեալ ասէր. «Աղէ՛, յայտնապէս ծանո՛ մեզ զպէտս բանիդ, զի գիտասցուք»: Եւ սպարապետին Հայոց տեառն Վահանայ Մամիկոնէից ասասցեալ. «Զի թէ էր և հնար էր շնորհել ձեզ զտանուտէրութիւնն Կամսարականին՝ ապա բովանդակապէս շնորհեալ ի ձէնջ՝ տեսանեի զմեռելութիւն ամենայն անդամոցս կենդանացեալ»:

Եւ թագաւորին Վաղարշու պատասխանի արարեալ սպարապետին Հայոց տեառն Մամիկոնենից Վահանայ՝ ասէր. «Յաղագս ոչ կարի տրտմեցուցանելոյ զքեզ ի ժամուս, և դարձեալ՝ վասն զի նախ և առաջին զայդ պարգև խնդրեցէր ի մէնջ՝ եղիցի վասն քո տուեալ զտէրութիւն Կամսարականին: Իսկ յաղագս տէրութեանն Արծրունւոյն թո՛ղ վայր մի, զի գիտասցեն մարդիկն [թէ] որ ի տոհմէն են, սպաս ինչ արժանաւորապէս ցուցանել առ մեզ և վաստակս ինչ յօգուտ Արեաց աշխարհիս վաստակել. հայեսցուք ապա և մեք յարժանն: Բայց դու այժմու ի մէնջ պարգևիդ գո՛հ լեր, և ջանա՛ ամենայն ուժով տիրասէր լինել յայսմ հետէ և արդարամիտ և աշխարհաշէն. և ե՛րթ բարեաւ ի քո ընտանիս և յաշխարհն. և հասելոյ երբէք ի մէնջ հրամանի կա՛զմ կաց և պատրաստ»:

Ղէ. Եւ հրաժարեալ թագաւորին Վաղարշու զսպարապետն Հայոց զտէրն Մամկոնէից զՎահան և զամենայն նախարարս Հայոց՝ արձակէր խաղաղութեամբ: Եւ եկեալ զօրավարն Հայոց տէրն Մամիկոնենից Վահան յաշխարհս Հայոց, ամենայն ուխտապահ նախարարքն Հայոց. որում ընդ առաջ ելանէր սուրբ այրն Աստուծոյ կաթողիկոսն Հայոց Յոհան, պատուական նշանաւ խաչին և սուրբ նշխարքն ճգնազգեաց նահատակին Գրիգորի, որովք և յուղարկեացն իսկ ի դուռն զամենեսեան: Եւ պատահեալ սրբոյն Յոհաննու կաթողիկոսին զօրավարին Հայոց տեառն Մամիկոնենից Վահանայ և այլ նախարարացն Հայոց, որ ընդ նմա և ամենայն զօրուն բազմութեանն՝ ողջունէր զնոսա օրհնութեան համբուրիւ և ասէր ուրախալից սրտիւ. «Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի զճգնեալ որդւոց եկեղեցւոյ իւրոյ

ջնջեաց զքիրտն, որ վասն անուանն Քրիստոսի քրտնեցան. հանգոյց զաշխատութիւնն, մաքրեաց զաղտ զինուցն, լուաց զոգիսն հաւատարմացդ ուխտապահութեան ջրովն, և զգեցոյց ամենեցուն հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան. և որպէս փեսայից եդ պսակս, և որպէս հարսն արքայութեան իւրոյ զարդարեաց զձեզ զարդու: Շնորհեսցէ՛ բարեխօսութեամբ սրբոց իւրոց՝ զարդարել զձեզ և այնու զարդու, որով զարդարին առաքեալքն և մարգարէքն յաւուրն Քրիստոսի, զորոյ զարդու պայծառութեան տեսչութիւն, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց»:

Եւ ասացեալ զայս ամենայն սրբոյ կաթողիկոսին և օրհնեալ զամենեսեան՝ նախ գային ի քաղաքն Վաղարշապատ, որ այժմ անուանի Նոր քաղաք: Եւ ըստ սովորութեան իւրում սպարապետն Հայոց Վահան, ուխտակից նախարարօքն Հայոց, որ ընդ նմա էին՝ կային անդ աւուրս և կատարէին զուխտս և զնուէրս ի սուրբ եկեղեցւոջն Կաթողիկէի, և ապա յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց կուսանաց, և հոգացեալ նախ զպէտս դարմանոյ աղքատացն՝ լցեալք կատարէին[8]: Գային միաբան ամենայն նախարարքն Հայոց և այլ բազմութիւն՝ զամենայն օր մեծապէս ցնծութեամբ, սաղմոսիւք և ճառիւք հոգևոր վարդապետաց եկեղեցւոյ սրբոյ. ուրախ լինէին զուարճացեալք առ զօրավարին Հայոց տեառնն Մամիկոնէից Վահանայ և առ միմեանս: Եւ կացեալ անդ աւուրս՝ ապա չուեալ զօրավարին Հայոց տեառն Մամիկոնէից Վահանայ՝ գայր մտանէր ամենայն Հայոց բազմութեամբն ի բուն ոստանն Հայոց ի Դուին, օրհնելով և փառաւորելով զսուրբ Երրորդութեանն զօրութիւնն:

ՂԸ. Յայնժամ գայ յերկիրս Հայոց մարզպան, որում անուն էր Անդեկան, այր խելացի, մտադիր, իմաստահայեաց, որ գիտէր ճանաչողութեամբ որոշել զիմաստունն յանմտէն և զլաւն ի վատթարէն: Որոյ տեսեալ օր ըստ օրէ զօրաւարին Հայոց զտեառնն Մամիկոնենից Վահանայ զիմաստից զառաջատեսութիւն, զարդարախոհութիւն, զաշխարհահոգութիւն, զքաջութիւն սրտի, զդիպողութիւն պատշաճ յամենայն իրս, ի բնաւի զյառաջադիմութիւն, տեսանէր և զայն, թէ յո՛ր գործ և յօժարեցուցանէր զինքն, թէպէտ և կարի ի դժուարինսն՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա, և ամենայն դիւրաւ վճարի և անաշխատութեամբ: Եւ՝ ընդ այսչափ աստուածատուր իմաստուն աջողութիւնս, որ բնակեալ էին ի զօրավարին Հայոց տեառնն Մամիկոնենից Վահանայ, զամենայն օր ըստ օրէ տեսանելով Անդեկանն և զմտաւ ածելով՝ զարմանայր ի միտս իւր ի ծածուկ և ըստ բարեսէր մտաց իւրոց ուրախանայր:

Սիրէր զնոյն Անդեկանն, և ի դուռն ամենայն աւագանւոյն դրանն ստէպ և իւրոց սիրելեաց զիմաստալից միտսն առնն ծանուցանէր, տայր գիտել և թագաւորին Վաղարշու լիով զամենայն: Ճանապարհորդեալ յաշխարհէս Հայոց և ինքն Անդեկանն ի դուռնն՝ զամենայն աջողութիւնս զօրավարին Հայոց զտեառնն Մամիկոնէից Վահանայ (խօսէր) ընդ թագաւորին Վաղարշու, առաջի ամենայն դրանն աւագանւոյն, յոյժ զարմանալով, թէ « Եւ յամենայն այդպիսի լաւ իմաստունս, զոր իմ առ ձեզ բազում անգամ գրեալ էր և այժմ ինձէն ասացի, առաւելապէս և օր քան զօր լինէր տեսանել աճեցեալ, և ոչ փոքր ինչ երբէք նուազեալ ի նմանէ զսոյն յառաջադիմութիւն: Յաղագս որոյ համարձակիմ առաջի ձեր ասել յայտնապէս, թէ աւելի՛ ձեզ և անդէպ՝ ա՛յլ մարզպան կացուցանել: Քանզի այլ մարզպան որ երթայ յաշխարհն Հայոց՝ նախ և առաջին զայն խրատ չունի՝ զոր այրն այն ունի. զի յո՞ւմ անձին այնչափ շնորհ և աջողակ խորհրդականութիւն բնակեալ, բայց ի ձէնջ, որ աստուածանմանքդ էք և քան զմարդկային բնութիւնս ի վեր. այլ ոք ի մարդկանէ, համարձակապէս ասեմ, թէ սակաւ ոք է որ համեմատ է նմա:

«Եւ դարձեալ՝ օտար մարզպանն որ երթայ յաշխարհն Հայոց՝ աշխարհն մեծ է, յամս երկուս և երիս հազիւ կարէ ճանաչել նախ զիրս աշխարհին, զդիւրն և զդժուարն, ապա զմարդիկ աշխարհին, զլաւսն և զվատթարսն, զապիրատսն և զպիտանիսն, և վարելով ըստ անգի-

տութեան խառն ի խուռն՝ ոգւոց չատ ծանր լինի: Իսկ նա, զի բնիկ ի յաշխարհէն է՝ զամենեսեան ի յականէ ճանաչէ և զլաւսն առ լաւս ունի և զանպիտանս առ յետինս: Առաւել ևս որ լինի յիրացն, զոր ես ասեմ ձեզ. մարգպանն պարսիկ որ երթայ յաշխարհն՝ կնաւ երթայ և որդւովք, դրամբ և սիրելովք, ծառայիւք և աղախնեօք. և այնք ամենեքեան թէ զԱրեաց տեառն զոռճիկ ուտեն՝ չէ սակաւ ծախսն, և թէ զաշխարհին ուտեն՝ չատ վտանգ հասանէ աշխարհին մարդկան: Իսկ նա թէ լինի՝ զիւր տանն համբար ուտէ, և այն ամենայն յարքունի գանձ համարի, և արքունի իրաց օգուտ լինի: Ես յառն Վահանայ ի լաւութիւն հայելով և յաջողակութիւն, ի բազում ժամուց խորհելով ի միտս իմ և լաւ համարելով աշխարհին իրաց և արքունի՝ համարձակեցայ ասել: Խորհել զարժանն և առնել՝ դուք գիտէք, եղբա՛ր»:

Եւ լուեալ զայս ամենայն բանս յԱնդեկանայ թագաւորն Վաղարշ և ամենայն դրանն աւագանւոյն՝ հաճեալ ընդ բանսն ամենայն Անդեկանայ՝ զարմացան ամենեքեան որք լուանն, և մեծաւ գովութեամբ առ լաւսն կալան զԱնդեկան, որպէս զայր տիրասէր և աշխարհաշէն:

Ղ Թ. Վաղվաղակի հրամայէր թագաւորն Վաղարշ, միաբանութեամբ ամենայն աւագանւոյ դրանն և Արեաց՝ հրովարտակ առնել ի Հայս, և զտէրն Մամիկոնենից և զզօրավարն Հայոց Վահան՝ մարզպան ի վերայ աշխարհին Հայոց կարգել: Եւ բերեալ զհրովարտակ մարզպանութեանն՝ տային ցզօրավարն Հայոց ցտէրն Մամիկոնենից Վահան, և աջով հզօրին Աստուծոյ մարզպան զնա ի վերայ աշխարհին Հայոց կարգեալ հաստատէին:

Իսկ տէրն Մամիկոնենից Վահան, զօրավարն Հայոց և մարզպան, ընկալեալ զհրովարտակն մարզպանութեանն ի ձեռաց դեսպանին, թէպէտ և զխանտածութիւն Հայ մարդկան ճանաչելով ծանրանայր ընդ իրս, այլ սակայն և ոչ ընդդիմանալ հրամանի թագաւորին իշխէր և անհնազանդ լինել: Առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անդրուվար՝ երթալ ի տունն Աստուծոյ: Եւ լուեալ զայս մարդ-

կանն որ ի քաղաքին էին, գրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարարաց և ազատաց, ոստանկաց և ռամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, այլ և հարսունք անգամ յառագաստաց, մոռացեալ առ վայր մի առ խնդին զամօթ հարսնութեան՝ դիմեալ ընթանային յեկեղեցին: Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի: Եւ էր այն օր անյագ խնդութիւն և անսպառ ուրախութիւն աստուածասէր բարեսիրացն և ողջախոհուրդ մտաց լաւահայեցաց, և սուգ թախանձալից և տրտմութիւն անմխիթար՝ խօթամտացն և խարդախաց: Եւ սրբոյ կաթողիկոսին Հայոց Յովհաննու տեսեալ զանկարծելի աւետաւորութիւնն, չնորհեալ յԱստուծոյ ի ժամանակս երանելւոյն, բերկրեալ ցնծալից սրտիւ՝ տայր սաղմոսել ի ժամուն. «Յեկեղեցիս օրհնեցէ՛ք զԱստուած, և զՏէր յաղբերացն Իսրայէլի». և կարդացմունս հրամայէր՝ զտեղի ելիցն Իսրայէլի ի ծառայութենէն Փարաւովնի, և ի Թագաւորութենէն[9] զընթերցուածն՝ ուր թագաւորեցոյց Դաւիթ զորդին իւր զՍողոմոն:

---

[1] այսինքն՝ կենդանի մնացած որսերին
[2] աղավաղված է, փխ. զերեոցն
[3] այստեղ՝ բերրի
[4] որոց լուեալ զուխտիւք զխնդիրն ի Նիխորոյ Մամիկոնեանն Վահանայ - որոնք իմանալով Նիխորի՝ Վահան Մամիկոնյանի հետ արած ուխտադրության մասին
[5] փխ. յորմէ
[6] ընդ ի Նիխորոյ փխ. ընդ Նիխորոյ
[7] կազմէր ստիպով գործոյն պիտոյից - (ապա Նիխորը) շուտափույթ պատրաստվեց գործի պետքերի համար
[8] լցեալք կատարէին - լիովին ավարտեցին
[9] այսինքն՝ Աստվածաշնչի Թագաւորութեան գրքից

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

ԿԱՆՈՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՂԱԶԱՐՈՒ

Այսօր գոլով ի Բեթանիա քո ամենազօր հրամանաւդ
ձայնեցեր Ղազարու, և դողացաւ մահ.
դժոխք պարտեցաւ, ապականութիւն լուծաւ.
կենդանարա՛ր Քրիստոս, կեցո՛ զմեզ:
Այսօր գոլով ի Բեթանիա զքո զաշխարհակեցոյց
սուրբ զյարութիւնդ յառաջագոյն ծանուցէր
անապականաբար կոչմամբ զչորեքօրեայն
ի թաղմանէ: կենդա[1]:
Այսօր գոլով ի Բեթանիա՝ եբրայեցւոց մանկունքն
սքանչացեալ ասէին. զՄարիամու
զեղբայրն ի թաղմանէ յարուցեալ
որդւոյն Մարիամու. կենդա'':
Կենդանութեանց բաշխող Քրիստոս ի Բեթանիա
եկաւորեալ այսօր, բարեկամին Ղազարու
պարգեւէ զկենդանութիւն:
Տնօրինաբար արտասուելով ընդ Մարթայի
եւ ընդ Մարիամու ողբակցէր. եւ
որպէս մարդ հարցանէր՝ ո՞ւր եդիք զՂազարոս:
Եւ որպէս զԱստուած բարբառով
յարուցանէ ի մեռելոց զչորեքօրեայն.
եւ զուգընթաց ձայնին մեռեալն
եկն արտաքս անապական:

***

Որ ի չորեքկերպեան կենդանեաց[2] փառաբանիս ի բարձունս.
այսօր մարդասիրապէս, Փրկի՛չ, ի Բեթանիա երթալ յանձն առեր.
աղբի՛ւր կենաց մեր և յո՛յս, ողորմեա՛ մեզ:
Որ յարտասուս մարիամանց գթացեալ արտասուեցեր
և ասացեր ցնոսա. «Ո՞ւր եդիք, ես յարուցից զսիրելին իմ
զՂազար»:
Աստուածային արարչագործ ձայնիւդ քո, Քրիստո՛ս,
ի թաղմանէ կոչեցեր զՂազարոս.
ցուցար կենդանեաց եւ մեռելոց աստուած:

***

Ի գիշերին, յորում մատնէր Փրկիչն մեր ի մահ խաչի,
՝ել ի լեառն Ձիթենեաց, աղօթելով զայս ասէր.
«Հա՛յր, անցո՛ յինէն զբաժակս»:
Իսկ անօրէն աշակերտին
թողեալ զգութ սիրոյ նորա եւ փութայր առ քահանայսն.
ասէր. «Ինձ զինչ կամիք տալ, զի մատնեցից զվարդապետն»:
Ժողովեալ հրէիցն կշռեցին արծաթ բազում.
առեալ տարան առ Պիղատոս, ասեն՝ ի խա՛չ հան, ի խա՛չ,
զի հայհոյիչ է օրինաց:

***

Իջեր յերկնից, անսկի՛զբն Որդի.
ի հողեղէն ի բնութենէ մարդկան
զչարչարանս յանձն առեր.
օրհնեմք զքեզ, որ էիր յառաջ քան զամենայն յաւիտեան:
Որ ասացեր բանիւ լինել ամենայն երկրի,
ի յերկրի յատենի կացեալ տեսանէին արարածք. օրհ:
Յորմէ դողան զուարթունք երկնից,

այսօր եկիր կամաւ ի խաչ, գեղարդեամբն խոցեցար. օրհ:
ԶՏէր օրհնեցէ՛ք, բա՛րձր արարէք յաւիտեան:
Եւ զինաւորն գեղարդեամբն յարձակեալ,
խոցեաց զկող կենարարին. բարձր...:
Ուստի աղբիւր կենդանարար բղխեալ,
լուաց զտիեզերս ի մեղաց. բարձր...:

***

Եկեալ ի փրկութիւն ազգի մարդկան,
ի ծառայէ յանձն առնու մատնիլ ի դատաստան.
համբերելով վասն զմեզ կեցուցանել:
Մատնեալ Պիղատոսի որպէս մահապարտ,
ի յԱննայէ և ի Կայիափայ դատապարտեալ. համբ:
Կացեալ ի յատենի երկրորդ Ադամ
վասն առաջինն Ադամայ պարտեացն թողութեան. համբ:

***

Ո՛վ սքանչելի և տեսիլ ահաւոր,
զարարիչն երկնի եւ երկրի այսօր տեսաք ի խաչի:
Տեսեալ զՏէրն ի խաչին խաւարեցաւ արեգակն,
եւ վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ի վայր:
Անարգաբար խաչեցաւ Տէրն ի մէջ ի յանօրինաց.
զի լցցի գիրն որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ:

***

Որ թագաւորդ ես թագաւորաց, Քրիստո՛ս,
ի ծառայէ դատապարտեալ համբերելով վասն մեր.
երկայնամի՛տ Տէր, քեզ փառք:
Որ պատուական խաչիւդ քո, Քրիստո՛ս,
եւ սուրբ արեանդ քո հեղմամբ կեցուցանել զմեզ
կամեցար. երկայնամիտ...:

Որ մարդասիրապէս վասն ամենեցուն ամենայնի համբերեցեր,
եւ ի մահու զմահ կոխեցեր. երկայնամիտ:

***

Եկա՛յք, հաւատացեա՛լք, երկրպագեսցուք
Սուրբ Երրորդութեանն, լոյսն որ ընդ Հօր է յէութեան;
ի քահանայից դատապարտեալ
եկեալ ի խաչ ելանել անմահ Թագաւորն:
Զոր երկինք ոչ բաւէին տանիլ,
զփայտ պատուհասի ուսով բարձեալ
եւ եկեալ ի տեղի կառափման ի խաչ ելանել. անմահ...:
Հիացեալ պետութեանց երկնից ընդ թաղումն տեառն
ի նոր գերեզմանի.
քանզի որ անմահն է յէութեան
վասն արարածոց փրկութեան զմահ ճաշակեաց.
Անմահ Թագաւորն:

---

[1] այսինքն՝ կենդանարա՛ր Քրիստոս, կեցո՛ զմեզ
[2] ի չորեքկերպեան կենդանեաց - քառակերպ հրեշտակների կողմից

ԿԱՆՈՆ ՄԵԾԻ ՇԱԲԱԹՈՒՆ ԹԱՂՄԱՆ ՏԵԱՌՆ

Պարգեւատուն ամենեցուն այսօր խնդրի պարգեւս ի Պիղատոսէ.
եւ արկողն ըզլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ ի Յովսեփայ:
Կենդանատուն ամենեցուն այսօր դնի ի նոր գերեզմանի.
եւ գանձն անմահութեան կընքի մատանեաւ քահանայիցն:
Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր եդաւ ի նորափոր վիմի.
զոր օրհնեն զօրք երկնից երգով պահպանի ի զինուորացն:
Կենդանին յաւիտենից Քրիստոս այսօր խնդրի որպէս մեռեալ ի Պիղատոսէ.
եւ մերկութեան ծածկոյթն Ադամայ յանձն առնու պատիլ ի Յովսեփայ:
Անմահութեանց տուող Քրիստոս այսօր ի հող մահու խոնարհեցաւ.
եւ բնակեալն ի լոյս անմատոյց թաղեցաւ մարմնով ի սիրտ երկրի:
Արեգակն արդարութեան Քրիստոս այսօր եդաւ ի գբի ստուերականի.
եւ փառացն հօր ճառագայթ ծածկեցաւ վիմով ի մէջ երկրի:
Կուսածին մարմնով Քրիստոս այսօր դընի ի կոյս գերեզմանի.
եւ լուծիչն երկանց դժոխոց մատանեաւ կընքի քահանայիցն:
Արթուն բնութեամբ արարիչն ամենեցուն այսօր ննջէ ի մէջ մահացելոց.
որ պահէն զԻսրայէլ, անքուն պահպանի ի զինուորացն:
Ցնծութիւն արարածոց Քրիստոս այսօր արտասուի
որպէս մեռեալ ի տրտմազգեցիցն.
եւ բուրումն անմահութեան խընկի ի զգաստիցն իւղաբերից:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Հոգեւոր երգեր

Հա՛յր բազումողորմ. խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին.
թո՛ղ ինձ զմեղս իմ և ողորմեա՛:
Տէ՛ր, որ գթացար ի կինն քանանացի.
գթա՛ և յիս ի մեղաւորս և ողորմեա՛:
Տէ՛ր, որ դարձուցեր զմաքսաւորն ի գիտութիւն ճշմարտութեան,
դարձո՛ և զիս զմոլորեալս և ողորմեա՛:

***

Աստվա՛ծ բազումողորմ,
խնայեա՛ յարարածս քո, Հա՛յր ամենակալ, և ողորմեա՛:
Արգա՛կն արդարութեան, ծագեա՛ ի հոգիս մեր
զլոյս ճշմարտութեան և ողորմեա՛:
Տո՛ւր մեզ, Տէ՛ր, զխաղաղութիւն
և փրկեա՛ ի նեղչաց մերոց,
հոգի՛դ ճշմարտութեան, և ողորմեա՛:

***

Ի նեղութեան իմում օգնեա՛ ինձ, Տէ՛ր,
որպէս երբեմն Յովնանու, և ողորմեա՛:
Ի յանցանց իմոց մաքրեա՛ զիս, Տէ՛ր,
որպէս երբեմն զմաքսաւորն, և ողորմեա՛:
Ի նենգաւոր շրթանց փրկեա՛ զիս, Տէ՛ր,
և յարենէ ապրեցո՛ և ողորմեա՛:

***

Վըտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց.
Աստուա՛ծ խաղաղութեան, օգնեա՛ ինձ,
Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ.
Թագաւո՛ր խաղաղութեան, օգնեա՛ ինձ.
Ի խորս մեղաց ծովու տարաբերեալ ծըփիմ.
Նաւապե՛տ բարի, փրկեա՛ զիս:

***

Ողորմեա՛ ինձ , Աստուա՛ծ.
Ի լսել զձայն փողոյն յահագին աւուրն,
յորժամ հարկանէ[1] հրեշտակապետն և կոչէ ի դատաստան,
ողորմեա՛ ինձ...
Ի նստիլ քո յատենի, դատաւո՛ր ահեղ,
յորժամ առնես հրափորձութեամբ
զքննութիւն որդւոց մարդկան, ողորմեա՛ ինձ...

***

Մաքսաւորն հառաչանօք ի տաճարին էառ զքաւութիւն.
Նովին ձայնիւն և ես գոչեմ՝ ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ:
Աւազակն աղաղակէր ի խաչին՝ յիշեա՛ զիս, Տէ՛ր. նովին ձայն՝՝:

Անառակ որդին աղերսանօք աղաչէր զքեզ.
Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո. նո՝՝:

Շնորհեա՛ մեզ, Տէ՛ր, ընդ աղքատաց օրինակին Ղազարու
ժուժկալութիւն.
զի կամաւոր աղքատութեամբ արքայութեանդ երկնից ընդ նմին
լիցուք արժանի.

լո՛ւր մեզ և ողորմեա՛, Քրիստոս Աստուած:
Որ փոխանակ հացին կարօտութեան զհացն անմահութեան նմա
շնորհեցեր.
և ընդ մեծատանն անդթութեան ի գոգն Աբրահամու զնա
ընկալար.
լո՛ւր մեզ և՝՝:
Լուսաւորեա՛ զաչս սրտից ստանալ մեզ ողորմութեամբ ի քէն,
Տէ՛ր, զողորմութիւն.
զի մի ընդ մեծատանն հայցեսցուք ի բոց հնոցին ծագիւ մատին
ջուր ի զովացումն.
լո՛ւր մեզ և՝՝:

***

Տո՛ւր մեզ, Տէ՛ր, զօգնութիւն ի նեղութեան.
զի օրհնեսցուք հանապազ զահաւոր անուն քո սուրբ:

Պահեա՛ զմեզ, Տէ՛ր, յամենայն փորձութենէ.
յաներևոյթ թշնամւոյն և ի գաղտնի նետից նորա:

Դու յոյս մեր և ապաւէն յամենայն ժամանակի.
որ օրհնիս հանապազ ի քոյոց արարածոց:

Հովանի աջոյ ձեռին քո, Տէ՛ր, պահեսցէ զմեզ.
և ոչ նիրհեսցէ որ հովուէրն զԻսրայէլ:

Զօրութիւն սրբոյ խաչի քո, Քրիստոս պահեսցէ զմեզ.
և եղիցի մեզ պահապան ի տուէ և ի գիշերի:

Ետուր երկիւղածաց քոց նշան.
և զէն յաղթութեան ընդդէմ աներևոյթ թշնամւոյն:

***

Վիրաւորեալ յանցանօք անձն իմ առ քեզ, Տէ՛ր, համբարձի
զաչս իմ.
Թո՛ղ ինձ զմեղս իմ միայն բարեգութ.
և ողորմեա ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան քում:
Կործանեաց զիս չարագործ թշնամին և կամի իսպառ զիս որսալ.
Հա՛յր բարեգութ, բժշկեա՛ զվիրաւորեալս.
և ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մե՛՝:
Անդունդք մեղաց պաշարեցին զիս, զի բազում են քան զաւազ
ծովու.
առ քեզ, Տէ՛ր պաղատիմ, փրկեա՛ ի վտանգէս.
և ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողոր՝՝:

***

Զանապական զհոգևոր զգանձն
յապականացու կենցաղս ծախեցի.
այլ առ քեզ միայն պաղատիմ, բարերա՛ր Փրկիչ,
խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս:
Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի և եղէ անբարունակ որթ:
Ոստաքանց եղէ ես որպէս զարմաւենի,
պտղակորոյս՝ որպէս ձիթենի.
այլ անյիշաչա՛ր և անոխակա՛լ փրկիչ,
խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս:

***

Զօրհներգութիւնս բանաւոր պատարագ քեզ
ի մտանել արեգականս վերառաքեմք,
թագաւո՛ր յաւիտենից:
Յամենայն փորձութենէ թշնամւոյն
ամենակարող աջովդ քո պահպանեա՛ զմեզ:
Ի մշտենջենաւոր քո լերանցս՝
օրինադրեցաք փառաւորել սուրբ զերրորդութիւնդ:
Պահապան խնդրեմք ի քէն, Քրիստո՛ս,
Մի՛ անտես առներ.
այլ շնորհեա՛ խնդրողացս ի քէն
զամենայաղթ զօրութիւն սուրբ խաչի քո՝
յօգնութիւն անձանց մերոց:
Եւ մի՛ տար սասանութեան զոտս մեր, Փրկիչ,
այլ ամրացո՛ հաստատուն հաւատով յանձինս մեր
զյոյս, զսէր և զհաւատս մինչև յաւիտեան:
Աղբերացուսցես ի մեզ զշնորհս քո ողորմութեան
տէ՛ր Աստուած, խոստովանեսցուք հաւատով
Սուրբ զԵրրորդութիւնդ՝
զՀայր և զՈրդի և զՍուրբ
զՀոգիդ յաւիտեանս. ամեն:

---

[1] փխ. հարկանէ զշեփոր - հնչեցնի շեփորը

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

Ա

Որ յորովայնէ ընտրեցար յԱստուծոյ
Քարոզող ճշմարիտ Որդւոյն Աստուծոյ[1],
Տէ՛ր Յովհաննէս,
Անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Որ յանապատէ կոչեցար[2] ի Տեառնէ
Մկրտել զբոլորից բարձողն մեղաց,
Տէ՛ր Յովհաննէս,
Անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Որ զմարգարէիցն ընկալար զպատիւ
Եւ զչնորհս ճշմարիտ սուրբ առաքելոցն,
Տէ՛ր Յովհաննէս,
Անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Որ մոլեգնութեամբն Հերովդիայ ընկալար զվախճան
Եւ ի դասս հրեշտակաց վերակարգեցար,
Տէ՛ր Յովհաննէս,
Անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Բ

Ճրագ ճշմարտութեան սո՛ւրբ Յովհաննէս Մկրտիչ,
Որ ծագեցաւ ի յերկրի.
Աղօթիւք սորա, Տէ՛ր, լո՛ւր մեզ և ողորմեա՛:

Մարգարէ և առաքեալ Աստուածորդւոյդ
Եւ ձայն բարբառոյ ազգ արարող տիեզերաց[3].
Աղօթիւք սորա, Տէ՛ր, լո՛ւր մեզ և ողորմեա՛:

Որպէս զարուսեակն ծագեալ ի յերկրի՝
Եղև կարապետ արեգականդ արդարութեան.
Աղօթիւք սորա, Տէ՛ր, լո՛ւր մեզ և ողորմեա՛:

Գ

Առաքեալն յԱստուծոյ կարապետ՝
Մեծն ի մարգարէս Մկրտիչն Յովհաննէս,
Պատրաստէր ճանապարհս թագաւորին յաւիտենից:

Վկայեաց և ասէ. «Ձեմ ես Քրիստոսն,
Այլ առաքեալ եմ առաջի նորա,
Եւ հարսին եկեղեցւոյ փեսայ Քրիստոս է արքայն երկնից»:

Տեսանէր զՅիսուս, զի գայր առ նա,
Աղաղակեաց և ասէ. «Ահա գառն Աստուծոյ,
Որ եկն ի բառնալ զմեղս աշխարհի»:

Դ

Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց
Եւ լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի.
Ժողովո՛ւրդք, զՔրիստոս բարեբանեցէ՛ք:

Զգեցաւ Տէր զօրութիւն, ընդ մէջ իւր էած,
Քանզի չիջոյց զխայթոց մահու խաչիւն իւրով սրբով.
Ժողովո՛ւրդք, զՔրիստոս բարեբանեցէ՛ք:

Յարեաւ Աստուած, և Տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան,

Եւ մանկունքք հաղորդեցան մարմնոյ և արեան կենարարին.

Ժողովո՛ւրդք, զՔրիստոս բարեբանեցէ՛ք:

---

[1] Քարոզող ճշմարիտ Որդոյն Աստուծոյ - Աստծու ճշմարիտ Որդուն քարոզող

[2] կանչվեցիր

[3] Եւ ձայն բարբառոյ ազդ արարող տիեզերաց - Եվ տիեզերքին ազդարարող բարբառի ձայն

ՄԱՂԹԱՆՔ ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

Անսկիզբն Բանն Աստուած, որ վասն մեր համբեր մահու,[1]
Բառնալով զդատակնիք անիծիցն առ ի մէնջ,
Գերապանծ մաքրութեամբ զմարդիկ վերագրեաց խաչակից իւր
Եւ վկայք կամաւոր մահուամբն իւրեանց:

Դիմամարտ գոլով սրբոցն ընդ կռապարիչս պաշտամունսն[2]
Երջանիկ ճակատամարտք յայտնեցան անպարտելիք,
Զի զԱստուած բոլորից[3] տիրաբար սիրեցին,
Էակիցն Հօր հետևեալ՝ ստացան զթագն պարծանաց:

Ընթադրեալք զմահու խրոխտումն՝ ընդդէմ մեղացն վառեցան,
Թոպեցան յերկունս գանից գեր ի վերոյ քան զբնութիւնս[4]
Ժուժկալեալք ի փորձ բանտից, գելարանաց և կապանաց
Ի մրցմունս գազանաց, սրոյ և հրոյ մենամարտեալք:

Լլկանօք և բերանօք զարեան վտակսն հոսեցին,
Խորհրդոց ո՛չ խոտորումն և ո՛չ փոխադրութիւն բարուց,
Ծաղիկքն նիւթեղէնք յաննիւթ ծաղիկն յօդեցան,
Կատարեալք քաջութեամբ զչարին մուրհակսն կապտեցին:[5]

Հրով Հոգւոյ զինու վառեալ[6] զհալածիչսն վանեցին,
Զօնեցան զենմամբ սրոյ ի բանաւոր ողջակիզումն,
Ղամբարամբ լուսոյ կենաց զխաւար մեղաց փարատեցին,
Ճոխաբար հետևեցան լուսաշաւիղ ընդ պողոտայն:

Մերժեցին, կործանեցին զմահահոտ զմեքենայսն,
Յաղթեցին կարեաց մարմնոյ և հեշտալի գրգանաց,[7]
Նաւարկեալք հմտաբար ընդ զրահեղեղ կռապաշտութիւնսն,
Շնորհազարդ փայլմամբ փայլեալք ի յերկնային
նաւահանգիստն:

Որոշեալք ի կրից կարեաց և ի Քրիստոս արձանացեալք[8]
Զարաչար չարչարանօք զչարին մուրհակսն կապտեցին,

Պատրաստեալք չարադիւթիցն հրեղէն գետոցն զկիզմունս,
Զրոյն կենաց գետահետեալք, բղխեցին մեզ յարբուցումն:

Ոհ գործեալք ի լուսաճեմ յաստուածակերտ ի խորանս
Սրբափայլ զգեստիւք պճնեալք ըստ զարդու նոր Սիովնի,
Վերառեալք վկայօրէն զմարգարիտն հաւատոյ՝
Տենչացեալք անճառ լուսոյն վերասլացան ի կեանս անմահ:

Բաբունեաց հրաշալեաց և մեք աչակերտեալք,
Ցօղեսցին մեր արտասուք ընդ ցող արեան նահատակացն,
Հիւսեսցին թելք հոգւոց ընդ հիւսից պսակելոցն,
Փայլեսցին գործք բարեաց ընդ լուսաթռիչ մարտիրոսսն:

Քրիստոսի պսակողին զաղօթանուէր զմաղթանս
Զերանեալ նահատակացն մատուսցուք ի յընծայումն,
Զի հաճութեամբ խոնարհեալ՝ ընկալցի վասն մեր,
Թողութիւն շնորհեսցէ մեր բազում յանցանացն:

---

[1] Անսկիզբն Բանն Աստուած, որ վասն մեր համբեր մահու - Անսկիզբ Բանն Աստված, որ մեզ համար մահվան դիմացավ

[2] այսինքն՝ դիմադրեցին սրբերը կռապաշտությանը

[3] զԱստուած բոլորից - ամենքի Աստծուն

[4] թոպեցան յերկուսս գանից գեր ի վերոյ քան զբնութիւնս - գանի երկուսքով ծեծվեցին մեր բնության կարողությունից վեր

[5] կատարեալք քաջութեամբ զչարին մուրհակսն կապտեցին - քաջությամբ նահատակվելով՝ չարի մուրհակները կողոպտեցին

[6] զինու վառեալ - զինավառված

[7] յաղթեցին կարեաց մարմնոյ և հեշտալի գրգանաց - հաղթահարեցին մարմնի կարիքները և հեշտալի գգվանքները

[8] որոշեալք ի կրից կարեաց և ի Քրիստոս արծանացեալք - հեռանալով կյանքի կրքերից՝ հաստատվեցին ի Քրիստոս

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

Յաճախապատում ճառք

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՇԱՀԱՒՈՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՄՏԵՐԻՄՍՆ ԵՒ ԸՆԴ ԴԺՆԴԱԿՍՆ ՊԱՏԻՒ ԵՒ ՊԱՏԻԺՍ

ԺԷ

Գրել ձեզ եւ ուսուցանել կամիմ, եղբա՛ք իմ եւ որդի՛ք, զորս ի Քրիստոս աւետարանաւն ծնայ: Զի որք յարգեն զանձինս իւրեանց ի գործս բարութեան և յուսումն ճշմարտութեան, ինքեանք իսկ պատրաստին ի վնասակարանացն և պէսպէս հնարիւք յառնել զբարիսն խորհին: Որպէս զի օրինակ ճշմարտութեան եղիցին յառնել և յուսուցանել միշտ և անխիղճ և անպատճառ իցեն առ հեռաւորս և մերձաւորս ըստ բանին տեառն. «Լուսաւոր եղիցի, ասէ, լոյս ձեր արդարութեան առաջի մարդկան. որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայրն ձեր երկնաւոր»: Եւ դարձեալ երանէ զծառայսն, յորոց անունն օրհնի և փառաւորի. և վայ և եղուկ զայնոսիկ վարկանի, յորոց անուն Տեառն հայհոյեսցի:

Զի որք լինին քարոզք ճշմարտութեանն, ճշմարտութիւնն ինքնին յարգէ զնոսա անմոլար գիտութեամբն: Եւ աստուած փառաւորէ զնոսա, յորժամ տեսանի նոցա բարեպաշտութեան ջանքն. զի զոր նոքայն տնկեն և սնուցանեն, Աստուած աճեցուցանէ և հաստատէ աւետեօք կենացն ի փառս և ի պարծանս նոցա ի տիեզերական ատենին յարութեանն որ ի մեռելոց: Եւ կարասցեն ասել. ահա մեք և մանկունք մեր ճշմարտեալ զոր ետուր մեզ, Աստուա՛ծ: Եւ պսակեալ առաքինութեամբքն առնուն զգրաւական խոստացեալ աւետեացն Քրիստոսի: «Զի որ արասցէն, ասէ, և ուսուցցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից»: Զի «Սկսաւ, ասէ, Յիսուս առնել և ուսուցանել մինչև յօրն, յորում վերացաւ յերկինս»:

Իսկ որում հաւատացաւ վերակացութիւն ժողովրդոց, և հեղգասցի ի նոցա խնամս ի հոգևոր ուսումն և ի խրատ և ստունգանիցէ և կամ ոչ տայցէ զմարմնաւոր պէտս կարօտելոց, այլ ուտէ և ըմպէ անզգայաբար, յանկարծակի գայ ի վերայ նորա մահ, յորում աւուր ոչ ունի ակն. և հատանող բանն աստուծոյ սուր՝ ընդ մէջ կտրեսցէ զնա, յինքն առեալ զշնորհսն, որ յաստուծոյ է և զվատթարն ընդ անհաւատսն դիցէ ի խաւարն արտաքին և ի հուր, ուր լալ աչաց է և կրճել ատամանց: «Զի հաւատք՝ ի լսելոյ են, ասէ Առաքեալ, և լուր ի բանէն Քրիստոսի. զի զիա՞րդ հաւատան զոր ոչն ուսան և կամ զիա՞րդ աղաչեսցեն զոր ոչ գիտեն»:

Եւ դարձեալ առ մարգարէն Եզեկիէլ ասէ օրինակաւ առ ամենայն վերակացուս. ասէ. «Դէտ կացուցի զքեզ. զգուշասջիր անձինդ և ժողովրդեանդ, և ասասցես ցանօրէնն, եթէ մահու մեռցիս: Եթէ ոչ զղջասցի և դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, մեռցի զմեղացն զմահ. և դու ապրեսցիս, զի զգուշացուցեր յառաջագոյն: Ապա եթէ զղջասցի և դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, կելով կեցցէ զարդար կեանսն և մի՛ մեռցի զմեղացն զմահ: Ապա եթէ ոչ զգուշացուցեր նմա, ի մեղս իւր մեռցի ի պատուհաս, և զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից», ասէ զայս ամենեցունց Տէրն:

Եւ Դանիէլ բանիւք և արդեամբք եցոյց զիրաւացի դատաստանն առ ծերսն, որք էին վերակացուք Իսրայէլի՝ զպատիժս պատուհասիցն: Որ և գբին յառիւծուցն ապրեցաւ՝ մատնելով ոսոխացն ի մահ, որ անդէն իսկ ի նոսին դառնայր մահն յառիւծուցն: Եւ այնպէս երևելի եղև ճշմարտութիւն արդարոյն և ամբարտաւանութիւն զրպարտող չարեացն: Եւ այսպէս փառաւորէ Աստուած զփառաւորիչս իւր և զճշմարիտ վերակացուս: Որ և զերիս մանկունսն արկին ի հնոցն առ ի յայրել վասն առ ի յԱստուած զհաւատսն ամբողջ պահողաց. զի հրաման, ասէ, թագաւորին սաստկանայր, և հնոցն բորբոքէր առաւել, և հուրն ոչ կարէր մերձենալ առ սուրբսն, որք օրհնէին զՏէր Աստուած: Այլ զչարսն, զորս գտանէր, այրէր հուրն. զի այնու ծանուցեալ եղև արարիչն արարածոց. և թագաւորն խոստովան լինէր Աստուծոյ զմեղսն:

Եւ զԵրեմիաս արկին ի գուբն ի մահ յաղագս յանդիմանելոյ զանիրաւսն և ի դարձ ածելոյ, զի ապրեսցին ի բարկութենէն, որ գալոցն էր ի վերայ ժողովրդեանն: Որ և զգրեալ զխրատսն և զմարգարէութիւնն այրեցին և ըստ արժանեացն ընկալան զհատուցումն մեղաց իւրեանց և մատնեցան ի սով և ի սուր և ի գերութիւն: Եւ մարգարէն փառաւորեալ պատուեցաւ ի թագաւորէն և ի մեծամեծացն և վերստին նորոգեաց գրով զմարգարէութիւնն և զուղիղ խրատսն: Եւ զի ասաց, «Անիծեալ ամենայն որ գործէ զգործ Տեառն ծուլութեամբ»:

Եւ Տէրն, որ յաւետարանսն, առ Պետրոս ասաց. «Դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ», այսինքն զհաւատացեալ ժողովուրդն Աստուծոյ. և դրունք դժոխոց զնոսա մի՛ յաղթահարեսցեն, զարձակեալսն յերկրէ սուրբս և արդարս ճշմարիտ հաւատով յերկինս. և զոր կապիցես յերկրի զանսուրբս և զանիրաւս և զայլահաւատս, եղիցին կապեալ ի յերկինս ի պատիժս սպառնալեացն: Առ Պետրոս բանս ի տեառնէ առ ամենայն վերակացուս սուրբս ասացաւ, որք զճշմարտութիւնն իրաւ ունին:

Այսպիսի ընտրութիւնք են ի մէջ լաւաց և անիրաւաց, որք իւրեանց սրբութեամբն և առաքինասէր վարուք եղեն արբանեակք և քարոզք բանին ճշմարտութեանն ի զգուշութիւն անձանց և ժողովրդոց, արհամարհողաց և անհնազանդից, անսրբոց և պղծոց և որ այլ ևս դժնդակութեան վարք իցեն, յամենայնի խելամտեալք ճանաչելով զերկաքանչիւրոցն զչարժմունս, և ընդ սխալեալսն մարտիցէ զինուք ճշմարտութեանն ողոքանօք կամ սաստիւք. որով կարասցէ շահել զմեղապարտսն: Եւ զհեծանոցն ի ձեռն ունել. զի հողմոյ Հոգւոյն սրբոյ շնչելով որոշեսցէ զցորեանն յշտեմարանս սրբոց, և զյարդն պատրաստիցէ ի նիւթ հրոյ գեհենին, որպէս ասացաւ, զի ընտրութիւն է ի մէջ բարւոյ և չարի:

Իսկ որ ի ճշմարիտ վերակացութենէն օտար են, բարկութիւնն Աստուծոյ ի վերայ նոցա պատրաստեալ կայ ի Տեառնէ ըստ բանի Առաքելոյն. «Որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին, և ոչ ըստ աւետարանին Քրիստոսի»: Զի արժան է առաջնորդաց վերագոյն ըստ արդարութեան օրինացն եղեալ յամենայնի ի հաճոյս աստուծոյ, և զժողովուրդն զգուշացուցանել ճշմարիտ վարդապետութեամբ վասն իւրաքանչիւրոց փրկութեանց. զի մի՛ սպառնացեալ պատուհասն ի վերայ հասանիցէ ի ձեռն հրեշտակի չարի: Որպէս մարգարէին ցուցաւ[1] սատակել զանիրաւսն և ոչ ումեք ողորմել, ծերոյն և տղայոյն, կուսին և երիտասարդին, և քահանայից և ժողովրդոց:

Բայց ասէ, որք հեծեն և յոգոց հանեն և սգան զայլոց անիրաւութիւնս, խնայել հրաման առնու նշանաւն, որ ի ճակատն առեալ ի Տեառնէ, զի ապրեսցին ի սատակմանէ անտի: Եւ սկիզբն սատակմանն ի քահանայից անտի առնու, յորոց վերակացութիւն ժողովրդեանն է յԱստուծոյ, որ զչահս մարմնոցն առնուին և հոգևոր շահիցն անփոյթ առնէին, զի «Ամենայն դպիր աշակերտեալ արքայութեանն Աստուծոյ, ասէ տէրն, նման է առն տանուտեառն, որ հանցէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին»:

Տանուտէր անուանեաց զառաջնորդս եկեղեցւոյ՝ զաշակերտեալս ճշմարտութեան աւանդիցն, և գանձք զիմաստս սրտին, որ ի հնոյ և ի նորոյ ունի զստոյգ գիտութիւնն և վայելեցուցանէ զմերձաւորս և զհեռաւորս բարի խորհրդովք և բարի գործովք և անարատ սրբութեամբ: Եւ զչար գործոցն զմթերս արտաքս պեղել[2], մինչ ոչ մնայցեն նչխարք չար գանձուցն ի բարի ուսմանցն, ընտրելով զլաւն ի վատթարացն:

Ինքեանք, ասէ, օրինակ լիցին կացիւք[3] գնացիւք, ամենայն առաքինութեան հանդիսիւք. զի աշակերտեալքն յորդորեսցին ի ճշմարիտ վարս, որ փառս է վարդապետաց, գնալ ի ճանապարհս արդարոց և խորհել ի պատուիրանս Տեառն և առաջնորդել լուսաւոր վարդապետութեամբ ի սրբութեան վարս և յարդարութիւնսն ամենայն: Զի զամենայնսն ժառանգորդս արասցեն արքայութեանն աստուծոյ, գործակից լինել կենարար աւետարանական խրատուն. մի՛ իւիք զանց առնել ի ճշմարիտ աւանդիցն: «Զի եթէ միով իւիք ինչ, ասէ, գթիցես, եղեր ամենայն օրինացն պարտական»: Զի ճշմարտեալք հաւատով և սրբեալք ի խղճէ չարեաց, միշտ մերձաւորք լիցին մարմնոյ և արեանն տեառն, ի ներքին մարդն բնակել Քրիստոսի, որ լուսաւորէ զսուրբս անարատ և ամբիծ երախտեօք սուրբ սիրոյն, հոգևոր և մտաւոր դարմանօք յամենասուրբ Երրորդութենէն միշտ:

«Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր, ասէ Առաքեալ, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք»: Որպէս զի եղիցի մեզ ամենեցուն, որ զգեցաք զՔրիստոս, ճշմարտեալ հաւատով և առաքինասէր վարուք հաճոյացեալք մերձենալ ի լոյսն անմատոյց և պայծառանալ ի փառացն Քրիստոսի յուսոյն մերում ի տիեզերական ատենին յարութեանն որ ի մեռելոց: Եւ փառաւորեսցուք զամենազօր տէրութիւնն միշտ ընդ հրեշտակս յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

[1] ցուցաւ, այստեղ՝ ցուցում տրվեց, հանձնարարվեց
[2] արտաքս պեղել - փորել-հանելով դուրս թափել
[3] կացիւք գնացիւք - վարքուբարքով

ԺԹ

ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Մեծ են յարգանք հրամանաց Տեառն և անբաւ շնորհք բարերարին Աստուծոյ, զի զորս յառաջն ճանաչէր, զնոսին և կոչեաց ի յոյս կենացն անվախճանից և արդարացոյց և փառաւորս արար: Որ հաւատով և երկիւղիւ պահեցին զպատուիրանս նորա և հնազանդեցան ընդ ամենախնամ սուրբ սիրոյ նորա և ընկալան զբանն կենաց յանձինս իւրեանց և եղեն պտղաբերք և աճեցուցք առաքինութեան վաստակովքն, որոց վարձքն կան և մնան ի հանդերձեալ կեանսն: Իսկ ծուլիցն և անհնազանդիցն, որք արհամարհեցին զբանն ճշմարտութեան և խափանեցին զպտուղս արդարութեան և ընկալեալ զչարաչար սերմանս ի թշնամւոյն և եղեն մեղաւորք ճշմարտութեանն աւանդից և խնամակալ սիրոյն, մոլորեալք յուղիղ ճանապարհացն, որոց կատարածն ի կորստեան վիհս ընկենու:

Սակայն բարերարին Աստուծոյ բարերար խնամքն ոչ անտես առնէ[1] որք դառնան առ նա. բանայ զդրունս ողորմութեան շնորհացն և ընդունի գթութեամբ երախտաւոր սուրբ սիրովն և յանձանձէ զապաւինեալսն ի նորա գթութիւնսն: Եւ ի ձեռն ճշմարիտ խոստովանութեան և խոնարհեալ և բեկեալ սրտին ի զղջումն սգաւորի՝ գթայ ի նա և ողորմի և այցելու լինի Փրկիչն: Զի զծածկեալ մաղձն դառնութեան ի բաց փսխեաց և եցոյց, եթէ զմեղս ատեցի և անարգեցի և զօրէնս քո սիրեցի՝՝զառողջութեան և զսրբութեան և զարդարութեան: Եւ ըստ ունակութեան ցաւոցն ի մարդասէր բժշկէն զառողջութեան դեղս ընկալցի՝ զարդարութեանն վարս, որ ընդդէմ մեղացն և դժնդակ ցաւոցն, զոր ունէր, զի այլ մի՛ ևս անկանիցի ի նոյն և այլ ոչ ևս գտցէ զմարդասէր բժիշկն:

Զի կոչէ բանն Տեառն զծանրաբեռնեալսն[2] խոստովանութեամբ յապաշխարութիւն, զխաւարեալսն մեղօք ի լոյս արդարութեան, զմոլորեալսն ի գիտութիւն ճշմարտութեան և զվրիպեալսն ի ճանապարհացն արդարութեան ածել յուղղութիւն և զմահաբեր վարս ի կեանս վերստին նորոգել խոստովանութեամբ, լուծանել զամենայն խարդախութիւնս սատանայի: Զի զամենայն մարդ կամի, զի կեցցեն, ասէ Առաքեալ, և ի գիտութիւն ճշմարտութեան հասանել ամենագիւտ սիրոյն տեսչութեամբք:

Զի խոստովանութիւն, ասէ մարգարէն, մեծ վայելչութիւն է առաջի աստուծոյ և քահանայից նորա. զի «Ասացից, եթէ պատմեցից յինէն զմեղս իմ, և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց»: Զի զվէրսն բանայ և զցաւսն յայտնէ և զդեղ բժշկութեանն ի վերայ ածէ զղջմամբ զապաշխարութիւնն եռանդմամբ հոգւոյն ի հանապազորդ արտասուալից աղօթսն անդադար ի տուէ և ի գիշերի. և ողորմ կերպարանս ստանալ ճնշելով զմարմինն պահովք, զի զԱստուած խոնարհեցուսցէ ի գութ բազմախնամ շնորհօք առ ի թողութիւն մեղաց: Զի ապաշխարութիւն ոչ միով իւիք կարգի, այլ բազում իրօք չինի. և ի մի հասակ արդարութեան կանգնի անկեալն և աւարեալն:

Զի նախ առաջին, զղջանալ և խոստովան լինել զյանցանս և արտասուաց ընդունարան առնել զանձն յապաշխարութեան ժամանակս անդադար աղօթիւք և տքնութեամբ և միշտ պահովք, և մեծաւ ապաշաւանօք սգալ զյանցանս գործեցեալս հանապազ: Երկրորդ, զի ատեսցէ զմեղս և զգործակիցսն մեղաց ըստ ամենայն վնասուցն. և կշտամբել զմիտս և, զզգայութիւնս, որք ի չարն հակամիտեցին, և ոչ պահեցին զհոգևոր օրէնսն, որ նոցա աւանդեցաւ յԱրարչէն: Երրորդ, սիրել զարդարս և զզառաքինիս և գործակիցս իւր արասցէ զնոսա աղօթիւք առ Աստուած, և յամենայն գործս բարութեան յորդորիչս ի ճշմարտութեան աւանդս կարգաց: Չորրորդ, զի ի յանցաւորաց անտի խորշեսցէ մտօք և բանիւ և ամօթով և տեսութեամբ պատկառ. լաւ

համարել զնեղութիւն կրել ընդ արդարս, քան զհանգիստն ընդ անիրաւս: Հինգերորդ, յահ և յերկիւղ Տեառն կրթել և չթողուլ ի մտաց զսր վախճանին, այլ և զպատիժս մեղաւորաց. և մեռուցանել զանդամսն կարեօքն և ցանկութեամբքն: Վեցերորդ, ի տուէ և ի գիշերի հսկել վասն փրկութեան անձին, եթէ որպէս կարասցէ լուծանել զմեղս և ապրել ի բարկութիւնէն, որ գալոցն է ի վերայ անապաշխարիցն: Եօթներորդ, զի մի՛ մոռասցի զբեկումն անձին իւրոյ և պղերգասցի ի բարեպաշտութեան ճգանցն և դարձցի ի նոյն վնաս և վերստին ոչ կարասցէ բժշկել: Ութերորդ, զի առողջացեալ զգաստացեալ սրբեալ, իմասցի զներքին մարդն և զարտաքին և զյիշատակս խոստացեալ աւետեացն ստոյգ ապաշխարողացն: Իններորդ, զամենայն հրամայեալսն արարեալ ըստ հոգևոր օրինացն և աւետարանին Քրիստոսի և ակն ունել վերստին նորոգման ի ձեռն քաւութեան պատարագին: Տասներորդ, առաւելեալ յամենայն բարեգործութիւնս երևելեօք և աներևութիւք, և զսպիս մեղացն ջնջել զհոգւոյն և զմարմնոյ, և յաղթող երևել ի հանդիսի ապաշխարութեանն, կարասցէ համարձակել ի մեղսաքաւիչ խորհուրդն կենդանարար և լինել հաղորդակիցս և մարմնակիցս և կցորդս անճառելեացն: Եւ յայսմհետէ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի և սուրբք ընդ նմա սուհաւատչեայ երանութեանն:

Եւ ստոյգ խոստովանողք և ապաշխարողք ազատեալք փրկաւէտ մարմնով և արեամբն Քրիստոսի. զի նա է յոյս մեր և առիթ քաւութեան, և նովաւ լինի ազատութիւն և մուտ յուրախութիւն և ի ժառանգութիւն արդարոցն երախտեօք Քրիստոսի սուրբ սիրոյն, որ արդարացուցանէ զմեղաւորս, որ ապաշխարեսցեն: Զի որպէս սուր, որ հատանէ զմարմինն և վտանգէ զանձն, և կարօտանայ բժշկի, որ զիջուցանէ զվտանգսն դեղովք ոմամբք յառողջութիւն, այսպէս դեղովք ապաշխարութեան զհարուածս ցանկութեան և և զաղտեղի յիշատակս ջերմեռանդ արտասուօք լուանալ զվէրսն և բժշկել անարատ սրբութեամբ: Զի արտասուաց դրունք[3] են վիշտք նեղութեանց և ախտից

ինչ կսկիծք հոգւոց տագնապք, վրէպք օգտից, պատահարք թշուառութեանց, վտանգք ի բռնաւորաց, տնանկութիւն յանկարծահաս, կորուստ սիրելեաց, ցաւք պէսպէս դժնդակաց անըմբերելի, և որ այլ ինչ սոցին նմանեալ: Իսկ հոգւոյն շարժմունք յայսոյն չարութենէ յափշտակեալ յանխտիր ցանկութիւնս՝ վշտացուցանէ զմիտս ի դժնդակ խորհուրդս ապախտաւորս, որ ոչ ունի զկայանս արդարութեան:

Վասն այսորիկ պիտոյ է պաղատանս արտասուալից առ փրկիչն, զի զերծուսցէ յայնքան վնասուց: Եւ իմանալեօք ընդ վրէժխնդրութիւն նոցա նայել և ի վայր կործանել զինուք առաքինութեան զնոսա և զօրաւիգ ունել զապաւէն կենացն մերոց զՔրիստոս Յիսուս. և աստէն զայցելութիւնն առնուլ բարեացն ցանկութեամբք, գութ առ ընտանիս հաւատոց, անձուկ հեռաւորաց սիրողաց Աստուծոյ, ծարավ մտերմութեան զԼուտից հոգևորաց, փափաքումն առ սուրբս, քարոզ խաղաղութեան, խոկումն խոնարհութեան, քաղցրալից բարբառք խրատուց, որ զկարծրացեալ միտս շարժէ ի յորդորումն առաքինութեան: Զամենեսեան օգտեցուցանել առ խնամս սիրոյ փրկութեան. և առ օգուտս ի լրումն հոգևորացն, և ի շահս բարեաց վայելից, և ի համբերութիւն ի նեղութեան՝ վայելել ի պարգևս չնորհաց, որ տայ ի յստակ աղբերէն կենաց: Վասն որոյ աղօթք և խնդրուածք մտերմութեամբ ի բոլոր սրտէ՝ տանի ի նաւահանգիստն չնորհօք:

Եւ ճշտեալ զմիտսն ի զղջումն արտասուաց յիշատակս աւետեաց խնամալից պաղատանօք եռանդնասէր խանդաղատանօք հեղուլ զարտասուս չնորհալիցս առ ի մաքրութիւն մտաց և մարմնոց, որ զանմաքրութիւն ստացեալ ունէին զչար և զաղտեղի ցանկութիւնս: Զի արտասուք զմեղացն հարուածոց դառնութիւն սրբեն և ողջացուցանեն և զխոտանն ի բաց ընկենուն ի մտաց և ի զգայութեանց. և լինի ընդ հովանեաւ նախախնամական սիրոյ Փրկչին, և առնու յուսով զմխիթարութիւն: Արտասուք շարժեն զմիտն առ Աստուած և զարթուցանեն յափշութենէ մեղացն որպէս ի քնոյ, և վառեն ի զգուշութիւն զգաստութեան չահաւորն օգտից սիրով: Արտասուք արբուցա-

նեն զհոգևոր ըմպելին ի խնամս սուրբ սիրոյն ի գութ յիշատակաց բարերարին տեսչութեան քաղցր կամացն ի շնորհալից աղբերէն բղխեալ յազատութիւն և ի ժառանգութիւն կենդանարար յուսոյն յաւիտենից:

Այսչափ շահք օգտից ի զղջմանէ արտասուաց, որ շարժեն զբարս հոսանուտս ի գիւտս փրկութեան և ի պահպանութիւն Աստուծոյ կամացն և զմիտս ամփոփեն ի հաճոյս Աստուծոյ: Եւ որքան ի յայսցանէ շահք բարեաց, այնքան առաւել վնասք ի ծուլութենէ և յարհամարհանաց զարտօսր, որ ի խորութենէ սրտի յառաջագայի և ի պղերգութենէ արգելեալ՝ դժնդակացն լինի մուտք ի չարին ազդմանէ. և շարժեն զմիտս և զանդամս ի յանխտիր չարիս. և ելք զղջման և արտասուաց ի ծուլութենէ և ի խստացեալ ամբարտաւան սրտէ, որ քամահէ զզեղջ շնորհացն և ոչ հոգայ վասն այնր, որ զրկեցաւն: Եւ ընդունի փոխանակ բարեացն զչար զարհամարհութիւն, զամբարտաւանութիւն, զապիրատութիւն, զյամառութիւն, զամբարշտութիւն, զսնափառութիւն, զագահութիւն, զորկորստութիւն, զցանկութիւն, և որ այլ ևս են մուտք չարին: Եւ որ յայսոսիկ ըմբռնեալ է, դժուարաւ բժշկելի է:

Բայց ոչ այնյոյս առնէ մարդասիրութեան բանն, որ զղջանան և գան ի հնազանդութիւն ահիւն Աստուծոյ, և ընդդէմ չափեն մեղացն[4] զուղղութիւն, անիրաւութեանն զիրաւունս, անսրբութեանն զսրբութիւն, ամբարտաւանութեանն զխոնարհութիւնն, բարկութեանն զհեզութիւն, որովայնամոլութեանն զպարկեշտութիւն, հեղգութեանն զպնդութիւն, ստութեանն զճշմարտութիւն միշտ, անհնազանդութեանն զհնազանդութիւն, ագահութեանն զչափաւորութիւն, կեղծաւորութեանն զպարզամտութիւն, երդմնահարութեանն զչերդնուլն, մախանացն զբարերարութիւն, ոխութեանն զանոխակալութիւն, խստութեանն զքաղցրութիւն, ատելութեանն զսուրբ սէրն միշտ. անզղջութեանն զզղջումն արտասուաց, անխոստովանութեանն անխիղճ զխոստովանութիւն խղճի մեղացն, անյուսութեանն զյոյսն

ուղիղ, թերահաւատութեանն զուղեղ հաւատս յանձին հաստատել և այլոց քարոզել զճշմարտութիւնն:

Այս է ստոյգ աւանդիցն դէմք ապաշխարութեան. ամենայն որ ինչ հակառակ է մեղացն՝ առնել զարդարութիւնսն ամենայն որ երևին և որ ոչն երևին ի խորհուրդս մտերիմս և ի յիշատակս աւետեացն ստոյգ ապաշխարողացն, և դարձեալ ի սպառնալեաց անապաշխարողացն յամենեցունց տեառնէն: Յայսոսիկ զգուշանալ և ի պատրաստի ունել զհաճոյսն Աստուծոյ ահիւն Տեառն, յիշատակօք անվրէպ գիտութեանն Աստուծոյ համարս առնելոյ արդար դատաւորին յաւուրն դատաստանի, յորում ոչ ինչ ծածկի ի խորհրդոց և ի բանից և ի գործոց:

Զի ընտրութիւնք են առաքինեաց և պղերգացն, հաւատացելոց և անհաւատից, և ըստ արժանեացն հատուցմունք: Պատիւք և մեծարանք և երանութիւնք յաղթողացն են, որք մարտեան ընդդէմ մեղացն և հակառակորդին և յաղթեցին և պսակեալ փառաւորին. և դարձեալ որք ստոյգ ապաշխարեցին զվնասս իւրեանց: Իսկ ահաւոր սպառնալիք տանջանացն պաշարէ զանիրաւսն և զամբարիշտսն ի տոչորումն պատժոց, որ ոչ անկան յապաշխարութիւն: Եւ զխոնարհեալսն և զնուաճեալսն ընդ կարգաց ապաշխարութեանն ընդունի յօթևանս կենացն ըստ արժանաորութեան մաքրմանն ըստ բազում ողորմութեանն իւրոյ: Զի նեղեալն և վտանգեալն արտասուօք և բարի շարժմամբք յողորմութիւն դարձուցանեն յաղագս սխալանաց ինչ այսպէս զմարդասէր Տէրն:

Եւ որպէս տղայքն, որ ոչ գիտեն բառիւք զպէտս ի մարցն խնամոցն առնուլ, այլ արտասուօք զպիտոյսն խնդրեն և առնուն ի խնամոց սիրոյն, զի ոչ դադարեն ի լալոյ մինչև ամենայն խնամք ի մարցն կատարի՝ ապա դադարէ և զուարճանայ և հանգչի, այսպէս պարտ է մեզ լինել առ բարեգութ Տէրն, որ խնամէ զմեզ յաներևոյթս արարչական սիրովն, որ նստի յանարուեստ աթոռս և բարերարութեամբն իւրով խնամէ զարարածս, որ ի ձեռն նախահարցն ծանոյց զաստուածգի-

տութիւն և ի ձեռն մարգարէից եցոյց զապաշխարութեան հանգամանս՝ որք դառնան: Իսկ ի գալստեանն իւրում եբաց զդուռն ողորմութեան և ասէ. ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն խոստովանութեամբ արարչական խնամակալ սիրովն: Զի փութացեալք ի կոչումն աւետեացն՝ առցուք զպարգևս ի շնորհողէն ապաշխարութեամբն զքաւութիւն, որ յաներևոյթսն զհոգիսն բժշկէ և յերևելիս զզգայարանս:

Զի նախ յաւազանէն է թողութիւն հաւատացելոց յամենասուրբ Երրորդութիւնն ճշմարիտ խոստովանութեամբ: Զի ասէ ցաշակերտսն. երթեալ մկրտեցէ՛ք, ասէ, զհաւատացեալս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և ուսուցէ՛ք պահել զամենայն պատուիրեալսն ի Քրիստոսէ: Զի որք ի Քրիստոս մկրտեցան, զՔրիստոս զգեցան և եղեն որդիք լուսոյ և ժառանգք արքայութեանն վերստին ծննդեամբ: Զի շնորհօք լինին որդիք տուընջեան, ի գիշերային ծննդենէն ազատեալք յիշխանութենէ խաւարի և լուսաւոր վարուք կեալ յերկրիս օգնականութեամբ բարերարին: Եւ ըստ արուեստից նորին շնորհաց զհեռաւորս մերձաւորս առնելով և զօտարացեալսն ընտանեցուցանել ճշմարտեալ հաւատով և անբիծ սիրով: Եւ զըմբռնեալսն ի սատանայէ ի մեղս և վասն մեղացն ի մահ արդարացուցանէ և կենագործէ և հրաւիրէ յիւր արքայութիւնն և ի փառսն, զոր պատրաստեաց սիրողաց:

Դարձեալ և յաղագս մեղուցելոց և զպարգևս ապաշխարութեանն եցոյց և յայտնի արար առաջնովքն: Որպէս զԴաւթայ լսեմք մեղուցեալ և խոստովանեալ դարձեալ և ապաշխարեալ, որ լայր զամենայն գիշերն և զըմպելին արտասուօք խառնէր վասն բարկութեան Տեառն. յորոյ աչացն վնակք արտասուաց հոս՝ին առ ի չսպահելն զպատուիրանն Տեառն, որ զցանկացող աչսն մաշէր յարտասուս և սրբէր ի մեղաց: Եւ զՊետրոս ի նորոյս է իմանալ, որ ուրացաւ և ոչ յիշեաց զյառաջագոյն ասելն Տեառն. մինչև հայելովն յուշ գայ ի հաւուն ձայնն. և ելեալ, ասէ, արտաքս՝ ելաց դառնապէս: Եւ յաղագս ջերմ արտասուացն եգիտ զթողութիւն. և առաքելական շնորհքն անդէն մնացին, որպէս Դաւթի մարգարէականն: Թողում ասել և զայլ ևս զհնոյն և զնորոցս մեղուցեալս և ապաշխարեալս որպէս ասեն աստուածային գիրք, որք ցուցանեն զօրինակս զստոյգ ապաշխարութեան:

Եւ այսպէս ոչ փակի դուռն կենաց ապաշխարութեան մինչև ի վախճան աշխարհի: Զի զհանապազորդ սխալանսն հանապազորդ արտասուօք աւազանին լուանալ և սրբել. և զի հանապազօր մեղանչեմք՝ որ խորհրդով, որ բանիւ, որ լսելով, որ տեսանելով, որ շարժմամբ իւիք այսոքիկ, հանապազորդ աղօթք և լուացք արտասուաց մի՛ պակասեսցէ:

Զի որ կտակաւն են մեղք, այսինքն ընդ կանոնօք այնոցիկ ժամանակք որոշեն և զատուցանեն յեկեղեցւոյ և ի ժողովրդենէ և ի սեղանոյ. զի ըստ մեծի վնասուցն և մեծ ջանք և աշխատութիւնք պիտոյանան: Եւ որոց նուազ ունին սխալանսն, և բժշկութիւնս արտասուօք սրբել: Իսկ որ ի խորութեան սրտին է աղտ ապականեալ անդամօք, անդ վտակք արտասուաց և հուր և եռացումն հոգւոյ պիտոյանան, որ սրբէ և հալէ և ի բաց մերժէ: Եւ որ փոքր ինչ սխալանս ունի ակամայ վրիպեալ, զղջանալ և յոգւոց հանել և արտասուօք անդէն իսկ սրբել:

Այլ որ սաստիկ ունի զվէրս մեղաց, և կամաւ ըմբռնեալ, որ կանոնաւ ունի զանուն և զկարգ որ ի տեառնէ, ունի զհանգամանս սպառնալեաց. բազում ջանք և ջերմեռանդ արտասուք և բեկումն սրտի և որոշումն ժամանակաց ըստ յանցանացն ի ներքս բերիցէ առ ի լուծանել զդժնդակ ձմեռն խստութեան մեղացն: Զի գարունն հոգևոր երևեսցի ի շնչել հարաւոյ ջերմութեան հոգւոյն. և ի վերուստ սաստիկ անձրևով զհոսանս արտասուաց. նոր երկիր զբոյսս և զծաղիկս բացայայտէ, և տունկք զսաղարթս և զպտուղս առ ի վայելս թագաւորաց և ռամկաց, որովք զուարճանան: Սոյնպէս և որ ջերմութեամբ հոգւոյն զհոսանս արտասուացն հեղու և լուծանէ զկապանս ձմեռնային մեղացն, արձակին բոյսք առաքինութեանն և պտուղք արդարութեան

տնկոյն, որով ուրախանան երկնաւորք և երկրաւորք ի փառս աստուծոյ:

Զի այսպիսի միտս և բարս պարտ է ստանալ ապաշխարողաց. զի ազատեսցին ի պարտեաց հարուածոց գեհենին անշէջ հրոյն և անմահ որդանն: Եւ ճշմարտեալ ստոյգ ապաշխարութեամբ արտասուաց աւազանաւն ժառանգաւորք արքայութեանն եղիցին, զգեցեալ զպատմուճան սրբութեան լուսոյն ճառագայթեալ առաքինութեանն հանդիսիւք, պսակեալ և վայելեալ յանվախճան երանութիւնսն ընդ սուրբս:

Զի ապաշխարութիւն է ստգտանելն զինքն և հրաժարել ի վնասակարացն և ի չար ցանկութեանցն: Եւ փոխանակ միոյ միոյ չարեացն զարդարութիւնն ընդդէմ դնել, զի խափանեսցէ զմեղսն և զարդարութիւնսն աճեցուսցէ սուրբ սիրով և արտասուալից աղօթիւք և պահովք ցամաքեցուսցէ զպղտորեալ զանժոյժ բղխումն գիջութեան, որ ապականութիւն է յանդամսն: Զի ջուրք աղբերաց և սրսկմունք անձրևաց զերևելի հուր չիջուցանեն. իսկ առ Աստուած սէրն և ջերմեռանդ արտասուք զհուր ցանկութեանն չիջուցանեն և խափանեն զկամս մարմնոյ, զինքնագործութեան չօշափելեօք զաղտեղի շարժմանցն զհոսմունս. և այլ մի ևս մերձենալ ի նոյն գարշութիւնս ախտից, այլ մաքուր մտօք զմաքրութիւն ստանալ: Զի մի սպառնացեալ պատուհասն անսրբութեան ի վերայ հասանիցէ յաւուր յորում ոչ գիտիցէ, և ի ժամու յորում ոչ կարծիցէ, և տայցէ վրէժս ըստ վնասուցն:

Այլ սիրել զսրբութիւն ի Տեր որ ի սուրբս բնակէ: Եւ զանսրբոցն ասէ. «Որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ չիջանի. և եղիցին տեսիլ ամենայն մսեղեաց»: Եւ զամենայն արկուածս մեղաց ի մտաց և ի մարմնոյ ի բաց թօթափել. մինչ զի կարասցէ ասել, գայ իշխան աշխարհիս այսորիկ մեղսասէր, և յիս ինչ ոչ գտանէ զմեղացն նշխար. այլ Քրիստոս ըստ աւետարանին կենաց, որ վերստին նորոգեաց ստոյգ խոստովանութեամբ և արտասուօք ապաշխարութեամբ և գթով տնանկաց հանդերձ ամենայն առաքինասէր վարուք յարդարեալ ի հաճոյսն աստուծոյ: Եւ մշակք լինել այգւոյն ճշմարտութեան ի սկզբան հաւատոց և ուղիղ վարուց, որով կայ ի վերայ երկրի և առաքինանայ: Եւ ելանելով յաշխարհէս՝ ընդ իւր տանի զարդարութիւնսն ամենայն, զտղայութեան անմեղութիւնն, զմանկութեան անարատութիւնն, զերիտասարդութեան անբծութիւնն, զծերութեան զմաքրութիւնն, գլխաւորելով ըստ իւրաքանչիւր հասակացն զամենայն առաքինութիւն, և զվարձս առցեն ըստ իւրաքանչիւր վաստակոց յամենեցունց տեառնէն գործողաց այգւոյն հաւատացելոյ ըստ ժամանակացն փոփոխմանց: Օժանդակ լեալ առ վերին կոչումն, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ յԵրուսաղէմն վերին, որ է մայր մեր ամենեցուն. ուր և յառաջագոյն գանձք առաքինութեանն բարեաց ամբարեցան. ուր յոյսն մեր է հաստատեալ՝ անմահ երանութիւնքն, անսպառ վայելչութիւնքն, անվախճան ուրախութիւնն, անզեղջ բարութիւնքն ի վայելումն Քրիստոսիւ: Միահաւան խնդութիւն երկնաւորաց և երկրաւորաց երանութիւն ի փառս Քրիստոսի գործակցութեամբ բարերար երախտեօք սուրբ սիրոյն: Որ մատոյց ի յորդէգրութիւն Հօր և ի խնամս սուրբ Հոգւոյն և ի ժառանգութիւն արքայութեան իւրոյ: Որ աստ արդարացոյց և անդ թագ ի գլուխ պսակեալ փառաւորէ յաստուածեղէն խրախճանութիւնսն, հանապազորդ ի հրճուանս յանսպառ բարիսն ամենասուրբ Երրորդութեանն: Զի նմա վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

[1] փխ. ոչ անտես առնէ զնոսա

[2] այսինքն՝ մեղքերով ծանրաբեռնվածներին

[3] գործածված է աղբյուրի նշանակությամբ

[4] ընդդէմ չափեն մեղացն - հակադրվում են մեղքերին

ԾՆՈՒՆԴՔ

Գլ. Թ

Եւ օրհնեաց Աստուած զՆոյ եւ զորդիս նորա՝ եւ ասէ ցնոսա. «Աճեցէ՛ք եւ բազմացարո՛ւք եւ լցէ՛ք զերկիր եւ տիրեցէ՛ք դմա. Եւ ահ եւ երկեւղ ձեր եղիցի ի վերայ ամենայն գազանաց երկրի, եւ ի վերայ ամենայն թռչնոց երկնից, եւ ի վերայ ամենայն զեռնոց երկրի, եւ ի վերայ ամենայն ձկանց ծովու, զորս ընդ ձեռամբ ձերով ետու»:

Եւ էին որդիք Նոյի, որ ելին ի տապանէ անտի, Սէմ, Քամ, Յաբեթ. Քամ էր հայր Քանանու: Երեք սոքա էին որդիք Նոյի, եւ ի սոցանէ սփռեցան ընդ ամենայն երկիր:

Եւ սկսաւ Նոյ, այր հողագործ, զերկիր գործել. եւ տնկեաց այգի: Եւ արբ ի գինւոյն եւ արբեցաւ, եւ մերկացաւ ի տան իւրում: Եւ ետես Քամ, հայր Քանանու, զմերկութիւն հօր իւրոյ եւ ել պատմեաց երկուց եղբարց իւրոց արտաքոյ: Եւ առեալ Սեմայ եւ Յաբեթի հանդերձ, եդին ի վերայ թիկանց երկոցուն եւ գնացին յետս յետս եւ ծածկեցին զմերկութիւն հօրն իւրեանց. եւ զերեսս իւրեանց յետս ընդդէմ ունէին. եւ զմերկութիւն հօրն իւրեանց ոչ տեսին: Եւ սթափեցաւ Նոյ ի գինւոյ անտի իւրմէ եւ գիտաց զինչ արար ընդ նա որդին իւր կրտսեր, եւ ասէ. «Անիծեալ Քանան, մանուկ, եւ եղիցի ծառայ եղբարց իւրոց»: Եւ ասէ. «Օրհնեալ Տէր Աստուած, Աստուած Սեմայ, եւ եղիցի Քանան ծառայ նորա. Ընդարձակեսցէ[1] Աստուած Յաբեթի, եւ բնակեսցէ ի տան Սեմայ, եւ եղիցի Քանան ծառայ նոցա»:

Եւ եկեաց Նոյ յետ ջրհեղեղին ամս երեք հարեւր եւ յիսուն: Եւ եղեն ամենայն աւուրք Նոյի ամք ինն հարեւր եւ յիսուն եւ մեռաւ:

Գլ. ԺԱ

Եւ էր ամենայն երկիր լեզու մի, եւ բարբառ մի ամենեցուն: Եւ եղեւ ի խաղալն նոցա յարեւելից՝ գտին դաշտ մի յերկրին Սենաար եւ

բնակեցան անդ: Եւ ասեն այր ցընկեր իւր. «Եկեայք արկցուք աղիւս, եւ թրծեսցուք զայն հրով»: Եւ եղեւ նոցա աղիւսն ի տեղի քարի, եւ կուպր ի տեղի շաղախոյ: Եւ ասէն. «Եկեայք շինեսցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչեւ յերկինս. եւ արասցուք մեզ անուն յառաջ քան զսփռել ի վերայ երեսաց ամենայն երկրի»: Եւ էջ Տէր տեսանել զքաղաքն եւ զաշտարակն, զոր շինէին որդիք մարդկան. Եւ ասէ Տէր. «Ահա ազգ եւ լեզու մի ամենեցուն, եւ զայդ սկսան գործել. եւ արդ ոչինչ պակասէ ի նոցանէ[2], զամենայն զոր ինչ յօժարեսցին գործել: Եկեայք իջցուք եւ խառնակեսցուք անդ զլեզուս նոցա, զի մի՛ լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ: Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, եւ դադարեցին ի շինելոյ զքաղաքն եւ զաշտարակն: Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա Խառնակութիւն. զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի, եւ անտի ցրուեաց զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի:

Գլ. ԺԲ

Եւ ասէ Աստուած ցԱբրամ. «Ե՛լ դու յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ եւ ի տանէ հօր քո՝ յերկիր, զոր ցուցից քեզ: Եւ արարից զքեզ յազգ մեծ եւ օրհնեցից զքեզ, եւ մեծացուցից զանուն քո, եւ եղիցես օրհնեալ: Եւ օրհնեցից զօրհնիչս քո եւ զանիծիչս քո անիծից, եւ օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի»: Եւ գնաց Աբրամ, որպէս խօսեցաւ ընդ նմա Աստուած: Երթայր ընդ նմա եւ Ղովտ: Եւ Աբրամ էր ամաց եւթանասուն եւ հնգից, յորժամ ել ի Խառանէ: Եւ առ Աբրամ զՍարա զկինն իւր, եւ զՂովտ զեղբօրորդի իւր, եւ զամենայն զինչս իւրեանց, զոր ստացան, եւ զամենայն ոգիս[3], զոր ստացան ի Խառան, եւ ելին գնալ յերկիրն Քանանացւոց. եւ եկին յերկիրն Քանանու: Եւ շրջեցաւ Աբրամ յերկրին՝ ընդ երկայնութիւն նորա մինչեւ ի տեղին ի Սիւքեմ, ի կաղնին բարձր. բայց Քանանացիք բնակեալ էին յայնժամ յերկրին: Եւ երեւեցաւ Տէր Աբրամու, եւ ասէ ցնա. «Զաւակի քում

տաց զերկիրս զայս»: Եւ չինեաց անդ Աբրամ սեղան Տեառն, որ երեւեցաւ նմա: Եւ մեկնեցաւ անտի ի լեառնն ընդ արեւելս ի Բեթէլ. եւ եհար անդ զխորան իւր ի Բեթէլ, յանդիման ծովուն եւ Անգէի ընդ արեւելս. եւ չինեաց անդ սեղան Տեառն եւ կոչեաց յանուն Տեառն: Եւ չուեաց Աբրամ, գնաց բնակեցաւ յանապատի:

Եւ եղեւ սով յերկրին, եւ էջ Աբրամ յԵգիպտոս բնակել անդ պանդխտութեամբ, զի զօրացաւ սով յերկրին: Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ Աբրամ մտանել յԵգիպտոս, եւ ասէ ցՍարա ցկին իւր. «Գիտեմ զի կին գեղեցիկ ես դու: Արդ եղիցի եթէ տեսանիցեն Եգիպտացիքն եւ ասիցեն, թէ կին նորա է սա. եւ սպանանիցեն զիս եւ զքեզ ապրեցուցանիցեն. ասասցես, թէ Քոյր նորա եմ. զի բարի լիցի ինձ վասն քո, եւ կեցցէ անձն իմ յաղագս քո»: Եւ եղեւ իբրեւ եմուտ Աբրամ յԵգիպտոս, եւ տեսեալ Եգիպտացւոցն զկինն զի գեղեցիկ էր յոյժ: Տեսին զնա եւ իշխանքն Փարաւոնի, եւ գովեցին զնա առաջի Փարաւոնի, եւ տարան զնա ի տուն Փարաւոնի: Եւ Աբրամու բարիս առնէին վասն նորա. եւ եղեն նորա խաշինք, անդեայք եւ էշք, ծառայք եւ աղախնայք, ջորիք եւ ուղտք: Եւ պատժեաց Աստուած զՓարաւոն պատժօք մեծամեծօք եւ չարօք եւ զտուն նորա վասն Սարայի կնոջն Աբրամու: Կոչեաց Փարաւոն զԱբրամ եւ ասէ ցնա. «Զի՞նչ գործեցեր զայդ ընդ իս, զի ոչ պատմեցեր, եթէ կին քո է: Ընդէ՞ր ասացեր, թէ Քոյր իմ է, եւ առի զդա ինձ կնութեան. եւ արդ աւանիկ կին քո առաջի քո, ա՛ռ եւ գնա՛ ի բաց»: Եւ պատուէր ետ արանց վասն Աբրամու յուղարկել զնա եւ զկին նորա եւ զամենայն որ ինչ էր նորա, եւ զՂովտ ընդ նմա:

Գլ. ԺԸ

Եւ երեւեցաւ նմա Աստուած առ կաղնեաւն Մամբրէի, մինչդեռ նստէր առ դուրս խորանի իւրոյ ի միջօրէի: Ամբարձեալ զաչս իւր եւ ետես, եւ ահա արք երեք կային ի վերոյ քան զնա. եւ իբրեւ ետես, ընթացաւ ընդ առաջ նոցա ի դրանէ խորանին իւրոյ եւ երկիր եպագ ի

վերայ երկրի, եւ ասէ. «Տէ՛ր, եթէ գտի շնորհս առաջի քո, մի՛ զանց առներ ի ծառայէ քումմէ. Այլ առցի սակաւ մի ջուր, եւ լուացցեն զոտս ձեր, եւ զովասջիք ընդ ծառովս. Եւ առիցս հաց եւ կերիջիք եւ ապա երթիջիք զճանապարհ ձեր. փոխանակ զի դարձարուք առ ծառայ ձեր: Եւ ասեն. «Այդպէ՛ս արա, որպէս ասացերդ»: Եւ պնդեցաւ Աբրահամ ի խորանն առ Սառա եւ ասէ ցնա. «Փութա՛ թրեա՛ գրիւս երիս ալեր նաշհոյ եւ արա նկանս: Եւ յանդեայ ընթացաւ Աբրահամ եւ առ որթ մի մատաղ եւ բարի և ետ ցպատանին եւ փութացոյց վաղվաղակի հասուցանել: Եւ առ կոգի եւ կաթն եւ զորթն, զոր հասոյց, եւ եդ առաջի նոցա եւ կերան. եւ նա կայր առաջի նոցա ընդ ծառովն: Եւ ասեն ցնա. «Ո՞ւր է Սառա կին քո»: Նա պատասխանի ետ եւ ասէ. «Ահաւանիկ ի խորանի անդ է»: Եւ ասէ. «Դարձեալ եկից առ քեզ ի ժամանակի յայսմիկ ի սոյն աւուրս, եւ ունիցի որդի Սառա կին քո: Եւ Սառա ունկն դնէր առ դրան խորանին, քանզի յետոյ նորա կայր: Եւ Աբրահամ եւ Սառա ծերացեալք էին եւ անցեալք զաւուրքք, եւ պակասեալ էր ի Սառայէ լինել ի կանանց օրինի[4]: Ծիծաղեցաւ Սառա ընդ միտս եւ ասէ. «Որ ինչ ցայժմ ոչ եղեւ ինձ՝ ա՞րդ լինիցի. եւ տէր իմ ծերացեալ է: Եւ ասէ Տէր ցԱբրահամ. «Զի՞ է զի ծիծաղեցաւ Սառա ընդ միտս իւր եւ ասէ, թէ արդարեւ ծնանիցի՞մ, զի ահա ես պառաւեալ եմ»: Միթէ տկարանայցէ՞ առ ի յԱստուծոյ բան. ի ժամանակի յայսմիկ դարձայց առ քեզ ի սոյն աւուրս, եւ եղիցի Սառայի որդի: Ժխտեաց Սառա եւ ասէ, թէ ոչ ծիծաղեցայ, քանզի երկեաւ: Եւ ասէ. «Ոչ այդպէս, այլ ծիծաղեցար»:

Եւ յարուցեալ անտի արանցն հայեցան ընդ երեսս Սոդոմացւոց եւ Գոմորացւոց. եւ Աբրահամ երթայր ընդ նոսա յուղարկել զնոսա: Եւ ասէ Տէր. «Միթէ թաքու՞ստ ինչ իցէ յԱբրահամէ ծառայէ իմմէ զոր ինչ գործելոց եմ: Այլ Աբրահամ լինելով լինիցի յազգ մեծ եւ ի բազում, եւ օրհնեսցին ի նա ամենայն ազգք երկրի: Քանզի գիտէի, եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց եւ տան իւրոյ յետ իւր՝ պահել զճանապարհս Տեառն եւ առնել զարդարութիւն եւ զիրաւունս. եւ ածցէ Տէր

Աստուած ի վերայ Աբրահամու զամենայն, զոր խօսեցաւ ընդ նմա»: Եւ ասէ Տէր. «Աղաղակ Սոդոմացւոց եւ Գոմորացւոց յաճախեաց, եւ մեղք նոցա մեծացան յոյժ: Եւ արդ իջեալ տեսից, եթէ ըստ աղաղակին նոցա, որ յիսն հասանէ, վճարիցե՞ն. ապա թէ ոչ՝ զի գիտացից»: Եւ դարձեալ անտի արանցն եկին ի Սոդոմ, եւ Աբրահամ կայր առաջի Տեառն:

Եւ մատուցեալ Աբրահամ ասէր. «Միթէ կորուսանիցէ՞ս զարդարն ընդ ամպարշտին, եւ լինիցի՞ արդարն իբրեւ զամպարիշտն. Եթէ իցեն յիսուն արդար ի քաղաքի, կորուսանիցե՞ս զնոսա եւ ո՞չ ներիցես ամենայն տեղեացն վասն յիսուն արդարոյն, եթէ իցեն ի նմա: Քաւ լիցի քեզ առնել զայն բան՝ սպանանել զարդարն ընդ ամպարշտի, եւ լինիցի արդարն իբրեւ զամպարիշտն. քաւ լիցի քեզ, որ դատիս զամենայն երկիր, մի՛ արասցես զայն դատաստան»: Եւ ասէ Տէր. «Եթէ գտցի ի Սոդոմ յիսուն արդար ի քաղաքի անդ, թողացուցից ամենայն տեղեացն վասն նոցա»: Պատասխանի ետ Աբրահամ և ասէ. «Այժմ սկսայ խօսել ընդ Տեառն, բայց ես հող եմ եւ մոխիր: Եթե պակասիցեն քան զյիսուն արդար հնգիւ չափ, կորուսանիցե՞ս վասն հնգիցն զամենայն քաղաքն»: Եւ ասէ. «Ոչ կորուսից, եթէ գտցի անդ քառասուն եւ հինգ»: Եւ յաւել եւս խօսել ընդ նմա եւ ասէ. «Իսկ եթէ գտցի անդ քառասուն»: Եւ ասէ. «Ոչ կորուսից վասն քառասնիցն»: Եւ ասէ. «Միթէ իցէ՞ ինչ, Տէ՛ր, եթէ խօսիցիմ: Իսկ եթէ գտցի անդ երեսուն»: Եւ ասէ. «Ոչ կորուսից, եթէ գտցի անդ երեսուն»: Եւ ասէ. «Որովհետեւ կալայ խօսել ընդ Տեառն, եթէ գտցի անդ քսան»: Եւ ասէ. «Ոչ կորուսից վասն քսանիցն»: Եւ ասէ. «Միթէ իցէ՞ ինչ, Տէ՛ր, եթէ խօսեցայց եւս մեւս անգամ. եթէ գտանիցի անդ տասն»: Եւ ասէ. «Ոչ կորուսից վասն տասանցն»: Եւ գնաց Տէր, իբրեւ լռեաց ի խօսելոյ անտի ընդ Աբրահամու, եւ Աբրահամ դարձաւ ի տեղի իւր:

Գլ. ԺԹ

Եւ եկին երկու հրեշտակքն ի Սոդոմ ընդ երեկս. եւ Ղովտ նստէր առ դրան Սոդոմացւոցն: Իբրեւ ետես Ղովտ, յարեաւ ընդ առաջ նոցա եւ երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց յերկիր եւ ասէ. «Ահաւասիկ ես, տեարք, եկայք ի տուն ծառայի ձերոյ, հանգերուք, եւ լուացից զոտս ձեր. եւ կանխեալ ընդ առաւօտս երթիջիք զճանապարհ ձեր»: Եւ ասեն. «Ոչ, այլ ի քաղաքամիջի աստ ագցուք»: Եւ բռնադատեաց զնա յոյժ, եւ խոտորեցան առ նա եւ մտին ի տուն նորա. եւ արար նոցա ընթրիս եւ բաղարջ եփեաց նոցա եւ կերան:

Մինչչեւ ի քուն մտեալ էր նոցա, եւ արք քաղաքին Սոդոմացւոց պատեցին զտունն յերիտասարդաց մինչեւ ցծերս, ամենայն ժողովուրդն ի միասին: Եւ կոչէին արտաքս զՂովտ եւ ասէին ցնա. «Ո՞ր են արքն, որ մտին առ քեզ գիշերի, ա՛ծ զնոսա առ մեզ զի գիտասցուք զնոսա»: Եւ ել առ նոսա Ղովտ արտաքոյ դրանն եւ զդուռն ձգեաց[5] զկնի իւր: Եւ ասէ ցնոսա. «Քա՛ւ լիցի ձեզ, եղբա՛րք, մի՛ գործէք զայդ չարիս: Են իմ երկու դստերք, որ զայր ոչ գիտեն[6], հանիցս զնոսա առ ձեզ, եւ արարէք ընդ նոսա, որպէս հաճոյ իցէ ձեզ. բայց միայն արանցդ այդոցիկ մի՛ ինչ մեզ առնիցէք, որովհետեւ մտին ընդ յարկաւ գերանաց իմոց»: Եւ ասեն. «Ի բաց կաց. մտեր բնակել պանդխտութեամբ, միթէ եւ դատաստա՞ն եւս դատել. այժմ եւ զքեզ եւս չարչարեսցուք առաւել քան զնոսա»: Եւ բռնադատէին զայրն՝ զՂովտ, յոյժ, եւ մերձ էին զդուրսն խորտակել: Եւ ձգեալ արանցն զձեռս իւրեանց կորզեցին յինքեանս զՂովտ ի տուն անդր, եւ զդուրս տանն փակեցին. Եւ զարսն, որ առ դուրս տանն կային, հարին կուրութեամբ ի փոքուէ մինչեւ ցմեծն, եւ լքան խնդրել զդուրսն:

Եւ ասեն արքն ցՂովտ. «Է՞ ոք քո աստ փեսայ կամ որդիք կամ դստերք, կամ այլ ոք քո իցէ՞ ի քաղաքի աստ. հա՛ն զնոսա ի տեղւոջէ յայսմանէ: Զի կորուսանելոց եմք մեք զքաղաքս զայս, զի բարձրացաւ աղաղակ սոցա առաջի Տեառն, եւ առաքեաց զմեզ Տէր սատակել զսա»: Եւ Ղովտ եւ խօսեցաւ ընդ փեսայս իւր, որ առնելոց էին

զդստերս նորա, եւ ասէ. «Արի՛ք եւ ելէ՛ք ի տեղւոջէ աստի յայսմանէ, զի սատակէ Տէր զքաղաքս»: Եւ թուէր ծաղր առնել յաչս փեսայից իւրոց:

Եւ իբրեւ եղեւ առաւօտ, փութացուցանէին հրեշտակքն զՂովտ եւ ասէին. «Արի՛ առ զկին քո եւ զերկուս դստերս քո զոր ունիս, եւ ե՛լ աստի, զի մի՛ եւ դու կորնչիցիս ընդ անօրէնութիւնս քաղաքիդ»: Եւ նոքա խռովեցան. եւ կալան հրեշտակքն զձեռանէ նորա եւ զձեռանէ կնոջ նորա եւ զձեռանէ երկուց դստերաց նորա, զի խնայեաց Տէր ի նա եւ հանին զնա եւ եդին արտաքոյ քաղաքին: Եւ եղեւ իբրեւ հանին զնոսա արտաքս, ասեն. «Ապրեցո՛ զանձն քո, մի՛ դառնայցես յետս, եւ մի՛ կայցես յամենայն կողմանս աշխարհիդ. զերծի՛ր ի լեառն, գուցէ ընդ նոսա ըմբռնիցիս»: Եւ ասէ Ղովտ ցնոսա. «Աղաչեմ, Տէ՛ր. որովհետեւ եգիտ ծառայ քո ողորմութիւն առաջի քո, եւ մեծ արարեր զարդարութիւն քո, զոր առնես յիս ապրել անձին իմոյ. եւ արդ ես ոչ կարեմ զերծանել ի լեառն, գուցէ հասանիցեն ինձ չարիքն եւ մեռանիցիմ: Ահա քաղաքս այս մերձ է անկանել ի նա, որ է փոքրիկ, անդ ապրեցայց . (եւ չէ՞ փոքր,) եւ կեցցէ անձն իմ վասն քո»: Եւ ասէ ցնա. «Ահաւասիկ արարի մեծարանս երեսաց քոց եւ ի բանիդ յայդմիկ՝ չկործանել զքաղաքն, վասն որոյ խօսեցար: Եւ արդ փութա՛ զերծանել ի նա, զի ոչ կարեմ առնել իրս ինչ, մինչեւ անկանիցիս անդր»: Վասն այնորիկ կոչեաց զանուն քաղաքին Սեգովր:

---

[1] բարգավաճեցնի
[2] ոչինչ պակասէ ի նոցանէ - ոչինչ չի խանգարում նրանց
[3] այստեղ՝ ստրուկներին
[4] պակասեալ էր ի Սառայէ լինել ի կանայսց օրինի - Սառան կորցրել էր ծննդաբերելու հատկությունը
[5] փակեց
[6] զայր ոչ գիտեն - տղամարդու չեն մոտեցել

ԵԼՔ

Գլ.Գ

Եւ Մովսէս արածէր զխաշինս Յոթորայ աներոյ իւրոյ՝ քրմին Մադիանացւոց, եւ ած զխաշինս յանապատ եւ եկն ի լեառնն Աստուծոյ ի Քորեբ: Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ի միջոյ մորենւոյ. եւ տեսանէր զի մորենին վառեալ էր հրով, եւ ոչ այրէր մորենին: Եւ ասէ Մովսէս. «Անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ. զի՞ է զի ոչ այրիցի մորենին»: Իբրեւ ետես Տէր, եթէ մերձենայ տեսանել, կոչեաց զնա Տէր ի միջոյ մորենւոյն, ասէ. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս». եւ նա ասէ. «Զի՞ է»: Եւ ասէ. «Մի՛ մերձենայր այսր. լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ, յորում կաս դու ի դմա, երկիր սուրբ է»: Եւ ասէ ցնա. «Ես եմ Աստուած հօր քո, Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ»: Եւ դարձոյց Մովսէս զերեսս իւր, քանզի երկնչէր հայել առաջի Աստուծոյ:

Եւ ասէ Տէր ցՄովսէս. «Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ, որ յԵգիպտոս, եւ լուայ աղաղակի նոցա ի գործավարացն իւրեանց[1], զի գիտեմ զվիշտս նոցա. Եւ իջի փրկել զնոսա ի ձեռաց Եգիպտացւոցն, եւ հանել զնոսա յերկրէն յայնմանէ, եւ տանել զնոսա յերկիր բարի եւ յընդարձակ, յերկիր, որ բղխէ զկաթն եւ զմեղր, յերկիրն Քանանացւոց եւ Քետացւոց եւ Ամովրհացւոց եւ Փերեզացւոց եւ Խեւացւոց եւ Գերգեսացւոց եւ Յեբուսացւոց: Եւ արդ աւասիկ աղաղակ որդոցն Իսրայելի հասեալ է առ իս, եւ տեսի ես զնեղութիւն, զոր նեղեն զնոսա Եգիպտացիքն: Եւ արդ եկ առաքեցից զքեզ առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց, եւ հանցես զժողովուրդ իմ՝ զորդիսն Իսրայելի, յերկրէն Եգիպտացւոց»: Եւ ասէ Մովսէս ցԱստուած. «Ո՞վ եմ ես, զի երթայցեմ առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց եւ հանիցեմ զորդիսն Իսրայելի յերկրէն Եգիպտացւոց»: Եւ ասէ. «Ես եղէց ընդ քեզ. եւ այս եղիցի քեզ նշան, թէ ես առաքեցի զքեզ հանել զժողովուրդ իմ յԵգիպտոսէ, պաշտեսջիք զԱստուած ի լերինս յայսմիկ»:

Գլ. ԺԹ

Յամսեանն երրորդի ելանելոյ որդւոցն Իսրայելի յերկրէն Եգիպտացւոց, յաւուրն յայնմիկ եկին յանապատն Սինայ: Զուեցին յՌափիդիմայ եւ եկին յանապատն Սինայ, եւ բանակեցան յանապատի անդ. եւ բանակեցաւ Իսրայէլ անդ հանդէպ լերինն: Եւ Մովսէս ել ի լեառնն Աստուծոյ. եւ կոչեաց զնա Աստուած ի լեռնէ անտի եւ ասէ. «Այսպէս ասասցես տանն Յակոբայ, եւ պատմեսցես որդւոցն Իսրայելի. «Դուք ձեզէն տեսէք որչափ ինչ արարի ընդ Եգիպտացիսն եւ առի զձեզ իբրեւ ի վերայ թեւոց արծուոյ եւ յարեցի[2] զձեզ առ իմ: Եւ արդ՝ եթէ լսելով լուիցէք ձայնի իմում եւ պահիցէք զուխտն իմ, եղիջիք դուք ինձ ժողովուրդ սեպհական յամենայն ազգաց. զի իմ է ամենայն երկիր: Եւ դուք եղիջիք ինձ ի թագաւորութիւն եւ ի քահանայութիւն եւ յազգ սուրբ. զայս բանս խօսեսցիս ընդ որդիսն Իսրայելի»:

Եկն Մովսէս եւ կոչեաց զծերս ժողովրդեանն եւ եդ առաջի նոցա զամենայն զբանս զայսոսիկ, զոր պատուիրեաց նմա Աստուած: Պատասխանի ետ ժողովուրդն միահամուռ եւ ասեն. «Զամենայն ինչ, զոր ասաց Աստուած, արասցուք եւ լուիցուք»: Եւ տարաւ Մովսէս զպատգամս[3] ժողովրդեանն առ Աստուած:

Եւ ասէ Տէր ցՄովսէս. «Ահաւասիկ ես եկից առ քեզ սեամբ ամպոյ, զի լուիցէ ժողովուրդն, մինչ ես ընդ քեզ խօսիցիմ, եւ հաւատասցեն քեզ յաւիտեան»: Եւ պատմեաց Մովսէս զբանս ժողովրդեանն առ Տէր: Եւ ասէ Տէր ցՄովսէս. «Է՛ղ դի՛ր վկայութիւն ժողովրդեանն եւ սրբեա՛ զնոսա այսօր եւ վաղիւ, եւ լուասցեն զձորձս իւրեանց, եւ պատրաստեցին[4] աւուրն երրորդի. զի յաւուրն երրորդի իջցէ Տէր յանդիման ամենայն ժողովրդեանդ ի լեառնդ Սինա: Եւ զատուսցես զժողովուրդն շուրջ[5] եւ ասասցես, ''Զգոյշ կացէք անձանց յելանելոյ ի լեառնն եւ մերձենալոյ ի նա, զի ամենայն, որ մերձեսցի ի լեառնն, մահու սատակեսցի: Մի՛ մերձեսցի ի նա ձեռն, քանզի քարամբ քարկոծեսցի եւ նետիւք խոցոտիցի. եթէ անասուն իցէ եւ եթէ մարդ, մի՛ կեցցէ. այլ յորժամ ձայնքն եւ փողն եւ ամպն վերասցին ի լեռնէ անտի, ելանիցեն նոքա ի լեառնն''»:

Եւ էջ Մովսէս ի լեռնէ անտի առ ժողովուրդն եւ սրբեաց զնոսա. եւ լուացին զձորձս իւրեանց: Եւ ասէ ցժողովուրդն. «Պատրա՛ստ լերուք զերիս աւուրս. ի կանայս մի՛ մերձենայք»:

Եւ եղեւ յաւուրն երրորդի ընդ առաւօտսն ձայնք[6] եւ փայլատակունք եւ ամպ միգախառն ի վերայ լերինն Սինայի լինէին, եւ ձայն փողոյն հնչէր մեծաձայն, եւ զարհուրեցաւ ամենայն ժողովուրդն, որ էր ի բանակի անդ: Եւ եհան Մովսէս զժողովուրդն ընդ առաջ Աստուծոյ ի բանակէ անտի եւ կացոյց շուրջ զստորոտով լերինն Սինայի: Եւ լեառն Սինա ծխէր առ հասարակ, քանզի իջեալ կայր Աստուած ի վերայ նորա հրով, եւ ելանէր ծուխ նորա իբրեւ զծուխ հնոցի, եւ զարհուրեցաւ ամենայն ժողովուրդն յոյժ: Քանզի հասանէին ձայնք փողոյն ի բաց, յառաջացեալք եւ սաստկացեալք յոյժ, Մովսէս խօսէր, եւ Աստուած տայր նմա ձայն: Եւ էջ Տէր ի լեառնն Սինա, ի գլուխ լերինն. եւ կոչեաց Տէր զՄովսէս ի գլուխ լերինն, եւ ել անդր Մովսէս: Եւ խօսեցաւ Աստուած ընդ Մովսիսի եւ ասէ. «Է՛ղ, դի՛ր վկայութիւն ժողովրդեանդ, զուցէ մերձենայցեն հայել առ Աստուած եւ անկանիցին բազումք ի նոցանէ: Եւ քահանայքն որ մերձենան առ Աստուած՝ սրբեսցին, զուցէ սատակիցէ ի նոցանէ Տէր»: Եւ ասէ Մովսէս ցԱստուած. «Ոչ կարէ ժողովուրդն ելանել ի լեառնն Սինա, զի դու ինքնին ուխտեցեր մեզ եւ ասացեր, եթէ ''Զատուսցես զլեառնս եւ սրբեսցես զդա''»:[7] Եւ ասէ ցնա Տէր. Ե՛րթ է՛ղ եւ ե՛լ այսրէն դու եւ Ահարոն ընդ քեզ. բայց քահանայքն եւ ժողովուրդն մի՛ ժտեսցին ելանել առ Աստուած, զուցէ սատակիցէ ի նոցանէ Տէր»: Էջ Մովսէս առ ժողովուրդն եւ ասէ ցնոսա:

Գլ. Ի

Խօսեցաւ Տէր զամենայն զպատգամս զայսոսիկ եւ ասէ.

«Ե՛ս եմ Տէր Աստուած քո, որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց՝ ի տանէ ծառայութեան:

Մի՛ եղիցին քեզ այլ Աստուածք բաց յինէն:

Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս ի վեր է, եւ որ ինչ ի յերկրի ի խոնարհ, և որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի: Մի՛ երկիր պագանիցես նոցա եւ մի՛ պաշտեսցես զնոսա, զի ես եմ Տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց որդւոց, յերիս եւ ի չորս ազգս ատելեաց իմոց. եւ առնեմ զողորմութիւն ի հազար ազգս[8] սիրելեաց իմոց, եւ ոյք պահեն զհրամանս իմ:

Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց. զի ոչ սրբեսցէ Տէր զայն, որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց:

Յիշեսջի՛ր զօրն շաբաթուց սրբել զնա: Զվեց օր գործեսցես եւ արասցես զամենայն զգործս քո: Յաւուրն եւթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քո. մի՛ գործեսցես ի նմա զամենայն գործ քո, դու եւ ուստր քո եւ դուստր քո, ծառայ քո եւ աղախին քո, եզն քո եւ էշ քո եւ ամենայն անասուն քո, եւ եկն քո եւ պանդուխտն, որ ի քեզ, զի զվեց օր արար Տէր Աստուած զերկիր եւ զերկիր եւ զծով եւ զամենայն, որ ի նոսա, եւ հանգեաւ յաւուրն եւթներորդի. վասն այնորիկ օրհնեաց Տէր զօրն եւթներորդ եւ սրբեաց զնա:

Պատուեա՛ զհայր քո եւ զմայր քո, զի քեզ բարի լիցի, եւ զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրին բարութեան, զոր Տէր Աստուած քո տացէ քեզ:

Մի՛ սպանաներ:

Մի՛ շնար:

Մի՛ գողանար:

Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ:

Մի՛ ցանկանար տան ընկերի քո եւ մի՛ անդոյ նորա. մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, եւ մի՛ ծառայի նորա, եւ մի՛ աղախնոյ նորա, եւ մի՛ եզին նորա, եւ մի՛ իշոյ նորա, եւ մի՛ ամենայն անասնոց նորա եւ մի՛ ամենայնի, զինչ ընկերի քո իցէ»:

Եւ ամենայն ժողովուրդն տեսանէր զձայն եւ զճառագայթսն եւ զբարբառ փողոյն եւ զլեառնն ծխեալ: Զահի հարաւ ամենայն ժողովուրդն եւ խորշեցաւ եկաց ի հեռաստանէ. Եւ ասեն ցՄովսէս. «Դու խօսեաց ընդ մեզ եւ լուիցուք, եւ մի՛ խօսեսցի ընդ մեզ Աստուած, զուցէ մեռանիցիմք»: Եւ ասէ զնոսա Մովսէս. «Քաջալերեցարո՛ւք, զի վասն փորձելոյ զձեզ եկն առ ձեզ Աստուած, որպէս զի լինիցի երկեւղ նորա ի ձեզ, զի մի՛ մեղանչիցէք»: Եւ կայր ժողովուրդն ի հեռաստանէ. եւ Մովսէս եմուտ ի մէգն, ուր էր Աստուած:

Եւ ասէ Տէր ցՄովսէս. ''Այսպէս ասասցես դու տանդ Յակոբայ եւ պատմեսցես որդւոցդ Իսրայելի. «Դուք ձեզէն տեսէք, զի յերկնից խօսեցայ ընդ ձեզ: Մի՛ առնիցէք ձեզ աստուածս ոսկեղէնս եւ աստուածս արծաթեղէնս: Սեղան հողեղէն արասջիք ինձ եւ մատուսջիք ի նմա զողջակէզս ձեր եւ զփրկութիւնս ձեր, զոչխարս ձեր եւ զարջառս ձեր, յամենայն տեղիս, ուր անուանեցից զանուն իմ անդ, եկից առ քեզ եւ օրհնեցից զքեզ: Ապա եթէ սեղան ի քարանց առնիցես ինձ, մի՛ շինեսցես զնոսա կոփածոյս, քանզի զձեռին գործին քո մերձեցուցեր ի նա, եւ պղծեալ է: Մի՛ ելանիցես ընդ աշտիճանս ի սեղան իմ, զի մի՛ մերկասցին առականք ի վերայ նորա»'':

---

[1] ի գործավարացն իւրեանց - իրենց վերակացուների պատճառով
[2] այստեղ՝ բարձրացրի, բերեցի
[3] ասածը
[4] փխ. պատրաստեսցին - պատրաստ լինեն
[5] շուրջանակի, բոլոր կողմերից
[6] որոտներ
[7] զատուսցես զլեառնս եւ սրբեսցես զդա - մարդկանց ու լեռան միջև տարածություն կթողնես և լեռը սուրբ կհռչակես
[8] ի հազար ազգս - մինչև հազարերորդ սերնդին

ԴԱՏԱՒՈՐՔ

Գլ. ԺԶ

Եւ եղեւ ետ այսորիկ սիրեաց կին մի առ եզերբ հեղեղատին Սորեկայ, եւ անուն նորա Դալիլա: Եւ ելին առ նա նախարարք այլազգեացն եւ ասեն. «Պատրեա՛ զնա եւ տե՛ս ի՛ւ իցէ զօրութիւն նորա մեծ, եւ կամ ի՛վ կարասցուք նմա հնար գտանել եւ կապել զնա առ ի տկարացուցանել զնա. եւ մեք տացուք քեզ այր իւրաքանչիւր հազար եւ հարեւր արծաթոյ»: Եւ ասէ Դալիլա ցՍամսոն. «Պատմեա՛ ինձ ի՛ւ իցէ զօրութիւն քո մեծ, եւ ի՛ւ կապիցիս առ ի տկարացուցանելոյ զքեզ»: Եւ ասէ ցնա Սամսոն. «Եթէ կապիցեն զիս եւթն ջլօք դալարովք չվտտելովք, տկարացայց եւ եղէց իբրեւ զմի ի մարդկանէ»: Եւ բերին առ նա նախարարք այլազգեացն եւթն ջիլս դալարս անվտիտս, եւ նա կապեաց զնա նոքօք: Եւ դարան նստէր նմա ի շտեմարանի. եւ ասէ ցնա. «Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսո՛ն»: Եւ խզեաց զջիլսն, զոր օրինակ խզիցի քուղ ի թօթափելոյ, յորժամ ի հուր հոտոտիցի, եւ ոչ ծանուցաւ զօրութիւն նորա: Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն. «Ահա խաբեցեր զիս եւ խօսեցար սուտ. գոնէ արդ պատմեա՛ ինձ, թէ ի՛ւ կապիցիս»: Եւ ասէ զնա. «Եթէ կապելով կապեսցեն զիս եւթն կարովք նորովք, որովք չիցէ գործեալ գործ, տկարացայց եւ եղէց իբրեւ զմի ի մարդկանէ»: Եւ առ Դալիլա կարս նորս, եւ կապեաց զնա նոքօք եւ ասէ ցնա. «Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսո՛ն». եւ դարան նստէր նմա ի շտեմարանի. եւ խզեաց զայն ի բազկաց իւրոց իբրեւ զասղանի[1]: Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն. «Մինչեւ ցե՞րբ խաբիցես զիս եւ խօսիցիս ընդ իս սուտ. արդ պատմեա՛ ինձ ի՛ւ կապիցիս: Եւ ասէ ցնա. «Եթէ անկցես զեւթանեսին գլխակս գլխոյ իմոյ ընդ ազբին եւ վարեսցես ցցովք ընդ որմն, եղէց տկարացեալ իբրեւ զմի ի մարդկանէ»: Եւ ննջեցոյց զնա Դալիլա եւ ա՛ռ զեւթանեսին գլխակս գլխոյ նորա հանդերձ ազբամբն եւ վարեաց ցցովք ընդ որմն եւ ասէ ցնա. «Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսո՛ն»: Եւ զարթեաւ ի քնոյ իւրմէ եւ կորզեաց զցիցսն հանդերձ ոստայնիւն եւ ազբամբն

յորմոյ անտի, եւ ոչ ծանուցաւ զօրութիւն նորա: Եւ ասէ ցնա Դալիլա. «Զիա՞րդ ասես, թէ Սիրեցի զքեզ, եւ սիրտ քո չէ ուղիղ ընդ իս. այս երիցս անգամ խաբեցեր զիս եւ ոչ պատմեցեր ինձ, թէ ի՛ւ իցէ զօրութիւն քո մեծ»: Եւ եղեւ իբրեւ վտանգեաց զնա բանիւք զգիշերն ողջոյն եւ թախանձեցոյց զնա, եւ պարտասեցոյց զնա մինչեւ ցմահ[2], - պատմեաց նմա զամենայն ինչ ի սրտէ իւրմէ, եւ ասէ ցնա. «Ածելի ոչ ելցէ ի գլուխ իմ, զի ուխտաւոր Աստուծոյ եմ ես յորովայնէ մօր իմոյ. ապա թէ գերծուցում, մեկնեսցի յինէն զօրութիւն իմ, եւ տկարացայց եւ եղեց իբրեւ զամենայն մարդիկ»: Իբրեւ ետես Դալիլա, եթէ պատմեաց նմա զամենայն ինչ ի սրտէ իւրմէ, առաքեաց կոչեաց զնախարարս այլազգեացն եւ ասէ. «Ելէ՛ք միանգամայն, զի պատմեաց ինձ զամենայն ի սրտէ իւրմէ»: Եւ ելին առ նա ամենայն նախարարք այլազգեացն եւ բերին զարծաթն ի ձեռս իւրեանց: Եւ ննջեցոյց զնա ի մէջ ծնգաց իւրոց. եւ կոչեաց վարսավիրայ եւ եգերծ զեւթանեսին գլխակս գլխոյ նորա. եւ սկսաւ թօշնել, եւ մեկնեցաւ ի նմանէ զօրութիւն նորա: Եւ ասէ Դալիլա. «Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսո՛ն»: Եւ զարթեաւ ի քնոյ իւրմէ եւ ասէ. «Ելից եւ արարից որպէս միշտն եւ թօթափեցից»: Եւ նա ոչ գիտէր, թէ Տէր մեկնեցաւ ի նմանէ: Եւ կալան զնա այլազգիքն եւ բրեցին զաչս նորա. եւ իջուցին զնա ի Գազա եւ կապեցին զնա երկաթի կապանօք. եւ աղայր ի տան բանտին:

Եւ սկսաւ մազ գլխոյ նորա բուսանել յետ գերծելոյն: Եւ իշխանք այլազգեացն ժողովեցան զոհել զոհ մեծ Դագոնայ աստուծոյն իւրեանց եւ ուրախ լինել. եւ ասէին. «Մատնեաց աստուած մեր զՍամփսոն թշնամի մեր ի ձեռս մեր»: Իբրեւ տեսին ժողովուրդն, օրհնէին զաստուած իւրեանց. զի ասացին, թէ «Մատնեաց աստուած մեր զթշնամին մեր ի ձեռս մեր եւ զապականիչ երկրի մերոյ, որ յաճախեաց զվիրաւորս մեր»: Եւ եղեւ իբրեւ զուարթացան սիրտք իւրեանց, ասեն. «Կոչեցէ՛ք զՍամփսոն ի տանէ բանտին, եւ խաղասցէ առաջի մեր»: Եւ կոչեցին զՍամփսոն ի տանէ բանտին եւ խաղային նովաւ. եւ կա-

ցուցին զնա ի մէջ երկուց սեանցն: Եւ ասէ Սամփսոն ցպատանին, որ ունէր զձեռանէ նորա. «Թո՛յլ տուր ինձ եւ զննեցից զսիւնս, յորոց վերայ տունս հաստատեալ կայ, եւ յեցայց ի նոսա»: Եւ տունն լի էր արամբք եւ կանամբք. եւ անդ ամենայն նախարարք այլազգեացն. եւ ի տանիսն իբրեւ երեք հազարք, արք եւ կանայք, որ տեսանէին զխաղն Սամփսոնի: Եւ աղաղակեաց Սամփսոն առ Տէր եւ ասէ. «Տէ՛ր, Տէ՛ր զօրութեանց, յիշեա՛ զիս եւ զօրացո՛ զիս զայս եւս մի նուագ, Աստուա՛ծ, եւ խնդրեցից զվրէժխնդրութիւն իմ փոխանակ երկուց աչաց իմոց յայլազգեաց աստի»: Եւ բուռն եհար Սամփսոն զերկոցունց սեանցն միջնոց, յորոց վերայ տունն հաստատեալ կայր, եւ յեցաւ ի նոսա, ի մին աջով իւրով եւ ի մեւսն ձախով իւրով: Եւ ասէ Սամփսոն. «Մեռցի անձն իմ ընդ այլազգիսս»: Եւ շարժեաց զօրութեամբ. եւ անկաւ տունն ի վերայ ամենայն նախարարացն եւ ի վերայ ամենայն ժողովոյն, որ ի նմա. եւ էին մեռեալքն, զորս մեռոյց Սամփսոն ի մահուն իւրում, առաւել քան զորս սպան ի կենդանութեան իւրում: Եւ իջին եղբարք նորա եւ ամենայն տուն հօր նորա եւ բարձին եւ հանին թաղեցին զնա ի մէջ Սարաայ եւ ի մէջ Եսթաւուղայ ի գերեզմանի Մանովայ հօր իւրոյ. եւ նա դատեաց զԻսրայէլ[3] ամս քսան:

---

[1] իբրեւ զասղանի - ասեղի թելի նման
[2] մինչեւ ցմահ - սպանելու չափ
[3] դատեաց զԻսրայէլ - Իսրայելում դատավոր էր եղել

ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

Գլ. ԺԷ

Եւ ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ, եւ գումարեցան ի Սոկքով Հրէաստանի. եւ բանակեցան ընդ Սոկքով եւ ընդ Ազեկա յԱփեսդոմին: Եւ Սաւուղ եւ արք Իսրայելի ժողովեցան եւ նոքա ի Հովիտսն եւ ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն: Եւ այլազգիքն կային ի վերայ լերինն յայնմ կողմանէ, եւ Իսրայէլ կայր ի վերայ լերինն յայսմ կողմանէ, եւ Հովիտն ի մէջ նոցա: Եւ ել այր զօրաւոր ի ճակատէ այլազգեացն, Գողիադ անուն նորա, ի Գեթայ. բարձրութիւն նորա վեց կանգուն եւ թզաւ, եւ սաղաւարտ ի գլուխ նորա, եւ զրահս վերտս զգեցեալ. եւ կշիռ զրահից նորա հինգ հազար սիկղ պղնձոյ եւ երկաթոյ: Եւ սռնապանք պղնձիք ի վերայ բարձից նորա, եւ վահան պղնձի ի վերայ թիկանց նորա: Եւ բուն գեղարդեան նորա իբրեւ զստորի ոստայնանկաց, եւ տէգ նորա ի վեց հարեւր սկեղէ երկաթոյ. եւ զինակիր նորա առաջի նորա երթայր: Եկն եկաց, ձայն ետ ի ճակատն Իսրայէլի եւ ասէ ցնոսա. «Ընդէ՞ր ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր. ո՞չ ապաքէն ես այլազգի եմ, եւ դուք Եբրայեցիք՝ ծառայք Սաւուղայ. ընտրեցէ՛ք դուք ձեզ այր մի, եւ իջցէ առ իս: Եթէ կարասցէ կռուել ընդ իս եւ հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից եւ հարից զնա, եղիջիք դուք մեզ ի ծառայս եւ ծառայեսջիք մեզ»: Եւ ասէ այլազգին. «Ահաւասիկ ես նախատեցի[1] զճակատդ Իսրայէլի յաւուր յայսմիկ. տո՛ւք այր մի եւ ես եւ նա մենամարտեսցուք երկոքեան»: Իբրեւ լուաւ Սաւուղ եւ ամենայն Իսրայել զբանս այլազգւոյն, զահի հարան եւ երկեան յոյժ:

Եւ էր այր որդի առն Եփրաթացւոյ, եւ նա ի Բեթղեհեմէ Յուդայ[2], եւ անուն նորա Յեսսէ. եւ էին նորա որդիք ութ. եւ այրն յաւուրս Սաւուղայ ծերացեալ հասեալ յարս[3]: Եւ գնացին երեք որդիքն Յեսսեայ մեծագոյնք՝ երթեալ զհետ Սաւուղայ ի պատերազմ. եւ անուանք որդւոց նորա երթելոց ի պատերազմ, Եղիաբ անդրանիկ նո-

բա, եւ երկրորդ նորա Աբինադաբ, եւ երրորդ նորա Սամաա: Եւ Դաւիթ էր կրտսեր եւ երեքին մեծագոյնքն երթեալ էին զհետ Սաւուղայ: Եւ Դաւիթ գնացեալ դարձաւ ի Սաւուղայ արածել զոչխարս հօր իւրոյ ի Բեթղեհեմ: Եւ մատուցեալ այլազգւոյն՝ կանխեալ եւ անարգանեալ[4] արձանանայր աւուրս քառասուն:

Եւ ասէ Յեսսէ ցԴաւիթ ցորդի իւր. «Ա՛ռ դու եղբարց քոց զարդու փոխնդոյս այսորիկ եւ զտասն նկանակս զայսոսիկ եւ պնդեա՛ ի բանակն եւ տո՛ւր եղբարց քոց: Եւ զտասն մաճառակս զկաթին տարցես հազարապետին. եւ տեսցես զողջոյն եղբարց քոց, եւ եթէ պէտք ինչ իցեն նոցա, իմասցիս»: Եւ Սաւուղ եւ ամենայն այր Իսրայելացի էին ի Հովիտս Կաղնւոյն, պատերազմեալ[5] ընդ այլազգիսն:

Եւ կանխեաց Դաւիթ ընդ առաւօտն եւ եթող զոչխարսն ի տուարածականսն, առ եւ գնաց, որպէս եւ հրամայեաց նմա Յեսսէ. եւ եկն ի տափարակն եւ ի զօրն որ ելանէր ի ճակատն, եւ աղաղակեցին ի պատերազմին[6], Եւ ճակատեցան Իսրայելացիքն եւ այլազգիքն հանդէպ միմեանց ճակատ առ ճակատ: Եւ եթող Դաւիթ զկարասին յինքենէ ի ձեռն վանապանին, եւ ընթացաւ ի ճակատն, եւ եկն եհարց զողջունէ եղբարցն իւրոց: Եւ մինչդեռ նա խօսէր, ահա այրն Յամինացի ելանէր, Գողիադ անուն նորա, Փղշտացի ի Գեթայ՝ ի ճակատուց այլազգեացն, եւ խօսեցաւ ըստ նմին բանից, եւ լուաւ Դաւիթ: Եւ ամենայն Իսրայէլ ի տեսանել իւրեանց զայրն՝ փախեան յերեսաց նորա եւ զարհուրեցան յոյժ: Եւ ասէ այր Իսրայելի, եթէ ''Տեսանէ՞ք զայրն զայն, որ ելանէ, զի նախատել ելանէ զԻսրայէլ. եւ եղիցի այր որ սպանանիցէ զնա, մեծացուսցէ զնա արքայ յոյժ մեծութեամբ, եւ զդուստր իւր տացէ նմա կնութեան, եւ զտուն հօր նորա արասցէ ազատ ի մէջ Իսրայելի»: Եւ խօսեցաւ Դաւիթ ընդ արսն, որ շուրջ կային զնովաւ եւ ասէ. «Զի՞նչ առնիցի առն որ հարկանիցէ զայլազգին զայն եւ բառնայցէ զնախատինս յԻսրայէլէ, զի զի՞նչ է այլազգին այն անթլփատ, զի նախատեաց զճակատս Աստուծոյ կենդանւոյ»: Եւ խօսեցաւ ընդ նմա ժողովուրդն ըստ նմին բանից[7] եւ ասէ. «Այնպէս

արասցի առն, որ սպանանիցէ զնա»: Իբրեւ լուաւ Եղիաբ եղբայր նորա երէց զխօսել ընդ արսն, բարկացաւ սրտմտութեամբ Եղիաբ Դաւթի եւ ասէ. «Ընդէ՞ր բնաւ իջեր այսր եւ յո՞յր ձեռն թողեր զսակաւ ոչխարական յանապատի անդ. ես գիտեմ զհպարտութիւն քո եւ զչարութիւն սրտի քո, զի վասն տեսանելոյ զպատերազմս իջեր»: Եւ ասէ Դաւիթ. «Եւ արդ զի՞նչ արարի. ո՞չ ապաքէն բանք իցեն[8]»: Եւ դարձաւ ի նմանէ ի մեւս կողմն եւ խօսեցաւ ըստ նմին բանից. եւ ետ նմա պատասխանի ժողովուրդն ըստ առաջնոյ բանիցն:

Եւ լու եղեն բանքն, զոր խօսեցաւ Դաւիթ, եւ պատմեցին առաջի Սաւուղայ, եւ ա՛ռ զնա առ ինքն: Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. «Մ՛ի անկցի սիրտ տեառն իմոյ ի վերայ իւր. ծառայ քո երթիցէ եւ մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ»: Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. «Գուցէ ոչ կարիցես երթալ կռուել ընդ այլազգւոյն, զի դու մանուկ ես, եւ նա այր պատերազմող ի մանկութենէ իւրմէ»: Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. «Արածէր ծառայ քո զխաչինս հօր իւրոյ, եւ յորժամ գայր առեւծ կամ արջ եւ առնոյր ոչխար ի հօտէ անտի, ելանէի զհետ նորա եւ հարկանէի զնա եւ կորզէի ի բերանոյ նորա. եւ եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփողից նորա եւ հարկանէի եւ սպանանէի զնա: Զառեւծ եւ զարջ սատակէր ծառայ քո. եւ եղիցի այլազգին անթլփատ իբրեւ զմի ի նոցանէն. եւ արդ ո՞չ երթայց սատակեցից զնա. եւ բարձից այսօր զնախատինս յԻսրայելէ, զի ո՞ ոք է այն անթլփատ որ նախատեաց զբանակս Աստուծոյ կենդանւոյ»: Եւ ասէ Դաւիթ. «Տէր Աստուած, որ ապրեցոյց զիս ի ձեռաց առիւծուն, եւ ի ձեռաց արջոյն, նոյն ապրեցուսցէ զիս ի ձեռաց այլազգւոյն անթլփատին այնորիկ»: Եւ ասէ Սաւուղ. «Ե՛րթ, եւ Տէր եղիցի ընդ քեզ»: Եւ զգեցոյց Սաւուղ Դաւթի զվարպանակս իւր եւ զսաղաւարտ պղնձի ի գլուխ նորա, եւ ագոյց նմա զրահս: Եւ ած Դաւթի զսուսեր իւր ի վերայ վարպանակացն. եւ գթեաց ի գնալն մի անգամ եւ երկիցս, եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. «Ոչ կարեմ երթալ սոքօք, զի չեմ հմուտ»: Եւ հանին զայն ի նմանէ:

Եւ ա՛ռ զցուպն իւր ի ձեռին իւրում եւ ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս ի հեղեղատէն եւ եդ զնոսա ի հովուական մախաղին, յոր սովոր էր զքարն ժողովել, եւ զպարսն ի ձեռին իւրում. եւ մերձեցաւ առ այրն այլազգի: Եւ գնայր գայր այլազգին եւ մերձենայր առ Դաւիթ. եւ այր վահանակիր առաջի նորա: Իբրեւ հայեցաւ այլազգին եւ ետես զԴաւիթ, արհամարհեաց զնա, զի էր պատանեակ, խարտեաշ եւ աչօք գեղեցիկ: Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. «Զի՞րդ. շո՞ւն եմ ես զի ցպով եւ քարամբք գաս ի վերայ իմ»: Եւ ասէ Դաւիթ. «Նա եւ վատթար եւս ես քան զշուն»: Եւ նզովեաց այլազգին զԴաւիթ դիւօքն իւրովք: Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. «Ե՛կ առ իս եւ տաց զմարմին քո թռչնոց երկնից եւ գազանաց երկրի»: Եկ ասէ Դաւիթ ցայլազգին. «Դու գաս ի վերայ իմ սրով եւ գեղարդեամբ եւ ասպարաւ, եւ ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց ճակատուս Իսրայելի, զոր նախատեցեր այսօր: Եւ փակեսցէ զքեզ Տէր այսօր ի ձեռս իմ, եւ սպանից զքեզ եւ առիցս զգլուխ քո ի քէն եւ տաց զդէշ քո եւ զդիակունս բանակի այլազգեացդ յաւուր յայսմիկ թռչնոց երկնից եւ գազանաց երկրի. եւ ծանիցէ ամենայն երկիր, եթէ գոյ Աստուած ի մէջ Իսրայելի. եւ ծանիցէ ամենայն եկեղեցիս այս, թէ ոչ սրով եւ գեղարդեամբ փրկէ Տէր, զի Տեառն է պատերազմ, եւ մատնիցէ զձեզ Տէր ի ձեռս մեր»: Եւ յարեաւ այլազգին եւ եկն եւ մերձեցաւ ընդդէմ Դաւթի. եւ աճապարեաց Դաւիթ եւ ընթացաւ ի ճակատն ընդդէմ այլազգւոյն: Եւ ձգեաց Դաւիթ զձեռն իւր ի մախաղն, եւ ա՛ռ անտի քար մի, եւ պարսաքարեաց եւ եհար զճակատ այլազգւոյն. եւ եմուտ քարն ընդ սաղաւարտն ի ճակատն, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր: Եւ զօրացաւ Դաւիթ քան զայլազգին պարսիւքն եւ քարիւն, եւ եհար զայլազգին եւ սպան զնա. եւ սուր չէր ի ձեռին նորա: Եւ ընթացաւ Դաւիթ եւ հարաւ[9] ի վերայ նորա, եւ ա՛ռ զնորին սուսեր, եւ մերկեաց զնա ի պատենից իւրոց, եւ սպան զնա եւ եհատ զգլուխ նորա: Իբրեւ տեսին այլազգիքն, թէ մեռաւ զօրաւորն նոցա, փախեան: Եւ յարեան արք Իսրայելի եւ Յուդայ, աղաղակեցին եւ յարձակեցան զհետ նոցա մինչեւ ի մուտս Գեթայ եւ մինչեւ ի դրունս Ակկարոնի. եւ անկան վիրաւորք այլազգեացն զճանապարհայնն մինչեւ ցդրունս Գեթայ եւ Ակկարոնի: Եւ դարձան արք Իսրայելի ասպատակեալքն զհետ այլազգեացն, եւ կոխեցին զբանակս նոցա: Եւ ա՛ռ Դաւիթ զգլուխ այլազգւոյն եւ եբեր զնա յԵրուսաղէմ. եւ զզէն նորա եդ ի վանս իւրում:

Եւ իբրեւ ետես Սաւուղ զԴաւիթ ելեալ ընդդէմ այլազգւոյն, ասէ ցԱբեններ իշխան զօրուն. «Ո՞յր որդի է պատանեակդ այդ, Աբեննե՛ր»: Եւ ասէ Աբեննէր. «Կենդանի է անձն քո, արքա՛յ, թէ գիտիցեմ: Եւ ասէ արքայ. «Հա՛րց թէ ո՞յր որդի իցէ պատանեակդ»: Եւ իբրեւ դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զայլազգին, առ զնա Աբեններ եւ ած զնա առաջի Սաւուղայ. եւ գլուխ այլազգւոյն ի ձեռին նորա: Եւ ասէ ցնա Սաւուղ. «Ո՞յր որդի ես, մանո՛ւկ դու»: Եւ ասէ Դաւիթ. «Որդի ծառայի քո Յեսսեայ Բեթղեհեմացւոյ»:

---

[1] անցյալ կատարյալը ապառնու իմաստով՝ խայտառակելու եմ
[2] Հուդայի երկրի
[3] ծերացեալ հասեալ յարս - ծերութեան հասած մի մարդ էր
[4] կանխեալ եւ անագանեալ - առավոտ կանուխ ու երեկոյան
[5] պատերազմելու
[6] աղաղակեցին ի պատերազմին - պատերազմի աղաղակներ էին արձակում
[7] ըստ նմին բանից - նույն խոսքերը կրկնելով
[8] ո՞չ ապաքէն բանք իցեն - բան էր՝ ասացինք
[9] այստեղ՝ կանգնեց

ԵՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

Գլ. Գ

Եւ ի հաստատել թագաւորութեանն Սողոմոնի խնամութիւն արար Սողոմոն ընդ Փարաւոնի արքային Եգիպտացւոց եւ ա՛ռ զդուստր նորա եւ ած ի քաղաք Դաւթի, մինչեւ կատարեաց շինել զտուն իւր եւ զտուն Տեառն եւ զպարիսպն Երուսաղեմի շուրջանակի: Սակայն ժողովուրդն արկանէին խունկս[1] ի վերայ բարձանց, զի ոչ շինեցաւ տուն անուան Տեառն մինչեւ ցաւուրսն ցայնոսիկ:

Եվ սիրեաց Սողոմոն զՏէր գնալ ըստ հրամանաց Դաւթի հօր իւրոյ, բայց ի բարձունս եւ նա զոհէր եւ արկանէր խունկս: Եւ յարեաւ գնաց արքայ ի Գաբաւոն զոհել անդ, զի նա առաւել բարձրագոյն եւ մեծ էր. հազար ողջակէզ եհան Սողոմոն ի վերայ սեղանոյն այնորիկ: Ի Գաբաւոն երեւեցաւ Տէր Սողոմոնի ի քուն գիշերոյ, եւ ասէ Տէր ցՍողոմոն. «Խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ»[2]: Եւ ասէ Սողոմոն. «Դու արարեր ողորմութիւն մեծ ընդ Դաւթի հօր իմոյ, որպէս եւ շրջեցաւ առաջի քո ճշմարտութեամբ եւ արդարութեամբ եւ ուղղութեամբ սրտի ընդ քեզ. եւ պահեցեր նմա զողորմութիւնս զայս մեծ՝ տալ որդւոյն նորա նստել յաթոռ նորա որպէս եւ յաւուրս յայսմիկ: Եւ արդ, Տէ՛ր Աստուած իմ, դու ետուր զծառայ քո փոխանակ Դաւթի հօր իմոյ, եւ ես եմ մանուկ փոքր եւ ոչ գիտեմ զել եւ զմուտ իմ: Եւ ծառայ քո ի մէջ ժողովրդեան քո է, զոր ընտրեցեր ժողովուրդ քո՝ բազում, անթիւ եւ անհամար ի բազմութիւնէ: Եւ տացես ծառայի քում սիրտ լսելոյ եւ դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել ի մէջ բարւոյ եւ չարի. քանզի ո՞ կարիցէ դատել զայս ժողովուրդ քո զծանր»: Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի Տեառն, զի խնդրեաց Սողոմոն զայն բան: Եւ ասէ ցնա Տէր. «Փոխանակ զի խնդրեցեր յինէն զբանդ զայդ եւ ոչ խնդրեցեր քեզ աւուրս բազումս, եւ ոչ խնդրեցեր քեզ մեծութիւն, եւ ոչ խնդրեցեր զանձինս թշնամեաց քոց[3], այլ խնդրեցեր դու քեզ խելամուտ լինել լսելոյ զիրաւունս, ահա արարի ըստ բանիդ քում, ահա ետու քեզ սիրտ իմաստուն եւ հանճարեղ. իբրեւ զքեզ ոչ ոք եղեւ յառաջ քան զքեզ եւ յետ քո ոչ ոք յարիցէ նմանօղ քեզ: Եւ զոր ոչն եւս խնդրեցեր՝ ետու քեզ, զմեծութիւն եւ զփառս, որպէս ոչ ոք եղեւ նման քեզ ի թագաւորս զամենայն աւուրս քո»: Եւ եթե գնասցես ի ճանապարհս իմ պահել զհրամանս իմ եւ զպատուիրանս իմ որպէս եւ գնաց Դաւիթ հայր քո, եւ բազմացուցից զաւուրս քո: Եւ զարթեաւ Սողոմոն եւ ահա երազ էր. եւ յարեաւ եկն յԵրուսաղէմ եւ եկաց առաջի սեղանւոյն յանդիման տապանակի ուխտին Տեառն ի Սիոն. եւ մատոյց ողջակէզս եւ արար խաղաղականս եւ արար խրախութիւն մեծ իւր եւ ամենայն ծառայից իւրոց:

Յայնժամ երեւեցան երկու կանայք պոռնիկք՝ արքայի, եւ կացին առաջի նորա: Եւ ասէ մի կինն. «Յիս տէր իմ. ես եւ կինս այս էաք ի միում տան, եւ ծնայ ի տանն. Եւ եղեւ յաւուրն երրորդի ծնաւ եւ կինս այս. եւ մեք առանձին էաք, եւ ոչ ոք դոյր ընդ մեզ ի տանն՝ բաց ի մէնջ երկոցունց ի տանն: Եւ մեռաւ որդի սորա ի գիշերի, քանզի ննջեաց ի վերայ նորա: Եւ յարեաւ ի հասարակ գիշերի եւ առ զմանուկն իմ ի գրկաց իմոց, եւ աղախին քո ի քուն էր, եւ ննջեցոյց զնա ի ծոց իւրում, եւ զորդին իւր զմեռեալն ննջեցոյց ի ծոց իմում: Եւ յարեայ ընդ առաւօտն դիեցուցանել զորդին իմ, եւ նա էր մեռեալ. եւ հայեցայ ընդ նա այգունն, եւ ահա չէր որդին իմ, զոր ծնայ»: Եւ ասէ մեւս կինն. «Ո՛չ, այլ որդի քո է մեռեալն, եւ որդի իմ կենդանին»: Եւ մեւսն եւս ասէր. «Այլ որդի իմ կենդանին, եւ որդի քո մեռեալն». եւ խօսեցան առաջի արքայի: Եւ ասէ ցնոսա արքայ. «Դու ասէս, թէ ''Այս որդի իմ է, որ կենդանիս է, եւ որդի դորա մեռեալն''. եւ դու ասես՝ ''Ո՛չ, այլ որդին քո մեռեալն, եւ որդին իմ կենդանին''»: Եւ ասէ արքայ. «Առէ՛ք առ իս զսուրն». եւ բերին զսուրն առաջի արքայի: Եւ ասէ արքայ. «Կտրեցէ՛ք զմանուկն զստնդիաց զկենդանի՝ յերկուս, եւ տո՛ւք զկէսն նորա դմա եւ զկէսն նորա նմա: Եւ պատասխանի ետ կինն, որոյ որդին կենդանի էր, եւ ասէ ցարքայ, քանզի խռովեցան աղիք նորա ի վերայ որդւոյն իւրոյ, եւ ասէ. «Յիս, տէ՛ր, տուք նմա զմանուկն կենդանի եւ մահու մի՛ սպանանէք զնա: Եւ մեւսն ասէր.

«Մի՛ իմ լիցի՝ եւ մի՛ դորա, կտրեցէ՛ք ընդ մէջ»: Պատասխանի ետ արքայ եւ ասէ. «Տո՛ւք դմա զմանուկն կենդանի, որ ասաց, թէ ''Տուք զդա նմա'' եւ մահու մի՛ սպանանէք զդա. նա է մայր դորա»: Եւ լուաւ ամենայն Իսրայէլ զդատաստանն, զոր դատեցաւ արքայ, եւ զահի հարան յերեսաց արքայի. զի տեսին, թէ իմաստութիւն Աստուծոյ է ի նմա առնել իրաւունս:

---

[1] արկանէին խունկս - խունկ էին ծխում
[2] խնդիր ինչ - որևէ բան
[3] զանձինս թշնամեաց քոց - քո թշնամիների մահը

ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ

ՍԱՂՄՈՍ ԻԱ (ԻԲ)

Ի կատարած[1]. վասն առաւօտին օգնականութեան. Սաղմոս Դաւթի:

Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, նայեա՛ց առ իս, ընդէ՞ր թողեր զիս, հեռի եղեր ի փրկութենէ իմմէ՝ վասն բանից յանցանաց իմոց: Աստուած իմ, ի տուէ կարդացի առ քեզ, եւ ինձ ոչ լուար, ի գիշերի՝ եւ ինձ ոչ անսացեր: Դու ի սուրբս բնակեալ ես, գովեա՛լդ յԻսրայելի: Ի քեզ յուսացան հարքն մեր, յուսացան ի քեզ եւ փրկեցեր զնոսա: Առ քեզ աղաղակեցին եւ կեցին, ի քեզ յուսացան եւ ոչ ամաչեցին:

Այլ ես որդն եմ եւ ոչ եմ մարդ, նախատինք մարդկան եւ արհամարհանք ժողովրդոց: Ամենեքեան, որ տեսանէին զիս, արհամարհէին զինեւ, խօսէին շրթամբք եւ շարժէին զգլուխս իւրեանց: Յուսացաւ ի Տէր եւ փրկեսցէ զնա, կեցուսցէ զնա զի կամի զնա: Դո՛ւ ես, որ հաներ զիս յարգանդէ, յոյս իմ ի ստեանց մօր իմոյ[2]: Ի քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ, դու ես Աստուած իմ: Մի՛ ի բացեայ առնիր յինէն, զի նեղութիւնք մերձեալ են, եւ ոչ ոք է, որ օգնէ ինձ: Շուրջ եղեն զինեւ զուարակք բազումք, եւ ցուլք գէրք պաշարեցին զիս: Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց որպէս առեւծ, զի մռնչէ եւ յափշտակէ: Ես որպէս զջուր հեղայ, եւ ցրուեցան ամենայն ոսկերք իմ, եւ եղեւ սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի մէջ որովայնի իմոյ: Զորացաւ որպէս խեցւոյ զօրութիւն իմ, լեզու իմ ի քիմս իմ կցեցաւ, եւ ի հող մահու իջուցին զիս: Շուրջ եղեն զինեւ շունք բազումք, եւ ժողովք չարաց պաշարեցին զիս: Ծակեցին զձեռս իմ եւ զոտս իմ, եւ թուեցին զամենայն ոսկերս իմ. նոքա հայեցան եւ տեսին զիս: Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին: Դու, Տէ՛ր, մի՛ հեռի առներ զօգնականութիւն քո յինէն եւ, Տէ՛ր, յօգնել ինձ նայեա՛ց: Փրկեա՛ ի սրոյ զանձն իմ եւ ի ձեռաց շանց զմիամօրութիւն իմ: Փրկեա՛ զիս ի բերանոյ առիւծու, յեղջերէ միեղջերւոյ զխոնարհութիւն իմ[3]:

Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ: Երկիւղա՛ծք Տեառն, օրհնեցէ՛ք զՏէր: Ամենայն զաւակն Յակովբեան փառաւոր արասցեն զնա, եւ երկիցէ ի Տեառնէ ամենայն զաւակն Իսրայելի: Զի ոչ արհամարհեաց եւ ոչ անարգեաց Տէր զաղօթս աղքատին եւ ոչ դարձոյց զերեսս իւր յինէն, այլ ի կարդալ իմում առ նա լուաւ ինձ: Ի քէն է գովութիւն իմ, յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ, զուխտս իմ կատարեցից առաջի ամենայն երկիւղածաց նորա:

Կերիցեն տնանկք եւ յագեսցին, օրհնեսցեն զՏէր, ոյք խնդրեն զնա. կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից: Յիշեսցեն եւ դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի, երկիր պագցեն նմա ամենայն տոհմք ազանց: Զի Տեառն է արքայութիւն, եւ նա տիրէ ի վերայ ամենայն հեթանոսաց: Կերան եւ երկիր պագին նմա ամենայն պարարտք երկրի. առաջի նորա անկցին ամենեքեան, որ իջանեն ի հող: Անձն իմ նովաւ կեայ, եւ զաւակ իմ ծառայեսցէ նմա: Պատմեսցի զՏեառնէ ազգի, որ գալոցն է. պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան, որ ծնանելոցն իցէ, զոր արար Տէր:

ՍԱՂՄՈՍ ԼԷ (ԼԸ)

Սաղմոս Դաւթի. առ ի յիշատակ շաբաթու

Տէ՛ր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս: Զի նետք քո հարան յիս, եւ յիս հաստատեցաւ[4] ձեռն քո: Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քո. ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց: Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ: Նեխեցան եւ փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ: Տառապեցայ եւ խոնարհ եղէ յոյժ, զօրհանապազ տրտում գնայի. Զի անձն իմ լի եղեւ չարչարանօք, եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ: Զարչարեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ, մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ:

Տէ՛ր, առաջի քո ամենայն ցանկութիւն իմ, եւ հեծութիւն իմ ի քէն ոչ ծածկեցաւ: Սիրտ իմ խռովեցաւ յիս եւ եթող զիս զօրութիւն իմ, լոյս աչաց իմոց՝ եւ այս ոչ եղեւ ընդ իս: Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան եւ կացին, եւ մերձաւորք իմ հեռի եղեն յինէն: Բռնադատէին զիս եւ խնդրէին զանձն իմ, ոյք խնդրէին չար ի վերայ իմ, խօսեցան զանօրէնութիւն, եւ զնենգութիւն զօրհանապազ խորհեցան: Այլ ես՝ որպէս խուլ, զի ոչ լսէ, որպէս համր, որ ոչ բանայ զբերան իւր: Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ, եւ ոչ գոն խօսք ի բերան նորա:

Ես ի քեզ, Տէ՛ր, յուսացայ, եւ դու լուիցես ինձ, Տէ՛ր Աստուած իմ: Ասացի, թէ ''Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ'', ի սասանել ոտից իմոց՝ ի վերայ իմ մեծամեծս խօսեցան: Ես ի տանջանս պատրաստ եմ, եւ ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ: Զանօրէնութիւնս իմ պատմեցից եւ հոգացայց վասն մեղաց իմոց: Իսկ արդ թշնամիք իմ կենդանի են եւ զօրացեալ են քան զիս, եւ բազումք էին, ոյք ատէին զիս ի տարապարտուց: Ոյք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան: Մի՛ թողուր զիս, Տէ՛ր, Աստուա՛ծ իմ, եւ մի՛ ի բացեայ առնիր յինէն, հայեա՛ց յօգնել ինձ, Տէ՛ր փրկութեան իմոյ:

ՍԱՂՄՈՍ Ծ (ԾԱ)

Ի կատարած. Սաղմոս Դաւթի, (2) Ի ժամանակի իբրեւ եկն առ նա Նաթան մարգարէ, յորժամ մտեալ էր նա առ Բերսաբէէ:

Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ: Առաւել լուա՛ զիս յանօրինութենէ իմմէ եւ ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս: Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ: Քեզ միայն մեղայ, Տէ՛ր, եւ չար առաջի քո արարի. որպէս[5] արդար եղիցես ի բանս քո, եւ յաղթող ի դատել քեզ[6]: Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու, Տէ՛ր, զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ: Ցողեա՛ յիս մշտկաւ եւ սուրբ եղէց, լուա՛ եւ քան զձիւն սպիտակ եղէց: Լսելի՛ արա ինձ զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք: Դարձո՛ զերեսս քո ի մեղաց իմոց եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն: Սիրտ սուրբ հաստեա յիս, Աստուա՛ծ, եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում: Մի՛ ընկենուր զիս, Տէ՛ր, յերեսաց քոց եւ զՀոգի Սուրբ քո մի՛ հանէր յինէն: Տո՛ւր ինձ զցնծութիւն փրկութեան քո եւ հոգւով պետութեան[7] քո հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, եւ ամպարիշտք առ քեզ դարձցին: Փրկեա՛ զիս յարենէ, Աստուա՛ծ, Աստուա՛ծ փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում: Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո: Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար: Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի՛ արա, Տէ՛ր, կամօք քովք Սիոնի, եւ շինեսցին պարիսպքն Երուսաղեմի: Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, ուխտից պատարագս[8] հանցեն ի սեղան քո զուարակս:

ՍԱՂՄՈՍ ԾԲ (ԾԳ)

Ի կատարած. վասն Մաղաղեթայ. իմաստութիւն Դաւթի:

Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ «Ոչ գոյ Աստուած»: Ապականեցան եւ պղծեցան յանօրէնութեան իւրեանց, եւ ոչ ոք է, որ առնէ զքաղցրութիւն[9]: Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան՝ տեսանել, թէ իցէ՛ ոք իմաստուն, որ խնդրիցէ զԱստուած: Ամենեքեան խոտորեցան ի միասին եւ անպիտանացան. ոչ ոք է, որ առնէ զբարի, եւ չէ ոք մինչեւ ի մի: Ո՞րպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որ գործեն զանօրէնութիւն, ոյք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի եւ առ Աստուած ոչ կարդացին: Անդ երկիցեն զերկեւղ, ուր ոչ իցէ երկեւղ, զի Աստուած ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից. ամաչեսցեն եւ յամօթ լիցին, զի Աստուած անարգեաց զնոսա: Ո՛ տացէ ի Սիոնէ զփրկութիւն Իսրայէլի: Ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ ցնծասցէ Յակոբ եւ ուրախ եղիցի Իսրայէլ:

---

[1] ի կատարած - այսուհետև
[2] ի ստեանց մօր իմոյ - մորս կաթով սնվելու օրից
[3] զխոնարհութիւն իմ - իմ խեղճ անձը
[4] ծանրացավ
[5] որպեսզի
[6] ի դատել քեզ - քո դատաստանի մեջ
[7] տիրական
[8] ուխտից պատարագս - իբրև ուխտի զոհեր
[9] այստեղ՝ բարություն

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ

Գլ. Բ

Որդեա՛կ, եթէ ընկալեալ զպատգամս պատուիրանի իմոյ ծածկեսցես յանձին քում, լուիցէ իմաստութեան ունկն քո եւ առակեսցես զսիրտ քո ի հանճար, եւ աւանդեսցես զնա որդւոյ քում ի խրատ: Զի եթէ զիմաստութիւն կոչեսցես ի քեզ եւ հանճարոյ տացես զձայն քո, եւ եթէ խնդրեսցես զնա իբրեւ զարծաթ ընտիր եւ իբրեւ զգանձս քննեսցես զնա, յայնժամ ի միտ առցես զերկեւղ Տեառն եւ զգիտութիւն Աստուծոյ գտցես: Զի Տէր տայ զիմաստութիւն, եւ յերեսաց նորա գիտութիւն եւ հանճար: Եւ գանձէ ուղղոց զփրկութիւն, վերակացու լինի գնացից նոցա՝ պահել զճանապարհս իւրաւանց, եւ զճանապարհս երկիւղածաց իւրոց ամրացուսցէ: Յայնժամ ի միտ առցես զարդարութիւն եւ զիրաւունս եւ ուղղեսցես զամենայն շաւիղս բարութեան:

Զի եթէ եկեսցէ իմաստութիւն ի միտս քո, եւ զհանճար անձին քում բարի համարեսցիս լինել: Խորհուրդք բարեաց զգուշասցին զքեւ, եւ միտք սուրբ պահեսցեն զքեզ: Զի ապրեցուսցեն զքեզ ի ճանապարհէ չարէ եւ յառնէ, որ խօսիցի աւ ոչ ինչ հաւատարիմս: Ո՛հ, որոց թողեալ իցէ զճանապարհս ուղիղս՝ գնալ ի ճանապարհս խաւարինս, որ ուրախ լինիցին ընդ չարիս եւ խնդայցեն ընդ խոտորումն չարութեան, որոց թեւր իցեն ճանապարհք իւրեանց, եւ կամակոր շաւիղք նոցա, հեռի առնել զքեզ յուղիղ ճանապարհէ եւ օտարացուցանել յարդար խորհրդոց. որդեա՛կ իմ, մի՛ հասցեն քեզ խորհուրդք չարք, որոց թողեալ իցէ զուսումն մանկութեան եւ մոռացեալ զուխտն աստուածեղէն, զի եդ մերձ ի մահ զտուն իւր, եւ մօտ ի դժոխս ընդ երկրածինս զշաւիղս իւր: Ամենեքեան, որ գնան ընդ նա, ոչ դարձցին, այլ եւ ի զղջումն եւս եկեսցեն. եւ ոչ ժամանեսցեն ի ճանապարհս ուղիղս եւ ոչ հասցեն ի տարեկանս կենդանութեան: Զի եթէ գնացեալ էր ի ճանապարհս բարիս, գտանէին արդեւք զշաւիղս արդարութեան զդիւրինս: Քաղցրացեալք՝ եղիցին բնակիչք երկրի, անմեղք մնասցեն ի նմա: Զի

ուղիղք բնակեսցեն յերկրի եւ անարատք մնասցեն ի նմա: Ծանապարհք ամպարշտաց կորիցեն յերկրէ, եւ անօրէնք մերժեսցին ի նմանէ:

Գլ. Գ

Որդեա՛կ, զօրէնս իմ մի՛ մոռանար եւ զբանս իմ պահեսցես ի սրտի քում, զի ընդերկարութիւն կենաց եւ ամք կենդանութեան եւ խաղաղութիւն յաւելցին քեզ: Ողորմութիւն եւ հաւատք ի քէն մի՛ պակասեսցեն. ա՛րկ զնոսա ընդ պարանոց քո եւ գրեա՛ զնոսա յընդարձակութիւն սրտի քո, եւ գտցես շնորհս, եւ խորհեա՛ց զբարիս առաջի Տեառն եւ մարդկան:

Լե՛ր յուսացեալ ի Տէր յամենայն սրտէ քումմէ եւ յիմաստութիւն քո մի՛ հպարտանար: Յամենայն ճանապարհս քո ծանի՛ր զնա, զի ուղիղ արասցէ զճանապարհս քո, եւ ոտն քո մի՛ գայթակղեսցի: Մի՛ լինիր իմաստուն յաչս անձին քո, այլ երկի՛ր ի Տեառնէ եւ խոտորեա՛ յամենայն չարութիւնէ: Ապա բժշկութիւն եղիցի մարմնոյ քում, եւ դարման ոսկերաց քոց: Պատուեա՛ զՏէր ի քոց արդար վաստակոց եւ հան նմա պտուղ ի քոց արդարութեան արմտեաց, զի լցցին շտեմարանք քո լիութեամբ ցորենոյ, եւ գինեաւ հնձանք քո առաւել եւս բղխեսցեն:

Որդեա՛կ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն եւ մի՛ լուծանիր[1] յանդիմանեալ ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի, զոր ընդունի:

Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն, եւ մահկանացու՝ որ ետես զհանճար[2]: Զի լաւ է զվաճառն զայն գտանել, քան զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ: Պատուականագոյն է քան զականս պատուականս, եւ ոչ ինչ է չար, որ հակառակ կայցէ նմա. յայտնի է ամենեցուն, որ մերձին ի նա, եւ ամենայն ինչ, որ պատուական է, չարժեն զնա: Զի երկայն աւուրք եւ ամք կենաց յաջմէ իւրմէ, եւ յահեկէ իւրմէ փառք եւ մեծութիւն: Ի բերանոյ նորա բղխէ արդարութիւն, զո-

ըէնս եւ զողորմութիւն ի լեզուի իւրում կրէ: Ճանապարհք նորա ճանապարհք բարեաց, եւ ամենայն շաւիղք նորա խաղաղութեամբ: Փայտ կենաց է ամենեցուն, որ պատսպարին ի նա, եւ որ յենուն ի նա իբրեւ ի Տէր հաստատութեամբ: Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով: Հանճարով իւրով զանդունդս պատառեաց, եւ ամպք հոսեցին զանձրեւ:

Որդեա՛կ, մի՛ լուծանիցիս[3]. պահեա՛ զխորհուրդս իմ եւ զիմաստութիւն, զի կեցցէ անձն քո, եւ շնորհք իցեն ի վերայ պարանոցի քո, եղիցի բժշկութիւն մարմնոյ քում, եւ դարման ոսկերաց քոց: Զի գնասցես յուսով խաղաղութեան յամենայն ճանապարհս քո, եւ ոտն քո մի՛ գայթակղեսցի: Զի եթէ նստիցես՝ աներկեւղ իցես, եւ եթէ ննջեսցես՝ քաղցր ի քուն լիցիս: Ոչ երկիցես ի զարհուրանաց ի վերայ հասելոց եւ յարշաւանաց ամպարշտաց ի վերայ եկելոց: Զի Տէր եղիցի ի վերայ ամենայն ճանապարհաց քոց եւ հաստատեսցէ զոտն քո, զի մի՛ գայթակղեսցի: Մի՛ յապաղէր բարի առնել կարօտելոյ, յորժամ ձեռնհաս իցես օգնել նմա: Մի՛ ասիցես, թէ՝ «Երթ եւ եկեսջիր եւ վաղիւ տաց», զի կարող եւս իցես բարի առնել[4], քանզի ոչ գիտես զինչ վաղիւն ծնանիցի քեզ: Մի՛ նիւթեր բարեկամի քում չարիս՝ որ յեցեալ եւ յուսացեալ իցէ ի քեզ: Մի՛ թշնամասէր լինիր մարդոյ ի տարապարտուց, զի մի՛ չար ինչ գործիցէ քեզ: Մի՛ ստանար նախատինս յարանց չարաց եւ մի՛ նախանձիր ընդ ճանապարհս նոցա: Քանզի պիղծ է առաջի Տեառն ամենայն անօրէն եւ ընդ արդարս ոչ հաղորդի: Անէծք Տեառն ի տունս ամպարշտաց, յարկք արդարոց օրհնէին: Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Զփառս իմաստունք ժառանգեսցեն, իսկ ամպնարիշտք բարձրացուցին զանարգանս:

Գլ.Դ

Լուարո՛ւք, մանկո՛ւնք, զխրատ հօր եւ անսացէք ճանաչել զիմաստութիւն, զի պարգեւս բարեաց պարգեւեցից՝ ձեզ. զօրէնս իմ մի՛ թողուք, զի որդի եղեալ եմ եւ ես հպատակ հօր իմոյ եւ սիրեցեալ յաչս մօր իմոյ: Որք ուսուցանէին զիս եւ ասէին. «Հաստատեսցի բան մեր ի սրտի քում. պահեա՛ զպատուիրանս իմ եւ կեա՛ց: Ստացի՛ր զիմաստութիւն, ստացի՛ր զհանճար. եւ մի՛ մոռանար, եւ մի՛ արհամարհեր զպատգամս բերանոյ իմոյ, եւ մի՛ խոտորիր ի բանից շրթանց իմոց: Մի՛ թողուր զնա, եւ պատսպարեսցէ զքեզ. սիրեա՛ զնա, եւ պահեսցէ զքեզ: Սկիզբն զգոնութեան՝ ստացի՛ր զիմաստութիւն, եւ յամենայն ճանապարհս քո ստացի՛ր զհանճար: Շուրջ փակեա՛ զնովաւ, եւ բարձրացուսցէ զքեզ. մեծարեա՛ զնա, զի գիրկս արկցէ զքեւ: Զի տացէ գլխոյ քում պսակ շնորհաց եւ պսակաւն փափկութեան վերակացու լիցի քեզ: Լո՛ւր, որդեա՛կ, եւ ընկալ զբանս իմ, եւ բազմասցին ամք կենաց քոց. եւ յաճախեսցին ճանապարհք կենաց քոց: Զճանապարհս իմաստութեան ուսուցանեմ քեզ, խելամուտ առնեմ զքեզ ուղիղ շաւղաց: Զի եթէ գնայցես, ոչ խափանեսցին գնացք քո եւ եթէ ընթանայցես ոչ վաստակեսցիս: Բուռ հար զխրատուէ իմմէ եւ մի՛ թողուցուս, այլ պահեա՛ զնա անձին քում ի կեանս:

Ի ճանապարհս ամպարշտաց մի՛ երթայցես եւ մի՛ նախանձիցիս ընդ ճանապարհս անօրինաց: Եւ ի տեղւոջ, ուր բնակիցեն՝ ընդ այն մի՛ անցանիցես, խոտորեա՛ ի նոցանէ եւ խորշեա՛ց անտի: Զի ոչ ննջեն, եթէ ոչ չար գործիցեն, բարձրեալ է քուն նոցա՝ եւ ոչ ննջեն. Որք ուտեն զկերակուրս ամպարշտութեան եւ գինեաւ անօրէնութեան արբենան: Ճանապարհք արդարոց իբրեւ զլոյս ծագեն, առաջնորդեն եւ լուսաւորեն, մինչեւ տիւն լուսաւորեսցէ: Ճանապարհք ամպարշտաց խաւարինք, եւ ոչ գիտեն զիարդ գայթակղին:

Որդեա՛կ, իմոյ իմաստութեան անսա եւ իմոց բանից մատո՛ զունկն քո, զի մի՛ պակասեսցին աղբեւրք քո: Պահեա՛ զնոսա ի սրտի քում, քանզի կեանք են, որոց գտանեն զնոսա, եւ ամենայն մսեղւոյ՝ բժշկութիւն: Ամենայն պահպանութեամբ պահեա՛ զսիրտ քո, զի ի սոցանէ են ելք կենաց: Ի բա՛ց արա ի քէն զբերան կամակոր եւ զշրթունս անիրաւս մերժեա՛ ի քէն: Աչք քո ուղիղ հայեսցին, եւ արտեւանունք քո արդար ակնարկեսցեն: Զշաւիղս ուղիղս արասցես ոտից

քոց եւ զճանապարհս քո ուղղեսցես: Մի՛ խոտորիցիս յաջ եւ մի՛ յահեակ, դարձո՛ զոտն քո ի ճանապարհէ չարէ: Զի զճանապարհս, որ յաջմէ են, գիտէ Աստուած, թեւր են ճանապարհք, որ ի ձախմէ են. այլ ինքն ուղիղ արասցէ զշաւիղս քո, եւ զճանապարհս քո խաղաղութեամբ յառաջեցուսցէ:

---

[1] մի՛ դժգոհիր
[2] ետես զհանճար - կստանա հանճար
[3] մի՛ անտեսիր
[4] զի կարող եւս իցես - քանի դեռ կարող ես

ԺՈՂՈՎՕՂ

Գլ. Ա

Բանք Ժողովօղին որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայելի յԵրուսաղէմ: Ունայնութիւն ունայնութեանց, ասաց Ժողովօղն, ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է: Զի՞նչ աւելի է մարդոյ յամենայն վաստակս իւր, զոր տաժանի ընդ արեգակամբ: Ազգ երթայ եւ ազգ գայ, եւ երկիրս յաւիտեան կայ: Ծագէ արեգակն եւ մտանէ արեգակն եւ ի տեղի իւր ձգի ի ծագել իւրում[1]: Ելանէ ընդ հարաւ եւ պատի ընդ հիւսիւսիւ, պատելով պատի, գնայ հողմ եւ ի շրջանս իւր դառնայ հողմ: Ամենայն ուղխք ի ծով գնան, եւ ծով ոչ լնու. ի տեղի, յոր ուղխք գնան, անդ նոքին դառնան ի գնալ: Ամենայն բան ջանիւ, եւ ոչ կարասցէ այր խօսել. ոչ յագեսցի ակն՝ տեսանելով, եւ ոչ լցցի ունկն լսելով: Զինչ է, որ եղեւն, նոյն ինքն, որ լինելոցն է. եւ զինչ է, որ արարաւն, նոյն ինքն, որ առնելոցն է: Եւ ոչ է ամենայն առժամայն ընդ արեգակամբ. զի զոր խօսիցի ոք եւ ասիցէ՝ «Ահաւասիկ այս նոր է», վաղ իսկ եղեալ է ի յաւիտենից եղելոցն նախ քան զմեզ: Ոչ գոյ յիշատակ առաջնոցն, նա եւ ոչ վերջնոցն, որ լինելոց են. ոչ գոյ յիշատակ նոցա ընդ լինելոցսն ի վախճանի:

Ես Ժողովօղ եղէ թագաւոր ի վերայ Իսրայելի յԵրուսաղէմ: Եւ ետու զսիրտ իմ խնդրել եւ խորհել իմաստութեամբ վասն ամենայնի, որ եղեալ են ընդ արեգակամբ. զի զբաղումն չար ետ Աստուած որդւոց մարդկան զզբաղել ընդ արեգակամբ: Տեսի ես զամենայն արարեալս, որ արարեալ են ի ներքոյ արեգական, եւ ահա ամենայն ինչ ընդունայնութիւն է եւ յօժարութիւն ոգւոյ: Թիւրեալն ոչ կարասցէ զարդարել[2], եւ պակասեալն ոչ կարասցէ ի թիւ անկանել: Խօսեցայ ի սրտի իմում, թէ առաւել ես մեծացայ եւ յաւելայ յիմաստութեան քան զամենեսեան, որ էին յառաջ քան զիս յԵրուսաղէմ. եւ սիրտ իմ ետես բազում իմաստութիւն եւ գիտութիւն: Եւ ետու զսիրտ իմ գիտել զիմաստութիւն եւ զգիտութիւն, զառակս եւ զիմաստութիւն. գիտացի ես, զի սակայն եւ այս յօժարութիւն ոգւոյ է: Զի բազմութիւն իմաստու-

թեան՝ բազմութիւն գիտութեան, եւ որ յոլովեաց ի գիտութիւն՝ յաւելցէ ի ցաւս:

Գլ. Բ

Ասացի ես ի սրտի իմում. «Ե՛կ եւ փորձեցից զքեզ յուրախութեան եւ տեսից ի բարութեան». եւ ահա եւ այս ինքն ունայնութիւն է: Ծաղուն ասացի՝ զբօսանս եւ ուրախութեանն՝ զի՞ գործես զայդ[3]:

Եւ խորհեցայ, թէ սիրտ իմ ձգեսցէ իբրեւ զգինի զարմին իմ[4]. եւ սիրտ իմ առաջնորդեաց իմաստութեամբ, եւ զօրանալ յուրախութեան, մինչեւ տեսից ո՛ր իցէ բարին որդւոց մարդկան, զոր արասցեն ի ներքոյ արեգական ի թիւ աւուրց կենաց իւրեանց: Յաճախեցի ինձ արարս, շինեցի ինձ ապարանս, տնկեցի ինձ այգիս: Արարի ինձ պարտէզս եւ դրախտս եւ տնկեցի ի նոսա փայտս ամենաբերս: Արարի ինձ աւազանս ջրոց՝ արբուցանել ի նոցանէ զանտառախիտս մայրեաց: Ստացայ ծառայս եւ աղախնայս, եւ ընդոծինք եղեն ինձ. եւ ստացուածք անդւոց եւ հօտից բազում եղեն ինձ քան զամենեցուն, որ յառաջ եղեալ էին քան զիս յԵրուսաղէմ: Ժողովեցի ինձ արծաթ եւ ոսկի եւ ստացուածս բազումս զթագաւորաց եւ զգաւառաց. արարի ինձ գուսանս եւ երգեցիկս՝ արս եւ կանայս, եւ զփափկութիւնս որդւոց մարդկան. արարի ինձ տակառապետս՝ արս եւ կանայս: Եւ մեծացայ առաւել քան զամենեսին, որ յառաջ էին քան զիս յԵրուսաղէմ. նա եւ իմաստութիւն յաւելաւ ինձ: Եւ զամենայն զոր ինչ խնդրեցին աչք իմ, ոչ զրկեցի ի նոցանէ. եւ ոչ արգելի զսիրտ իմ յամենայն ուրախութենէ. զի սիրտ իմ ուարխ եղեւ յամենայն վաստակս իմ, եւ այս եղեւ բաժին իմ յամենայն վաստակոց իմոց: Եւ հայեցայ ես յամենայն արարս իմ, զոր արարին ձեռք իմ, եւ ի վաստակս, զոր վաստակեցայ առնել, եւ ահա ամենայն ընդունայնութիւն է եւ յօժարութիւն ոգւոյ. եւ ոչ ինչ է առաւելութիւն ի ներքոյ արեգական:

Եւ հայեցայ ես տեսանել զիմաստութիւն եւ զբօսանս եւ զանզգամութիւն. քանզի ո՞վ է մարդ, որ երթայցէ զհետ խորհրդոյն, զոր

ինչ արար[5]: Եւ տեսի ես՝ եթէ է առաւելութիւն իմաստութեան քան անմտութեան, որպէս է առաւելութիւն լուսոյ քան զխաւարի: Իմաստնոյն աչք իւր ի գլուխ իւրում, եւ որ անմիտն է՝ ընդ խաւար գնայ. եւ գիտացի ես, թէ պատահար մի պատահելոց է ամենեցուն նոցա:

Եւ ասացի ես ի սրտի իմում, թէ «Որպէս պատահարն անզգամին՝ եւ ինձ իսկ պատահեսցէ նոյն, եւ ընդէ՞ր իմաստնացայ». եւ զաւելորդս խօսեցայ ի սրտի իմում, զի եւ այս իսկ ունայնութիւն է, զի անզգամն յաւելորդացն խօսի. վասն զի ոչ գոյ յիշատակ իմաստնոյն ընդ անզգամին յաւիտեան. զի արդարեւ իսկ յաւուրսն, որ գալոց են, ամենայն ինչ մոռացօնք են. եւ զի՞արդ մեռանիցի իմաստունն ընդ անմտին: Եւ ատեցի ես զկեանս իմ, զի չար էր ինձ արարածն, որ արարեալ էր ի ներքոյ արեգական, զի ամենայն ինչ ունայնութիւն է եւ յօժարութիւն ոգւոյ: Եւ ատեցի ես զամենայն վաստակս իմ, զոր ջանացայ ընդ արեգակամբ, զի թողում ես զնա մարդոյ, որ լինելոց է յետ իմ: Եւ ո՞վ գիտէ, իմաստո՞ւն լինիցի, թէ՞ անմիտ, եւ կամ իշխե՞ցէ իցէ ամենայն վաստակոցն իմոց, զոր ես վաստակեցի, եւ յորս իմաստնացայ ընդ արեգակամբ. սակայն եւ այս ունայնութիւն է:

Եւ դարձայ ես հրաժարեալ[6] սրտիւ իմով յամենայն վաստակոցն իմոց զոր վաստակեցի ընդ արեգակամբ: Զի է մարդ, զի վաստակ նորա իմաստութեամբ եւ գիտութեամբ եւ արութեամբ. եւ մարդ, որ ոչ ինչ վաստակեաց ի նմա, տացի նմա մասն նորա. սակայն եւ այս ընդունայնութիւն է եւ չարութիւն մեծ: Զի՞ լինի մարդոյն յամենայն վաստակս իւր, եւ ի յօժարութեան սրտի իւրոյ, յորում ինքն ջանայ ի ներքոյ արեգական: Զի ամենայն աւուրք նորա՝ ցաւոց, եւ տրտմութեան՝ զբօսանք իւր, եւ գիշերի ոչ ննջէ սիրտ նորա. սակայն եւ այս ընդունայնութիւն է: Եւ ոչ գոյ բարի ինչ մարդոյ, բայց զոր ուտէն եւ ըմպէն. եւ եցոյց անձին իւրում բարիս ի վաստակս իւր. սակայն եւ զայն տեսի, զի ի ձեռանէ Աստուծոյ է: Քանզի ո՞վ իցէ, որ ուտիցէ եւ ըմպիցէ առանց նորա: Զի մարդոյ բարւոյ՝ առաջի երեսաց իւրոց ետ զիմաս-

տութիւն և զգիտութիւն եւ զուրախութիւն, եւ մեղանչականին ետ զբաղումն յաճախել եւ ժողովել եւ տալ բարւոյն առաջի երեսաց Աստուծոյ. սակայն եւ այն ունայնութիւն է եւ յօժարութիւն ոգւոյ:

---

[1] ի տեղի իւր ծգի ի ծագել իւրում - վերադառնում է իր տեղը, որտեղից ծագել է
[2] ուղիղ լինել
[3] զի՞ գործես զայդ - անօգուտ է
[4] թէ սիրտ իմ ծգեսցէ իբրեւ զգինի զմարմին իմ - որ սիրտս զվարթացնեմ, ինչպես գինին զվարթացնում է մարմինս
[5] զոր ինչ արար - իր գործն անելիս
[6] դարձայ ես հրաժարեալ - հրաժարվեցի

ԵՐԳ ԵՐԳՈՅ
ՈՐ Է ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ
ԱՍԱՑԵԱԼ ՍՈՂՈՄՈՆԻ ԱՐՔԱՅԻ ԻՍՐԱՅԵԼԻ

Գլուխ Ա

Հարսնն ասէ, Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ. զի բարի են ստինք քո քան զգինի, եւ հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս. եւղ անուշ հեղեալ է անուն քո, վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ, եւ ձգեցին զքեզ. զհետ հոտոյ իւղոց քոց ընթացցուք մեք: Օրորդացն պատմէ հարսն վասն փեսային, զոր ինչ շնորհեաց նմա, «Տարաւ զիս արքայ ի սենեակ իւր»: Հարսինն պատմեալ օրիորդացն, եւ նոքա ասեն. «Ցնծացցուք եւ ուրախ լիցուք ի քեզ եւ սիրեսցուք զստինս քո քան զգինի»: Օրիորդքն հարսինն բարբառին զանուն փեսային. «Ուղղութիւն սիրեաց զքեզ»:

Հարսնն ասէ. «Սեաւ եմ ես եւ գեղեցիկ, դստե՛րք Երուսաղեմի, իբրեւ զվրանս Կեդարու եւ իբրեւ զխորանն Սողոմոնի:

Մի՛ հայիք ընդ իս, զի ես սեւացեալ թխացայ, քանզի խեթիւ հայեցաւ ընդ իս արեգակն. որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս եւ եդին զիս պահապան այգեստանի. զի[1] զայգին իմ ոչ պահեցի»:

Հարսն ցփեսայն ասէ. «Պատմեա՛ ինձ, զոր սիրեաց անձն իմ[2]. ո՞ւր հովուես, ո՞ւր հանգուցանես ի միջօրէի. գուցէ լինիցիմ իբրեւ զընկեցեալն յերամակս ընկերաց քոց»:

Փեսայն ցհարսնն ասէ. «Եթէ ոչ ծանիցես զանձն քո[3] գեղեցի՛կդ ի կանայս, ե՛լ դու զհետ գարշապարացն հօտից եւ արածեա՛ զուլս քո ի վրանս հովուաց: Երիվարացն իմոց ի կառսն Փարաւոնի նմանեցուցի զքեզ, մերձաւորդ իմ»: Օրիորդքն ցհարսն ասէն. «Քանզի գեղեցկացան ծնօտք քո իբրեւ զտատրակի, պարանոց քո իբրեւ զմանեակս: Նմանութիւն ոսկւոյ արասցուք քեզ[4] հանդերձ կիտուածովք արծաթոյ, մինչեւ արքայ ի գիրկս իւր ընկալցի զքեզ»: Հարսնն ցիւր անձնն եւ ցփեսայն ասէ. «Նարդոս իմ ետ զհոտ իւր. ծրար ստաշխին է եղբօրոր-

դին իմ ինձ, ի մէջ ստեանց իմոց հանգիցէ: Ողկոյզ նոճոյ է եղբօրորդին իմ ինձ՝ ի մէջ այգեստանեացն Ենգադդայ: Փեսայն ցիարսնն ասէ. «Ահաւադիկ կաս գեղեցիկ, մերձաւո՛ր իմ, ահաւադիկ կաս գեղեցիկ. աչք քո աղաւնիք»: Հարսնն ցփեսայն ասէ. «Ահաւադիկ կաս բարեՆշան, եղբօրորդեա՛կ իմ, այլ եւ գեղեցիկ առ գահոյս մեր հովանաւոր: Գերանք տանց մերոց մայրք, դարանաւանդք մեր նոճք»:

Գլ. Բ

Փեսան ցիւր անձնն եւ ցհարսնն ասէ.

«Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց: Իբրեւ շուշան ի մէջ փշոց, այնպէս մերձաւորդ իմ ի մէջ դստերաց»:

Հարսնն ցփեսայն ասէ. «Իբրեւ խնձորի ի փայտս անտառի, այնպէս եղբօրորդին իմ ի մէջ ուստերաց. ընդ հովանեաւ նորա ցանկացայ նստել եւ նստայ, եւ պտուղ նորա քաղցր է ի կոկորդի իմում»: Ցօրիորդսն հարսնն ասէ. «Մուծէք զիս ի տուն գինւոյ, կարգեցէ՛ք ի վերայ իմ զսէր, հաստատեցէք զիս իւղով, կուտեցէ՛ք յիս խնձոր, զի խանդակաթ եմ ես սիրով: Զախ նորա ընդ գլխով իմով, եւ աջ նորա պատեսցէ զինեւ»:

Հարսնն ցօրիորդսն ասէ. «Երդմնեցուցանեմ զձեզ, դստե՛րք Երուսաղեմի, ի զօրութիւնս եւ յուժգնութիւնս անդաստանի, եթէ յառնիցէք՝ զարթուսջիք զսէրն մինչեւ կամեսցի»:

Լուաւ զձայն փեսային եւ ասէ. «Ձայն եղբօրորդւոյ իմոյ. ահաւասիկ սա եկն, վազելով ի վերայ լերանց, խայտալով ի վերայ բլրոց: Նման է եղբօրորդին իմ այծեման կամ որթուց եղանց ի վերայ լերանց Բեթելայ»: Հարսնն նշան տայ օրիորդացն զփեսայէն եւ ասէ. «Ահաւասիկ սա եկաց յանկոյս որմոյն մերոյ, կարկառեալ ընդ պատուհանսն, հայեցեալ ընդ վանդակապատսն: Պատասխանի տայ եղբօրորդին իմ ինձ եւ ասէ. «Արի՛ ե՛կ, մերձաւո՛ր իմ, գեղեցի՛կ իմ, աղաւնի՛ իմ. Զի ահա ձմեռն անց, անձրեւք անցին եւ գնացեալ մեկնեցան. Ծաղիկք երեւեցան յերկրի մերում, ժամանակ եհաս յատանելոյ, ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում: Թզենի արձակեաց զբողբոջ իւր, որթք մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց. արի՛ ե՛կ, մերձաւո՛ր իմ, գեղեցի՛կ իմ, աղաւնի՛ իմ, երեւեցո՛ ինձ զերեսս քո եւ լսելի՛ արա ինձ զբարբառ քո, զի բարբառ քո քաղցր է եւ տեսիլ քո գեղեցիկ»՝:

Գլ. Գ

«Յանկողնի իմում ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա եւ ոչ գտի, կոչեցի եւ ոչ ետ ինձ ձայն: Յարեայց եւ շրջեցայց ընդ քաղաքն, ընդ փողոցս եւ ընդ հրապարակս, եւ խնդրեցից զոր սիրեաց անձն իմ. խնդրեցի զնա եւ ոչ գտի. կոչեցի զնա, եւ ոչ ետ ինձ ձայն: Գտին զիս պահապանքն որ շրջէին ընդ քաղաքն»: Հարսնն ցպահապանսն ասէ. «Միթէ զոր սիրեաց անձն իմ տեսէ՞ք»: Իբրեւ սակաւ մի անցի ըստ նոսա, գտի զոր սիրեաց անձն իմ: Գտեալ զփեսայն ասէ. «Կալայ զնա, եւ ոչ թողի զնա, մինչեւ տարայց զնա ի տուն մօր իմոյ եւ ի սենեակ յղացելոյն զիս»:

Գլ. Դ

Փեսան ցհարսնն ասէ, Ահաւադի՛կ կաս գեղեցիկ, մերձաւո՛ր իմ, ահաւադիկ կաս գեղեցիկ, աչք քո աղաւնիք, վարսք քո իբրեւ զերամակս այծից, որք երեւեցան ի Գաղաադէ: Ատամունք քո իբրեւ զերամակս կտրելոց[5], որք ելանեն ի լուալեաց. ամենեքեան երկուորիք են, եւ անորդի ոչ գոյ ի նոսա: Իբրեւ զթել որդան են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկք. իբրեւ զկեղեւ նռան են այտք քո. իբրեւ զաշտարակն Դաւթի պարանոց քո, որ շինեալն է ի Թալպիովթ. հազար վահան կախեալ են զնմանէ, եւ ամենայն նետք սպառազինաց: Երկու ստինք քո իբրեւ զերկուս ուլս երկուորիս այծեման, որք արածին ի մէջ շուշանաց, մինչեւ տիւն նուաղեսցէ, եւ ստուերքն շարժեսցին: Գնացից ես ինձէն ի լեառն զմռնենեաց եւ ի բլուրն կնդրկի: Ամենեւին գեղեցիկ ես, մերձաւո՛ր իմ, եւ արատ ինչ ոչ գոյ ի քեզ:

Սրտակաթ արարեր զմեզ, քո՛յր մեր Հարսն, սրտակաթ արարեր զմեզ միով ակամբ քով եւ միով քառամանեկաւ պարանոցի քո: Քանզի գեղեցկացան ստինք քո, քո՛յր իմ Հարսն, քանզի գեղեցկացան ստինք քո ի գինւոյ, եւ հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս: Մեղր կաթեցուցանեն շրթունք քո, քո՛յր իմ Հարսն, մեղր եւ կաթն ի ներքոյ լեզուի քո, եւ հոտ հանդերձից քոց իբրեւ զհոտ կնդրկի:

Գլ. Ե

Փեսայն ցիարսնն ասէ. «Մտի ի պարտէզ իմ, քո՛յր իմ Հարսն, կթեցի զմուռս իմ հանդերձ խնկովք իմովք. կերայ զհաց իմ մեղու իմով, արբի զգինի իմ կաթամբ իմով: Կերա՛յք, մերձաւո՛րք իմ եւ արբէք եւ արբեցարուք եղբօրորդիք իմ»:

«Ես ննջեմ, եւ սիրտ իմ արթուն կայ»: Հարսնն զգայ զփեսային բախել զդուռնն. «Ձայն եղբօրորդւոյ իմոյ բախէ ի դրանն»: Փեսայն ասէ. «Բա՛ց ինձ, քո՛յր իմ, մերձաւո՛ր իմ, աղաւնի՛ իմ, կատարեա՛լ իմ, զի գլուխ իմ լցաւ ցօղով, եւ վարսք իմ ի շաղից գիշերոյ»: Հարսնն ասէ զայս ինչ. «Մերկացայ զպատմուճան իմ, զիա՞րդ ագանիցիմ զնա. լուացի զոտս իմ, զիա՞րդ աղտեղացուցից զնոսա:

Եղբօրորդին իմ ձգեաց զձեռն իւր ընդ պատուհանն, եւ որովայն իմ խռովեցաւ ի նա: Յարեայ ես ի բանալ եղբօրորդւոյ իմոյ. ձեռք իմ կաթեցուցին զմուռս եւ մատունք իմ զմուռս լցեալս ի վերայ ձեռաց[6] փակաղակին:

Բացի ես եղբօրորդւոյ իմոյ. եղբօրորդի իմ անց[7], եւ ոգի իմ ել[8] ընդ բանի նորա: Խնդրեցի զնա և ոչ գտի, կոչեցի զնա և ոչ ետ ինձ ձայն: Գտին զիս պահապանքն, որ շրջէին ի քաղաքին, հարին եւ վիրաւորեցին զիս. հանին յինէն զխլայն իմ պահապանք պարսպացն: Երդմնեցուցանեմ զձեզ, դստե՛րք Երուսաղեմի, ի զօրութիւնս եւ ի հաստատութիւնս ագարակի, եթէ գտանիցէք զեղբորորդին իմ, պատմեսջիք նմա, եթէ խանդակաթ եմ ես ի սէր քո»:

---

[1] այստեղ՝ բայց
[2] զոր սիրեաց անձն իմ - որիդ սիրեց իմ հոգին, իմ հոգո՛ւ սիրած
[3] եթէ ոչ ծանիցես զանձն քո - եթէ չգիտես դա
[4] զնմանութիւն ոսկւոյ արասցուք քեզ - քեզ կզուգենք ոսկե զարդի պես
[5] իբրեւ զերամակս կտրելոց - խուզած ոչխարների հոտերի նման
[6] այստեղ՝ բռնակի
[7] գնացել էր
[8] ոգի իմ ել - խելքս մաղվեց

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱՆՈՒ

Գլ. Ա

Եւ եղեւ բան Տեառն առ Յովնան որդի Ամաթեայ եւ ասէ. «Արի՛ եւ գնա՛ ի Նինուէ քաղաք մեծ եւ քարոզեսջի՛ր անդ, զի ել աղաղակ չարութեան նորա առ իս»: Եւ յարեաւ Յովնան փախչել ի Թարսիս յերեսաց Տեառն: Էջ ի Յոպպէ եւ եգիտ նաւ, որ երթայր ի Թարսիս, եւ գինս եւ եմուտ ի նա նաւել ընդ նոսա ի Թարսիս յերեսաց Տեառն: Եւ Տէր յարոյց հողմ ի ծովուն եւ եղեւ մրրիկ մեծ ի ծովուն, եւ նաւն ի վտանգի կայր ի խորտակել: Եւ երկեան նաւավարքն երկեւղ մեծ եւ աղաղակէին առ իւրաքանչիւր աստուածս իւր. եւ ընկեցին զկարասին, որ էր ի նաւին ի ծով անդր, զի թեթեւացուսցեն յինքեանց. եւ Յովնան իջեալ ի խորշ մի նաւին՝ ննջէր եւ խորդայր: Մատեաւ առ նա նաւապետն եւ ասէ. «Զի՞նչ է այդ, զի խորդասդ, արի՛ կարդա՛ զՏէր Աստուած քո. թերեւս ապրեցուսցէ զմեզ Աստուած, եւ մի՛ կորիցուք»:

Եւ ասեն իւրաքանչիւր ցընկեր իւր. «Եկեա՛յք արկցուք վիճակս, եւ գիտասցուք՝ վասն ո՞յր են չարիքս այս ի վերայ մեր»: Արկին վիճակս, եւ ել վիճակն Յովնանու: Եւ ասեն ցնա. «Պատմեա՛ մեզ, վասն է՞ր են չարիքս այս մեզ. զի՞նչ արուեստ է քո, ուստի՞ գաս կամ յո՞ երթաս, յորմէ՞ աշխարհէ ես կամ յորմէ՞ ժողովրդենէ»: Ասէ ցնոսա. «Ծառայ Տեառն եմ ես եւ զՏէր Աստուած երկնից պաշտեմ որ արար զծով եւ զցամաք»: Եւ երկեան արքն երկեւղ մեծ եւ ասեն ցնա. «Զի՞նչ գործեցեր զայդ». զի գիտացին թէ, յերեսաց Տեառն փախուցեալ էր, քանզի պատմեաց նոցա: Եւ ասեն ցնա. «Զի՞նչ արասցուք քեզ, եւ դադարեսցէ ծովս ի մէնջ», զի ծովն առաւել եւս խռովեալ էր եւ յարուցանէր մրրիկ ի վերայ նոցա: Եւ ասէ ցնոսա Յովնան. «Առէ՛ք ընկեցէ՛ք զիս ի ծովդ, եւ դադարեսցէ ի ձէնջդ ծովդ. զի գիտեմ ես, եթէ վասն իմ է մրրիկս այս մեծ ի վերայ ձեր»:

Եւ ջանային արքն դարձուցանել զնաւն ի ցամաք եւ ոչ կարէին, զի ծովն եւս քան զեւս խռովէր եւ սաստկանայր ի վերայ նոցա: Աղաղակեցին առ Տէր եւ ասեն. «Քա՛ւ լիցի, Տէր, մի՛ կորիցուք վասն

անձին առնս այսորիկ եւ մի՛ ածէր ի վերայ մեր արիւն արդար, զի դու, Տէ՛ր, որպէս կամեցար եւ արարեր»: Եւ առին զՅովնան եւ ընկեցին ի ծովն, եւ դադարեաց ծովն ի խռովութենէ իւրմէ: Եւ երկեան արքն երկեւղ մեծ ի Տեառնէ, զենին զոհս Տեառն եւ ուխտեցին ուխտս:

Գլ. Բ

Եւ հրաման ետ Տէր կիտին մեծի կլանել զՅովնան, եւ էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս գիշերս: Եւ եկաց Յովնան յաղօթս առ Տէր Աստուած՝ ի փորոյ կետին: Եւ ասէ. «Ի նեղութեան իմում աղաղակեցի առ Տէր Աստուած իմ, եւ լուաւ ինձ. յորովայնէ դժոխոց աղաղակի իմում լո՛ւր, Տէ՛ր, ձայնի իմում: Ընկեցեր զիս ի խորս սրտից ծովու, եւ գետք պաշարեցին զիս. ամենայն զբօսանք[1] քո եւ ալիք քո անցին ի վերայ իմ: Եւ ասացի, թէ մերժեցայ յաչաց քոց. արդ իցէ՞ թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո: Հեղան զինեւ ջուրք մինչեւ յոգիս, անդունդք անհնարինք պաշարեցին զիս. եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց: Իջի յերկիր, որոյ նիգք իւր ազիւք յաւիտենից. ելցեն յապականութենէ կեանք իմ: Առ քեզ, Տէ՛ր Աստուած իմ, ի նուաղել հոգւոյ իմոյ կարդացի, զՏէր յիշեցի, եւ եկեսցեն աղօթք իմ ի տաճար սուրբ քո: Որ պահէին զունայնութիւն եւ զստութիւն՝ զողորմութիւնս իւրեանց թողին: Այլ ես ի ձայն օրհնութեան եւ խոստովանութեան մատուցից քեզ պատարագ, զոր ուխտեցի, եւ հատուցից փրկութեան Տեառն:

Եւ հրամայեցաւ ի Տեառնէ վիշապ ձկանն, եւ եթուք[2] զնա ի ցամաք:

Գլ. Գ

Եւ եղեւ բան Տեառն առ Յովնան երկրորդ անգամ եւ ասէ. «Արի՛ գնա՛ ի Նինուէ քաղաք մեծ եւ քարոզեսջի՛ր ի նմա ըստ առաջին քարոզութեանն, զոր խօսեցայ առ քեզ»: Յարեաւ Յովնան եւ գնաց ի Նինուէ, որպէս խօսեցաւ ընդ նմա Տէր: Եւ Նինուէ էր քաղաք մեծ

Աստուծոյ, իբրեւ գնաց երից աւուրց ճանապարհի: Եւ սկսաւ Յովնան մտանել ի քաղաքն. իբրեւ աւուր միոջ գնաց ճանապարհի, քարոզեաց եւ ասէ. «Այլ եւս երեք աւուրք, եւ Նինուէ կործանեսցի»:

Եւ հաւատացին արք Նինուէացիք յԱստուած եւ քարոզեցին պահս եւ քուրձ զգեցան ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս իւրեանց: Եհաս բանն առ թագաւորն Նինուէացւոց. յարեաւ յաթոռոյ իւրմէ եւ մերկացաւ զպատմուճան իւր, զգեցաւ քուրձ եւ նստաւ ի վերայ մոխրոյ: Եւ քարոզեցաւ եւ պատմեցաւ ի Նինուէ՝ ի թագաւորէն եւ ի մեծամեծաց իւրոց, թէ մարդ եւ անասուն, խաշն եւ արջառ, մի՛ ինչ ճաշակեսցեն եւ մի՛ ճարակեսցին եւ մի՛ ջուր արբցեն: Եւ զգեցան քուրձ մարդ եւ անասուն եւ աղաղակեցին առ Աստուած սրտի մտօք եւ դարձան յիւրաքանչիւր ճանապարհաց իւրեանց չարաց եւ յանօրէնութենէ, որ ի ձեռս իւրեանց. եւ ասեն. «Ո՛ գիտէ, ապաշաւեսցէ[3] Աստուած եւ դարձցի ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ, եւ մի՛ կորիցուք»: Եւ ետես Աստուած զգործս նոցա, զի դարձան իւրաքանչիւր ի ճանապարհաց իւրեանց չարաց, եւ զղջացաւ Աստուած ի վերայ չարեացն, զոր խօսեցաւ առնել նոցա, եւ ոչ արար:

Գլ. Դ

Եւ տրտմեցաւ Յովնան տրտմութիւն մեծ եւ խռովեցաւ: Եւ եկաց յաղօթս առ Տէր Աստուած եւ ասէ. «Ո՛վ Տէր, ո՞չ այս այն բանք են իմ մինչ էի անդէն յերկրին իմում. վասն այնորիկ աճապարեցի փախչել ի Թարսիս, զի գիտէի, թէ ողորմած ես դու եւ գթած, երկայնամիտ եւ բազումողորմ եւ զղջանաս ի վերայ չարեաց: Եւ արդ, Տէ՛ր ,Տէ՛ր, ա՛ռ զոգի իմ յինէն, զի լաւ է ինձ մեռանել, քան թէ իցեմ կենդանի: Եւ ասէ Տէր ցՅովնան, թէ՝ «Արդարեւ յո՞յժ տրտմեալ իցես»:

Եւ ել Յովնան ի քաղաքէ անտի եւ նստաւ յանդիման քաղաքին, եւ արար իւր հովանի եւ նստաւ ընդ հովանեաւն, մինչեւ տեսանիցէ, թէ զի՛նչ լինիցի քաղաքին: Եւ հրաման ետ Աստուած դդմենւոյն, եւ ել ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել նմա հովանի ի վերայ գլխոյ նորա, զովացուցանել զնա ի տառապանաց իւրոց. եւ ուրախ եղեւ Յովնան ի վերայ դդմենւոյն ուրախութիւն մեծ:

Եւ հրաման ետ Աստուած որդանն[4] առաւօտուն ի վաղիւ անդր, եհար զդդմենին, եւ ցամաքեցաւ: Եւ եղեւ ի ծագել արեւուն հրամայեաց Աստուած հողմոյ խորշակի տապախառնի, եւ անկաւ արեւն զգլխովն Յովնանու, եւ կայր ի տարակուսի եւ քաղէին ոգիք նորա. եւ ասէր. «Լաւ էր ինձ մեռանել քան զայս կեանս իմ»:

Եւ ասէ Տէր Աստուած ցՅովնան, թէ՝ «Արդարեւ յո՞յժ տրտմեալ իցես ի վերայ դդմենւոյն»: Եւ ասէ. «Յոյժ տրտմեալ եմ մինչեւ ցմահ»:

Եւ ասէ Տէր. «Դու խնայեցեր ի դդմենին, յոր ոչ եղեր ինչ աշխատ, եւ ոչ սնուցեր զնա, որ գիշերի ել եւ մեւս գիշերի կորեաւ. ես ո՞չ խնայեցից ի Նինուէ քաղաք մեծ, յորում բնակեալ են աւելի քան զերկոտասան բեւր մարդիկ, որ ոչ ծանեան զաջ եւ զահեակ իւրեանց, եւ անասուն բազում»:

---

[1] զբօսանք, այստեղ՝ տատանում, ծփանք, ալեկոծություն (ջրերի)
[2] թքանել - գործածված է դուրս վիժել, դուրս մղել, դուրս գցել նշանակությամբ
[3] այստեղ՝ խղճալ, կարեկցել, մեղք գալ
[4] որդն, որդան, որդունք, գ. որդ, ճճի, ճիճու

ՈՂԲՔ ՍՐԲՈՅՆ ԵՐԵՄԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Գլ. Ա

Եւ եղեւ յետ գերութեանն Իսրայելի եւ աւերածոյն Երուսաղեմի, նստէր եւ լայր ողբայր Երեմիա զողբս զայս ի վերայ Երուսաղեմի եւ ասէր.

Զիա՛րդ զատաւ նստաւ մենացեալ քաղաքն բազմաժողով եւ եղեւ իբրեւ կին մի այրի լցեալ տրտմութեամբ ի մէջ հեթանոսաց. իշխանն աշխարհի եղեւ հարկատու: Լալով ելաց ի գիշերի, եւ արտասուք իւր ի վերայ ծնօտից իւրոց, եւ ոչ գտաւ մխիթարիչ նմա յայնմ աւուր ի սիրելեաց իւրոց. ամենայն բարեկամք նորա անարգեցին զնա եւ եղեն նմա իբրեւ թշնամիք: Վարեցաւ ի գերութիւն Յուդա[1], ի բազում տառապանս, ի նեղութեան, ստրկութեան, ծառայութեան. նստաւ ի մէջ հեթանոսաց եւ ոչ եգիտ հանգիստ. ամենայն հալածիչք իւր հասին նմա ի մէջ թշնամեաց իւրոց: Սուգ առին ճանապարհք Սիոնի, զի ոչ գոյր երթեւեկ տօնից տարեկանաց նորա. ամենայն դրունք նորա եղեն յապականութիւն, եւ քահանայք նորա հաչեն հառաչեն եւ յոգւոց հանեն. կուսանք նորա ի գերութիւն վարեցան, եւ ինքն դառնացեալ յանձն իւր: Եւ եղեն նեղիչք նորա ի գլուխս, եւ թշնամիք նորա յուրախութիւն. զի Տէր կորացոյց զնա վասն բազում ամպարշտութեան նորա. տղայք նորա վարեցան ի գերութիւն առաջի նեղչաց նորա: Բարձաւ ի դստերացն Սիոնի ամենայն վայելչութիւն նոցա. եղեն իշխանք նոցա իբրեւ խոյք, որոց ոչ գտանէր նոցա ճարակ, ետուն զցանկալի ցանկալի ինչս իւրեանց՝ կերակրոց, զի հանգուցցեն զանձինս իւրեանց. երթային եւ ոչ՝ի միտս իւրեանց[2] առաջի նեղչաց ըստ վարել հալածչացն: Յիշեաց Երուսաղէմ զօր տառապանաց եւ զօր անջատման իւրոյ. թախծեցաւ ընդ ամենայն ցանկալի ինչս զոր ստացեալ էր ի սկզբանէ, յանկանել ժողովրդեանն ի ձեռս թշնամեացն, եւ ոչ ոք էր որ օգնէր նմա. տեսին ատելիք նորա, ոտն հարին եւ ծիծաղեցան ի վերայ գերութեան նորա: Մեղս մեղաւ Երուսաղէմ, վասն այսորիկ ամենայն գովիչք նորա կոր ի գլուխ առնէին զնա. զի տեսին

զանարգանս նորա, զի նա ինքնին յետս դարձեալ յոգւոց ելանէր: Պղծութիւն նորա առաջի ոտից իւրոց եւ ոչ յիշեաց նա զյետինս իւր. իջոյց արտասուս մեծամեծս, եւ ոչ ոք էր որ մխիթարէր զնա. տե՛ս, Տէ՛ր, զտառապանս իմ, զի բարձրացան թշնամիք իմ ի վերայ իմ: Զձեռն իւր ձգեաց նեղիչն ի վերայ ցանկալեաց իմոց. տեսի ես զՀեթանոսս, զի մտին ի սրբութիւն քո, որոց պատուիրեցեր, թէ մի՛ մտցեն ի տեղի ժողովրդոց քոց: Ամենայն ժողովուրդք յոգւոց ելանէին ի խնդիր հացի, տային զամենայն ցանկալի ինչս իւրեանց ի գինս հացի, զի դարձուցցեն զանձինս իւրեանց յինքեանս[3]. տե՛ս, Տէ՛ր, եւ հայեա՛ց, զի եղէ ես անարգեալ: Ձեզ ասեմ, ձեզ ասեմ, անցաւո՛ղք ճանապարհաց, դարձա՛յք հայեցարո՛ւք եւ տեսէ՛ք, թէ իցե՞ն երբեք ցաւք ըստ ցաւոց լեալ, որ ի վերայ իմ հասին. բարբառեցաւ յիս Տէր, եւ կորացոյց զիս յաւուր բարկութեան սրտմտութեան իւրոյ: Ի բարձանց իւրոց առաքեաց հուր յոսկերս իմ. ցանց ձգեաց մտից իմոց. եւ դարձոյց զիս յետս իմ. արար յապականութիւն զանձն իմ զօրհանապազ ի տառապանս տրտմութեան: Կանխեաց Տէր ի վերայ ամպարշտութեան իմոյ եւ արկ զինեւ զձեռն իւր. ծանրացոյց զլուծ իւր ի վերայ պարանոցի իմոյ, տկարացաւ զօրութիւն իմ. մատնեաց զիս Տէր ի ձեռս ցաւոց իմոց, եւ ոչ կարեմ հանդարտել: Ջնջեաց ի միջոյ իմմէ զընտիր ընտիր զօրուց իմոց, կոչեաց ի վերայ ընտրելոց իմոց ժամանակ բեկման. հնձան եհար Տէր կուսի դստերն Յուդայ[4]: Վասն այսորիկ ես ահաւասիկ ի լալ մատուցեալ եմ. ակն իմ իջոյց արտասուս, զի հեռի եղեն յինէն մխիթարիչք իմ, որ դարձուցանէ զանձն իմ յիս. մատնեցան որդիք իմ յապականութիւն, զի զօրացաւ թշնամին: Տարածեաց Սիոն զբազուկս իւր առ Աստուած եւ ո՛չ ոք էր, որ մխիթարէր զնա. չուրջ զնովաւ նեղիչք նորա. եղեւ Երուսաղէմ աղտեղեալ իբրեւ կին մի ի մէջ նոցա: Արդար է Տէր Աստուած, զի ես դառնացուցի զնա. լուարուք զայս, ամենա՛յն ժողովուրդք, եւ տեսէ՛ք զցաւս իմ. օրիորդք իմ եւ երիտասարդք իմ վարեցան ի գերութիւն: Կոչեցի ես զսիրելիսն իմ, եւ նոքա արհամարհեցին զիս. քահանայք իմ եւ երիցունք իմ աստէն ի

քաղաքիս սատակեցան. խնդրեցին կերակուր, զի դարձուսցեն զոգիս իւրեանց, եւ ոչ գտաւ: Տե՛ս, Տէ՛ր, զի նեղեալ եմ. ոսկերք իմ խռովեցան, սիրտ իմ գելաւ յիս, եւ ես գտայ դառնացեալ. արտաքուստ անժառանգեաց զիս սուր, որպէս եւ մահ՝ ի ներքուստ: Լուարո՛ւք, լուարո՛ւք զայս, զի ես հեծեմ հառաչեմ, եւ ոչ ոք է, որ մխիթարէ զիս. ամենայն թշնամիք իմ լուան զչարիս իմ եւ ոտն հարին ինձ, զի դու արարեր զօրն զայն եւ դու կոչեցեր զժամանակն զայն, եւ եղեւ ինձ վայ վայ: Մտին չարիքն ամենայն առաջի քո, եւ ճռաքաղ արա դու զնոսա, զոր օրինակ արարեր ճռաքաղ զիս ի վերայ ամենայն մեղաց իմոց. զի բազում եղեն հեծութիւնք իմ, եւ սիրտ իմ լի եղեւ տրտմութեամբ:

---

[1] Յուդայի երկիրը

[2] երթային եւ ոչ ի միտս իւրեանց - գնում էին մտամոլոր

[3] զի դարձուսցեն զանձինս իւրեանց յինքեանս - որպեսզի պահեն իրենք իրենց

[4] հնձան եհար Տէր կուսի դստերն Յուդայ - Տերը, ինչպես հնձանում, ճզմեց կույսին՝ Յուդայի երկրի դստերը

ՅՈՒԴԻԹ

Գլ. Է

Եւ ի վաղիւ անդր պատուիրեաց Հողոփեռն զաւրաց իւրոց, եւ ժողովեցան, որ եկեալն էին նմա յաւգնականութիւն՝ չուել գնա՛լ ի Բետիղուա եւ ի վերայ ելից լեռնակողմանն, եւ հասանե՛լ տալ պատերազմ ընդ որդիսն Իսրայէլի: Եւ կազմեցան պատրաստեցան, գնացին յաւուրն յայնմիկ ամենայն այր պատերազմի, եւ ամենայն հատեւակազաւր պատերազմողացն՝ հարիւր եւթանասուն հազար, եւ հեծելազաւրքն վառեալք երկոտասան հազար, թող զայլ ռամիկն ամենայն եւ զկա՛հ եւ զկարասի բազում սաստիկ յոյժ: Եւ բանակեցան նոքա ի հովիտն, որ մե՛րձ էր ի Բետիղուա, ի վերայ աղբերն. եւ հանին զառաջս բանակացն ընդ հարաւակողմն ի լայնութիւն մինչեւ ի Դովթայիմ, եւ յերկայնութիւն՝ ի Բետիղուայ մինչեւ ի Կիամ, որ է ընդդէմ յեզրայելովմայ, ա՛յս ինքն է՝ Յեզրայէլ: Եւ որդիքն Իսրայելի իբրեւ տեսին զա՛յնչափ բազմութիւնն, խռովեցան յոյժ եւ ասեն ա՛յր ցընկեր իւր. «Այժմ լիզո՛ւն նոքա զամենայն երեսս երկրի, եւ ո՛չ լերինք բարձունք, եւ ո՛չ ձորք եւ բլուրք կարասցեն կա՛լ առաջի զաւրութեան դոցա»: Եւ առին որդիքն Իսրայէլի ա՛յր իւրաքանչիւր զզէն իւր եւ լուցանէին ջահս ի վերայ աշտարակացն քաղաքին եւ կային պահէին զամենայն գիշերն զայն: Եւ յաւուրն երկրորդի եհան Հողոփեռնէս զամենայն զհեծելազաւրն դէմ յանդիման որդւոցն Իսրայէլի, որ էին ի Բետիղուա, եւ հաս նա ի վերայ ելից քաղաքին նոցա եւ զաղբերս ջրոցն քննեաց, եւ աճապարէր պաշարել զնոսա. եւ հարկանէր ի վերայ նոցա բանակս բանակս յարանց պատերազմողաց. եւ ինքն չուէր գնայր անդրէն ի բանակն իւր: Եւ մատեան առ նա ամենայն որդիքն Ամովնայ եւ ամենայն ժողովք եւ առաջնորդք որդւոցն Մովաբու եւ զաւրագլուխք ծովեզերեայցն եւ ասեն. «Լուիցէ՛ բանիս ծառայիս իւրոց Տէր մեր, զի մի՛ լիցին հարուածք զաւրաց քոց. զի ժողովուրդ որդւոցս Իսրայէլի ո՛չ են յուսացեալ ի նիզակս իւրեանց եւ ո՛չ ի զէնս, այլ ի վերայ լերանց բարձանց իւրեանց, յորում բնակեալ էին ի նոսա. ո՛չ

իսկ հնա՛ր է հասանել ի նոսա: Եւ արդ, Տէ՛ր, մի՛ տար դու ընդ նոսա մարտ պատերազմի, որպէս եւ լինի պատերազմ, եւ ո՛չ անկցի մի այր ի զաւրաց քոց, այլ հանդարտեա՛ եւ մնա՛ դու ի բանակիս քում եւ ապրեցուսցես դու զզաւրս քո. այլ կալցին ծառայք քո զաղբերս ջուրցն, որ ելանէ ի լեռնոտանէ անտի. քանզի անտի՛ ըմպեն ամենայն բնակիչք քաղաքիդ. եւ սատակին նոքա ի ծարաւոյ, եւ ապա ինքեանք իսկ մատնեսցեն զքաղաքն ի ձեռս քո. եւ ամենայն զաւրավարաւք մերովք ելանեմք ի վերայ լերանց բարձանց, որ մերձաւորքս իցեն, եւ բանակեսցուք ի վերայ նոցա իբրեւ զայր մի, քանզի սպառեսցին նոքա ի սովոյ եւ ի ծարաւոյ՝ ինքեանք եւ կանայք իւրեանց եւ որդիք իւրեանց, մինչչե՛ւ եկեալ իցէ ի վերայ նոցա սուր. տապաստ անկցին ի հրապարակս քաղաքին իւրեանց, եւ հատուսցեն նոցա զհատուցումն չարութեան նոցա՝ փոխանակ զի ի կռիւ կացին եւ ո՛չ հնազանդեցան քեզ խաղաղութեամբ»: Եւ հաճոյ թուեցաւ խորհուրդն Հողոփեռնեայ եւ ամենայն ծառայից նորա, եւ հրաման ետ առնել որպէս եւ խաւսեցանն: Եւ գնաց բանակ որդւոցն Ամոնայ, եւ ընդ նոսա հազարք հինգ յորդւոցն Ասուր, եւ բանակեցան նոքա ի ձոր հովտին եւ հասին կալան նոքա զաղբերս ջուրցն զորդւոցն Իսրայէլի:

Եւ որդիքն Իսրայէլի գոչեցին առ Տէր Աստուած իւրեանց, զի զահի հարեալ սպառեալ էին ոգիքն նոցա[1], քանզի պատեալ պաշարեալ էր զնոսա թշնամեաց նոցա. եւ ո՛չ էր հնար նոցա ելանել ի միջոյ նոցա. եւ կացին պաշարեցին զնոսա զաւրքն Ասուրայ զինու կառաւք եւ երիւարաւք իւրեանց զաւուրս երեսուն եւ չորս: Եւ լքան պարտասեցան ամենայն բնակիչք Բետիղուայ, եւ ամենայն ամանք նոցա սպառեալ էին ի ջրոյ, եւ գոբբք սպառեալ թափեալ էին. եւ ո՛չ գոյր ըմպելի միում աւուր, եւ զոր ըմպէին՝ չափով եւ կշռով ըմպէին: Եւ ի վարանի եւ ի տարակուսի կային կանայք եւ մանկունք նոցա, եւ երիտասարդք նոցա լքեալ էին ի ծարաւոյ եւ գլորեալք կային ընդ հրապարակս քաղաքին եւ ընդ անցս դրանցն[2]. եւ ո՛չ ուստէք էր նոցա մխիթարութիւն: Եւ ժողովեցան ամենայն ժողովուրդն ի վերայ Ոզիայ

եւ ի վերայ իշխանաց քաղաքին՝ երիտասարդք եւ կանայք եւ մանկտին. եւ լացին նոքա ձայնիւ մեծաւ եւ ասեն առաջի ամենայն ծերոց ժողովրդեանն. «Դա՛տ արասցէ Աստուած ի մէջ մեր եւ ի մէջ ձեր, զի արարէք առ մեզ իրս անիրաւութեան՝ առ ի չխաւսելոյ ձեր ի խաղաղութիւն ընդ որդիսն Ասուր: Եւ արդ ո՛չ ոք է, որ աւգնէ մեզ, այլ մատնեաց զմեզ Աստուած ի ձեռս նոցա, զի տապաստ անկցուք մեք առաջի նոցա եւ ի կորուստ մեծի ծարաւոյ: Արդ, այժմ աղաչեցէ՛ք դուք զնոսա եւ տո՛ւք յաւար նոցա զքաղաքս ամենայն: Զի լա՛ւ է մեզ լինել ի յափշտակութիւն նոցա եւ ի ծառայութիւն եւ կեցցեն անձինք մեր, քանզի ո՛չ կարեմք տեսանել զմահ տղայոց եւ զկանանց աչաւք մերովք, զի պակասեալ սպառեալ են ոգիք նոցա: Արդ, վկայե՛մք ձեզ առաջի երկնից եւ երկրի եւ Աստուծոյ հարցն մերոց, որ խնդրէ զվրէժ անձանց մերոց եւ ըստ մեղաց հարցն մերոց, զի մի՛ արասցէ ըստ բանիցն այսոցիկ յաւուրս յայսոսիկ[3]»: Եւ եղեւ լալումն եւ ողբումն մե՛ծ ի վերայ եկեղեցւոյն ամենեցուն ի միասին, եւ գոչեցին նոքա առ Տէր Աստուած ձայնիւ մեծաւ: Եւ ասէ ցնոսա Ոզիա. «Քաջալերեցարո՛ւք, եղբա՛ք, եւ համբերեցէ՛ք աւուրս եւս հինգ, յորում աւուր առաքէ Տէր զողորմութիւն իւր ի վերայ մեր, զի ո՛չ թողու նա զմեզ ի սպառ. եւ յորժամ անցանիցեն ա՛յս աւուրք, եւ ո՛չ եկեսցէ ի վերայ մեր աւգնութիւն, արարի՛ց ձեզ ըստ բանիցս այսոցիկ»: Եւ արձակեաց զժողովուրդս ի տունս իւրեանց. եւ յաշտարակս եւ ի պարիսպս քաղաքին՝ զգուշանալ ի թշնամեացն: Եւ էին ի վարանս եւ ի մեծ տարակուսանս:

Գլ. Ը

Եւ լուաւ յաւուր յայնմիկ Յուդիթ՝ դուստր Մերարեայ: Եւ այր նորա Մանասէ՝ յազգէ նորուն եւ ի հայրենեաց նորա: Եւ մեռա՛ւ այր նորա յաւուրս հնձոց գարեաց, զի կա՛յր նա ի վերայ հնձողաց իւրոց ի դաշտին, զի յընթանալ խորշակին եւ գա՛լ հասանել ի վերայ գլխոյ նորա, յորմէ եւ մեռաւ իսկ ի Բետիղուա՝ ի քաղաքի իւրում, եւ թաղե-

ցաւ նա առ հարս իւր՝ յագարակին, որ մե՛ռաւ էր առ Դովթայիմն եւ ի Բաղսովն: Եւ նստէր Յուդիթ այրի ի տան իւրում ա՛մս երիս եւ ամիսս չորս: Եւ արար նա տաղաւար ի տանիս տանն իւրոյ եւ ածեալ զիւրեւ հանդերձ այրութեան եւ պահէր նա զամենայն աւուրս այրութեանն իւրոյ, բայց միայն զաւր չաբաթուն եւ զամսամտից եւ զտարեկանացն եւ զուրախութեան տանն Իսրայէլի: Եւ է՛ր նա գեղեցիկ յոյժ տեսանելով: Եւ եթող նմա Մանասէ այր նորա ոսկի եւ արծաթ, ծառայս եւ աղախնայս, եւ անդս եւ ագարակս, եւ անասուն. եւ ինքն Յուդիթ դարմանէ՛ր զայն: Եւ ո՛չ ոք ինչ ասէր վասն նորա բան չարութեան, զի երկիւղա՛ծ էր նա յոյժ ի Տեառնէ: Եւ իբրեւ լուաւ նա զբանն ժողովրդեանն, զոր խաւսեցան ապիրատութեամբ ընդ իշխանին, զի պակասեալ էին նոքա ի ծարաւոյ, եւ լուաւ Յուդիթ զբանսն Ոզիայ զոր խաւսեցաւ ընդ ժողովուրդսն եւ որպէս վկայեա՛ց նոցա՝ մատնել զքաղաքն յետ հինգ աւուրն ի ձեռս Ասորեստանեացն, եւ առաքեաց զնաժիշտն իւր, որ էր ի վերայ ամենայն ընչից իւրոց, եւ կոչեաց զՈզիայ եւ զՔաբրին եւ զՔարմին եւ զծերս ամենայն քաղաքին իւրոյ: Եւ եկին առ նա. եւ ասէ ցնոսա. «Լուարո՛ւք ինձ , բնակի՛չք Բետիղուայ, զի ո՛չ ուղիղ են բանք ձեր, զոր խաւսեցարուք առաջի ժողովրդեանդ յաւուրս յայսմիկ եւ երդմամբ հաստատեցէ՛ք, զոր խաւսեցարուքն առաջի Աստուծոյ ի միջի ձերում, եւ ասացէք մատնել զքաղաքս ի ձեռս թշնամեաց մերոց, եւ՝ եթէ ո՛չ Տէր առաքէ զաւգնականութիւն մեզ: Քա՛ւ լիցի ձեզ, եղբա՛րք. մի՛ բարկացուցանիցէք զՏէր Աստուած մեր: Այլ այժմ կացեալ ա՛կն կալցուք գտանել ի նմանէ զողորմութիւն, աղաչեսցո՛ւք եւ կարդասցուք առ նա յաւգնականութիւն մեզ. եւ լուիցէ՛ ձայնի աղաւթից մերոց, եթէ իցէ նմա հաճոյ:

Յիշեցէ՛ք՝ ո՞րչափ արար ընդ Աբրահամուն եւ ո՞րպէս արար ընդ Սահակայ եւ կամ՝ ընդ Յակոբայ ի Միջագետս Ասորւոց, ի հովուել նորա խաչանցն Ղաբանու եղբաւր մաւր իւրոյ:

Զի ո՛չ եթէ որպէս զնոսայն փորձեաց առ ի ճանաչել զխորհուրդս սրտից նոցա, եւ զմեր մեղս ո՛չ խնդրեսցէ[4], այլ ի խրատե՛լ եւ

ուսուցանե՛լ տանջէ Տէր զմերձաւորս իւր: Եւ ասէ ցնա Ոզիա. «Զամենայն, զոր ինչ ասացերդ, ի լրութենէ սրտի եւ ի բարւոք մտէ խաւսեցար, եւ ո՛չ ոք է, որ ընդդէմ դառնայ բանից քոց. զի ո՛չ միայն այսաւր յայտնեցաւ իմաստութիւնդ քո, այլ յաւուրցն առաջնոց գիտաց ամենայն ժողովուրդդ զհանճարդ քո, վասն զի բարւոք են ստեղծուածք սրտի քոյ. այլ ժողովուրդս ծարաւեաց յոյժ, եւ հա՛րկ եղեւ մեզ առնել՝ որպէս եւ խաւսեցաք ընդ դոսա, եւ ածել ի վերայ մեր զերդումն, զորով ո՛չ կարեմք անցանել:

Արդ, աղաչեա՛ դու խնդրուածովք զԱստուած, զի կին արդա՛ր ես դու, եւ առաքեսցէ՛ Տէր զանձրեւ՝ եւ լցցին դուբքս եւ ո՛չ եւս պակասեսցուք»: Եւ ասէ ցնոսա Յուդիթ. «Լուարո՛ւք դուք ինձ. եւ արարից ես իրս մի, որ պատմեսցի ազգաց մինչեւ յազգս եւ որդւոց մինչեւ յորդիս: Դուք կացջի՛ք առ դրան քաղաքիս՝ զգիշերս զայս, եւ ելից ես նաժշտաւս իմով. եւ յաւուրս յայս, յոր ուխտեցէք մատնել զքաղաքս զայս ի ձեռս թշնամեաց մերոց, այցելու լիցի Տէր Աստուած ի ձեռն իմ: Եւ դուք մի՛ քննէք զգործսն իմ, զոր գործելոց եմ, քանզի ո՛չ իսկ ասացից ձեզ, մինչեւ կատարեսցի այն, զոր ե՛սն առնեմ»: Եւ ասէ Ոզիա՝ իշխանաւքն հանդերձ ցնա. «Գնա՛ դու ի խաղաղութիւն. եւ Տէր Աստուած Իսրայելի եղիցի ընդ քեզ՝ խնդրե՛լ զվրէժ ի թշնամեաց մերոց»: Եւ նոքա դարձան ի տաղաւարէ անտի Յուդիթայ՝ յիւրաքանչիւր տեղիս պահպանութեան պարսպացն:

Գլ. Թ

Եւ անկաւ Յուդիթ ի վերայ երեսաց իւրոց եւ ի բա՛ց առ զքուրձն, որ զգեցեալ էր ինքեան, եւ ցանեաց մոխիր ի վերայ գլխոյ իւրոյ: Եւ կարդաց նա ձայնիւ մեծաւ առ Տէր Աստուած եւ ասէ. «Ահաւասիկ Ասորեստանեայն[5] ելից զաւրաւք իւրովք զերկիրս, եւ բարձրացան հեծելովք երիվարացն, եւ հպարտացեալ մեծամտեաց ի բազուկ հետեւակացն բազմութեան, եւ յուսացան ի նիզակս եւ ի սպառազինութիւնս եւ ի կորովս աղեղնաւորացն եւ պարսաւորացն եւ ո՛չ գի-

տացին, թէ դո՛ւ Տէր ես, որ խորտակես զպատերազմունս, եւ Տէր է անուն քո: Փրկեա՛ զմեզ ի նեղութիւնէս եւ ցրուեա՛ զզաւրութիւնս նոցա, Տէ՛ր ամենակալ, եւ խորտակեա՛, ընկեա՛ զզաւրութիւնս նոցա բարկութեամբ քով, զի կամեցան պղծել զսրբութիւնս քո եւ զյարկս անուան բնակութեան փառաց քոց եւ կործանել երկաթով զեղջերս սեղանոյ սրբոյ քոյ: Նայեա՛ց եւ տե՛ս զամբարտաւանութիւնս նոցա եւ առաքեա՛ զբարկութիւնս քո ի վերայ գլխոց նոցա. եւ տո՛ւր ձեռն աղախնոյ քոյ, եւ այրոյս զաւրութիւն, զոր խորհեցայս առնել[6]: Եւ ծանո՛ զբարձր բազուկ քո ժառանգութեան քոյ, եթէ դո՛ւ ես Աստուած, որ տիրես ամենայն զաւրութեանց եւ իշխանութեանց, զի ո՛չ ոք է, որ պաշտպան լինի ազգիս Իսրայէլի, բա՛ց ի քէն, Տէ՛ր»:

Գլ. Ժ

Եւ իբրեւ դադարեաց Յուդիթ յաղաւթից իւրոց եւ կատարեաց զբանս զայս եւ յոտն եկաց յերեսաց խոնարհելոց[7] եւ կոչեաց զնաժիշտն իւր, եւ էջ ի տուն իւր նա, ուր կատարէր զաւուրս շաբաթուց եւ զաւուրս տաւնիցն: Մերկացաւ յիւրմէ զքուրձն, զոր զգեցեալն էր, եւ ի բաց եհան զհանդերձն այրութեան իւրոյ եւ լուաց զմարմինս իւր ջրով եւ աւծաւ իւղով անուշիւ եւ եհիւս զհեր գլխոյ իւրոյ եւ կապեաց զապարաւշն ի ճակատ իւր եւ զգեցաւ զհանդերձ ուրախութեան իւրոյ, զոր զգենոյր առ կենդանութեամբ առն իւրոյ Մանասէի. եւ ագանէր կաւշիկս ոսկեզաւծս եւ արկանէր ապարանջանս ի ձեռս իւր, եւ արկանէր քայուս յականց պատուականաց ընդելուզեալս մարգարտով ի պարանոց իւր, եւ մատանիս՝ ի մատունս իւր, եւ զդորշապահանդս ի գլուխ իւր. եւ յաւրինէր կազմէր ամենայն զարդու իւրով եւ պայծառանայր առաւել յոյժ՝ առ ի խաբել եւ պատրել զամենեսին ի՛ գեղ երեսաց իւրոց, որ տեսանիցեն զնա: Եւ ետ ցաղախինն իւր զմախաղն. եւ ելից զնա փոխնդով եւ պաղատակաւք եւ հացիւք սրբովք. եւ զհադաղակն գինւոյ եւ զսրուակն իւղոյ. եւ սրբէր կազմէր զամենայն ըստ աւրինին իւրեանց եւ տայր ցաղախինն իւր: Եւ ելին նոքա ընդ դուռն

քաղաքին Բետիղուայ եւ տեսին անդ զՈզիա, զի կայր առ դրանն, եւ զայլ քահանայս քաղաքին ընդ նմա, եւ զԲարբին եւ զԲարմին: Եւ իբրեւ տեսին նոքա զՅուդիթ, զի էր փոխեալ նորա զգեղ երեսաց իւրոց եւ զգեստ հանդերձին իւրոյ, զարմացան նոքա ընդ գեղ նորա յոյժ եւ ասեն ցնա. «Աստուած, Աստուած հարցն մերոց տացէ քեզ շնորհս եւ կատարեսցէ՛ զկամս սրտի քոյ ի ցնծութիւն եւ յուրախութիւն որդւոցն Իսրայէլի եւ ի բարութիւն Երուսաղէմի»: Եւ երկի՛ր պագին Աստուծոյ: Եւ ասէ ցնոսա Յուդիթ. «Հրամայեցէ՛ք ինձ բանալ զդրունս քաղաքիս, զի ելից ես՝ կատարե՛լ զբանս, զոր խաւսեցայք ընդ իս»: Եւ հրամայեցին դռնապանացն բանալ, որպէս եւ խաւսեցանն, եւ արարին այնպէս: Եւ ել Յուդիթ՝ ինքն եւ աղախինն իւր ընդ նմա: Եւ միտ դնէին նմա[8] արք քաղաքին յերթալն նորա, մինչեւ եղեւ նա ընդ լերամբն, մինչեւ անց նա ընդ ծործոր հովտին. եւ ապա ո՛չ եւս տեսին զնա: Եւ երթային նոքա ընդ ծործոր հովտին ուղիղ ընդ ճանապարհն. եւ պատահեցին նոցա պահապանքն Ասորեստանեայցն եւ կալան զնոսա, հարցին եւ ասեն. «Ո՞յր ես դու, եւ ուստի՞ գաս կամ յո՞ երթաս»: Եւ ասէ ցնոսա Յուդիթ. «Դուստր եմ ես եբրայեցւոց եւ փախուցեալ եմ ես յերեսաց նոցա, զի մատնելոց են նոքա ի կերակուր ձեզ. եւ ես եկի կալ առաջի Հողոփեռնեայ իշխանի զաւրաց ձերոց՝ պատմել նմա զբանս ճշմարտութեան եւ ցուցանել նմա զճանապարհն ընդ որ երթայցէ եւ տիրեսցէ ամենայն լեռնային կողմանցն. եւ ո՛չ միում ումեք լիցի վնաս ի զաւրաց դորա»: Եւ իբրեւ լուան արքն զբանս Յուդթայ եւ նայեցան նոքա յերեսս նորա եւ առաջի նոցա գեղեցկութիւն յոյժ, եւ ասեն ցնա. «Ապրեցուցէր դու զանձն քո այսաւր. արդ, փութա՛ դու իջանել տեսանե՛լ զերեսս տեառն մերոյ եւ մատիցե՛ս դու առ խորան նորա մեւք հանդերձ, եւ տացուք զքեզ ի ձեռս նորա: Եւ յորժամ կացցես առաջի նորա, մի՛ երկնչիցիս ի սրտի քում, այլ պատմեսցե՛ս դու նմա ըստ բանիցդ այդոցիկ. եւ բարի՛ արասցէ քեզ»: Եւ ընտրեցին յիւրեանց արս հարիւր եւ յղեցին ընդ նմա. եւ ածին զնոսա ի խորանն Հողոփեռնեայ. եւ պատմեցին զգեղեցկութիւն նորա եւ

զգալն՝ յամենայն բանակին. եւ գային ի տեսանել զնա, մինչդեռ կա՛յր արտաքո խորանին Հողոփեռնեայ, մինչդեռ պատմէին Հողոփեռնեայ. եւ զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա եւ ամենայն որդւոցն Իսրայէլի: Եւ ասեն այր ցընկեր իւր. «Իսկ արդ, ո՞ կարէ չար ինչ խորհել ի վերայ ազգիս այսորիկ, որք ունին զայսպիսի գեղեցկութիւն կանայք նոցա. արդ, ո՛չ պարտին ապրել արք նոցա, զի եղիցին դստերք նոցա մեզ կնութեան. զի թէ ապրեն՝ վնա՛ս են նոքա ամենայն երկրի»: Եւ ելին սպասաւորքն Հողոփեռնեայ եւ ամենայն ծառայք նորա եւ տարան զնա ի խորանն: Եւ Հողոփեռն նստէր ի գահոյսն իւր. եւ էր փակեալ զնա վարագուրաւք չուրջանակի, զորս էր ընդելուզեալ ոսկւով եւ մարգարտով եւ ակամբք պատուականաւք: Եւ իբրեւ լուաւ նա զՅուդիթայ, ել նա արտաքս ի սրահ խորանին ջահիւք եւ լապտերաւք արծաթեաւք, քանզի գիշեր էր: Եւ իբրեւ ետես զնա Հողոփեռնէս, զարմացաւ ընդ տեսիլ գեղոյ նորա: Եւ անկեալ ի խոնարհ, երկի՛ր պագանէր Յուդիթ Հողոփեռնեայ. եւ կանգնեցին զնա ծառայք նորա:

Գլ. ԺԱ

Եւ ասէ ցնա Հողոփեռնէս. «Համարձակեա՛ց կին դու եւ մի՛ երկնչիր, զի ես ո՛չ չարչարեմ զմարդ, որ կամի ծառայել Նաբուքոդոնոսորայ արքայի, որ տիրէ ամենայն երկրիս: Եւ արդ՝ ժողովուրդ քո այդ, որ բնակալդ է ի լեռնակողմանդ, եթէ ո՛չ էր ապստամբեալ դոցա յինէն, ո՛չ էր իմ առեալ զնիզակ իմ ի վերայ դոցա. այլ դոքա ինքեանք արարին անձանց իւրեանց զայս: Արդ, ասա՛ դու ինձ, վասն որո՞յ ես դու փախուցեալ ի նոցանէն եւ եկեալ ես առ մեզ. քաջալերեա՛ց, զի ի փրկութիւն եկեալ ես, զի կենդանի ես ի գիշերիս յայսմիկ եւ զամենայն աւուրս քո, եւ ո՛չ ոք է, որ վնասէ քեզ, այլ բարի լիցի քեզ՝ որպէս եւ լինի ծառայից տեառն իմոյ Նաբուքոդոնոսորայ»: Եւ ասէ ցնա Յուդիթ. «Ընկա՛լ զբանս աղախնոյ քոյ, եւ խաւսեսցի աղախին քո առաջի քո. եւ ո՛չ ինչ ստութիւն պատմեմ տեառն իմում ի գիշերիս յայսմիկ. եթէ զհետ եկեսցես եւ լուիցես բանից աղախնոյ քոյ՝

գործ կատարեալ գործէ ընդ քեզ Աստուած, եւ ո՛չ անկցի բան քո ընդունայն: Զի կենդանի է Նաբուքոդոնոսոր արքայ ամենայն երկրի, եւ կենդանի է զաւրութիւն նորա, որ առաքեաց զքեզ յուղղութիւն ամենայն մարդոյ. զի ո՛չ եթէ մարդիկս միայն ծառայեն նմա ի ձեռն քո, այլ եւ գազանք վայրի եւ անասունք եւ թռչունք երկնից. քե՛ւ կեցցեն Նաբուքոդոնոսոր եւ ամենայն տուն նորա: Վասն զի լուաք զիմաստութիւն եւ զհանճար անձին քոյ, որ եւ պատմեալ իսկ է յամենայն երկրի, զի դու միայն ես բարերար յամենայնի ի թագաւորութեան նորա եւ հզաւր եւ բանիւք եւ սքանչելի ես ի մէջ պատերազմաւղ զաւրացս: Արդ, զբանսն, զոր խաւսեցաւ Աքիորվ ի խորհրդեան սենեկի քում, լուաք եւ մեք. եւ՝ զի խնայեցին ի նա արք Բետիղուայ, եւ նա պատմեաց զամենայն, որպէս եւ խաւսեցաւ ընդ քեզ: Եւ արդ, այժմ, տէ՛ր, մի՛ անցաներ զբանիւք նորա, այլ հաստատեա՛ զնոսա ի սրտի քում. քանզի ճշմարիտ են. զի ո՛չ ոք կարէ չարչարել զազգս մեր, եւ ո՛չ սուր թշնամւոյ վնասէ մեզ. բայց յորժամ մեղանչիցեն Աստուծոյ իւրեանց: Եւ արդ, մի՛ վնասիցիս, տէ՛ր իմ, դու եւ զաւրք քո. քանզի հասեալ իսկ է ժամանակ մահու նոցա՝ վասն մեղացն զոր մեղան Աստուծոյն իւրեանց. քանզի արարին նոքա մեղս մեծ անաւրէնութեան. զի պակասեցին նոցա ջուրք եւ կերակուր. խորհեցան նոքա եւ արկին զձեռս իւրեանց յանասունս, զոր ո՛չ էր հրամայեալ ուտել՝ Աստուծոյն իւրեանց. եւ զպտուղ ցորենոյ եւ զտասանորդս գինւոյ եւ իւղոյ, որ էր սրբեալ քահանայիցն, որ պաշտաւնեայքն են յԵրուսաղէմ, առաջի Աստուծոյն մերոյ. սկսան ուտել զայն, զոր ո՛չ էր աւրէն ուտել նոցա, բայց՝ միայն քահանայիցն: Եւ առաքեցին յԵրուսաղէմ, զի որք անդն իցեն՝ արասցեն այնպէս. վասն որոյ լինէր նոցա թողութիւն յԱստուծոյ ի ձեռն քահանայիցն. եւ արդ, յորժամ արարին զայս մեղս, եւ մատնին ի սատակումն: Արդ, ես՝ աղախին քո, յորժամ գիտացի զայս, փախեայ ի նոցանէն. եւ առաքեաց զիս առնել ընդ քեզ գործ մեծ, զորմէ զարմասցի ամենայն երկիրս, որ միանգամ լուիցեն զայն: Զի աղախին քո աստուածապաշտ է, եւ աղաչեմ զցայգ եւ զցերեկ զՏէր Աստուած

երկնից: Եւ արդ մնացից ես առ քեզ, տէ՛ր իմ, եւ ելցէ աղախին քո ի գիշերիս յայսմիկ ի ծործորն Հովտին, եւ կացից յաղաւթս առ Տեր Աստուածն իմ. եւ պատմէ ինձ յորժամ մեղանան նմա. եւ ես գամ եւ պատմեմ քեզ, եւ դու ելցես ամենայն զաւրաւք քովք հանդերձ, եւ ո՛չ իցէ ի նոցանէն, որ ապրիցէ ի քէն, եւ տարայց զքեզ ընդ մէջ Հրէաստանի՝ մինչեւ տարայց զքեզ յԵրուսաղէմ. եւ արկցես զաթոռ քո ի միջի նորա, եւ ժողովեսցես զնոսա որպէս զհաւտ, որոց ո՛չ իցէ հովիւ. եւ ո՛չ հաջեսցէ չո՛ւն մի լեզուաւ իւրով ընդդէմ քո. եւ ինձ պատմեցաւ այս լինել յԱստուծոյ, եւ եկի ցուցանել քեզ»: Եւ հաճոյ թուեցան բանք նորա առաջի Հողոփեռնեայ եւ առաջի ամենայն ծառայից նորա եւ զարմանային ընդ իմաստութիւն նորա եւ ասեն. «Ո՛չ գտանի կին գեղեցիկ համեմատ սմա, ի ծագաց երկրի մինչեւ ի ծագս՝ իմաստութեամբ բանիւք եւ գեղեցկութեամբ երեսաց իւրոց»: Եւ ասէ ցնա Հողոփեռնէս. «Բարի՛ արար Աստուած, զի առաքեաց զքեզ առաջնորդել ժողովրդեանս, զի լիցի հզաւրացեալ տէրութիւնս մեր, եւ որք ապստամբեցին ի մէնջ՝ կորիցեն: Եւ արդ, տեսանեմ զքեզ կայտառ տեսլեամբ, եւ բարի զամենայն բանս քո. զի թէ արասցէ, որպէս խաւսեցար, Աստուածն քո եղիցի նաեւ իմ Աստուած. եւ դու ի տան Նաբուքոդոնոսորայ նստցիս եւ եղիցիս անուանի քան զամենայն երկիր»:

Գլ. ԺԲ

Եւ հրամայեաց տանել զնա ի տուն գանձին: Եւ հրամայեաց նմա ոսճիկս յիւրոց խորտկացն եւ ի գինւոյ անտի, զոր ինքն ըմպէր: Եւ ասէ Յուդիթ. «Ո՛չ կերայց ես ի դոցանէն, զի մի՛ լինիցին ինձ ի գայթակղութիւն, այլ տացե՛ս ինձ հրաման՝ ուտել ինձ անտի, զոր բերին ինձ ի քաղաքէ անտի»: Եւ ասէ ցնա Հողոփեռնէս. «Եթէ պակասեսցէ այն, ուստի՞ տացուք քեզ նմա՛ն նոցա. զի ո՛չ ոք է ընդ մեզ յազգէդ քումմէ»: Եւ ասէ ցնա Յուդիթ. «Կենդանի՛ է անձն քո[9], տէ՛ր իմ, եթէ ո՛չ ծախէ աղախին քո զկերակուրն, որ եկեալն է ընդ իս՝ մինչեւ արասցէ ի ձեռն իմ, զոր խաւսեցաւն»: Եւ ածին զնա ծառայքն

Հողոփեռնեայ ի խորան անդր. եւ ննջեաց նա անդ մինչեւ ի մէջ գիշեր: Եւ յարեաւ Յուդիթ յառաւաւտին պահուն. եւ առաքեաց առ Հողոփեռնէս եւ ասէ. «Հրամայեսցէ տէր իմ թողուլ զաղախին իւր՝ ելանել կալ յաղաւթս: Եւ հրամայեաց Հողոփեռնէս պահապանացն՝ մի՛ արգելուլ զնա: Եւ եղեւ նա ի բանակի անդ աւուրս երիս: Եւ ելանէր նա ի գիշերին ի ձորն Բետիղուայ եւ մկրտէր ի բանակի անդ յաղբեւրս ջուրցն՝ ըստ աւրինի Հրէիցն: Եւ իբրեւ մկրտէր, կայր յաղաւթս առ Տեր Աստուած Իսրայէլի, զի յաջողեսցէ զճանապարհս նորա ի փրկութիւն որդւոց ժողովրդեան իւրոյ: Եւ նա մտանէր սրբեալ եւ լինէր ի խորանին՝ մինչեւ առնոյր տանէր զիւր կերակուրսն առ ինքն ընդ երեկս: Եւ եղեւ յաւուրն չորրորդի արար Հողոփեռնէս կոչունս ծառայիցն իւրոց միայն. եւ կոչեաց ի կոչունսն եւ ո՛չ զմի ոք յաւտարա՛ց անտի: Եւ ասէ ցԲագու ցներքինին իւր, որ էր հազարապետ հաւատարիմ ի վերայ ամենայն ընչից նորա. «Ե՛րթ հաւանեցո՛ դու, ասէ, զկինն հեբրայեցի, որ է՛ առ քեզ՝ ուտե՛լ եւ ըմպե՛լ ընդ մեզ: Եւ զի՞նչ է այդ այպն կատականաց՝ թողուլ մեզ զայդպիսի կին եւ ո՛չ բնաւ խաւսել ընդ նմա. արդ, եթէ ոչ առցուք զմարդդ եւ մերձեցուսցուք առ մեզ, գուցէ ծաղր ինչ առնիցէ զմեզ»: Եւ ել Բագու յերեսաց Հողոփեռնեայ եւ եմուտ առ նա եւ ասէ ցնա. «Մի՛ դանդաղեսցի աղախինդ գեղեցիկ գալ առ տէր իմ եւ փառաւորել ի նմանէն, եւ ըմպել ընդ նմա զգինի ուրախութեանն՝ մեւք հանդերձ. եւ եղիցիս դու այսաւր իբրեւ զդուստր մի յորդւոց Ասուրայ, որք կան ի սպասու Նաբուքոդոնոսորայ արքայի»: Եւ ասէ ցնա Յուդիթ. «Եւ ո՞վ ոք եմ ես, որ ընդդէմ դառնամ տեառն իմում. զի զամենայն, որ ինչ հաճոյ է առաջի աչաց քոց, փութալով առնեմ. եւ եղիցի ինձ ի ցնծութիւն մինչեւ յաւր մահուան իմոյ»: Եւ յարեաւ զարդարեցաւ զարդու իւրով՝ ըստ զարդու կանանց. եւ մատեաւ նաժիշտ իւր եւ արկ նմա բազմական ի գետնի՝ դէմ յանդիման Հողոփեռնեայ զակումբն մաշկեայ, զոր ա՛ռ նա ի Բագուայ ի հանապազորդ սպաս նմա. եւ բազմեցաւ Յուդիթ ի վերայ նորա: Եւ յիմարեցաւ Հողոփեռնէս ի գուլթ երեսաց նորա, եւ խռվեցաւ անձն նորա. եւ

է՛ր ի ցանկութեան մեծի՝ լինել ընդ նմա. եւ խնդրէր Հողոփեռնէս՝ խաբե՛լ զնա յաւրէն յայնմանէ յորմէ ետես զնա: Եւ ասէ ցնա Հողոփեռնէս. «Ա՛րբ դու եւ լե՛ր առ մեզ ուրախ»: Եւ ասէ Յուդիթ. «Այո՛, տէ՛ր, զի մեծացան յիս կեանք իմ[10] այսաւր, քան զաենայն աւուրս ի ծննդէնէ իմմէ»: Եւ ա՛ռ, կերաւ եւ արբ առաջի նորա՝ զոր պատրաստեաց նմա աղախինն իւր: Եւ ուրա՛խ եղեւ Հողոփեռնէս ի վերայ նորա. եւ արբ նա գինի սաստիկ յոյժ, որչափ ո՛չ էր արբեալ նորա այնչափ յաւուրս իւրում, յաւրէ ծննդենէ իւրմէ:

Գլ. ԺԳ

Եւ իբրեւ երեկո եղեւ, փութացոյց զծառայսն իւր գնալ արտաքս. եւ Բագու փակեաց զդուրս խորանին: Եւ գնացին նոքա յիւրաքանչիւր անկողինս իւրեանց արտաքոյ քան զխորանն. քանզի էին ամենեքեան խոնջք եւ վաստակք ի բազում գիներբուաց անտի: Եւ մնացին Յուդիթ եւ Հողոփեռնէս միայն ի խորանին: Եւ Հողոփեռնէս մտեալ ի գահոյս իւր, ի քուն եղեւ. եւ էր թմբրեալ յոյժ ի գինւոյ անտի: Եւ ասէ Յուդիթ ցաղախինն իւր, զի կացցէ արտաքոյ խորանին եւ սպասեսցէ նմա, յորժամ ելանիցէ արտաքս, որպէս եւ յայլ աւուրսն. զի ասաց նմա, թէ՝ «Երթամ կալ յաղաւթս ըստ սովորութեանն», եւ ընդ Բագուայ խաւսեցաւ ըստ բանիցս այսոցիկ: Եւ գնացին ամենեքեան ի սենեկէ անտի, եւ ո՛չ ոք մնաց ամենեւին անդ: Եւ եկաց Յուդիթ առ գահոյս նորա եւ ասէ. «Տէ՛ր Աստուած զաւրութեանց, նայեա՛ց ի ժամուս յայսմիկ ի գործս ձեռաց իմոց եւ ի բարձրութիւն Երուսաղէմի. զի ա՛յժմ է ժամանակ այց առնել քեզ ժառանգութեան քում եւ առնել զգործս զայս ի ձեռս իմ՝ ի սատակումն թշնամեաց մերոց, որք յարուցեալ են ի վերայ մեր»: Եւ մատեաւ առ քանուն գահոյիցն, որ էր ընդ սնարսն Հողոփեռնեայ, եւ եհան զդաշոյն նորա յազդերէ նորա եւ կալաւ զհերաց նորա եւ ասէ. «Զաւրացո՛ զիս, Աստուա՛ծ Իսրայէլի, յաւուրս յայսմիկ»: Եւ եհար ի պարանոցի նորա երկիցս զաւրութեամբ իւրով. եւ հատեալ եբարձ զգլուխ նորա. եւ թաւալեցոյց ընկէց զմարմին նորա ի գահոյից անտի, եւ յետ ժամու միոջ ել եւ ետ նաժշտին իւրում զգլուխն Հողոփեռնեայ. եւ ընկէց ի մախաղ կերակրոյն իւրոյ: Եւ ելին երկոքին ի միասին ըստ սովորութեանն իւրեանց եւ անցին նոքա ըստ բանակն եւ շրջեցան եկին ընդ ձորն եւ ելին նոքա ի լեառնն Բետիղուայ. եւ եկին նոքա ի դրունս քաղաքին. Եւ ասէ Յուդիթ ի հեռաստանէ ցպահապանս դրացն. «Բացէ՛ք, բացէ՛ք արդ զդրունսդ, զի ընդ մեզ է Տեր Աստուած մեր, արասցէ՛ եւս զաւրութիւն յիսրայէլի եւ ի բեկումն թշնամեաց մերոց, որպէս եւ արա՛ր այսաւր»: Եւ եղեւ, իբրեւ լուան արք քաղաքին նորա զձայն նորա, փութացան իջանել ի դրունս քաղաքին իւրեանց. եւ կարդացին նոքա զքահանայսն եւ զծերս ժողովրդեանն: Եւ ժողովեցան ի փոքուէ մինչեւ ցմեծամեծս, քանզի զարմացեալ էին նոքա յոյժ ընդ գնալն նորա: Եւ բացին զդուռն քաղաքին եւ առին զնոսա ի ներքս: Եւ լուցին զլապտերս իւրեանց եւ կացին շուրջ զնոքաւք: Եւ ասէ Յուդիթ բարձրաձայ՛ն բարբառով. «Որդի՛ք Իսրայէլի, աւրհնեցէ՛ք զԱստուած, որ ո՛չ մերժեաց զողորմութիւն իւր ի տանէս Իսրայէլի, այլ եհար վանեաց զթշնամիս մեր ի ձեռն իմ ի գիշերիս յայսմիկ»: Եւ եհան զգլուխն ի մախաղէն եւ եցոյց նոցա եւ ասէ ցնոսա. «Ահաւասիկ գլուխն Հողոփեռնեայ զաւրագլխի զաւրացն Ասուրայ. եւ ահա վարագոյրքն պատուականք, ընդ որով անկեալ դնէր յարբեցութեան իւրում. եւ սատակեաց զնա Տեր Աստուած ի ձեռն կնոջս: Կենդանի՛ է Տէր, որ պահեաց զիս ի ճանապարհին յայնմիկ, յորում գնացին. զի խաբեաց զնա տեսիլ երեսաց իմոց, ի կորո՛ւստ նմին, եւ ո՛չ արար նա ընդ իս պղծութիւն ի նախատինս անձին իմոյ»: Եւ զոհացան ամենայն ժողովուրդքն եւ խոնարհեալ երկի՛ր պագին Աստուծոյ, եւ ասեն միաձայն ամենեքին. «Աւրհնեալ ես դու, Տէ՛ր Աստուած մեր, որ յամաւթ արարեր այսաւր զթշնամիս ժողովրդեան քոյ»: Եւ ասէ Ոզիա ցՅուդիթ. «Աւրհնեալ ես դու, դո՛ւստր, յԱստուծոյ բարձրելոյ՝ քան զամենայն կանայս, որ ի վերայ երկրի. եւ աւրհնեալ Տէր Աստուած, որ արար զերկինս եւ զերկիր, որ յաջողեացն քեզ ի վերայ գլխոյ իշխանիդ այդորիկ թշնամւոյ

մերոյ: Եւ ո՛չ պակասեսցէ անունդ քո ի մարդկանէ՝ առ ի յիշելոյ զքեզ առաջի Աստուծոյ մինչեւ յաւիտեան, եւ արասցէ զքեզ Տեր Աստուած իմ ի բարձրութիւն անձին քո, եւ այցելու լիցի քեզ ի բարիս՝ փոխանակ զի ո՛չ խնայեցեր դու յանձն քո վասն տառապանաց ազգի մերոյ, այլ խնդրեցեր զվրէժ կործանման հարուածոցս մեր՝ գնացեալ քո ուղիղ զճանապարհս առաջի Տեառն մերոյ»: Եւ ասէ ամենայն ժողովուրդն. «Եղիցի՛, եղիցի»:

Գլ. ԺԴ

Եւ ասէ Յուդիթ ցնոսա. «Լուարո՛ւք դուք ինձ, եղբա՛րք, զոր ասեմս ձեզ. եւ առէ՛ք զգլուխս զայս եւ կախեցէ՛ք զսա առաջի մահարձանաց պարսպաց քաղաքիս: Եւ եղիցի՝ յորժամ մերկասցի առաւաւտն, եւ ծագեսցէ արեգակն յերկիր, վառեցարո՛ւք ամենայն արք զաւրաւորք պատերազմի, եւ կացուցանիցէք ի վերայ ձեր զաւրավարս եւ ելանիցէք արտաքոյ քաղաքիս՝ իբրեւ թէ իջանիցէք ի դաշտ անդր, ի թեւ մի պարսկապանաց որդւոցն Ասուր. եւ անդր մի՛ իջանիցէք, այլ խռով հարկանիցէք նոցա. եւ նոքա առցեն զզէնս իւրեանց եւ գնասցեն ի բուն բանակն իւրեանց եւ յարուցանիցեն զզաւրագլուխսն Ասուր. եւ ժողովեալք դիմեսցեն ի խորանն Հողոփեռնեայ եւ զնա ո՛չ գտանիցեն: Եւ անկանիցի ի վերայ նոցա ահ եւ ի փախուստ դարձցին նոքա յերեսաց ձերոց: Եւ դուք զկնի մտեալ, եւ ամենայն բնակիչք սահմանացս Իսրայէլի, տապաստ արկեալ վանիջիք զնոսա յամենայն ճանապարհս նոցա: Եւ արդ, մինչչեւ արարեալ զայս, կոչեցէ՛ք առ իս զԱքիովր Ամոնացի, զի տեսցէ զայս[11], որ ընդ ոտն եհար զտունս Իսրայէլի, որ կապեացն զնա եւ ետ ածել այսր ի մահ»: Եւ կարդացին զԱքիովր ի տանէն Ոզիայ. եւ իբրեւ եկն ետես նա զգլուխն Հողոփեռնեայ ի ձեռն առն միոջ ի ժողովրդեանն, անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ թաւալեցաւ: Եւ իբրեւ անդրէն զաւրացաւ, անկեալ առ ոտս Յուդթայ՝ երկի՛ր եպագ նմա եւ ասէ. «Աւրհնեա՛լ ես դու յամենայն բնակութիւնս Յուդայ. եւ ընդ ազգս ամենայն, ուր եւ լսիցեն զանուն քո, զարմացին:

Եւ արդ, պատմեա՛ դու ինձ, ո՞րպէս արարեր յաւուր յայսմիկ»: Եւ պատմեաց նմա Յուդիթ առաջի ամենայն ժողովրդեանն իւրոյ, զոր էր նորա արարեալ յաւրէ յայնմանէ, յորում ել նա՝ մինչեւ ցայն ժամ: Եւ իբրեւ դադարեաց Յուդիթ ի խաւսից իւրոց, աղաղակեաց ժողովուրդն մեծաձայն՝ փառավորե՛լ զԱստուած ի քաղաքին իւրեանց: Եւ իբրեւ ետես Աքիովր զայն ամենայն, զոր արար Աստուածն Իսրայէլի, հաւատա՛ց յԱստուած ամենայն սրտիւ իւրով. եւ թլպատէր ի մարմին անթլպատութեան իւրոյ, եւ յաւելաւ[12] նա ի տունն Իսրայէլի մինչեւ զայս աւր: Եւ յորժամ ծագեաց առաւաւտն, կախեցին զգլուխն Հողոփեռնեայ ի պարսպէ՛ անտի. եւ վառեցաւ ամենայն այր զզէն իւր. եւ ելին նոքա՝ առնել զայն ընդ անցս կողմանն ի վերայ լերինն[13]: Եւ որդիքն Ասուր իբրեւ տեսին զնոսա, ազդ արարին նոքա առ առաջնորդս իւրեանց. եւ եկին նոքա առ զաւրագլուխս եւ առ իշխանս եւ առ հազարապետս նոցա: Եւ դիմեցին նոքա ի խորանն Հողոփեռնեայ եւ ասեն ցսենեկապետ նորա. «Արդ մուտ յարո՛ զտէրդ մեր, զի իշխեցին ծառայքն ի վերայ մեր ի պատերազմ, զի սատակեսցուք զնոսա ի սպառ»: Եւ եմուտ Բագու եւ բախեաց զդուրս սենեկին, քանզի կարծէր թէ քուն իցէ հանդերձ Յուդթաւ: Իբրեւ ո՛չ ոք ետ նմա պատասխանի, քաջալերեալ եմուտ ի ներքս ի սենեակն եւ ետես, զի անկեալ կայր ի վերայ գետնոյն մերկ, եւ գլուխն իւր բարձեալ էր ի նմանէ: Եւ գոչեաց Բագու ձայնիւ մեծաւ եւ լալով եւ ողբմամբ յոյժ, եւ պատառեաց նա զպատմուճան իւր. եւ եմուտ նա ի սենեակն Յուդթեայ եւ ո՛չ եգիտ զնա, եւ ել ընթացա՛ւ նա առ զաւրսն եւ ասէ. «Ապստամբեցին ծառայքն, զի արար ամաւթ նախատանաց կին մի հեբրայեցի տան արքայի Նաբուքոդոնոսորայ, զի ահաւասիկ Հողոփեռն յերկիր կործանեալ, եւ գլուխ իւր չէ՛ առ նմա»: Եւ իբրեւ լուան զայս բանս իշխանք զաւրացն Ասուրայ, պատառեցին ամենեքեան զպատմուճանս իւրեանց եւ երկեան յոյժ. եւ գոչեցին նոքա ի մէջ բանակին:

Գլ. ԺԵ

Եւ իբրեւ լուան, որք ի վրանսն էին, յիմարեցան վասն իրացն, որ եղեն: Եւ անկաւ ի վերայ նոցա ահ եւ դողումն յոյժ. եւ ապա ո՛չ մնացին ամենեւին ա՛յր ընկերի իւրում: Եւ հեղեալք զբաղեալք[14] առ հասարակ ի փախուստ դարձան ի դաշտակողմանն եւ ի լեռնակողմանն շուրջ զԲետիղուա, եւ դարձեալ անտի փախստեայք լինէին: Եւ ապա ամենայն այր պատերազմաւղ որդւոցն Իսրայէլի յարձակեցան ի վերայ նոցա: Եւ առաքեաց Ոզիա ի Բետմեսթեմ եւ ի Քոբա եւ ի Կովլա եւ յամենայն սահմանս Իսրայէլի՝ աւետաւորս վասն իրացն, որ եղեն, զի ամենեքին առ հասարակ ժողովեսցին եւ մտցեն զհետ նոցա՝ սատակե՛լ զնոսա:

Եւ իբրեւ լուան որդիքն Իսրայելի, ամենեքեան առ հասարակ յարձակէին անկանէին ի վերայ նոցա եւ կոտորէին հարկանէին զնոսա մինչեւ ի Քոբա. սոյնպէս եւ երուսաղէմացիքն առնէին: Եւ ամենեքեան, որք ի լեռնակողմանցն եկեալ էին, պատմեցին նոցա, որ եղեւ ի բանակին. եւ որք ի Գաղաադն էին եւ որք ի Գալիլեայ, հասանէին հարկանէին վանէին զնոսա, մինչեւ անցուցանէին զնոսա ընդ Դամասկոս եւ ընդ սահմանս նորա: Եւ այլ բնակիչքն Բետիղուայ ելանէին անկանէին ի վերայ բնակչացն բնադրացն Ասուրայ՝ աւա՛ր հարկանել, ժողովել զառ եւ զապուռ բանակացն, յորս յղփացան լցան մեծացան յոյժ բնակիչքն Բետիղուայ:

Եւ որդիքն Իսրայէլի դարձան ի կոտորածէ անտի եւ սկսանէին ժողովել զկապուտ կողոպուտ զանկելոցն: Եւ գեաւղքն եւ ագարակքն լեռնակողմանցն եւ դաշտականացն եկեալ առնուին զմնացորդս յոյժ աւարացն: Եւ Յովակիմ քահանայ մեծ եւ ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, որք բնակեալ էին յԵրուսաղէմ, եկին տեսանել զբարութիւնսն, զոր արար Տեր Աստուած Իսրայէլի, եւ տեսանել զՅուդիթ եւ խաւսել ընդ նմա զխաղաղութիւն[15]: Եւ իբրեւ մտեալ տեսին զնա, աւրհնեցին զնա ամենեքեան միաբան եւ ասեն ցնա. «Դո՛ւ բարձրութիւն Երուսաղէմի, դո՛ւ ցնծութիւն Իսրայէլի, դո՛ւ պարծանք ազգիս մերոյ, զի արարեր

զայս ամենայն բարութիւնս ձեռաւք քովք Իսրայէլի. եւ հաճեցա՛ւ ընդ նոսա Աստուած. եւ աւրհնեալ եղիջիր դու յամենակալէն Աստուծոյ մինչեւ յաւիտեան»: Եւ ասէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի՛: Եւ ժողովուրդն կրէին զաւար բանակին զաւուրս երեսուն: Եւ ետուն Յուդթայ զխորանն Հողոփեռնեայ եւ զամենայն արծաթ խորանին եւ զգահոյսն եւ զամենայն զսպասսն ոսկւոյ եւ զարծաթոյ նորա: Եւ նորա առեալ՝ կուտէր զայն ի սայլս իւր եւ ի վերայ գրաստուց իւրոց եւ բերէր ի ներքս ի քաղաքն: Եւ եկին առ նա ամենայն կանայք որդւոցն Իսրայէլի՝ տեսանէլ զնա. եւ աւրհնեցին զնա եւ նուագէին նմա երգս պարուք: Եւ առեալ նորա ոստս արմաւենեաց եւ ձիթենեաց՝ ծաղկաւք հանդերձ, եւ տայր նոցա: Եւ այլ եւս կանայք մեծամեծք տեղեացն գային գունդագունդք՝ գովել զնա: Եւ ամենայն Իսրայէլ զկնի երթային նոցա՝ վառեալք եւ կազմեալք[16], պսակս գունակս գունակս ի գլուխս իւրեանց. եւ աւրհնութիւնք ամենեցուն ի բերանս իւրեանց՝ փառաւորել զԱստուած:

---

[1] սպառեալ էին ոգիքն նոցա - մարել էին նրանց հոգիները
[2] ընդ անցս դրանցն - դռների շեմին
[3] զի մի՛ արասցէ ըստ բանիցս այսոցիկ յաւուրս յայսոսիկ - որպեսզի մեր օրերին նա չանի ըստ իր խոսքերի
[4] զմեր մեղս ո՛չ խնդրեսցէ - մեր մեղքերի համար վրիժառու չի լինի մեզանից
[5] ասորեստանցիները
[6] զոր խորհեցայս առնել - որ կատարեմ այն, ինչ որ խորհեցի
[7] յոտն եկաց յերեսացն խոնարհելոց - ոտքի կանգնեց խոնարհված դիրքից
[8] միտ դնէին նմա - նայում էին նրա հետևից
[9] կենդանի է անծն քո - ապրած կենաս
[10] մեծացան յիս կեանք իմ - իմ կյանքը մեծարվեց
[11] այսինքն՝ Հողոփեռնեսի կտրած գլուխը
[12] այստեղ՝ միացավ
[13] առնել զայն ընդ անցս կողմանն ի վերայ լերինն - գրավել այն լեռնանցքը, որ լեռան վրա էր
[14] հեղեալք զբաղեալք - խուճապահար
[15] խաւսել ընդ նմա զխաղաղություն - ողջունել նրան
[16] վառեալք եւ կազմեալք - զարդարված

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Գլուխ Ա

Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ, որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու:

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի վկայութիւն զի վկայեսցէ վասն Լուսոյն , զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ոչ էր նա Լոյսն, այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ոչ էր նա Լոյսն, այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն:

Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան: Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատասցեն յանուն նորա: Որք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց եւ ասէ. «Սա է, զորմէ ասէի: Որ զկնի իմ գալոց էր՝ առաջի իմ եղեւ, զի նախ քան զիս էր»: Զի ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց: Զի օրէնքն ի՞ ձեռն Մովսիսի տուան, շնորհքն եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն:

ԲԲ. ԶԱստուած ոչ ոք ետես երբեք, բայց միածինն Որդի, որ է ի ծոց Հօր, նա՛ պատմեաց: Եւ այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Հրեայքն յԵրուսաղեմէ քահանայս եւ Ղեւտացիս, զի հարցցեն ցնա, թէ դու ո՞ ես: Եւ խոստովան եղեւ եւ ոչ ուրացաւ. խոստովան եղեւ եթէ՝ ես ոչ եմ Քրիստոսն: Եւ հարցին ցնա՝ իսկ ո՞վ ես

դու, Եղիա՞ ես: Եւ ասէ՝ ոչ եմ: Իսկ մարգարէ՞ն ես դու: Պատասխանի ետ, թէ՝ ոչ: Իսկ ասա մեզ՝ դու ո՞վ ես, զի պատասխանի տարցուք որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո: Ասէ. «Ես ձայն բարբառոյ յանապատի, Ուղի՛ղ արարէք զճանապարհն Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ»: Եւ որք առաքեցանն՝ ի փարիսեսցւոց անտի էին: Հարցին ցնա եւ ասեն. «Իսկ զի՞ մկրտես, եթէ դու չես Քրիստոսն, եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգարէն»: Պատասխանի ետ նոցա Յովհաննէս եւ ասէ. «Ես մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձերում կայ, զոր դուքն ոչ գիտէք. որ զկնի իմ գալոցն է, որում չեմն արժանի եթէ լուծից զխրացս կօշկաց նորա»: Այս ի Բեթաբրա եղեւ յայնկոյս Յորդանանու, ուր էրն Յովհաննէս եւ մկրտէր:

ԲԳ. Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս, զի գայր առ նա. եւ ասէ. «Ահաւասի՛կ Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի: Սա է, վասն որոյ եսն ասէի՝ զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղեւ[1], զի յառաջ իսկ էր քան զիս: Եւ ես ոչ գիտէի զնա, այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել»: Վկայեաց Յովհաննէս եւ ասէ, թէ՝ «Տեսանէի զՀոգին, զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից եւ հանգչէր ի վերայ նորա: Եւ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս, «Յոյր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգչիցի ի վերայ նորա, նա է, որ մկրտէ Հոգւովն Սրբով»: Եւ ես տեսի եւ վկայեցի, եթէ «Սա է Որդին Աստուծոյ»:

Գլ.Դ

ԳԴ. Իբրեւ գիտաց Յիսուս, եթէ լուան փարիսեցիքն, եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ եւ մկրտէ քան զՅովհաննէս (Քանզի ոչ եթէ Յիսուս ինքնին մկրտէր, այլ աշակերտքն նորա), եթող զՀրէաստան երկիր, եւ եկն միւսանգամ ի Գալիլեա: Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա: Գայ նա ի քաղաք մի Սամարացւոց, որում անուն էր Սիւքար, մերձ ի գեղն, զոր ետ Յակովբ որդւոյ իւրում Յովսեփայ: Եւ անդ էր աղբեւր մի Յակովբայ. եւ Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն՝ նստէր ի վերայ աղբերն, եւ էր ժամ իբրեւ վեցերորդ:

Գայ կին մի ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. «Տո՛ւր ինձ ըմպել»: Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր, զի կերակուրս գնեսցեն: Ասէ ցնա կինն Սամարացի. «Դու որ Հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես՝ ի կոյէ Սամարացւոյ, զի ոչ երբեք խառնակին Հրեայք ընդ Սամարացիս»: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. «Եթէ գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ, եւ ո՛վ է, որ ասէդ ցքեզ, թէ՝ «Տուր ինձ ըմպել», դու արդեւք խնդրէիր ի նմանէ, եւ տայր քեզ ջուր կենդանի»: Ասէ ցնա կինն. «Տէ՛ր, դու քանզի եւ դոյլ իսկ ոչ ունիս, եւ ջրհորս խոր է, իսկ արդ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի: Միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես, քան զհայր մեր Յակովբ, որ զայս ջրհոր ետ մեզ, եւ ինքն աստի արբ եւ որդիք նորա եւ խաշինք նորա»: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. «Ամենայն, որ ըմպէ ի ջրոյ յայդմանէ, միւսանգամ ծարաւէ, բայց որ ըմպէ ի ջրոյն զոր ես տաց նմա, մի՛ ծարաւեսցէ յաւիտեան: Այլ ջուրն, զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբեւր ջրոյ բղխելոյ ի կեանսն յաւիտենականս»: Ասէ ցնա կինն. «Տէ՛ր, տո՛ւր ինձ զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցից եւ մի՛ եկից այսր հանել ջուր»: Ասէ ցնա Յիսուս. «Ե՛րթ կոչեա՛ զայր քո եւ ե՛կ այսր»: Պատասխանի ետ նմա կինն եւ ասէ. «Զիք իմ այր»: Ասէ ցնա Յիսուս. «Բարւոք ասացեր, թէ՝ Զիք իմ այր», զի հինգ այր փոխեալ է քո եւ զոր այժմն ունիս, չէ քո այր. զայդ արդար ասացեր: Ասէ ցնա կինն. «Տէ՛ր, թուի ինձ, թէ մարգարէ իցես դու: Հարքն մեր ի լերինս յայսմիկ երկիր պագին, եւ դուք ասէք, թէ յԵրուսաղէմ եւեթ է տեղի, ուր արժան իցէ երկիր պագանել»: Ասէ ցնա Յիսուս. «Կի՛ն դու, հաւատա՛ ինձ, զի եկեսցէ ժամանակ, յորժամ ոչ ի լերինս յայսմիկ եւ ոչ յԵրուսաղէմ երկիր պագանիցեն Հօր: Դուք երկիր պագանէք՝ որում ոչն գիտէք, զի փրկութիւն ի Հրէից է: Այլ եկեսցէ ժամա՛ակ, եւ այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ, քանզի եւ Հայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ:

ԳԵ. Հոգի է Աստուած, եւ երկրպագուացն նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել»: Ասէ ցնա կինն. «Գիտեմ,

զի Մեսիա գայ (անուանեալն Քրիստոս), յորժամ եկեսցէ նա, պատմեսցէ մեզ զամենայն»: Ասէ ցնա Յիսուս. «Ես եմ, որ խօսիմս ընդ քեզ»: Եւ յայն բան եկին աշակերտքն նորա եւ զարմանային, զի ընդ կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց ի նոցանէ, թէ՝ զի՞նչ խնդրես կամ զի՞նչ խօսիս ընդ նմա: Եթող կինն զսափորն իւր եւ չոգաւ ի քաղաքն եւ ասէ ցմարդիկն. «Եկեա՛յք տեսէ՛ք զայր մի, որ ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ է. միթէ նա՞ իցէ Քրիստոսն»: Ելին ի քաղաքէն եւ գային առ նա:

ԳԼ. ԺԱ

ԶԴ. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանեայ, ի գեղջէ Մարեմայ եւ Մարթայի քեռ նորա: Այս այն Մարիամ էր, որ օծ զՏէրն իւղով եւ ջնջեաց զոտս նորա հերով իւրով, որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր: Առաքեցին առ նա քորքն նորա եւ ասեն. «Տէ՛ր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է»: Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ. Այն հիւանդութիւն չէ ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ, զի փառաւոր լիցի Որդի Աստուծոյ այնուիկ»: Եւ սիրէր Յիսուս զՄարթա եւ զքոյր նորա զՄարիամ եւ զՂազար: Իբրեւ լուաւ, թէ հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն, ուր էրն աւուրս երկուս: Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. «Եկա՛յք երթիցուք միւսանգամ ի Հրէաստան»: Ասեն ցնա աշակերտքն. «Ռաբբի՛, այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել, եւ դարձեա՞լ երթաս անդրէն»: Պատասխանի ետ Յիսուս. «Ո՞չ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ի տուընջեան, ոչ գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ: Ապա թէ ոք գնայ գիշերի, գայթակղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա»: Զայս իբրեւ ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա. «Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ, զի զարթուցից զնա»: Ասեն ցնա աշակերտքն. «Տէ՛ր, եթէ ննջեաց, ապա ապրի»: Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր. նոցա այսպէս թուեցաւ, թէ վասն ննջելոյ քնոյն ասէր: Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապես. «Ղազարոս մեռաւ. եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւա-

տասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց արդ եկա՛յք երթիցուք առ նա»: Ասէ Թովմաս, անուանեալն Երկուորեակ, ցաշակերտակիցսն. «Օ՜ն, եկա՛յք եւ մեք զի ընդ նմա մեռցուք»:

Եկն Յիսուս, եգիտ զնա չորեքօրեայ ի գերեզմանի: Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ իբրեւ ասպարիսօք հնգետասան: Բազումք ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա եւ Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն: Մարթա իբրեւ լուաւ, թէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա, բայց Մարիամ նստէր անդէն ի տան: Ասէ Մարթա ցՅիսուս. «Տէ՛ր, եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. Այլ եւ արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած»: Ասէ ցնա Յիսուս. «Յարիցէ եղբայրն քո»: Ասէ ցնա Մարթա. «Գիտեմ, զի յարիցէ ի յարութեան յաւուրն յետնում»: Ասէ ցնա Յիսուս. «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի, կեցցէ: Եւ ամենայն, որ կենդանի է եւ հաւատայ յիս, մի՛ մեռցի ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ»: Ասէ ցնա. «Այո՛, Տէ՛ր, ես հաւատացի, եթէ դու ես Քրիստոսն, Որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր»: Եւ զայս իբրեւ ասաց, գնաց եւ կոչեաց զՄարիամ, զքոյր իւր լռելյայն եւ ասէ. «Վարդապետն եկեալ է եւ կոչէ զքեզ»: Նա իբրեւ լուաւ, յարեաւ վաղվաղակի եւ եկն առ նա: Զեւ եւս էր եկեալ Յիսուս ի գեղն, այլ էր անդէն ի տեղւոջն ուր ընդ առաջ եղեւ նմա Մարթա: Իսկ Հրէայքն, որ էին ընդ նմա ի տան անդ եւ մխիթարէին զնա, իբրեւ տեսին զՄարիամ, թէ յարեաւ վաղվաղակի եւ գնաց, գնացին եւ նոքա զհետ նորա, համարէին, թէ ի գերեզմանն երթայ, զի լացցէ անդ: Իսկ Մարիամ իբրեւ եկն, ուր էրն Յիսուս եւ ետես զնա, անկաւ առ ոտս նորա եւ ասէ.[1] «Տէ՛ր, եթէ աստ էիր դիպեալ, ոչ էր մեռեալ եղբայրն իմ»: Յիսուս իբրեւ ետես զնա, զի լայր, եւ որ ընդ նմայն էին Հրէայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրեւ զայրացեալ, եւ ասէ. «Ո՞ւր եդիք զնա»: Ասեն ցնա. «Տէ՛ր, ե՛կ եւ տե՛ս»: Եւ արտասուեաց Յիսուս: Ասէին Հրէայքն. «Տեսէ՛ք որչափ սիրէր զնա: Կէսքն ի նոցանէ ասէին. «Ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կուրին, առնել, զի եւ սա մի՛ մեռցի»: Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ ի գերեզմանն. եւ էր այր մի, եւ վէմ մի եդեալ ի վերայ նորա: Եւ ասէ Յիսուս. «Ի բա՛ց արարէք զվէմդ»: Ասէ ցնա Մարթա, քոյր մեռելոյն. «Տէ՛ր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է»: Ասէ ցնա Յիսուս. «Ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես, տեսցես զփառսն Աստուծոյ»: Եւ իբրեւ ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր եւ ասէ. «Հա՛յր, գոհանամ զքէն, զի լուար ինձ: Եւ ես գիտէի, զի յամենայն ժամ լսես ինձ. այլ վասն ժողովրդեանս, որ շուրջ կան, առնեմ, զի հաւատասցեն, թէ դու առաքեցեր զիս»: Զայս իբրեւ ասաց, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ. «Ղազարէ՛, արի՛ եկ արտաքս: Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք եւ ձեռօքն երիզապնդօք եւ երեսօքն վարշամակապատօք. եւ ասէ ցնոսա Յիսուս. «Լուծէ՛ք զդա եւ թողէք երթալ»:

---

[1] առաջի իմ եղեւ - ինձանից մեծ եղավ

ԹՈՒՂԹ ԿՈՐՆԹԱՑԻՈՑՆ ԱՌ ՊԱՒՂՈՍ

Ստեփանոս եւ որք ընդ նմա երիցունք, Դաբնոս Եւբուղոս, Թէոփիլոս եւ Քսինոն, առ Պաւղոս հայր մեր եւ աւետարանիչ եւ հաւատարիմ վարդապետ ի Քրիստոս Յիսուս, ողջո՛յն:

Արք ոմանք երկու եկին ի Կորնթոս, Սիմոն անուն եւ Կղէոբոս, որք կործանեցին քաջ քաջ[1] զոմանց հաւատս՝ հրապուրող եւ ապականեալ բանիւք, յորոց բանից վերայ դու ինքնին պարտիս հասանել[2]: - Զի մեք ի քէն ոչ երբեք լուաք զայնպիսի բանս եւ ոչ յայլոցն առաքելոց. այլ այսչափ գիտեմք, որ ինչ ի քէն լուաք, եւ որ ինչ ի նոցանէն լուաք, հաստատուն պահեմք: Բայց յայսմիկ յոյժ ողորմեցաւ մեզ Տէր, զի մինչ դու իսկ մարմնով ընդ մեզ ես, միւսանգամ լուիցուք: Արդ կա՛մ գրեա դու առ մեզ եւ կամ ինքնին դու առ մեզ վաղվաղակի եկեսջիր. մեք հաւատամք ի Տէր՝ թէ որպէս յայտնութեամբ ցուցաւ Թէովնեայ, եթէ փրկեաց զքեզ Տէր ի ձեռաց անօրինին: Եւ են բանք մոլորութեան պղծոցն, զոր ասենն եւ ուսուցանենն, այսպէս. Զէ պարտ, ասեն, զմարգարէսն ընդունել. եւ ոչ զԱստուած ասեն ամենակալ, եւ ոչ ասեն յարութիւն մարմնոց մեռելոց. եւ ոչ զմարդն ասեն բնաւ ստեղծեալ յԱստուծոյ. եւ ոչ ի կուսէն Մարիամայ ծնեալ ասեն զՅիսուս Քրիստոս մարմնով. եւ ոչ զաշխարհս արարած առնեն Աստուծոյ, այլ հրեշտակի ուրումն: Արդ փոյթ յանձին կալջիր հասանել առ մեզ. զի առանց գայթագղութեան կայցէ քաղաքս Կորնթացւոց, եւ նոցա յիմարութիւնն յայտ յանդիմանութեամբ ամենեցուն[3] խայտառակեալ մերժեսցի: Ո՛ղջ լեր:

Առին տարան զթուղթն սարկաւագք ի քաղաքն Փիլիպեցւոց, Թերեպտոս եւ Տիքոս. զի իբրեւ առ զայն թուղթն Պաւղոս, թէպէտ եւ ինքն ի կապանս էր վասն Ստատոնիկեայ Ապողոփանի կնոջ[4], իբրեւ մոռանալ նմա զկապանս[5], եւ սուգ առնուլ նմա վասն բանիցն զոր լուաւ: Եւ ասէր լալով, իբրե՛ւ թէ[6] լաւ էր ինձ, եթէ վախճանեալ էի եւ ընդ Տեառն էի, քան թէ ասէն սովին մարմնով, եւ զայսպիսի բանս եւ զաղէտս լսեմ զսուտ վարդապետութեան, զի տրտմութիւն ի

տրտմութեան վերայ հասանէ աւադիկ. եւ յայդչափ տարակուսանաց վերայ՝ կալ ի կապանս, եւ տեսանել զայդ աղէտ տարակոյս[7], առ որս ընթացեալ սատանայի եւ մենքենայից նորա՝ գործել հնարի չարիս: Եւ այսպէս բազում չարչարանօք առնէր Պաւղոս թղթոյն պատասխանի:

Պաւղոս կալանաւոր Յիսուսի Քրիստոսի առ եղբարս Կորնթացիս, ի բազում վրիպակէ[8] աստի ողջոյն: Ես ոչինչ կարի զարմացեալ եմ, եթէ այդչափ վաղվաղակի ընթանան հրապոյրք չարին. այլ զի Տէր Յիսուս վաղվաղակի արասցէ զգալուստն իւր վասն այնոցիկ որ փոփոխեն եւ անարգեն զհրամանս նորա: Այլ ե՛ս ի սկզբանէ զայն ուսուցի ձեզ, զոր ես ինքնին ընկալայ յառաջնոց առաքելոցն. որ զամենայն ժամանակս ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շրջէին: Եւ արդ ասեմ, զի Տէր Յիսուս Քրիստոս ի Մարիամայ կուսէ ծնաւ, որ էր ի զաւակէն Դաւթի՝ ըստ աւետեաց Հոգւոյն սրբոյ, առ ի Հօրէ ի յերկնից առաքելոյ ի նմա. զի յաշխարհս մխեսցի Յիսուս, եւ ազատեսցէ զամենայն մարմին իւրով մարմնովն. զի զմեզ ի մեռելոց յարուսցէ, որպէս եցոյց զանձն օրինակ: Եւ զի յայտ լիցի, զի մարդն ի Հօրէ ստեղծաւ, վասն այնորիկ մարդն ի կորստեանն իւրում անխնդիր ոչ մնաց[9], այլ խնդրեցաւ, զի ի ձեռն որդեգրութեանն կենդանասցի: Քանզի Աստուած որ ամենայնի Տէրն է, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արար զերկինս եւ զերկիր, առաքեաց նախ ի Հրեայսն զմարգարէսն, զի ի մեղաց անտի նոցա զնոսա կորզեսցէ եւ հանցէ յարդարութիւն իւր: Զի կամէր նա փրկել զտունն Իսրայելի, բաշխեաց արկ նա յոգւոյ անտի ի վերայ մարգարէիցն, որ զանմոլարն աստուածպաշտութիւն եւ զծնունդն Քրիստոսի քարոզեսցեն ժամանակօք բազմօք: Իսկ որ անօրէն իշխանն էր, իբրեւ աստուածանալ կամեցաւ, ձեռն արկանէր ի նոսա եւ զամենայն մարդիկ մեղօք կապէր, քանզի եւ դատաստանք աշխարհի մերձեալ էին: Աստուած ամենակալ իբրեւ արդարացուցանել կամեցաւ եւ ոչ կամեցաւ խոտել զիւր ստեղծուածն, իբրեւ ետես չարչարեալ, ողորմեցաւ, եւ առաքեաց ի վախճան ժամանակաց զՀոգին սուրբ ի Կոյսն, յառաջագոյն նկատեալ մարգարէիւք: Որ իբրեւ սրտի մտօք հաւատաց, եղեւ արժանի յղանալ եւ ծնանել զՏէրն մեր Յիսուս Քրիստոս: Զի կորստական մարմնովն, յոր հպարտացեալ յարգի լինէր[10]

չարն, նովին մարմնովն կշտամբեալ յանդիմանեսցի, թէ չէր իսկ Աստուած: Զի ի մարմին անդր յիւր Յիսուս Քրիստոս կոչեաց եւ փրկեաց զկորստական մարմինն. եւ ձգեաց զնոսա ի կեանսն յաւիտենից ի ձեռն հաւատոցն: Զի արդարութեան տաճար սուրբ յիւր մարմին[11] *անդր լինելոց ժամանակացն պատրաստեսցէ. յոր մեքն իբրեւ հաւատացաք, ազատեցաք: Ապա գիտասջիք, եթէ ոչ են նոքա որդիք արդարութեան, այլ բարկութեան, որ զողորմութիւնն Աստուծոյ կարճեն յանձանց իւրեանց, եւ ասեն, եթէ ոչ են երկինք եւ երկիր եւ ամենայն արարածք՝ ձեռագործք Հօրն ամենայնի: Այլ նոքա անիծեալքն զօձին ուսումն ունին. բայց դուք զօրութեամբն Աստուծոյ ի բա՛ց մերժեցարուք*[12] *ի նոցանէ եւ զխոտոր վարդապետութիւն նոցա ի ձէնջ ի բա՛ց հալածեցէք: Զի ոչ էք դուք որդիք անհնազանդութեան, այլ մանկունք սիրեցելոյն եկեղեցւոյ. վասն որոյ ժամանակ յարութեան քարոզեցաւ ընդ ամենեսեան: Բայց որ ասենն չիք յարութիւն մարմնոյ, նոքա իսկ չեն յառնելոց ի կեանսն յաւիտենից, այլ ի դատապարտութիւն. զի այնպիսիք ի յարութենէն ուրացեալք գտանին:*

(տե՛ս Թ. Թոռնեան, Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, հ. Ա, Վիեննա, 1891, էջ 500-504)

---

[1] քաջ քաջ - սաստիկ
[2] ի վերայ հասանել - տեղեկանալ
[3] յայտ յանդիմանութեամբ ամենեցուն - դեմ հանդիման բոլորին
[4] փխ. վասն Ստատոնիկեայ կնոջն Ապողոփանի
[5] իբրեւ մոռանալ նմա զկապանս - իբրև թե ինքը մոռացավ իր կապանքը
[6] իբրե՞ւ թէ - ինչքա՞ն
[7] փխ. աղէտք տարակուսի - վիշտ, տառապանք
[8] վրիպակ, այստեղ՝ ծախորդութիւն
[9] անխնդիր ոչ մնաց - առանց փնտրվելու չմնաց
[10] յարգի լինէր - հարգվում էր, պարծենում էր
[11] փխ. ի մարմնի իւրում
[12] ի բաց մերժեցարուք - հեռացե՛ք, փախե՛ք

ԵՒՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ

ՔՐՈՆԻԿՈՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

1.

Վասն ժամանակագրութեան

Ընդ պէսպէս մատեանս առաջնոց պատմութեանց անցի[1]*. զոր Քաղդէացիք եւ Ասորեստանեայք յիշատակեն, զոր գրեն մի ըստ միոջէ եւ Եգիպտացիք, զոր եւ Յոյնք վիպեն հաւաստեաւ՝ որպէս թէ մարթ իցէ*[2]*. ընդ որովք փակեալ կային ժամանակք թագաւորաց եւ Ողոմպիադաց, որ թարգմանի ըմբշամարտաց*[3]*: Եւ զարութիւնս ինչ, որ ի բարբարոսաց եւ Յունաց, յԱրեաց եւ յԱնարեաց գործեցան եւ զիւրաքանչիւր ուրուք զօրս զարմանալիս, զզօրավարս, զիմաստունս, զքաջս, զբանաստեղծս, զվիպագիրս, զփիլիսոփայս, կահաւորութիւն համարեացայ*[4]*, մանաւանդ թէ օգուտ իսկ եւ կարեւոր պէտս՝ համառօտիւք զամենեսին ի կիր արկանել*[5]*, եւ յԵբրայեցւոց զառ ի սուրբ գրոց կրեալ եբրայական նախնեացն պատմութիւն եւ զժամանակագրութիւն՝ ընթերակայ հանդէպ ճառելոցս դնել. որպէս զի ի վերայ հասանել կարիցեմք, եթէ ո՛րչափ յառաջ քան զկենարար աստուածայայտնութիւնն*[6] *Մովսէս եւ որ յետ նորա Եբրայեցւոց մարգարէքն կացին՝ իցեն. եւ զոր ինչ աստուածեղէն Հոգւովն յառաջագոյն բարբառէին, զի դիւրաւ ճանաչել մարթիցեմք, եթէ որո՛ց Յունաց կամ բարբարոսաց, որք յիւրաքանչիւր ազգս քաջք երեւեցան, դիպեցան. եւ յո՛ր ժամանակս եղեն անդուստ ի վերուստ հոյակապքն ի մէջ Եբրայեցւոցն մարգարէքն, եւ ամենեքին, որ մի ըստ միոջէ ի նոցանէ եղեն նոցա առաջնորդք: Եւ դուլ եւ պատուէր տամ*[7] *ամենայն ումեք աստէն ի սկզբանս, մի երբեք ոգորել յանդգնել որպէս թէ ստուգիւ ինչ հաստատ ժամանակացն կարիցէ ոք լինել: Զայս նախ անտի իսկ չահիցիմք, եթէ*

ճշմարիտ վարդապետ զայն, որ ասաց ցիւր ծանօթսն, համարիցի ոք, թէ՝ «Զէ՛ ձեր ճանաչել զժամս եւ զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան»: Այլ նա աստուածապէս տիրաբար, թուի ինձ, թէ ոչ միայն վասն կատարածի, այլ վասն ամենայն ժամանակաց ետ զայն վճիռն սակաւ բանիւք, զի զորս լրբել ժտել յայնպիսի դատարկ քննութիւն յօժարեն, արգելուցու: Նա եւ մեր իսկ բանս՝ աստստին սմին վկայեալ, հաւատարիմ առնիցէ զվարդապետին բարբառ, թէ ոչ Յունաց եւ ոչ բարբարոսաց եւ ոչ այլոց անդստին իսկ յԵբրայեցւոց՝ մարթի հաւաստեաւ ուսանել զամենայն աշխարհի զժամանակագրութիւն. զի մի՛ այլոցն ոք նմանեալ՝ կարծիցէ ճշդիւ գտակաւ[8] հասանել համարոյ ժամանակացն, եւ խաբիցի:

Ընդ Յունաց չէ ինչ զարմանալ՝ արտաքոյ հասանել իւրաքանչիւր երկայն ժամանակաց լինելոյ, որք ընդ ազգի ազգի եղծագործն ապականութեամբ արկին զանձինս. եւ ընդ երկար ժամանակս մինչեւ ցԿադմեայ ազգն՝ ամենեւին գրով ինչ ոչ վարէին. քանզի Կադմոս, ասեն, նախ եբեր նոցա գիր ի Փիւնիկեցւոց աշխարհէն: Եւ յիրաւի իսկ ի Պղատոնի գիրսն անգոսնէ Եգիպտացին զՍողոն. «Ո՛վ Սողոն, ասէ, Յոյնք միշտ մանկտի էք. քանզի ծեր յոյն այր երբեք ոչ գտանի, եւ չիք առ ի ձէնջ ուսանել ուսումն զհին ժամանակին»: Իսկ Եգիպտացւոց բազում ինչ առանցիկ ճառք[9] պատմին. նոյնպէս եւ Քաղդէացւոց. զի նոքա ի քառասուն եւ յեւս աւելի բիւրս ամաց համարին զգրեալ իւրեանց ժամանակսն. եւ Եգիպտացիք դից իմն եւ այլոց ոմանց դիւցազնաց եւ առ այնու ուրուականաց եւ մահկանացուաց այլոց թագաւորաց բազում ինչ զառանցելոց առասպելս տողեն: Այլ զայս ընդունայնակարծ[10] հպարտութեան ժամանակագրացն ասացի ի կշտամբութիւն:

Բայց ես վասն իրացն՝ որ առաջի կան, զհնոցն գրովք եկեալ, նախ եդից զՔաղդէացւոցն ժամանակագրութիւնն, ապա զԱսորեստանեայցն, ապա զՄարաց թագաւորս, ապա զԼիդացւոց, եւ առ նոսին զՊարսից: Եւ անտի ի միւս տեղի փոխեալ՝ զամենայն զԵբրայեցւոց ժամանակագրութիւնն եդից կարգ ըստ կարգէ[11]:

Եւ նիւթս ի նոցանէ ամենեցունց ժողովեալ անձին՝ ի քրոնիկոն ժամանակական կանոնսն փոխեցայց. եւ առեալ անդուստ ի սկզբանէ ի նոցանէ, որք յիւրաքանչիւր ազգի թագաւորեցին, զժամանակսն յանցնիւր ուրոյն ուրոյն բաժինս բաժանեցից, եւ հանդէպ միմեանց կարգեցից զթիւս ամաց իւրաքանչիւր ուրուք ի նոցանէ. զի դիւրաւ եւ պատրաստագոյնս ի վերայ հասանիցեմք, թէ ո՛ ոք յո՛ր ժամանակս եղեն. եւ զքաջութիւնս իւրաքանչիւր թագաւորութեան, որք յամենայն ազգաց պատմին, համառօտիւք ի մէջ թագաւորութեանն կարգեցից: Այլ այնմ երկրորդում առ յապայ գործ լիցի:

Բայց առ այժմ ի մօտաւոր ճառիս օն առ այսր[12], տեսցուք զառ ի Քաղդէացւոց զիւրեանց նախնեաց պատմեալ զժամանակագրութիւն:

---

[1] ընդ պէսպէս մատեանս անցի - շատ գրքեր կարդացի, աչքի անցկացրի
[2] այսինքն՝ հաւաստեաւ՝ որչափ ինչ մարթ իցէ
[3] փխ. ըմբշամարտք
[4] կահաւորութիւն համարել(իմ) - պատշաճ համարել, հարմար տեսնել
[5] ի կիր արկանել - կիրառել, գործածել, օգտագործել
[6] աստուածայայտնութիւն - Աստծու հայտնվելը մարդկանց
[7] դուլ եւ պատուէր տալ - հորդորել, հրաման տալ
[8] գտակաւ, մ. հաւաստի կերպով, ստույգ գիտենալով, ճշտությամբ
[9] առանցիկ ճառք - մտացածին՝ ստահոդ խոսքեր
[10] ընդունայնակարծ - սնապարծ, սնափառ, ունայն
[11] կարգ ըստ կարգէ - կարգով, հաջորդաբար, մեկ առ մեկ
[12] օն առ այսր - հապա

2.

Դիոնիսի Աղիկառնացւոյ յառաջին հռոմայական պատմութենէն

Զտիրեալ քաղաքէն ամենայն երկրի եւ ծովու, յորում այժմ Հռոմայեցիք բնակեն, հինք ի ժամանակագրաց ասեն, թէ բարբարոսք ունէին՝ Սիկեղացւոց ազգն անդէն ծնեալ: Բայց յառաջ քան զնոսա՝ ոչ թէ ո՛րպէս այլք ունէին, եւ ոչ թէ աւեր իսկ կայր, չկարէ ոք հաստատութեամբ պատմել: Իսկ յետ այնր ժամանակաց[1] Աբորիգինացիքն կալան, որք բազում ժամանակաց պատերազմ տալով ընդ բնակիչսն՝ առնուն. որք նախ ի լերինս բնակէին առանց պարսպաց ի չէնս ուրեք աստ անդ ցան եւ ցիր:

Եւ յետ նոցա զՊեղասգացւոց եւ զոմանց Յունաց ասեն ունել զերկիրն. որոց զառաջինն Աբորիգինացիս անուանեալ. եւ յետոյ ի Թագաւորէն Լատինայ լատինացիք կոչել, որ առ Եղիական պատերազմաւն բռնացաւ[2]. իսկ յետ վեչտասան ազգաց անցանելոյ՝ Ռոմելեայ չինեալ զքաղաքն եւ մեծացուցեալ, եւ զիրս եւ զօրէնս յաւագութիւն ածեալ: Եւ յայսմ վայրէ անդրէն դարձուցեալ զբանն՝ զրէ զայս ձեւ օրինակի զնոյն բանս:

ՁԱբորիգինացիսն՝ յորոց տիրէ[3] ազգն Հռոմայեցւոց, ոմանք անդստին ի յաշխարհէն Իտալացւոց ուրոյն ջոկ[4] ասեն լիեալ: Իսկ Իտալիա զբնաւ իսկ զծովեզերն կոչեմ՝ զՅունիոս խորշ, եւ զՏուրէնական ծովն, եւ զերրորդ մասն երկրին՝ զոր լատինացիքն ունէին: Եւ թարգմանին իշխանք ազգապէտք կամ նախծինք. իսկ ըստ այլոց մատենագրաց թափառականք կոչին, ի բազում աշխարհաց ժողովեալք. եւ ըստ այլոց՝ թէ Լիբէացւոց-անդր եկք երթեալ էին եւ (տեղեկագոյնք ի) Հռոմայեցւոց մատենագրաց ասեն, թէ Յոյնք էին, ի նոցանէ՝ որ երբեմն յԱքայիին բնակեալ էին, բազում ազգօք յառաջ քան զՏրովական պատերազմն անդր հատուածք երթեալ:[5]

Եւ ի նոյնս յարեալ՝ ասէ, թէ ճշմարտութեամբ որպէս զիարդ եւ իցէ՝ չէ յայտ. բայց ըստ իմում կարծեաց՝ յայն ազգէ, որ այժմ Արկադեանն կոչին, լինել նոցա: Նախ նոցա անցանել ընդ Յունիոս խորշ ծովուն, եւ բնակել յԻտալացւոց աշխարհին. զորս տարեալ Ինովտրի լիկոնացւոյ՝ որ էր հինգերորդ Զէի եւ Փորոնեայ, եւթնեւտասն ազգօք յառաջ քան զտրովական պատերազմ: Ոյինովտրեայ ի լերինս բնակեալ, եւ Ոյինովտրիա զաշխարհն կոչեալ, եւ զբնակիչսն Ոյինովտրիացիս: Որոց յետոյ անուանեալ Իտաղացիս յԻտաղ Թագաւորէ. յորմէ եւ ամենայն իսկ երկիրն Իտաղիա անուանեալ: Եւ զԻտաղոս փոխանակեալ Մորգեայ, յորմէ Մորգէացիք կոչեցան: Եւ Ոյինովտրի եղբօր, որոյ անուն էր Պեւկէտիոս, ընդ նմին հատուած եկելոյ յԱրկադացւոց աշխարհէն, բնակեալ առ Յունիոս խորշիւն. եւ ի նմանէ Պեւկէտեանս անուն ազգին կոչեալ: Զայս ամենայն ի կարծեաց ասէ:

Եւ յետ այնորիկ ասէ զՊեղասգացւոց հատուածից Յունաց երթեալ բնակեալ յԻտալացւոց կողմանսն ընդ Աբորիգինացիս: Իսկ Պեղասգացւոցն՝ նոցին եւ Տիւռենացիս կոչեալ, եւ ամենայն աշխարհին՝ Տիւռէնիա, յանուն միոյ ուրումն իշխանի նոցա, որ կոչէր Տիւռենէնոս՝ անուանեալ: Այլ Եւանդրի ուրեմն յԵլլադացւոց աշխարհէն ի Պաղանտիոս քաղաքէ Արկադացւոց՝ նաւատորմիղ նաւօք անցանել, յետոյ բնակեալ յԻտալացւոց ի նոյն տեղիս, առ որով Հռոմ քաղաքի չինեալ դիպէր: ՁԱրկադացւոց ասէ զյոյն դպրութիւնն տանել յԻտալիա, եւ զարուեստական տաւղացն նուագարանս. եւ օրէնս եւս դնել նոցա: Եւ յետ նոցա՝ եւ Հերակղեայ այլ յունական նաւատորմիղս տանել ընդ իւր, եւ բնակել ի յառաջագոյն ճառեալ տեղիսն: Նախ Սատոռնիոս կոչէր, ուստի եւ ամենայն աշխարհին Սատոռնիա անուանել: Իսկ Հերակղի լինել անդ որդի՝ անուն Լատինոս, որում եւ Աբորիգինացւոց աշխարհին տիրել, յորմէ Լատինացիք կոչեցան: Եւ ի Լատինայ յանորդի վախճանել[6]՝ Էնիայ որդւոյ Անքիսեայ առնուլ զիշխանութիւնն:

---

[1] փխ. այնց ժամանակաց
[2] բռնացաւ - տիրեց, իշխեց
[3] այսինքն՝ սկիզբ է առնում
[4] ուրոյն ջոկ - առանձին ազգ
[5] հատուածք երթեալ - գաղթել
[6] փխ.եւ ի վախճանել Լատինայ անորդի

3.

Վասն Էնեայ յԻտալիա երթալոյն

Իղիոն, ասէ, առաւ իսկ եւ իսկ ի գլուխ ելանելոյ ամարայնոյն՝ եւթնեւտասն աւուրբ յառաջ քան զձմերական փոփոխմունսն լինելոյ ի...[1] Ելափէբողիոն ամսոյ, որպէս Աթենացիք զժամանակսն վարեն, քանզի աւելի աւուրք[2] էին, որ զտարին զայն լնուին՝ յետ փոփոխմանն հինգ աւուրբք: Իսկ յերեսուն եւ եւթն օր անցանելոյ յառնլոյն, թուի ինձ՝ քաղաքին յանձանձիչս[3] Աքայեցւոց լինել. եւ հրէշտակագնաց անդր ի մերժելոցն առնել[4], եւ երդմնի եւ դաշնաւոր ընդ նոսա լինել: Եւ միւսում եւս ամին յառաջ քան զառնուլն՝ յետ աշունն հաւասարելոյ աւուրցն, չուեալ Տրովացւոց գնացին յերկրէն. եւ պարզեալ[5] անցանէին ընդ Եղէսպոնտոս, իջեալ ի Թրակ՝ անդ անցուցանէին զժամանակս ձմերանոյն. զտեղի առեալ մնային եւ այլոցն եւս՝ որ ընդ նոսա էին փախստականք, եւ կազմ եւ պատրաստ կային միւսանգամ նաւարկելոյ: Ի սկզբան գարնանոյն ի նաւ մտեալ գնային ի Թրակայ. եւ իբրեւ ի գլուխ հանէին զմիջոցի վայրացն նաւարկութիւն մինչեւ ցՍիկիլիա, անդ հասեալ՝ իսկ եւ իսկ տարին վախճանէր, եւ անցուցանէին անդ զերկրորդ եւս ձմեռնն. ի քաղաքս խառն ընդ Եղիմացիս ի Սիկիղացւոց աշխարհն բնակէին:

Իբրեւ ժամանակք նաւարկութեանցն հասանէին, չուեալ ի կղզւոյն՝ անցանէին ընդ տիւռէնական ծովն համատարած. եւ իբրեւ զայն ի գլուխ հանէին, հասանէին ի Լորենտոս՝ յԱբորիգինացւոց ծովեզրն՝ յընդմիջել ամարանոյն. եւ առնուին զաշխարհն եւ բնակէին ի Լաւինիոն եւ կատարէին զերկրորդ տարի յառէն Իղիոնի: Եւ վասն սոցա՝ որպէս ինձ թուի, յայտ իսկ արարի:

Եւ յետ սակաւ մի ի նոյն յարեալ՝ ասէ. Պատերազմի ինչ եւ սաստիկ կռուոյ վասն նորին իրաց գոռալոյ, եւ Լատինոս մեռանի եւ Տուռնոս եւ այլք բազումք. սակայն ունէին, որ ընդ Էնէայն էին. եւ ի նմանէ զոր ի խնամութենէն եկն իշխանութիւնն՝ առնոյր Էնիաս. թագաւորեալ ամս երիս յետ լատինայ վախճանին, ի չորրորդ ամին մեռանէր ի պատերազմի:

Եւ ետ սակաւ իրիք ասէ. Յետ Էնեայ ի մարդկանէ վճարելոյ[6] յեւթներորդի իսկ ամին յետ զԻղիոնն առնելոյ, Եւռիւղէոն առ զԼատինացւոց պետութիւնն. որ անուանեցաւ Ասկանիոս ի փախստին:

Յետ ունելոյ Սիղուայ միով սխալ[7] յերեսուն ամէ զիշխանութիւնն, Էնիաս որդի նորին յաջորդեաց զհարստութիւնն. որ միով պակաս քան զերեսուն ամ թագաւորեաց: Ըստ նմանէ Տիբերիոս ութամեայ ժամանակ թագաւորեաց: Սա վախճանեցաւ ի կռուին, որ առ գետեզեր ուրեմն ասի եղեալ. ձիոյ տարեալ արկեալ ի յորձանուտ գետոյն, իւր անուանակից թողոյր զգետն, որ յառաջագոյն Աղբասն կոչէր, եւ ապա Տիբերիս: Եւ Տիբերի պայազատ Ագրիպաս թագաւորեաց ամս քառասուն եւ մի: Եւ յետ Ագրիպայ՝ Ամողիոս բռնակալ խստապարանոց եւ յԱստուծոյ ատելի՝ միով պակաս քան զքսան: Որոյ զդիսն անկոսնեալ՝ կազմէր փայլատականց նմանութիւնս, եւ ձայնատուրս[8] հանգոյն որոտմանց բարբառոց, ահաբեկեալ զմարդիկ՝ թէ ասուած իցէ՝ արժանի առնէր: Անձրեւաց եւ փայլատակացն ի նորա տունն ճեպելոյ, ծովալիճն, որ մօտ յապարանս նորա էր, անյոյս սովորութեամբ ի հեղեղ դարձեալ՝ ողողանէր զտունն. եւ այնպէս կործանեալ համօրէն տամբն հանդերձ սատակէր: Եւ այժմ իսկ ի ծովալճին ի կողմանս միում, յորժամ խաղացք[9] ջուրցն ցածնուցուն, եւ խաղաղեալ խորն հանդարտիցէ, առագաստից նշմարանք երեւին, եւ այլ եւս շինուածոց կերպարանք:

(տե՛ս Թ. Թորնեան, Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, հ. Ա, Վիեննա, 1891, էջ 424-468)

---

[1] այստեղ՝ ամսվա օրվա թիվ չկա
[2] աւելի աւուրք - ավելյաց օրեր
[3] յանձանձիչ - կառավարող, հոգացող
[4] հրէշտակագնաց անդր ի մերժելոցն առնել - մերժվածներից այնտեղ դեսպան ուղարկեցին
[5] այստեղ՝ նավարկել
[6] վճարել ի մարդկանէ - մեռնել
[7] սխալ, այստեղ՝ պակաս
[8] ձայնատուրս - շառաչյուն, բոմբյուն
[9] խաղացք (ջուրց) - ընթացք, բարձրանալը

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

ՅԱՂԱԳՍ ՎԵՑԱԻՐԵԱՅ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

(Հատուածք)

Բայց երկոքին ազգքն առանց բանի ունին զկենդանութիւն, այլ ցամաքային անասունքն ունին ըստ իւրաքանչիւր բնութեան եւ բարբառս, եւ ազգմունս: Զի ուրախ լինին ընդ դիւր եւ տրտմին ընդ դժուարին, եւ հանապազորդ համբուրիւն[1] ունին զընտրողութիւն եւ յուսումն գալ յաւժարին եւ իմանան զնուազութիւն դարմանոց իւրեանց, եւ հեռանալ ի միմեանց հաւանընկերաց գիտեն, եւ բազում անգամ զկարիս տրտմութեանն բարբառովքն յայտ առնել ջանան: Բայց ջրային եւ ծովային զեռունքն ոչ միայն բարբառս ոչ ունին կենդանութեանն, այլ եւ ոչ համբոյր ընդ այնմ, որ մերձենայցէ ի նոսա, եւ ոչ յուսումն գալ յաւժարին եւ ոչ ի հաղորդութիւն եւ ի պատրանս մարդկան: Իսկ զցամաքային եւ զերկրային անասնոցս ասացեալ է, թէ՝ «Ծանեաւ եզն զստացիչ իւր, եւ էշ՝ զմսուր տեառն իւրոյ»: Զուկն զդարմանիչ իւր ոչ գիտէ ճանաչել, բայց էշ զբարբառ համբոյր մարդկան անվրէպ ճանաչէ, եւ ճանապարհ, ընդ որ միանգամ անցանէ, այլ ոչ մոռանայ, եւ դէպ լինի, զի իշավարն մոռանայ, եւ նա, իբրեւ զտեղեակ, զուղղորդն տանի: Այլ վասն երագ լսելոյն, որպէս ասեն, եւ ոչ մի ինչ յանասնոց է այնպէս սուր լսելեաւք:

Իսկ ոխակալութեան եւ չարայուշ բարոյից ուղտուց, որ մրմռեալ զայրացեալ լի դառնութեամբ պահեն զոխսն, զիա՞րդ կարիցեն նմանել ջրային զեռունք: Զի յորժամ հարկանիցէ ոք զուղտ եւ զայրացուցանիցէ, եւ բազում աւուրք ի վերայ գանին անցեալ իցեն, պահէ ի մտին զոխսն եւ ոչ մոռանայ եւ սպասէ այնմ, որ եհարն, թէ զիա՞րդ կարասցէ անկանել ի վերայ: Եւ եթէ գտանէ ժամանակ պատշաճ, հանէ զվրէժ եւ ոչ թողու: Արդ՝ լուիցեն զայս ցասկոտք եւ ոխակալք, զի զոխս, զոր ի սրտին բունեալ[2] պահեն, իբրև լաւ իմն եւ մեծ համարին: Եւ արդ՝ տեսցեն որում չարաբարոյ գազանի բերեն զաւրինակ նմանութեան եւ զչարիսն, որ լինելոց են ի նոցանէ առ մերձաւորս իւրանց, սնուցանեն ի փորի եւ զաւրացուցանեն, զի առ զայրուցս[3] բարկութեան, զոր ունին ի մտի, արասցեն յետոյ դիւրաւ զվնաս ապականութեան: Եւ նման են կրակի, որ ծածկեալ կայցէ յանթեղի, զի ցայն վայր է դադարելն նորա յայրելոյ, մինչ զի գտցէ ինչ, որում տիրեսցէ: Եւ յորժամ գտանէ տեղի, վառեալ բորբոքի հանդերձ բազում փայտիւ, յայնժամ ճեպեալ բոցոյն եւ տոչորեալ հրատիցն ցուցանեն զսնունդ նորա ի վնաս ապականութեան:

Բխեսցեն, ասէ, ջուրք չունչ կենդանի ըստ ազգի իւրում եւ թռչունս թեւաւորս ի վերայ երկրի ըստ հաստատութեան երկնից, ըստ ազգի իւրում: Իսկ ընդէ՞ր արդեաւք ի ջուրց արար զազգն թռչնոց, այլ քանզի, որպէս երեւի, ազգակիցք միմեանց են թռչունք աւղոց են ղուղակք ջուրց: Զոր աւրինակ՝ ձկունք ջուրց տիրեն եւ այսր անդր թեւահանեն, լողան, խաղան՝ առ ի հատանել անցանել ճեպելով զջուրցն խոնաւութիւնն յամենայն կողմանս, յոր եւ կամին խաղալ, եւ չիք ինչ նոցա արգել ի ջուրցն բազմութենէ: Նոյնպէս եւ թռչունք ըստ նմին նմանութեան չողան[4] խաղան յաւդս եւ այսր անդր ձեւեն, պատառեն զլոյծ[5] եւ զտարած բնութիւնն, եւ անդէն երթեւեկս առեալ ղուղին անխափան եւ անարգել: Եւ արդ՝ թէպէտեւ այլակերպք իցեն կերպարանաւք, սակայն զմի բնութիւն են, քանզի ի ջրոյ են ամենեքին, եւ զմի գնացս եւ զնոյն լողս ունին ամենեքեան:

Բայց ի թռչուն բնութենէն չիք ինչ, որ առանց ոտից իցէ, քանզի յերկրէ է կերակուր ամենեցուն եւ ըստ իւրաքանչիւր պիտոյից տուան ոտք ի պաշտաւնս իւրաքանչիւր: Իսկ գիշակեր հաւուցն, որ յորսոյ կեան, եւ ճիրանունք սարկեւառք[6] տուան, եւ այլոց թռչնոց՝ առ ի լնուլ զիւրաքանչիւր պէտս դարմանոց յերկրէ, տուան ոտք, քանզի սակաւք ի բազում թռչնոց են, որ խստոտունք, հաստամագիլք իցեն: Քանզի ոչ ի գնացս ինչ բազում վայրաց տուեալք են ոտք եւ ոչ ի

պէտս որսոյ, որպէս ծիծառանց եւ այլոց թռչնոց, որ անուանեալ կոչին մաքալուկք, որք յաւդոց զմանրամաղ իրս ինչ թռուցեալ բերեն ի դարման իւրեանց պիտոյից, եւ ծիծառան, վասն զի ոչ գոյ նորա բնակաւոր կայ ոտիցն, առ երկրաւ տուաւ թռչել իբրեւ ի հանգիստ:

Եւ արդ՝ բազում ազգք են թռչնոց, որ ունին զպէսպէս կերպարանս: Եւ եթէ միտ եդեալ հայեսցի ոք ընդ իւրաքանչիւր կարգս նոցա եւ ըստ նմանութեան աւրինակի ձկանցն գտանէ զնոսա իւիք իւիք[7]: Եւ թէպէտ ամենեքին զմի՝ թռչուն անուն ունին, սակայն բազում կերպարանս ունին, այլազգ՝ մեծութեամբ եւ կերպարանաւք եւ գունաւք եւ բարոյիւք եւ խաղալեաւք եւ գործովք: Եւ անցանեն ըստ մարդկեղէն պատմութիւն՝ անբաւ յաւրինուածովք եւ կերպարանաւք իւրեանց: Իսկ ոմանք այնպէս հնարեցան, զի ըստ կերպարանացն եւ զանուանս ազգացն նոցա եղին: Եւ որպէս յայտ յանդիման ցուցանէ դրոշմած առ դրոշմ յայնմ, որ ընդունիցի զխարանս նորա: Նոյնպէս եւ անուանքն ընտրեսցեն ի միմեանց զազգսն ըստ իւրաքանչիւր երամի, որ միմեանց ինչ ոչ նմանիցեն, եւ իցեն աւտարացեալք ի հասարակաց միաբանութենէ: Եւ զկէսն հերձաթեւս անուանեցին, այսինքն՝ զարծուիս, եւ զկէսն՝ մաշկաթեւս, այսինքն՝ զչղջիկանս գիշերոյ, եւ զկէսն՝ անաւսրաթեւս, այսինքն՝ զմեղուս, եւ զկէսն՝ պատենաթեւս, այսինքն՝ խաղողեփեացս[8], եւ բզէզս, եւ որ սոցին նման են, որ իբրու ի պատեանս իմն ունին զթեւսն, եւ յորժամ բանան պատեանքն, յայնժամ առնի նոցա դիւրին ի թռչելն: Բայց մեզ այն անուանք բաւական են, որ ի գրոց տուան, թէ որ սուրբք իցեն եւ որ ոչ իցեն սուրբք:

Արդ՝ այլ ազգ գիշակեր հաւուցն է, քանզի այլակերպ կերպարանաւք իբրեւ առ ի պէտս որսոյն պատշաճեալ են մագիլս սուր եւ հաստաբիտ եւ կտուցս կոր եւ սուր եւ խիստ, եւ թեւս երագունս առ որսոյն պատրաստութիւն: Եւ որ ինչ ի բուռն գայ, իբրու զիւրաւ իմն, յաւշէն եւ պատառեն: Եւ այլ կերպարանք այնց են, որ ի կտոյ սերման դարմանին, այլ կազմած այնց, որ յորսոյն կեան: Եւ բազում այլակերպ նմանութիւնք գտանին ի թռչունս. զի կէս ազգք երամ երամ միաժողով չրջէն, բայց ի գիշակերացն, որ միշտ յորսոյն սկեն եւ սպասեն,

քանզի ոչ ունին համբոյր ընկերութեան ընդ երամակիցսն իւրեանց, բայց ընդ միում միայն, որ է ընդ նոսա հաղորդակից ամուսնութեամբ: Եւ բազում այլ ազգք են, որ համագունդ երամ երամ չրջին՝ իբրեւ ծիծառունք եւ խորդք եւ ճայք եւ խոլոմուկք[9] եւ սարիկք եւ տարմահաւք[10]: Կէսքն առանց գլխոյ եւ իշխանի[11], բնածին աւրինաւք ունին զերամսն իւրաքանչիւր, եւ կէսքն՝ ընդ առաջնորդաւ հնազանդեալ, այսինքն՝ են խորդք::

Եւ դարձեալ ի նոսին պէսպէս փոփոխմունք գտանին. զի կէսքն ի նոցանէ չուովք յաշխարհէ յաշխարհ չրջէն, եւ կէսքն անդէն յիւրաքանչիւր տեղիս կան մնան զետեղեալք, եւ կէսքն մաւտ ի ձմեռն խաղան չուեն ի ձմերոյթ[12] յաշխարհ հեռաստան: Եւ կէսքն ի թռչնոցն գան ի ձեռն մարդոյ ի համբոյր եւ ի սնունդ, բայց միայն ի տկար թռչնոցն, որ ահաբեկեալ զարհուրին,եւ ոչ ժուժան, եթէ մերձեսցի ի նա ձեռն մարդոյ: Հանդերձ այսու թռչնով, որ ընդ մեզ բնակեալ է, են թռչունք, որ առ մեզ կամին առնել զբնակութիւնն եւ են, որ լեռնասէր անապատական բարս ամրոցս ունին:

Եւ բազում փոփոխմունք գտանին յիւրաքանչիւր յազգս թռչնոց եւ կերպարանաւք, եւ բարոյիւք, եւ բարբառովք: Զի կէսքն խորամանկք են, եւ կէսքն միամիտք, կէսքն բարբառովք են, եւ կէսքն՝ անբարբառք, կէսքն՝ գեղեցկաձայնք են եւ քաղցրաբարբառք, եւ կէսքն՝ խստաձայնք եւ տգեղաբարբառք: Եւ կէսքն ընդաբոյսք բնութեամբ ունին նմանեցուցանել զբարբառս իւրեանց ի կրթելոյ, եւ ի սովորեցուցանելոյ, որ ուսուցանիցեն զնոսա, եւ կիսոց չէ հնար ուսանել եւ փոխել զբարբառսն իւրեանց: Աքաղաղ հպարտ է եւ սէգ, սիրամարգ զարդասէր է եւ պայծառաթեւ, աղաւնի ցանկասէր է հանապազ ամուսնանալովն՝ հանդերձ ընտանի թռչնով, զի եւ նա միշտ ամուսնանայ: Կաքաւ նենգաւոր է եւ խորամանկ, եւ նախանձոտ, եւ հնարագէտ, եւ որսորդախաբ: Եւ որպէս ասացաք, բազում իրք եւ բարք գտանին ի բնութիւնս իւրաքանչիւր ազգ թռչնոցն:

Գոն դարձեալ ի թռչունս բարք բնածին ազնուականք, զի ամենեքին միաժողով միաբան յորդորին եւ ի մի գործ հասարակաց միա-

համուռ ելանեն մեծաւ փութով, ինքնակամ յաւժարութեամբ, զոր ունին առ պէտս գործոյն իւրաքանչիւր ամենայն պարս մեղուաց, զորս տեսանեմք ի մի գործ միով հաւանութեամբ միաբանեալք: Քանզի ի միասին կեան եւ ի միասին գնան, միանգամայն ժողովին եւ միանգամայն թռչին եւ միագործ ճեպեալ վաստակին համաւրէն: Եւ մեծ, քան զամենայն, այս է, զի ընդ իշխանաւ եւ ընդ առաջնորդաւ են եւ ոչ մատչին ի գործ եւ ոչ իշխեն երթալ ծաղկաքաղ ի մարգս, մինչեւ տեսցեն զթռչուն թագաւորն իւրեանց սկսեալ ի գործ վաստակոյն:

Նմանեսցուք առանձնագործ գործոցն մեղուի, զոր իւրով իւրում անձինն համբարէ, զի զինչ որ ոչ իւր իցէ, զայն ոչ ապականէ եւ այլոց արարոց ոչ առնի վնասակար, այլ անձամբ ինքն իւր համբարս համբարէ, զմաղս մեղերն մոմակերտ գործով չինեալ յարդարէ: Եւ զմոմ մաղոցն[13] ի ծաղկաբեր մարգացն մեծաւ փութով անդադար ժողովէ եւ զմեղրն, որ նման ցողոյ զքարամբք եւ զոստովք եւ զտերեւովք ծորեալ իջեալ մածեալ կայ, քաղեալ առեալ ի բերանն ճեպով բերէ եւ ի խորս մոմակերտ գբոցն ունչս արկեալ համբարեալ դնէ: Եւ յառաջին նուագին ի սկիզբն սկսուածոյ գործոյն անգայտ[14] մաղովք անաւսր գործով զգործած գբոցն յաւրինէ վասն ջրի եւ լոյծ նորոգ զմեղրն ժողովելոյ: Իսկ յորժամ յաճախեալ բազմասցի մեղրն, խաւ ի խաւ եւ մթեր առ մթեր ժողովեալ կուտիցէ, եւ բազմաւրեայ ժամանակաւք ի վերայ անցեալ գտանիցին, իբրու թէ առաւել իմն առաւելութեամբ հասեալ եփեալ գեղեցկանայ: Եւ ապա յետ այսր ամենայնի ի դարման մերոց պիտոյից մաղակոտոր հատեալ գտանի:

Ապա ուրեմն բարիոք գ՝ովեցաւ մեղու ի Սողոմոնէ յառակս աւրինակացն նորա, եւ իմաստուն եւ հանճարեղ անուանեաց զնոսա ի գործ: Եւ մեծաւ փութով եւ բազում պատրաստութեամբ առնէ անձին դադար, եւ զվաստակս նորա թագաւորք եւ տնանկք ի բժշկութիւնս մատուցանեն: Որ հնարագէտ իմաստութեամբ ի շտեմարանս զմեղրն կազմէ:

Եւ մի՛ ոք կարի յոյժ տրտմեսցի վասն աղքատութեան եւ մի ոք այնչափ մոռասցի զանձին հատանել զյոյս, յորժամ ոչ ինչ գտանիցի ի տան: Նայեսցի ընդ ծիծառն անջատ եւ միանձն: Տեսանե՞ս զիարդ դալակիցի, տկար զաւրութեամբն առնիցէ դադարս անձին: Զի յորժամ զտառապանաց բունիկն կամիցի չինել, բերանացի քաղէ տանի չիւղս եւ քանզի ոտիւքն ոչ կարէ կրել կաւ, զծայրս մագլացն ի ջուրսն թանայ եւ ելանէ ընդ մանր փոշի գնայ եւ յայսպիսի տառապանաց հնարիւքն լնու զկարաւտութիւն կաւոյն կրելոյ: Եւ առ սակաւ սակաւ հնարի չինել զվարանաց բունիկն. դնէ նախ զկաւն եւ ապա զչիղն ի վերայ իբրեւ զպահանգս կապէ եւ այնպէս կատարէ զչինուած բունոյն, զի հանցէ ի նմա ձագս եւ սնուցանիցէ: Եւ եթէ դէպ լիցի ցաւել աչաց միոյ ուրուք ի ձագաց անտի եւ կամ հարցի ընդ իմիք եւ վնասեսցի, գիւտ բժշկութեան ունի բնութեամբ մատուցանել աչաց ծննդոց իւրոց եւ բժշկել: Զայս ամենայն հնարս տկար թռչնոյն առցէ մարդ աղքատ ի մխիթարութիւն իւր, զի մի՛ վասն աղքատութեանն անկանիցի ի գործս չարութեանց: Եւ յորժամ վիշտք ինչ անհնարինք հասանիցեն ի վերայ մեր յաշխարհի, մի՛ վհատեալք եւ լքեալք եւ անյոյս լինիցիմք, այլ յուսացեալ ապաւինեսցուք յԱստուած, որ եւ ի վերայ ծիծառանց ունի հոգաբարձութիւն, քանզի նորա արարածք են: Եւ մեզ, առաւել քան նոցա, լիցի աւգնական, թէ յամենայն սրտէ խնդրեսցուք զնա եւ ոչ բախեսցուք զդուռն նորա պատրանաւք մարդկան, որոց ի կորուստ են հրապոյրքն իւրեանց:

Աղկիոն[15] դարձեալ թռչուն, որ առ ծովեզերբ բնակէ եւ անդէն առ ծովեզերբն դնէ բոյն յաւազոյն վերայ եւ արկանէ զձուս եւ ի մէջ ձմերայնոյն նստի ի ձուս թխել[16], յորժամ բռնութիւնք հողմոցն եւ դառնաշունչ սառնամանիքն ամբոխեալ զծովն՝ ալէկոծ առնիցեն զեզերսն: Եւ յայնպիսի մրրկեալ ժամանակի կակղանան բռնութիւնք հողմոցն, եւ ցածնուն ալիքն ամբոխեալք, եւ դադարէ ծովն ի խռովութենէ մինչեւ տկար թռչունն աղկիոն թխէ զձուս զեւթն աւր: Եւ ի կատարել եւթն աւուր հանէ զձագսն ի մեռեալ խեճեպոցն ի կենդա-

նութիւն: Եւ յորժամ հանիցէ զձագսն, զեւթն աւր եւս ջանայ սնուցանել եւ զարգացուցանել:

Այս ամենայն պարգեւք առ տկար թռչունն յամենատեսն Աստուծոյ տեսչութենէն, որ ամենայնի առաջնորդէ եւ զայս ամենայն տեսչութիւն, որ ի վերայ տկար թռչնոյն լինի, ամենայն նաւորդք իմանան եւ զաւուրսն զայնոսիկ յանուն ակղիոն թռչնոյ անուանեն եւ այսպէս կոչեն՝ աղկիոնի դիտակ աւուրք:

Արդ՝ ոչ եթէ էր չունչ կենդանութեան յերկրի, եւ վասն այնր ա՛ռ հրաման բղխել եւ երեւեցուցանել, այլ ընդ բարբառել հրամանին եղեւ ամենայն ինչ, յորում հաստատեալ կան իրք կենդանութեան: Բղխեաց ետ միանգամայն առ ժամայն մի չունչ յանասունսն ամենայն, որ ունի զմի նշանակ անխաւսութեան: Բայց փոփոխմունս անձանց եւ զատ կերպարանս այլանմանս ունին ըստ իւրաքանչիւր ազգաց անասունք: Զի եզն հաստանդամ եւ զաւրաւոր է, էշ՝ հեղգագնաց, եւ ձի՝ ջերմանդամ եւ բուռն առ ի ցանկութիւն, եւ գայլ ապստամբ է ի չինէ եւ ի հնազանդութենէ ձեռաց մարդկան, աղուէս նենգաւոր է, խուսափող եւ խաբող, եզն վատասիրտ է եւ երկչոտ, մրջիւն գործաւնեայ եւ վաստակասէր է, եւ չուն հպատակ, որ անվրէպ եղեալ ի մտի պահէ զերախտիս եւ զսէր իւրոյ բարեկամի: Եւ այս ամենայն, որ երկրորդեցաք զանասունս հանդերձ այլ եւս բազում անասնովք, միանգամայն ի միասին եկին լինել, ընդ նոսին բարք իւրաքանչիւր եւ կերպարանք:

Եւ եկն անդստին ի բնէ ընդ նմին գազանութիւն առիւծու եւ մենակեցութիւն, որ ոչ ունի հաղորդութիւն ընդ տոհմակիցս իւր, այլ զվայրենամիտ յեղուզակութիւնն եւ զմենակեցութիւն սիրէ վասն ահաւոր կերպարանաց սաստիկ բնութեանն, եւ ոչ առնէ արժանի զոք համարել երամակից իւր: Զի բարձրացեալ հպարտացեալ ունի զանձն ի վեր, քան զամենայն անասունս, վասն ուժգնութեան զաւրութեան իւրոյ մեծութեանն: Այնպէս զի եւ ի նշխարս անգամ գիշոյ, որ յայգ ելանիցէ, ոչ կամի մերձենալ, եւ եթէ որպիսի զաւրութիւն ունի յաղթանդամ բնութեանն գոչիւն յայտ առնէ այնպէս, զի բազում գազանք, որք ուժաւորք ուժովք իցեն, քան զնա եւ յաղթանդամք մեծութեամբն, զարհուրեալ սրտաբեկին ի ձայնէ ահագին բարբառոյ նորա: Ինձ թեթեւանդամ է եւ երագոտն, զի ի թեթեւութիւն կազմեալ են անդամք բնութեամբ, եւ անխափան է երագութիւնն ի ծանրութենէ խոնաւ մարմնոյն, եւ դիւրաւ շրջշրջի յամենայն կողմանս, որպէս եւ կամի: Արջ ծանրանդամ է մարմնով եւ անհեղեղ գնացս ունի առանձինն՝ փորել եւ որջամուտ եւեթ լինել յաւժարէ: Եւ որպէս արտաքին կերպարանաւք անհեղեղ եւ գարշելի է, նոյնպէս եւ ի բարս ունի զնենգաւորութիւն եւ զկամակորութիւն. տգեղ անդամովք, անստու եւ անպատշաճ, իբրու կաղալով իմն զյաւդսն շարժէ եւ ի ժամանակս խստաշունչս սառնամանեաց ամփոփեալ յորջս՝ ամրածածուկ լինի:

Եւ եթէ երթիցուք բանիւք զհետ ճառիցն անասնոցն, քանի գտանեմք, զի առանց ուսման ունին ի բնածին բարուցն զպատշաճս պիտոյից կենաց իւրեանց: Եւ եթէ նայեսցուք ճշմարտիւ յանխաւսունսն, յոյժ եւ անչափ քան զնոսա, պակասեալ գտանիմք ծուլութեամբ անփութութեան , զոր ունիմք առ անձինս մեր: Զի արջ յորժամ վէրս առնուցու յանձին, ինքն բժշկել գիտէ հնարիւք բնածին բարուցն, զոր եգիտ յիւր յաւգնականութիւն: Երթայ խլէ զարմատ մի, որ անուանեալ կոչի փղոմոս, եւ բնութիւն արմատոյն այնորիկ ցամաքեցուցիչ զաւրութիւն ունի ուր եւ դիցի: Վաղվաղակի դնէ ի վերայ վիրացն, զի առցէ բժշկութիւն ի ցամաքեցուցանել դեղովն զթարախ վիրաց իւրոց: Դարձեալ եւ աղուէս ըստ նմին աւրինակի իմն առնէ եւ բժշկէ զվէրս իւրոց հարուածոց ի հուզոյ, որ լինի ի ծառոյ միոջէ, որ անուանեալ կոչի պիտուս: Դարձեալ եւ ջրային կրիայ եթէ կերիցէ ի մսոյ իժի եւ տագնապ ինչ հասանիցէ նմա ի կերակրոյն, երթայ ուտէ դաղձն եւ այնու անցուցանէ զտապ նեղութեան ի մարմնոյն, զի մի՛ վնասեսցի ի գիշոյն, զոր կերաւ: Աւձից աչք յորժամ ցաւիցեն, երթայ ուտէ շումրայ, այսինքն սամիթ վայրենի եւ ողջանան:

Այլ զաւդոց փոփոխմունս կանխաւ իմանան եւ անասունք, եւ թերեւս յոյժ մաւտ են ի գիտութիւն մարդկան զգայուն բարքն նոցա: Ոչխարք վաղագոյն իմանան զմերձենալ ժամանակի ձմերայնոյ եւ վասն այնորիկ մեծաւ փութով համբարեն զանձինս դարմանովք, եւ աւելի կերակուրս ճեպին ամանել յորովայնս, վասն զի գիտեն, եթէ նուազութիւն լինելոց է նոցա ի կերակրոց ի ժամանակս ձմերայնոյ: Եւ արջառք յորժամ բազում ժամանակս գոմամուտ լինիցին ի ձմերանի ի խստութենէ կարաձմեռն ձմերայնոյ, իսկ եւ իսկ իբրեւ սկսանին աւդքն պարզել եւ կակղանալ, իմանան եւ ի միասին միահոյլ խաղան ելանեն յիւրաքանչիւր կայանից եւ զուարթութիւն ցուցանեն յերեսս՝ վասն դառնաշունչ սառնամանեացն կակղանալոյ: Դարձեալ եւ ոմն ի մտադիր մարդկանէ, որ միտ եդեալ նայեսցի փութով ընդ փոփոխումն իրաց բազմաց, սպասեաց եւ եգիտ զոզնի մի ցամաքային, զի երկուս դուրս աւդամուտս արարեալ էր ծակուն, յորում կայր: Եւ յորժամ հիւսիսի սկսանէր շնչել՝ զհիւսիսային կողմանն ծակն խնոյր, եւ յորժամ հարաւ շնչէր՝ զհարաւային կողման ծակն խնոյր եւ զառաջինն, զոր եխիցն, բանայր:

Եւ արդ՝ զինչ ցուցանիցեն մեզ այս ամենայն իրք, զորս յանասունս տեսանիցեմք, այլ զայս, թէ ի վերայ ամենայնի է իմաստութիւն տեսչութեանն Աստուծոյ, զի մինչեւ յանմռունչ զեռունս ձգի առաջնորդութիւն նորա՝ տալ ի բնածին բարս նոցա զազդումն առ ի հնարս կենաց իւրեանց: Զի մի՛ ընդ այնց եւեթ, որ առաջի աչաց կայցեն հոգայցեն, այլ զի եւ զհանդերձեալսն իմասցին: Եւ մեզ՝ մարդկան առաւել եւս պարտ եւ պատշաճ է զարթուցանել զմիտս մեր եւ ոչ զբաղել ի հոգս աշխատեցուցիչս կենաց, այլ վասն հանդերձեալ աշխարհին վաստակեսցուք յամենայն արդարութիւնս: Աշխատեսցուք սակաւ մի ժամանակ զկեանս մեր վասն կենացն, որ կան եւ մնան յաւիտենից, եւ յանցաւոր աշխարհէս հանդերձեսցուք մեզ գանձս եւ պաշարս, որ լինիցին մեզ ի հանգիստ ճշմարիտ կենացն:

Յայտնի է այսուհետեւ, թէ չուն, որ անխաւսուն եւ անմռունչ է, զուգակից է զաւրութեան խաւսնոյ բնածին զգայնովքն, զոր ունի: Զի

մարդիկ իմաստունք յաշխարհիս, որ միշտ նստին նկատել զիրս ամենայն, թերեւս ոչ կարեն կալ ի վերայ մեծամեծ խորշից յեղյեղուկ խորհրդոցն իւրեանց: Եւ չուն զայս գիւտս յիւրոյ բնութեանց վարժից ստացեալ ունի, զի ի հետոյ չար գազանի ինչ զեռնոյ հոտով գիտէ քննել եւ կալ ի վերայ: Եւ յորժամ խառնակեալ ստերիւրեալ բազում հետովք զայն հետ, զոր վարէ, գտանիցէ եւ գիտէ, թէ բազում հետք են աղամողեալք յամենայն կողմանս, ոչ եթէ մտացածին խորհրդովք սկսանի խորհել իբրեւ զխաւսուն, զոր գործելն կամի, ասէ ընդ ա՞յս երթեալ իցէ չար գազանն, թէ՞ ընդ այն, յա՞յս կոյս, թէ՞ յայն կոյս, ա՞յն հետ իցէ որ սակաւ մի ընդ աղաւտս երեւի, թէ՞ այն, որ համարձակն երեւի: Այլ իսկ եւ իսկ իբրեւ հոտոտի, թէ սուտ է հետն, կայ վաղվաղակի ի վերայ ճշմարիտ հետոյն եւ անտի յառաջ ընդ ուղղորդս մտեալ ընթանայ՝ երթալ ժամանել յափշտակող գազանին: Արդ՝ զի՞նչ աւելի գործիցեն, որք երեւելի նշանակաւք եւ մեծարգի պատուովք նստիցին մշտնջենաւորեալք առ ի զիմաստութիւնն քննել եւ ի վերայ հողամաղ մոխրացան գետնոյ նկարագիրս դրոշմեն գտանել զհասարակ երեքանկիւնսն երեքն բոլորաձեւ դրոշմիւք, զոր նկարեն: Եւ մինչեւ զերկուսն թողուն եւ մին միայն մնայ, ոչ կարեն կալ ի ստուգւոջ վերայ:

Իսկ բնակաւոր յիշատակք երախտեաց, զոր յիշէ չուն առ երախտաւորս իւր, զո՞ յապաշնորհաց երախտաւորաց իւրոց ոչ ընդ ամաւթ հարեալ պատկառեցուցանիցէ: Բազում անգամ յորժամ սպանանիցին տեարք չանց ի բաց ի վայրի ուրեք յանապատի, եւ չունք ընդ նոսին առ գութ սիրոյ տերանցն մեռանին, եւ զնոսա ոչ թողուն: Եւ դարձեալ յորժամ այլ ինչ տեարքն սպանանեալ իցեն, առաջնորդ խնդրակաց սպանողացն լինին չունքն եւ յայտ յանդիման ական ցուցանեն զվրիժագործսն, զի ընկալցին զպատիժս պատուհասիցն ըստ անաւրէն գործոցն, զոր գործեցինն: Եւ արդ՝ զի՞նչ ունիցին ասել առ այս, որք զԱստուած զարարիչն եւ զկերակրիչն իւրեանց ոչ սիրեսցեն, այլ ընդ այնս եւս բարեկամացեալ իցեն, որք զԱստուծոյ զամբարշտութիւնսն խաւ-

սիցին, եւ սեղանաւորք եւս նոցա իցեն, եւ ախորժելով լուիցեն առ սեղանն զՀայհոյութիւնն ընդդէմ իւրեանց կերակրչին:

Եւ արդ՝ այսուհետեւ ի նոյն ճառ, զոր արկեալ էր, դարձցուք, այսինքն՝ ի պատմութիւն արարածոյ անասնոց: Անասունք, որ միշտ յորս եւ ի կերակուրս կոտորին, բազմածին ծնունդս ունին բնութեամբ: Եւ վասն այնորիկ նապաստակ բազմածնունդ կարգեալ է, եւ այծաքաղք եւ արտիկք բազում անգամ երկուորեակս ծնանին, զի մի՛ սպառեսցի սէր ծննդեան նոցա ի գիշակեր գազանաց: Իսկ այլ եւս անասունք, որ ինքնամեռք լինին եւ ոչ յորս եւ ի կերակուր կոտորին, մի մի ծնանին: Զի թերեւս մի կորիւն առիւծու ծնանի մատակ առիւծ եւ յորժամ հասանէ ժամանակ ծննդեան առիւծակորեանն պատառէ մագլովք զորավայն մաւրն եւ ելանէ, որպէս պատմեն, որ տեղեակ են իրացն նորա: Եւ իժ դարձեալ, ասեն, ըստ նմին աւրինակի ծնանի, եւ իժակորիւնն, որ ի նմանէ ծնանելոց է, ուտէ բերանով զորովայնն մաւրն եւ ելանէ: Եւ արժանի են վարձք այնմ ծնողին ի ծննդենէն, որ զնա ծնանի:

Եւ արդ՝ չիք ինչ յորոյ վերայ ոչ իցէ տեսչութիւն, եւ չիք ինչ, որ կազմեալ իցէ, թէ պակասեալ գտանիցի ի մասանց յաւրինուածութեանն: Եւ եթէ միտ եդեալ ընդ մասունսն, զոր ունին անասունքն, հայեսցիս ոչ ինչ գտանիցես ի նոսա աւելի, որ ոչ ըստ պատշաճի կարգեալ իցէ յարարչէն, եւ ոչ ինչ, որ կարեւոր պիտոյ էր, թէ ոչ գտանիցի ի նոսա: Զի ի գիշակեր գազանսն, որ միշտ զշաղիղ ուտեն, ժանիս սուրս հաստատեաց եդ արարիչն ըստ պատշաճի պիտոյիցն, որպէս եւ իրքն պահանջէին առ ի կեր շաղղոցն: Իսկ յայլ անասունսն զկէս ատամանց ի միում կողմանց հաստատեաց եդ եւ կերակուրս ազգի ազգիս համբարեաց եդ նոցա յերկրի: Եւ քանզի յառաջին նուագին[17] ոչ կարեն մանրել, զոր ինչ ուտեն, պատշաճեաց եդ ի նոսա արարիչն այլազգ հնարս, զի զոր ինչ մեծ ի մեծոյ եւ ողջն ողջն կլանիցեն դարձցի միւսանգամ անդրէն ի բերանսն, եւ ապա մեղմածամ որոճելով մանրեսցի եւ լինիցի նոցա հանգիստ եւ ի շահեկանութիւն: Քանզի ոչ

եթէ վայրապար ինչ գտանիցի յանասունս կերպարանք խածուոյն եւ նմանութիւն երկուց քաղրթաց, զի մինն ընդունի զմեծ ի մեծոյն, որ միւսանգամ յորոճն դառնալոց իցէ, եւ միւսն ընդունի զմանրեալն եւ զհալեալն, զի գործիք յաւրինեալ եւ կազմեալ են ի փորի անասնոցն ընդ որս անցանիցեն կարեւոր պէտք կերակրոց նոցա, եւ նոքաւք կարգեսցի կերակուր նոցա ի շահեկանութիւն: Քանզի ելից կատարեաց զպէտս իւրաքանչիւր անասնոցն արարիչն անդէն ըստ իւրեանց պատշաճիցն:

Նայեա՛ց դարձեալ եւ ընդ յաւրինեալ յաւդուածս անասնոց. վասն այնորիկ է երկայն պարանոց ուղտու, զի դիւրաւ լիցի նմա ձգտել ի բարձաբերձ հասակէն առ ի հաւասարութիւն բարձրաքեաց ոտիցն, զի յորժամ խոնարհեսցի եւ հասցէ ի թաթուլսն, համարձակ լիցի նմա առնուլ զդարմանս իւրոյ կենացն ի թփոց եւ ի խոտոց, որ ունիցին զերեսս երկրի: Իսկ արջ եւ առիւծ եւ վագր թիկնեղք եւ կարճապարանոցք են, եւ ամենայն ազգակիցք, որ նոցուն նման իցեն, զնոյն կերպարանս ունին, քանզի ոչ ի խոտոյ առնուն զդարման կերակրոյ իւրեանց, ոչ ինչ է նոցա պիտոյ երկայնաձիգ պարանոցաց յերկիր խոնարհել, քանզի գիշակերք են եւ յորսոյ այլոց երէոց է կերակուր նոցա:

Եւ արդ՝ զի՞նչ մարթասցուք զմտաւ ածել եւ խորհել զչինուածաձեւ եւ ապարանազարդ կերպարանաց փղի, մեծ եւ ահագին գազանին, եւ ինչ մի այնպիսի է, որ անհնարին մեծանդամ յաղթամարմին եւ վիթխարի է յանասունս ամենայն, որ շրջիցին յերկրի, եւ ահագին տեսիլ կերպարանաց ունի յանձին՝ մարմնեղէն, շաղղայեղց, անարի: Եւ բարիոք կազմեցաւ այնպիսի գործուած ահագին եւ յաղթ գազանիս, որ իբրեւ զզէն եւ զարդ ունի մարմնոյն զմորթն հաստակաշի: Իսկ եթէ պարանոց եւս երկայն ունէր փիղն, որ գայր հասանէր յոտիցն հաւասարութիւն, ծանրագնաց եւ ծանրախաղաց առ ի պէտս իւրոյ դարմանոյն լինէր՝ վասն ծանրաբեռն մեծութեանն, որ կախեալ լինէր զնմանէ եւ միշտ հանապազ յերկիր հակէր եւ կքէր: Իսկ այժմ կարճ

պարանոցաւ սակաւ ողամբն, որ անդ ուրեմն մաւտ ի մկանունսն են, հաստատեալ կայ գլուխն ի բարձրաբերձ վայրի: Եւ փոխանակ երկայն պարանոցին ունի զերկայն պատիճն[18], որ բաւական է լնուլ զտեղի երկայն պարանոցին՝ առ ի դարման կերակրոյ եւ առ ի պէտս ջրոյ ըմպելոյ:

Եւ ոտք փղաց անյաւդք են, եւ այնպէս հաստատեալ կազմեալ կան ի նոսա, իբրեւ զսիւնս հաստատունս եւ իբրեւ զմոյթս հաստաբեստս բառնալ զմեծաբեռն ծանրութիւնն բազմադէզ մարմնոյ: Զի թէ փոր եւ լի ուղղով էին սրունքն, եւ բազմակապ յաւդիւք ոտքն, բազմայաւդքն լքեալ լինէին եւ յաւդակոտոր ի միմեանց յաւդքն քակտէին ի մեծանիստ ծանրութենէն, որ յենոյր ի նոսա եւ ճնշէր: Քանզի ոչ կարէին ոտքն յաւդակապք հանդուրժել ժոյժ ունել բազմակոյտ յաղթանդամ մարմնոյ թանձրութեան: Առ պճղամբքն միայն ի խոնարհ կոյս կապին ոտք փղի, քանզի ոչ եթէ կրկնելով կրկնին ծունկքն ըստ աւրինակի ուղտուց յաւդից, զի թէ այսպիսի կերպարանս ունէր, ոչ կարէին յաւդքն ժոյժ ունել, այլ կոտորէր հատանէր ի սաստիկ ծանրութենէն, որ կայր ի վերայ: Եւ զպատիճն երկայն, որ մինչեւ յոտսն հասանէ, վասն այնորիկ հաստատեաց եդ ի նմա արարիչն, զի եղիցի ի պէտս դարմանոյ նորա:

Եւ արդ՝ ոչ եթէ մեծամեծ անասնովքն միայն երեւի անքնին մեծութիւնն Աստուծոյ, այլ եւ ոչ մանունքն թերագոյն գտանին կացուցանել զմեզ վասն նոցա ի զարմանս: Քանզի ոչ եթէ միայն ի լերինս մեծամեծս պարտիմք զարմանալ, որք բոլորեալն եւ սութեալն ի բարձրաբերձ բարձրութիւն ամպոցն հասանիցեն եւ վասն մշտախաղաց աւդոյն ի բարձրութեան նոցա չնչելոյ՝ ցուրտ բունեալ բնակեալ ի նոսա, այլ եւ ընդ խորաձորս նոցա պարտիմք սքանչանալ, որ զխստաշունչ հողմսն, որ անդ ի վեր միշտ զցուրտսն չնչեն, ոչ ունին աստ ի խոնարհ ամենեւին: Այլ փոխանակ խստաշունչ ցրտոյն, որ ի բարձունս լերանցն չնչէ, ջերմ եւ քաղցրախառն աւդ չնչէ ի խոնարհ շուրջ զստորոտովքն նոցա: Դարձեալ ոչ կարի յոյժ զարմանամ ընդ

մեծութիւն զաւրութեան փղի կամ ընդ այլ եւս մեծամեծ անասնոցն, որպէս զարմանամ ընդ մկան եւ ընդ մժղոյ, որ խռովիչք եւ դողացուցիչք են փղի, եւ ընդ նուրբ խայթոցն կարճի...

Եւ արդ՝ մի՛ ոք մեղադիր լիցի արարչին, թէ ընդէ՞ր արար ընդ մեզ յաշխարհի զգազանս վնասակարս եւ զսողունս դառնաթոյնս եւ կացոյց ի խեթի[19] զկեանս մեր սոքաւք: Որպէս թէ բամբասիցէ ոք զդաստիարակ իւր, թէ ընդէ՞ր լինի նմա վարդապետ եւ ուղղիչ առ ի բարիս սաստիկ բանիւք եւ խիստ սպառնեալեաւք յորժամ ածիցէ ի խրատ զմանկութիւն նորա՝ հեռանալ ի յոռութեանց եւ մերժել յանձնէ զստահակութիւնս ամենայն: Ապա ուրեմն գազանք չարք՝ հանդերձ վնասակար սողնովք՝ ի փորձ քոյոյ հանդիսի արարան, թէ որչափ ունիցիս սէր առ Աստուած՝ հանդերձ ճշմարիտ հաւատով: Արդ՝ եթէ իցէ յոյսն քո յԱստուած, որպէս պահանջէ Աստուած, մարթի լինել առ քեզ այն, որ գրեալն է, թէ՝ «Ի վերայ իժից եւ քարբից գնասցես եւ առ ոտն կոխեսցես զառիւծն եւ զվիշապն»: Արդ՝ եթէ յուսասցուք յԱստուած, ունիմք հաւատս ի բանէն Տեառն մեծաւ զաւրութեամբ, որով կոխեսցուք զաւծն եւ զկարիճս, մանաւանդ եթէ միաբանեալ ընդ նմին գտանիցիմք, ո՞չ նայիցիմք ընդ առաքեալն Աստուծոյ, որպէս եւ գրեալ է ի պրակս:

(տե՛ս Թ. Թորնեան, Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, հ. Ա, Վիեննա, 1891, էջ 251-313)

---

[1] համբոյր, այստեղ՝ ընտել՝ ընտելացած լինելը, ընտելություն, ընտանություն (կենդանիների մասին)
[2] բունեալ, բույն դրած
[3] առ զայրուցս - զայրույթից
[4] այստեղ՝ շարժվել, սլանալ
[5] հեղուկ վիճակում եղող, հոսանուտ
[6] պետք է լինի՝ արկեւառ
[7] իւիք իւիք - տեսակ-տեսակ՝ մի քանի բաներով
[8] խաղողեփեաց, գ. կարճաթև պատենավոր միջատ, խաղողհասուկ
[9] խոլոմուկ - այծկիթ, այծաղիաց (թռչուն)
[10] տարմահաւ - վարդագույն սարյակ

[11] առանց գլխոյ եւ իշխանի, այսինքն՝ առանց առաջնորդի
[12] ձմեռն անցկացնելու տեղ
[13] այստեղ՝ մոմեղեն բջիջների ցանց, որ պատրաստում են մեղուները. մեղրահաց, խորիսխ
[14] ոչ խիտ, նոսր, ցանցառ
[15] ալկիոն, ծղնի
[16] թխել - թուխս նստելով ծագ հանել
[17] նուագ, ի, գ. որևէ բան անելու՝ գործողություն կատարելու քանակը, անգամ
[18] փղի կնճիթը
[19] ի խեթի - վտանգի՝ երկյուղի մեջ

ՍԵԲԵՐԻԱՆՈՍ ԵՄԵՍԱՑԻ

ՃԱՌՔ

Վասն վերջնոյ դատաստանին

Առաքեսցէ, ասէ, Որդի մարդոյ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս երկրի: Ճանաչիցես զբանս զայս ի Դաւթի[1]. Ժողովեցէք առ նա զսուրբս նորա. զամենեսեան ժողովեսցեն եւ ի մի վայր գումարեսցեն:

Յառնեն ամենեքեան, բայց կէսքն իբրեւ զպատժապարտս առաջի ահեղ ատենին կարգեսցին, եւ կէսքն իբրեւ զսուրբս առաջի Տեառն յափշտակեսցին: Զոր օրինակ ի մտանել թագաւորի պատժապարտն չիշխէ յակն անկանել[2] թագաւորին, եւ պատուականքն եւ մեծարոյքն[3] ընդ առաջ ելանեն. նոյնպէս եւ Որդին Աստուծոյ յորժամ գայցէ յերկնից եւ երեւի[4], սուրբքն յափշտակին ի բարձունս. եւ այնպէս թուեսցի, թէ ընդ նմա իսկ գայցեն: Որպէս որք թագաւորի ընդ առաջ ելանիցեն, եւ ընդ նմին դառնայցեն, թուի թէ ընդ նմին իսկ էին. նոյնպէս եւ սուրբքն՝ յորժամ ընդ առաջ կենարարին յափշտակեսցին, թուեսցի թէ յերկնից իսկ ընդ նմին իջանիցեն: Եւ ո՞ իցէ այսմ վկայ. Պաւղոս. Զի ինքն Տէրն հրամանաւ ի բարբառ հրեշտակապետին եւ փողով Աստուծոյ իջանիցէ յերկնից. եւ մեռեալք յարիցեն յառաջագոյն, ապա եւ մեք կենդանիքս յափշտակեսցուք ամպօք ընդ առաջ Տեառն յօդս եւ այնպէս հանապազ ընդ Տեառն իցեմք: Տես, զի ընդ առաջ ելանեն եւ ընդ նմին գան:

Եւ մի՛ դիր զարմանալեացն. յաշխարհիս, որ ընդ առաջ թագաւորաց երթայցեն, իւրեանց կառօք եւ իւրեանց երիվարօք երթայցեն[5]. իսկ կենարարն ինքն առաքէ դեսպակս երկնաւորս. ոչ կառս եւ երիվարս, այլ կառս ամպեղէնս՝ զիւրսն իսկ: Եւ ընդ այն զի՞ զարմա-

նաս, թէ Եղիա հրեղէն կառօք վերացաւ, եւ առաքեալքն եւ այլք մի ըստ միոջէ ամպեղէն կառօք, եւ մի՛ զհրեղէնն պատուականագոյն քան զամպեղէնն համարեսցիս: Առաքեցան մարգարէին յայնժամ դեսպակք՝ կառք հրեղէնք, եւ երիվարք հրեղէնք եւ յերկրաւորացս յերկինս վերանայր. եւ իբրեւ զանիւ ի ներքոյ ի վեր բարձունս հոլովէր[6]. այլ յայնժամ յիրաւի հրեղէն կառօք, եւ ապա ոչ հրեղէն, այլ ամպեղէն: Ընդէ՞ր. քանզի յայնժամ երկրաւոր ամանն ունէր ինչ կարիս երկրաւորս, զի հրեղէն կառօքն նորոգեսցի, եւ ընկենուցու զերկրաւոր ծանրութիւն, եւ առնուցու զհրեշտակական թեթեւութիւնն. քանզի այնուհետեւ ընդ հրեշտակս իսկ բնակելոց էր: Անդ դեսպակ հրեղէն, եւ աստ դեսպակ ամպեղէն. քանզի առանց ապականութեան յառնեն մարմինք, վասն այնորիկ եւ յամպն թեթեւ ելանեն: Եւ զի մի թուեսցի, թէ զայն թշնամանիցեմք ինչ, եւ զայս յարգիցեմք. զայն ասացի, թէ մարգարէն հրեղէն կառօք պատուեցաւ, եւ որք Քրիստոսի ընդ առաջ յափշտակին՝ ամպօք վերանան. քանզի ամպք կառք են սրբոյն Աստուծոյ: Տեսանե՞ս, զի իւրովք կառօքն հրամայէ պատուել զսուրբս եւ ելանել ընդ առաջ կենարարին:

Եւ զիա՞րդ ելանիցեն: Ինքն իսկ դիւրէ[7]. քանզի չխօսի երբեք Պաւղոս յանձնէ, որպէս եւ ասէ. թէ զփորձ ինչ խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խօսի: Եւ զի՞նչ ասիցէ. «Յափշտակիմք ամպօք ընդ առաջ Տեառն յօդս»: Եւ այնպէս կէսքն յափշտակին, եւ կէսքն առաջի ահեղ ատենին կարգեսցին. որպէս եւ Կենարարն իսկ ասէ. «Ամէն ասեմ ձեզ, յորժամ եկեսցէ Որդի մարդոյ, յայնժամ թէ իցեն երկու ի մի մահիճս, մին առցի եւ միւսն թողցի. եւ եթէ աղայցեն երկու ի մի երկանս, մին համբարձի, եւ միւսն թողցի»: Եւ ասեն ցնա առաքեալքն. «Յո՞, Տէր»: Եւ ասէ Տէր. «Ուր մարմին իցէ՝ անդր եւ արծուիք ժողովեսցին»: Վասն է՞ր արծուիք. քանզի ի բարձունս յափշտակելոց են: Զի՞նչ իցէ, երկուք ի մի մահիճս, եւ մին առնուցու եւ միւսն թողուցու. եւ երկու աղայցեն ի մի երկանս, եւ մին ամբառնայցէ եւ միւսն մնասցէ: Զիք աստ լինել այլ ընդ այլոյ[8] ասել ինչ առակաւ, այլ յայտնի իսկ մեկնութիւն է. մահիճս Գիրք զհանգիստ աշխարհիս կոչեն, եւ երկանս՝ զկարի տառապանս աշխատելոց, որ իբրեւ յերկանի ցնորեալ կայցեն ընդ պէսպէս վիշտս, ի հառաչանաց ի հառաչանս, ի յաղքատութենէ յաղքատութիւն: Եւ քանզի մահիճքն հանգիստ են, եւ երկանն՝ աշխատութիւն, յայտ առնէ Կենարարն՝ թէ եւ յաշխատելոցն եւ յայնցանէ, որք ի դիւրութեան իցեն, լինիցին ոմանք արդարք եւ ոմանք մեղաւորք: Երկու իցեն ի մի մահիճս. մին, որ արժանի հաւատոցն իցէ, ամբարձցի, եւ միւսն՝ դահճաց մատնեսցի. մինն՝ հրեշտակաց, եւ միւսն՝ դիւաց: Եւ աղայցեն, ասէ, երկու ի մի երկանս, մին վերասցի, եւ միւսն մնասցէ: Զնոյն միտս հարցին աշակերտքն եւ ասեն. «Տէ՛ր, յո՞ ամբառնայցեն»: Ասէ ցնոսա. «Ուր իմ մարմինն իցէ», փոխանակ ասելոյ, թէ ուր իմ գալուստն իցէ:

Եւ բարիոք ասաց, թէ մարմինն. քանզի մարմնովն յայտնելոց է. թէպէտ եւ ծածկեցաւ մարմինն աստուածութեամբն եւ ներկաւ անմահ արմատովն եւ է ամենեւիմ[9] անմահութիւն, չկորոյս զնկարագիրն, այլ կայ մնայ նկարագիր մարմնոյն, ներկեալ եւ ընկղմեալ ի կենացն: Եւ օրինակ ինչ նմին ի մէջ բերցուք թէպէտ եւ մթին եւ ընդ աղօտ իցէ, սակայն եւ ի փոքուն առնու ոք գոնէ սակաւ ինչ զնշմարանս մեծին: Ա՛ռ երկաթ եւ մխեա՛ ի բովս հրոյ. եւ տե՛ս որպիսի՛ ինչ էր, մինչչեւ ի հուր մխեալ էր. մթար երեսօք, ցուրտ առ ի չօշափել. եւ յետ ի հուրն մտանելոյ, լուսաւոր տեսլեամբ, ջերմն զննելով. եւ չկորոյս զլինելն երկաթ, այլ զի առաւելութիւն քան զիւր բնութիւնն ընկալաւ: Թեպէտ եւ պայծառացաւ, չվրիպեաց յիւրոց կերպարանացն[10]. զի՛նչ կերպարանք եւ ի ներքս մխեսցե, նոյն եւ երեւի. եթէ բոլորակ, եթէ երեքկուսի, եթէ չորեքկուսի, եւ եթէ զիա՛րդ եւ իցէ՝ զկերպարանս չփոխէ. բայց գոյնն զհրոյն գոյն առնու: Նոյպէս եւ սուրբ, արժանի երկրպագութեան տէրունական մարմինն ներկաւ անմահ արմատով աստուածութեանն եւ ընկղմեցաւ ի կենացն եւ զգեցեալ ունի զաստուածութիւնն, ոչ վայրապար արտաքոյ, այլ իբրեւ զերկաթ՝ ներքոյ եւ արտաքոյ. բայց կայ եւ մնայ յանեղծ նկարագիրն՝ ի փառս հաւատացելոց եւ յամօթ արհամարհողացն:

Եւ չիցէ՞ տեսեալ, զիա՛րդ որք ի տար աշխարհէ յետ բազում ժամանակաց գայցեն, եւ ընտանիքն նշան խնդրեն, ոչ զփառաւորութեան ինչ, թէպէտ եւ փառաւոր գայցեն, այլ զառաջին կենացն, թէ արդարեւ սա նա՞ իցէ. եւ ոչ այնչափ ինչ ճշգրիտ ի հանդերձսն հային, որպէս յօնացն կերպարանս[11] եւ ի ձեռացն նշմարանս, եւ ի հերսն՝ թէ ճաղկահե՛ր կամ գանգրահեր իցէ. եւ մարմնոյն թերութիւնք քարոզ անծանօթին լինին: Վասն այնորիկ չկամի սրբոցն երեւել աստուածութեամբն, այլ մարմնոյն կերպարանօք, զի հայեսցին եւ տեսցեն, թէ արդարեւ այն է, որ ի Կայիափայէ չհաւատացաւ եւ ի Պիղատոսէ դատեցաւ եւ ի խաչ ել. զի վկայեսցէ տեսիլն՝ աստուածամարտ կռուոյն[12], եւ փառքն յայտնեսցեն զճշմարտութիւնն: Զմտա՛ւ ած, զիա՛րդ յայնժամ արդարքն վազս առեալ[13] ցնծասցեն: Զմտա՛ւ ած, զիա՛րդ Պետրոս խայտասցէ, եւ առաքելոցն պար առեալ ճեմեսցեն եւ ասասցեն ցմիմեանս. «Սա է Աստուածն մեր, սա է, որ խաչեցաւն երբեմն առ մեւք, սա է, որ երբեմն արհամարհեցաւ վասն մեր. տե՛ս զկերպարանս, միտ դիր աչացն»:

Զոր օրինակ արդարքն ցնծասցեն, յորժամ զՔրիստոս տեսանիցեն, նոյնպէս եւ որք յանցաւորքն իցեն՝ սրտաբեկ լինին. եւ յառաջ քան զպատիժսն ի տեսլենէ սուրբ երեսացն լուծանին եւ անկանին, յորժամ տեսանեն զնշան խաչելոյն, զոր եւ կենարարն իսկ ասաց, թէ՝ «Յայնժամ երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս: Նախ քան զՔրիստոսի երեւելն՝ խաչն գայ յառաջագոյն մեծապայծառ լուսով, սաստիկ ճառագայթիւք, որ զարեգակն ընկղմէ եւ զլուսին ծածկէ, եւ զաստեղս չիջուցանէ: Նախ նշանն երեւի, եւ ապա թագաւորն. որպէս եւ աստ, զի նախ նշանքն երեւին, եւ ապա թագաւորն գայ. նոյնպէս եւ անդ՝ նախ խաչն լուսաւորեալ երեւի, եւ ապա Քրիստոս յայտնի. զի յորժամ տեսանիցեն զխաչն, ամաչեսցեն, թէ որ յայնժամ թշնամանացն[14] թուէր, այժմ ի բարձանց պատուով գայ: Եւ նշանակիրք ոչ առաքեալքն իցեն եւ ոչ մարգարէք, այլ հրեշտակապետք եւ հրեշտակաց գունդք. յառաջ քան զխաչն եւ ընդ խաչին գայցեն:

Եւ արդ՝ զգո՛յշ լերուք, քանզի բանալոց են գիրք եւ դպրութիւնք. եւ նստցի թագաւորն. եւ ջատագովք ճշմարտութեանն յառաջ մատչիցին եւ դատախազքն ամաչեսցեն: Կանխեսցուք յառաջ քան զատեանն. յառաջ քան զնստել թագաւորին ի դատել՝ գոյր հնար ածել ի հաւան զդատաւորն. յառաջ քան զատեանն մարթի աղաչել. առաջի ահեղ բեմին չէ հնար պաղատել:

(տե՛ս՝ Թ. Թոռնեան, նույն տեղում, էջ 360-365)

---

[1] այսինքն՝ ճանաչիցես զքանս զայս ի գիրս Դաւթի կամ առ Դաւթի - Դավթի գրքի մեջ
[2] յակն անկանել (իմ) - աչքին երևալ
[3] մեծարոյք, գ. մեծամեծներ, մեծավորներ
[4] փխ. յորժամ գայցէ եւ երեւիցի
[5] փխ. իւրեանց երիվարօք երթան
[6] հոլովել, եցայ,կ.չ. գլորվել, պտտվել, պտույտներ գործելով շարժվել
[7] դիւրել. պարզել, դյուրացնել, հեշտացնել, պարզաբանել
[8] այլ ընդ այլոյ. մի բանի տեղ ուրիշ բան
[9] ամենեւիմ. սովորաբար՝ ամենեւին, ամենեւիմբ
[10] չվրիպեաց յիւրոց կերպարանացն. իր կերպարանքը չկորցրեց
[11] փխ. ի կերպարանս յօնացն
[12] աստուածամարտ կռիւ - աստվածամարտություն
[13] վազս առնուլ - վազ տալ, վազել, խայտալ
[14] թշնամանաց - նախատական

ԿԻՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ

1. Վասն ծիածանին եւ վասն որթոյ

Զաղեղն իմ, ասէ, եղից յամպս: Խնդրելի է. բնակա՞ն ինչ իցէ ծիածանն զոր տեսանեմք, եթէ յայնժամ եղեւ՝ յորժամ Աստուած ուխտն եդ Նոյի[1] մի՛ եւս ածել ջրհեղեղ յերկիր: Ոմանց թուեցաւ, թէ յայնժամ եղեւ, յորժամ Աստուածն զայն ասաց. թէ էր, ասեն, ծիածանն յառաջ քան զջրհեղեղն, ապա ոչ նշան կոչէր, զի Գիրք նշան զչքնաղ ինչ իրս սովոր են միշտ նշանակել: Այլ մեք զծիածանն գիտեմք, զի յանձրեւաց ցածնուլ[2] լինի, յորժամ արեգակն զճառագայթս ընդդէմ անձրեւակիր[3] ամպոցն արկանիցէ: Արդ ասէ Աստուած, այս է նշան՝ համօրէն չլինելոյ ջրհեղեղի, այսինքն՝ ընդ ամենայն երկիր, զի ոչ այնչափ ընդ ամենայն տեղիս լինիցի անձրեւ[4], մինչ չգտանել տեղի ճառագայթիցն արձակելոյ[5]: Ա՛յլ ինչ ասէ. ոչ եղիցի այդու նշան, եթէ փարատումն անձրեւի ծիածանաւդ լինիցի: Նա եւ ոչ ուխտն այն այնպէս հաստատուն կայցէ, քանզի եւ զքսան օր բազում անգամ չերեւի ծիածանն՝ վասն անձրեւին յաճախութեան: Ապա զայս ինչ յայտ առնէ, որ ասէն, թէ ո՛ւր ուրեք երեւեսցի ծիածանն, ի ցածնուլ անձրեւաց երեւեսցի: Քանզի այն իսկ է նշան չլինելոյ ընդ հանուր ջրհեղեղի: Ապա թէ ուր անձրեւ իցէ եւ զծիածանն պահանջիցես եւ ոչ զԱստուծոյ իսկ խոստումն այնպէս հաստատուն գտանիցես: Բայց սակայն գտանեմք ի Գիրս, զի անուանեցաւ ինչ նշան, որ չէր օտար[6]. որպէս յելսն ասէ Աստուած ցՄովսէս. «Եւ այս քեզ եղիցի նշան, զի եղէց ընդ քեզ». զի Աստուծոյ լինել ընդ մարդկան եւ ընդ Մովսիսի՝ չէր ինչ օտար:

Խնդիր է. յառաջ քան զջրհեղեղն է՞ր արդեւք որթ, թէ՞ Նոյ եգիտ: Ոմանք ասեն, թէ տունկն էր, բայց զգինւոյն հանգամանս եգիտ[7]. քանզի ի խամուց[8] արբեալ՝ արբեցաւ. եւ ոմանք ասեն. թէ ե՛ւ

որթն էր ե՛ւ գինին: Եւ ընդէ՞ր չիցէ գրեալ, թէ յառաջ քան զջրհեղեղն գինի ոք արբ: Դարձեալ եւ արդարոյն ամբաստանութիւն[9] է, թէ գիտէր զգինւոյ բնութիւնն եւ զեղծեցաւ: Իսկ եթէ ասիցէ ոք, եւ Ղովտ գիտէր զզօրութիւն գինւոյն եւ արբեցաւ, լուիցէ, թէ Ղովտ ետ իսկ զանձն գինւոյն, զի ըմբելովն՝ յերկեղէն յապահով լինիցի, իսկ Նոյ յետ տնկելոյն եւ պտուղ տալոյ որթոյն՝ զմիջին ժամանակն յերկեղէ յապահով էր: Եւ արդ սա, որ ի բուն իսկ երկեղէն չարբ, զիա՞րդ յետ երկեղին ըմպէր:

---

[1] այսինքն՝ երբ որ Նոյին խոստացաւ՝ խոստում տվեց
[2] յանձրեւաց ցածնուլ.փխ. ի ցածնուլ անձրեւաց - անձրևի դադարելուց հետո
[3] անձրեւակիր- անձրև ունեցող
[4] լինիցի անձրեւ - անձրև գա
[5] փխ. մինչ չգտանել տեղի արձակելոյ զճառագայթսն
[6] այսինքն՝ անսովոր չեղած բանն էլ հրաշք կոչվեց
[7] հանգամանք գինւոյ - գինի պատրաստելու արվեստը՝ կերպը
[8] ի խամուց - անփորձ լինելով
[9] ամբաստանութիւն, այստեղ՝ մեղադրանք, մեղադրելի բան

2. Վասն նշանին զոր ետ Աստուած Մովսիսի

Ասէ Աստուած ցՄովսէս, եթէ «Ես եղէց ընդ քեզ, եւ այս է քեզ նշան եթէ ես առաքեմ զքեզ»: Խնդիր է. եթէ նշան տայր նմա Աստուած, ընդէ՞ր ոչ ետ, այլ ասէ, եթէ այն է քեզ նշան, զի եղէց ընդ քեզ. եւ այն չէր նշան. եւ թերեւս նշան իսկ էր, եթէ խնդրեալ էր, եթէ ուստի՞ գիտացիցէ, զի լինիցիս ընդ իս: Ոմանք ասեն, թէ նախ Մովսէս ոչ խնդրեաց նշան: Այլ նա աւանիկ Եսայի՝ Աքազու, որ ոչ խնդրէր նշան, ասէ. «Խնդրեա՛ դու քեզ նշան». եւ իբրեւ պատճառեաց զհրաժարելն[1], յանդիմանեաց զնա Հոգին, թէ կամի փորձել եւ պատճառէ, թէ չկամիցի փորձել: Վասն որոյ եւ զնովիմբ ածեալ ասէ. «Միթէ փո՞քր ինչ թուիցի ձեզ աշխատութիւն հասուցանել մարդկան»: Եւ այժմ Մովսէս չերեւի, թէ խնդրիցէ, բայց հրաժարէ ի հանելոյ զժողովուրդն. եւ ասելովն, թէ՝ «Ես ո՞վ եմ», թերեւս խնդրէր ընդ միտս, վասն այնորիկ եւ Աստուած տայր: Զի եթէ եւ խնդրէր իսկ ոչ, այլ ի

դէպ ժամանակի Աստուած՝ առ այն զոր ասէրն, թէ՝ «Ես ո՞վ եմ», ասէ. «Յայտնեցայց առաջի Փարաւոնի եւ հանից զժողովուրդն». եւ ի նոյն յարեալ ասէ, թէ՝ «Այս քեզ նշան, զի եղէց ընդ քեզ, եւ արդ մի՛ երկնչիր, թէ չիցես ինչ, քանզի ունիս զիս օգնական: Նշանիդ՝ ա՛յլ նշան պիտոյ է. զի՞նչ. զի եղիցես ընդ իս: Տեսանէր զմորենին եւ զզարմանալիսն, եւ չերկմտէր:

Եւ զի այս նշան տուեալ էր, գտանեմք զՄովսէս բազում իրօք ընդ Փարաւոնի արքային Եգիպտացւոց համարձակ աներկեղ վիճեալ, եւ անարգել առ այնպիսի թագաւոր մտեալ, եւ ոչինչ ի համարձակութենէ անտի վշտացեալ, եւ այն զի եւ ոչ յառաջագոյն ինչ էր ընտրել Փարաւոնի: Թէ այնպէս իցէ, ապա էր իսկ նշան, քանզի Աստուած էր ընդ նմա: Իբրեւ ասաց Մովսէս, թէ՝ Զի՞նչ ասացից, յորժամ մտից առաջի արքային Եգիպտացւոց, Աստուած զայն ասաց, եթէ՝ «Եղէց ընդ քեզ, եւ այդ իսկ եղիցի քեզ նշան»: Եւ ընդէ՞ր դանդաղէր եւ հրաժարէր բազում անգամ. նախ վասն Փարաւոնի, այլ եբարձ զայն երկեղ. երկրորդ անգամ վասն ժողովրդեանն, քանզի խստապարանոց էր ապստամբեալ յԱստուծոյ, եւ կռոց պաշտօն մատուցանէր: Այլ գիտէր Աստուած, թէ ախորժելով ընդունին Իսրայելացիքն զպատգամն՝ վասն զերծանելոյ յԵգիպտացւոցն եւ ոչ վասն Աստուծոյ, որ հանէր զնոսա. զոր եւ յետ այնչափ երախտեաց եւ սքանչելեաց անարգեցին եւ Եգիպտացւոցն կռոց երկիր պագանէին, որք ոչ կարացին վերակացու լինել[2] Եգիպտացւոցն: Ապա ոչ առ Աստուծոյ ինչ գթոյ, այլ առ զերծանելոյն գթոյ[3]:

Տէր Աստուածն Եբրայեցւոյց կոչեաց զմեզ. երթիցուք ճանապարհ՝ գնաց երից աւուրց: Խնդրեցէք անօթս ի զարդոյ[4] եւ կողոպտեցէք զԵգիպտացիսդ. զի այն լիցի նոցա ընդ վարձուց կաւագործին եւ աղիւսարկի[5]. եւ զի մի՛ զկարօտութիւն ինչ պատճառեալ չհաւանիցին միագունդ ելանել յերկրէն: Իսկ գաւազանն յօձ խորհրդիւ դառնայր. զի փայտիւ եղեն անէծքն, եւ փայտիւ նշանակ փրկութեանն նոցա, որ էր օրինակ մեծի փրկութեան խաչափայտին. զի ունելով զօձն՝ համարձակեսցի ունել եւ զմիտս մարդկան: Իսկ ձեռն ընդէ՞ր բորոտէր. այլ զի նկարեսցի ի նմա մեռելոյ աշխարհիս կենդանութիւն[6], եւ Իսրայէլի ի կռապաշտութենէն ազատութիւն. զի թէպէտ իբրեւ զձեռն մեռեալ իցէ[7], կենդանի լինելոց է: Եւ դարձեալ քանզի ասաց, թէ՝ «Ո՞վ եմ ես». եցոյց նմա զի թէ մեռեալ էր, օգնականն եւ զմեռեալն կարող էր կենդանի առնել եւ մեռելովն զայլս կեցուցանել, որպէս եւ Քրիստոս մահուամբ մարմնոյն իւրոյ ապրեցոյց յայնպիսի թշնամեաց զաշխարհս: Երրորդ նշան երեւի ջուրցն յարիւն դառնալ. զի քարոզիցէ յարիւնն դառնալոյ[8] զկոտորումն մանկտւոյն:

---

[1] պատճառեաց զհրաժարելն - հրաժարվելու պատճառներ գտավ
[2] վերակացու լինել - պաշտպանել
[3] փխ. ոչ առ գթոյ ինչ Աստուծոյ, այլ առ գթոյ զերծանելոյ - ոչ թե Աստծու. այլ փրկության սիրո համար
[4] անօթս ի զարդոյ - զարդարանքի սպասքներ
[5] կաւագործին եւ աղիւսարկի - կաւագործություն և աղյուսագործություն
[6] աշխարհիս կենդանութիւն - աշխարհիս կենդանանալը
[7] այսինքն՝ մեռած ձեռքի պես լինի
[8] փխ. ի դառնալոյն յարիւն - արյան դառնալովը

3. Թէ ընդէ՞ր Մովսէս զքառասուն օր եղեւ ի լերին

Ընդէ՞ր Մովսէս զքառասուն օր եղեւ ի լերին անդ առ Աստուծոյ. չկարէ՞ր զհինգ օր միայն լինել: Ասեմք, թէ Աստուած գիտէր, թէ եւ Իսրայէլ իբրեւ ել յԵգիպտոսէ՝ թէպէտ եւ զնշանսն ետես, ի կուռս պաշտելոյ[1] չէր զատեալ մտօք, բայց արդեամբք զայն երկնչէին առնել ի Մովսիսէ: Արդ զի զծածկեալ կամսն նոցա յայտնիցէ, ունի զՄովսէս ի լերին անդ զքառասուն օր, մինչեւ յանդիմանեսցին. որպէս եւ յանդիմանեցան իսկ: Եւ զի ոչ յԱստուծոյ պատկառէին, այլ ի Մովսիսէ, ասեն. «Արասցուք աստուածս, որ առաջնորդեսցեն մեզ, զի Մովսէսն այն, որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց, չգիտեմք զի՛ եղեւ»: Արդ Ահարոն ոչ կամաւ արար զորթն, այլ ակամայ, եւ Աստուած թողացուցանէր նմա անսալ բռնութեան ժողովրդեանն, զի յանդիմանեսցէ զնոսա. ուստի եւ Ահարոնի չլինի մեղադիր. քանզի եւ

Սաղմոսն, մանաւանդ Հոգին իսկ սուրբ՝ ասէ. «Մովսէս եւ Ահարոն յերիցունս նորա»: Իսկ Մովսէս ընդէ՞ր պատուհասեաց զնա. զի մի՛ կարծիցի Իսրայելի, թէ եղբօրն ինչ ակն առ[2]. վասն այնորիկ եւ յերկրորդում օրէնս ասէ, թէ՝ «Աղօթս արարի ի ժամանակին յայնմիկ վասն Ահարոնի»: Քանզի եւ Դաւթի ի միտ արկ Աստուած անցուցանել ընդ թիւ[3] զժողովուրդն, զի թուոյն պատճառանօք սատակեսցէ զյանցաւորսն: Եւ արդ Ահարոն իբրեւ զԴաւիթ, մանաւանդ գործակից եւ մատակարար կամացն Աստուծոյ եղեւ: Զի եթէ ստուգիւ ոք կամիցի ի Մովսիսի պատուհասն[4] եւ յԱհարոնի պատասխանին հայել, գտանէ ըստ մեծութեան իրացն գործելոց՝ ոչ Մովսիսի պատուհասեալ եւ ոչ Ահարոնի ընդ այնմ՝ աղերսիւ պատասխանի արարեալ, այլ ամենեւին ըստ Աստուծոյ երեւելոյ իրքն լինէին: Եւ կրկին քառասուն օրն յայտ առնէ, զի մի՛ դոյզն խնդրուածքն վասն նոցա համարիցին[5], որոց զմեծ յանցումն նոցա[6] յանցուցեալ էր:

---

[1] փխ. ի պաշտելոյ կուռս
[2] այսինքն՝ իսրայելացիներին չերևա, թե եղբորն աչառություն արեց
[3] անցուցանել ընդ թիւ - հաշվել, համրել
[4] ի Մովսիսի պատուհասն - Մովսեսի տված պատուհասը
[5] այսինքն՝ զի մի՛ դոյզն համարիցին խնդրուածքն
[6] ավելադրություն է

4. Վասն զոհիցն եւ վասն անասնոցն ընտրութեան

Զոհս հրամայէ (Աստուած), որպէս եւ յառաջագոյնն ասացաք: Զի մի՛ զոհեսցեն դիւաց եւ մի՛ լռութեամբն գործակից նոցա մոլորութեանն լինիցի, անսաց զզոհսն մատուցանելոյ[1]: Իսկ ճշդիւն ընդէ՞ր խնդրիցէ, եւ բարւոք ընտրութեամբն զկէսս յանասնոցն խոտել եւ զկէսսն ընդունել. զի որ իսկզբանն ասաց Իսրայէլի զոհս մատուցանելոյ[2], եւս առաւել այսու ցուցանէ զընտրութիւնն, զի մի՛ ընդ վայր եւ ամպարշտութեամբ՝ որպէս եթէ դիւացն մատուցանիցեն. այլ զի բարւոք ընտրութեամբն եւ ճշդիւ խնդրելոյ՝ զառաւելութիւն իւրոց պատարագացն ցուցանիցէ, եւ ցդիւացն կարճեսցէ[3]. զի մի՛ զդիւացն զոհս

պարկեշտագոյնս համարիցին, եւ միւսանգամ անդրէն դառնայցեն. եւ զուր ինչ վայրապար անսալ զոհիցն գտանիցի: Եւ եթէ որ բնութեամբ գարշելի էր, զայն խնդրեալ էր՝ իւր զոհս մատուցանել, ապա եւ բնութիւնն իսկ սոսկացեալ զերեսս դարձուցանէր: Մանաւանդ զոր հեթանոսք դիւացն մատուցանէին՝ եւ նորա էր խնդրեալ, զիա՞րդ անդր ոչ միտէին: Մուտ իմն գտանեն[4] ոմանք ի բանիս, եւ ասեն, եթէ վասն զի մի՛ դիւաց զոհիցեն՝ հրամայէ զոհել, ընդէ՞ր յառաջ քան զօրէնսն Աբրահամ զոհէր, եւ նախ քան զնա Նոյ, եւ յառաջագոյն քան զնա Հաբէլ: Այլ լուիցեն, եթէ Աստուած էր եւ գիտէր յառաջագոյն, եթէ օրէնս տալոց էր Իսրայելացւոցն, զի համարեսցին ի հարց անտի ընդունել յաջորդութեամբ զզոհսն: Եւ զի Աստուած ոչ հրամայեաց զոհել հարցն՝ ի Գրոց է ուսանել:

Եւ արդ զատանէ ի միմեանց զչորքոտանիս, եթէ ո՛ր իցեն գազանք, եւ ո՛ր ոչ. եւ զինչ որոշումն[5] թռչնոց իցէ, եւ զի՛նչ լուղակաց: Քանզի եւ բազումք ի Յունաց, որ զընտրութիւնն այնպիսի ինչ իրաց ուսանել փութային, չքաւորեցան[6] եւ յանքնինս անկան[7], վասն չլինելոյ բաւական գտանել. քանզի ոչ լինէր նոցա Աստուած գործակից զընտրութիւնս զայս բարւոք յօրինելոյ, եթէ Մովսիսի յայս չէր եկեալ: Եւ արդ գեղեցիկ իմն զատանէ՝ պատուիրանի կերպարանօք, որ զկէսն ուտել եւ ի կիսոցն մեկնել հրամայէ: Եւ զչորքոտանիսն, որ չեն գազանք, յերիս մասունս բաժանէ. զի զկճղակահերձս եւ զորոճողս ուտել հրամայէ, եւ կճղակահերձացն որ ոչ որոճիցեն, այլ իմն որոշումն զատանէ, նոյնպէս եւ որոճողացն, որ ոչ իցեն կճղակահերձք, այլ իմն: Եւ զգազանսն այնու զատանէ, զի առաջին ոտքն չեն իբրև զայլ չորքոտանեաց, այլ մանաւանդ թէ ձեռք իսկ, որպէս չուն եւ ինձ, եւ նոյպէս այլ եւս նոյնպիսիքն: Իսկ այլ չորքոտանիքն, որ ոչ իցեն գազանք, յորժամ ի գուճ հարկանիցին[8] զառաջին ոտսն ընդ պորտիւն ամփոփեն, նոյնպէս եւ զազդերացն[9]. իսկ գազանք զազդերաց ոտսն ընդ պորտիւն ամփոփեն իբրեւ զչգազանս եւ զառաջին թաթսն ոչ նոյնպէս. քանզի արմկունս[10] իբրեւ զմեզ ունին. որպէս ի մօտաւոր

գազանս է իմանալ՝ յարջոյ, ի չանէ, յառիւծուէ եւ որ այլ ինչ նոյնպիսի իցէ: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ բազումք ի գազանացն զմարդկան կերպարանս ունին, որպէս առիւծ, կապիկ եւ արջ, որ եւ ոտիւք եւս նման են: Եւ արդ զգազանսն և զչգազանս այսպէս ճանաչեմք:

Իսկ ի թռչնոց, որ յերիս մագիլսն գան, եւ յետին բիտն ի վերոյ քան զայլ մագիլսն կայցէ, կանխակալ սովորութիւնն օրէնսդրեաց զնոսա ուտել, եւ գան ըստ սովորութեանն եւ օրէնքն, եւ ոչ ինչ նոր օրէնսդրեն, այլ միաբան սովորութեանն. զի մի՛ յորժամ ամենայն ինչ օտա՛ր մտանիցէ, խրտուցանիցէ զընդունելիս օրինացն[11]: Եւ յայնցանէ, որ ի չորս մագիլսն գնայցեն, եւ բիտն յետին խոնարհագոյն կայցէ, արգելին օրէնքն ուտել, քանզի եւ սովորութիւնն. նոյնպէս եւ ի ձկանց, որ թեփ եւ թեւս ունիցին, ուտել հրամայէ, եւ յայլոցն իբրեւ ի գազանացն արգելուլ[12]: Եւ արդ ընտրութիւնն այսպէս զկէսսն ուտել եւ զկէսսն չուտել զատանէ, ոչ որպէս թէ պիղծ ինչ իցեն, այլ վասն երկուց պատճառանաց: Մին այս իսկ է. որում իմիք յԵգիպտոս երկիր պագանէին, զայն ուտել հրամայէ, զի յուտելն արհամարհեսցեն զնոսա եւ մի՛ աստուածս համարեսցին, այս ինքն է զարջառ եւ զոչխար. եւ զոր ինչ յԵգիպտոս անառակութեամբ եւ որկորստութեամբ ուտէին՝ արգելու, որպէս՝ զխոզենին, զոր եւ խնդրէին իսկ յանապատի անդ: Եւ մեւս եւս պատճառք այս են. զոր ինչ հասարակաց բնութիւնն կանխակալ սովորութեամբն գարշելի համարէր, կամ թէ վասն կարի ինչ յաղթանդամութեան, եւ է՛ր զոր վասն չարահոտութեան, եւ է՛ր զոր վասն զմեռեալ ուտելոյ:

Եւ արդ զոր վասն կանխակալութեանն ատեայր սովորութիւնն, ոչ դարձուցին օրէնքն. բայց զայնս միայն, որոց յԵգիպտոս երկիրն պագանէին, տայր ի հարկէ[13] ուտել. եւ զորս անառակութեամբն եւ որկորստութեամբն ուտէին՝ արգելոյր. վասն զի յառաջ քան զօրէնսն եւ սովորութիւնն զնոյն ունէր: Նա եւ այլ ազգ իսկ. որ զմեռելոտին ուտեն, նոցա մարմինքն ծանրանան եւ ընդարմանան եւ կիսամեռք

լինին, վասն այնորիկ եւ Գիրք ի մեռելոտի մերձենալ՝ պղծեն: Սրբութիւն եւ պարկեշտութիւն յայսպիսի իրաց պատուիրեաց, զի աւելի ինչ քան զայլ ազգսն ունիցին: Քանզի զերկիրն զայն տալոց էր ժողովրդեանն. եւ ամենայն ինչ մարմնաւոր էր, եւ պատշաճ էր զմարմնաւորսն պարկեշտութեամբ օրէնսդրել, զի աւելի ինչ քան զայլ ազգսն ունիցին:

Ապա թէ իցէ ինչ պիղծ համարել, թէպէտ եւ մեզ պիղծ իցէ, այլ յայլ իրս պիտոյ է. քանզի եւ երկաթ ի գործ հողագործութեան պիտանացու է, այլ ի սպանութիւն կարի իսկ անպիտան. որպէս հուր ջրոյ անպիտան է, եւ ջուր հրոյ հակառակ է: Նա եւ օձք եւ այլ սողունք մեզ հակառակ են, եւ յայլ ինչ սպասաւորութիւն պիտոյ են: Նոյնպէս եւ բանջար՝ ոչ ամենայն՝ ամենայն ուրեք պիտոյ է: Այլ եւ մարդկան մի մարմին է, եւ ամենայն բանջարք նոյն են, բայց բանջարքն այլ եւ այլ զօրութիւն ունին, զի մին կակղացուցանէ եւ միւսն խստացուցանէ[14], մին բանայ եւ միւսն կնքէ, մին միս ածէ եւ միւսն եւս հալէ: Եւ ոչ՝ զի միմեանցն հակառակ են, մեզ չիցեն պիտանացու, յորժամ ի դարման մարմնոյ մատուցանիցեմք, զի կէսքն զփուտն հարկանեն[15] եւ կէսքն զմիսն ածեն, եւ ոչ մին զամենայն ցաւս բժշկէ. նոյպէս եւ հուր թէպէտ եւ ջրոյ հակառակ է, այլ ոչ եթէ մեզ անպիտան ինչ: Եւ սողունք ոչ եթէ վասն զի մեզ ինչ անպիտանք են, եւ այլ եւս իրս չիցեն պիտանացուք: Այլ իւրաքանչիւր յոր ինչ պատշաճեցաւ՝ այնմ պիտանացու է, եւ այլումն չէ պիտանի. նոյնպէս եւ պիղծքն, որ մեզ պիղծ են, այլուր սուրբք եւ պիտանացուք են:

(տե՛ս Թ. Թոռնեան, նույն տեղում, էջ 405-415)

---

[1] այսինքն՝ հանձն առավ, որ զոհեն
[2] փխ. մատուցանել
[3] փխ. եւ զոհս դիւացն կարճեսցէ (արգելի)
[4] մուտ իմն գտանեն - մի պատճառ՝ մի խոսք կգտնեն
[5] որոշումն - տարբերություն, զանազանություն

[6] այստեղ՝ հետադիմել
[7] յանքնինս անկան - այլանդակ քննությունների դիմեցին
[8] ի գուշ հարկանել - ծունկ չոքել, ծնկի գալ, կռանալ
[9] այսինքն՝ զոտս ազդերաց - հետևի ոտքերը
[10] *արմուկն* - արմունկ
[11] զընդունելիս օրինացն - օրենք ընդունողները
[12] արգելուլ - հետ կենալ, հրաժարվել
[13] ի հարկէ - հարկադրանքից ստիպված, հարկադրաբար, բռնի, ակամա
[14] խստացուցանել - կարծրացնել, պնդացնել
[15] հարկանել զփուտ - փտությունը անցկացնել

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ

Գլուխ ԺԷ

«Եւ անդ էր, ասէ, հիւանդ մի, Ղազար անուն էր նորա: Եւ առաքեցին առ Տէր մեր քորքն նորա և ասեն. «Տէ՛ր, ահաւանիկ զոր դու սիրէիր՝ հիւանդացեալ և անգեալ կայ[1]»: Արդ համեմատեա՛ դու զբարբառս կենարարին և ուսի՛ր, եթէ նմանող են միմեանց: Առ կոյրն ասէ. «Ոչ դորա մեղ է և ոչ ընտանեաց դորա, այլ զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ 'ի դմա». և 'ի հիւանդութեան Ղազարու ասէ. «Այս հիւանդութիւն չէ 'ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ, զի փառաւորեսցի Որդի Աստուծոյ 'ի նմա»: Ասէ ցաշակերտսն. «Եկա՛յք երթիցուք մեք 'ի Հրէաստան: Ասեն ցնա. «Հրէայքն խնդրեն զքեզ սպանանել, և դու դարձեալ միւսանգամ երթա՞ս անդր»: Այլ ուր չարչարանքն են, ասէ, անդ ընթանայ բժիշկ. առ քարկոծիչսն երթամ ես, զի փոխանակ քարկոծչացն եղիցին նոքա թարգմանիչք: «Հաւատացին, ասէ, անդ բազումք 'ի նա»:

«Ո՞չ, ասէ, երկոտասան ժամ է յաւուր. եթէ ոք գնայ լուսով, նա ոչ գայթագղի, զի տեսանէ զլոյս»: Զայս կամեցաւ առակաւ և օրինակաւ ուսուցանել առաքելոցն՝ թէ մինչ կատարի ամն աւետեաց, զի նա ինքն է մայր ամսոց, ոչ գայթագղին Հրէայք 'ի սպանման նորա, այն՝ որ 'ի նմա թագաւորելոց էր խաւարն 'ի վերայ Սիովնի: «Ո՞չ երկոտասան ժամ է աւուր». այս ինքն զի՞ երկնչիք դուք 'ի քարկոծելոյ, իբրու ընդ ձեզ եմ ես. սակայն ոք 'ի ձէնջ ընդ իս և փոխանակ իմ ոչ չարչարի: Այլ հասանէ ձեզ խաւար լի չարչարանօք, յորժամ վերանամ 'ի ձէնջ և թողում զձեզ: Եւ առջիք զպսակս, որպէս ես, զի պսակեցայ և վերացայ 'ի ձէնջ: «Եկա՛յք, ասեն, երթիցուք, զի և մեք ընդ նմա մեռցուք»: Ստուգեալ էին, թէ երթան ընդ նմա՝ քարկոծին. վասն այ-

սորիկ մխիթարեաց և քաջալերեաց զնոսա և եբարձ ի նոցանէ զերկիւղն:

«Ղազար, ասէ, բարեկամ մեր մեռաւ. և ես ուրախ եմ վասն ձեր»: Եւ եթէ ուրախ եղև, վասն է՞ր ելաց նա, իբր չոքաւն: Տե՛ս դու ցայն վայր, եթէ նոքին իսկ մերձաւորքն ո՛րչափ ինչ հեռի եղեն 'ի նմանէ: Եւ զոր օրինակ մարդ, որ ամենայն բնութիւնք թաղեալ կան 'ի նմա, և զմի 'ի նոցանէ 'ի տեղոջ իւրում ծագէ զնա, սոյնպէս և Տէր մեր զքաղցրութիւն առ հաց և արտասուք առ սիրելին: Ամենայն բժիշկք յառաջագոյն, մինչ չև մեռեալ իցէ մարդոյն, աշխատին և վաստակեն յոմն. իսկ բժիշկն Ղազարու մեռեալ հայէր նմա, զի 'ի մահու անդ նորա ցուցցէ բժիշկն զքաջութիւն առաքինութեան իւրոյ: Ուրախ եղև իբրև լուաւ և ելաց իբրև եկն: Յայտ արար, եթէ մեռաւ նա, մինչ չև նորա եկեալ էր, և եհարց, եթէ՝ ո՞ւր եդիք զնա. զկնի գալոյն ելաց: Դարձեալ թէ 'ի յարութեան մեռելոց ասաց անդ մեծամեծս բանիւք և յայտ արար և կնքեաց գործով, զի հաւատարիմ լինիցի, եթէ ճշմարիտ մարդկութիւն էառ նա: Վասն այսորիկ ելաց և յայտ արար զհաւատսն Մարիամու և Մարթայի, զի երկիր պագին նմա և խոստովան եղեն նմա առաջի այլոց, այնոցիկ՝ որ խոստովան լինին 'ի նա: Ասեն. հրաման ետուն, եթէ ի բաց արասցեն զնա:

Եւ այն՝ զի ասէ «Տէ՛ր, եթէ աստ լեալ էիր», քանզի յղեցին առ նա, և նա ոչ կամեցաւ գալ, գիտացին, եթէ այսպէս կամք եղեն Տեառն, զի մեռցի Ղազար. և ոչ ինքն եկն, և ոչ առաքեաց, թէ բժշկեսցի: Իսկ այն՝ զի ասէ «եթէ աստ լեալ էիր դու». փոխանակ զի կամիս դու, լո՛ւր զնա: Բայց դարձեալ, քանզի լուեալ էր նոցա յաշակերտաց անտի՝ թէ յորժամ ննջեաց նա, զարթեան ալիքն: Եւ դարձեալ, ի ժամանակին մինչ ոչն էր ընդ նոսա, զարթեան և խռովեցան զբօսանք ծովու: Խօսեցան մարդկապէս, եթէ ուր լոյս է, անդ ոչ մտանէ խաւար. և ուր կեանքն են, ոչ համարձակի մահ: Ելաց նա, զի յայտ արասցէ, եթէ մեռաւ. և զի բացցէ դուռն ասելոյ[2] «Մի՛թէ սա՞ երաց զաչս կուրին»: Կամեցան արգելուլ զնա միով. խոստովան եղեն 'ի նա ակամայ միւսով: Ո՛վ կեցուցիչ Ղազարու, կեցո՛ զանձն քո: Խոստովան եղեն դարձեալ և յայնմիկ՝ որ ուրացան զՏէր:

«Արդ, ասէ, հոտեալ իցէ»: Եթէ նստէիր դու առ ոտս նորա որպէս Մարիամ, լսէիր դու 'ի նմանէ որպէս Մարիամ, թէ նմա ամենայն ինչ դիւրին է: «Ես իսկ եմ, ասէ, յարութիւն և կեանք. ամենայն, որ հաւատաց յիս, թէպէտ և մեռանի, կենդանի է նա»: Յայտ է՝ եթէ որ կենդանի է և հաւատայ յիս, յաւիտենից նա ոչ մեռանի: Այս ինքն ոչ եթէ յաւիտենից մնայ նա 'ի մահու անդ, զի կենդանանայ. նա և ոչ յաւիտենից տիրէ ձեռն մահու: Բայց ոմանք վասն կատարածի աշխարհիս ասեն զնա, եթէ այնոքիկ, որոց գալուստն հասանէ[3], ոչ մեռանին. իբրեւ զայն, զի ասէ. «Որ մնացեալն լինի 'ի գալստեանն, ոչ ննջեսցեն»:

Արտասուեաց Տէր մեր 'ի վերայ Ղազարու, զի ցուցցէ, եթէ ոչ կարէ յարուցանել զնա. և իբրև կարծեցին նոքա այսպէս, ած յայտնեաց[4] զծածուկ կատակութիւն նոցա, զայն, զի ասէին. «Ոչ կարէ սա այսպիսի ինչ առնել, թէ և սա մի՛ մեռցի»: Թերևս ասիցես, եթէ ոչ ասացին նոքա, եթէ ոչ կարէ յարուցանել զնա: Այլ նոքա, որ ինչ ընդդէմ աստուածութեան բախէր, ասացին. զի եթէ լալով ելաց, յայտ արար, եթէ ոչ կամէր ընդ մեռանել նորա: Արդ ոչ բռնադատէր բնութիւն նորա զմահն որպէս Աստուծոյ, զի՝ մի՛ թողցէ զմահ տիրել 'ի վերայ նորա: Արդ իբրև ցուցին նոքա զայպն կատակութեան իւրեանց, դարձաւ նա եցոյց զաստուածութիւն իւր: Եւ այն, որ խռովեցաւ, իբրև զայն, զի ասէ. «Մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ և անսացից ես ձեզ». և իբրև զայն է, զի ասէ. «Ձանձրացաւ անձն իմ ազգաւն այնուիկ»: Փորձեցին զիս, ասէ, տասն անգամ. և սոքա քսան անգամ, տասն տասն:

Գնաց երթալ հանել զմեռեալն ի գերեզմանէն. և հարցանէ, եթէ՝ «Ո՞ւր եդիք զնա»: Եւ արտասուէր, ասէ, Տէր մեր: Արդ եղեն արտասուք նորա իբրև զանձրև, և Ղազար իբրև ցորեան, և գերեզմանն իբր զերկիր: Եւ զձայն իւր իբրև զորոտումն: Խռովեցաւ մահ 'ի ձայնէ անտի. ոստեաւ Ղազար իբրև ցորեան, ել և երկիր եպագ տեառն իւրոյ կենարարի: Ժամանակէր նա զնչանս իւր, և ժամանակեալ լինէր նոցա. որպէս եցոյց զանձն իւր կուրին, որ յորովայնէ մօր իւրոյ կոյր էր: Եւ եկաց մնաց անդէն 'ի տեղոջն զերկուս աւուրս, մինչև մեռցի Ղազար:

կեցոյց զՂազար և մեռաւ ինքն փոխանակ ընդ նորա: Իբրև եհան զնա 'ի գերեզմանէ անտի և բազմեցաւ ընդ նմա, թաղեցաւ ինքն 'ի խորհուրդ իւղոյն, զոր արկ նա 'ի վերայ գլխոյ նորա: Արդ խայտառակեցաւ մահ և ագահութիւն յետ չորից աւուրց. խայտառակեցաւ և զօրութիւն մահու, զի դարձոյց անդրէն զմեռեալն. զի գիտասցէ, թէ նմա դիւրին է յետ երից աւուրց թողուլ զնա: Զի բերանն այն, որ կարդաց և եհան զմեռեալն 'ի գերեզմանէն չորեքօրեայ, ճշմարիտ է խոստումն նորա, եթէ յերիր աւուր ինքն գլխովին կենդանանայ և յառնէ: Խայտառակեցաւ անդ ագահութիւն, այն, որ 'ի մէջ Յուդայ դարանակալն եղև նմա և երեսուն արծաթով վաճառեաց զնա. յանդիմանեցաւ, եթէ ոչ վասն զի արար զանձն իւր Աստուած, փոյթ ինչ էր նմա մատնել զնա. որպէս ոչ վասն աղքատաց փոյթ ինչ էր նմա վաճառեալ զեւղն:

Արդ եկն նա 'ի Բեթանիա և յարոյց զսիրելին իւր և թաղեաց ինքն զանձն իւր 'ի խորհուրդ իւղոյն: Ուրախ արար զՄարիամ և զՄարթա և խայտառակեաց զդժոխս և զագահութիւն. զդժոխս, զի ոչ յաւիտենից լաւանայ 'ի վերայ նորա, և զագահութիւն, զի ոչ թէ յաւիտենից վաճառէ զնա: Զի նա յերիր աւուր ասաց՝ բայ յառնեմ. զի որժամ լուիցեն, եթէ դժուարին է այս, հայեսցին նոքա 'ի չորեքօրեայն՝ որ յարեաւն: Ասաց նա, որ ինչ դժուարին է քան զնա. զի այնուիկ զոր կատարեաց առ Ղազար, հաւատարիմ լիցի վասն այնորիկ, զոր ասացն վասն անձին իւրոյ. «Մատի՛ք, ասէ, և 'ի բա՛ց արարէք զվէմն»: Եւ այն, որ կեցոյց զմեռեալն և դարձոյց անդրէն զշունչն, ո՞չ կարէր բանալ զգերեզման և 'ի բաց առնել զվէմն. և այն, որ ասաց աշակերտացն, եթէ ունիջիք հաւատս քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինդ, թէ՝ փոխեա՛ց՝ և փոխեսցի յերեսաց ձերոց, զվէմն 'ի բերանոյ անտի գերեզմանին ո՞չ կարէր փոխել բանիւ: Այլ կարէր նա և զվէմն բանիւ իւրով վերացուցանել, այն, որ ձայնիւ իւրով մինչ դեռ 'ի խաչի անդ կայր, զվէմս և զգերեզմանս պատառեաց: Այլ քանզի բարեկամ նորա էր Ղազար, ասէ. «Բացէք դուք ձեզէն, զի հարցի հոտ նեխոյն 'ի քիմս ձեր. և լուծէք զնա դուք ինքնին, որով պատեցէքն զնա, զի ծանիջիք զգործս ձեռաց ձերոց»:

Վասն այսորիկ 'ի ժամ մահուան նորա ոչ դիպեցոյց Տէր մեր զանձն իւր 'ի գեօղ անդր, զի մի՛ ասիցեն, եթէ ուխտ ինչ արարին 'ի միջի իւրեանց: «Եւ եթէ թոյլ տամք, ասեն, ամենեքին հաւատան 'ի նա. և գայցեն այնուհետև Հոռոմք, և բառնայցեն զազգս մեր, զօրէնս և զտեղիս». զի ընդ իշխանութեամբ Հոռոմոց հնազանդեալ էին: Այլ եկն Տէր մեր, և թագաւորեաց նշանօք իւրովք, և աշխարհ գնաց զկնի նորա : Գուցէ, ասէ, լուիցեն հեթանոսք, եթէ թագաւոր ծնաւ նոցա. զի որդի Դաւթի կոչեցին զնա: Եւ ոչ այսչափ միայն, այլ և խորհեցան իսկ յափշտակել և առնել զնա թագաւոր: Վասն այսորիկ ասէին՝ «Սպանցուք, զի մի՛ գայցեն Հոռոմք, և աւարեսցեն զքաղաքս մեր և զազգս»:

Շմաւոն բորոտ հաւատայր, և Տէր մեր բարի առնէր. և 'ի միջոյ հաւատոցն և բարերարութեան հալածեցաւ բորոտութիւն: Իսկ զիա՞րդ կարէր բորոտութիւն կալ մնալ 'ի մարմնի անդ Շմաւոնի, մինչ տեսանէր զսրբիչ բորոտութեան, զի բազմեալ էր 'ի տան Շմաւոնի: Թէպէտ և մարդկութիւն նորա 'ի տան Շմաւոնի բազմեալ էր, սակայն աստուածութիւն նորա 'ի միտս Շմաւոնի լուծեալ էր, որպէս և 'ի Շմաւոն 'ի համանուն նորա: Արդ զիա՞րդ կարէր մեռեալ բորոտութիւն կալ մնալ 'ի տեսանել անդ իւրում զՂազար մեռեալ, զի կենդանացաւ և յարեաւ: «Եթէ աստ լեալ էիր, ասէ, ոչ էր մեռեալ եղբայր մեր»: Արդ զի բորոտեցաւ Շմաւոն, իբրու սրբիչ բորոտութեան 'ի տան նորա բազմեալ էր. և զիա՞րդ մարթ էր լինել 'ի միում բազմականին զօրութիւն հալածիչ և բորոտութիւն հալածական. թերևս իբրև զայն զՁակքէի մաքսապետի. «Այսօր եղև, ասէ, կեանք տանս այսորիկ»: Վարձն պաշտաման նորա ետ նմա զսրբութիւնն:

«Եւ խորհուրդ արարին, ասէ, քահանայապետքն, զի և զՂազար սպանցեն»: Եւ օրէնք հրամայեն, եթէ որ սպանէ, մեռցի: Եւ յորժամ սպանանէք զնա, դարձեալ ո՞չ կարէ կեցուցանել զնա. ո՞չ ահա պարտ էր ձեզ երկնչել, զի մի՛ սպանցէ զձեզ բան բերանոյ նորա, այն, որ կեցոյցն զՂազար: Այլ Կայէնի այսպէս թուեցաւ, եթէ սպանեմ մարդ և խաբեմ զԱստուած: Եւ մարդ սպանաւ, զի մահկանացու է. այլ Աստուած ոչ 'խաբեցաւ, զի գիտակ է ամենայնի:

«Մարթ էր, ասէ, վաճառել զեւղդ զայդ երեք հարիւր դահեկանի, և տալ աղքատաց». և ասաց Յուդա, այն՝ որ վասն զի ետես զնա Տէր մեր, զի քաղցեալ էր արծաթով, հազարապետ քսակակալ 'ի վերայ արծաթոյն արար զնա, զի յագեսցի, զի մի՛ եղիցի նա վասն արծաթոյն մատնիչ. զի լաւ էր նմա գողանալ արծաթ և ոչ մատնել զարարիչն արծաթով: Ո՞ւմ պիտոյ էր անդ քսակ, ուր հինգ նկանակ հացն, կամ ուր 'ի ջրոյ անտի գինի, կամ դեղս աչաց որդոյն Տիմէի դնել, կամ ուր պահանջէին երկուս երկուս դրամս: «Մի՛ խնդայք, ասէ, զի այսք հնազանդին ձեզ». զի աւանիկ Յուդա Սկարիովտայ հանէր զդևս: «Այլ խնդացէ՛ք, ասէ, զի անուանք ձեր գրեալ են յերկինս ընդ հրեշտակս». և Յուդա գրեալ է յերկիր ընդ խաչահանունսն: Հան Յուդա զդևս, զի ինքն թշնամին Տեառն մերոյ պատմեսցէ խաչահանուաց ընկերացն իւրոց, թէ արդարեւ Բեղզեբուղաւ հանէ Տէր մեր զդևսն. և զի յամօթ լիցի մատնիչն, եթէ դևք երկեան 'ի գողոց և ելին, գող արծաթոյն յարարչէ անտի արծաթոյն ոչ երկեաւ: Թերևս զայս ոչ յիշեաց և արկ խիղդ անձին իւրում և հեղձաւ: Եւ զի մի՛ ասիցեն, եթէ ընտրեաց իւր մատնիչ 'ի դէմս աշակերտի և ոչ գիտաց, ասէ. «Մի ոմն 'ի ձէնջ սատանայ է». իբրու զանուն Յուդայ ոչ յիշեաց, զի մի՛ խայտառակեսցէ զնա, եթէ կամեցեալ էր ապաշխարել: Եւ 'ի լուանալ անդ՝ ոչ արար զսկիզբն 'ի Շմաւոնէ 'ի գլխոյ անտի աշակերտացն. զի եթէ գլուխն հրեշտակացն եթող յայնմ ժամու զպատիւն փառաց իւրոց, զիա՞րդ կարէր գլուխ աշակերտացն կալ յաշտիճան պատուի իւրոյ. այլ ուսաւ նմանել գլխոյն հրեշտակաց: Պատիւ բարձրեալ բնութեան Տեառն մերոյ զպատիւ խոնարհութեան մարդկութեան իւրոյ զգեցեալ էր ի ժամու անդ լուանալոյն:

(Մեկնութիւն աւետարանի, Վենետիկ, 1836, էջ 183-189)

---

[1] անգեալ կայ - պառկած է
[2] զի բացցէ դուռն ասելոյ - որ ասի՝ ծանուցի
[3] խոսքը Քրիստոսի գալստյան մասին է
[4] ած յայտնեաց - ցույց տվեց, բացահայտեց

ՎԿԱՅՔ ԱՐԵՒԵԼԻՑ
Ի ՎԿԱՅՍՆ ԱՐԵՒԵԼԻՑ

1. Փրկութիւն ոգւոց նուիրական արեամբն Քրիստոսի

Ո՛վ, քանի՛ ցանկալի է տաճարն, որ չինեցաւ ի պատուական ազատութենէ. ո՛վ, քանի՛ գեղեցիկ է յարկն, որ յարկաւ[1] ի կամաց կամարարաց. ո՛վ, քանի՛ ահաւոր է սեղանն, որ ուղղեցաւ արեամբ եւ սպանմամբ մարդկան, զարիւն եւ զսպանումն Քրիստոսի կարգեաց յօրհնեալ եկեղեցւոջ:

Քեզ օրհնութիւն, Տէ՛ր մեր եւ Փրկիչ, որ վասն փառաւորութեան հարսին քո հեղեր զարիւնդ պատուական, եւ առիթք[2] եւ հարսնեղբարք հարսինն ըստ նմին օրինակի նմանեցուցին եւ հեղին զարիւնս իւրեանց վասն նորա: Ո՛վ հարսն խօսեալ[3] արեամբ փեսային եւ փեսաւիրացն եւ առեալ ի կնութեան արեամբն Աստուծոյ եւ մարդկան. ո՛վ քանի՛ ծանր են վարձանք քո, հարսն ցանկալի, քանզի արիւն է. ո՛վ քանի՛ մեծ են հարսանիք քո, քանզի սպանումն է: Խաչեալ է փեսայն առ ի հաստատութիւն հարսնութեան քո, եւ կոտորեալ հարսնեղբարքն առ ի պէտս հարսանեացն. եւ խառնեալ[4] արիւն փեսային յըմպելի քեզ, եւ բաշխեալ մարմին նորա ի մասունս հարսանեաց քոց: Նստիս յառագաստ խաչելոյն՝ եւ ուրախ ես, ննջես ի սենեկի քարկոծելոցն՝ եւ զուարթ ես. ընթեռնուս զնամակս սպանելոցն՝ եւ յանհոգս կաս. կարդաս զգիրս խողխողելոցն՝ եւ ծիծաղիս: Դաղարեալ են աչք քո ի լալոյ եւ յեցեալ ի յոյս. չելանէ կառաչ ի բերանոյդ եւ յանձն ապաստան[5] ես: Վասն այսորիկ ետ քեզ սուրբ փեսայն զմարմինն իւր յուտել, զի զկենդանի մահ նորա յիշեսցես հեծութեամբք. եւ վասն այսորիկ ետ քեզ զարիւն ըմբել, զի զանարատ զսպանումն նորա կալցիս միշտ ի մտի արտասուօք: Զմտաւ ա՛ծ եւ տե՛ս ի՞ւ փրկեցար. քննեա՛ եւ ծանի՛ր ի՞ւ գնեցար: Պատարագեալ է գառն սուրբ ի պատիւ քոյոյ քաւութեան. պատարագեալ դասակք օդեաց ի տուն քո ուրախութեան. զենեալ է պատարագն յուրախութիւն հարսանեացն քոց. զե-

նեալ որթք անդուց[6] ի զուարճութիւն քո ցնծութեան. հատեալ հացն ցանկալի ի լիութիւն քոյոյ սեղանոյդ. խառնեալ գինի անուշահամ ի քո թակոյկսն խառնելիս[7]: Տուեալ գիր սրբութեան առ ի գիտութիւն քոյոյ իմաստութեանդ. տարածեալ ընդարձակեալ տեղի քոյոյ խորանին, եւ կանգնեալ խորան սքանչելի ի պատիւ փառաց քոց:

Գրգիս ի տաճարի, որ չինեցաւ ի հզօրաց. եւ բազմեալ ես յապարանս՝ զոր զարդարեցին պնդակազմքն. գան քեզ պատարագք ի հեռաստանէ, եւ տասանորդք ի չորից կողմանց երկրի. ուտես զարդիւնս կալոյ եւ ըմպես զազնուական գինիս հնձանաց: Ո՞չ գիտես ո՛րչափ ջանացաւ Աստուած վասն քոյոյ հանգստեան. ո՞չ իմանաս ո՛րչափ ճգնեցան հարք քո վասն քո շահի եւ օգտի. քանի՛ ինչ բերան ունիս գոհանալոյ. ո՛րչափ լեզու ունիս առ ի փառաւորել: Շինեցին քեզ տաճար առ իւրեանց սպանմամբ, եւ կանգնեցին խորան իւրեանց արեամբն պարանոցաց. եղեւ Քրիստոս սկիզբն եւ կատարումն շինուածոյն, որպէս եւ գրեալ է. եթէ Նա է գլուխ եւ հիմն շինուածոյն, եւ նովաւ յանգի[8] ամենայն շինուածն, եւ շինի տաճարն սուրբ եւ փառաւորեալ:

---

[1] յարկն որ յարկաւ - հարկը, որ գցվեց, հարկով ծածկվեց
[2] առիթք. այստեղ՝ հարսնախոսության միջնորդներ, բարեխոսներ
[3] նշանված, ամուսնացած
[4] այստեղ՝ բաժակի մեջ (գինի) լցնել
[5] յանձն ապաստան - իր անձին ապաստանող, աներկյուղ, ինքնավստահ
[6] անդի, դւոյն, դւոց, գ. խոշոր եղջերավոր անասունների հոտ՝ խումբ, նախիր
[7] թակոյք խառնելիք - գինի լցնելու ամաններ
[8] յանգել (իմ), եցայ, չ. ավարտվել, վերջանալ

2. Թէ զօրութիւն վկայիցն ի տանջանս՝ էին չարչարանք Կենարարին

Նահատակեալ վկայքն մեծազորք մինչ ի թշնամեացն եւ ի հալածչացն արդարութեանն ի չարչարանաց եւ ի նեղութեանց ի մէջ[1] կային, զաչս ի վեր համբարձեալ ի մարդասէրն Փրկիչն, որ կախեցաւն զփայտէ, հայէին եւ լինէին ժուժկալեալք[2]. եւ զբարերարն Աստուած, որ պրկեցաւն ի Գողգոթա, տեսանէին եւ զօրանային. ըստ այնմ զոր առաքեալ ասէ, թէ՝ Ուրախ եմ յորժամ պատարագիմ ըստ պատարագելոյ պաշտամանն Քրիստոսի. եւ դուք, ասէ, առաւել ուրա՛խ լերուք ի չարչարանս: Պնդակազմ քաջալերութիւն առաքինեացն՝ զտեսիլ խաչին տեսանէր եւ զօրանայր. եւ ժուժկալ համբերութիւն նոցա ի չարչարանաս Կենարարին հայէր, եւ սիրտն պնդէր. աչք նոցա զծակս բեւեռաց Տեառնորդւոյն տեսանէին եւ լուսաւորէին. եւ ականջք նոցա զքաղցր բարբառ խաչելոյն լսէին եւ հանգչէին: Իսկ յորժամ զծարաւ եւ զլեղի անարատին յիշէին, ցանկալի ոգիքն ճգնելոցն զուարճացեալ ցնծային: Եւ յորժամ զխոնարհել գլխոյ Փրկչին եւ զվերանալ հոգւոյն յիշէին, զչարաչուք մահ դառնութեանն առ ոչ ինչ համարեալ արհամարհէին. եւ վասն այնր որ պսակօք փչոց պսակեցաւ, զցանկալի եւ զվայելուչ պսակ աշխարհիս անարգեցին. եւ վասն այնր, զոր եղեգամբ ձաղանացն թշնամանէին, ոչ արարին ցուպ եւ ապաստան զեղէգն ջախջախ, այսինքն զմարդ մահկանացու. այլ՝ Ո՞ւր յաղթութիւն քո մահ, ո՞ւր են խայթոցք քո դժոխք, աղաղակէին: Զգեցան զխոնարհութիւն հեզոյն եւ խիստ բանիւք զթշնամիսն խոցոտէին. եւ զարհամարհողս խաչին՝ անուամբ խաչին երգիծուցանէին[3]: Արկան զիւրեամբք զլռութիւն, զի ոչ եղեն անձանց ջատագով, եւ զատելի ճշմարտութեանն ճշմարտին՝ նախատէին: Եղին առաջի աչաց զյարութիւն յարուցելոյս, սիրով եւ ցնծալից ուրախութեամբ հասանել ի յարութիւնն ճեպէին:

Ո՛վ սքանչելի չարչարանք եւ զարմանալի մահ Փրկչին. զիա՞րդ փութացուցանէ ջերմեռանդն սիրով զհանճարեղսն՝ ճեպել մատուցա-

նել զմարմինս նմա պատարագ: Ո՛վ քաղցր գութ կենարարին, որ յորդորէ եւ քաջալերէ զհաւատացեալս, զի արբցեն եւ արբեսցին եւ արհամարհեսցեն զմահ ահագին եւ զսպառնալիս դառնաչունչ իշխանացն: Ո՛վ ցանկալի ողկոյզն Աստուծոյ, որ ճմլեցաւ ի կենդանի բաժակն սրբութեան, զոր ճաշակեցին խորամանկք եւ միամտեցին կոխել զիւրեանց ողկոյզս ըստ նմին նմանութեան:

Ո՛վ պատմուճան ներկեալ արեամբ արարչին, զոր արկին ճշմարիտ վկայքն ըստ նորին օրինակի եւ ներկան արեամբ անձանց իւրեանց: Սպիտակացուցանէ գինւով զպատմուճան իւր, եւ արեամբ խաղողոյ զգեստ իւր. գունեան[4] են աչք նորա քան զգինի, եւ սպիտակ ատամունք նորա քան զկաթն: Ո՛վ զգեստ փառաւորեալ եւ զարմանալի, որ յորժամ մտանէ կարմիր յառագաստն, գտանի անդ սպիտակ: Այս այն պատմուճան փառաց է, որ բխեաց ջուր եւ արիւն ի կողից իւրոց, զի ջուրն լիցի (ի) լուանալ ի մկրտութիւն, եւ արիւնն ի քաւութիւն մեղաց: Ո՛վ հանդերձ սքանչելիք սպիտակք եւ կարմիրք, որ կաթամբ կարմրանան եւ գինեաւ սպիտականան. այս այն պատմուճան վայելուչ է, յորմէ բխեաց սուրբ բխումն փրկութեան. այս է պատմուճան սքանչելի, որ յորժամ պատառի, յայնժամ լինի ողջանդամ: Ո՛վ հանդերձ մեծ եւ երկայն, յորժամ աշխատեցան ձեռք ապականչացն եւ ոչ կարացին քակել. այս է պատմուճան նոր բազմադիմի[5]. զոր նիւթեցին չարչարանք եւ հասին նեղութիւնք եւ անկին տանջանք, եւ եհատ սուրն սայրասուր. թափեաց[6] սպանութիւն եւ սպտակեցոյց արիւն. պատառեցին չարչարանք եւ կարկատեաց աջն վերին, զոր աստուածութիւնն զգեցաւ, եւ մարդկութիւնն զարդարեցաւ:

[1] փխ. ի մէջ չարչարանաց եւ նեղութեանց
[2] լինէին ժուժկալեալք. փխ. ժուժկալէին
[3] երգիծուցանել. ծուցի. պբ. պատռել. ճեղքել, պայթեցնել
[4] գունեան - գունավոր, գեղեցիկ գույնով
[5] բազմադիմի - բազմազան, զանազան, պեսպես
[6] թափել, այստեղ՝ լվալ

3. Չարչարանք վկայից

Սկսայց այսուհետեւ պատմել դողալով զչարչարանս, որ եկին ի վերայ ազգիս մերոյ, եւ զանարգանս եւ զառականս[1], զորս կրեցին ժողովուրդք մեր, զանհնարին նեղութիւնսն, որ եկին ի վերայ աշխարհիս, եւ զդառն ժամանակն, որ եկն եկաց ի վերայ մեր. զտանջանս բարկութեան եւ զխրատ ողորմութեանցն, զգազանութիւն թագաւորացն, որ խանձեալ[2] էին ուտել միս եւ զարիւն մարդկան. որ յառիւծ սատակիչ առակեալ է ըստ Գրոյն եւ յարծուի արագաթեւ. որ ունի ի ձեռին իբրեւ զմատռուակ զբաժակն բարկութեան եւ արբուցանէ զամենայն ազգս. յետոյ ըմպէ եւ ինքն զմրուրն եւ յիմարի: Բաժակ ոսկի, ասէ, Բաբելոն ի ձեռին Տեառն, եւ ում կամի խոնարհեցուցանէ զնա. արբցեն եւ արբեսցին, եւ տապալեսցին ամենայն ազգ[3] երկրի. գազան ահաւոր եւ սաստիկ է, եւ սատակումն ի վերայ ամենեցուն հասանէ անողորմ: Սա է, որում մատնեցաւ Իսրայէլ վասն անօրէնութեան, եւ ա՛ռ ի նմանէ զվրէժ հատուցմանն. եւ եհան ընդ ընդգունս նորա զչրօշակս[4], եւ զկարկանդակս, զոր ուտէր ի վերայ լերանց բարձանց եւ ի ներքոյ ծառոց վարսաւորաց[5]: Սա է, որ եկաց հակառակ արեւմտից եւ հնազանդեաց զհիւսիսի եւ վանեաց զհարաւ եւ եղծ ապականեաց աստէն զիւր աշխարհս, որպէս եւ ասէ Եսայի, թէ՝ Զերկիր քո ապականեցեր եւ զազգդ կոտորեցեր. եւ մեք առ մեղս մեր, զի բարկացուցաք զԲարձրեալն, անկաք ի ձեռս նորա ընդերկար ժամանակս:

Այս քառասուն ամ է, զի պրկեալ կան մկանունք մեր ի գանս, եւ պարանոցք ի սուր սուսերաց[6]. զի կարկեցոյց զմեզ արդար դատաստանն Աստուծոյ առ ամօթի մերում. ըստ այնմ, զոր Երեմիայն ասէ, թէ լուռ լիցի, զի կարկեցոյց զմեզ եւ արբոյց մեզ ջուր դառնութեան վասն մեղաց մերոց: Սպասեցաք խաղաղութեան եւ չիք ուրեք խաղաղութիւն. եւ ակն կալաք բարեաց՝ եւ հեռացաւ ի մէնջ, եւ ժամանակ բժշկութեան՝ եւ եղեւ մեզ տրտմութիւն. զի ել առիւծն յանտառէ մրմռեալ ի վերայ սակաւ որթոյ հօտին, կոտորեաց ի նմանէ որպէս եւ կամեցաւ, ցրուեաց կորոյս ըստ ախորժեաց. զխոյս եւ զմաքիս առ ոտն

կոտորէր եւ զգառինս եւ զորոջս թունաւոր ճիրանամբք պատառէր. եւ քանզի այծեացն սեւացելոց ոչ մեղանչէր, բազում ոչխարք մարմառոտք[7] վասն ապրելոյ ի նմանէ ի սեւացեալ գոյնն փոխեցան: Ո՛վ ազատութիւն անձնիշխան, որ ներկանէ զանձն պէսպէս գոյնս յոր եւ կամի. թէ կամի ի տգեղութիւն, եւ թէ կամի ի սպիտակս, եւ թէ կամի ի թուխս. այլ գիտասցէ, զի սպիտակքն ի փառս եւ ի պարծանս լինին, իսկ թուխքն ի կորանս[8] եւ յանարգանս:

---

[1] առականք - խայտառակություն
[2] *խանձել* (իմ), եցայ, չ. սաստիկ փափագել մի բան, ցանկութեամբ վառվել
[3] փխ. ազգք
[4] շրջակայ- պախուրց, սանձ, երասանակ
[5] վարսաւոր (ծառ) - սաղարթախիտ ու ճյուղաշատ
[6] ի սուր սուսերաց - սրի բերանով, սրով
[7] մարմառոտ - հիվանդ
[8] կորանք - ամոթ, նախատինք

4. Պէսպէս լլկանք զոր լլկէին զքրիստոնեայսն

Սուր սուսերացն միշտ ի մարմնոցն քահանայիցն ուտէր եւ քաղցնոյր, եւ յարենէ առաջնորդացն ըմպէր եւ ծարաւէր. քանզի հրաման սրոյն ի սաստիկ թագաւորէն ել ի վերայ նոցա տագնապաւ յառաջնումն. եւ ի ձեռս թշնամեացն որ ծարաւէին արեան անձանց նոցա, մոգուց խաբեբայ ուսմանն մատնեցան. ըստ այնմ, զոր Մովսէսն ասէ, թէ թշնամիք մեր եղեն մեզ դատաւորք, եւ առաւել յեղբարց եւ ի տոհմայնոց եւ ի բարեկամաց նեղէին եւ հալածէին: Եւ կատարեցաւ բանն, զոր ասաց, թէ՝ Ատեսցեն զձեզ յամենայն տեղիս վասն անուան իմոյ, եւ մատնեսցեն զձեզ հարք ձեր եւ եղբարք եւ տոհմայինք եւ բարեկամք, եւ սպանանիցեն ի ձէնջ. եւ մազ մի ի գլխոյ ձերմէ մի՛ կորիցէ, եւ համբերութեամբն չահել զոգիս ձեր: Այս ամենայն յայնմ ժամանակի կատարեցաւ առ վկայսն սուրբ եւ երանելիս արդեամբք: Զի՞նչ մահ անհնարին էր, զոր ոչ ածին դատաւորքն ի վերայ մեծազոր վկայիցն. կամ զո՞ր տանջանս դառնութեան թողին թշնամիքն եկեղեցւոյ. եւ ոչ այնու զճշմարիտ ծառայսն Աստուծոյ կտտեցին. կամ զո՞ր չարչարանս եւ զլլկանս թողին թշնամիք ժողովրդեանն Քրիստոսի, եւ ոչ այնու զպնդակազմսն եւ զպատերազմողսն չարչարեցին: Զկէսն ի քաղց եւ ի ծարաւ ճգնեցուցանէին, մինչեւ ծորէին[1] մարմինք նոցա եւ մեռանէին. զկէսս գլխիվայր կախէին զմիջօրեայ ժամանակսն, ոսկրաքանց առնէին[2] եւ մեռանէին. զկէսս՝ քակելով զյօդս թիկանցն առ ի պրկել եւ ձգել բազում արանց, լուծանէին եւ սպանանէին. զկէսսն հանապազորդ գանիւք՝ արիւնռուչտ առնէին[3] եւ սպանանէին: Զկիսոց անհնարին դելոցօք խորտակէին զկողս եւ զոսկերս եւ սպանանէին. եւ զկէսս ի ցուրտ եւ ի պարզ[4] ընկենուին, մինչեւ պրկէին մարմինք նոցա եւ մեռանէին, եւ զկիսոց կտրոցօք առ սակաւ սակաւ քարշէին զմարմինս ոսկերացն եւ սպանանէին. եւ զկէսն չարաչար մորթելով սպանանէին. եւ զկիսոց գայլիկոնօք ծակէին զպճղունսն եւ սպանանէին: Եւ կիսոցն՝ եղէգն հերձեալ հանգոյն հասարակացն դնէին շուրջն, եւ պնդէին լարօք ընդ անդամսն եւ մի

ձգէին հանէին հանդերձ մորթովքն եւ մսոքն եւ ջղոք, եւ այնու սպանանէին. եւ զկէսքն քարամբք անողորմ ծեծէին եւ սպանանէին: Թող զայլ կտտանսն զոր կտտէին[5]. եւ զունչսն հատանէին, եւ զականջսն խլէին, եւ զմատունսն կոտորէին, եւ զաչսն փորէին, եւ զբարձսն եւ զծունկսն ուռամբք խորտակէին: Եւ զկէսս զբութից ոտիցն կախէին. եւ կիսոցն խեցիս ջեռուցեալ յանթսն[6] դնէին եւ պնդէին, եւ կիսոց՝ զքուրձ մոխրով լնուին եւ թաղէին զգլուխն ի ներքս. եւ կիսոց՝ քացախ եւ մանանիխ արկանէին եւ չփէին: Կիսոցն ասեղունս ընդ եղնգնաբերանսն[7] վարէին յանխնայ. կիսոց փչեղէն գաւազանօք նորոգէին օր ըստ օրէ հարուածսն: Եւ դարձեալ յետ այսր ամենայնի անհնարին չարչարանաց եւ կտտանաց՝ զգլուխն սրով հատանէին. բայց ի միոջէ միայն խորամանկութենէ զոր եմոյծ ազատութիւն յաշխարհս, պահեցին զերանելիսն. զի հրով զոք ոչ այրեցին, քանզի զհուրն պաշտէին. եւ թերեւս վասն զի ի Բաբելովն յամօթ եղեն. զի քաղցուցին[8] զհուրն եւ ետուն նմա կերակուր զԱնանիասն, եւ ոչ իշխեաց մտաբերել ի նոսա[9]:

[1] ծորել - հյուծվել, հալումաշ լինել
[2] ոսկրաքանց առնել - ոսկորները տեղից խախտել
[3] արիւնռուշտ առնել - արյունշաղախ անել, արյան մեջ թաթախել
[4] պարզ, գ. պարզկա, սառնամանիք
[5] կտտանսն կտտել - չարչարել
[6] անութ - թևի տակը, թևատակ
[7] եղնգնաբերան - եղունգի ծայրը՝ մսին միանալու տեղում
[8] քաղցուցանել - քաղց պատճառել, սովածացնել
[9] եւ ոչ իշխեաց մտաբերել ի նոսա - և նրանց մի վնաս չհամարձակվեց անելու

5. Վասն արհամարհելոյ վկայիցն զանցաւոր իրս աշխարհին

Ո՛վ սէր ճշմարտից, քանի՛ ինչ արդարակորով եւ արագաթեւ իցես, զի ընդ երկինս եւ ընդ երկիր կաս արբանեակ ի միջի. ի բարձանց ի խորս իջուցանես, եւ ի խորոց ի բարձունս կարես հանել. ցուցանես աչօք զազգականութիւնն եւ զօրութիւնն, որ իջանէ ընդ քեզ ի թիկունս ի մարտի առաքինեացն. ունիս ի ձեռին զպսակն յաղթութեան,

զոր առնլոց են երանելիքն յարքայութեանն: Ո՛վ ճշմարիտ սէր, քանի՛ ինչ է արդեւք սերտ եւ հաստատուն ճշմարտութիւնն, զի զչարչարանսն, զոր դուք արդեամբք կրեցէք, մեք յականջալուրս չեմք բաւական լսել[1]. չարչարէիք եւ կրէիք նախատինս, վասն զի եղեւ յոյս ձեր յԱստուած. եւ զի դաւանեցէք ի բանն կենդանի եւ նովաւ երեւեցայք իբրեւ լուսաւորք ի խաւարի, վասն այնորիկ լինելոց են ձեզ պարծանք յաւուրն Քրիստոսի. բուռն հարէք զհաստատուն եւ զանքակ որմոյն բարձանց եւ նա առ վերացոյց եհան զձեզ յերկինս: Արհամարհեցէք զանցաւոր իրս աշխարհիս, որով եւ թշնամիքն կամէին պատրել. եւ ի ձէնջ մեծաձայն բարբառովք զայն բան լսէին, թէ՝ Պարգեւքդ ձեզ լիցին, եւ զպատիւ տան ձերոյ ում կամիք տաջիք. զի լաւ համարեցայք զնախատինսն Քրիստոսի քան զմեծութիւն եւ զգանձս երկրի, քանզի հայեցեալ սպասէիք պարգեւացն հանդերձեալ աշխարհին:

Դուք էք ազատորդիք վերին ազատութեանն, զոր կամեցան հնազանդել ծառայորդիք ներքին ծառայութեանն. ասէ. Որ զմեղս առնէ, ծառայ է, եւ վերինն Երուսաղէմ ազատ է: Ծառայք են մեղաց՝ որք պաշտեցին եւ պաշտեն զարարածս. ըստ այնմ, եթէ փոխեցին զճշմարտութիւնն Աստուծոյ եւ պաշտեցին զարարածս եւ ոչ զարարիչն: Ելաց արեգակն եւ եղեւ ամբաստան զնոցանէ. սուգ զգեցաւ լուսին եւ եմուտ ի դատ ընդ նոսա. տրտմեցաւ հուր եւ յաճախեաց նոցա սպառնալիս, եւ յայտ արար զցասումն անկանելով ի տեղիս տեղիս. մրմռան ելանեն ջուրք ընկղմեն զնոսա, եւ վկայեն հեղեղքն որ վնասեցին ուրեք ուրեք. ըստ այնմ, եթէ՝ Ամենայն արարածք հեծեն եւ երկնեն մինչեւ ցայժմ: Իսկ ի ձեր մարտ պատերազմի զուարճացեալ ցնծային արարածք. զի ոչ խոնարհեցուցէք զգլուխս եւ մատուցէք նոցա երկրպագութիւն եւ ոչ առէք զպաշտօն Տեառն եւ ետուք անխօսիցն: Ո՛վ վկայք, եզինք վաստակաւորք, որ մտէք ի հանգիստ յաշխատութենէ հալածանացն, եւ ի բազմապատիկ տոհմականացն լցէք զմսուրս ձեր հոգեւորս, զարթիցէք վայելիցէք յայն յաւիտեանսն: Վա՜յ անօրինացն որ աշխատեցին[2] զձեզ անողորմ. երթան գտանեն

զտանջանսն յաւիտենից: Ո՛վ եղինք վաստակաւորք, որ ինքեանք իւրեանց եղեն մշակք եւ սերմանիչք. սերմանեցէք մահուն ձերով սերմն յերկիր կենաց եւ հեղմամբ արեանն (ձերոյ) արբուցէք, զի տացէ տոհմականս հարիւրաւորս, վաթսնաւորս եւ երեսնաւորս: Սուգ առ սատանայ, զամօթ զգեցաւ եւ դառնացաւ, զի ոչ կարաց խառնել զդառն որոմնն ի սերմնն ձեր ընտրեալ:

Ո՛վ սպանեալք տարապարտք եւ խողխողեալք անարատք, որոց գոչէ սուրբ արիւնն ի վերայ բարձանց զարիւնահեղացն՝ իբրեւ զարիւնն Հաբելի, որ գոչէր ի դաշտին զԿայենէ: Եղեն մարմինք ձեր պատարագք սուրբ, որ մատուցայք ի ձեռաց պիղծ քահանայից. եղեն եւ բլուրք բարձունք սեղանք բարձրադէզք, օրինակ եւ նմանութիւն Գողգոթայի. եւ եղեւ սեղան կենդանի պատարագին, որ պատարագեցաւ ի նմա: Հոտեցան ձեռք պղծոց անուշահոտ արեամբն ձերով, որով բուրեաց հոտ անուշութեան ընդ աշխարհս ամենայն՝ ի հաճութիւն այնմ, որ ընդունիչ է պատարագաց: Վա՜յ անօրինացն, զի ոչ լուացան քաւիչ ջուրբքն ի ներկուածս սուրբ արեանցն, որով ներկան սուրբ ոգիք եւ մարմինք նոցա: Բխեաց արիւն ձեր յերկիր եւ հեղաւ ի քաւութիւն արարածոց, եւ հաստատեցաւ ի վկայութիւն սպանողացն, զոր ոչ անձրեւ ողողել կարէ եւ ոչ ցօղ լուանալ. ոչ ձմեռն ջնջել շող[3] ամպովք, եւ ոչ ամառն ցամաքեցուցանել գոլախառն տապով, զոր ոչ գազան կարէ լիզել, եւ ոչ թռչունք ըմպել, ոչ գարուն հեղհեղել յորդաբուխ ուղխիւք, ոչ աշուն խաղաղել[4] հողամաղն[5] փոշւովք. ոչ վայրք անհետեալ եւ ոչ ոտք մշակաց թաքուցանել. այլ թերեւս եւ տեղակալքն կալան զսուրբ մարմինսն. զի զիւրաքանչիւր նշանագիր յայտ յանդիման ցուցանեն, եւ պահեսցի ի դատաստան եւ ի հատուցումն վրէժխնդրութեան:

Ո՛վ արիւն, քանի՛ ողորմագին ես, մանաւանդ զի տարապարտ եւ յանիրաւի հեղար. յիշեցի զհեղումն անարատ եւ տագնապեցայ. միտքս յիմարեցան, գոյն երեսացս եղծաւ. գութքն ստիպեն հանել յինէն ջրշիղջս[6] արտասուաց, զի յորդեսցեն եւ լիցին գետք արտասուաց ի մկրտութիւն մեղաց իմոց: Ո՛վ քահանայք քաւիչք արեան եւ մեղաց այլոց, ո՞վ կարասցէ հատուցանել զպարտս արդարութեանդ ձերոյ. ոչ հատուցանեն զնա ոսկին Սովփերայ եւ ոչ արծաթն ընտիր, որ գայ ի Թարշշայ. ոչ գնէ զնա մարգարիտն Քուշանաց, ոչ քաւեն զնա սուտակն եւ դահանակն Եւելաթայ, եւ ոչ զմրուխտն եւ տպազիոնն որ գայ ի Հնդկաց:

(տե՛ս Թ. Թոռնեան, նույն տեղում, էջ 515-526)

---

[1] յականջալուրս լսել - ականջով լսել
[2] աշխատել (գոք) - չարչարել
[3] շող (ամպ), այստեղ՝ լուսավոր, փայլուն, շողուն
[4] խաղաղել, այստեղ՝ ծածկել
[5] հողամաղ (փոշի) - մանրամաղ
[6] ջր(ա)շիղջս, այստեղ՝ ջրի պես կուտակված, ամբարված

ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ

Թէ քան զամենայն արուեստս ազնուագոյն է ողորմածութիւն եւ պիտանացու

Թէ արուեստին սեպհական իցէ ի պէտս ինչ կատարել, ապա յայտ է, թէ քան զողորմածութիւնն չիք ինչ պիտանացու: Զի եւ արուեստ է, եւ քան զամենայն արուեստս ազնուագոյն: Զի ոչ օդ ոտից գործէ մեզ, եւ ոչ հանդերձս անկանէ, եւ ոչ տունս կաւեղէնս շինէ, այլ զկեանսն յաւիտենից առթէ, եւ ի մահու ձեռաց յափշտակէ, եւ այլ կեանս պայծառագոյնս ցուցանէ, եւ չինէ օթեվանս յերկինս, եւ զյաւիտենից յարկսն հաստատէ, եւ լապտերաց մերոց չտայ շիջանել, եւ ոչ աղտեղի հանդերձիւք երեւել ի հարսանիսն, այլ լուանայ եւ քան զձիւն սպիտակագոյնս գործիցէ: Եթէ իցեն, ասէ, մեղք ձեր կարմիր իբրեւ զորդան, իբրև զձիւն սպիտակ արարից: Եւ չտայ մեզ անդր անկանել, ուր մեծատունն էր, եւ ոչ զնոյն ահագին բանս լսել, այլ ի գոգն Աբրահամու առաջնորդէ:

Նա եւ յիւրաքանչիւր իսկ երկրաւոր արուեստսն՝ ուղղութիւնք ինչ պիտոյից[1] կան: Ի մշակութեանն՝ կերակրելն, եւ յոստայնանկութեան՝ զգեցուցանելն: Մանաւանդ թէ եւ այն իսկ ոչ, քանզի չէ մեզ բաւական այն, զոր յիւրմէ միայն նպաստ լինիցի: Եթէ կամիս, նախ զմշակութեանն քննեսցուք: Եթէ ոչ ի դարբնութենէն ունիցի զբահն եւ զերկմատնին, զխոփն, զգերանդի եւ զմանգաղ եւ զդակու եւ զուրագ եւ զայլ ինչ բազում փոխ առեալ ի նմանէ. եւ ի հիւսնութենէ՝ արօր կազմել, եւ լուծս յօրինել, եւ սայլս եւ կամունս, զօրանն կրել եւ կասուլ. եւ ի փոկահանութենէ կարս հարկանել եւ ձիգս հիւսուլ. եւ ի չինողութենէ եզանցն որ վարիցեն եզնանոցս չինել, եւ մշակացն, որ

զսերմանսն հանիցեն[2], տուն. եւ ի մայրեւորութենէ փայտս հատանել. եւ ի հացարարութենէ. եթէ ոչ յամենայնէ առեալ, առանձինն ոչ կազմի: Նոյնպէս եւ ոստայնանկութիւնն յորժամ գործէ, բազում այլ արուեստս կոչէ ընդ իւր նպաստ լինելոյ ի գործն, որ առաջի կայ. եւ եթէ ոչ գայցեն եւ ձեռնտու լինիցին, եւ նա ըստ միւսումն կայ ի վարանս եւ ի տարակոյս: Եւ իւրաքանչիւր յարուեստիցն՝ այլոցն կարօտ է: Իսկ յորժամ ողորմել պարտ է, եւ ոչ իւիք կարօտի, բայց միայն կամաց:

Ապա թէ ասիցես՝ ընչից պէտք են, եւ տանց եւ օդոց եւ ձորձոց, ընթերցի՛ր զՔրիստոսի բանսն, զորս զայրուոյն խօսեցաւ, եւ դաղարեսցես յայդպիսի հոգոց. եւ թէպէտ եւ կարի աղքատ իցես եւ ի մուրողաց, երկուս բնիոնս լումայից արկանիցես, եւ զամենայն կատարեցեր. եւ եթէ ձոյլ ոսկւոյ չունիցիս, եթէ զայն ունիցիս՝ ի գլուխ իսկ արուեստին հասեր: Այսպիսի հանճար կալցուք եւ գործեսցուք ուղղութիւնս. զի լաւ է զայն արուեստ գիտել, քան արքայ լինել եւ թագ ի գլուխ առնուլ: Եւ ոչ այն ինչ է նորա յոլովութիւն, զի այլովքն չէ կարօտ, այլ զի պէսպէս իրաց վճարիչ է, եւ բազմաց եւ ազգի ազգի[3]: Քանզի եւ տունս յաւիտենականս չինէ եւ ուսուցանէ զիւր ուղղագործսն, թէ զիա՛րդ փախչիցին յանմահ մահուանէն. եւ գանձս անծախս պարգեւէ, եւ յամենայն վնասակարութենէ փախչել, եւ ի գողոց եւ ի յորդանց եւ ի ցեցոյ եւ ի ժամանակեայ[4] եղծուածոյ:

Եթէ ոք առ ի յարդեանցն պահպանութիւն[5] հնարս ինչ այնպիսի ուսուցանէր քեզ, զի՞նչ ոչ տայիր, թէ մարթ էր ի բազում ամս առանց վնասու պահել զցորեան: Իսկ նա աւանիկ զքեզ ոչ միայն ցորենոյն, այլ եւ ամենայնի խելամուտ առնէ. թէ զիա՛րդ եւ ինչքն եւ ոգիդ եւ մարմինդ առանց վնասու մնայցեն՝ ցուցանէ: Եւ զի՞ պիտոյ իցէ մանր զամենայն ուղղութիւնս[6] ասել զարուեստին: Զի նա իսկ ուսուցանէ, թէ ո՛րպէս լինիցիս նմանող Աստուծոյ, որ ամենայն բարութեանց գլուխ է:

Տեսանե՞ս, զի ոչ մի միայն գործ է նորա, այլ բազում. եւ չէ կարօտ այլում օգնականի: Տունս չինէ, հանդերձս անկանէ, գանձս անծախս կազմէ, մահու գեր ի վերոյ առնէ, սատանայի տիրէ, Աստուծոյ նմանողս գործէ: Զի՞նչ ինչ այլ քան զայն արուեստ շահաւոր կայցէ. զի այլ արուեստքն՝ հանդերձ ասացելովքն՝ ընդ անցաւոր կենացս վախճանին. եւ ի խօթութեան արուեստագործացն՝ եւ ուրեք չերեւին, եւ զգործս իւրեանց չկարեն ունել հաստատուն, եւ աշխատութեան կարօտ են, եւ բազում ժամանակօք եւ յաճախ այլովք իրօք: Իսկ նա, յորժամ աշխարհս անցանէ, յայնժամ առաւել երեւի. եւ յորժամ մեռանիցիմք, յայնժամ սաստիկ ծագէ, եւ զգործեալ գործսն իւր միայն ցուցանէ: Ոչ ժամանակաւ եւ ոչ աշխատութեամբ եւ ոչ այլ իւիք այնպիսեօք կարօտ է. այլ մինչ խօթ իցես՝ գործէ եւ ի ծերութեանն չդադարէ եւ ի հանդերձեալ կեանսն ընդ քեզ ուղեկից լինի եւ չթողու ուրեք զքեզ:

Նա եւ քան զիմաստունսն եւ քան զբանիբունսն զօրագոյն կազմէ զքեզ: Զի որ յայլ արուեստս ընտրիցին, բազում նախանձաւորս ունիցին. եւ որք յայս պայծառանայցեն, սաստիկ աղօթակիցս: Նոքա ի մարդկան ատեանս կան եւ ջատագով զրկելոցն լինին, բազում անգամ իսկ եւ զրկելեացն. եւ սա առաջի ատենին Քրիստոսի ոչ միայն ջատագով լինի, այլ եւ զդատաւորն եւս ի հաւան ածէ լինելոյ ջատագով այնմ, որ դատիցին, եւ զիրաւունս ի նա հանել[7], թէպէտ եւ բազում մեղս մեղուցեալ իցէ, եւ պսակել, եւ քարոզ կարդալ եւ յարգել: Արարէ՛ք, ասէ, ողորմութիւն, եւ ամենայն ինչ ձեր սուրբ եղիցի:

Եւ զի՞նչ ասիցեմ ի հանդերձեալ աշխարհին: Թէ աստէն հարցանիցեմք զմարդիկ, թէ զի՞նչ կամիցիք, իմաստո՞ւնս բազում լինել եւ բանիբունս, թէ ողորմածս եւ մարդասէրս, զերկրորդն լսեմք ամենեցուն ախորժել. եւ կարի իսկ յիրաւի: Ճարտարախօսութիւն թէ բառնայցէ, չվնասի ինչ աշխարհս. զի եւ յառաջ քան զայն կայր հաստատուն բազում ժամանակս: Իսկ եթէ զողորմելն բառնայցես, ամենայն վաստակքն կորնչին: Եւ զոր օրինակ ի ծովու չէ հնար նաւարկել, թէ նաւահանգիստքն եւ մուտ եւ ելքն խնուցուն, նոյնպես եւ ոչ կենաց աշխարհիս կալ, թէ զողորմութիւն եւ զարգահատել եւ զմարդասիրութիւն բառնայցես: Քանզի ունիմք բնութեամբ միտութիւն ինչ յողորմութիւն. յոր սակս եւ վասն զրկելոց ցասնումք. եւ կոտորեալս տեսանեմք, եւ վշտանամք. եւ սգաւորս, եւ արտասուեմք: Քանզի յոյժ կամի Քրիստոս գործել զայն ուղղութիւն, վասն այնորիկ բազում ինչ եւ բնութեանն հրամայեաց ի նոյն նպաստ լինել, յայտ արարեալ, թէ կարի փոյթ է նմա զնմանէ: Զայս ամենայն իմացեալ, ե՛ւ զանձինս ե՛ւ զորդիս ածցուք յողորմածութեան վարդապետանոցն. եւ նախ քան զամենայն՝ զայն ուսանիցիմք:

(տե՛ս Թ. Թոռնեան, նույն տեղում, էջ 99-104)

---

[1] ուղղութիւն պիտոյից - լավ. երևելի գործ

[2] զսերմանսն հանիցեն - սերմնացանի՝ հողագործի գործ են կատարում

[3] փխ. պէս պէս եւ բազում եւ ազգի ազգի իրաց վճարիչ է - տեսակ-տեսակ շատ բաներ է իրագործում

[4] ժամանակին

[5] փխ. առ ի պահպանութիւն յարդեանցն

[6] զամենայն ուղղութիւնս - բոլոր լավ, մեծ գործերը

[7] դարձնել, վերաբերել տալ, ձգել

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՒՂՈՍԻ·

Որ ընդ փառաւորն լինել կամի, փառաց մի՛ ցանկասցի

Զմարթի այլ ազգ հասանել փառաց, եթէ ոչ փախչելովն ի փառաց. մինչ մեք զնորա հետ իցեմք, փախչի ի մէնջ, եւ յորժամ թողուցումք, զհետ լինի եւ հասանէ. եւ եթէ կամիցիս փառաւոր լինել, մի՛ ցանկար փառաց. եւ եթէ կամիս բարձրագոյն լինել, մի՛ ունիր զանձնդ առ աւագս: Եւ այլ ազգ եւս. որ զպատիւ չխնդրիցէ, զնա ամենեքին պատուեն. եւ որ խնդրիցէն՝ յամենեցունց արհամարհի. քանզի այնպէս իմն է ազգ մարդկան՝ վէս եւ ընդ հակառակս[1]: Եւ արդ արհամարհեսցուք զփառս, զի այնպէս կարիցեմք լինել խոնարհք, մանաւանդ թէ բարձրագոյնք իսկ:

Մի՛ ունիր զանձն առ լաւս, զի յայլոց մեծարիցիս. որ անձամբ զանձն վերացուցանէ, յայլոց չվերանայ. եւ որ անձամբ զանձն խոնարհեցուցանէ, յայլոց վերանայ: Մեծ չարութիւն է հպարտութիւն. լաւ է մորոսանալ, քան հպարտանալ. զի անդ՝ մորոսութիւնն միայն է յանմտութենէ, եւ աստ՝ եւս չար մորոսութիւն եւ մոլութիւն: Անմիտն անձին եւեթ չար է. հպարտն՝ եւ ընկերացն ապականութիւն. անմտութիւն յայնմ ախտէ ծնանի. չիք հնար առն մեծամտի լինել իմաստուն, այլ հարկ է անմիտ լինել հպարտացելոյն: Եւ զի այս այսպէս[2], յայտ իսկ է. բնաւ կարծելն թէ իցէ ինչ, չիցէ՞ անմտութիւն. եւ հպարտին միշտ այնպիսի միտք են: Լո՛ւր եւ Իմաստնոյն. Տեսի, ասէ, զայր մի պանծացեալ յանձն թէ իմաստուն իցէ. բայց առաւել յոյս գոյր յանմտին, քան ի նմա:

Տեսանե՞ս, զի ոչ վայրապա՛ր ասացի, թէ եւս չար քան զմորոսութիւնն է այնպիսի չարութիւն: Առաւել յոյս գոյ, ասէ, յանմտին քան ի նմա: Վասն այնորիկ եւ Պաւղոս ասէր. «Մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր»: Աղէ ասա՛, եւ ի մարմինս իսկ զո՞ր ասիցեմք առողջս. զյո՞յրսն եւ զուռուցեալսն եւ զջրագողեալսն, եթէ զնրբաւարսն եւ զկազմսն եւ զձողսն[3], որոց հարթ եւ ամփոփ իցէ տարրն: Թէ այդպէս

իցէ, եւ յոգիս՝ ուռուցեալն ե՛ւս չար յախտի է քան զջրագողեալն, եւ հեզն ազատ յամենայն ախտէ:

Ո՞րչափ ինչ բնարթիւնս ծնանիցի մեզ խոնարհութիւնն. զի՞նչ կամիցիս. ոխս չունել, անցասումն լինել, մարդասիրութիւն, արթնութիւն, մտադիւրութիւն. այս ամենայն բարիք ի խոնարհութենէն են, եւ սոցին հակառակք՝ ի հպարտութենէ: Հարկ է այպիսւոյն թշնամանիչ լինել եւ հարկանող եւ բարկացող եւ դառն եւ անհամբոյր, գազան մանավանդ եւ ոչ մարդ: Ուժգին իցես, եւ յա՞յն սակս մեծամտիցես. թէ այսպէս իցէ, վասն այնորիկ առաւել պարտիս խոնարհել: Զի՞ չնչին իրօքն մեծամտիցես. քանզի եւ առիւծ գազանագոյն քան զքեզ է, եւ վարազ՝ ուժգնագոյն, եւ իբրեւ զմժիխ մի ես առ նոքօք. եւ աւազակք եւ գերեզմանակրկիտք եւ ի վսեր եկեալքն եւ ծառայքն իսկ քո, եւ թերեւս որ կարին իսկ[4] անազատք եւ չարաբարոյքն իցեն՝ զօրագոյն քան զքեզ իցեն. եւ այն գովութեան ինչ արժանի իցեն, եւ չկայցե՞ս ծանակ այնպիսի ինչ իրօք մեծամտել:

Այլ թերեւս գեղեցի՞կ իցես եւ բարենչան ոք. եւ այն աղջկանց նազանք են. բայց սակայն քան զսիրամարգ գեղեցիկ չիցես, եւ ոչ այնպէս ծաղկալից համապայծառ թեւս ունիցիս իբրեւ զայն թռչուն, որ վարսիւքն եւ գիսակօքն, որ խրձնացեալ եւ խոզանեալ կարակնեալ բազմաճամուկ տտնովն յաղթէ քեզ գեղեցկութեամբ: Նա եւ փորն կարի իսկ գեղեցիկ է, եւ այլք եւս բազումք ի թռչնոց, ընդ որս թէ կամիցիս անցանել ի հանդիսի[5] ոչ ինչ ամենեւին տեսանիցես զանձն:

Եւ թերեւս զի մեծատուն իցես՝ հպարտանայցես. ուստի՞ իցէ, զոր ունիսն եւ կամ զի՞նչ ունիցիս, ոսկի, արծաթ, ականս պատուականս. այն եւ աւազակաց եւ սպանողաց պարծանք են, եւ ոսկեհանաց, եւ որք ի քրէական մետաղսն խոնջիցին. եւ այն պարծա՞նք ինչ իցեն: Թերեւս զարդո՞ւք ինչ եւ պաճուճանօք հպարտանայցես. զայն եւ ի ձիսն է տեսանել. Պարսիկք եւ զշառաւունսն եւ նկարեն եւ պաճուճեն: Զամաչե՞ս, չթրջի՞ս[6] այնպիսի իրօք հպարտանալ, որովք եւ անասունքն հանգոյն քեզ լինիցին, եւ ծառայք եւ սպանողք եւ կանացիք եւ աւազակք եւ գերեզմանակրկիտք:

Այլ ի տունս ինչ գեղեցիկս պարծիցիս. բազում թռչունք ե՛ւս ի գեղեցիկ տունս բնակեն. մանաւանդ ճայք եւս առաւել պայծառագոյն քան զքո տուսն ունին բնակութիւնս: Այլ թերեւս ճայնի՞ւ ինչ հպարտանայցես. քան զփորն եւ զսոխակ եւ զասպուճակ չկարիցես երբեք ճայն ինչ քաղցր եւ հեշտական մրմնջել: Այլ թերեւս պէսպէս արուեստի՞ւք. եւ ո՞վ ոք յայնմ զմեղուօք զճարտարկօք անցանիցէ. ո՞ր դրօշող, ո՞ր նկարիչ, ո՞ր գետնաչափ գտանիցի քան զնոսա իմաստուն, որ կարիցէ ճարտարութեան մեղուաց նմանել: Այլ թերեւս բարո՞կ ինչ հանդերձիւք. այնու սարդք իսկ անցանեն զանցանեն զքեւ: Այլ թերեւս ոտի՞ց արագութեամբ. եւ այնու եւս անասունք գլեն, մանաւանդ նապաստակքն եւ այծեմունք, եւ այլ եւս ինչ յանասնոց, որ արագ իցեն ոտիւք: Այլ թերեւս ի տարաշխա՞րհ ինչ երթալով. եւ այնու թռչունքն անցանեն զքեւ. մանաւանդ խորդք եւ ծիծառունք, որ դիւրաւ հարկանեն զտարաշխարհական ճանապարհս. ոչ պաշար բառնան, եւ ոչ գրաստու կարօտանան, այլ ընդ ամենայնի բաւական են նոցա թեւքն. նովին եւ նաւ եւ գրաստ ինչ եւ կառք եւ հողմք եւ ամենայն զի՛նչ և իցէ՝ արագագոյնք են քան զքեզ: Այլ թերեւս քաջատեսութեա՞մբ ինչ հպարտանայցես. այլ ոչ ինչ ժամանես այծեման եւ արծուոյ: Թերեւս զի արա՞գ լսիցես. այլ չիցես սուր ականջօք քան զէշ: Եւ թերեւս հո՞տ քաջ առնուցուս. այլ չկարես անցանել զշամբ: Եւ թերեւս զի գործօն եւ համբերո՞ղ իցես. այլ չես ձեռնհաս լինել անդադար իբրեւ զմրջիւն: Եւ թերեւս զի ոսկի բազո՞ւմ յանձին ունիցիս. այլ ոչ որպէս զհնդիկ մրջիւնն: Իսկ առողջութեամբ եւ երագահալութեամբ յոյժ իսկ առաւել են քան զմեզ անասունք. եւ անհոգութեամբ ինչ չերկնչին երբեք յաղքատութենէ, չկասկածեն ի կարօտութենէ: Հայեցարո՛ւք, ասէ, ընդ թռչունս երկնից, զի ոչ սերմանեն եւ ոչ հնձեն եւ ոչ ժողովեն ի շտեմարանս: Թէ այնպէս իցէ, ասեն, քան զմեզ՝ զանասունս լաւագոյն արար Աստուած: Տեսանե՞ս ո՛րչափ ինչ վնաս իցէ չգիտել զքննելն. տեսանե՞ս ո՛րչափ ինչ շահ է մեզ իրացն քննութիւն. որ քան զամենայն մարդիկ առաւել մեծամտէր, գտաւ եւ քան

զանասունս եւս խոնարհագոյն, այլ խնայեսցուք ի նա եւ չնմանեսցուք նմա: Մի՛ , զի քան զմեր բնութիւնս առաւել մեծամտեաց, իջուցանիցեմք[7] զնա յանասնոց աշտիճան. այլ կանգնեսցուք զնա անտի, ո՛չ վասն նորա, այլ վասն հասարակաց պատուոյ. զի նա արժանի էր այնպիսի ինչ կրելոյ, այլ զի Աստուծոյ մարդասիրութիւնն ի մեզ ցուցցէ զպատիւն:

Եւ է ինչ բազում, որովք ոչ հաղորդին ընդ մեզ անասունքն: Զի՞նչ իցէ. աստուածպաշտութեամբ եւ վարուք առաքինութեան: Ի՞ւ. զի զԱստուած գիտեմք եւ զխնամս նորա ի միտ առնումք եւ վասն անմահութեան ճարտարամտեմք: Տեղի տացեն մեզ աստ անասունքն, եւ չեմք ինչ երկմիտ յայսցանէ. զգաստանամք, եւ այնմ չեն ինչ նոքա հաղորդք ամենեւին. քան զնոսա անաւագ եմք, եւ տիրեմք նոցա. եւ այնու է մեծ իշխանութիւնն, զի չեմք հզօր քան զնոսա եւ տիրեմք նոցա. զի ուսանիցիս, թէ ոչ դու ես այնմ պատճառք, այլ որ արարն զքեզ Աստուած եւ որ զբանն շնորհեաց քեզ: Գործիս եւ թակարդս ձգեմք նոցա եւ այնու ըմբռնեմք, յանկուցանեմք, ի համբոյր ածեմք:

Ցածութիւն առ մեզ, հեզութիւն, հանդարտութիւն, ընչից անտեսութիւն[8]: Այլ դու քանզի ի հպարտացելոց ոմն ես եւ չունիս ինչ այնպիսի, յիրաւի կա՛մ զմարդկանն[9] մեծ համարիս, եւ կա՛մ զանասնոցն խոնարհագոյն. քանզի այնպէս է անմտութիւնն եւ յանդգնութիւնն, կա՛մ հպարտանայ աւելի քան զչափն, եւ կա՛մ խոնարհի դարձեալ նոյնպէս. եւ չպահէ ուրեք զկշիռ չափոյն[10]:

Հրեշտակաց զուգական եմք այնու, զի զարքայութիւնն խոստացեալ է մեզ, եւ ընդ Քրիստոսի բնակութիւն եւ ցնծութիւն: Մարդ տանջի եւ չգիտէ ինչ. մարդ զմահ արհամարհէ, եւ չերկնչի եւ չդողայ, չցանկանայ աւելի իմիք. որպէս զի որք չիցեն այսպիսի, եւս չարեն քան զանասունս. յորժամ ի մարմնաւոր ինչ իրս յոլովիցես, եւ հոգեւորքն ոչ գլիցես, զիա՞րդ չիցես ի վայր քան զանասունս: Օ՛ն առեալ ածցուք ի մէջ զոք յայնցանէ, որք ի չարիսն կեցցեն, եւ յանհանճարից զոք, որ միշտ ի փափկութեան իցեն եւ զագահութեան

հետ[11]*. եւ ցուցանեմք, թէ եւս քաջ պատերազմող է ձի քան զնա, եւ վարազ եւս զօրագոյն, եւ նապաստակ առաւել եւս արագագոյն, եւ սիրամարգ կարի եւս գեղագոյն, եւ փոր բնաւ իսկ քաջաձայն, եւ փիղ յոյժ յաղթանդամ, եւ արծուի քաջատես, եւ ամենայն իսկ թռչունք եւս առաւել մեծատունք են քան զնա:*

Եւ արդ իմացեալ զի եւ քան զանասունս եւս վատթարագոյնք եմք առանց առաքինութեան, ի նա կրթեսցուք, ի նոյն թեւակոխեսցուք, զի լինիցիմք մարդիկ, մանաւանդ հրեշտակք իսկ:

(տե՛ս Թ. Թոռնեան, նույն տեղում, էջ 169-176)

---

[1] ընդ հակառակս - կռվասեր, վիճաբան
[2] Եւ զի այս այսպէս փխ. Եւ զի այս այպէս է
[3] զձողսն - թերևս ձողի պես ուղիղ եղողները
[4] կարին իսկ փխ. կարի իսկ
[5] անցանել ի հանդիսի - համեմատվել, մրցել
[6] հոմանիշ է ամաչել բային
[7] փխ. մի՛ իջուցանիցեմք զնա...
[8] այստեղ՝ արհամարհանք
[9] զմարդկանն, այսինքն զիրս մարդկան. զանասնոցն - զիրս անասնոց
[10] կշիռ չափոյ - հավասարակշռություն
[11] փխ. զհետ ագահութեան

ԲԱՌԱՐԱՆ

Ա

ԱԳԱՆԵԼ(իմ), ագայ, ագի՛ր, ագեալ կամ ագուցեալ, հ. հագնել, հագնվել.

ԱԳԱՆԵԼ(իմ), ագայ, ագի՛ր, ագուցեալ, չ. իջևանել, գիշերել, մնալ մի տեղ մինչև առավոտ:

ԱԳԱՐԱԿ, ի, աց, գ. 1. մշակված կամ մշակելի հող՝ հանդ. 2. հողային կալվածք. 3. գյուղ, ավան. 4. ա. ագարակային, գյուղական:

ԱԳՈՒՑԱՆԵԼ, ագուցի, գո՛, պբ. հագցնել:

ԱԶԲՆ, բին, բամբ, հոգն. բունք, գ. 1. կտավի հենքի ծոպերը՝ թելերը. 2. ոստայնակի սանրաձև շրջանակ, որի արանքով անցնում են հյուսվածքի թելերը:

ԱԶԳ, ի, աց, գ. 1. տեսակ. 2. սերունդ. 3. տոհմ, ցեղ. 4. ժողովուրդ.

-ԱԶԳԻ ԱԶԳԻ. տեսակ-տեսակ, զանազան:

ԱԶԴՈՒՄՆ ԲՆԱԿԱՆ. բնազդ:

ԱԽՏԱԺԷՏ, ի, աց, ա. 1. հիվանդոտ, ախտավոր, ցավագար. 2. ախտավոր կրքերով վարակված:

ԱԾԵԼ, ածի, ա՛ծ, ն. 1. բերել. 2. տեղից տեղ տանել. 3. խփել, հարվածել. 4. շարժել. 5. լցնել:

ԱԿՆ, ական, հոգն. ականք, գ. թանկագին քար, գոհար:

ԱԿՆԱԿԱՌՈՅՑ ԼԻՆԵԼ. աչքը հառել մի բանի, աչք դնել:

ԱԿՆ ԱՌՆՈՒԼ. ակնածել, պատկառել, քաշվել, ամաչել:

ԱԿՆ ՈՒՆԵԼ. հույս ունենալ, ակնկալել:

ԱԿՈՒՄԲ, կմբի, ից, գ. 1. ժողով, հավաքույթ. հանդիսականների՝ հավաքվածների խումբ՝ բազմություն. 2. սեղան, բազմոց՝ սեղանի շուրջը:

ԱՀԱՒԱԴԻԿ,
ԱՀԱՒԱՆԻԿ, } *մ. ահա*
ԱՀԱՒԱՍԻԿ,

ԱՂԲԻՒՐԱՆԱԼ, ացայ, չ. աղբյուրի նման բխել՝ հոսել, աղբյուրի պես չատանալ:

ԱՂԵՂՆԱՁԱՅՆ, 1. գ. արձակված աղեղի ձայն. 2. ա. աղեղի ձայն հանող:

ԱՂԷ՛, ձ. հապա՛, դե՛:

ԱՂԽ[1], ի, ից, գ. 1. բազմություն, ժողովուրդ. 2. ընդհանրապես՝ գույք, ունեցած չունեցածը:

ԱՂԽ[2], ի, ից, գ. 1. փակ, փականք, կողպեք. 2. օղ, օղակ.

ԱՂՕԹԱԿԵՐ, ա. գ. բարեխոս, միջնորդ:

ԱՃԵՑՈՒՆ, ա. աճում առած, մեծացած, զարգացած:

ԱՄ, ի, աց, գ. տարի:

ԱՄԲԱՌՆԱԼ[1], բարձայ, ձի՛ր, չ. 1. վեր ելնել, 2. բարձրանալ, մեծանալ. 3. հպարտանալ:

ԱՄԲԱՌՆԱԼ[2], բարձի, բա՛րձ. ն. բարձրացնել:

ԱՄԲԱՐՀԱՒԱՃ, ի, ից, ա. ամբարտավան, գոռոզ, մեծամիտ:

ԱՄԲԱՐՇՏՈՒԹԻՒՆ կամ ԱՄՊԱՐՇՏՈՒԹԻՒՆ, գ. 1. պաշտամունք՝ կրոն չունենալը, անհավատ լինելը. 2. անօրենություն, անզգամություն, չարություն:

ԱՄԲՈԽ, ի, ից, գ. 1. բազմություն, ամբոխ, 2. իրարանցում, շփոթություն, աղմուկ-աղաղակ:

ԱՄԵՆԱԲՈՅՍ, ա. 1. ամեն ինչ բուսեցնող՝ բերող՝ տվող. 2. շատ պտղաբեր, արգավանդ, բերրի:

ԱՄԵՆԱԲՈՒՂԽ, ա. ամեն բարիք բխեցնող, առատաբեր:

ԱՄԵՆԱԳԻՒՏ, ա. 1. ամեն ինչի հնարը գտնող, ամենահնար. 2. որտեղ ամեն ինչ գտնվում է, ամեն բանով՝ բարիքով լի:

ԱՄԵՆԵՔԵԱՆ, եցունց, ԱՄԵՆԵՔԻՆ, եցուն, դ. 1. ամենքը, ամենքն էլ. 2. բոլոր, ամեն, բովանդակ:

ԱՄԻ ԱՄԻ, մ. տարեցտարի, տարի առ տարի:

ԱՄՈՎՍԱԾԻՆ, ծնին, գ. Եսայի մարգարեն:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸՆԳԱԼ, ա. ամուսնացած:

ԱՅԳՈՒՆ ԱՅԳՈՒՆ, մ. առավոտները, ամեն առավոտ:

ԱՅԼԱՀԱՒԱՏ, ա. ուրիշ կրոն՝ հավատ ունեցող, այլակրոն, այլադավան:

ԱՅՊԱՆԵԼ, եցի, ն. ծաղրել, անարգել, արհամարհել:

ԱՅՊԱՆՈՒՄՆ, գ. 1. ծաղրանքի ենթարկելը. 2. ծաղր. 3. նախատինք, ամոթանք:

ԱՅՊՆ, գ. 1. ծաղր, 2. ամոթ, խայտառակություն:

ԱՅՍՐ, 1. մ. այստեղ. 2. դ. այս.

-ԱՅՍՐ ԱՆԴՐ. այս ու այն կողմ:

ԱՅՍՐԷՆ, մ. 1. նորից դեպի այստեղ. 2. նորից. 3. այստեղ, հենց այստեղ:

ԱՅՏԻ, 1. մ. այդտեղից. 2. դ. այդ:

ԱՅՐԱՅԱՒԵՐ ԱՌՆԵԼ. այրել և ավերել, կրակի և ավերածության ենթարկել:

ԱՅՑԵԼՈՒ ԼԻՆԵԼ. 1. այցելել. 2. խնամել. 3. ողորմել, կարեկցել. 4. վրեժ առնել, վրեժխնդիր լինել:

ԱՆԱԶԱՏ, ի, աց, ա. 1. ոչ ազատների դասին պատկանող, անտոհմ. 2. ոչ մարդավայել, տմարդի, անարգ:

ԱՆԱՂՏ, ա. անբիծ, մաքուր:

ԱՆԱՇԽԱՐՀԻԿ, ա. իր աշխարհից՝ հայրենիքից քշված՝ վտարված:

ԱՆԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. անասունների հետ խառնվելը՝ պղծություն գործելը, անասնամոլություն:

ԱՆԱՐԻ, ա. չափազանց խոշոր՝ մեծ, հսկայական, վիթխարի:

ԱՆԱՐՈՒԵՍՏ, ի, ից, ա. ոչ արվեստի միջոցով հորինված, անձեռակերտ, աննյութ:

ԱՆԱՒԱԳ, ի, ից, ա. ոչ ավագ, խեղճ, տկար, անզոր:

ԱՆԲԱՆԱՒՈՐ, ի, աց, ա. ոչ բանական, անբանական:

ԱՆԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. 1. անխոսություն, լռություն. 2. անբան լինելը. 3. բանականության պակասություն, անմտություն:

ԱՆԲԱՒԵԼԻ, ա. 1. անընդգրկելի, անսահման, անեզր. 2. անասելի, անպատմելի:

ԱՆԳԱՆԵԼ, տե՛ս ԱՆԿԱՆԵԼ:

ԱՆԳՈՍՆԵԼ, եցի, ն. չ. ականջ չդնել, չլսելու տալ, սուտ խուլ ձևանալ. 2. անտեսել, արհամարհել, հաշվի չառնել, անուշադրության մատնել. 3. պատվիրանազանց՝ անհնազանդ լինել:

ԱՆԴ[1], ոյ, ոց և ի, ից, գ. մշակելի հող, հանդ. ագարակ, անդաստան, արտեր:

ԱՆԴ[2], մ. 1. այնտեղ. 2. այն ժամանակ. 3. դ. այն:

ԱՆԴԱՏԱՊԱՐՏ, ի, ից, ա. անդատապարտելի, անմեղ, ան-

պարտ. 2. անընտելություն, անարատ. 3. պարզերես:

ԱՆԴԷՆ, մ. 1. այնտեղ, նույն տեղը. 2. անմիջապես, իսկույն:

ԱՆԴԻ[1], դիոյ կամ դւոյ, դւոց, գ. խոշոր եղջերավոր անասունների հոտ՝ խումբ, նախիր, ջոկ:

ԱՆԴԻ[2], տե՛ս ԱՆՏԻ:

ԱՆԴՈՒՍՏ, մ. 1. այնտեղից. 2. նրանից հետո:

ԱՆԴՍՏԻՆ, մ. 1. հենց այն (տեղից). 2. հենց այն (ժամանակվանից), հենց սկզբից. 3. նորից, դարձյալ, վերստին:

ԱՆԴՐ, 1. մ. այնտեղ, դեպի այնտեղ. 2. դ. այն:

ԱՆԴՐԷՆ, մ. 1. նորից, դարձյալ. 2. ետ. 3. նույն տեղը. 4. նույն ժամանակ:

ԱՆԴՐՈՒՎԱՐ, ի, աց, գ. զույգ ձի կամ ջորի՝ կառքին կամ գահավորակին լծված: 2. Լծված կառք կամ գահավորակ:

ԱՆԵՐԿԵՂ, ա. աներկյուղ:

ԱՆԶԳԱՄՈՒԹԻՒՆ, գ. 1. անզգամ լինելը, անզգամի ստոր վարքագիծ. 2. անմտություն:

ԱՆԶԳԱՅԱԲԱՐ, մ. առանց զգալու, առանց կշռադատելու, անմտաբար:

ԱՆԸՄԲԵՐԵԼԻ, լւոյ, լեաց, ա. անտանելի, անհանդուրժելի:

ԱՆԹԵՂ, ի, գ. մոխիր, մոխրով ծածկված կրակ:

ԱՆԹԼՓԱՏ, ի, ից, ա. չթլփատված. 2. այլազգի (ոչ հրեա), որ թլփատված չէ, հեթանոս:

ԱՆԺԱՌԱՆԳԵԼ, եցի, ն. անժառանգ՝ անորդի դարձնել, ազգով՝ ցեղով ջնջել:

ԱՆԺՈՅԺ, ժուժի, ից, ա. 1. համբերություն չունեցող, անհամբեր. 2. ոչ ժուժկալ, անզուսպ, ցոփ. 3. ոչ դիմացկուն, ոչ տոկուն:

ԱՆԽԻՂՃ, խղճի, ից, ա. 1. խղճի խայթ չունեցող, անպարսավելի, խիղճը մաքուր, անարատ. 2. անթերի, կատարյալ:

ԱՆԽՏԻՐ, տրի, ից կամ աց, ա. 1. խտրություն չդնող, անաչառ. 2. պեսպես, տարբեր. 3. մ. առանց խտրության:

ԱՆԾԱԽ, ա. չսպառվող, անհատնում, անսպառ:

ԱՆԿԱՆԵԼ[1], անկի, ա՛նկ, ն. 1. հյուսել, գործել. 2. ասեղնագործել:

ԱՆԿԱՆԵԼ[2] (իմ), անկայ, անկի՛ր, չ. 1. ընկնել. 2. վիճակվել. 3. մեռնել, 4. հարձակվել, վրա հասնել. 5. փխբ. կոտրվել (սիրտը):

ԱՆԿԱՍԿԱԾ, ի, ից, ա. 1. չկասկածվող. 2. կասկած չհարուցող. 3. անհոգ, ապահով, անվտանգ. 4. մ. առանց կասկածելու կամ կասկածի՝ երկյուղի՝ վախի, ապահովաբար:

ԱՆԿԱՐԾԵԼԻ, ա. 1. որ չի կարելի կարծել, անսպասելի, անակնկալ. 2. նորահրաշ, հրաշափառ. 3. անկասկածելի:

ԱՆԿԱՐՕՏ, ի, ից, ա. անպակաս, առատ, լիուլի. 2. մ. առանց պակասության, առատապես, լիուլի:

ԱՆՀԱՄԲՈՅՐ, բուրի, ից, ա. վայրենի, կատաղի, անզուսպ:

ԱՆՀԵԴԵԴ, ա. խոշոր:

ԱՆՀՆԱՐԻՆ, ա. մ. 1. անկարելի, անհնար. 2. սաստիկ, խիստ. 3. չափազանց, խիստ շատ:

ԱՆՁԿԱՅՐԵԱՑ, ա, կարոտից այրված՝ տոչորված, կարոտակեզ:

ԱՆՁՆ, ձին, ինք, անց, գ. 1. անձ. 2. ինքը. 3. հոգի, շունչ:

– ՅԱՆՁԻՆ ՈՒՆԵԼ (իմ). հանձն առնել, ընդունել:

ԱՆՁՆԱՀԱՃՈՒԹԻՒՆ, գ. անձնահաճ՝ ինքնահավան լինելը, ինքնահավանություն, ինքնապարծություն:

ԱՆՁՈՒԿ, ձկոյ, ձկով կամ ձկաւ, գ. փխբ. սրտի նեղություն՝ սաստիկ կարոտից, խիստ կարոտ, փափագ, տենչ, իղձ:

ԱՆՃԱՌԱԲԱՐ, մ. անճառելի՝ անասելի կերպով:

ԱՆՃԱՌԵԼԻ, լւոյ, լեաց, ա. 1. որ չի կարելի ճառել՝ պատմել՝ նկարագրել անհասանելի մեծության՝ վեհության ևն պատճառով, անպատում, աննկարագրելի:

ԱՆՄԱՐԹ, ա. անկարելի, անպատեհ:

ԱՆՈՐԴԻ, դւոյ, ոց, ա. 1. որդի չունեցող, անզավակ. 2. որդուց զրկված, որդուն կորցրած. 3. ստերջ:

ԱՆՊԱՏՃԱՌ, ի, ից, ա. պատճառ՝ տեղիք չտվող, անմեղ, անմեղադրելի. 2. մ. առանց պատճառի:

ԱՆՊԱՐԱԳԻՏ, ա. անբովանդակելի, անսահման, անեզր, անչափ:

ԱՆՊԱՐԱՊ, ի, ից, ա. ոչ պարապ, պարապ չմնացող, միշտ զբաղված:

ԱՆՍԱԼ, ացի, սա՛, չ. լսել, հնազանդվել, ականջ դնել:
ԱՆՍՏՈՒ, ա. անպատիվ, անկիրթ:
ԱՆՎԱՅՐԱՓԱԿ, ա. որ ոչ մի վայրում չի փակվում՝ չի ամփոփվում, անբովանդակելի, անսահման, անչափ:
ԱՆՎԵՀԵՐ, ա. 1. աներկյուղ, անվախ, խիզախ, համարձակ. 2. անդանդաղ, փութաջան, ժիր:
ԱՆՏԱՆԵԼԻ, լ.ոյ, լեաց, ա. որ չի կարող պարունակվել՝ բովանդակվել մի տեղ, անպարագրելի, անչափ:
ԱՆՏԻ, 1. մ. այնտեղից. 2. դ. այն:
ԱՆՑԱՆԵԼ, անցի, ա՛նց, չ. 1. անցնել. 2. գերազանցել. 3. զանց առնել. 4. պակասել, սպառվել. 5. մարել, հանգչել. 6. մոռացվել:
ԱՆՑԱՍՈՒՄՆ, ա. ցասում չունեցող, չբարկացող, հեզ:
ԱՆՑՆԻԻՐ, գ. յուրաքանչյուր, ամեն մեկը, ամեն մի, ամեն:
ԱՆՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. 1. անցնել տալ, անցկացնել. 2. -վերացնել, հեռացնել, փարատել:
ԱՆՓԱՓԱՑ, այք, այից, գ. ժայռոտ՝ ապառաժոտ՝ առապար տեղ:
ԱՆՓՈՐՁ, ի, ից, ա. փորձանքի չենթարկված, անարատ, մաքուր, առաքինի, կույս:
ԱՇԱԿԵՐՏԵԼ, եցի, 1. ն. սովորեցնել, կրթել. 2. չ. աշակերտ լինել. 3. (հունաբանությամբ) սովորել:
ԱՇԽԱՏ ԱՌՆԵԼ, նեղություն տալ՝ պատճառել, չարչարել:
ԱՇԽԱՏԵԼ (իմ), եցայ, եաց, չ. չարչարվել, տանջվել:
ԱՇԽԱՏ ԼԻՆԵԼ. չարչարվել, նեղություն կրել:
ԱՇԽԱՐՀԱԽՈՐՀ, ա. ընդհանուրի խորհրդով՝ հավանությամբ եղած:
ԱՇԽԱՐՀԱԿԱԼ, ի, աց, ա.գ. 1. աշխարհի տեր. 2. կուսակալ, իշխան:
ԱՇԽԱՐՀԱԿԵՑՈՅՑ, ա. աշխարհը կենդանացնող՝ ապրեցնող՝ փրկող, փրկարար, կենարար:
ԱՇԽԱՐՀԱՊԱՂԱՏ, ա. աշխարհի՝ ամբողջ երկրի պաղատանքը՝ խնդրանքը պարունակող:
ԱՊԱԽՏ ԱՌՆԵԼ. արհամարհել, ի չիք դարձնել, ի դերև հանել:

ԱՊԱԽՏԱՒՈՐ, ի, աց, ա. երախտիքը զանց առնող՝ արհամարհող, ապերախտ:
ԱՊԱՇԱՒԱՆՔ, նաց, գ. սրտի ցավ՝ ափսոսանք՝ զղջում արած վատ գործի համար, ապաշխարություն:
ԱՊԱՇԽԱՐԵԼ, եցի, չ. գործած սխալների՝ հանցանքի՝ մեղքի համար զղջալ:
ԱՊԱՌՈՒՄ, ա. 1. վայրագ, դաժան, բիրտ, խիստ. 2. չափից դուրս, չափազանց, սաստիկ:
ԱՊԱՐԱՆԱՁԱՐԴ, ա. ապարանքի պես զարդարված:
ԱՊԱՐԱՆՁԱՆ, ի, աց. գ. ձեռքի մանյակ՝ ձև զարդ, ապարանջ:
ԱՊԻՐԱՏՈՒԹԻՒՆ, գ. ապիրատ լինելը, անիրավություն, չարություն, անզգամություն, անտեղիություն:
ԱՊՐԵԼ, եցի և եցայ, չ. 1. փրկվել, ազատվել, պրծնել, կենդանի մնալ. 2. տե՛ս ԱՊՐԵՑՈՒՑԱՆԵԼ:
ԱՊՐԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. փրկել տալ, ազատել, պրծացնել, կենդանի պահել՝ թողնել:
ԱՋՈՂԱԿ, ա. 1. ճարտար, հմուտ, վարժ. 2. հաջող, հարմար, լավ:
ԱՌԱԿԱՆՔ, նաց, գ. 1. ամոթ, խայտառակություն. 2. խայտառակելը, խայտառակվելը. 3. սեռական օրգաններ, ամոթույք:
ԱՌԱՆՁՆԱԳՈՐԾ, ա. իրեն միայն հատուկ գործ կատարող, առանձնահատուկ:
ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. 1. նվերների մատուցելը, մատուցվող նվեր՝ ընծա. 3. առաջարկություն, առաջարկելը:
ԱՌԱՋԱՏԵՍՈՒԹԻՒՆ, գ. նախատեսելը, նախօրոք գիտենալը՝ իմանալը, կանխատեսություն, նախագուշակություն:
ԱՌԱՋՈՅ, ա. մ. 1. առջևը եղածը, առջևի, դիմացի. 2. առջևից, առջևի կողմից:
ԱՌԱՋՔ, առաջս, գ. ճյուղ, մաս:
ԱՌԱՏՈՒԿ, տկի, տկաց, գ. բարակ չվան, առասան:
ԱՌԱՒՕՏՆ ՄԵՐԿԱՆԱԼ, առավոտը բացվել:
ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ, գ. 1. առաքինի լինելը. 2. առաքինի կյանք

վարելը. 3. մի բանի արտահայտություն, արդյունք:

ԱՌԹԵԼ, եցի, ն. առիթ՝ պատճառ լինել որևէ բանի:

ԱՌԺԱՄԱՅՆ, մ. 1. իսկույն, նույն պահին. 2. ա. նորագյուտ, նոր:

ԱՌԻԿՈՂԵԱԼ, ա. գ. դեպի ցած կամ մի կողմ թեքված, զառիվայր:

ԱՌԼՆՈՒԼ, լցի, ն. 1. լիքը՝ ամբողջապես լցնել. 2. տոգորել, համակել. 3. լրացնել:

ԱՌՆԵԼ, արարի, արա՛, ն. 1. անել , կատարել. 2. ստեղծել. 3. փոխել, դարձնել. 4. ունենալ, առնել:

-ԱՌՆԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ, պատասխանել:

ԱՌՆՈՒԼ, առի, ա՛ռ, ն. վերցնել, ստանալ:

-ԱՌՆՈՒԼ ՅԱՆՁՆ. հանձն առնել, ընդունել:

ԱՌՈԳԱԳԱՒԱԿ, ա. գավակը լիքը, մսեղ, գեր, պարարտ:

ԱՌՈՂՋ, ի, ից կամ աց, ոց, ա. 1. ողջ և առույգ, ոչ հիվանդ. 2. ճիշտ, բանական, խելացի, ողջամիտ. 3. անթերի, լրիվ, ողջ. 4. առողջարար:

ԱՍՊԱՏԱԿԵԼ, եցի, չ. ասպատակություն անել, ասպատակությամբ հարձակվել, արշավել. 2. ձիավարել:

ԱՍՊԱՏԱԿ ՍՓՌԵԼ. ասպատակել:

ԱՍՊԱՐ, ի կամ ոյ, աց. գ. վահան:

ԱՍՊԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. սպարապետ լինելը, սպարապետի պաշտոնը և կոչումը:

ԱՍՊՈՒՃԱԿ, գ. (կենդր.) կեռնեխների ընտանիքին պատկանող երգեցիկ թռչուն:

ԱՍՏ. 1. մ. այստեղ. 2. դ. այս:

ԱՍՏԷՆ, մ. այստեղ:

ԱՍՏԻ, 1. այստեղից. 2. դ. այս:

-ԱՍՏԻ ԵՒ ԱՆՏԻ, այս ու այն կողմից:

ԱՍՏՍՏԻՆ, 1. այստեղ, այս տեղում՝ վայրում. 2. այստեղից. 3. այժմվանից:

ԱՏԵԱՆ, ատենի, ից, գ. 1. դատարան. 2. դատական քննություն, դատավճիռ, դատաստան:

ԱՏՈՔՈՒԹԻՒՆ, գ. Ատոք՝ լիքը լինելը. բերրիություն, լիություն, պարարտություն:

ԱՏՐՈՒՇԱՆ, ի, աց, գ. կրակի պաշտամունքի տեղ՝ կրակատուն, մեհյան:

ԱՐԱՐ, ոյ, ոց, գ. 1. արած՝ ստեղծած՝ կատարած գործ, շենք, շինվածք. 2. ունեցվածք, ստացվածք, գույք, ինչք. 3. կալվածք. 4. բերք, արդյունք:

ԱՐԱՐԱԾ, ոյ, ոց, գ. կատարած գործ, արարք:

ԱՐԱՐՈՒԱԾ, ոյ, ոց, նաև ի, գ. - մի բան անելը՝ գործելը՝ կատարելը, արարք, գործողություն. 2. արած՝ կատարած գործ:

ԱՐԳԱՀԱՏԵԼ, եցի, չ. ն. գթալ, կարեկցել, խղճալ, ողորմել, ցավակցել:

ԱՐԳԵԼՈՒԼ, գելի, գե՛լ, ն. փակել ու պահել մի տեղում, արգելքի տակ պահել, չթողնել ելնել:

ԱՐԴԱՐԵՒ, ա. ճշմարիտ, իսկական, շիտակ:

ԱՐԴԵՕՔ, մ. 1. իրավ, հիրավի, իհարկե, անշուշտ, իսկապես. 2. գործածվում է որպես թարմատար՝ հավելադիր բառ. 3. մի՞թե. 4. այժմ, հիմա. 5. չ. ուրեմն, ապա:

ԱՐԴՈՒ, ի, աց, գ. ալյուրի և ընդեղենի չափ = 29 կգ 376 գր:

ԱՐԵԳԱԿՆԱԿ, գ. արևահայաց պատշգամբ, պատուհան:

ԱՐԹՆՈՒԹԻՒՆ, գ. 1. արթուն լինելը. 2. փխբ. զգաստություն, աչալրջություն, զգոնություն:

ԱՐԺԱՆ Է, մբ. 1. պարտ և պատշաճ է, վայել է, հարմար է, պետք է: 2. արժե:

ԱՐԻՔ, արեաց, գ. արիներ, պարսիկներ:

-ԱՐԻՔ ԵՒ ԱՆԱՐԻՔ. արիներ և անարիներ (պարսիկներ և ոչ պարսիկներ):

ԱՐԿԱՆԵԼ, արկի, ա՛րկ, ն. 1. նետել, գցել, դնել. 2. տարածել, սփռել. 3. լցնել. 4. վրան գցել՝ առնել, հագնել. 5. մտցնել: ԱՐԿԱՆԵԼ Ի ՄԻՏՍ. 1. մտադրվել, 2. հիշել: Ի ԳՈՐԾ ԱՐԿԱՆԵԼ, Ի ԿԻՐ ԱՐԿԱՆԵԼ. գործադրել, կիրառել: ՁԵՌՆ ԱՐԿԱՆԵԼ. ձեռնարկել: ՅԻՆՔՆ ԱՐԿԱՆԵԼ. իր կողմը ձգել: ԱՐԿԱՆԵԼ ԲԱԶՄԱԿԱՆ. 1. բազմելու տեղ պատրաստել. 2. սեղան գցել:

ԱՐԿՈՒԱԾ, ոյ, ոց կամ ի, ից, գ. 1. փորձանք, պատահար. 2. ծածկույթ, ծածկոց:

ԱՐՁԱՆԱՆԱԼ, ացայ, չ. արձանի նման կանգնած մնալ, անշարժ կանգնել:

ԱՐՄՏԻՔ, տեաց, գ. հոգն. տարբեր տեսակի ունդեր՝ հունդեր, ընդեղեն (ցորեն, գարի, ոսպ ևն):

ԱՐՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. արվամոլություն:

ԱՐՈՒԵՍՏ, ի, իւ կամ աւ, գ. 1. արհեստ. 2. վարդապետություն, հմտություն, ճարտարություն, հնարք. 3. հրաշք, սքանչելիք. 4. ճարտարարվեստ գործ:

ԱՐՈՒԵՍՏԵԼ, եցի, ն. 1. արվեստով՝ ճարտարությամբ մի բան ստեղծել, հորինել, ճարտարել. 2. հրաշք գործել:

ԱՐՈՒԹԻՒՆ, արուբիւն, գ. 1. արիություն, քաջություն. 2. արու լինել. 3. առաքինություն:

ԱՐՏԱՔՈՅ, նխ. մ. 1. դուրս, դուրսը, դրսից. 2. զատ. 3. հեռու:

ԱՐՏԱՔՍ, մ. դուրս, դուրսը:

ԱՐՏԻԿ, գ. վայրի ոչխար:

ԱՐՏՕՍՐ, գ. արտասուք, արցունք:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ի, ացայ, գ. (եկեղց.) եպիսկոպոսների պետ՝ ավագ, եպիսկոպոսապետ, պատրիարք:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ, տե՛ս ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:

ԱՐՓԻ, փւոյ, փեաց, գ. 1. երկնային լուսեղեն գոտի, որի մեջ գտնվում է արեգակը, եթեր (հին պատկերացմամբ). 2. արեգակը իբրև լույսի աղբյուր. 3. լույս, լուսեղեն տարածություն:

ԱՐՕՏԱԿԱՆ, ի, ացայ. ա. արոտով կերակրվող՝ արածող:

ԱԻԱՆԻԿ, մ. ահա:

ԱԻԱՐԵԼ, եցի, ն. ավար առնել, կողոպտել, հափշտակել:

ԱՎԱՐ ՀԱՐԿԱՆԵԼ. ավար առնել, կողոպտել, հափշտակել, թալանել:

ԱԻԵՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ, գ. 1. ուրախալի լուր, ավետիք. 2. ավետիք տալը:

ԱԻԵՏԻՔ, տեաց, տեօք. գ. 1. ուրախալի՝ բարի լուր, աւետիս. 2. բարիքի՝ պարգևի խոստում:

ԱՔԱՐ, ի, ացայ, գ. (կենդբ.) մայրեհավերի ընտանիքին պատկանող թռչուն:

Բ

ԲԱԶԱՅ, ԲԱԶԷ, ի, իցայ, գ. (կենդբ.) բազեների ընտանիքին պատկանող գիշակեր թռչուն, բազե:

ԲԱԶՄԱԿԱՆ, ի, ացայ, գ. սեղան նստող, սեղանի հրավիրված, հյուր. 2. սեղան. 3. նստարան, բազմոց. 4. խրախճանք, կոչունք:

-ԲԱԶՄԱԿԱՆ ԱՐԿԱՆԵԼ. սեղան գցել:

ԲԱԶՄԱՃԱՄՈՒԿ, ա. խիստ զարդարուն, գույնզգույն, խատուտիկ:

ԲԱԶՈՒԿ, զկի, կացայ, գ. փխբ. ուժ, զորություն:

ԲԱԶՈՒՄՈՂՈՐՄ, ա. շատ ողորմած՝ գթած:

ԲԱՂԱՐՋ, ի, իցայ կամ ացայ. ոյ, ոցայ, 1. գ. անթթխմոր հաց. 2. ա. չթթված խմորից թխած, չխմորված:

ԲԱՄԲԻՇՆ, բշան, գ. թագուհի:

ԲԱՅ, (միշտ ասել բայի հարադրությամբ), չ. թե, որ. 2. մ. արդարև, իրոք, հիրավի, իսկապես, անշուշտ. 3. (հունաբանությամբ) ասաց, ասում է:

ԲԱՅՑ, չ. 1. սակայն, 2. այլ. 3. իսկ. 4. նխդ. բացի:

ԲԱՆ, ի, իցայ, գ. 1. խոսք, 2. միտք, գաղափար, իմաստ. 3. բանականություն, խելք. 4.պատգամ, պատվիրան, հրաման, պատվեր. 5. (նաև Բանն, Բանն Աստված, Բան Հօր, Բանն Սուրբ Հոգւոյն, Բան Տեառն), (կրոն.) Հայր աստծու խոսքի մարմնացումը. Աստծու միածին որդին, Քրիստոս. 6. գործածվում է իբրև անորոշ անուն անշունչ իրերի՝ առարկաների՝ երևույթների ևն փոխարեն. 7. լեզու:

ԲԱՆ ԱՌ ԲԱՆ, մ. խոսքին խոսք, կետ առ կետ:

ԲԱՆԱԿ. ի, ացայ, գ. մարդկանց բազմություն, որ համախմբված է ճանապարհ գնալու, ուղևորվողների քարավան. 2. զորքի գունդ՝ չվի ժամանակ կամ պատերազմի դաշտում. 3. այն տեղը, որտեղ զորքը կամ ուղևորվող մարդկանց բազմությունը կանգ է առնում. զորակայան, բանակատեղ:

ԲԱՆԱԿԵԼ (իմ), եցայ, չ. իջևանել, դադար առնել հանգստանալու՝ գիշերելու համար (զորքի

կամ ժողովրդի մասին). 2. հարմար դիրք գրավել՝ ճակատամարտի համար:

ԲԱՆԱԻՈՐ, ի, աց, ա. 1. բանական, խորհող, մտածող, խոսող. 2. խելացի, գիտուն. 3. իմանալի, հոգևոր:

ԲԱՆԴԱԿԱԼ, ի, աց, ա. գ. բանտարկյալ, կալանավոր:

ԲԱՆԻԲՈՒՆ, բունք, ա. 1. խոսելու մեջ ճարտար, ճարտարախոս, հռետոր. 2. մի բանի լավ տեղյակ՝ գիտակ, հմուտ:

ԲԱՆՈԿԱՆ, ուղղելի ԲԱՆՈՒԿԱՆ, գ. հոգն. պալատական տիկիններ:

ԲԱՋԱՂԱՆՔ, նաց, գ. ցնդաբանություն, հիմար՝ անհեթեթ՝ սուտումուտ խոսքեր՝ զրույցներ:

ԲԱՌՆԱԼ, բարձի, բա՛րձ, ն. 1. վերցնել, տանել. 2. շալակել. 3. վեր բարձրացնել. 4. մեջտեղից վերացնել. 5. բարձել, վրան դնել. 6. համբերել, տանել, դիմանալ. 7. փխբ. պարզել, բացահայտել:

ԲԱՍ, ձ. հապա, բա՛:

ԲԱՐԲԱՌԵԼ, եցի և եցայ, ն. չ. 1. խոսել, ասել մի բան, 2. կանչել, ձայն տալ, բարձր գոչել, 3. գովերգել, երգել:

ԲԱՐԵՆՇԱՆ, ի, ից, ա. 1. բախտավոր, նշանավոր, հռչակավոր. 2. բարետես, գեղեցիկ:

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ ԲՐԴԵԼ. սաստիկ բարկացնել, գրգռել, բորբոքել:

ԲԱՐՁ, ի, ից, գ. 1. պատվավոր տեղ, որ թագավորները շնորհում էին ազնվականներին, նախարարներին՝ ըստ ավագության աստիճանի: 2. հոգն. ազդրեր:

ԲԱՐՁՐԱՆԱԼ, ացայ, չ. մեծամտել, ամբարտավանանալ, գոռոզանալ:

ԲԱՐՁՐԱՔԵԱՑ, ա. բարձր ոտքեր ունեցող, բարձրասրունք:

ԲԱՐՈՒՆԱԿ, ի, աց, գ. 1. խաղողի որթի երկար մասը, որ պտղաբերում է. 2. ծառի բնից կամ կոճղից բուսած ճյուղ:

ԲԱՑ, աւ, օք, ի բաց. մ. բաց տեղ, դուրս տեղ. 2. նխդ. բացի:

ԲԱՑՕԹԵԱԳ, թեգի, թեգաց, ա. մ. բաց տեղ՝ բաց երկնքի տակ գիշերող, դուրսը՝ դրսում մնացած, բացօթյա:

ԲԵԿՈՒՄՆ, կման, գ. 1. կոտրելը, կոտրվելը. 2. կոտորած, ջարդ. 3. հարված, կործանում, կորուստ. 4. լքում, սրտաբեկություն:

ԲԵՂՋԵԲՈՒՂ, ԲԷԵՂՋԵԲՈՒՂ, այ, աւ, գ. սատանայապետ, դևերի իշխան:

ԲԵՐԿՐԱԿԱՆ, ա. 1. ուրախական. 2. բերկրություն՝ ուրախություն պատճառող:

ԲԻՏ, գ. թռչունների ոտքի հետևի սուր ճանկը:

ԲԻՐ, բրի, բաց կամ ով, ովք, գ. հաստ գավազան, մահակ, ճիպոտ:

ԲՆԱԴԻՐ, դրի, բաց, գ. բանակատեղ:

ԲՆԱԿ, ի, աց, ա. բուն, բնիկ, հարազատ, իսկական:

ԲՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ. բնազդ:

ԲՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. 1. բնակվելը. 2. բնակավայր, բնակատեղ, բնակարան:

ԲՆԱՒ, ի, ից, ա. 1. բոլոր, ամեն, բովանդակ, համայն. 2. մ. բոլորովին, ամենևին, իսպառ. 3. արդարև, հիրավի, անշուշտ:

ԲՆԻՈՆ, գ. մանր դրամ. լումա:

ԲՆՈՒԹԻՒՆ, գ. 1. էություն, գոյություն, իսկություն, ով՝ ինչ՝ որպիսին լինելը. 2. էակ, արարած, զգայական առարկա, իր. 3. տարր, տարերք. 4. բնավորություն, բարք, սովորություն:

ԲՈՅԼ, բոյլք, բուլից, գ. խումբ, երամ, ջոկ, գունդ:

ԲՈՐՈՏ, ի, ից, ա. բոր ունեցող, բորով հիվանդ, ուրկոտ, քոսոտ:

ԲՈՐՈՏԵԼ (իմ), եցայ, չ. բորով հիվանդանալ, բորոտանալ, քոսոտվել:

ԲՈՒՌՆ ՀԱՐԿԱՆԵԼ. բռնել:

Գ

ԳԱՀՈՂ, ոյ, ոց, գ. որսորդական թակարդի մի տեսակ:

ԳԱՀՈՅՔ, ոյից, գ. 1. արքայական գահ. 2. թախտ, անկողին, մահճակալ. 3. պատգարակ:

ԳԱՂՏԱՇՈՒՐՋ, ա. գաղտնի շրջող՝ մանն եկող:

-ԳԱՄ ՄԻ, մ. մի անգամ, երբեմն:

ԳԱՄԱԳԻՒՏ ԼԻՆԵԼ. ելք՝ հնարք՝ միջոց գտնել (մեկին վնասելու, սպառնալու և ն), վնասել, վտանգել:

ԳԱՅԹԱԳՂԵԼ (իմ) կամ ԳԱՅԹԱԿՂԵԼ (իմ), եցայ, չ. սայթաքել. 2. փխբ. գայթակղվել, մոլորվել, սխալվել, մեղքերի մեջ ընկնել:

ԳԱՆ, ի, ից, գ. ծեծ: ԳԱՆ ՀԱՐԿԱՆԵԼ. ծեծել, ձաղկել, տանջել: ԳԱՆ ԱՐԲԵՆԱԼ. ծեծվել, գանահարվել:

ԳԱՆՁ, ու, ուց և ի, ից. գ. հարստություն, ունեցվածք. 2. գանձարան. 3. հարկ:

ԳԱՐՇԱՊԱՐ, գ. 1. ոտքի կրունկ. 2. ոտնահետք:

ԳԱՒԱՌԱԿԻՑ, կցի, ցաց, ա. գ. միևնույն գավառից, նույն գավառցի:

ԳԵԼԱՐԱՆ, ԳԵԼՈՑ, | ի, աց, գ. գործիք (մամուլ, կոճղ, փոկ, լար), որով մի բան պրկում՝ ճնշում, ճմլում են: 2. նույնպիսի գործիք՝ պատժվողին տանջելու համար:

ԳԵԼՈՒԼ, գելի, գե՛լ, . ն. պրկել. ճմլել. գալարել, տրորել:

ԳԵՀԵՆ, ի կամ ոյ, իւ, գ. անչեջ հնոց, որի մեջ մեղավորները պետք է այրվեն դժոխքում. դժոխք:

ԳԵՂԱԳՈՅՆ, ա. ավելի գեղեցիկ, գեղեցկագույն:

ԳԵՂԱՐԴՆ, դեան կամ դան, դունք, գ. փայտե կոթով պատերազմական զենք, որի ծայրին ամրացված էր տախտակ կամ եռանիստ երկաթյա տեգ. գեղարդ:

ԳԵՏԱՀԵՏԵԼ, եցի, ն. չ. գետի պես՝ գետորեն հոսեցնել՝ հոսել:

ԳԵՏՆԱՉԱՓ, ի, աց, ա. գ. հողի երեսը չափող, հողաչափ, երկրաչափ:

ԳԵՐԵԶՄԱՆԱԿՐԿԻՏ, կրկտի, տաց, ա. գերեզմանը կրկտող՝ փորող՝ բացող և մեռելի զարդերը՝ իրերը գողացող, գերեզմանի գող:

ԳԵՐԾՈՒԼ, ծի, ն. ածիլել, սափրել, մազերը կտրել:

ԳԵՐՈՒԹԻՒՆ, գ. 1. գերի լինելը. 2. գերիների խումբ՝ բազմություն, գերված մարդիկ, գերիներ:

ԳԷՇ, գիշոյ, ոց կամ ուց և ի, գ. մարդու կամ կենդանու դիակ, լեշ:

ԳԹԵԼ, եցի. չ. 1. գայթել, սայթաքել. 2. փխբ. ուղիղ ճանապարհից չեղվել, գայթակղվել, մոլորվել, սխալվել, հանցանք գործել:

ԳԼԵԼ, եցի, ն. գերակշռել, գերազանցել, հաղթահարել:

ԳԼԽՈՎԻՆ, մ. 1. հենց ինքը, ինքն էլ, ինքնին. 2. ամբողջովին

ԳՆԱՑ, ԳՆԱՑՔ, գ. գնալը, ընթացք, երթ:

ԳՈԼ, գոմ, գոս, գոյ, գոմք, գոյք, գոն, գոյր, գուցէ (պակասավոր բայ). լինել, գոյություն ունենալ:

ԳՈՅԺ ՏԱԼ. գուժել:

ԳՈՐԾԱԿԻՑ ԼԻՆԵԼ. մասնակից լինել, օգնել, աջակցել:

ԳՈՐԾԱՎԱՐ, ի, աց, գ. որևէ գործի վերակացու՝ կառավարիչ, գործակալ:

ԳՈՐԾՈՒԱԾ, ոյ, ոց, գ. հորինվածք, գործ:

ԳՈՐՇԱՊԱՀԱՆԳ, գ. ականջի օղ, գինդ և հարակից զարդեր:

ԳՈՒԲ, գբոյ կամ գբի, գ. փոս, հոր, վիհ, խորխորատ:

ԳՈՒԹ, գթոյ, ոց, գ. 1. կարեկցություն, գթություն, խղճահարություն. 2. սեր. 3. աղաչանք, պաղատանք:

ԳՈՒՆԱԿ ԳՈՒՆԱԿ. ա. գույնզգույն, պես-պես, տեսակ-տեսակ:

ԳՈՒՆԴԱԳՈՒՆԴ, ա. մ. չատ խմբերից բաղկացած, խմբերով, գնդերով:

ԳՈՒՆ ԴՆԵԼ. ջանք թափել, ջանալ:

ԳՏԱԿԱՒ, մ. ճշտիվ, ճշտությամբ, հավաստի կերպով:

ԳՐԱՍՏ, ու, ուց, գ. 1. հեծնելու, մանավանդ՝ բեռնակիր ընտանի կենդանի (ձի, ջորի, էշ). 3. ընդհանրապես՝ անասուն:

ԳՐԱՒԱԿԱՆ, ի, աց, գ. 1. այն իրը, որ գրավ է դրված, գրավ. 2. երաշխիք:

Դ

ԴԱԺԱՆ, ա. դառնահամ, դառն:

ԴԱԼԱԿԵԼ (իմ) եցայ, չ. աշխատել, ճգնել:

ԴԱԿՈՒ, ուի, ուաց. գ. կացին, տապար:

ԴԱՀԱՆԱԿ, գ. չափյուղայի կամ զմրուխտի նման թանկագին քար:

ԴԱՆԴԱՆԱՒԱՆԴ, ի, աց կամ ից, գ. 1. սանձ, երասանակ. 2. բերանի կապ, ցոկակապ:

ԴԱՇՏԱՆԻԿ, ա. դաշտան ունեցող:

ԴԱՐԱՆԱՒԱՆԴՔ կամ ԴԱՐԱՒԱՆԴՔ, գ. առաստաղ:

ԴԱՐՁ ԱՌՆԵԼ. վերադառնալ:

ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼ, ձուցի, ձո՛, պբ. 1. վերադարձնել, 2. ուղիղ ճանապարհի վրա բերել. 3.

(կրոն.) հավատի բերել, որևէ դավանանքի հետևորդ դարձնել:
ԴԱՐՄԱՆ, ոյ, ոց և ի, ից, գ. 1. ճար, հնարք. 2. բուժամիջոց, դեղ. 3. խնամք, տածում. 4. կերակուր, ուտելիք, սնունդ:
ԴԱՐՄԱՆԵԼ, եցի, ն. 1. խնամք տանել, հոգալ, խնամարկել, անհրաժեշտ խնամք՝ հոգատարություն ցույց տալ, տածել. 2. մշակել:
ԴԴՄԵՆԻ, նւոյ, գ. դդում (բույսը):
ԴԵՀԱՊԵՏ, գ. կուսակալ, երկրի գավառի պետ՝ իշխան:
ԴԵՆ, ի, ից, գ. 1. կրոն, հավատ, 2. աղանդ:
ԴԵՍՊԱԿ, ի, աց, գ. ծածկությամբ պատգարակ, որ առջևի ու հետևի ձողերից բռնած կամ լծված տանում էին:
ԴԷՊ ԼԻՆԵԼ. դեպք լինել, պատահել:
ԴԷՏ, դիտի, տաց. գ. դիտող, տեսուչ, վերահսկիչ:
ԴԷՏԱԿՆ ՈՒՆԵԼ (իմ), կալայ. ակնդետ նայել, ուշի-ուշով դիտել, սպասել:
ԴԺՄԻՏ, ա. չարամիտ:
ԴԺՆԴԱԿՈՒԹԻՒՆ, գ. 1. դժնդակ լինելը, դաժանություն, սասակություն, խստություն. 3. չարիք, անզգամություն:
ԴԻՄԱԲԱՆԵԼ, եցի, ն. չ. հակաճառել, առարկել:
ԴԻՊՈՂՈՒԹԻՒՆ, գ. 1. պատշաճություն, հարմարություն. 2. նշանին դիպցնելու հաջողակություն՝ հմտություն, ճիշտ նշանառություն:
ԴԻՒԱԲԱԽ, ա. դիվահար, այսահար, խելագար, մոլեգին, կատաղի:
ԴԻՒԱՀԱՐԵԼ, եցի և եցայ, չ. դիվահար դառնալ, դիվահարվել, կատաղել, մոլեգնել, խելագարվել:
ԴԻՒԱՑԱՄՈԼ, ա. դիվամոլ, դևերից կատաղած, դիվային:
ԴԻՒՐԱՀԱՒԱՆ, ի, ից, ա. 1. հեշտությամբ հավանություն տվող՝ համաձայնող կամ հասկացող. 2. հլու, պարզամիտ, բարեմիտ:
ԴԻՔ, դից, դիօք, գ. հեթանոսական աստվածներ, չաստվածներ:
ԴՆԵԼ ԱՌԱՋԻ. 1. մտադրվել, աչքի առաջ ունենալ. 2. ձեռնարկել, սկսել, ձեռնամուխ լինել:

ԴՈՒՌՆ, դրան, դրունք, դրանց, գ. 1. դուռ. 2. թագավորական պալատ, արքունիք:
ԴՊԻՐ, դպրի, բաց, գ. 1. գրագետ, քարտուղար, ատենադպիր, պաշտոնական թղթերը կարդացող պաշտոնյա. 2. հրեաների մեջ՝ օրենսգետ. 3. եկեղեցական ստորին պաշտոնյա, ընթերցող, երգիչ: ԴՍՐՈՎԵԼ, եցի կամ ԴՐՍՈՎԵԼ, եցի, ն. պարսավել, հանդիմանել, նախատել:
ԴՍՐՈՎՈՒԹԻՒՆ, գ. պարսավանք, նախատինք, հանդիմանություն:
ԴՐԱԽՏ, ի, ից կամ աց, գ. 1. պտղատու ծառերի և ծաղիկների այգի, պարտեզ, բուրաստան. 2. եղեմ. 3. երկնային արքայություն:
ԴՐՕՇԵԼ, եցի, ն. քանդակել, մանավանդ՝ կուռքերի արձաններ:

Ե

ԵԶՆԱՆՈՑ, գ. եղների գոմ:
ԵԹԷ, չ. 1. եթե. 2. թե:
ԵԹԷ ՈՉ. բայց միայն, բայց, միայն:
ԵԼԱՆԵԼ Ի ԳԼՈՒԽ. իրականանալ, գլուխ գալ:
ԵԼ ԵՒ ՄՈՒՏ, ելի և մտի, գ. 1. ելնել մտնելը, ներս ու դուրս անելը, ելումուտ. 2. փխբ. անելիքը, ինչ անելը:
ԵԿ, ի, աց, գ. եկվոր, դրսեցի, պանդուխտ, գաղթական:
ԵԿԵՂԵՑԻ, ցւոյ, ցեաց, գ. 1. ժողովուրդ. 2. մարդկանց հավաքույթ. 3. մարդկանց բազմություն՝ միացած մի կրոնով. 4. շինություն, որտեղ հավաքվում են կրոնական-պաշտամունքային արարողություններ կատարելու. ժամ, տաճար:
ԵՂԲՕՐՈՐԴԻ, դւոյ, ւոց կամ եաց, գ. 1. եղբոր որդի՝ տղա. 2. լայնաբար՝ հորեղբորորդի, քեռորդի. 3. փխբ. մտերիմ, սիրելի:
ԵՂԷԳՆ, եղեգան, գունք, գանց, գ. 1. (բսբ.) եղեգ, չամբ. 2. եղեգնյա գրիչ:
ԵՂԷԳՆԱՍԵՐ, ա. եղեգի ցեղին պատկանող, կամ եղեգ սերող՝ բուսցնող:
ԵՂԾԱՆԵԼ, եղծի, ե՛ղծ, ն. եղծել, փչացնել, խաթարել, ապականել, ավերել:

ԵՂԾՈՒԱԾ, ոյ, ոց, գ. եղծուա, ապականություն:
ԵՂՆ, եղին, եղինք, եղանց, գ. (կենդբ.) եղնիկ, էգ եղջերու:
ԵՂՈՒԿ, 1. ձ. ավա՛ղ, ափսո՛ս, վա՛յ, վա՛խ. 2. խեղճ, թշվառ, ողորմելի, խղճալի:
ԵՌԱՆԴՆ, դեան, դեամբ, յեռանդան, դանէ, զեռանդս, գ. 1. եռալը, եփվելը. 2. որևէ բան անելու ներքին բուռն ձգտում, ավյուն. 3. ա. եռանդով լի, եռանդուն:
ԵՌԱՆԴՆԱՍԷՐ, ա. փութեռանդ, ջերմեռանդ:
ԵՐԱԳ, ի, երագք կամ երագունք, ա. մ. արագ, շուտ, շուտով:
ԵՐԱԳԱԶ, ի, ից, հոգն. երագազանք, գ. հյուսված ցանց՝ երեներ ու գազաններ որսալու համար, թակարդ:
ԵՐԱԳԱՀԱԼՈՒԹԻՒՆ, գ. շուտ՝ շուտով մարսելը:
ԵՐԱԳԱՀԱՍ, ա. արագահաս, արագորեն հասնող, շուտ վրա հասնող:
ԵՐԱՆԵԼ, եցի, ն. երանի տալ, երջանիկ՝ բարեբախտ համարել, երանելի կոչել:
ԵՐԲԵՔ կամ ԵՐԲԷՔ, մ. երբեմն:
ԵՐԳԵՑԻԿ, ցկի, կաց, ա. գ. 1. երգիչ՝ տղամարդ կամ կին:
ԵՐԴ, ոյ, ից, գ. երդիկ. 2. տուն, ընտանիք:
ԵՐԴՄՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. սուտ կամ ավելորդ տեղը երդվելը:
ԵՐԵՔՏԱՍԱՆ, ի, ից, թ. տասներեք:
ԵՐԷ, ոյ, ոց, գ. որսի խոտաճարակ կենդանի:
ԵՐԹԵՒԵԿ, ի, աց, ա. գ. 1. գնացող-եկող, երթևեկող. 2. գնալգալը, երթևեկություն, անցուդարձ:
ԵՐԻԶԱՊԻՆԴ, պնդի, դաց, ա. 1. երիզով պինդ կապած՝ փաթթած. 2. փաթ տալով պինդ կապող (երիզ):
ԵՐԻԹԱՑԵԱԼ, ա. 1. հյուծված, նիհարացած, հալումաշ եղած. 2. գզգզված, կեղտոտ:
ԵՐԻՑԱԳՈՅՆ, գունի, ից կամ աց, ա. . ավելի երեց՝ ավագ, տարիքով ավելի մեծ. 2. ժամանակով ավելի հին, հնագույն, կանխագույն, առաջագույն. 3. ամենավերին, ամենաբարձր, գերագույն:

ԵՐԿԱՅՆԱՄԻՏ, մտի, տաց, ա. 1. համբերատար, հեզ, բարեմիտ. 2. լայնախոհ, մեծահոգի:
ԵՐԿԵՂ, ի, ից, գ. երկյուղ:
ԵՐԿԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, եցո՛, պբ. երկյուղ՝ ահ ազդել, երկյուղով համակել, զարհուրեցնել, վախեցնել:
ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵԼ, ԵՐԿԻՐՊԱԳԱՆԵԼ | պագի, պա՛գ, ն. չ. գետինը, հողը համբուրել ի նշան խոնարհության և հարգանքի, երկրպագել:
ԵՐԿՄԱՏՆԻ, ա. 1. երկու մատ՝ ատամ ունեցող. 2. գ. երկճղանի՝ երկժանի բրիչ:
ԵՐԿՆՉԵԼ (իմ), կեայ, կի՛ր, կուցեալ, չ. երկյուղ կրել, վախենալ:
ԵՐԿՈՏԱՍԱՆ, ի, ից, թ. տասներկու:
ԵՐԿՈՒՈՐԻ, ըւոյ, ըիք, ըեաց, ա. գ. 1. երկվորյակ. 2. երկվորյակ ծնող:
ԵՐԿՐԱՒՈՐ, ի, աց, ա. 1. երկրային, երկրի վրա գտնվող՝ գոյություն ունեցող. 2. հողեղեն:
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ, ի, աց, ա. առաջինին հաջորդող (ըստ կարգի՝ պատվի):
ԵՐԿՐՈՐԴԵԼ, եցի, ն. կրկնել:

ԵՐԿՐՊԱԳՈՒ, ի, աց, ա. մեկին՝ մի բան երկրպագող՝ պաշտող:
ԵՒՍ ՔԱՆ ԶԵՒՍ, մ. ավելի ու ավելի:
ԵՕԹՆԱՍՏԵՂԵԱՆ, ա. յոթ աստղ պարունակող, բազմալույս, լուսեղեն:
ԵՕԹՆԱՐՓԵԱՆ, ա. 1. յոթ լույսով լցված՝ պայծառացած, յոթնալույս. 2. փխբ. (կրոն.) Ս. Հոգու յոթ շնորհքովը:

Զ

ԶԱՀԻ ՀԱՐԿԱՆԵԼ (իմ), բայ, չ. ահաբեկվել, սարսափահար լինել, զարհուրել:
ԶԱՆԱԶԱՆ, ի, ից, ա. 1. տեսակտեսակ, պես-պես. 2. տարբեր, ոչ նման. 3. (հունական ոճով) տարբերվող, աչքի ընկնող, գերազանց, աննման:՝
ԶԱՆԳԱՆԵԼ, եցի, ն. 1. խմորը հունցել՝ շաղախել. 2. խառնել, միավորել, միացնել:
ԶԱՆՑ ԱՌՆԵԼ. մոտովն անցնել՝ անուշադիր թողնելով մի բան, թողնել անցնել, անուշադրության մատնել, անտեսել:
ԶԱՐԹՈՒՑԱՆԵԼ, թուցի, թո՛, պբ. զարթեցնել, արթնացնել:

ԶԲԱՂՈՒՄՆ, ղման, մունք, մանց, գ. 1. զբաղմունք. 2. հոգս:
ԶԲՕՍԱՆՔ, նաց, գ. 1. զվարճություն. 2. զբուցելով ման գալը. 3. զբաղմունք, մի բանի վրա ժամանակ կորցնելը՝ վատնելը, դատարկաբանություն, հիմարություն. 4. տատանում, ծփանք, ալեկոծություն (ջրերի):
ԶԳԱՍՏ, ի, ից, ա. 1. ուշքը գլխին, զգոն, արթուն, աչալուրջ. 3. խելքը գլխին, խոհեմ, ողջամիտ. 3. պարկեշտ, ամոթխած, մաքրակյաց:
ԶԳԱՍՏՈՒԹՅՈՒՆ, գ. 1. պարկեշտություն, համեստություն, ողջախոհություն, չափավորություն, մաքուր կենցաղ՝ վարքուբարք. 2. արթնություն, աչալրջություն, զգուշավորություն:
ԶԳԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. 1. հագցնել, զգեստավորել. 2. փխբ. զարդարել, զուգել:
ԶԴԷՄ ՈՒՆԵԼ. դեմն առնել:
ԶԵԼ ԵՒ ԶՄՈՒՏ. անելիքը:
ԶԵՂՋ ԵՒ ԱՊԱՇԱՒ ԼԻՆԵԼ. զղջալ ու ցավել:
ԶԵՄԵՂԵԼ, եցի, ն. վտանգից ազատել՝ ազատ պահել:
ԶԵՐԾՈՒՑԱՆԵԼ, ծուցի, ծո՛, պբ. ազատել, փրկել:
ԶԶՈՒԵԼ, եցի, ն. անարգել, խայտառակել, անպատվել:
Զի՞[1], դ. ի՞նչ, ինչո՞ւ. ինչպե՞ս, ի՞նչ պատճառով:
Զի[2], չ. 1. որ, թե, եթե. 2. որպեսզի. 3. որովհետև, 4. դ. ով, որը:
ԶԻԱ՞ՐԴ, եղբ. 1. ինչպե՞ս. 2. ինչո՞ւ. 3. զիարդ. ինչպես որ:
ԶԻՆԱՒՈՐ, ի, աց. գ. զինվոր:
ԶԻ՞ՆՉ, դ. 1. ի՞նչ, ի՞նչը, ի՞նչ բան. 2. ինչո՞ւ, ի՞նչպես:
ԶԻՆՉ, դ. ինչը, ինչ որ, որը որ:
ԶԻՋՈՒՑԱՆԵԼ, ջուցի, ջո՛, պբ. իջեցնել, ցածրացնել, մեղմացնել:
ԶԿՆԻ, 1. նխդ. հետևից, ետև. 2. մ. հետո:
-ԶԿՆԻ ԼԻՆԵԼ (իմ). հետամուտ լինել, հետապնդել:
ԶՀԵՏ, նխդ. 1. հետքով, հետևից. 2. հետ, հետը, միասին. 3. մ. հետո:
- ԶՀԵՏ ԳՆԱԼ՝ ԳԱԼ. հետևից գնալ, հետևել:
- ԶՀԵՏ ՄՏԱՆԵԼ. հետամուտ լինել, հետապնդել:
ԶՂՋԱՆԱԼ, ացայ, չ. զղջալ, ափսոսալ, ցավ զգալ մի բան

արած կամ չարած լինելու համար:
ԶՄՈՒՌՍ, զմռսոյ կամ սի, սաց, գ. 1. անուշահոտ դառնահամ խեժ, որ ծորում է զմռնենուց. 2. (բսբ.) զմռնենի:
ԶՈՒԱՐԱԿ, ի, աց, գ. արջառ, փոքր եզ:
ԶՈՒԱՐԹՈՒՆ, թնոյ, ոց, ա. 1. զվարթ, կայտառ, ժիր. 2. (սովորաբար հոգն. գործածությամբ) հրեշտակներ, արթուն հսկողներ:
ԶՈՒԳԱԿԱՆ, ի, աց, ա. զույգ կազմող, զուգահավասար, համահավասար, նման:
ԶՏԵՂԻ ԿԱԼՈՒԼ՝ ԿԱԼՆՈՒԼ. մնալ:
ԶՐԱՀԵԼ, եցի, ն. 1. զրահով պատել՝ ամրացնել, զրահավորել. 2. փխբ. սիրտ տալ, սրտապնդել:
ԶՐԱՀԵՂԵՂ, ա. իզուր՝ սաստիկ հեղեղված, հորդացած:
ԶՓՈՐՁ ԱՌՆՈՒԼ. փորձու-թյան ենթարկվել:
ԶՕՐՀԱՆԱՊԱԶ, մ. ամեն օր, միշտ, չարունակ. 2. ամբողջ օրը:

Է

Է, ԷԻ, մանավանդ՝ ԷՆ կամ ԷՆՆ, ԷԻՆ, ԶԷՆ, ՅԷԷՆ, գ. 1. նա, որ կա, գոյություն ունեցող, էակ, արարած. 2. Աստված, ինքնագոյակ, Տէր:
ԷՆԿՈՄԻԱ, գ. ներբող, գովեստի՝ փառաբանության խոսք:
ԷՈՒԹՅՈՒՆ, . գ. գոյացություն, բնություն. 2. ինքնագոյություն, աստվածություն, աստված:
Է՞Ր, Է՞Ր ԱՂԱԳԱՒ, Է՞Ր ՍԱԿՍ, Է՞Ր ՎԱՍՆ կամ ՎԱՍՆ Է՞Ր, դ. մ. ինչի՞, ինչո՞ւ, ինչի՞ համար. ինչի՞ց, ի՞նչ պատճառով:
ԷՐԷ, տե՛ս ԵՐԷ

Ը

ԸՂՁԱԿԵՐՏ, ա. իղձ ստեղծող՝ հարուցող, ըղձալի, փափագելի. 2. իղձով՝ փափագով չինված:
ԸՄԲԵՐԱՆԵԼ, եցի, ն. բերանը փակել տալ, ստիպել լռել, պապանձեցնել, լռեցնել:
ԸՆԴ ԳԻՆԻ ՄՏԱՆԵԼ. գինովնալ:
ԸՆԴ ԳՐՈՎ ԱՐԿԱՆԵԼ. գրել, գրի առնել:
ԸՆԴԵԼՈՒԶԱՆԵԼ, լուզի, լո՛, զեալ, պբ. 1. իրար հագցնել, կցել, չարել, հյուսել, մեկը մյուսի հետ միացնել. 2. դուրս հանել, վեր հանել, տակից հանել:

ԸՆԴԴԷՄ կամ ԸՆԴ ԴԷՄ, նխդ. 1. հակառակ, ներհակ, դեմ. 2. - դիմաց, հանդիման, դեմուդեմ.
ԸՆԴԴԷՄ ԼԻՆԵԼ լինել (իմ). ներկայանալ, հանդիպել:
ԸՆԴԷ՞Ր, եղբ. ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչի՞ համար:
ԸՆԴՀԱՆՈՒՐ, նրի, մ. ա. 1. ամեն տեղ, ամեն կողմ, ամենուրեք. 2. երկու կամ ավելի միավորներին՝ առարկաներին՝ անձերին հատուկ՝ բնորոշ:
ԸՆԴ ՄԻ ԲԵՐԱՆ. միաբերան:
ԸՆԴ ՄԻՏՍ ՀԱՐԿԱՆԵԼ(իմ). մտքովն անցնել, մտքում տեղավորել, մտքին հասու լինել:
ԸՆԴՈՏԻՆ կամ ԸՆՏՈՏԻՆ, ծնի, ծնաց, ա. գ. 1. մեկի տանը ծնված և մեծացած, բայց տանտիրոջը ոչ արյունակից. ստրուկի, ծառայի կամ աղախնու զավակ. 2. գերդաստանի հետ միասին ապրող կողմնակի, անհարազատ անձ՝ ստրուկ, ծառա, աղախին:
ԸՆԴՈՒՆԱՅՆԱԽՕՍ, ա. դատարկ տեղը խոսված, դատարկաբան, ափեղցփեղ, հիմարական:
ԸՆԴ ՎԱՅՐ ՀԱՐԿԱՆԵԼ. վայր գցել:

ԸՆԹԱՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. ընթանալ տալ, առաջ վարել, քայլեցնել:
ԸՆԾԱՅԱԻՈՐ, ի, աց, ա. որ ընծա է բերել կամ մատուցել, որ ընծա ունի մատուցելու:
ԸՆԿԱԼՈՒԼ, ընկալայ, ընկա՛լ, լարո՛ւք կամ լա՛յք, ընկալեալ, ն. ընդունել, իր մոտ առնել:
ԸՆԿԵՐ, ԸՆԳԵՐ, ի, աց, գ. 1. մտերիմ, սրտակից, մերձավոր, բարեկամ. 2. գործակից. 3. համախոհ. 4. մեկի հետ զույգ կազմող, զուգակից. 5. համանման բան:
ԸՆԿԵՑԻԿ, ա. գցած, դուրս գցած, արհամարհված, անպիտան, անարգ, չնչին:
ԸՆՁԱՆԱԼ, ացայ, չ. մի բան լինել, մի էություն՝ գոյացություն դառնալ, էանալ:
ԸՆՏԱՆԻ ԼԻՆԵԼ(իմ). ընտելանալ:
ԸՍՏԳՏԱՆԵԼ, գտի, գտեա՛ կամ գի՛ւտ, ն. 1. հանցանքի մեջ բռնել մեկին, հանցավոր համարել. 2. մեղադրել, պախարակել, դատապարտել:

Թ

ԹԱԹԱԻԵԼ, եցի, ն. ընկղմել, մխրճել. թաթախել, շաղախել, թրջել, 2. կեղտոտել, ապականել:
ԹԱԹՈՒԼ, գ. կենդանիների առջևի ոտքերի թաթը:
ԹԱԽԱՆՁԱԼԻՑ, ա. 1. տաղտկալի, ձանձրալի. 2. տխրական:
ԹԱԽԱՆՁԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. թախանձել:
ԹԱՆՁՐ, գ. (կենդբ.) հավալուսնների ընտանիքին պատկանող մեծ թռչուն, թոնձ:
ԹԱՆՁՐԱԹԱՂԱՆԹ, ա. թանձր՝ հաստ թաղանթ ունեցող, հաստակաշի, գեր:
ԹԱՆՁՐԱՆԱԼ, ացայ, չ. մարմնանալ:
ԹԱՓԵԼ, եցի, ն. 1. թափել, դատարկել, պարպել. 2. խլել, կորզել, դուրս քաշել, ուժով քաշելով պոկել տեղից. 3. ազատել, փրկել:
ԹԵԹԵՒՈՒԹԻՒՆ, 1. թեթև լինելը. 2. անարգանք, անարգվելը:
ԹԵՐԱՔԱՄԵԱԼ, ա. կիսով չափ պատյանի մեջ խրված, պատյանից կիսով չափ հանված, կիսամերկ:

ԹԵՒԱԿՈՒԵԼ, եցի և եցայ, չ. 1. փխբ. ջանալ, ջանք գործադրել, ձգտել մի բանի. 2. զբաղվել մի բանով, կրթվել, վարժվել:
ԹԵՒԱՀԱՆԵԼ, չ. թևերը հանել՝ բացել՝ տարածել՝ լողալ (ձկների մասին):
ԹԻԶ, թզի, թզաւ, գ. երկարության չափ, որ հավասար է բթամատի և ցուցամատի բացվածքի հեռավորությանը:
ԹԻՐԵԼ, եցի ն. ծռել, բուն ուղղությունից շեղել, մոլորեցնել, սխալեցնել:
ԹԼՓԱՏԵԼ, եցի, ն. թլիփը՝ առնանդամի ծայրի շուրջբոլոր մորթը կտրել:
ԹՇՆԱՄԱՆԵԼ, եցի, ն. թշնամաբար անարգել, նախատել, անպատվել, հայհոյել:
ԹՇՆԱՄԱՆՍ ԴՆԵԼ. անարգել:
ԹՇՆԱՄԱՆՍ ՅԱՃԱԽԵԼ. նախատել, անարգել:
ԹՇՆԱՄԱՆՔ, նաց, գ. 1. նախատինք, անարգանքի՝ նախատական խոսքեր. 2. վիրավորանք, արհամարհանք:
ԹՇՆԱՄԱՆԻՉ, ա. թշնամանք հասցնող, նախատող, անարգող, վիրավորող:

ԹՈՂ. 1. հրմ. եղ. թողուլ-ի. 2. նխդ. (հայցական խնդրով) բացի, չհաշված, մի կողմ թողնելով:

Ժ

ԺԱՄԱՆ, ա. ժամանող, ժամանակին՝ շուտ հասնող:

ԺԱՄԱՆԱԿԵԼ, եցի, ն. ժամանակ դնել՝ նշանակել, ժամադիր լինել:

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ. գ. 1. ժառանգ լինելը, ժառանգի իրավունքը. 2. երկիր՝ կալվածք, որ տրված է մեկին սերնդեսերունդ բնակվելու համար:

ԺՈՒԺԱԼ, ացի, չ. 1. դիմանալու՝ կրելու ներքին ուժ ունենալ, տոկալ, համբերել. 2. ինքն իրեն զսպել, դիմադրել մի բանի:

ԺՊՐՀԵԼ(իմ), եցայ, չ. հանդգնել, համարձակվել:

ԺՏԵԼ(իմ), եցայ, չ. 1. իշխել, համարձակվել, հանդգնել. 2. լրբանալ, անպատկառություն՝ անամոթություն անել:

ԺՐԱՆԱԼ, ացայ, չ. ժիր՝, արի՝ կտրիճ դառնալ, արիանալ, զորանալ. 2. դիմանալ, տոկալ:

Ի

Ի ԲԱՑԵԱՑ ԱՌՆԵԼ(իմ), հեռանալ:

Ի ԲԱՑ ԵԼԱՆԵԼ, հեռանալ:

ԻԲՐ, 1. նխդ. իբրև, որպես, նման, պես. 2. չ. մ. ինչպես, որպես, ըստ որում. 3. եղբ. ե՞րբ, ինչպե՞ս, ի՞նչ կերպով, ի՞նչ պատճառով, ինչո՞ւ. 4. մ. երբ, մինչդեռ. 5. չ. իբրև թե՝ որպես թե, ասես թե. 6. (հունաբանությամբ) որպեսզի, որ:

ԻԲՐՈՒ, չ. քանի որ, որովհետև:

Ի ԳԱՐ ՀԱՑԵԼ. խեթ՝ ծուռ նայել, ծուռ աչքով նայել:

Ի ԳԼՈՒԽ ՀԱՆԵԼ. կատարել, իրագործել:

ԻԳՈՒԹԻՒՆ, գ. 1. էգի հատկություն, կանացի բարք, կանացիություն. 2. իգանալը, էգի դեր կատարելը:

Ի ԴԱՐՁ ԱՆԵԼ. դարձի բերել:

Ի ԹԻՒ ԱՆԿԱՆԵԼ. հաշվվել:

Ի ԽՈՅԶ ԵՒ Ի ԽՆԴԻՐ ԱՆԿԱՆԵԼ. քննություն և հարցուփորձ անել:

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՄՏԱՆԵԼ. խորհրդի նստել, խորհրդակեցել:

Ի ՀԱՄԲՈՅՐ ԱԾԵԼ. ընտանեցնել, սովորեցնել:

Ի ՀՐԱԺԵՇՏԻ ԿԱՑՈՒՑԱՆԵԼ. գնաք բարով ասել, հրաժեշտ տալ:

Ի ՁԵՌՆ. ձեռքով, միջոցով:

ԻՄԱՆԱԼԻ, լւոյ, լեաց, ա. 1. որ միայն մտքով կարելի է իմանալ՝ ըմբռնել, աննյութական, հոգեղեն. 2. իմացող, ըմբռնող, մտավոր. 3. գ. հոգեղեն էակ, հրեշտակ:

ԻՄԱՍՏԱՀԱՑԵԱՑ. ա. իմաստությամբ նայող՝ քննող, խոհական:

ԻՄԱՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. իմանալ տալ, հասկացնել:

Ի ՄԷՋ ԱՌՆԵԼ. շրջապատել:

ԻՄՆ, իրիք, իմիք, յիմեմնէ, դ. 1. մի, որևէ, ինչ-որ. 2. ինչ-որ բան, որևէ բան: ԻՄՆ ԻՄՆ. պես-պես, զանազան, մի քանի:

Ի ՆԵՐՔՍ, մ. 1. ներս, դեպի ներս. 2. ներսը, ներսում. 3. դեպի խորքը:

ԻՆԾ, ընծու, գ. (կենդբ). հովազ:

ԻՆՁԷՆ, դ. մ. ես ինքս, հենց ես, անձամբ:

ԻՆՁ, դ. 1. մի, որևէ, ինչ-որ. 2. մի բան, որևէ բան. 3. մի քանի. 4. որպես թարգմատար՝ հատկապես հարցական, ժխտական և թեական (պայմանական) նախադասություններում՝ արտահայտելով անորոշություն կամ սաստկացնելով, մեղմացնելով խոսքի իմաստը: Այս դեպքում կամ չի թարգմանվում, կամ թարգմանվում է ինչ-որ, որևէ ձևով, կերպով, երբեք, բոլորովին, ամենևին, բնավ բառերով:

ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. ինքնին՝ իր ձեռքով գործելը, սեփական գործունեություն, անձնական ջանք՝ աշխատանք:

ԻՆՔՆԱՆՈՒՆ, ա. ինքն իր հատուկ անունը ունեցող:

ԻՆՔՆԻՆ, մ. 1. ինքն իրեն, առանց կողմնակի միջամտության. 2. գործածվում է (առանձին կամ իսկ բառի հետ) անձնական, ցուցական դերանունների և դոյականների հետ սաստկական նշանակությամբ՝ հենց ես՝ ես ինքս, հենց դու՝ դու ինքդ, թաթագավորն ինքը:

ԻՇԱՎԱՅՐԻ, գ. վայրի էշ, ցիռ:

ԻՇԱՎԱՐ, ա. գ. էշ վարող՝ քշող, իշապան:

ԻՇԽԱՆԱԿԻՆ, կնոջ, կնաւ, գ. իշխանի կին, իշխանուհի:

ԻՇԽԵԼ, եցի, չ. 1. իշխան լինել, իշխանությունը վարել. 2. տիրել. 3. համարձակվել, կարողանալ, իրավունք ունենալ:

Ի ՉԱՓ ՀԱՍԵԱԼ. չափահաս դարձած:
ԻՋՈՒՑԱՆԵԼ, ուցի, իջո՛, պբ. իջեցնել, բարձր տեղից ցած բերել:
Ի ՍՊԱՍ. օգտագործման՝ գործածության համար:
Ի ՎԱՂԻՒ ԱՆԴՐ. մ. հաջորդ՝ մյուս օրը:
Ի ՎԱՅՐ, մ. ներքև, դեպի ցած, վար:
Ի ՎԵՐԱՅ, նխդ. 1. վրայ, 2. - համար. պատճառով. 3. մոտ, շուրջ. 4. մասին:
Ի ՎԵՐ ԱՌՆՈՒԼ. վերցնել:
Ի ՎԵՐ ԳՆԱԼ. բացահայտվել, հայտնի դառնալ, պարզվել:
Ի ՎՍԵՐ ԵԿԵԱԼ. հանդգնաբար կյանքը վտանգի ենթարկած՝ ենթարկելով, մահը աչքն առած:
Ի ՏՈՒԷ, մ. ցերեկը:
ԻՐ, ի, աց, գ. դեպք, դիպված, իրողություն:
ԻՐԱՋԳԱԾ ԼԻՆԵԼ(իմ). իրազեկ դառնալ, տեղեկանալ:
ԻՐԱՒ, մ. 1. իրոք, արդարև, իսկապես. 2. ա. արդար, իրավացի, ճշմարիտ, ուղիղ:
ԻՐԱՒՈՒՆՍ ԱՌՆԵԼ. 1. մեկի դատը պաշտպանել, արդարությամբ դատել, արդարացնել. 2. վրեժ առնել՝ լուծել:
ԻԻԻՔ, իմն, ինչ դերանունների գործ. հոլովը. մի բանով, որևէ բանով:
ԻՒՂ, եւղ, ոյ, ոց. գ. 1. յուղ, ձեթ. 2. կարագ. 3. մեռոն. 4. անուշահոտ օծանելիք:

Լ

ԼԱՒԱՀԱՅԵԱՑ, եցի, ցաց, ա. լավ՝ քաղցր հայացք ունեցող, բարեմիտ, աննախանձ:
ԼԵՌՆՈՏՆ. ոտին, ոտամբ. գ. լեռան ստորոտ:
ԼԻԶՈՒԼ, լիզի, ն. 1. լեզվով սրբել՝ մաքրել, 2. լեզուն քսելով ուտել որևէ բան. 3. լիզել. 4. փխբ. լափել, սպառել, ոչնչացնել:
ԼԻՆԵԼ ՅԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ. ամայանալ, դատարկվել:
ԼՆՈՒԼ, լցի, լի՛ց, լցեալ. ն. 1. լցնել. 2. լրացնել, ավարտել. 3. լիացնել, հագեցնել. 4. չենացնել:
ԼՈՒԱԼԻ, գ. բաղնիք:
ԼՈՒԱՑՔ, գ. լվանալը՝ լվացվելը. 2. մկրտություն. 3. բաղնիք:

ԼՈՒԾԱՆԵԼ, լուծի, լո՛յծ, ն. 1. արձակել, քանդել. 2. հերքել, մերժել. 3. հալել:
ԼՈՒՂԱԿ, ի, աց, գ. ջրի մեջ ապրող՝ ջրային կենդանի, մասնավորապես՝ ձուկ:
ԼՈՒՄԱՑ, ի, աց, գ. մանր դրամ՝ դանգի մեկ քառորդի արժողությամբ:
ԼՈՒՑԱՆԵԼ, լուցի, լո՛յց, ն. վառել, այրել:
ԼՔԱՆԵԼ(իմ), լքայ, կ. չ. լքվել, թուլանալ, ընկճվել, վհատվել, անհույս լինել:

Խ

ԽԱԲԵԼ, եցի, ն. դիտավորությամբ սուտ խոսքով կամ գործով ուրիշին մոլորության մեջ գցել, պատրել. 2. մի բան ձևացնելով կամ ձևանալով թյուրիմացության մեջ գցել՝ մոլորեցնել, խաբեություն անել, կեղծել. 3. հրապուրել:
ԽԱԾԻ, ծւոյ, ծեաց, գ. թռչունների կտնառք, քուջ:
ԽԱՂԱԼ, ացի, ղա՛, 1. պարել. 2. ծաղրել, ձեռք առնել, ծաղրանքի առարկա դարձնել. 3. շարժվել, ընթանալ:
ԽԱՂԱՂԱԿԱՆ, ի, աց, ա. 1. խաղաղ, հանգիստ, հանդարտ, անխռով, հաշտ.
2. խաղաղասեր, հեզ. 3. ա. գ. հաշտության զոհ, ողջակեզ:
ԽԱՂԱՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. 1. տեղից տեղ շարժել, գնալ տալ, առաջ քշել, մի տեղից ուրիշ տեղ փոխադրել, գաղթեցնել. 2. հոսեցնել (ջուր):
ԽԱՆԳԱՐԵԼ, եցի, ն. խախտել, եղծել, ավերել, քանդել, ապականել. 2. խաթարել, աղավաղել, խեղաթյուրել, փչացնել:
ԽԱՆԴԱԿԱԹ, ա. 1. խանդով՝ գորովով լի, գորովալից. 2. մ. մեծ կարոտանքով, կարոտագին:
ԽԱՆՏԱԾՈՒԹԻՒՆ, գ. նախանձ:
ԽԱՉԱՀԱՆՈՒ, նուի, ա. խաչը հանող, Քրիստոսին խաչող (հրեաների մասին):
ԽԱՌՆԱՂԱՆՃ, ի, ից, ա. խառնիխուռն, անկարգ:
ԽԱՌՆՔ, նից, գ. անասունների զուգավորվելու շրջանը, զուգավորություն:
ԽԱՐԲԱԼԵԼ, եցի, ն. մաղել:
ԽԱՒԱՐԱՅԻՆ, յնոյ, ոց, ա. 1. խավարին հատուկ, գիշերային,

մթին. 2. փխբ. չար, մոլար, մեղանչական:

ԽԵԼԱՄՈՒՏ ԱՌՆԵԼ. սովորեցնել, տեղեկացնել:

ԽԵԼԱՄՏԵԼ, եցի, չ. խելամուտ լինել, լավ հասկանալ, ըմբռնել, իմանալ:

ԽԵԼՔ, օք, լաց, գ. 1. ուղեղ. 2. միտք, բանականություն. 3. կամրջի գլուխը:

ԽԵՂԴ, ԽԻՂԴ | ի, ից, գ. խեղդելը, խեղդվելը. 2. պարան՝ չվան, որով խեղդվում են:

ԽԵՃԵՊ, ոյ, ոց, գ. ձվի կեղև:

ԽԻՆՁ, խինծ, խնձի, գ. գոգ, ծոց, խորշ, անկյուն:

ԽԼԱՑ, գ. 1. ընտիր և թանկագին զգեստ. 2. կանացի բարակ՝ թափանցիկ ու նուրբ գործվածք, շղարշ, քող:

ԽՆԱՄ, ոյ, ոց, գ. խնամք, հոգատարություն, հոգացողություն:

ԽՆԱՄԱԼԻՑ, ա. խնամքով կամ գթով լի, գորովալից, հոգատար:

ԽՆԱՑԵԼ, եցի, չ. ն. ափսոսալ մի բան անել, ժլատություն՝ զսպվածություն ցուցաբերել. 2. ներել, գթալ. 3. պահել, պահպանել:

ԽՆԴԻՐ, դրոյ, ոց, գ. 1. փնտրելը, որոնում. 2. խնդիրք, պահանջ, պահանջած կամ պահանջված բանը:

ԽՆԴՐԵԼ, եցի, ն. 1. փնտրել, որոնել. 2. ուզել, խնդրել, հայցել. 3. հարցնել, քննել. 4. պահանջել. 5. առիթ փնտրել, ձգտել, ջանալ. 6. հետապնդել:

ԽՆՈՒԼ, խցի, խի՛ց, ն. փակել, խցել, որևէ անցք՝ բացվածք մի բանով փակել, խցանել:

ԽՈՁԱՆԵԼ(իմ), եցայ, չ. խոզի մազի պես ցցվել:

ԽՈՁԵՆԻ, գ. խոզի միս:

ԽՈՅՐ, խուրի, ից, գ. 1. բարձրաստիճան հոգևորականների գլխի զարդարուն ծածկոց. 2. քահանայի գլխի ծածկոց. 3. արևելյան պատվավոր գլխանոց, որ կրում էին թագավորները և իշխանները:

ԽՈՆԱՍՏԱՆ, անստույգ բառ. թերևս պարսից արքայական պալատի անունը:

ԽՈՆԱՐՀԵԼ(իմ), եցայ, չ. 1. կորանալ, կռանալ. 2. ընկճվել, նվաստանալ. 3. ճգնել, զղջալ. 4. խոնարհ դառնալ, համեստանալ:

ԽՈՆԱՐՀ ԼԻՆԵԼ. խոնարհվել, նվաստանալ:

ԽՈՆՋ, 1. ա. հոգնած, խոնջացած. 2. գ. հոգնածություն:

ԽՈՆՋԵԼ(իմ), եցայ, չ. հոգնել:

ԽՈՇԻԻՆ, գ. խշշոց, խշխշոց. ոտնաձայն:

ԽՈՍՏՈՎԱՆԵԼ, եցի և եցայ, հ. 1. դավանել՝ ընդունել իբրև ճշմարտություն, գոհանալ, բարեբանել. 2. ճանաչել, համարել, ընդունել, հանձն առնել. 3. (եկեղց.) իր մեղքը զղջալով հայտնել, ապաշխարել. 4. խոսք տալ, խոստովանել:

ԽՈՏԵԼ, եցի, ն. արհամարհել, անարժան համարել, անարգել, մերժել, բանի տեղ չդնել:

ԽՈՏՈՒՑՔ, խոտոցք, տցոց, տոցոց կամ տոցաց, գ. հոգն. սրունքի ոսկորները:

ԽՈՐԱՆ, ի, աց, գ. 1. վրան, տաղավար. 2. գմբեթավոր դահլիճ, արքունական ատյան. 3. սենյակ:

ԽՈՐԴ, ոյ, ոց կամ ու, ուց, գ. կռունկ (թռչուն):

ԽՈՐԴԱԼ, ացի, չ. խռմփալ:

ԽՈՐՀՈՒՐԴ, հրդոյ, ոց կամ դի, իւ կամ դեան, դեամբ, 1. ստեղծված գաղափար, ծագած միտք, մտածություն, խոհ. 2. հարցերի համատեղ քննարկում, խորհրդակցություն. 3. խոհականություն, խելք, իմացականություն. 4. ժողով:

-ԽՈՐՀՈՒՐԴ Ի ՄԷՋ ԱՌՆՈՒԼ. խորհուրդ անել, խորհրդակցել:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. 1. խորհրդակցություն, խորհուրդ. 2. խոհականություն, զգոնություն:

ԽՈՐՇ, ի, ից, գ. ընդհանրապես՝ խոր ընկած՝ փոսացած՝ փորված տեղ կամ բան. 2. խոռոչ, փորվածք, փոս. 3. անկյուն:

ԽՈՐՇԱԿ, ի, աց, գ. սաստիկ տաք քամի, որ չորացնում է բույսերը. 2. չոգ եղանակ, տոթ, տապ. 3. երաշտ, չորություն:

ԽՈՐՇԵԼ(իմ), եցայ, չ. մեկից՝ մի բանից հեռու մնալ՝ մի կողմ քաշվել, խույս տալ, խուսափել, հեռանալ, փախչել:

ԽՈՒՎ ՀԱՐԿԱՆԵԼ. անհանգստացնել:

ԽՍՏԱՊԱՐԱՆՈՑ, ա. համառ, կամակոր, անհնազանդ, անսաստ:

ԽՐԱՏ, ու, ուց, նաև ոյ, ոց, գ. 1. խորհուրդ, հորդոր. 2. պատվեր, հրաման. 3. ուսում, կրթություն, դաստիարակու-թյուն. 4. ծեծ, պատիժ (որպես դաստիարակութ-յան միջոց):

ԽՐԱՏԵԼ, եցի, ն. 1. խրատ՝ խոր-հուրդ տալ, հորդորել, զգուշաց-նել. 2. մեկին խրատ՝ դաս տալու նպատակով պատժել:

ԽՐԱՑՔ, ցից, գ. 1. կոշիկի՝ տրե-խի փոկե քուղ. 2. բաճկոնի քուղ՝ կապ:

ԽՐՁԱՆԱԼ, ացայ, չ. խրձի նման դառնալ, խուրձ կազմել:

ԽՕՁԱԿԵՐ, ա. ջրիմուռ ուտող, ջրիմուռով սնվող (թռչունների մասին):

ԽՕԹԱՄԻՏ, մտի, տաց, ա. 1. մտքով տկար, տկարամիտ. 2. չարամիտ, հակառակասեր:

ԽՕԹՈՒԹԻՒՆ, գ. 1. հիվանդութ-յուն, տկարություն. 2. ծուլութ-յուն:

ԽՕՍԵԼ(իմ), եցայ, եա՛ց կամ եա՛, հ. 1. ասել մի բան, զրուցել. 2. ճառել, պատմել:

Ծ

ԾԱԳ, ի, աց, գ. ծայր, մանա-վանդ՝ որևէ առարկայի՝ տարա-ծության վերջնային մասը:

ԾԱԳԵԼ(իմ), եցայ, չ. երկնակա-մարի վրա երևալ (լուսատուների մասին). 2. բացվել (լույսը, առավոտը և նման բառերի հետ). 3. առաջ գալ, երևալ, հայտնի դառնալ. 4. սկիզբ առնել, սկսվել. 5. փայլել, պայծառա-նալ:

ԾԱԽԵԼ, եցի, ն. 1. ծախսել, վատնել, մսխել. 2. ոչնչացնել, բնաջնջել, սպանել. 3. վաճառել:

ԾԱԾՈՒԿՔ, գ. գաղտնիք, գաղտնիքներ:

ԾԱՂՐ ԱՌՆԵԼ, ծաղրել:

ԾԱՆԱԿԱՆՔ, նաց, գ. ամոթ, խայտառակություն, նախա-տինք:

ԾԱՆԱԿ ԿԱԼ. ծաղրելի՝ ծիծաղելի լինել:

ԾԱՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. տե՛ս ԾԱ-ՆԱԿԱՆՔ:

ԾԱՆՈՒՑԱՆԵԼ, նուցի, նո՛, պբ. ծանոթացնել, ճանաչել տալ, տեղեկացնել, իմացնել, հայտնել:

ԾԱՆՐ, նու, նունք, նունց, ա. 1. մեծ կշիռ՝ քաշ ունեցող, ծանրա-քաշ. 2. դանդաղ. 3. անտանելի, դժվարին. 4. տհաճ. 5. խիստ, դաժան. 6. սաստիկ շատ, բազ-մամարդ. 7. թանկարժեք:

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ, գ. 1. ծառա լինելը, ծառայի վիճակը՝ դրութ-յունը: 2. ծառայելը, սպասավո-րություն. 3. ստրկություն, գե-րություն. 4. հպատակություն, հարկատվություն:

ԾԻԾԱՌՆ, առան, առունք, ռանց, գ. (կենդբ.) 1. ծիծեռնակ. 2. սոխակ:

ԾԻԻՐԵԼ, եցի, ն. հյուծել, հա-լումաշ անել, տկարացնել, խիստ նիհարեցնել. 2. եցայ, չ. կ. հյուծվել, խիստ նիհարել, տկա-րանալ, թուլանալ:

ԾՆԿԵԼ կամ ԾՆԳԵԼ, եցի, ն. ծնկի բերել, ընկճել. 2. խոշտան-գել, տանջել, չարչարել, ճնշել, նեղել. 3. հալումաշ՝ ուժասպառ անել, հյուծել, մաշել:

ԾՈՎԵԶԵՐԵԱՅՔ, գ. հոգն. 1. ծովեզրյա տեղեր. 2. ծովեզրյա բնակիչներ:

ԾՈՐԾՈՐ, ոյ, ոց կամ ի, աց, գ. 1. ձոր. 2. ծերպ, խորշ, խոռոչ. 3. լեռների մեջ գոյացած նեղ հեղե-ղատ:

Կ

ԿԱԶՄ, ա. մ. 1. պատրաստ, պատրաստ վիճակում եղող, կազմ ու պատրաստ. 2. զինված. 3. կարգավորված, վայելուչ:

ԿԱԶՄԱԾ, ոյ, ոց, նաև ի, ից, գ. կազմություն, շինություն, կա-ռուցվածք, 2. սարք, հանդեր-ձանք, պատրաստություն. 3. -կահկարասի. 4. զարդարանք, զարդեր. 5. պատերազմական զենքեր. 6. սպասք, պիտույքներ, պարագաներ. 7. մարմնի կազմ-վածք:

ԿԱԹՈՂԻԿԷ, ԿԱԹՈՒՂԻԿԷ, էի, էից, ա. գ. ընդհանրական, տիե-զերական, քրիստոնեական ընդ-հանուր եկեղեցու մակդիրը:

ԿԱԹՈՏ, ա. վավաշոտ, ցանկա-սեր:

ԿԱԼ, կամ, կաս, կայ, կայի, կա-ցի, կա՛ց, կացէ՛ք, չ. 1. կանգնել. 2. սպասել, մնալ: -ԿԱԼ ԱՌԱ-ՋԻ. դեմ կանգնել. դիմադրել-ԿԱԼ Ի ՎԵՐԱՅ. 1. հասկանալ. 2. վերակացու լինել, վրան հսկել. -ԿԱԼ ՅԱՂՕԹՍ. աղոթել.

ԿԱԼՆՈՒԼ, կալայ, ն. բռնել, պահել, տիրել: Տե՛ս նաև ՈՒՆԵԼ(իմ):

ԿԱՀ, ի, ից և ու, ուց, գ. առօրյա կենցաղի առարկաներ՝ իրեր, սպասք, կարասի, շարժական գույք՝ ունեցվածք:

-ՁԿԱՀ ԵՒ ՁԿԱՐԱՍԻ. հանդերձանք, կահկարասի:

ԿԱՄԱԿՈՐԵԼ, եցի, ն. ծռմռել, խեղաթյուրել, աղավաղել, այլակերպել:

ԿԱՄՆ, մին, մունք, մանց, գ. հացահատիկ կալսելու գործիք, կամ:

ԿԱՄՔ, մաց, մօք, գ. 1. կամք. 2. ցանկություն, պահանջ. 3. կամենալը, կամեցածը. 4. հաճություն, համաձայնություն:

ԿԱՅԱՆ, ի, ից, գ. կանգնելու՝ կանգ առնելու տեղ, հանգրվան. 2. բնակվելու՝ մնալու տեղ, բնակարան, օթևան, կացարան:

ԿԱՆԱՅԻ, ցւոյ, ցեաց, ա. 1. կնոջը հատուկ, կնոջ. 2. կնաբարոյ, կնամարդի, թուլամորթ, երկչոտ, թույլ:

ԿԱՆԳՆԵԼ, եցի, ն. կանգնեցնել, ոտքի վրա բարձրացնել:

ԿԱՆԳՈՒՆ, գնի, նաև գնոյ, ոց, գ. երկարության չափ՝ արմունկից մինչև միջամատի ծայրը (մոտ 50,7սմ):

ԿԱՆԽԱԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. կանխակալ լինելը, վաղեմի՝ սովորական լինելը:

ԿԱՆԽԵԼ, եցի, չ. ն. 1. առավոտը կանուխ ելնել՝ վեր կենալ. 2. աճապարել, փութալ, արագ շարժվել, շուտ հասնել. 3. շտապել՝ ուրիշից առաջ մի բան անել, առաջն առնել, առաջ անցնել. 4. շուտ կամ վաղ անել, շտապել ասել:

ԿԱՆՈՆ, ի, աց, գ. սաղմոսների և շարականների գլխակարգությունը. 2. ընդունված կարգ, օրենք, 3. ժողովների սահմանած վճիռը, սահմանադրություն. 4. աստվածային, եկեղեցական և քաղաքական օրենքներ:

ԿԱՊԻՃ, պճի, ճաց, գ. սրունքները պատելով ճմլելու տանջող գործիք:

ԿԱՊՈՒՏ, գ. կողոպուտ, ավար:

ԿԱՌԱՋ, գ. բարձր ճիչ, աղաղակ, հառաչ:

ԿԱՍԿԱԾԵԼ, եցի, չ. 1. կասկածի մեջ ընկնել, կասկած ունենալ, վարանել, տարակուսել. 2. երկյուղ զգալ, վախենալ:

ԿԱՍՈՒԼ, կասի, կա՛ս, ն. 1. հացահատիկը կամով մանրել, կալսել: 2. ջարդել, ջախջախել:

ԿԱՏԱԿԱՆՔ, նաց, գ. կատակելը, ծաղրելը, կատակ, ծաղր, այպանք:

ԿԱՏԱԿՈՒԹԻՒՆ, գ. 1. կատակ, ծաղր, խայտառակություն, ծաղրուծանակ:

ԿԱՏԱՐԵԼ, եցի, ն. 1. անցկացնել. 2. ավարտին հասցնել. 3. բարեկարգել:

ԿԱՐ[1], ի գ. կարողություն, զորություն, ուժ:

ԿԱՐ[2], ոյ, ոց, ովք կամ իւք, գ. պարան, չվան, լար, փոկ:

ԿԱՐԱԿՆԵԼ, եալ, ն. կամարի նման, շրջանաձև, կլորաձև դարձնել:

ԿԱՐԱՁՄԵՌՆ, գ. 1. սաստիկ ցուրտ ձմեռ. 2. ա. սաստիկ ցուրտ ձմեռային, ցրտաշունչ:

ԿԱՐԱՍԻ, սւոյ կամ սոյ, սեաւ կամ սւով, սեաց, գ. 1. տան մեջ եղած կայքը և տնային պիտույքի առարկաները, կահկարասի. 2. ինչք, դրամ, ունեցվածք, գույք:

ԿԱՐԱՒԱՆ, ի, աց, գ. ուղևորների՝ զինվորների բազմություն՝ խումբ:

ԿԱՐԴԱԼ, ացի, դա՛, ն. չ. 1. ձայնել, գոչել, աղաղակել, օգնության կանչել. 2. ձայն տալ, կանչել, հրավիրել. 3. անունը տալ, անուն դնել, անվանել, հորջորջել. 4. բարձրաձայն կարդալ. 5. ընթերցել:

ԿԱՐԻ, մ. սաստիկ, ուժգին, շատ:

ԿԱՐԻՔ, րեաց, րեօք, գ. 1. կիրք, տենչ, զգացմունք, հույզ. 2. չարիք, դժբախտություն, չարչարանք. 4. ցավ, վիշտ, տրտմություն, վհատություն. 4. պետք, պահանջմունք, հարկավորություն:

ԿԱՐԾԻՍ ԱՌՆԵԼ. 1. կարծել, համարել, ենթադրել. 2. կասկածել:

ԿԱՐԿԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. բերանը փակել, պապանձեցնել, լռեցնել, սանձել:

ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ, գ. 1. նյութական միջոցների պակասու-թյուն, կարիք, չքավորություն. 2. փափագ, տենչ:

ԿԱՑԱՁԻ, ա. որի ձին կանգ է առնում և խրտնում:

ԿԱՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. 1. կանգնեցնել. 2. դնել, գետեղել. 3. անել, կատարել, իագործել. 4. կարգել, նշանակել:

ԿԱՓՈՒՑԱՆԵԼ, փուցի, փո՛, պբ. փակել, խփել, գոցել:

ԿԱՔԱՒԵԼ, եցի, չ. ոստոստել, թռչկոտել, պարել:

ԿԵԱԼ, կէի, կայր, կեցի, եկեաց, կեա՛ց, չ. 1. ապրել. 2. կենդանանալ:

ԿԵԱՆՔ, կենաց, նօք, գ. ապրելը, կենդանութիւն. 2. այս կյանքը, այս աշխարհը. 3. ունեցվածք, ապրուստ:

ԿԵՆԱԳՈՐԾԵԼ, եցի, ն. 1. կենդանացնել, մեռելին հարութիւն տալ. 2. կենդանությունը պահպանել:

ԿԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. 1. կենդանացնել, կյանք տալ. 2. փրկել, ազատել. 3. առողջացնել:

ԿԹԵԼ, եցի, ն. 1. խաղողը քաղել՝ հավաքել. 2. կաթնատու անասունների ստինքներից կաթը դուրս քաշել. 3. պտուղ քաղել՝ հավաքել:

ԿԻՏՈՒԱԾ, ոյ, գ. կետ-կետ հորինված նկար՝ զարդ:

ԿՃՂԱԿԱԲԱԺԻՆ, ժնի, ից, ա. կճղակը երկու մասի բաժանված:

ԿՃՂԱԿԱՀԵՐՁ, ի, աց, ա. կճղակը երկու մասի բաժանված (կենդանի):

ԿՈԽԵԼ. եցի, ն. 1. ոտքը դնել գետնին կամ մի բանի վրա. 2. ոտնատակ անել, կոխոտել. 3. ոտքերի տակ տրորել՝ ճմլել. 4. քանդել, ավերել. 5. ոտնատակ տալ, արհամարհել. 6. ընկճել, նվաճել, հաղթել:

ԿՈԾԵԼ, եցի, ն. ծեծել, բախել, զարկել:

ԿՈՅՍ[1], կուսի, ից, ա. կույս:

ԿՈՅՍ[2], ի կոյս, ի կուսէ, ի կուսաց, գ. 1. կողմ. 2. նխդ. դեպի:

ԿՈՉԵԼ, եցի, ն. 1. կանչել, հրավիրել, ձայն տալ. 2. անվանել, անուն դնել. 3. ազդարարել:

ԿՈՉՈՒՄՆ, չման, գ. 1. կանչելը, հրավիրելը, ձայն տալը. 2. անվանելը, անուն տալը:

ԿՈՉՈՒՆՔ, չնոց, գ. կանչելը՝ հրավիրելը ճաչկերույթի, հրավերք, հյուրընկալություն, խնջույք, կերուխումի սեղան:

ԿՈՐ Ի ԳԼՈՒԽ ԱՌՆԵԼ. խայտառակել:

ԿՈՒՍԱԿԱԼ, ի, աց, գ. երկրի մի մասի կառավարիչ, կողմնապետ, կողմնակալ:

ԿՏԱԿԱՐԱՆ, ի, աց, գ. (եկեղց.) Աստծու կտակը՝ ուխտը և պատգամները պարունակող գիրք: Հին և Նոր կտակարանները:

ԿՐԹԵԼ, եցի և եցայ, ն. չ. 1. մարզել, վարժեցնել, սովորեցնել. 2. փափագել, ջանալ, մի բանի ձգտել, հետամուտ լինել:

ԿՐԿՆԵԼ, եցի, ն. 1. մի անգամ արածը երկրորդ անգամ անել, երկրորդել. 2. երկրորդ անգամ նույն բանն ասել:

ԿՐԿՋԱՁԱՅՆ, ա. կրկչալու՝ կարկաչող ձայնով, կրկչացող:

ԿՐՃԵԼ, եցի, չ. ն. ատամները կրճտել, կրճտացնել:

ԿՐՈՒԿ կամ ԿՐՈՒԿՆ, կրկան, կրկունք, կրկանց, գ. 1. կրունկ, գարշապար 2. հետևի կողմը, թիկունք, կռնակ:

ԿՑՈՐԴ, ի, աց, գ. գործակից, ընկերակից, մասնակից:

Հ

ՀԱԴԱՂԱԿ, ի, աց, գ. ծղոտե պահպանակով գինու կաշվե ման՝ փոքրիկ տիկ:

ՀԱԶԱՐԱՊԵՏ, ի, աց, գ. հազար զինվորի պետ՝ հրամանատար. 2. ավագ հրամանատար. 3. արքունական՝ իշխանական տան ելումուտքը կառավարող պաշտոնյա, վերակացու, տնտես:

ՀԱԼԱԾԱԿԱՆ, ի, աց, ա. հալածական, վտարված, մի տեղից քշված, վտարանդի:

ՀԱԿԱՄԻՏԵԼ, եցի և եցայ, չ. հակվել՝ տրամադրվել մի բանի օգտին, այս կամ այն կողմը միտել՝ թեքվել:

ՀԱՂՈՐԴԵԼ(իմ), եցայ, չ. 1. հաղորդակից՝ մասնակից լինել, հաղորդակցվել. 2. (եկեղց.) հաղորդություն առնել՝ ստանալ, հաղորդվել, ճաշակվել:

ՀԱՃԵԼ(իմ), եցայ, եա՛ց կամ եա՛, չ. ախորժել, հավանել, գոհանալ:

ՀԱՄԱԳՈՅ, ի, ից, ա. (կրոն.) միևնույն գոյացությունն ունեցող, միևնույն բնությունից՝ էությունից, էակից, համագոյակից:

ՀԱՄԱԳՈՅԱԿԱՆ, տե՛ս ՀԱՄԱԳՈՅ:

ՀԱՄԱԳՈՐԾ, ա. 1. նույն բանը գործող, գործակից. 2. միասին նույնը ստեղծող, արարչակից:

ՀԱՄԱԾԻՆ, ա. 1. միասին ծնված, երկվորյակ. 2. նույն ծագումով, համասեռ. 3. բնածին, ընդարույս:

ՀԱՄԱՇԽԱՐՀ կամ ՀԱՄԱՇԽԱՐՀԻ, 1. գ. ամբողջ աշխարհը. 2. ա. ամբողջ աշխարհին վերաբերող, համաշխարհային:

ՀԱՄԱՊԱՅԾԱՌ, ա. համակ՝ բոլորովին պայծառ, ամենուրեք պայծառություն՝ լույս սփռող. 2. շատ պայծառ, շողշողուն, երփներանգ:

ՀԱՄԱՐ ԱՌՆԵԼ. ԱՌՆՈՒԼ հաշիվ տեսնել:

ՀԱՄԱՐԵԼ, եցի և եցայ, հ. 1. համրել, թվել, հաշվել, քանակը որոշել. 2. կարծել, ենթադրել. 3. ընդունել, դիտել իբրև:

ՀԱՄԱՐԶԱԿԵԼ(իմ), եցայ, չ. 1. համարձակ լինել, վստահություն ունենալ որևէ բան անելու կամ ասելու մեջ. 2. քաջալերվել, հուսալով զորանալ:

ՀԱՄԱՐԶԱԿԻՉ, ա. համարձակություն տվող, քաջալերող:

ՀԱՄԱՐ ՏԱԼ. հաշիվ տալ:

ՀԱՄԲԱՐ, ոյ, ոց կամ աց, գ. 1. մթերանոց, չտեմարան, պահեստ, ամբար. 2. ամբարած սննդամթերք, պաշարեղեն, պաշար:

ՀԱՄԲԱՀԱՏԵՆՉ, ա. իր համբավով տենչալի դարձած, մեծահամբավ, հռչակավոր:

ՀԱՄԲՈՒՐԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. ընտանի դարձնել, ընտելացնել, սովորեցնել:

ՀԱՄՀԱՐԶ կամ ՀԱՄԱՀԱՐԶ, ի, աց, գ. նիզակակից, թիկնապահ:

ՀԱՄՕՐԷՆ, ա. 1. ամբողջ, բոլոր, բովանդակ. 2. մ. ամբողջապես, բոլորովին, առհասարակ, ընդհանրապես:

ՀԱՅԵԼ(իմ), եցայ, եա՛ց կամ եա՛, եցեալ, չ. 1. նայել, մտիկ անել. 2. աչքերը վեր բարձրացնել, դեպի վեր նայել. 3. ուշադրություն դարձնել, դիտել, զննել:

ՀԱՅԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. 1. նայել տալ, մեկի հայացքը՝ ուշադրությունը մի բանի վրա դարձնել. 2. հակել՝ տրամադրել մի բանի, հոժարեցնել:

ՀԱՅՐԵՆԻՔ, նեաց, գ. 1. հորից մնացած՝ ժառանգած գույք, հայրենական ժառանգություն. 2. նախնիներ, հայրեր և նախահայրեր. 3. հայրենի գավառ՝ երկիր, բնաշխարհ. 4. տոհմ, սերունդ:

ՀԱՆԱՊԱԶՈՐԴ, մ. 1. միշտ, մշտապես, 2. ա. միշտ տեղի ունեցող, մշտական. 3. ամեն օրվա կամ շաբաթվա համար նշանակված, ամենօրյա:

ՀԱՆԳՈՅՆ, նխդ. նման:

ՀԱՆԳՈՒՑԱՆԵԼ, գուցի, գո՛, պբ. 1. հանգիստ տալ, հանգստացնել. 2. տեղավորել, գետեղել. 3. ավարտել, վերջացնել, լրացնել. 4. թաղել. 5. ննջեցյալների հոգիները փոխադրել՝ տանել հավիտենական հանգստի՝ երկնքի արքայություն:

ՀԱՆԳՉԵԼ(իմ), գեայ, գի՛ր, գուցեալ, չ. 1. հանգստանալ. 2. իջևանել, մի տեղ դադար առնել, գիշերել. 3. նստել, պառկել. 4. լրանալ, ավարտվել, վերջանալ. 5. վախճանվել, մեռնել, թաղվել:

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ, տե՛ս ՀԱՆԴԵՐՁԵԼ[2](իմ):

ՀԱՆԴԵՐՁԵԼ[1], եցի, ն. պատրաստել, սարքել, կազմել, հարդարել. 2. ճանապարհի անհրաժեշտ պիտույքները՝ կարիքները հոգալ:

ՀԱՆԴԵՐՁԵԼ[2](իմ), եցայ, եալ, չ. կազմ ու պատրաստ լինել մի բանի համար, պատրաստվել, պատրաստություն տեսնել:

ՀԱՆԴԷՍ, դիսի, ից, գ. 1. մարդկանց համախմբում հրապարակային քննության՝ ցուցադրման համար. 2. մարդկանց համախմբում հաշվառման համար, մարդահամար, զորահամար, աշխարհագիր. 3. հրապարակային ատյան հարցուփորձի համար. 4. տեսարան, հրապարակ, մրցարան. 5. մրցանք, հրապարակորեն դրսևորած կտրիճություն, արիություն, քաջություն, մեծագործություն. 6. տոնախմբություն, հրապարակային ցնծություն:

-ՀԱՆԴԷՍ ԱՌՆԵԼ ԶՕՐԱՅ. զորահանդես կազմել:

ՀԱՇՄԵԼ(իմ) , եցայ, եալ, չ. հաշմ լինել՝ դառնալ, խեղվել:

ՀԱՁԵԼ, եցի, չ. (սովորաբար՝ հառաչել բայի հետ՝ ՀԱՁԵԼ (և) ՀԱՌԱՁԵԼ), հառաչել, հեծեծել, ախ ու վախ անել, հառաչելով ա՜խ քաշել:

ՀԱՍԱՆԵԼ, հասի, հա՛ս, չ. հասնել, գալ, ժամանել:

-ՀԱՍԱՆԵԼ Ի ՎԵՐԱՑ. հասկանալ, իմանալ, վերահասու լինել:
ՀԱՍԱՐԱԿ, ի, աց, մ. միասին, միատեղ:
ՀԱՍՈՒ ԼԻՆԵԼ. ճանաչել, իմանալ, հասկանալ:
ՀԱՍՏԱՇԻՆԱԾ, ա. հաստատուն՝ ամուր՝ պինդ չինված, ամրակառույց:
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ, գ. 1. հաստատուն լինելը, ամրություն. 2. հաստատուն բան, հենարան, նեցուկ. 3. զորություն, ուժ. 4. հաստատ՝ ստույգ լինելը. 5. ստեղծում, ստեղծելը, ստեղծվելը. 6. ստեղծված բան, արարած. 7. համատարած երկնակամարը՝ իբրեւ հաստատուն մարմին:
ՀԱՍՏԻՉ, տչի, ա. գ. ստեղծող, արարիչ:
ՀԱՐԱՄԱՆԻ, նւոյ, գ. 1. չար գործերի՝ չարության արարիչը զրադաշտական կրոնի մեջ, Արհմն կամ Ահրիման. 2. չար հրեշտակ, սատանա, դև:
ՀԱՐԿԱՆԵԼ[1]. , հարի, հա՛ր, ն. 1. զարկել, խփել, ծեծել, տանջել. 2. կոտորել, ջարդել, սպանել:
ՀԱՐԿԱՆԵԼ[2](իմ), հարայ, չ. մի բանի դիպչել՝ հարել:

ՀԱՐՄՆԵՂԲԱՅՐ, բօր, բարց, գ. հարսին մերձավոր կին, հարսնաքույր:
ՀԱՐՑ ԵՒ ՔՆԻՆ ԱՌՆԵԼ. քննել:
ՀԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. հացագործ լինելը, հացագործի արհեստը, հացագործություն:
ՀԱՑԿԱՏԱԿ, ի, աց, ա. գ. ուրիշների տանը փորը կշտացնող, ուրիշի հացով կերակրվող, պորտաբույծ, պնակալեզ, ձրիակեր:
ՀԱԻԱՆԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. համաձայնեցնել, համոզել:
ՀԱԻԱՆԸՆԿԵՐՔ, բաց, գ. հոգն. համերաշխ՝ սրտակից ընկերներ, ընկերակիցներ:
ՀԱԻԱՏԱԼ, ացի, տա՛, ցէ՛ք, ն. 1. հավատ ընծայել, ընդունել՝ հաստատել մի բան իբրև իրողություն՝ ճշմարտություն, դավանել, խոստովանել. 2. վստահել. 3. վստահելով մեկին ավանդել՝ հանձնել:
ՀԱԻԱՏԱՐԻՄ, ըմի, մաց, ա. ճիշտ, ստույգ, հավաստի, ընդունելի:
-ՀԱԻԱՏԱՐԻՄ ԼԻՆԵԼ. 1. հավատարիմ՝ վստահելի դառնալ.

2. ճշտվել, ստուգվել, հաստատվել, ընդունելի լինել:
ՀԱԻԱՏԱՐՄԱՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. 1. հավատարիմ դարձնել. 2. հավատացնել, հաստատել, վկայել:
ՀԵԾԱՆՈՑ, ի, աց, գ. ատամնավոր կամ գոգաձև փայտե գործիք, որով կալում թեղը քամուն են հալիս, հոսելիք:
ՀԵԾՈՒԹԻՒՆ, գ. վշտալից՝ ցավագին հառաչանք, հեծեծանք, հոգոց հանելը:
ՀԵՂԳԱԼ, ացայ, չ. հեղգ դառնալ, ծուլանալ, անհոգ լինել:
ՀԵՂԳՈՒԹԻՒՆ, գ. հեղգ լինելը, ծուլություն, դանդաղկոտություն, անհոգություն:
ՀԵՂՁԱՄԱՂՁՈՒԿ ԼԻՆԵԼ. խեղդվել, շնչասպառ լինել:
ՀԵՇՏԱԿԱՆ, ի, աց, հաճելի, ախորժելի, ցանկալի, դուրեկան:
ՀԷՆ, հինի, նից, գ. 1. ավազակ, ավարառու. 2. ավազակների խումբ, որ արշավանք է կատարում ավարառության նպատակով:
ՀԻԱՆԱԼ, ացայ, չ. 1. հիացմունքից կամ զարմանքից ապշել, սքանչանալ, զմայլվել,

զարմանքից բերանը բաց մնալ. 2. ահից, երկյուղից ապշել, վախեցած և զարմացած մնալ:
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. հիմքը դնելը՝ գցելը, հիմնադրելը, հիմնադրություն:
ՀԻՒՍՈՒԼ, սի, հի՛ւս, ն. հյուսանել, հյուսել, ոլորել:
ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. 1. հնարավոր լինելը, կարողություն. 2. մեքենայություն, չարամիտ հնարք:
ՀՆԳԵՏԱՍԱՆ, ի, ից, թ. տասնհինգ:
ՀՆԳԿՆԵԼ, եցի, ն. հինգ անգամ կրկնել, հինգերորդել:
ՀՆԴԻԿ ՄՐՋԻՒՆ, գ. (կենդբ.) մրջնաոյծների ընտանիքին պատկանող գորշագույն միջատ. մրջնաոյծ:
ՀՆՁԱՆ, ի, աց, գ. այգում գետնի մեջ չինված ավազան՝ խաղողը ճզմելու և նրա հյութը քամելու համար:
ՀՈԳ, ոյ, ոց, գ. 1. հոգս, մտատանջություն, հոգեկան անհանգստություն՝ ցավ, տրտմություն, անհանգստություն պատճառող գործ՝ զբաղմունք.

2. փույթ, խնամք, հոգատարություն:

ՀՈԳԵՒՈՐԱԶԳԵԱՑ, ա. հոգեկիր, հոգեզարդ:

ՀՈՄԵԼ(իմ), եցայ, եալ, չ. խտանալ, թանձրանալ, պնդանալ, ամրանալ. 2. լիքը լցվել, խճողվել:

ՀՈՄՈՒԹԻՒՆ, գ. հոծ լինելը, խտություն, թանձրություն, պնդություն, լիություն:

ՀՈՍԱՆՈՒՏ, ա. 1. հոսող. 2. հորդահոս. 3. նման. անցավոր, անցողիկ, դյուրասահ, դյուրագայթ:

ՀՈՎԱՆԱՒՈՐ, ի, աց, ա. 1. հովանի ունեցող կամ տվող, ստվեր անող՝ ձգող. 2. փխբ.պաշտպան, խնամակալ:

ՀՈՎՈՒԵԼ, եցի, ն. 1. հովություն անել, հոտն արածեցնել ու պահպանել. 2. փխբ. առաջնորդել, կառավարել:

ՀՐԱԶԻՆԵԼ, եցի, ն. (կրոն.) հրով զինել, հրեղեն լեզուներով զինել՝ պատրաստել առաքելական քարոզչության համար:

ՀՐԱԺԱՐԵԼ, եցի, չ. հրաժեշտ տալ, բաժանվել:

ՀՐԱՄԱՆ, ի, աց, գ. 1. կարգադրություն, պատվեր. 2. պատգամ, պատվիրան. 3. վճիռ, որոշում, հրովարտակ. 4. թույլտվություն:

ՀՐԱՄԱՏԱՐ, գ. հրամանատար:

ՀՐԱՇԱԳՈՐԾԵԼ, եցի, ն. 1. (կրոն.) հրաշք գործել. 2. հրաշքով մի բան ստեղծել. 3. հրաշալի դարձնել, հրաշակերտել:

ՀՐԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ, գ. հրաշակերտ՝ հրաշալի շինվածք:

ՀՐԱՊԱՐԱԿ, ի, աց, գ. քաղաքի մեջ ընդարձակ տեղ՝ շինություններով շրջապատված. 2. վաճառանոց, շուկա, առևտրի վայր. 3. արքունի դահլիճ՝ ատյան, որտեղ դատական քննություններ են կատարվում. 4. հրապարակում հավաքված բազմություն՝ ամբոխ:

ՀՐԱՊՈՅՐՔ, գ. վատ խրատ, փորձություն. 2. պրկելը, ոլորելը. 3. պրկոց:

ՀՐԱՏ, ի, ից, գ. բորբոքվող հուր, խարույկ:

ՀՐԱՓՈՐՁՈՒԹԻՒՆ, գ. հրով փորձելը:

ՀՐԵՇՏԱԿԱՑՈՅՑ, ա. (կրոն.) հրեշտակի ցույց տված:

Ձ

ՁԱՂԱԴԷՄ, ա. խայտառակված դեմքով, ամոթահար:

ՁԱՂԱՆՔ, նաց, գ. ծաղր, ծաղրուծանակ, խայտառակություն:

ՁԱՂԿԱՀԵՐ, ա. ուղիղ՝ չգալարվող մազեր ունեցող:

ՁԱՅՆԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ, գ. համարձակ՝ անկաշկանդ ձայն արձակելը՝ խոսելը:

ՁԵՋԷՆ, մ. դուք ձեր կողմից, դուք ինքներդ անձամբ:

ՁԵՌՆ ԱՐԿԱՆԵԼ. 1. բռնել. 2. ձեռք բարձրացնել մեկի վրա, սպանելու մտադրություն ունենալ, կամենալ վնասել:

ՁԵՌՆ ՏԱԼ. ձեռք մեկնել, օգնել:

ՁԻԱՐՁԱԿ ԼԻՆԵԼ. ձին սրարշավ քշել, ձիու գլուխը բաց թողնել:

ՁԻԳ, ձիգք, ձիգս, ա. 1. պինդ ձգված, պիրկ. 2. ամուր, պինդ. 3. գ. հաստ չվան, որ գործ են ածում իբրև արորի շղթա:

ՁԻՒՆԱԽԱՂԱՂ, ա. հալված ձյունով հորդացած (գետ):

ՁԻՒՆԱՍՈՅԶ, ա. ձյունով լցված, ձյան ջրով առատացած (գետ):

ՁՄԵՐՈՅՑ, ի, աց, գ. ձմեռը մնալու՝ անցկացնելու տեղ, ձմեռանոց:

ՁՈՅԼ, ձուլոյ, ոց կամ լի, լից, ա. 1. ձուլված, ձուլածո. 2. մի զանգված կազմող, միաձույլ. 3. ամուր, պինդ, հաստատուն. 4. փխբ. միաբանված:

Ղ

ՂՈՅՂ, ղուղի, գ. լողալը:

ՂՈՒՂԱԿ, ի, աց, գ. ջրի մեջ ապրող՝ ջրային կենդանի, մասնավորապես՝ ձուկ:

ՂՕՂԵԼ, եցի և եցայ, չ. թաքնվել, պահվել, պահ մտնել:

Ճ

ՃԱԿԱՏ, ու, ուց, գ. 1. թշնամու դեմ առ դեմ գտնվող զորքի առջևի գիծը՝ տարածությունը, զորաճակատ. 2. մարտ՝ ճակատամարտ, պատերազմ. 3. զորք, զորագունդ:

ՃԱԿԱՏԵԼ(իմ), եցայ, չ. պատերազմելու համար կանգնել թշնամու դեմ հանդիման, պատրաստվել կռվի՝ պատերազմելու. 2. ճակատամարտ տալ, ճակատ

առ ճակատ կռվել, բախվել, մարտնչել:

ՃԱՇԱԿ, ի, աց, գ. կերակրի և ըմպելիքի համի տպավորությունը, համ. 2. ընդհանրապես՝ կերակուր, ըմպելիք:

ՃԱՌԱԳԱՅԹԵԼ, եցի, ն. 1. իբրև ճառագայթ արձակել՝ բխեցնել. 2. իր ճառագայթներով լուսավորել:

ՃԱՐՏԱՐԱԿ, ի, աց, ա. ճարտար, վարպետ, արհեստի մեջ հմուտ:

ՃԱՐՏԱՐԱՄՏԵԼ, եցի, չ. փիլիսոփայել, իմաստությամբ վարվել, խելք բանեցնել:

ՃԳՆԱՁԳԵՑԻԿ, ա. (կրոն.) ճգնության նվիրված, ճգնող:

ՃԵՆՃԵՐ, ի, աց կամ ից և ոյ, գ. խորովվող կամ եփվող մսից բարձրացող գոլորշի. 2. զոհի՝ այրվող մսի հոտը և ծուխը:

ՃՇՄԱՐՏԵԼ, եցի, ն. ստուգել, ճշգրտել, ճշմարիտը քննել և իմանալ:

ՃՌԱՔԱՂ ԱՌՆԵԼ՝ ԼԻՆԵԼ. 1. -՝ ճիռերը քաղել՝ քաղվել. 2. ընդհանրապես բերքի վերջին մնացորդները հավաքել՝ հավաքվել. 3. փխբ. ամբողջապես կոտորել, ոչնչացնել, կոտորվել, ոչնչանալ:

Մ

ՄԱԶԱՊՈՒՐ, ա. մ. հազիվ վտանգից ազատված՝ պրծած, հազիվ ճողոպրած՝ փախած, մազապուրծ:

ՄԱԶԴԵԶՆ, զան, զունք, զանց, գ. ա. զրադաշտականության հետևորդ, զրադաշտական:

ՄԱԼԵԼ, եցի, մալեալ, ն. 1. ճզմել, տրորել, ջարդել, ջախջախել. 2. մեղմացնել, թուլացնել, նվազեցնել, պակասեցնել:

ՄԱԽԱՂ, ի, ից, գ. տոպրակ, պարկ:

ՄԱԾՈՒՄՆ, ծման, գ. մածվելը, կպչելը, միանալը:

ՄԱՀԱՐՁԱՆ, ի, աց, գ. 1. գերեզմանի վրա կանգնեցրած հուշարձան. 2. արձան. 3. պարսպի վրա աշտարակ, բուրգ ևն՝ իբրև մարտկոց:

ՄԱՂԱՍ, ոյ, ոց, գ. լորձ:

ՄԱՂԹԵԼ, եցի, ն. 1. աղաչել, պաղատել, բարեխոսել, միջնորդել. 2. աղոթել, աղոթքով խնդրել:

ՄԱՃԱՌԱԿ, գ. նոր՝ թարմ պանիր:

ՄԱՅՌ, ի, գ. երակ:

ՄԱՅՐ, տե՛ս ՄԱՅՐԻ:

ՄԱՅՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. փայտահատ լինելը, անտառափայտ կտրելը, փայտահատություն:

ՄԱՅՐԻ, ուոյ, րեաց, գ. (բսբ.) սոճազգիների ընտանիքին պատկանող ծառ, մայրի:

ՄԱՆԱՒԱՆԴ ԹԷ, մ. եղբ. ավելի, առավելապես, էլ ավելի, առավել ևս, մանավանդ որ:

ՄԱՆՈՒԿ, նկան, նկունք, կանց, գ. 1. երեխա (նորածին կամ դեռ չծնված). 2. փոքրահասակ երեխա, սովորաբար տղա. 3. զավակ, որդի. 4. պատանի, երիտասարդ. 5. ծառա, սպասավոր. 6. զինվոր, զորական. 7. ա. փոքր, մանր, մատղաշ. 8. մանկական:

ՄԱՆՐ, մ. մանրամասն կերպով:

ՄԱՆՐԱՄԱՂ, ա. 1. շատ մանր մաղած, մանր՝ բարակ փոշու նման. 2. շատ մանր՝ անբաժանելի մասնիկ:

ՄԱՇԵԼ Ի ՍՈՒՐ ՍՈՒՍԵՐԻ. սրի քաշել:

ՄԱՇԿԱՊԱՃԷՆ, ենի, նօք, գ. պարսից թագավորի կանանոցի վրան:

ՄԱՏՈՒՑԱՆԵԼ, տուցի, տո՛, պբ. 1. մոտեցնել, 2. տալ, մատուցել, նվիրել:

ՄԱՏՉԵԼ(իմ), տեայ, տի՛ր, չ. 1. մոտենալ. 2. դիպչել, շոշափել:

ՄԱՏՌՈՒԱԿ, ի, աց, գ. ըմպելիք մատուցող, գինի լցնող՝ տվող:

ՄԱՐԴԱՀԱՃՈՅ, ի, ից, ա. որ ցանկանում է կեղծավորությամբ հաճելի լինել մարդկանց, շողոքորթ, կեղծավոր, երեսպաշտ, քծնող. 2. մ. մարդկանց հաճելի լինելու համար:

ՄԱՐԴԿԱՊԷՍ, մ. 1. մարդկաբար, իբրև մարդ, մարդու պես. 2. ա. մարդկային:

ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ, գ. 1. մարդկային հատկություն, մարդու բնավորություն՝ տկարություն ևն. 2. մարդիկ, մարդկանց բազմություն, մարդկային ցեղը որպես հավաքական ամբողջություն:

ՄԱՐԴՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. մարդպետ լինելը, մարդպետի պաշտոնը, ներքինապետություն:

ՄԱՐԹ, ի, ա. կարելի, հնարավոր:

-ՄԱՐԹ Է. մբ. կարելի է, հնարավոր է:

ՄԱՐԹԵԼ, թացի, չ. կարողանալ:

ՄԱՐՄՆԱՎԱՐ, ա. մարմնահար, հաշմանդամ, ցավագար:
ՄԱՔԱԼՈՒԿ, գ. (կենդբ.) մանգաղաթև, քարածիծառ (թռչուն):
ՄԱՔՍԱՒՈՐ, ի, աց, ա. գ. մաքսի վրա հսկող, մաքսը հավաքող՝ գանձող:
ՄԵԾԱՍՔԱՆՋԵԼԱՇՈՒՔ, մ. մեծ շքով ու պատվով, մեծ փառավորությամբ:
ՄԵԾԱՏԵՍԻԼ, ա. մեծ տեսք ունեցող, ընդարձակ:
ՄԵԾԱՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. 1. մեծ դարձնել, մեծացնել. 2. մեծարել, գովել, փառաբանել:
ՄԵԾՈՒԹԻՒՆ, գ. 1. մեծ լինելը, առավելություն, ճոխություն, բարձրություն, փառավորություն, իշխանություն, ևն. 2. հարստություն:
ՄԵԿՆԵԼ, եցի, ն. վանել, բաժանել, հեռացնել:
ՄԵՂԱՆԱԼ, ացայ, չ. մեկի դեմ մեղանչել, մեղք գործել:
ՄԵՌԵԼՈՏԻ, տւոյ, տւոց, գ. մեռած՝ սատկած կենդանի, կենդանու դիակ, դեշ:
ՄԵՐԿԱՆԱԼ, ացայ, ցի՛ր, ն. չ. հ. 1. վրայից հանել, բաց անել, ծածկույթը վերցնել, երևան հանել. 2. հանվել, մերկ դառնալ, բացվել, երևալ. 3. մերկացնել, տկլորացնել, շորերը հանել. 4. զրկվել մի բանից, կողոպտվել:
ՄԵՐԿԵԼ, կացի, կաց կամ կեաց, կեա՛, ն. 1. հանել, մերկացնել. 2. չ. մերկանալ, հանվել:
ՄԵՐՁԱՒՈՐԱԿԱՆ, ա. մերձավոր, ընտանեկան:
ՄԵՐՁԱՒՈՐԵԼ, եցի, ն. մերձավոր դարձնել, մոտեցնել, մոտիկություն առաջ բերել:
ՄԵՔԵՆԱՑԵԼ, եցի, ն. չ. խորամանկությամբ մի բան հնարել՝ սարքել՝ անել, խարդավանել, նենգել, մտքում դնել՝ մտադրվել վնաս հասցնել, որոգայթ լարել, դավեր նյութել:
ՄԷՋ, միջոյ, ով, ի միջի, մէջք, միջոց, ովք կամ աց, օք, գ. 1. մեջտեղը. 2. մեջք(մարդու և կենդանու). գոտկատեղ. 3. ա. միջին, կես: -Ի ՄԻՋԻ ներսում, ներսը, մեջը, մեջտեղը:
ՄԹԵՐ, ի, մթերք, ից, գ. ամբարած՝ կուտակած որևէ բան, ամբարանոցում պահված իրեր, նյութերի կույտ:
ՄԻԱԲԱՆԵԼ, եցի, ն. 1. միաբան դարձնել, համախմբել, միացնել, միավորել. 2. եցի և եաց, չ. խոսքերը մեկ անել, համաձայնություն գալ, համաձայնել:
ՄԻԱՀԱՂՈՅՆ, մ. 1. միանգամից, մեկից. 2. իսկույն, անմիջապես:
ՄԻԱՀԱՒԱՆ, ա. մ. ընդհանուր հավանությամբ, միաբան, համաձայն, կամակից:
ՄԻԱՄՕՐՈՒԹԻՒՆ, գ. մինուճար՝ միակ զավակ լինելը. փխբ. մենակ՝ անտերունչ լինելը:
ՄԻԱՆԳԱՄԱՅՆ, մ. 1. միանգամից, մեկից. 2. միաժամանակ. 3. միատեղ, բոլորը միասին. 4. մի անգամ:
ՄԻԵՂՋԵՐԻ, ըւոյ կամ րոյ, գ. (կենդբ.) ռնգեղջյուրների ընտանիքին պատկանող կենդանի. հնդկական ռնգեղջյուր:
ՄԻՆՉ, 1. նխդ. (ի նախդիր ունեցող հայցական խնդրով) մինչև. 2. մ. մինչդեռ, քանի դեռ, երբ, երբ որ. 3. մ. մինչև որ:
ՄԻՆՉ ՉԵՒ, մ. դեռ չ..., քանի դեռ չ..., մինչև որ:
ՄԻՋՈՑ, ի, աց, գ. 1. մեջտեղը, մեջը. 2. միջոց (ժամանակի վերաբերյալ). 3. տարածություն:
ՄԻՏ ԴՆԵԼ. ուշադրություն դարձնել, դիտել, հետևել:
ՄԻՏՈՒԹԻՒՆ, գ. միտվելը, հակում, ձգտում, հակվածություն, հակամիտություն, տրամադրություն որևէ բանի նկատմամբ:
ՄԻՒՍԱՆԳԱՄ, մ. դարձյալ, նորից, երկրորդ անգամ:
ՄԽԵԼ, եցի, ն. 1. ներս մտցնել, խոթել, խրել. 2. եցայ, չ. նույն նշ. , նաև՝ մեջը մտնել, միջամուխ լինել:
ՄԿՐՏԵԼ, եցի, ն. 1. ջրով լվանալ և մաքրել, ջրի մեջ ընկղմել. 2. (կրոն.) կնունքի արարողություն կատարել, կնքել. 3. թաթախել. 4. փխբ. հավատի համար արյուն թափել, արյունով մկրտվել, մարտիրոսանալ:
ՄՇԱԿՈՒԹԻՒՆ, գ. 1. հող մշակելը, երկրագործություն. 2. ծառայություն, աշխատանք, վաստակ:
ՄՇՏԻԿ, կաց, գ. 1. բույսերի տրցակ կամ կապոց՝ ավելի նման, որևէ հեղուկ սրսկելու համար. 2. սպունգ:
ՄՈԼԵԿԱՆ, ի, աց, ա. 1. մոլի, կատաղի, վայրենի. 3. դիվահար:

ՄՈԼՈՒԹԻՒՆ, գ. 1. մոլի լինելը, մոլեգնություն. 2. խենթություն, հիմարություն. 3. որևէ բանի ծայրահեղ՝ անչափ ձգտում, մոլուցք:

ՄՈՅՐ, մուրոյ կամ մոյրոյ, գ. 1. մուրալը, մուրացկանություն. 2. մուրացկանին տրված ողորմություն:

ՄՈՌԱՑՕՆՔ, գ. մոռացում, մոռացութիւն. գործածվում է միայն բայերի հետ՝ մոռանալ, մոռացվել նշ.:

ՄՈՐԻ, ըւոյ, ըեաց, գ. գազանի բույն, որջ:

ՄՈՐՈՍ, ի, աց, ա. հիմար, անմիտ, խենթ:

ՄՈՐՈՍԱՆԱԼ, ացայ, չ. հիմարանալ, անմիտ՝ խենթ դառնալ:

ՄՈՐՈՍՈՒԹԻՒՆ, գ. հիմարություն, անմտություն, խենթություն:

ՄՈՒՐՈՂ, ի, աց, ա. մուրացող, մուրացկան:

ՄՏԱԴԻՐ, դրի, դրաց, ա. ուշադիր, ուշադրությամբ մի բանի հետևող, զգոն:

ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. 1. ուշադրություն. 2. շրջահայեցություն, զգուշություն. 3. ջանասիրություն, աշխատասիրություն:

ՄՏԱՆԵԼ, մտի, մո՛ւտ, մտէ՛ք, չ. 1. մտնել. 2. մայր մտնել (արևի մասին):

ՄՏԱՑԻ, ցւոյ, ցեաց, ա. խելք ունեցող, բնական խելքի տեր, խելացի:

ՄՐՃՈՏԵԼ(իմ), եցայ, չ. մրոտվել, հատկապես՝ ճենճոտ մրով և ճենճերով կեղտոտվել, սևանալ:

ՄՐՄՆՋԵԼ, եցի, չ. և ն. 1. շշնջալ, փսփսալ. 2. մեղմ ձայնով երգել:

Յ

ՅԱՂՕԹՍ ԿԱԼ. աղոթել:

ՅԱՃԱԽԵԼ, եցի, ն. 1. հաճախ կրկնել՝ ասել. 2. շատացնել, ավելացնել, բազմացնել:

ՅԱՄԵԼ, եցի, չ. 1. ուշանալ, դանդաղել, հապաղել. 2. երկար մնալ մի տեղում կամ մի դրության մեջ. 3. ն. ուշացնել:

ՅԱՄՕԹ ԱՌՆԵԼ. ամաչեցնել, ամոթով անել:

ՅԱՅՆԺԱՄ, մ. այն ժամանակ:

ՅԱՅՏ ԱՌՆԵԼ. 1. հայտնի դարձնել, հայտարարել, ծանուցել. 2. հայտնաբերել, որոնելգտնել:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ, գ. 1. հայտնի՝ ակներև լինելը. 2. հայտնվելը, երևալը. 3. աստվածային պատգամ կամ հրաման. 4. տեսիլք. 5. (եկեղց.) Քրիստոսի երևալը մարմնով, աստվածահայտնություն:

ՅԱՆԴԻՄԱՆ ԼԻՆԵԼ. ներկայանալ:

ՅԱՆԿՈՒՑԱՆԵԼ, ուցի, ո՛, պբ. իր կողմը քաշել՝ ձգել, գրավել, հրապուրել. 2. սովորեցնել մի բանի, ընտելացնել:

ՅԱՆՁԱՆՁԵԼ, եցի, ն. սիրով խնամել, հոգ տանել, մխիթարել, հանգստացնել:

ՅԱՆՑՈՒՄՆ, ցման, գ. հանցանք գործելը, օրինազանցություն, պատվիրանազանցություն:

ՅԱՇՏ ԱՌՆԵԼ. զոհ անել, զոհ մատուցել, զոհել:

ՅԱՋՈՂՈՒԱԾ, ոյ, ոց, գ. 1. հաջողություն, 2. հաջողակ լինելը, հաջողակություն:

ՅԱՌՆԵԼ, յարեայ, արի՛, յարուցեալ. 1. վեր կենալ, ելնել, ոտքի կանգնել. 2. (կրոն.) մեռած տեղից վեր կենալ, հարություն առնել, վերստին կենդանանալ. 3. քնից արթնանալ. 4. (կրոն.) երևան գալ, առաջ գալ (սուտ մարգարեներ). 5. արշավել, հարձակվել:

-ՅԱՌՆԵԼ Ի ՎԵՐԱՅ. հարձակվել, վրա վազել:

ՅԱՏԿՈՒԹԻՒՆ, գ. 1. որպիսություն, առանձնահատկություն, մեկին կամ մի բանի բնորոշ՝ սեփական հատկանիշ. 2. իրականացում, ստուգապես կատարում:

ՅԱՐԳԱՆՔ, նաց, գ. 1. հարգելը, հարգվելը, պատիվ, մեծարանք. 2. գովեստ, գովասանք:

ՅԱՐԿ, ի, աց, գ. 1. տանիք, ծածկ. 2. շենք, տուն, բնակարան, փխբ. օթևան, պատսպարան:

ՅԱՐՈՒՑԱՆԵԼ, ըուցի, ը՛ո, պբ. 1. վեր բարձրացնել, կանգնեցնել. 2. արթնացնել, զարթեցնել. 3. -մեռածին կենդանացնել, հարություն տալ. 4. առաջացնել, առաջ բերել. 5. հուզել, գրգռել, արծարծել:

ՅԱՐՏԱՍՈՒՍ ՀԱՐԿԱՆԵԼ (իմ). 1. արտասուք թափել, լաց լինել. 2. արտասուք թափելով՝ վիշտ՝

ցավ արտահայտել, սգալ, ողբալ:
ՅԱՒԵԼՈՒԼ, լի, ւե՛լ, ն. ավելացնել, շատացնել, չ. ավելանալ:
ՅԵՂԱԿԱՐԾՈՒՄՆ, մ. հանկարծ, անսպասելիորեն:
ՅԵՆՈՒԼ, եցայ, ցի՛ր, չ. հենվել, կռթնել, թիկնել:
ՅԵՏ, նխդ, մ. հետո:
ՅԵՏՍ, մ. ետ, դեպի ետ, ետևից:
ՅԵՐԵՍԱՑ. նխ. պատճառով, երեսից:
ՅԻՄԱՐԱՆԱԼ, ացայ, չ. 1. հիմար դառնալ, անմտանալ, խելքը կորցնել. 2. ապշել. 3. հափշտակվել:
ՅԻՍ ՏԷՐ. ի՛նձ նայիր՝ լսիր, տե՛ր (աղերսանքի ձև առ Աստված):
ՅՈ՞, դ. ո՞ւր, դեպի ո՞ւր:
ՅՈԳԻՈՑ ԵԼԱՆԵԼ՝ ՀԱՆԵԼ. հոգոց հանել:
ՅՈԼՈՎԵԼ, եցի, ն. 1. շատացնել, բազմացնել. 2. չ. շատանալ, բազմանալ, ավելանալ, աճել:
ՅՈԼՈՎՈՒԹԻՒՆ, գ. շատություն, մեծ քանակություն, հաճախություն, հորդություն:
ՅՈՅՐ, յոյրի, ից, ա. գեր, պարարտ, հաստ, լիքը:
ՅՈՐԴՈՐԱԽՈՒՅԶ, ա. փութաջանորեն խուզարկող՝ փնտրող, սրտանց որոնող:
ՅՈՐԴՈՐՈՒՄՆ, գ. հորդորելը, հորդորանք:
ՅՈՐՍԱՅՍ, մ. երեսն ի վեր՝ մեջքի վրա պառկած:
ՅՈՒՇ ԱՌՆԵԼ. հիշեցնել:
ՅՈՒՇ ԳԱԼ. ուշքի գալ, զգաստանալ, հիշել:
ՅՕԴԵԼ, եցի, ն. զոդել, կապկպել, կցել, հարմարեցնել:
ՅՕԺԱՐԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. հոժար դարձնել, համաձայնեցնել, հակել՝ տրամադրել մի բանի, հորդորել, դրդել:
ՅՕՇԵԼ, եցի, ն. կտոր-կտոր անել, պատառոտել, հոշոտել:
ՅՕՐԻՆՈՒԱԾ, ոյ, ոց կամ ի, աց, գ. 1. հորինելը. 2. կերտվածք, շինվածք. 3. դրվագ, զարդադրվագ:

Ն

ՆԱԶԱՆՔ, նաց, գ. նազ անելը, սեթևեթանք:
ՆԱԺԻՇՏ, ժշտի, տաց, գ. աղախին, կին սպասավոր:
ՆԱԽԱՆՁ, ու, ուց, գ. 1. նախանձ. 2. վրեժ, վրեժխնդրություն. 3. եռանդ:
-ՆԱԽԱՆՁ ԱՐԿԱՆԵԼ. նախանձը շարժել՝ գրգռել:
ՆԱԽԱՆՁԱՒՈՐ, ի, աց, ա. 1. բարի նախանձ ունեցող, ուրիշին նմանվելու՝ հասնելու ձգտող. 2. նախանձախնդիր:
ՆԱԽԱՆՁՈՏ, ի, աց, ա. գ. 1. նախանձող, նախանձոտ, նախանձով վերաբերվող. 2. քինախնդիր, վրեժխնդիր:
ՆԱԾ(Ա)ՐԱՑԻ, ցւոյ, ոց, ա. Նազովրեցուն (Քրիստոսին) հետևող, քրիստոնյա:
ՆԱՐԴՈՍ, ի, գ. (բսբ.) շրթնածաղկավորների ընտանիքին պատկանող եթերայուղատու բույս. հուսամ, փաղանգամուշկ:
ՆԵՐՔԻՆԻ, նւոյ, նեաց, ա. գ. 1. ամորձատված տղամարդ. 2. պալատական պաշտոնյա (մանավանդ ամորձատված) արքունի կանանոցում:
ՆԿԱՆԱԿ, ի, աց, գ. հասարակ խմորից բլիթ, կլոր բլիթանման հաց:
ՆԿԱՐԵԼ, եցի, ն. գրել:
ՆՆՋԵԼ, եցի, չ. 1. քուն մտնել, քնել. 2. կնոջ կամ օտար կնոջ հետ սեռական հարաբերություն ունենալ, կենակցել. 3. մեռնել:
ՆՇԱՆ, ի, աց, գ. հրաշք, սքանչելագործություն:
ՆՇԱՆԱԿԻՐ, կրի, րաց, ա. գ. նշան՝ դրոշակ կրող, դրոշակակիր:
ՆՇԱՒԱԿԵԼ, եցի, ն. 1. խայտառակել. 2. հաղթել թշնամուն ու անարգանքի՝ ծաղրուծանակի ենթարկել. 3. վրան անարգանքի նշան՝ խարան դնել:
ՆՇԽԱՐ, ի, աց, գ. 1. հացի՝ կերակրի՝ հնձի ևն մնացորդ՝ ավելցուկ, փշուր, կտոր, մաս. 2. նման. որևէ բանի պահպանված մաս, մնացորդ, նմուշ. 3. (եկեղց.) սրբերի կմախքից մնացած մաս, մասունք:
ՆՇՄԱՐԱՆՔ, գ. 1. մի փոքր նշան, հազիվ նկատելի հետք. 2. աղոտ՝ հազիվ նկատելի լույս, լույսի նշույլ. 3. աղոտ ակնարկություն:
ՆՈՃ, ի, ից և ոյ, ոց, գ. 1. (բսբ.) նոճի. 2. ա. նոճի ծառից, նոճից շինած՝ պատրաստած:

ՆՈՅՆԱՀԱՍ, ա. նույնչափ՝ նույն կերպով հասուն՝ հասած (պտուղ):

ՆՈՅՆԺԱՄԱՅՆ, մ. հենց նույն ժամին, նույն ժամանակ, նույն պահին, իսկույնևեթ, անմիջապես:

ՆՈՅՆՀԵՏԱՅՆ, մ. անմիջապես, իսկույն:

ՆՈՐԱԹԵՔ, ա. նոր եղած՝ առաջ եկած, նորաստեղծ:

ՆՈՐՈԳԱՏԵՍԻԼ, ա. նոր՝ առաջին անգամ տեսնող:

ՆՈՒ, նուոյ, ով կամ աւ, նուաւնք, անց, նաև նուք, նովանք, գ. հարս, տան հարսը (փեսայի ծնողների և ազգականների համար), եղբորորդու կամ հորեղբորորդու կին:

ՆՈՒԻՐԱԿ, ի, աց, գ. 1. պաշտոնյա, որ թագավորի կամ իշխանի առջևից գնալով՝ հայտարարում էր նրա գալուստը և ճանապարհ բաց անում. 2. դռան մոտ կանգնած պաշտոնյա, որ արքունիք հրավիրված անձին առաջնորդում էր թագավորի մոտ կամ հյուրին ներս էր ընդունում. 3. պաշտոնյա՝ սպասավոր, որ ուղարկվում էր մեկի մոտ որոշ հանձնարարությամբ, պատվիրակ:

ՆՍՏՈՅ ՏԵՂԻ, գ. հետույք, նստուկ:

Շ

ՇԱՀԱՊ, ի, աց, գ. 1. տեր, իշխան, պետ. 2. գլխավոր նախարար,նախարարապետ. 3. գավառապետ, քաղաքապետ. 4. նահապետ, ցեղապետ:

ՇԱՀԱՊԵՏ, ի, աց, գ. որոշ վայրեր, պահպանող ոգի:

ՇԱՀԱՒՈՐ, ի, աց, ա. շատ պիտանի և օգտակար, շահավետ, շահեկան:

ՇԱՂԻՂ, գ. 1. հում միս. 2. մորթած կամ սատկած կենդանու մարմինը. 3. դիակ, գեշ, լեշ:

ՇԱՂՂԱՅԵՂՑ, ա. շատ մսոտ, թանձրամարմին, խոշորամարմին:

ՇԱՅԵԿԱՆ, ա. շահեկան, օգտակար:

ՇԱՌԱԻՆ, ւունք, գ. ուղտ:

ՇԱՐԱԻ, ոյ, ոց, գ. 1. թարախ, 2. ապականություն, նեխություն, գարշահոտություն:

ՇԱՐԺՈՒՄՆ, ժման, գ. 1. շարժվելը, երթևեկություն. 2. երկրաշարժվելը, երթևեկություն. 2. երկրաշարժ. 3. ծփանք, ալեկոծում. 4. փխբ. հուզում, խռովություն:

ՇԻՆՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. կառուցողական՝ շինարարության գործ, շինարարություն, ճարտարապետություն:

ՇԻՆՈՒԱԾԱՁԵՒ, ա. շենքի նման (փղի մասին):

ՇԻՋԱՆՈՒՏ, ա. մարող, հանգչող:

ՇՆՈՐՀ, ի, իւ կամ աւ, աց, օք, գ. 1. ձրի տրված պարգև, բարիք, ողորմություն. 2. շենք ու շնորհք. 3. վայելչություն, գեղեցկություն. 4. շնորհակալություն, գոհություն:

ՇՆՈՐՀԱԼԻՑ, ա. 1. շնորհներով՝ ձիրքերով լի՝ օժտված, շնորհազարդ. 2. սիրուն, գեղեցիկ, վայելուչ. 3. ուրախարար, ավետավոր, հաճելի. 4. ուրախ, զվարթ:

ՇՆՁԵԼ, եցի, ն. և չ. 1. բերանից օդի հոսանք արտամղել, փչել. 2. փչել (քամի):

ՇՐՋԱՆ, ի, աց, գ. շրջապտույտ, հորձանք:

Ո

Ո, զո, ոյր, ում, յումմէ, ոյք, զոյս, ոյց, յոյց. գործ. չունի. հարցական և հարաբերական դ. 1. ով. 2. փխ. որ:

ՈՁՈՐԱԾԵԾ ԱՌՆԵԼ. ճիպոտներով ձաղկել, գանահարել, խոշտանգել:

ՈԼՈՔ, աց և ոյ, ոց, գ. (կզմխս.) սրունքի մեծ ոսկորը՝ ծնկից մինչև թաթը:

ՈՂՈՔ, ոյ, ով, գ. 1. աղաչանք, թախանձանք. 2. շողոքորթություն:

ՈՂՈՔԱՆՔ, նաց, գ. 1. աղերսանք. 2. հորդոր. 3. մեղմ ու համոզիչ խոսք՝հրապուրելու՝ գրավելու համար, շողոքորթություն, ողորմագին քծնություն:

ՈՂՋՈՅՆ, ջունի, ից, գ. 1. մեկի որպիսությունը հարցնելը, մեկին առողջությունը ցանկանալը, բարևելը, բարև. 2. ողջույնի խոսք. 3. ողջ-առողջություն, առողջություն:

ՈՍԿԵՀԱՆ, ի, աց. ա. երկրի ընդերքից ոսկի հանող:

ՈՍԿԵՀՈՒՌ, ՈՍԿԵՀՈՒՌՆ, | ա. ոսկեթել, ոսկեհյուս, ոսկեզարդ:

ՈՍՏԱՅՆ, ի, ից, գ. ջուլհակի հյուսած՝ գործած թելերի ցանցը. 2. փայտե դազգահ, որի վրա ոս-

տայնը գործում են. 3. նման. սարդի ոստայն, սարդոստայն:

ՈՍՏԱՅՆԱՆԿ, ի, աց, ա. գ. ոստայն գործող, ջուլհակ:

ՈՍՏԱՅՆԱՆԿՈՒԹԻՒՆ, գ. ոստայնանկի՝ ջուլհակի արհեստը, ոստայն գործելը, ջուլհակութիւն:

ՈՍՏԱՆԻԿ, նկի, նկաց, ա. 1. թագավորական ոստանի բնակիչ. 2. արքայական տոհմից սերված, ազնվական ծագում ունեցող, ազնվական. 3. ոստանի՝ մայրաքաղաքի բնակիչ:

ՈՍՏՆՈՒԼ, ՈՍՏՋԵԼ (ԻՄ), տեայ, տուցեալ, չ. 1. ոստնել, վեր ցատկել՝ թռչել. 2. վայր ցատկել. 3. դուրս թռչել, դուրս նետվել:

ՈՏՆ կամ ԸՆԴ ՈՏՆ ՀԱՐԿԱՆԵԼ. ոտնահարել, արհամարհել, անտեսել:

ՈՐԱՅ. ոյ, ոց, գ. հնձած ցորենի կամ գարու խուրձ՝ խրձիկ:

ՈՐԴԱՆ (ԿԱՐՄԻՐ), գ. վառ կարմիր ներկ, որ ստացվում է նույնանուն շատ մանր մլուկից:

ՈՐԵԱՐ, որերոյ կամ եարոյ, ով, նաև որեարք, գ. հոգն. մարդկանց խումբ, որոշ խումբ մարդիկ: -ԱԻԱԳ ՈՐԵԱՐ. ազնվականներ, ազնվականների խումբ:

ՈՐԹ[1], ու ուց, գ. հորթ, երինջ:

ՈՐԹ[2], ոյ, որթք և որթիք, ոց, գ. խաղողի տունկ, որթատունկ, վազ:

ՈՐԻՇ, ա. մ. ուրիշ, տարբեր. ջոկ, առանձին, անջատ, մեկուսի:

ՈՐԿՈՐՍՏՈՒԹԻՒՆ, գ. որկրամոլություն, շատակերություն, անհագություն:

ՈՐՈՃԱՅԻՆ, յնոյ, ոց, ա. որոճող, որոճացող:

ՈՐՈՇԵԼ, եցի, ն. 1. սահմանել, կարգել. 2. մեկը մյուսից տարբերել, զանազանել. 3. ընտրել, ջոկել. 4. զատել, բաժանել, հեռացնել, առանձնացնել:

ՈՐՈՇՈՒԹԻՒՆ, գ. որոշելը, որոշվելը, ընտրություն, ընտրողություն, զանազանություն:

ՈՐՊԷՍ, չ. 1. որպեսզի, որ. 2. այնպես որ. 3. ինչպես, ինչպես որ:

ՈՐՊԷՍ ԶԻ, չ. 1. որպեսզի, որ. 2. այնպես որ, որպես թե, կարծես թե, իբր թե. 3. ձ. որքա՜ն, ինչպե՜ս:

ՈՒԽՏ, ի, ից, գ. 1. խոսք տալը՝ երդումով կամ առանց երդման. 2. դաշինք. 3. (կրոն.) Աստծու կտակը՝ կամքը մարդկանց. 4. (կրոն.) Աստծու կտակը պարունակող գիրք. Կտակարան (Նոր և Հին). 5. կրոնական միաբանություն՝ միություն՝ միավորում:

ՈՒՂԽ, մանավանդ՝ ՈՒՂԽՔ, խից, գ. հոսող ջուր, ջրի հորդ հոսանք, հեղեղ:

ՈՒՂՂԱԳՈՐԾ, ի, աց, գ. ուղիղ՝ արդար բան անող, արդարադատ, բարեգործ, առաքինի:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ, գ. 1. ուղիղ լինելը, 2. չիտակություն, ճշտություն. 3. արժանի եղողը, արժանին:

ՈՒՄՊԷՏ, ա. մ. անպետք, անպիտան, սուտ:

ՈՒՆԵԼ(իմ), կալայ, կա՛լ կամ կա՛, հ. 1. ունենալ, կա. 2. առնել, տիրել, տեր լինել. 3. բռնել, պահել. 4. վերցնել, տանել. 5. համարել. 6. վերաբերություն՝ առնչություն ունենալ. 7. կարողանալ:

-ՈՒՆԵԼ ԱՌ ԱՍՏՈՒԱԾՍ. աստված համարել:

-ՈՒՆԵԼ Ի ՄՏԻ. մտադրվել:

ՈՒՌՆ, ռան, ռանց, գ. սեպ, գամ, մեծ մեխ:

ՈՒՍՏԵՄՆ, մ. ինչ-որ տեղից:

ՈՒՍՏԵՔ, մ. որևէ տեղից, մի ուրիշ կողմից:

ՈՒՍՏԻ, հարցական-հարաբերական դ. 1. որտեղի՞ց, 2. որտեղից որ. 3. չ. հետևաբար, ուրեմն, այդ պատճառով, դրա համար:

ՈՒՐԵՄՆ, 1. չ. հետևաբար. 2. - գործածվում է իբրև անորոշ դերանուն՝ մի, ինչ-որ. 3. մ. մի տեղ, ինչ-որ մի տեղ. 4. մ. երբեմն, մերթ. 5. մ. համարյա թե, գրեթե. 6. եղբ. կարծես թե, ասես թե. 7. ուրիշ մակբայների հետ գործածվում է իբրև թարմատար:

ՈՒՐԵՔ, 1. մ. մի տեղ, որևէ տեղ. 2. դ. ինչ-որ, որևէ: -ՈՒՐԵՔ ՈՒՐԵՔ. մ. 1. տեղ-տեղ. 2. երբեմն-երբեմն: -Է ՈՒՐԵՔ. լինում է տեղ որ ..., պատահում է որ...:

ՈՒՐ ՈՒՐԵՔ. 1. ուր էլ որ, որտեղ էլ որ. 2. երբ էլ որ:

Զ

ԶԱՐ, ի, աց, ա. 1. ոչ բարի, չարիք գործելու հատկություն ունեցող. 2. վնասակար. 3. չա-

ՐԻՔ պարունակող, 4. վատ, հոռի, անպիտան. 5. դաժան:
ՉԱՐԱԿՆԵԼ, եցի, ն. չար աչքով նայել:
ՉԱՐԱՅՈՒՇ, ա. հիշաչար, ոխակալ, ոխ պահող:
ՉՈԳԱԼ, չոգայ, ար, աւ, աք, այք, ան. չ. պակասավոր բայ, որ գործածվում է որպես ԵՐԹԱԼ բայի անցյալ կատարյալը՝ գնացի ևն:
ՉՈՐԵՔԿԵՐՊԵԱՆ, ա. 1. չորս կերպ՝ ձև ունեցող. 2. չորս կերպարանք ունեցող:
ՉՈՐԵՔՕՐԵԱՅ, ըէի, ից, իւք, ա. մ. չորս օրվա, չորս օրական:
ՉՈՔԱՅ, աւ, տե՛ս ՉՈԳԱԼ:
ՉՔՈՏԻՔ, գ. չնչին բաներ՝ էակներ:

Պ

ՊԱԿԱՍԵԼ, եցի և եցայ, չ. 1. նվազել, քչանալ. 2. չգտնվել, չլինել, գոյություն չունենալ. 3. նվազել, թուլանալ, ուժասպառ լինել. 4. բավական չլինել, չբավարարել:
ՊԱՀ ԱՐԿԱՆԵԼ. պաշարել:
ՊԱՀԵԼ, եցի, եա՛, ն. 1. պահապանել, հսկել. 2. ծոմ պահել, որևէ բան չուտել:
ՊԱՀ ՈՒՆԵԼ, պահել, պահպանել:
ՊԱՂԱՏԻՏ, տտի, ացի, գ. չոր թուզ:
ՊԱՂԱՏՆ կամ ՊԱԼԱՏՆ, տան կամ տին, տանց, գ. արքայական ապարանք, արքունիք:
ՊԱՇՏԵԼ, եցի, ն. ծառայել, սպասարկել, ծառայություն անել մեկին:
ՊԱՇՏՕՆ, տման, մունք, մանց, գ. 1. Աստծուն պաշտելը, պաշտամունք. 2. սուտ պաշտամունքի առարկա, հեթանոսական աստվածներ, կուռք. 3. եկեղեցական արարողություն, սպասավորություն, ժամերգություն. 4. ամեն տեսակ ծառայություն Աստծուն կամ մարդկանց:
-ՊԱՇՏՕՆ ԱՌՆԵԼ կամ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ. մեծարել, պատվել երկրպագել:
ՊԱՇՏՕՆԱՏԱՐ ԼԻՆԵԼ(իմ). պաշտամունք մատուցել, պաշտել, երկրպագել:
ՊԱՏԱՐԱԳ, ի ացի, գ. 1. զոհ. 2. նվեր, ընծա. 3. կաշառք:

ՊԱՏԵԼ, եցի, ն. 1. փաթաթել, կապել. 2. պատանել, պատանքի մեջ փաթաթել. 3. շրջապատել, պաշարել. 5. ծածկել, պարուրել. 5. պտտեցնել, շրջեցնել:
ՊԱՏԺԱՊԱՐՏ, ի, ից կամ ացի, ա. գ. պատժի արժանի հանցավոր, հանցապարտ:
ՊԱՏԿԱՌ, ա. ամոթխած, ամաչկոտ:
ՊԱՏՈՒՀԱՍ, ի, ից, գ. պատիժ, չար գործերի ծանր հատուցում (իբրև հետևանք Աստծու բարկության):
ՊԱՏՈՒՀԱՍԱԿՈՏ ԱՌՆԵԼ. պատուհասի ենթարկել, խիստ պատժել:
ՊԱՏՈՒՀԱՍԵԼ, եցի, ն. խիստ սպառնալիքով դադապարտել, սաստիկ հանդիմանել, սաստել, անարգել, նախատել:
ՊԱՏՍՊԱՐԵԼ (իմ), եցայ, չ. ապաստանել, ապավինել:
ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ, ա. խոսքը պատրաստ ունեցող, խոսքը միշտ պատրաստ, պատասխան տալու՝ հանպատրաստից խոսելու ընդունակ:
ՊԱՏՐԱՍՏԵԼ (իմ) եցայ, չ. ուշադիր լինել, զգուշանալ:
ՊԱՐԱՐԵԼ, եցի, ն. պարարտ՝ գեր դարձնել, գիրացնել, չաղացնել:
ՊԱՐԵԿԱՊԱՆ, պարսկապան, ի, ացի, ա. պարեկություն անող, պահապան:
ՊԱՐՄԱՅԵԼ, եցի. ն. վնասը իրենց պատճառել, վնասը կրել՝ քաշել:
ՊԱՐՍ, ի, ից, գ. թոկից պատրաստված ձեռքի հարմարանք՝ թշնամու վրա քար նետելու՝ արձակելու համար, պարսատիկ:
ՊԱՐՍԱՒՈՐ, ի , ացի, ա. գ. պարս ունեցող՝ կրող, պարսով զինված:
ՊԱՐՏԱՍԵԼ (իմ), եցայ, չ. 1. խիստ հոգնել, ուժից ընկնել, ուժասպառ լինել, թուլանալ. 2. վհատվել, լքվել:
ՊԱՐՏԱՍԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. խիստ հոգնեցնել, ուժից գցել, թուլացնել:
ՊԱՐՏ Է, մբ. պետք է:
ՊԵՂԵԼ, եցի, ն. 1. փորելով դուրս հանել. 2. փորելով բանալ (փոս, ջրհոր)
ՊԵՆՏԵԿՈՍՏԷ, ի, ից, գ (եկեղց.) 1. հրեաների Եգիպտոսից դուրս գալու հիսուներորդ օրը, հիսնօրյակ. 2. հիսուներորդ օրը՝ հաշված զատկի կիրակիից, երբ կա-

տարվում է հոգեգալստյան տոնը, հոգեգալուստ. 3. զատկից մինչև հոգեգալուստ եղած հիսուն օրվա ժամանակը, հինունք:

ՊԵՏՈՒԹԻՒՆՔ, գ. հրեշտակների ինը դասերից մեկը՝ յոթերորդը վերևից ներքև և երրորդը ներքևից վերև:

ՊԷՇԱՍՊԻԿ, ա. գ. իշխանավորի առջևից արագ ընթացող ձիավոր, առաջընթաց սուրհանդակ:

ՊԻՏԱՆԱՅՈՒ, ա. բանի պետք եկող, պետքական, պիտանի, օգտակար:

ՊԻՏԱՆԱՅՈՒՔ, գ. հոգն. անհարժեշտ պիտույքներ:

ՊԻՏՈՅ, ա. 1. ինչ որ պետք է, պետքական, հարկավոր. 2. հարմար, պատշաճ:

-ՊԻՏՈՅ է. մբ. պետք է, արժան է:

ՊԻՏՈՅՔ, պիտոյից, իւք, գ.պետք, կարիք, պահանջ:

ՊԻՏՈՒՍ, գ. սոճի:

ՊՂԵՐԳ, ի, ից կամ աց, ա. ծուլ, հեղգ, ալարկոտ:

ՊՂԵՐԳԱՆԱԼ, ացայ. չ. ծուլանալ, հեղգանալ:

ՊՂԵՐԳՈՒԹՅԻՒՆ, գ. պղերգ լինելը, ծուլություն, հեղգություն, անհոգություն, դանդաղկոտություն:

ՊՆԴԵԼ, եցի, ն. պինդ՝ ամուր դարձնել, պնդացնել, ամրացնել:

ՊՆԴՈՒԹԻՒՆ, գ. 1. պինդ լինելը, ամրություն. 2. արիություն, զորություն, ուժ. 3. ջանք, ճիգ. 4. աշխատասիրություն:

ՊՈՅՏՆ, պուտան, տունք, տանց, գ. կավե ման, պուտուկ, կճուճ:

ՊՍԱԿԵԼ, եցի, ն. 1. պսակ կապել, պսակով զարդարել. 2. թագ կապել, թագադրել. 3. պարգևատրել. 4. զարդարել, փառավորել, շքեղացնել. 5. մեկի գլխին պսակ դնել, ամուսնության պսակն օրհնել. 6. ավարտին հասցնել, լրացնել:

ՊՏՈՒՂ, պտղոյ, ոց, գ. 1. ծառերի և բույսերի բերքը. 2. հողագործական արտադրանք՝ արդյունք, բերք. 3. վանքերին տրվող բնահարկ՝ տուրք, պտղի:

Ջ

ՋԱՀԱՋԳԵԱՅ, ա. 1. ջահով՝ լույսով զարդարված, լույսով ողողված, լուսապայծառ. 2. իր մեջ կամ ձեռքին ջահ ունեցող, լույս կրող:

ՋԱՄԲԵԼ, եցի, ն. ջամբ՝ կաթ տալով խնամել. 2. կերակրել, սնել, սնուցել:

ՋԱՆ, ի ից և ոյ, ու, ուց, գ. 1. ճիգ, ջանք, 2. աշխատանք, նեղություն, դժվարություն:

ՋԱՏԱԳՈՎ, ի , աց, կամ ից, ա. գ. 1. մեկի դատը՝ իրավունքները պաշտպանող, դատապաշտպան, փաստաբան. 2. փխբ. բարեխոս. 3. ընդհանրապես՝ որևէ մեկի կամ մի բանի ջերմ կողմնակից՝ պաշտպան. 4. մեղադրող, ամբաստանող, դատախազ:

ՋԻԼ, ջլի, ջլաց կամ ՋԻՂ, գ. 1. ջիլ. 2. ջլերից՝ մանրաթելերից պատրաստած թոկ՝ լար. 3. փխբ. ուժ, զորություն:

ՋՆՋԵԼ, եցի, ն. 1. բնաջնջել, ոչնչացնել, վերացնել. 2. մաքրել, սրբել:

ՋՐԱԾՈՒՓ, ա. ջրում ծփացող՝ տարուբերվող:

ՋՐԱՅՈՅԶ, ա. ջրում որս փնտրող

ՋՐԳՈՂԵԱԼ, ա. ջրդողությամբ հիվանդ:

ՋՐԳՈՂՈՒԹԻՒՆ, գ. (բժշկ.) շճային հեղուկի կուտակում մարմնի որոշ խոռոչներում. ջրակալում:

Ռ

ՌԱՀ, ի, ից, գ. ճանապարհ, ուղի:

ՌԱՄԻԿ, մկի, կաց, 1. գ. հասարակ ժողովուրդ, ժողովրդի բազմություն, ռամկական խավին պատկանող մարդիկ. 2. ա. ռամկական, գռեհիկ, անկիրթ, անտաշ:

ՌՈՃԻԿ, ճկի, կաւ կամ ով, կամ, կաց, գ. ամեն օրվա ուտելիքի պաշար, օրվա պարեն, օրապահիկ, թոշակ:

Ս

ՍԱԼԱՄԲ, ի աց, հոգն. մունք. գ. (կենդբ.) փասիանների ընտանիքին պատկանող թռչուն, տուռաճ:

ՍԱԿԱՌԻ, ուոյ, ռեաց, գ. մեծ կողով, քթոց:

ՍԱՍՏ, ի , ից, գ. 1. սաստում, որևէ բան արգելող խիստ հրա-

ման՝ կարգադրություն. 2. ցաս-սում, զայրույթ, վրդովմունք. 3. հանդիմանություն, նախատինք. 4. պատիժ, պատուհաս. 5. բուռն սաստկություն, սպառնալիքի ահավորություն:

ՍԱՍՏԿԱՆԱԼ, ացայ, չ. խիստ՝ սպառնալից դառնալ, զայրանալ:

ՍԱՏԱԿԵԼ, եցի, ն. 1. սպանել, չարաչար մահով սպանել, սատկեցնել. 3. կոտորել, բնաջնջել. 3. ոչնչացնել, կործանել, ավերել. 4. եցայ, կ. չ. նույն նշ. նաև սատկել, մեռնել, մահանալ:

ՍԱՏՐԱՊ, գ. ավագ նախարար, բդեշխ:

ՍԱՐԻԿ, գ. սարյակ:

ՍԱՐԿԱՒԱԳ, ի, ագունք կամ ագք, գաց, գ. 1. (եկեղց.) քահանայից կրտսեր եկեղեցական պաշտոնյա, որ սպասավորում է պատարագչին:

ՍԱՐՍԱՓԻՒՆ, գ. մարմնի դող, սարսուռ:

ՍԵՂԱՆ, ոյ, ոց, ովք կամ նօք, գ. 1. կարասի՝ զանազան գործածությունների համար, մասնավորապես՝ ճաշասեղան. 2. կերակուր. 3. հացկերույթ, կոչունք. 4. դրամափոխի վաճառասեղան. 5. զոհասեղան, զոհարան, բագին. 6. պատարագ մատուցելու սեղան եկեղեցում, խորան:

ՍԵՊՀԱԿԱՆ, ի, աց, ա. որևէ մեկին սեփականության իրավունքով պատկանող. 2. բուն, բնիկ, հայրենի. 3. իրեն հատուկ, յուրահատուկ, առանձնահատուկ 4. ընտիր, ընտրյալ:

ՍԷՐ, սիրոյ, ով, գ. 1. մեկի՝ մի բանի նկատմամբ գորովանքի՝ կապվածության՝ նվիրվածության խոր զգացում. 2. հակառակ սեռի անհատի նկատմամբ համակրանքի բուռն զգացմունք, սիրահարություն. 3. մտերմություն, բարեկամություն. 4. փխբ. սիրած էակը, սիրեցյալ:

ՍԻԿՂ, սկեղ, ղաց, գ. 1. ծանրության հրեական չափ, որ հավասար է 6,8 գրամի. 2. նույն կշռով ոսկե կամ արծաթե դրամ:

ՍԻՐՏ ԼՍԵԼՈՅ. իմաստութիւն:

ՍԻՒՆՀՈԴՈՍ, ՞ի գ. ընհանուր եկեղեցական ժողով:

ՍԻՒՆՀՈԴՈՍԱԿԱՆ, ա. սյունհոդոսին՝ ընհանուր եկեղեցական ժողովին հատուկ՝ վերաբերող:

ՍԿԱՅԱԳՈՐԾ, ա. հսկայական, ահագին մեծության, հսկայակառույց:

ՍԿԵԼ, չ. 1. հսկել, արթուն մնալ. 2. հետևել մեկի՝ մի բանի գործունեությանը:

ՍՆԱՐ, ի, մանավանդ՝ ՍՆԱՐՔ, րից, գ. 1. անկողնու կամ մահճակալի այն կողմը, որտեղ դնում են գլուխը, գլխավերև. 2. գլխատակ, գլուխը դնելու տեղը:

ՍՈՆՔԱՆԱԼ, ացայ, ցեալ, չ. 1. մարմնով լիքը դառնալ, գիրանալ. 2. տոզել:

ՍՈՐ, ոյ, ոց, գ. ծերպ, ճեղք, խորշ:

ՍՈՐԱՄՈՒՏ, ա. սորերը՝ ծակերը մտած, մտնող, ծակամուտ:

ՍՈՒՏԱՊԱՏՈՒՄ, ա. սուտ բաներ պատմող, ստահոդ:

ՍՈՒՐԲ ԱՌՆԵԼ, մաքրել, սրբել:

ՍՊԱՀ, ի, ից, գ. զորք, բանակ, 2. այրուձի, հեծելազոր. 3. զորական:

ՍՊԱՍ, ու, ուց, գ. 1. սպասավորություն, ծառայություն:

ՍՌՆԱՊԱՆ, ի, աց կամ ից, գ. սրունքներին հագնելու և սրունքները հարվածից պաշտպանելու հարմարանք՝ կաշվից կամ այլ նյութից:

ՍՏԱՄԲԱԿ, ի, աց, ա. 1. խիստ դժնի, դաժան. 2. ըմբոստ, ապստամբ, ընդվզող, անհնազանդ:

ՍՏԱՄԲԱԿԵԼ, եցի, չ. ըմբոստանալ, ապստամբել:

ՍՏԱՇԽՆ, խին, գ. կնդրուկի նման անուշահոտ նյութ, որ ստացվում է ստյուրակ ծառից:

ՍՏԳՏԱՆԵԼ, տե՛ս ԸՍՏԳՏԱՆԵԼ:

ՍՏԻՊՈՎ, ՍՏԻՊԱԻ, մ. չտապ, շուտափույթ. 2. ստիպմամբ, հարկադրելով. 3. հոժարությամբ, ինքնակամ:

ՍՏՆԴԻԱՅ, դիայք, ա.գ. ստինքով կերակրվող, ծիծ ուտող, ծծկեր (երեխա):

ՍՏՈՐԻ, գ. ոստայնի գլանաձև փայտը, որի վրա փաթաթվում է գործված կտավը:

ՍՏՈՒԳԱՀՄՈՒՏ, ա. քաջահմուտ, փորձառու (բժիշկների մասին):

ՍՏՈՒԳԱՆԵԼ, եցի, ն. չ. անտեսել, հաշվի չառնել, անուշադրության մատնել:

ՍՏՈՒԵՐԱԳԻՐ, գրի, գրաց, ա. ստվերի նման:

ՍՐԲԵԼ, եցի, ն. ընդհանրապես՝ մաքրել, մաքուր դարձնել. 2.

ձեռքերը լվանալ. 3. մարմնի վրայի քոսը՝ բորը մաքրել, բժշկել. 3. վազի ավելորդ չիվերը կտրել-հեռացնել, էտել. 4. ցորենը հարդից մաքրել՝ բաժանել. 5. փխբ. մեղքերը՝ արատները մաքրել՝ վերացնել. 6. փխբ. անպատիժ թողնել, արդարացնել. 7. (եկեղց.) սուրբ՝ մաքուր ճանաչել, պիղծ չհամարել. 8. նվիրաբերել, ընծայել (Աստծուն կամ տաճարին):

ՍՐՈՎԲԷ, ի, ից, գ. քրիստոնեական կրոնի մեջ՝ առաջին դասի հրեշտակ՝ վեց թևով, սերովբե:

ՍՐՏՄՈՒԹԻՒՆ, գ. բարկություն, զայրույթ, ցասում:

ՍՔԱՆՉԵԼԻՔ, գ. սքանչացման արժանի գործ կամ իր, հրաշալի՝ հիանալի բան, հրաշալիք. 2. սքանչելի գործ, հրաշք:

Վ

ՎԱԽՃԱՆ, ի, աց, գ. 1. վերջ, ավարտ. 2. մահ:

ՎԱՂ ԵԹԷ ԱՆԱԳԱՆ. մ. վաղ թե ուշ:

ՎԱՂՎԱՂԱԿԻ, մ. շուտով, իսկույն, անմիջապես, շուտափույթ կերպով:

ՎԱՃԱՌ, ի, աց և ու, ուց, գ. 1. վաճառելը, առևտուր. 2. վաճառքի կամ վաճառած իր, ապրանք:

ՎԱՅԵԼԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. 1. վայելել՝ օգտվել տալ. 2. վայելուչ դարձնել, զարդարել:

ՎԱՅՐԱՊԱՐ, մ. ա. զուր, իզուր, անտեղի, ապարդյուն:

ՎԱՆԴԱԿԱՊԱՏ, ի, աց կամ ից, ա. գ. վանդակներով պատված՝ ծածկված, շուրջը վանդակ քաշած. 2. վանդակներով պատված տեղ. 3. վանդակ:

ՎԱՆՔ, նաց կամ նուց, գ. 1. բնակարան, կացարան, օթևան, կայան. 2. կրոնավորների մենաստան:

ՎԱՌԵԼ, եցի, ն. 1. կրակ տալով բռնկեցնել, բոցավառել. 2. զինել, սպառազինել. 3. նախապատրաստել պատերազմի:

ՎԱՍՆ, նխդ. 1. մասին, վերաբերյալ. 2. համար. 3. պատճառով:

-ՎԱՍՆ Է՞Ր, եղբ. ի՞նչ պատճառով, ինչո՞ւ:

ՎԱՍՏԱԿ, ոյ, ոց և ի, աւ, գ. 1. աշխատանք. 2. աշխատանքի արդյունք, արդասիք. 3. նեղություն, չարչարանք, ջանք, ճիգ. 4. հոգնածություն. 5. որևէ շահ, օգուտ. 6. ա. հոգնած, ուժասպառ:

ՎԱՏԱՆՇԱՆ, ա. վատանուն, տխրահռչակ, չարամիտ:

ՎԱՏԹԱՐԱԳՈՅՆ, գունի, ից, ա. 1. ավելի կամ խիստ վատթար. 2. ավելի աննշան:

ՎԱՐԱՆ, ի, մանավանդ՝ ՎԱՐԱՆՔ, նաց կամ նից, գ. 1. վարանելը, վարանում, տարակուսանք, երկմտություն. 2. հոգս, տագնապ, հուզմունք, անհանգստություն:

ՎԱՐԱՊԱՆԱԿ, ի, աց, գ. կուրծքը պատող զրահ, լանջազրահ, լանջապանակ:

ՎԱՐԴԱՊԵՏԱՆՈՑ, ի, աց, գ. ուսանելու տեղ, վարժատուն, կրթարան, դպրոց:

ՎԱՐԵԼ[1], եցի, ն. 1. վար ու ցանք անել, վարել. 2. տանել, քշել. 3. կառավարել. 4. խոթել, ներս հրել. 5. չ. կյանք վարել:

ՎԱՐԵԼ[2], եցի, ն. գամել:

ՎԱՐԿԱՆԵԼ(իմ), կայ, կի՛ր, կուցեալ, հ. համարել, հաշվել, ընդունել, կարծել, ենթադրել, դիտել իբրև:

ՎԱՐՁԱՆՔ, նաց, գ. նվեր, որ փեսան կամ փեսայի ընտանիքը տալիս է հարսին, օժիտ:

ՎԱՐՇԱՄԱԿ, ից, աց, գ. 1. թաշկինակ. 2. սրբիչ, դաստառակ. 3. գլխին փաթաթելու՝ կապելու շոր. 4. գլխի փաթույթ, ապարոշ:

ՎԱՐՇԱՄԱԿԱՊԱՏ, ա. վարշամակով պատած՝ ծածկված:

ՎԵՐԱԳՈՅՆ, գունի, ից, ա. 1. ավելի վեր՝ բարձր՝ գերազանց. 2. մ. վերը, վերևում (նշված, հիշատակված), առաջուց, նախապես:

ՎԵՐԱԳՈՉԵԼ, եցի, ն. չ. բարձր ձայնով գոչել, բարձրաձայն կանչել՝ ասել, քարոզել, վկայել:

ՎԵՐԱՆԱԼ, ացայ, չ. 1. վեր բարձրանալ, վեր ելնել. 2. համբառնալ (երկինք). 3. փխբ. մեծամտել, հպարտանալ. 4. ի չիք դառնալ, ջնջվել:

ՎԵՐԱՑՈՒՑԱՆԵԼ, եցի, պբ. 1. դեպի վեր հանել, բարձրացնել. 2. վերջ տալ, մեջտեղից վերացնել:

ՎԵՐԸՆԿԱԼ, ա. իր վրա ընդունող՝ կրող:

ՎԵՐՏ, ա. շղթայաձև՝ խիտ ու ոլորուն հյուսված, պինդ:

ՎԷՄ, ի, աց, գ. 1. միակտոր կարծր քար. 2. սալաքար. 3. ապառաժ. 4. որևէ բանի հիմքը՝ հենարանը:
ՎԷՍ, վիսի, սաց, ա. ամբարտավան, մեծամիտ, գոռոզ, փառասեր:
ՎԻՄԱՍՈՅԶ, ա. քարերի՝ ծերպերի մեջ սուզվող՝ մտնող, ծակամուտ:
ՎԻՊԵԼ, եցի, ն. պատմել, պատմագրել:
ՎԻՐԱՊ, ի, աց, գ. հոր, փոս:
ՎԿԱՅ, ի, աց, գ. (կրոն.) հավատի համար նահատակված մարդ, մարտիրոս:
ՎԿԱՅԱՐԱՆ, ի, աց, գ. մատուռ, որ կառուցված է վկայի նահատակության կամ նրա նշխարների ամփոփման տեղում. մարտիրոսանոց, վկայանոց:
ՎՃԱՐԵԼ, եցի և եցայ, ն. չ. հ. - կատարել, իրագործել, գլուխ բերել, ավարտել, վերջացնել:
ՎՏԱՆԳԵԼ, եցի, ն. ՎՏԱՆԳԵԼ-(իմ), եցայ, չ. վտանգի մեջ գցել, չարչարել. նեղն ընկնել, նեղը գցել:
ՎՏԱՐԵԼ, եցի, ն. 1. դուրս մղել, դուրս քշել, հեռացնել, վանել. 2. տարագրել, արտաքսել. 3. ուժով քաշել՝ ձգել դեպի ինքը, բռնությամբ հափշտակել:
ՎՏՏԵԼ(իմ), եցայ, չ. վտիտ դառնալ, տկարանալ, թուլանալ, նվաղել. փխբ. չորանալ:
ՎՐԷՊ, գ. 1. սխալմունք, խոտորում, շեղում. 2. ա. խոտորված, շեղված, թյուր, ծուռ:

Տ

ՏԱԺԱՆԵԼ(իմ), եցայ, չ. չարաչար հոգնել, ուժասպառ լինել, չարչարվել, տանջվել, տառապել:
ՏԱԿԱՌԱՊԵՏ, ի, աց, գ. պալատական պաշտոնյա, որ հսկում է արքունի սեղանին ըմպելիքներ մատակարարելու գործը, գլխավոր մատուակ:
ՏԱՂԱՒԱՐ, ի, աց, գ. 1. վրան. 2. մացառներից՝ եղեգներից և այլ թեթև նյութերից շինված խրճիթ՝ ժամանակավոր բնակության համար. 3. այգիներում շինված հյուղ՝ պահապանների համար. 4. ժամանակավոր թեթև շինություն խաղերի՝ հանդեսների կամ առևտրի համար: 5. փխբ. (կրոն.) մարմին, որի մեջ բնակվում է հոգին:
ՏԱՃԱՐ ԱՌՆԵԼ. սեղան գցել:
ՏԱՆՈՒՏԷՐ, տեառն, տեարց կամ տերանց, գ. 1. տան՝ ընտանիքի՝ գերդաստանի տերը՝ ավագը, գլխավորը, տանտեր. 2. տան՝ ցեղի՝ տոհմի գլխավորը, նահապետ, ցեղապետ, ազգապետ. 3. - նախարարական տան իշխան, նախարար:
ՏԱՊԱՆԱԿ, ի, աց, գ. 1. փոքր արկղ՝ մի բան պահելու կամ թաքցնելու համար. 2. նման. (կրոն.) մարմին (իբրև պահարան հոգու). 3. (եկեղց.) գանձանակ, տուփ:
ՏԱՊԱՍՏ, ա. մ. գետին փռված՝ տապալված: Առանձին գործածական չէ. որից՝
-ՏԱՊԱՍՏ ԱՆԿԱՆԵԼ(իմ). գետին գլորվել փռվել, տապալվել, ընկնել-մեռնել:
-ՏԱՊԱՍՏ ԱՐԿԱՆԵԼ. գետին գլորել՝ փռել՝ տապալել, սպանել:
ՏԱՍԱՆՈՐԴ, ի, աց, գ. որևէ բանի մեկ տասներորդ մասը. 2. ստացվածքի՝ եկամուտի մեկ տասներորդի չափով տուրք՝ հարկ:
ՏԱՐԱԿՈՅՍ, կուսի, ից. գ. 1. ծանր՝ անելանելի կացություն, չվարելը, տագնապ. 2. չարչարանք, տառապանք:
ՏԱՐԱԿՈՒՍԵԼ(իմ), եցայ, չ. 1. երկմտել, վարանել, չվարել. 2. երկբայել, կասկածել. 3. տագնապել, չարչարվել, նեղություններ կրել:
ՏԱՐԱՇԽԱՐՀԱԿԱՆ, ի, աց, ա. հեռավոր աշխարհ տանող (ճանապարհ):
ՏԱՐԱՊԱՅՄԱՆ, ա. չափից դուրս, չափազանց:
ՏԱՐԱՊԱՐՏՈՒՅ, Ի ՏԱՐԱՊԱՐՏ, մ. զուր տեղը, իզուր:
ՏԱՐԲԵՐԵԼ, եցի և եցայ, չ. տարուբերվել, տատանվել:
ՏԱՐԵԿԱՆ, ի, աց, գ. 1. տարի. 2. տարելիցի տոն՝ հանդես:
ՏԱՐՄԱՏԱՐՄ, մ. երամ-երամ, երամով, խմբովին:
ՏԱՐՐ, ըեր, ըերք, ըերց կամ ըերաց. գ. 1. ըստ հին հասկացողության՝ բնության հիմնական բաղկացուցիչ մասերից (հող, ջուր, օդ, կրակ) յուրաքանչյու-

բը. 2. առհասարակ՝ մարմին, նյութ, զանգված:

ՏԱՓԱՐԱԿ, ի, աց, ա. 1. տափակ, հարթ. 2. գ. տափակ՝ հարթ տեղ՝ տարածություն, հարթավայր:

ՏԵՂԻ ՏԱԼ (իմիք կամ ումեք). մի բանի կամ մեկին տեղ տալ, զիջել:

ՏԵՍԱՆԵԼՈՎ. տեսքով, արտաքինով:

ՏԵՍԱՆՈՂ կամ ՏԵՍՆՈՂ, ի, աց, ա. 1. տեսնող. 2. գ. մարգարե:

ՏԵՍԻԼ, սլեան, անց, գ. 1. տեսք, կերպարանք, երես, պատկեր. 2. տեսիլ, երազ. 3. տեսարան, հանդես, 4. տեսնելը, տեսանելի բաներ:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ, գ. աստվածային նախախնամություն. 2. (կրոն.) Քրիստոսի մարդեղությունը և կատարած գործերը. 3. եպիսկոպոսություն. 4. վերակացություն, հոգաբարձություն. 5. տեսք, կերպարանք, տեսիլ. 6. Ս. Գրքի ավանդություն:

ՏԷՐՈՒՆԻ, նւոյ, նեաց, ա. 1. տիրոջ՝ Աստծուն հատուկ, տերունական, աստվածային. 2. Տիրոջ՝ Քրիստոսին հատուկ:

ՏԻ, ձ. դե՛, հապա՛:

ՏԻՒ, տուընջեան, գ. ցերեկ:

ՏՂԱՅ, ոյ, ոց կամ ի, ից, գ. 1. նորածին կամ ծծկեր երեխա. 2. ընդհանրապես՝ երեխա. 3. պատանի, երիտասարդ. 4. ա. անչափահաս, մատաղ, փոքր:

ՏՆԱՆԿՈՒԹԻՒՆ, գ. հետին աղքատություն, չքավորություն:

ՏՈՀՄԱԿԱՆՔ, նաց, գ. հոգն. 1. առատ բերք. 2. նման. մեծ շահ՝ օգուտ՝ արդյունք:

ՏՈՒԱՐԱԾԱԿԱՆ, ի, աց, գ. տավարած, խաշնարած, հովիվ, նախրապան:

ՏՈՒԻՉ, տըւչի, չաց, ա. նա, որ տալիս է, տվող, պարգևող, պարգևատու:

ՏՈՒՉՈՒԹԻՒՆ, գ. 1. տալը, պարգևելը. 2. շնորհ, պարգև. 3. երկնատուր շնորհք, ձիրք:

ՏՈՒՐԵՒԱՌ ՇՆՉՈՅ. շնչառություն, շնչում:

ՏՊԱՉԻՈՆ, գ. տարբեր գույներով թանկագին քար:

ՏՊԱՒՈՐԵԼ, եցի, ն. պատկերել, պատկերացնել, ներկայացնել. 2. կերպարանք՝ ձև տալ, կերպավորել, ձևավորել:

ՏՐՏՄԱՉԳԵԱՑ, զգեցի, ից, ա. տրտմությամբ համակված, տրտմագին. 2. (հունական ոճով) տրտմություն բերող՝ պատճառող:

Ր

ՐԱԲՈՒՆԻ, ւոյ, եաց, գ. ուսուցիչ:

Ց

ՑԱԾՈՒԹԻՒՆ, գ. 1. չափավորություն, զգաստություն, խելոքություն. 2. հանդարտություն, լռություն. 3. հեզություն, համեստություն:

ՑԱԿԱՆԵԱԼ, ելոյ, ա. չքավոր, աղքատ, կարիքավոր:

ՑԱՆԿԱՆԵԱԼ, սխալագրություն է, տե՛ս ՑԱԿԱՆԵԱԼ:

ՑԱՒՈՏ, ի, աց, ա. ցավ ունեցող, ցավագար, հիվանդոտ:

ՑԵԼՈՒԼ, ցելի, ցե՛լ, ցելեալ, ն. ճղել, պատռել, ճեղքել:

ՑԻՌ, ցռոյ կամ ցռու, ուց, գ. վայրի էշ, իշավայրի:

ՑՈՒՑԱԿ, ի, աց, ա. գ. 1. ցուցակ տվող, ցուցիչ, նշանակ. 2. օրինակ, ապացույց. 3. արտաքին տեսք, երևույթ:

Փ

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԱՌՆԵԼ. փախուստի մատնել:

ՓԱԽՍՏԱԿԱՆԼԻՆԵԼ (իմ). փախչել, փախուստի դիմել:

ՓԱԿԱՂԱԿ, ի, աց, գ. կողպեք, փական:

ՓԱՅՏ, ի, ից, գ. 1. փայտանյութ. 2. ծառ, տունկ. 3. ոտքերը պրկելու կոճղ:

ՓԱՊԱՐ, ի, աց, գ. անցք՝ ծերպ՝ խոռոչ լեռներում՝ ժայռերի վրա, քարանձավ:

ՓԵՍԱՒԷՐ, ւերի, ւրաց, գ. փեսայի մտերիմ անձը հարսանիքի ժամանակ:

ՓՂՈՄՈՍ, գ. (բսբ). խռնդատ:

ՓՆՁԵԼ, եցի, չ. փռշտալ:

ՓՈԽԻՆԴ, խնդոյ, ոց, գ.1. բոված ցորենի կամ գարու ալյուր, փոխինձ. 2. այդ ալյուրից՝ յուղով կամ մեղրով չաղախելով պատրաստվող ուտելիք:

ՓՈԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ, գ. կաշուց փոկ հանելը՝ պատրաստելը:

ՓՈՂ, ի, մանավանդ՝ ՓՈՂՔ, ղից, գ. 1. վիզ, պարանոց. 2. կոկորդ:

ՓՈՐ, ոյ, գ. (կենդբ.) բադերի ընտանիքին պատկանող թռչուն, կարապ:
ՓՈՒԹԱՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, ցո՛, պբ. փութալ տալ, շտապեցնել, ստիպել, հորդորել:

Ք

ՔԱՂԱՔԱՎԱՐԵԼ, եցի և եցայ, չ. 1. կենցաղավարել, կյանք վարել, ապրել. 2. արժանավոր կերպով ապրել, առաքինի կյանք վարել:
ՔԱՂԻՐԹ, ղրթի, թաց, գ. որոճող կենդանիների ստամոքսը, թափան:
ՔԱՄԱԿԱԲԵԿ, ա. 1. քամակը՝ մեջքը կոտրած. 2. փխբ. սիրտը կոտրված՝ բեկված, ընկճված, ամոթահար:
ՔԱՄԱՀԵԼ, եցի, ն. արհամարհել, բանի տեղ չդնել:
ՔԱՅՌ, գ. կանանց պարանոցի ականակուռ զարդ, գոհարազարդ մանյակ, վզնոց:
ՔԱՆՈՒՆ ԳԱՀՈՅԻՑ. մահճակալի սյուն:
ՔԱՋԱՏԵՍՈՒԹԻՒՆ, գ. սրատեսություն:
ՔԱՋՈՒԹԻՒՆ, գ. 1. քաջ լինելը, արիություն, անվեհերություն. 2. քաջ արարք, քաջագործություն, սխրագործություն. 3. ընտիր հատկություն, կատարելություն:
ՔԱՐՈԶ, ի, աց կամ ից, նաև ոյ, գ. 1. ի լուր ամենքի իշխանության հրովարտակները, հրամանները և հայտարարող՝ ազդարարող. մունետիկ. 2. քարոզիչ:
-ՔԱՐՈԶ ԿԱՐԴԱԼ. հրապարակավ՝ ի լուր ամենքի հայտարարել:
ՔԱՒԵԼ, եցի, ն. 1. հանցանքը ներել, մեղքերին թողություն տալ, թողություն շնորհել:
ՔԵՐԵԼ, եցի, ն. 1. փորագրել, քանդակել. 2. մարմինը սուր գործիքով քերել՝ տանջելու համար:
ՔԵՐՈՎԲԷ, գ. մարդկային կերպարանքով, բազմաչյա, քառաթև պահապան հրեշտակ, բարձր դասից՝ սերովբեներից հետո:
ՔՆՆԵԼ, եցի, ն. 1. փնտրել, որոնել, խուզարկել, հետախուզել, հետամուտ լինել իմանալու. 2. քննության առնել, հետազոտել, զննել. 3. հարցափորձ անել:

ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍ, ի, աց, գ. գավառի եպիսկոպոս, թեմական եպիսկոպոսի փոխանորդ:
ՔՈՒՂ, քղոյ, գ. հյուսած կամ ոլորած թել, առասան:
ՔՍԱԿԱԿԱԼ, ի, աց, ա. գ. ուրիշի փողի քսակը իր մոտ կրող՝ իբրև մատակարար՝ ծախսարար:
ՔՍՈՒԹԻՒՆ, գ. գաղտնի չարախոսություն, բանսարկություն, մատնություն:
ՔՍՏՈՒՄՆ, տմունք, գ. քստմնություն, փչաքաղվելը, սոսկում:
ՔՐԷԱԿԱՆ ՄԵՏԱՂՔ. հանքի տեղ՝ իբրև տաժանավայր՝ աքսորավայր:
ՔՐԻՍՏՈՍԱԶԳԵԱՑ, ա. Քրիստոսի շնորհը վրան՝ իր մեջ կրող:
ՔՐՈՎԲԷ, տե՛ս ՔԵՐՈՎԲԷ:

Օ (Ա՛)

ՕԳՏԵՑՈՒՑԱՆԵԼ, ցուցի, պբ. օգուտ տալ, աջակցել, նպաստել, օգնել:
ՕԴ, ի, ից և ոյ, ոց, գ. ոտքի ագանելիք մորթուց, ոտնաման, կոշիկ, հողաթափ, տրեխ:
ՕԴԵՆԻ, նւոյ, նեաց, ա. ոչխարի մորթուց պատրաստած:
ՕԹՈՑ, ի, աց, գ. 1. օթևանելու՝ գիշերելու տեղ, օթևան, սենյակ, ննջարան. 2. անկողնու ծածկոց. 3. հագուստի վրայից հագնելու վերնազգեստ (վերարկու, թիկնոց և ն):
ՕԺԱՆԴԱԿ, ի, աց, ա. օժանդակություն ցույց տվող, ձեռք մեկնող, օգնական, նպաստող:
ՕՃԻՐ, գ. ծանր հանցանք, ոճիր:
Օ՛Ն, ձ. խրախուսական բացականչություն՝ հապա՛, դե՛ նչ.:
ՕՆ ԱՆԴՐ, ձ. 1. բնա՛վ, ամենևին ոչ, քա՛վ լիցի, 2. մ. անմիջապես, իսկույն:
ՕՐԱՆ, ի, աց, գ. կալսելու համար քաղած՝ հնձած հացահատիկ. 2. քաղած հացահատիկի խուրձ՝ դեզ:
ՕՐԷՆ, օրինի, մանավանդ՝
ՕՐԷՆՔ, օրինաց, գ. 1. սահմանված կարգ՝ կանոն, օրենք. 2. կրոն, հավատք. 3. իրավունք, պատվիրան. 4. սովորություն. 5. (սուրբ) հաղորդություն:
ՕՐԷՆ Է, մբ. վայել է:
ՕՐԿԱՆՈՑ, ի, աց, գ. ուրկանոց, բորոտանոց:
ՕՐԿՈՒՆ, գ. բորոտ:
ՕՐՀՆՈՒԹԻՒՆՍԸՆԳԱԼՈՒ, ա. օրհնություն ընդունող, օրհնության արժանի:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. – ածական
բժշկ. – բժշկական
բսբ. – բուսաբանական
գ. – գոյական
դ. – դերանուն
եկեղց. – եկեղեցական
եղբ. – եղանակավորող բառ
թ. – թվական
կ. – կրավորական, կրավորաձև
կենդբ. – կենդանաբանություն
կզմխս. – կազմախոսություն
կրոն. – կրոնական
հ. – հասարակ բայ
հոգն. – հոգնակի
ձ. – ձայնարկություն
մ. – մակբայ
մբ. – միադիմի բայ
ն. – ներգործական բայ
նխդ. – նախադրություն
նման. – նմանությամբ
շ. – շաղկապ
չ. – չեզոք բայ
պբ. – պատճառական բայ
փխ. – փոխանակ
փխբ. – փոխաբերական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կորիւն, Վարք Մաշտոցի 5
Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց 9
Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց 28
Նոյն Եզնիկայ վարդապետի Խրատք 37
Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց 42
Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց 56
Մովսէս Խորենացի, Հոգևոր երգեր 62
Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին 68
Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց 86
Սահակ Պարթև, Հոգևոր Երգեր 106
Մեսրոպ Մաշտոց, Հոգևոր երգեր 111
Հովհան Մանդակունի, Հոգևոր երգեր 116
Յաճախապատում ճառք 121
Մնունդք 136
Ելք 143
Դատաւորք 148
Առաջին թագաւորութեանց 151
Երրորդ թագաւորութեանց 156
Գիրք սաղմոսաց 159
Առակք Սողոմոնի 164
Ժողովող 169
Երգ երգոց 173
Մարգարէութիւն Յովհաննու 178
Ողբք սրբոյն Երեմեայ մարգարէի 182
Յուդիթ 185
Աւետարան ըստ Յովհաննու 202
Թուղթ Կորնթացւոցն առ Պաւղոս 208
Եւսեբիոս Կեսարացի, Քրոնիկոն 211
Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան 218
Սեբերիանոս Եմեսացի, Ճառք 233
Կիւրեղ Աղեքսանդրացի, Մեկնութիւն Ս. Գրոց 238
Եփրեմ Ասորի, Մեկնութիւն աւետարանի 247
Վկայք արևելից 254
Յովհան Ոսկեբերան 265
Բառարան 274
Համառոտագրություններ 343

Ռ. Ս. Ղազարյան,
Հ. Մ. Ավետիսյան,
Խ. Պալյան

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ՀԱՏԸՆՏԻՐ

Համակարգչային շարվածք Գայանե Սիմոնյան

Համակարգչային ձևավորում Տիգրան Ապիկյան

Երևանի պետհամալսարանի հրատարակչություն, Ալ. Մանուկյան 1

Երևանի պետական համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52